ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ

10

Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ, Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ,
Պ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Է. ԴԱՆԻԵԼՅԱՆ, Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ,
Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Պ. ՉՈԲԱՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ
ԲՆԱԳԻՏԱՍԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ

ԵՐԵՎԱՆ 2009

Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից՝ որպես դասագիրք ավագ դպրոցի 10-րդ դասարանի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար

ՀՏԴ 373.167.1: 941(479.25)(075)
ԳՄԴ 63.3(2Հ)g72
Հ 282

Գլխավոր խմբագիրներ՝ ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ, *ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*
ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ, *ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*

Խմբագիր՝ ԱՐԱՄ ՆԱՋԱՐՅԱՆ, *պատմագիտության թեկնածու*

Հեղինակներ՝
ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
(Ներածություն, Մաս Բ, Բաժին 2, Թեմա 2)
ՀԱՅԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Պատմագիտության դոկտոր
(Մաս Ա, Բաժին 1, Բաժին 4, Թեմա 1)
ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ
Պատմագիտության թեկնածու, դոցենտ
(Մաս Ա, Բաժին 2, Բաժին 3, Թեմա 1, 2, Բաժին 4, Թեմա 2)
ՊԵՏՐՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Պատմագիտության թեկնածու, դոցենտ
(Մաս Ա, Բաժին 3, Թեմա 3, Թեմա 4, § 1)
ԷԴՈՒԱՐԴ ԴԱՆԻԵԼՅԱՆ
Պատմագիտության դոկտոր
(Մաս Ա, Բաժին 3, Թեմա 4, §§ 1–3, Մաս Բ, Ներածություն, Բաժին 1, Բաժին 4, Թեմա 1)
ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
(Մաս Բ, Բաժին 2, Թեմա 1, Բաժին 3, Թեմա 2)
ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմագիտության թեկնածու, դոցենտ
(Մաս Բ, Բաժին 2, Թեմա 3, Բաժին 4, Թեմա 2)
ՊԱՎԵԼ ՉՈՐԱՆՅԱՆ
Պատմագիտության դոկտոր
(Մաս Բ, Բաժին 3, Թեմա 1, Բաժին 4, Թեմա 3)

Մեթոդական մասի հեղինակներ՝ ԱՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ, *պատմաբան, մանկավարժ*
ԱՐՄԱՆ ՄԱԼՈՅԱՆ, *պատմաբան, մանկավարժ*

Հայոց պատմություն: 10-րդ դաս.
Հ 282 Ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքեր:/Ա. Մելքոնյան, Հ. Ավետիսյան, Ա. Մովսիսյան, Պ. Հովհաննիսյան, Է. Դանիելյան, Վ. Բարխուդարյան, Գ. Հարությունյան, Պ. Չորանյան.– Եր.: «Զանգակ-97», 2009.– 240 էջ:

ԳՄԴ 63.3(2Հ)g72

ISBN 978-99941-1-638-6

© Ա. Մելքոնյան, Հ. Ավետիսյան, Ա. Մովսիսյան, Պ. Հովհաննիսյան, Է. Դանիելյան, Վ. Բարխուդարյան, Գ. Հարությունյան, Պ. Չորանյան, 2009 թ.
© «Զանգակ-97» հրատարակչություն, 2009 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ

Հայ ժողովրդի՝ հազարամյակների հարուստ պատմության, համաշխարհային քաղաքակրթության մեջ ունեցած ծանրակշիռ տեղի ու դերի մասին գրվել են բազմաթիվ հետազոտություններ, հարյուրավոր դասագրքեր ու ձեռնարկներ: Դրանցից յուրաքանչյուրը յուրովի է նպաստել աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի պատմական անցյալին հանրությանը ծանոթացնելու գործին:

Հայոց պատմությանը նվիրված հին և միջնադարյան հայ ու օտար հեղինակների ուսումնասիրությունների մեջ իր նշանակությամբ անգերազանցելի է մնացել համաշխարհային պատմագրության հսկաներից մեկի՝ V դարի հեղինակ ***Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»*** մեծարժեք երկը: Դարեր շարունակ որպես անփոխարինելի դասագիրք ծառայած այդ աշխատությունը բազմաթիվ հայ սերունդների կրթել ու դաստիարակել է հայրենասիրության ոգով, հայրենիքի նկատմամբ անսահման սիրո ու նվիրումի զգացումներով, ժամանակների արհավիրքներին ու մարտահրավերներին դիմակայելու կարողությամբ և իրենց ապագան կերտելու պատրաստակամությամբ:

Հայ պատմագիտության զարգացման համար մի նոր խթան է դարձել XVIII դարի նշանավոր պատմաբան Միքայել Չամչյանի եռահատոր «Հայոց պատմություն» աշխատությունը, որը Մովսես Խորենացու երկից հետո հայ ժողովրդի ամբողջական պատմություն գրելու երկրորդ հաջողված փորձն էր: XIX դարը դարձել է ինչպես ամբողջ հայագիտության, այնպես էլ պատմական գիտության աննախադեպ առաջընթացի դարաշրջան: Այդ ժամանակ հայոց պատմության բազմապիսի հիմնահարցեր բազմակողմանիորեն ուսումնասիրվել են ոչ միայն հայ, այլև օտար, հատկապես եվրոպացի հայագետների կողմից: Առանձնապես կարևոր էին օտար հեղինակների՝ հնդեվրոպական լեզուների շարքում հայերի ունեցած տեղի մասին ուսումնասիրությունները:

Սակայն, ցավոք, նույն ժամանակ ծնվեցին ոչ միայն սխալ, այլ նաև հակագիտական ու հակահայկական առանձին տեսակետներ, որոնք հետագայում քաղաքական դրդապատճառներով օգտագործվեցին հայոց պատմության հանգուցային մի շարք խնդիրներ խեղաթյուրելու նպատակով: Մասնավորապես առաջ քաշվեց Հայկական լեռնաշխարհում հայերի եկվորության տեսակետը, կասկածի տակ դրվեցին միջնադարյան հայ հեղինակների հաղորդած տեղեկությունների հավաստիությունը, մատենագիրների գործած ժամանակի և ընդգրկման հարցը և այլն: Այդուհանդերձ, նույն ժամանակ հայ պատմագրությունն ունեցավ նոր ձեռքբերումներ:

Խորհրդային իշխանության տարիներին հայ պատմագիտությունը հայրենիքում հայտնվեց քաղաքական, գաղափարական կապանքների մեջ, սակայն շատ պատմաբաններ կարողացան այդ պայմաններում իսկ առաջին անգամ լուսաբանել հայոց պատմության մի շարք հանգուցային հիմնախնդիրներ, տալ դրանց հայեցակարգային լուծումները, նոր բարձրության հասցնել պատմական գիտությունը:

1991 թ.՝ անկախության վերականգնումից հետո, հայ պատմագիտությունը դուրս եկավ նախկին կաղապարներից: Հայ պատմաբանները ձեռնամուխ եղան անաչառ պատմության ստեղծման այնքան անհրաժեշտ գործին: Ինչպես հայոց պատմության, այնպես էլ հայագիտության մյուս ընագավառների զարգացումը դարձավ առաջնակարգ խնդիր հայոց պետականության ամրապնդման ու հայ ազգի կեն-

սական շահերի պաշտպանության ընդհանուր ռազմավարական հիմնախնդիրների շղթայի մեջ: Հետխորհրդային առաջին տարիներին հաջողվեց լույս ընծայել դպրոցական նոր դասագրքեր, որոնք, մեկուկես տասնամյակ լինելով շրջանառության մեջ, մեծ նշանակություն ունեցան նորանկախ հանրապետության պատանիներին պատմական գիտելիքներով զինելու հարցում:

Հայաստանում գործող կրթական համակարգը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու բարեփոխումների ճանապարհին կրկին ծագեց դասագրքերի վերանայման ու հրատարակման խնդիրը: Միջին դպրոցի համար ստեղծվեցին հայոց ամբողջական պատմության դասընթացն ընդգրկող նոր դասագրքեր: Բնականաբար, ծառացավ նաև ավագ դպրոցի ընդհանուր ու բնագիտամաթեմատիկական հոսքերի համար դասագրքեր ստեղծելու անհրաժեշտությունը:

«Հայոց պատմություն» առարկայի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի երեք դասագրքերը նպատակ ունեն միջին դպրոցում սովորողի ուսումնասիրած ու յուրացրած նյութի իմացությունը մտածանաչողական ավելի բարձր մակարդակի վրա խորացնելու նոր հարցադրումներով: Կարևոր նպատակներից է սովորողների մոտ ձևավորել հայեցակարգային մոտեցումներ ինչպես հայոց պատմության, այնպես էլ աշխարհընկալման հանգուցային հարցերում: Ավագ դպրոցում այդպես ապահովվում են պատմական կրթության շարունակականությունն ու հաջորդականությունը:

10–12-րդ դասարանների դասագրքերի բովանդակության ձևավորման համար հիմնական չափանիշ է ընտրվել պատմության մեկնաբանման և արժևորման քաղաքակրթական սկզբունքը՝ այն զուգորդելով պատմական դարաշրջանների հաջորդականության տեսության հետ:

Առարկայի՝ ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի ծրագիրը ժամանակագրական առումով ընդգրկում է հայկական քաղաքակրթության ամբողջական պատմությունը՝ նրա ակունքներից մինչև արդի հասարակության ժամանակաշրջանը: Հատկանշական է, որ ***հայ ժողովրդի փառահեղ պատմական ուղին համաքայլ է եղել մարդկային հասարակության անցած քաղաքակրթական ընթացքին:***

Պատահական չէ, որ մարդկային հասարակության վաղքաղաքակրթական դրսևորումների զգալի մասը բաժին է ընկնում բնակլիմայական բարենպաստ պայմաններ ունեցող, միմյանց սահմանակից և գերազանցապես արիական–հնդեվրոպական ժողովուրդներով բնակեցված նույն տարածաշրջանին՝ Հյուսիսային Միջագետքին, Փոքր Ասիային, Իրանական բարձրավանդակին և Հայկական լեռնաշխարհին: Դրանց վկայություններն են վաղերկրագործական մշակույթի բազմաթիվ բաղադրիչները, քաղաքաշինական, հատկապես ամրոցաշինական ու տաճարաշինական արվեստի նմուշները, տոմարագիտական ու տիեզերագիտական գիտելիքների բարձր մակարդակը, ձիաբուծության, մետաղամշակության, զինագործության, գինեգործության զարգացման աստիճանը:

Հայաստանը հին ժամանակներից եղել է քաղաքակրթության բնօրրաններից մեկը: Հայ ժողովուրդը, շփվելով և փոխազդեցությունների մեջ լինելով տարբեր քաղաքակրթությունների հետ, պահպանել ու զարգացրել է իր ինքնատիպ մշակույթը, ազգային նկարագիրն ու գոյակերպը: Դրա շնորհիվ հայությունը հազարամյակների միջով հասել է մարդկության պատմության արդի փուլին: Ահա թե ինչու հայկական մշակութային հարուստ ժառանգության համակողմանի ուսումնասիրումը կազմել է դասագրքերի կարևոր բովանդակային ուղղություններից մեկը:

Հայոց պատմության բովանդակային առանցքը կազմել է նաև հայկական պետականության պատմությունը, որը սերտորեն կապվում է նույն քաղաքակրթական խնդիրների հետ: ***Ք. ա. III հազարամյակում*** երկրագործական մշակույթի հետագա զարգացումը, տոհմացեղային կարգերի անկումը, ռազմական ավագանու դիրքերի ամրապնդումը, քաղաքային կյանքի ձևա-

վորման իրողությունը հետզհետե հանգեցնում են Հայկական լեռնաշխարհում ***առաջին պետական կազմավորումների*** առաջացմանը: Հնդեվրոպական մայր ժողովրդից անջատված հայալեզու ցեղամիավորումների հենքի վրա այդ հայկական վաղ պետականությունները միավորվում են, և Ք.ա. I հազարամյակի սկզբին հանդես է գալիս ***համահայկական առաջին պետությունը՝ Վանի*** կամ ***Արարատյան թագավորությունը (Ուրարտու):*** Այս ամենը հաստատվում է հնագիտական, լեզվաբանական, սեպագրական, բանահյուսական, ազգագրական, մարդաբանական և այլ աղբյուրներով: Վանի թագավորության գոյության ընթացքում (Ք.ա. IX–VII դդ.) Հայաստանում ստեղծվում է Հին աշխարհի պետական մակարդակի հասցված քաղաքակրթական հզոր մի հենք, որի վրա հետագայում շարունակություն են ունենում հին հայկական մյուս թագավորությունները՝ Հայկազուն-Երվանդյան, Արտաշեսյան և Արշակունյաց:

Դասագրքերի ժամանակագրական կառուցվածքը տրված է ըստ հայոց պատմության պարբերացման, որը գրեթե առանց էական տարբերությունների նույնանում է համաշխարհային պատմության համապատասխան դարաշրջանների հետ: Հին շրջանն ընդգրկում է վաղնջական ժամանակներից մինչև ավատատիրական կարգերի հաստատման և պետականորեն քրիստոնեության ընդունման ժամանակաշրջանը՝ III դարի վերջը, միջնադարը՝ IV դարից մինչև XVII դարի կեսերը, նոր պատմությունը՝ XVII դարի կեսերից մինչև 1918 թ. և նորագույն շրջանը՝ 1918 թ. մինչև մեր օրերը: Յուրաքանչյուր դարաշրջան իր հերթին տրոհվում է մի քանի փուլերի:

Ավագ դպրոցի 10–րդ դասարանի սույն դասագիրքն ընդգրկում է հին շրջանը (հայկական քաղաքակրթության ակունքներից մինչև III դարի վերջը) և միջնադարը (IV դարից մինչև XVII դարի կեսերը):

Հայոց պատմության առանցքը կազմող ազատության և անկախության պահպանման կամ վերականգնման համար մղված դարավոր պայքարի, դրանում Հայ առաքելական եկեղեցու ունեցած բացառիկ դերի, համահայկական պետության բացակայության պայմաններում պետականության հիմնական հատկանիշներով (իշխանության մարմիններ, զինված ուժեր և այլն) օժտված զանազան կազմավորումների (իշխանապետություններ, մելիքություններ, սղնախներ, լեռնային կիսանկախ համայնքներ և այլն), Հայկական հարցի և այլ հիմնահարցերի քննությունը, Հայաստանի առաջին հանրապետության և խորհրդային հանրապետության առաջին երկու տարվա պատմությունը ներկայացված է 11–րդ դասարանի դասագրքում (XVII դարի կեսերից մինչև 1922 թ.):

Եվ, վերջապես, 12–րդ դասարանի դասագիրքն ընդգրկում է հայոց պետականության նորագույն պատմության ընթացքը՝ խորհրդային Հայաստանի և նորանկախ երրորդ հանրապետության (1991 թ. մինչև մեր օրերը) կարևոր իրադարձություններն ու արդյունքները:

Դասընթացի գլխավոր նպատակն է սովորողներին հիմնարար գիտելիքներ տալ հայկական քաղաքակրթության պատմական զարգացման ընթացքի հիմնական օրինաչափությունների և առանձնահատկությունների վերաբերյալ, նպաստել նրանց՝ պատմական կարևոր իրադարձությունները և երևույթները ուսումնասիրելու, հասկանալու, վերլուծելու, համեմատելու, համադրելու, ինքնուրույն եզրահանգումներ կատարելու, հայկական պատմամշակութային ժառանգությունն արժևորելու կարողությունների զարգացմանը: Ավագ դպրոցում հատկապես կարևորվում է սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացման, ազգային արժեքային համակարգի, նրանց աշխարհայացքի ամբողջական ձևավորման խնդրի լուծումը: Առաջնային խնդիր է նաև ուսումնական այնպիսի գործընթացի ապահովումը, որը հիմնարար գիտելիքների հենքի վրա սովորողներին հնարավորություն կտա զարգացնելու իրենց ճանաչողական, տրամաբանական, ստեղծագործական կարողու-

թյուններն ու հմտությունները, *խմբագրելու և յուրացնելու ազգային արժեհամակարգի գործերը:*

Հայոց պատմական փորձի տեսական յուրացումը կնպաստի, որ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր երիտասարդ քաղաքացի լիովին նվիրվի իր անկախությունը վերականգնած Հայաստանի շենացման և հզորացման նվիրական գործին: Ավագ դպրոցում հայրենական պատմության իմացության խորացումն ու ամրապնդումը սովորողների համար ձանապարհ կհարթեն դեպի բարձրագույն ուսումնական հաստատություններ և գիտության բարձունքներ:

Դասագրքերի հեղինակները օգտագործել են հրապարակի վրա եղած մասնագիտական գրականությունը, բուհական դասագրքերը, ինչպես նաև վերջին տարիներին հրատարակված ձեռնարկների նյութերը, տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ պատմագիտության ձեռքբերումները:

ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հայկական լեռնաշխարհի դիրքը

Բազմադարյան հարուստ մշակույթ ու պատմություն ունեցող հայ ժողովրդի հայրենիքը ***Հայկական լեռնաշխարհն*** է: Այն իր բարձր դիրքի պատճառով հայտնի է եղել նաև ***Հայկական բարձրավանդակ, Լեռնային երկիր*** կամ ***Լեռնային կղզի*** անուններով: Հայկական լեռնաշխարհը հյուսիսից եզերվում է Կուր գետով, հարավից՝ ***Հայկական Տավրոսի*** լեռնաշղթայով և Հյուսիսային Միջագետքի հարթավայրով, հյուսիս-արևմուտքից՝ ***Պոնտոսի*** լեռներով: Մեր հայրենիքը արևելքից սահմանակից է ***Կասպից ծովին, Իրանական բարձրավանդակին և Ուրմիա լճին,*** արևմուտքից՝ ***Փոքրասիական սարահարթին:*** Այդ սահմանների միջև ընկած կենտրոնական ու ամենաբարեբեր տարածքը հաճախ անվանվել է ***Միջնաշխարհ:***

Հայկական լեռնաշխարհը գործուն երկրաշարժային գոտի է, որտեղ այսօր էլ շարունակվում են լեռնակազմական գործընթացները: Այնտեղ է Մերձավոր Արևելքի միակ գործող հրաբխային գագաթը՝ ***Թոնդուրեկը,*** որի խառնարանից այժմ էլ ժայթքում են հրաբխային բեկորներ, տաք գոլորշի և գեյզերներ: Առաջին խոշոր երկրաշարժի մասին տվյալները վերաբերում են Ք.հ. 341 թ.: Հայտնի են 893 թ. Դվինի, 1319 թ. Անիի, 1679 թ. Գառնիի, 1840 թ. Ակոռիի, 1926 թ. Լենինականի, 1931 թ. Զանգեզուրի, 1937 թ. Երևանի, 1988 թ. Սպիտակի երկրաշարժերը:

Հայկական լեռնաշխարհում կան բազմաթիվ խոշոր լեռնաշղթաներ: Հյուսիսում՝

Արագած լեռան խառնարանը և հյուսիսային գագաթը

արևմուտքից դեպի հարավ-արևելք ուղղությամբ, վեր են խոյանում ***Ջավախքի, Գուգարքի, Գեղամա, Արցախի*** լեռները: Հայաստանի Հանրապետության (ՀՀ) ամենաբարձր լեռը ***Արագածն*** է (բարձրությունը՝ 4096 մ): Բարձրությամբ ՀՀ երկրորդ գագաթը ***Կապույտ ջուղն*** է (3906 մ): Հայկական լեռնաշխարհի կենտրոնում ձգվում է երկրորդ լեռնաշղթան՝ ***Հայկական Պարը,*** որը սկսվում է լեռնաշխարհի ամենաբարձր գագաթից՝ Արարատից ***(Մեծ Մասիս՝ 5165 մ, Փոքր Մասիս՝ 3925 մ):*** Հարավում երրորդ լեռնաշղթան ***Հայկական Տավրոսն է:***

Հայկական լեռնաշխարհի երկրորդ բարձր գագաթը ***Սիփանն*** է (4434 մ), որն ընկած է Վանա լճից (հնում՝ ***Բզնունյաց ծով)*** հյուսիս: Հայկական լեռնաշխարհի երեք խոշոր լճերն են ***Սևանը, Վանը և Ուրմիան:*** Սևանը հայտնի է նաև ***Գեղամա ծով*** անունով: Ծովի մակերևույթից բարձր է 1916 մ: Հայտնի է նրա իշխան ձուկը: Սևանի ջուրը քաղցրահամ է:

Մեծ ու Փոքր Մասիսները և Արաքս գետը

Բերկրիի ջրվեժը

Նրա մեջ թափվում են շուրջ 30 գետակներ, իսկ լճից դուրս է հոսում միայն ***Հրազդան*** գետը: ***Վանա լիճը*** (բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1720 մ) ունի չորս կղզի՝ ***Աղթամար, Կտուց, Լիմ*** և ***Արտեր:*** Միակ ձկնատեսակը տառեխն է, ջուրն աղի է: ***Կապուտանը (Ուրմիա)*** ծանծաղ լիճ է, աղիության պատճառով չունի կենդանական աշխարհ: Կան նաև այլ փոքրիկ լճեր՝ ***Մովակ Հյուսիսո*** (Ցելի, Զլղը), ***Արճակ, Նազիկ, Փարմանա, Գայլատու*** և այլն: Վճիտ ջրեր ունեն Արագածի վրայի ***Քարի լիճը և Նեմրութի*** խառնարանային լիճը: Հայաստանում կան մի քանի գեղատեսիլ ջրվեժներ ***(Բերկրի, Թորթում և այլն):***

Խոշոր գետերը

Հայկական լեռնաշխարհից են սկզբնավորվում տարածաշրջանի մի քանի խոշոր գետեր:

Եփրատ գետն ունի երկու ճյուղ՝ Արևմտյան Եփրատ (սկզբնավորվում է Էրզրումից հյուսիս ընկած ***Մաղկավեր*** լեռներից) և Արևելյան Եփրատ՝ ***Արածանի*** (սկիզբ է առնում ***Մաղկանց*** լեռներից): Երկուսն էլ հոսում են արևելքից արևմուտք և ***Ակն*** քաղաքի մոտ միախառնվում են: Հարավում Եփրատը միանում է Տիգրիսին, լցվում Պարսից ծոցը: Հայաստանի մասում Եփրատն ունի 500 կմ երկարություն: Մյուս գետը ***Ճորոխն*** է՝ 345 կմ երկարությամբ: Այն սկիզբ է առնում Էրզրումից հյուսիս՝ Խաչափայտի լեռներից, հոսում արևմուտք, ապա՝ հյուսիս-արևելք և Բաթում քաղաքի մոտ լցվում Սև ծովը: ***Տիգրիսը,*** որը Հայկական լեռնաշխարհի հարավային մասում է, Հայաստանով անցնում է մոտ 400 կմ և նույնպես ունի երկու ճյուղ՝ ***Արևմտյան և Արևելյան:*** Առաջինը սկիզբ է առնում ***Մովք*** լճից, երկրորդը՝ Հայկական Տավրոսից: Տիգրիսը Եփրատի հետ թափվում է Պարսից ծոց: ***Կուր*** գետը, որի երկարությունը 1113 կմ է, սկզբնավորվում է Հայկական լեռնաշխարհում և Արաքսի հետ թափվում Կասպից ծովը:

Արաքսը (հնում՝ ***Երասխ***)՝ հայոց մայր գետը, սկիզբ է առնում ***Բյուրակնյան (Սևանից)*** լեռներից, հոսելով արևելք՝ խառնվում է ***Կուր*** գետին, լցվում Կասպից ծովը: Ունի մոտ 1000 կմ երկարություն և ամբողջապես հոսում է Հայկական լեռնաշխարհի տարածքով:

Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնի գետերից են ***Հրազդանը, Աղստևը, Դեբեդը, Ախուրյանը, Որոտանը, Արփան, Ողջին*** և այլն:

Մեր հայրենիքի նշանավոր դաշտերն են ***Արարատյան, Շիրակի, Մշո, Կարնո (Էրզրումի), Երզնկայի, Աբաշկերտի*** և այլն:



Նեմրութ լեռան խառնարանային լիճը

Բնակլիմայական պայմանները և օգտակար հանածոները

Ըստ բնակլիմայական պայմանների՝ Հայկական լեռնաշխարհը բաժանվում է երեք գոտու: ***Ցածրադիր*** գոտում, որն ունի ծովի մակերևույթից 350–1000 մ բարձրություն, աճում են խաղող, բամբակ, ծիրան, նուռ, դեղձ և այլն: Հայաստանում աճող ծիրանը Հին աշխարհում հայտնի էր ***արմենիկա*** անունով: ***Նախալեռնային*** գոտին (բարձրությունը՝ 1000–1500 մ) հայտնի է հացահատիկով, գարիով, մրգատու այգիներով և խաղողով: ***Լեռնային*** գոտին տարածվում է 1500–2000 մ և ավելի բարձրության վրա: Այստեղ աճում են հացահատիկի և գարու ավելի ցրտադիմացկուն տեսակներ, կան հարուստ ալպյան մարգագետիններ, որոնք նպաստավոր են անասնապահության զարգացման համար:

Հայկական լեռնաշխարհի անտառները հիմնականում Արցախում, Սյունիքում, Գուգարքում և Տայքում են: Կենդանիներից տարածված են եղել վարազը, աղվեսը, գայլը, առյուծը, արջը, բորենին, նապաստակը, քարայծը (մուֆլոն), եղջերուն: Հայաստանը հռչակված էր որդան կարմիր ներկով, որը ստանում էին Արարատյան դաշտում բազմացող կարմրաորդից:

Հայկական լեռնաշխարհը հարուստ է օգտակար հանածոներով, օրինակ՝ աղով (Նախիջևան, Կողբ, Կաղզվան), պղնձով (Զանգեզուր, Լոռի), նավթով (Կարին), երկաթով (Վանա լճի հարավային շրջաններ), ոսկով (Սպեր, Սողք), շինաքարով (Շիրակ), հանքային բուժիչ ջրերով (Ջերմուկ, Արզնի, Բջնի) և այլն:

Հայաստանը, գտնվելով միջազգային տարանցիկ առևտրական ուղիների, այդ թվում՝ Արևելքը Արևմուտքին կապող Մետաքսի ճանապարհի վրա, տնտեսական մեծ զարգացում է ապրել: Սակայն Հայաստանի չափազանց բարենպաստ դիրքը և պատմաաշխարհագրական պայմաններն անցյալում և նորագույն շրջանում առաջացրել են տարբեր ժողովուրդների, պետությունների և քոչվոր ցեղերի հետաքրքրությունը:

Վարչական բաժանումը

Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներից գոյություն են ունեցել հայկական երկու պետություններ՝ ***Մեծ Հայքը*** (օտար հեղինակների կողմից հիշատակվող ***Արմենիա մայորը***) և ***Փոքր Հայքը (Արմենիա մինորը)***: Երբեմն Մեծ Հայքի աշխարհներից ***Ծուփքը***, ինչպես և վերջինիս սահմանակից ***Կոմմագենեն*** առանձնացել ու դարձել են առանձին թագավորություններ:

Հայ ժողովրդի կյանքում ամենամեծ դերը կատարել է Մեծ Հայքը, որը, ըստ V–VII դարերի «Աշխարհացույցի», բաժանվել է 15 խոշոր նահանգների, որոնք իրենց ընդարձակ տարածքի պատճառով հաճախ անվանվել են աշխարհներ: Դրանք են ***Գուգարքը, Տայքը, Բարձր Հայքը (Կարնո աշխարհ), Ծուփքը (Չորրորդ Հայք), Աղձնիքը, Տարոն-Տուրուբերանը, Կորդուքը (Կորճայք), Մոկքը (Մոկս), Վասպուրականը, Դպրևնահայքը, Փայտակարանը, Ուտիքը, Արցախը, Սյունիքը և Այրարատը:***

Մեծ Հայքի տարածքը 311 հազ. քառ. կմ է, Փոքր Հայքինը՝ մոտ 80 հազ. քառ. կմ: Մեծ Հայքի բոլոր 15 աշխարհները միասին ունեն 191 գավառ, որից 37-ը՝ Վասպուրականում, 20-ը՝ Այրարատում: Ամենանշանավոր աշխարհը Այրարատն է: Բավական է նշել, որ հայոց մայրաքաղաքների մեծ մասը (Երևան, Անի, Արտաշատ, Դվին, Արմավիր, Կարս, Երազգավորս, Վաղարշապատ, Երվանդաշատ, Բագարան) եղել է Այրարատում:

Հայաստանի Հանրապետությունը, որն ունի 29,8 հազ. քառ. կմ տարածք, ամբողջությամբ իր մեջ չի ընդգրկում Մեծ Հայքի ոչ մի աշխարհ: Մեր հանրապետության կազմում ամենաշատ գավառներ մտնում են Սյունիքից և Այրարատից, ավելի քիչ՝ Գուգարք և Ուտիք աշխարհներից:

Հայկական երկրորդ պետության՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) մաս են կազմում գավառներ պատմական Արցախ և Սյունիք աշխարհներից: Հայերը միջնադարում ուժեղ պետություն են ստեղծել նաև Միջերկրական ծովի հյուսիս-արևելքում ընկած ***Կիլիկիայում***, որն ունեցել է մինչև 50 հազ. քառ. կմ տարածք: Նշանակում է՝ Մեծ Հայքը, Փոքր Հայքը և Կիլիկիան միասին կազմել են մոտ կես միլիոն քառ. կմ տարածք:

Ա

ՄԱՍ



ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ԲԱԺԻՆ 1 ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

ԹԵՄԱ 1. ՔԱՐԻ ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐ

§ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՔԱՐԻ ԴԱՐԵՐՈՒՄ

Համաձայն ժամանակակից պատկերացումների՝ երկրագնդի վրա մարդը հանդես է եկել մոտ 3 մլն տարի առաջ: Հայկական լեռնաշխարհը հնագույն մարդու նախնական բնակեցման այն տարածքներից է, որը հարուստ է քարի դարի բոլոր փուլերն ընդգրկող (***պալեոլիթ*** կամ ***հին քարի դար***, ***մեզոլիթ*** կամ ***միջին քարի դար***, ***նեոլիթ*** կամ ***նոր քարի դար***) հուշարձաններով:

Հին քարի դար: Հինքարիդարյան ժամանակաշրջանը բաժանվում է երեք ենթաշրջանների՝ ստորին, միջին և վերին: Նախնադարյան հասարակության հինքարիդարյան փուլի առաջին ենթափուլը՝ ստորին հին քարի դարը, Հայաստանի տարածքում սկսվել է մոտ ***2 միլիոն տարի առաջ*** և ավարտվել մոտ ***100 հազար տարի առաջ***: Մեր հայրենիքի բնակեցման սկզբնակետերից մեկն այսօր, ըստ վերջին տվյալների, կարելի է համարել ***Գուգարքում*** հայտնաբերված հինքարիդարյան կայանը: Այս հնավայրը մոտ ***1,8 միլիոն տարեկան*** է: Այն Արևմտյան Եվրասիայի՝ մարդու մինչև այժմ հայտնի հնագույն կայանն է:

Հնագույն ժամանակների մասին հարուստ տեղեկություններ են պարունակում հատկապես ***Ազոխի*** քարայրն Արցախում, ***Արտին լեռան*** շրջակայքը և մի քանի հուշարձաններ Արևմտյան Հայաստանում: Հնավայրերից (Արզնի, Նուռնուս, Ջրաբեր, Հատիս, Ապարան, Արտենի և այլն) պեղված նյութերը պատրաստված են գերազանցապես բազալտից ու վանակատից:

Հայաստանի տարածքի հնագույն բնակիչներն աստիճանաբար ձեռք են բերել կենսագործունեության կարևոր հմտություններ, օրինակ՝ կրակի օգտագործումը: Իսկ լեռնաշխարհի հնագույն բնակիչները ոչ միայն հարմարվել են տեղի պայմաններին, այլև նրանց մի մասը հաղթահարել է Մեծ Կովկասի լեռնաշղթան և անցել Հյուսիսային Կովկաս:

Միջին հին քարի դարն ընդգրկում է ***մոտ 100 հազարից*** մինչև ***40 հազար թվականներն*** ընկած ժամանակաշրջանը: Հինքարիդարյան այս ենթափուլին բնորոշ է քարե գործիքների զանգվածային պատրաստումը: Այդ ժամանակի գործիքների հիմնական տեսակներն են սրածայրերը, քերթիչները և տարատեսակ ատամնավոր-փոսիկավոր գործիքները:

Հայկական լեռնաշխարհում հայտնի է ավելի քան 150 միջին հինքարիդարյան հուշարձան՝ քարայր-կացարաններ, բացօթյա կայաններ և հնավայրեր:

Այս ժամանակաշրջանի մարդիկ ապրել են ոչ մեծ խմբերով՝ ***համայնքներով***: Քարայր-կացարանների ընդհանուր «բնակելի մակերեսը» վկայում է, որ այդպիսի մեկ համայնքի անդամների թիվը չէր կարող գերազանցել 20-ը:

Վերին հին քարի դարն ընդգրկում է մոտ ***40000-14000 թվականներն*** ընկած ժամանակաշրջանը: Մեզանից 40-35 հազար տարի առաջ Եվրոպայի և Մերձավոր Արևելքի հինքարիդարյան մշակույթներում տեղի է ունենում զգալի առաջընթաց: Այն կապված էր մարդկային հասարակության համար շրջադարձային իրադարձության՝ երկրագնդի վրա ***բանական մարդու (Homo sapiens)*** և նրա մշակույթի տարածման հետ: Մարդկանց գործիքային կազմն ընդլայնվել է. պատրաստվել են տարատեսակ քերիչներ, սրածայրեր, կտրիչներ,



Հնագույն մարդկանց գործիքներ վանակատից

կացնաձև և դրաձև գործիքներ, դանակներ, ծակիչներ և այլն:

Հայաստանի տարածքում հայտնի է վերին հինքարիդարյան շուրջ 60 հուշարձան: Դրանց հիմնական մասը լեռնաշխարհի հյուսիսարևելյան, հարավային և հարավարևմտյան մասերում է՝ Եփրատի ավազանում, Կորդվաց աշխարհում, Տիգրիսի ավազանում և այլուր:

Այս ժամանակաշրջանի ***մարդկանց հիմնական զբաղմունքը*** մնում էր որսորդությունը: Համայնքները բնակեցնում էին քարայրեր, ժայռածածկեր, գետերի դարավանդներ, լճերի ափամերձ հատվածներ: Վերինհինքարիդարյան ժամանակի բնակչությունը ձգտել է առավելագույնս մոտ ապրել իր համար անհրաժեշտ կենսապահովման պաշարներին: Այս փուլի ավարտին սկսել է ձևավորվել կենսապահովման մի նոր ձյուղ՝ ***ձկնորսությունը:***

Զարգացման համեմատաբար բարձր աստիճան ունեցող նյութական մշակույթը հանգեցնում է նաև հասարակության հոգևոր կյանքի հարստացմանը: Այս ժամանակաշրջանում արդեն առկա էր, օրինակ, բազմակողմանի թաղման ծեսը:

Մշակույթում առանձնակի տեղ էր գրավում ***արվեստը:*** Այն հիմնականում բաժանվում էր երկու խմբի՝ քարանձավային արվեստի՝ քարայրերի պատերին պահպանված գծանկարներ, և փոքր չափերի արվեստի՝ արձանիկներ, տարատեսակ առարկաների վրա փորագրված և ներկանյութով պատված զարդեր, պատկերաքանդակներ:

Հայկական լեռնաշխարհի վերին հին քարի դարի մշակույթն ընդհանրություններ ունի Մերձավոր Արևելքի վերին հինքարիդարյան մշակույթի հետ: Դա թույլ է տալիս Հայկական լեռնաշխարհի, Միջերկրական ծովի ափամերձ շրջանի (Լևանտ) և Զագրոսի հուշարձանները միավորել մեկ՝ այսպես կոչված ***առաջավորասիական մշակութային գոտու*** մեջ: Վերջինս էապես տարբերվում է աֆրիկյան, միջինասիական և հարավոռասական մշակութային գոտիներից:

Միջին քարի դար: Միջին քարի դարը, ըստ նորագույն գիտական տեսակետների, հին քարից նոր քարի դարին անցման ոչ երկարատև մի ժամանակահատված է, ընդգրկում է ***Ք.ա. 12000–10000 թվականները:*** Մեզանից մոտ 14 հազար տարի առաջ, երբ սկսվում է համաշխարհային հետսառցային տաքացումը, երկրագնդի բնակլիմայական պայմանները փոփոխվում են:

Միջին քարի դարի փուլում շարունակվում են տարբեր նշանակության գործիքների տեսականու ընդլայնումն ու եղածների կատարելագործումը:

Միջինքարիդարյան բնակչության տնտեսության հիմքը շարունակում են մնալ որսորդությունն ու հավաքչությունը, սակայն էականորեն փոխվում է դրանց բնույթը:

Նետն ու աղեղը, որն արդեն կիրառվում էր վերին հին քարի դարի վերջում, միջին քարի դարում հաստատվում է որպես որսորդական տիրապետող զենքի միջոց: Միջին քարի դարում ձկնորսությունը դառնում է սննդի հայթայթման հիմնական ձևերից մեկը:

Միջին քարի դարում են սկզբնավորվում նաև հասարակական առաջընթացի հաջորդ երկու նվաճումները՝ վայրի կենդանիների ընտելացումն ու բույսերի (գերազանցապես՝ հացազգիներ) մշակումը: Այս ժամանակաշրջանում արդեն լայն տարածում ուներ ընտելացված շունը: Վայրի հացազգիները ևս աստիճանաբար դառնում են սննդի հիմնական և հուսալի աղբյուր:

Վերին հին քարի դարը հաճախ համարում են անունդ հավաքողների, միջին քարի դարը՝ անունդ պահեստավորողների, իսկ նոր քարի դարը՝ անունդ արտադրողների ենթափուլեր:

Միջին քարի դարում հասարակության մեջ զգալի է դառնում ընտանիքի դերը: Դրա հետ մեկտեղ աճում է համայնքների միավորման գործընթացը ավելի խոշոր կազմավորումների՝ ցեղերի մեջ: Միջին քարի դարի վերջում զգալիորեն աճում է բնակչության թիվը:

Միջին քարի դարի և նոր քարի դարի սկզբնափուլի մշակույթը: Հայկական լեռնաշխարհի միջին քարի դարի և նոր քարի դարի սկզբնափուլի (Ք.ա. 10000–8000 թթ.) հուշարձանները առայժմ թույլ են ուսումնասիրված: Դրանց թիվը լեռնաշխարհի սահմաններում դեռևս չի անցնում 35–ից, որոնք ինչպես բացօթյա կայաններ ու հնավայրեր են, այնպես էլ քարայր–կացարաններ ու ժայռածածկեր: Կարելի է առանձնացնել այս փուլին պատկանող հուշարձանների երկու խումբ՝ ***Թոնդրյան*** (Ծալկայի սարահարթ) և ***Ապարանյան*** (Ապարանի գոգավորություն):

Միջին քարի դարի և նոր քարի դարի սկզբնափուլի հուշարձանների սահմանափակ քանակ է արձանագրված նաև Ճորոխ գետի վերին հոսանքի շրջանում, Եփրատի և նրա վտակ Արածանիի ավազանում: Այս ժամանակաշրջանի մշակութային մի յուրորինակ օջախ է լեռնաշխարհի հարավարևելյան մատույցներում գտնվող Տիգրիսի վտակ Մեծ Զաբ գետի ավազանը:

Այսպիսով՝ Ք.ա. XII–VIII հազարամյակներում Հայկական լեռնաշխարհի մշակույթը, զարգացել է յուրօրինակ ֆիզիկաաշխարհագրական պայմանների ազդեցության ներքո:

Որակապես նոր մակարդակի հասած ձկնորսությունը և որսորդությունը շարունակել են մնալ բնակչության սննդի հիմնական աղբյուրը: Միաժամանակ առկա է եղել բուսատեսակների ու փափկամարմինների հավաքչությունը: Սահմանափակ էր նաև ընտելացված կենդանիների՝ ոչխարի, այծի և խոզի դերը:

Այս փուլում լեռնաշխարհի բնակչությունը բավական շարժուն էր, ապրում էր ոչ մեծ խմբերով, միևնույն տեղում երկարատև բնակության հետքեր չեն մնացել: Մարդիկ զբաղեցրել են բարձրլեռնային շրջանները՝ սարահարթերն ու գոգավորությունները:

Մարդկանց կյանքում տեղի ունեցող որակական փոփոխությունների ապրիձանական աճն ու զարգացումը դարձան այն հիմքը, որը շուտով Հայաստանի զարգացում ապահովեց նորքարիդարյան հեղափոխության հաղթանակը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ գիտեք մարդու ծագման մասին: Հնագույն մարդու նախնական բնակեցման տարածքներից ինչո՞վ է առանձնանում Հայկական լեռնաշխարհը:
2. Որքա՞ն է տևել հին քարի դարը Հայկական լեռնաշխարհում: Ներկայացրեք հին քարի դարի ենթափուլերի դրսևորումները մեր հայրենիքի տարածքում:
3. Ո՞ր փուլն է հաջորդել հին քարի դարին: Ինչո՞ւ է այդպես անվանվել: Ի՞նչ նոր երևույթներ են բնորոշ այս փուլին:
4. Աղյուսակի տեսքով ներկայացրեք նախնադարի փուլերն ու ենթափուլերը, որքա՞ն է տևել, ի՞նչ տեսակի հնավայրեր են հայտնի և որտե՞ղ են գտնվում:

§ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ Ք.Ա. X – II ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ

Նոր քարի դար: Պատմության քարիդարյան շրջանի վերջին փուլը՝ նոր քարի դարը, նորագույն ուսումնասիրությունների համաձայն, ***Հայաստանի զարգացում*** թվագրվում է ***Ք. ա. X հազարամյակից*** մինչև ***VI հազարամյակի կեսերն*** ընկած ժամանակաշրջանով:

Ք.ա. VIII հազարամյակի վերջերից ոչ միայն մեր հայրենիքի, այլ նաև Առաջավոր Ասիայի մյուս շրջաններում արդեն գոյու-

թյուն ունեին կայացած երկրագործական հասարակություններ: Միջերկրական ծովի, Սիրիական անապատի և Հայկական (Արևելյան) Տավրոսի միջև ընկած գետահովիտներում ու արգավանդ հողերով հարուստ տարածքներում հանդես են գալիս առաջին նստակյաց բնակատեղիները: Դրանք նեղ շերտով ձգվում են հարավից հյուսիս՝ Հորդանանի հարթավայրից, դամասկոսյան օազիսի լճերի ափերով դեպի միջին Եփրատ և Ուրֆայի (Ուռհա) շրջանից՝ Եփրատի ու Տիգրիսի վերին հոսանքները: Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան և հարևան շրջաններում տեղաբաշխված մի շարք հուշարձանների վերջին տասնամյակների պեղումները հիմնովին փոխել են մեր տարածաշրջանի նոր քարի դարի մասին եղած պատկերացումները:

«Նորքարիդարյան հեղափոխություն»: ***Ք.ա. X-VIII հազարամյակներում սկզբնավորվեցին քաղաքակրթության անցման նախադրյալները Հայաստանի կարածքում:*** Հայկական լեռնաշխարհը երկրագործության սաղմնավորման խոշորագույն կենտրոն է եղել: Այստեղից երկրագործությունը և դրա հետ կապված մշակութային նորամուծությունները (բնակարանաշինություն, մետաղագործություն, խեցեգործություն, մանածագործություն և այլն) տարածվել են նաև լեռնաշխարհի հարևան շրջաններում:

Քաղաքակրթության ձևավորման տնտեսական, սոցիալական, մշակութային նախադրյալների ձևավորման համար հատկապես կարևոր եղավ բնական նոր միջավայրին հարմարվելու կենսաձևը: Դրա մասին վկայող փոփոխությունները մեր տարածաշրջանում այնքան նշանակալից էին, որ անգլիացի պատմաբան-հնագետ Գ. Չայլդն այն որակեց ***«նորքարիդարյան (նեոլիթյան) հեղափոխություն»*** եզրույթով: Այս կենսաձևը աստիճանաբար տիրապետող դարձավ Առաջավոր Ասիայում և Հարավային Եվրոպայի զգալի մասում:

Դեռևս 1960-ական թթ. Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում՝ ***Աղձնիքում,*** նոր քարի դարին բնորոշ նյութերով հնավայրի պեղումներից հետո անպատասխան էր մնում այն հարցը, թե որտեղ պետք է փնտրել այս մշակույթի ակունքները: 1990-ական թվականների առաջին կեսին ***Սասնո ջուր գեղի արևմտյան ափին պեղված հնավայրի*** տվյալները եկան փաստելու, որ այստեղ կայուն բնակատեղիներ հիմնող առաջին համայնքները հանդես են գալիս արդեն ***Ք.ա. X հազարամյակից:***

Ուսումնասիրությունների արդյունքում ակնհայտ դարձավ, որ Հայկական Տավրոսից հյուսիս ընկած շրջանների նոր քարի դարի մշակույթը տեղական արմատներ ունի: Այսօր Ուրֆայում (Եդեսիա), Աղձնիք և Ծոփք աշխարհներում հայտնի են մի շարք հուշարձաններ, որոնք ակնհայտորեն ձևավորվել են տեղական մշակութային ավանդույթների հենքի վրա: ***Եփրատի*** և ***Տիգրիսի վերին հոսանքներում*** (այսպես կոչված՝ ***ուկեն նուանկյունում***) տեղաբաշխված նորքարիդարյան հուշարձանները վաղ երկրագործական հասարակությունների մասին նոր և բազմակողմանի տվյալներ են տալիս:

Նորքարիդարյան մշակույթը: Գոյատևման տարրական միջոցներ ունեցող փոքր գյուղակներին փոխարինում է բավականին բարդ սոցիալական կազմ և զարգացած մշակույթ ու տնտեսություն ունեցող մի հասարակություն: Որմնաքանդակներով և որմնապատկերներով զարդարված կոթողային կառույցները, բարդ տեխնոլոգիաներով արհեստների մասնագիտացումը, միջտարածաշրջանային արդյունավետ կապերն ու առևտուրը, ինչպես նաև մետաղագործությունն ասվածի լավագույն վկայությունն են:

Առաջինը, ինչն աչքի է զարնում այս հուշարձաններում, բնակավայրերի առանձնացված հատվածներում կոթողային շինությունների առկայությունն է, որոնք շինարարական տեխնիկայով և կահավորանքով խիստ տարբերվում են այլ կառույցներից: Մասնավորապես ***Եդեսիայի մոտ գտնվող Պոտպաբլուր հնավայրի*** արևելյան հատվածի վաղ շերտերում բացվել է 1000 քառ. մ տարածք զբաղեցնող մի հրապարակ, որի

Տաճարային համալիր. Արևմտյան Հայաստան

Ներքին հարդարանքի կոթող. Արևմտյան Հայաստան

հարևանությամբ պեղվել են, այսպես կոչված, ***սպե կոթողների կունը*** և ***գանգերի կունը:*** Այս կառույցները նախատեսված են եղել համահամայնական արարողությունների ու հավաքների համար:

Հասարակական կառույցների մեջ առանձնակի դեր է ունեցել, այսպես կոչված, «խճապատ հատակով շինությունը»: Վերջինիս հատակը զարդարվել է գիպսով ամրացված և կարմիր, նարնջագույն, սպիտակ երանգների համադրություն կազմող խճաքարերով: Կառույցից գտնվել են մարդու գլխի կրաքարե քանդակ և մարդակերպ բարձրաքանդակ պատկերով հարդարված քարակոթող:

Այս գտածոների տեղն ու դերն ավելի պարզ դարձավ, երբ պեղվեց մյուս հուշարձանը, որտեղի պաշտամունքային կառույցներն արդեն իսկական տաճարներ են: Հարկ է նշել, որ ***Պորտաբլուրում բացվել են Երկիր մոլորակի վրա մինչ օրս հայտնի ամենահին տաճարները:***

Մինչև 4 մ բարձրություն ունեցող քանդակազարդ կոթողներով «սրբազան շինություն» է բացվել նաև մեկ այլ հուշարձանում (այսպես կոչված՝ ***«առյուծների կունը»***): Բլրի վրա գտնված քարակոթողներից ամենամեծի բարձրությունը հասնում է 9 մետրի և կշռում է ավելի քան 50 տոննա: Քարակոթողները քանդակազարդված են մարդու, թռչնամարդու, կրիայի, առյուծի և այլ պատկերներով:

Ք.ա. VIII հազարամյակում արդեն Պորտաբլուր հնավայրում զգալի քանակությամբ պղնձի օքսիդաքար՝ մալախիտ և լազուրիտ է հայտնաբերվել: Փաստագրվել են նաև պատրաստի իրեր, որոնք ***երբևիցե հայտնաբերված հնագույն մետաղե գտածոներից են:*** Այս իրերը պատրաստվել են սառը կռման եղանակով՝ մալախիտի կտորներից: Հատկանշական է, որ իրերի մեջ մեծամասնություն են կազմում զարդերը՝ ուլունքները՝ պատրաստված գերազանցապես մալախիտից, մասամբ՝ պղնձից, և կախիկները:

Վերջին տարիներին բացառիկ հետաքրքիր տվյալներ են ձեռք բերվել հացազգիների ընտելացման մասին: Պարզվել է, որ հաճարի և մշակովի կարծր ցորենի ընտելացման օջախը քարտեզագրվում է նշված մշակույթի տարածման շրջանում: Նորքարիդարյան հիմնական մշակաբույսերը՝ ոլոռ, սիսեռ, ոսպ, միահատիկ ցորեն, նույնպես հիշյալ տարածքում են ընտելացվել:

Պղնձի-քարի դար: Վանա լճի ափամերձ գոտու, Խարբերդի հովտի հուշարձանների տվյալները ցույց են տալիս, որ Հայկական լեռնաշխարհը ***Ք.ա. VI հազարամյակի երկրորդ կեսում*** և ***V հազարամյակում*** ընդգրկվում է պղնձի-քարիդարյան մի ինքնատիպ մշակութային ոլորտ:

Ք.ա. VII հազարամյակի վերջերից լեռնաշխարհի մեծագույն մասում արտադրող տնտեսությունը հանդես է գալիս արդեն որպես լիովին ձևավորված համակարգ՝

հիմնված ընտելացված կենդանական և բուսական աշխարհի շահագործման վրա:

Նորքարիդարյան և պղնձի–քարիդարյան բնակատեղիները (Վերին Խաթունարխ, Ծաղկունք, Մասիս բլուր, Աղաբլուր, Թեղուտ) տեղաբաշխված են հարթավայրում և կապված են գետային որոշակի ցանցի հետ: Տարածաշրջանի վաղ երկրագործական հասարակությունների կայացման և զարգացման համապատկերը վեր հանելու համար բացառիկ տվյալներ են գրանցվել *Առապուշեն* բլուր–բնակատեղիում (Արարատյան դաշտ): Պղնձի–քարիդարյան մշակույթը ներկայացնող հուշարձաններից կարելի է հիշատակել Արարատյան դաշտում պեղված Աղաբլուր (հայտնի է նաև Կղզյակ բլուր անունով) հնավայրը:

Արաքսից հյուսիս ապրող հասարակությունների անասնապահական տնտեսությունը խարսխված էր խոշոր և մանր եղջերավորների բուծման վրա: Գերակշռում էին ոչխարներն ու այծերը, չնչին քանակությամբ բուծվում էր նաև խոզ:

Մետաղ (պղինձ, կապար) առարկաների սկզբնական պատրաստումն ու օգտագործումը սկսվել են դեռևս նոր քարի դարի շրջանում: Մալախիտի և լազուրիտի չմշակված բեկորներ են գտնվել հումքի աղբյուրներից բավականին հեռու գտնվող Արարատյան դաշտի Ք.ա. VI հազարամյակի հնավայրերից՝ Առատաշենից և Ակնաշենից: Այստեղ հայտնաբերվել են նաև պղնձե մանր զարդեր՝ փաթաթված թիթեղից պատրաստված գլանաձև ուլունքներ: Նման պատկեր ունենք նաև Կուրի միջին հոսանքի համաժամանակյա բնակատեղիներում: Ք.ա. V հազարամյակի վերջերից մետաղե իրերի տեսականին ընդլայնվում է:

Ք.ա. IV հազարամյակի կեսերից Հայկական լեռնաշխարհի Տիգրիս–Եփրատ հատվածը սերտ փոխառնչությունների մեջ է մտնում Հարավային Միջագետքի հետ: Նույն ժամանակահատվածում լեռնաշխարհի հյուսիսարևելյան շրջաններում ձևավորվում է մշակութային բոլորովին նոր պատկեր:

Բրոնզի դար: Ք.ա. IV հազարամյակի երրորդ քառորդից հասարակական առաջընթացը Հայաստանի տարածքում մի նոր փուլ է թևակոխում: Զարգացման տարբեր մակարդակների վրա գտնվող վաղ երկրագործական հասարակություններով ներկայացված համապատկերը գլխովին փոխվում է: Լեռնաշխարհն այստեղ ներկայանում է զարգացման նույն մակարդակի վրա գտնվող և համասեռ մշակույթով մի հասարակությամբ, որը *շուրջ հազար տարի պահպանում է մշակութային միասնությունը:*

Տարածաշրջանի հնագույն հասարակական զարգացման բնկումնային համարվող այս ժամանակահատվածը հիմնականում համապատասխանում է մեր պատմության վաղ բրոնզի դարին՝ *Ք.ա. 3500–2300 թվականներին:*

Հայաստանի վաղբրոնզիդարյան ընդհանրության՝ այսօր հայտնի վաղագույն համալիրները կենտրոնացված են Կուր և Արաքս գետերի ավազաններում: Կուր–արաքսյան հուշարձանները թվագրվում են Ք.ա. IV հազարամյակի կեսերով: Նույն հազարամյակի վերջում միայն այդ մշակույթը սկսում է տարածվել Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան շրջաններում, Իրանում, Հյուսիսային Կովկասում:

Կուր–արաքսյան գետահովտից և հարակից շրջաններից բնակչության հոծ զանգվածներն աստիճանական տեղաշարժերով սկսում են նոր տարածքներ յուրացնել: Ք.ա. III հազարամյակի երկրորդ քառորդում արդեն, այսպես կոչված, «Կուր–արաքսյան ծավալման» ալիքը հարավարևմտյան ուղղությամբ հասնում է մինչև Պաղեստինի հարավային շրջանները, հարավ–արևելքում՝ մինչև Համադան և Քերմանշահ, հյուսիսում անցնում է Կովկասյան լեռնաշղթան՝ մինչև Հյուսիսային Օսիա:

Հետագա բոլոր ժամանակաշրջաններում ոչ մի մշակույթ, որի պատմական միջուկը Հայկական լեռնաշխարհն էր, իր էական հատկանիշներով այդպիսի ընդարձակ տարածք չի ընդգրկել, ինչպես Կուր–արաքսյանը: Մշակութային այս աննախադեպ տարածումը մեկնաբանվում է որպես

միգրացիայի, էթնիկական տեղաշարժերի արդյունք: Այդ համատեքստում աննախադեպ տարածում է ստանում հատկապես շենգավիթյան մշակութային համալիրը: ***Շենգավիթի համալիրը*** Երևանի հարավարևմտյան մասում է՝ Հրազդան գետի ձախափնյա բլրին (ներկայիս՝ Երևանյան լճի շրջանում):

Ք.ա. III հազարամյակի երկրորդ կեսում Կուր–արաքսյան մշակութային ընդհանրության անկման մասին առավել տարածված է այն տեսակետը, որ տնտեսության մեջ անասնապահության դերի աճով պայմանավորված՝ այս հասարակությունը անցնում է նոր՝ ոչ նստակյաց կենսաձևի:

Կուր–արաքսյան ընդհանրության կազմալուծմանը զուգընթաց Ք.ա. III հազարամյակի երրորդ քառորդի ընթացքում լեռնաշխարհի մեծ մասում ասպարեզից դուրս մղվեց շենգավիթյան մշակութային համալիրը: Այստեղ տարածում է ստանում առավելապես դամբանաբլուրներով հայտնի՝ ***«վաղ կուրգանների մշակույթը»***:

Կուր–Արաքս ավազանի կենտրոնական շրջաններում, ինչպես նաև Կուրից հյուսիս և արևելք ընկած տարածքներում Ք.ա. III հազարամյակի վերջին երկու հարյուրամյակներում արմատավորվում են, այսպես կոչված, ***«Թռեղք-վանաձորյան»*** մշակութային համալիրները:

Թռեղքի, Լոռի բերդի, Վանաձորի, Քարաշամբի «արքայական թաղումները» միանշանակ վկայում են տարածաշրջանի սոցիալական միջավայրում արմատական փոփոխությունների մասին:

Նոր մշակութային ընդհանրությունների առաջացումը: Շուրջ Ք.ա. XIX դ. կեսերից լեռնաշխարհի արևելքում և հյուսիս–արևելքում (Սյունիք, Արցախ, Սևանի ավազան, Աղստևի հովիտ) տարածում են ստանում, այսպես կոչված, ***Սևան-արցախյան*** մշակույթին բնորոշ իրողությունները: Նորահայտ այս մշակութային համալիրն արդեն առավելապես ներկայացված է բնակատեղիներով, ինչը տարածքի յուրացման և բնակեցման՝ նախորդ դարաշրջաններից տարբերվող նոր համակարգի արմատավորման մասին է վկայում:

Ք.ա. XVIII դարի վերջերից փոփոխությունների մի նոր ալիք է սկսվում: Այն տարածվում է ավելի ընդարձակ սահմանների մեջ՝ ներառելով Ուրմիայի և Վանի ավազանները, Նախիջևանը, Արարատյան դաշտը, Շիրակը, Կարսի սարահարթը, Արագածի փեշերը, Կոտայքը, Սևանի ավազանը: Մշակութային միջավայրի արագահաս փոփոխություններով հագեցած այս փուլն իր ավարտին է հասնում Ք.ա. XVI դարի վերջին:

Հատկապես վերջին տարիներին Հայաստանի հնագիտական հուշարձանների բազմակողմանի ուսումնասիրությունները, հայտնաբերված նյութերը և թաղման ծեսը փաստագրում են ուշ բրոնզի դարի հասարակությունների աննախադեպ վերելքի մասին:

Երկաթի դարի սկիզբը: Հայաստանում երկաթի դարը սկսվում է ***Ք.ա. II հազարամյակում:*** Երկաթի պաշարներով հարուստ ***Հայկական լեռնաշխարհը***՝ Սյունիք, Մուշ, Խնուս և այլն, ***Առաջավոր Ասիայում դարձավ հումքի գլխավոր մատակարար և գերիշխող դիրք գրավեց:***

Հայաստանի երկաթիդարյան հայտնի հուշարձաններից են Մեծամորը, Շամիրամը, Դվինը, Կարմիր բլուրի նախաուրարտական բնակավայրը, Այգեշատը, Թալինը, Լոռի բերդը և այլն: Նշված բնակավայրերից և դամբարաններից, համալիրներից հայտնաբերվել են երկաթից պատրաստված բազմաթիվ իրեր՝ զենքի տեսակներ, աշխատանքային գործիքներ, պերճանքի առարկաներ, ձիասարքի մասեր, արձանիկներ և այլն: Երկաթից գործիքները և զենքերն անհամեմատ ավելի ամուր և էժան էին, քան բրոնզից պատրաստվածները, չնայած որ երկաթի մշակման համար պահանջվում էին ջերմային ավելի բարձր պայմաններ: Հայաստանի մի շարք հնավայրերից հայտնաբերվել են ***երկաթի ձուլման հնոց-արհեստանոցներ,*** որը վկայում է տնտեսության և արհեստների աննախադեպ զարգացածության մասին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Նորքարիդարյան փուլին վերաբերող ինչ հնավայրեր են հայտնի, որտեղ են դրանք: Ինչ փոփոխություններ են կատարվել մարդկանց կենցաղում:
2. Պղնձի–քարիդարյան հնավայրերից որոնք են ուսումնասիրվել: Ինչ փոփոխություններ կատարվեցին մարդկանց կենցաղում:
3. Բրոնզիդարյան փուլը ներկայացրեք աղյուսակի տեսքով: Համեմատեք այն քարիդարյան և պղնձի–քարիդարյան փուլերի հետ, ցույց տվեք փոփոխություններն ու առաջընթացը:
4. Երբ է սկսվել երկաթի դարը Հայկական լեռնաշխարհում:

§ 3. ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ: ԱՐՎԵՍՏԸ: ԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԵՐԸ

Պաշտամունքը: Մարդիկ հնուց ի վեր մշտապես կապված են եղել իրենց շրջապատող աշխարհին: Ուսումնասիրելով բնությունը՝ նրանք նկատում էին, որ տարվա եղանակները հաջորդում են իրար, արևը և լուսինը, քամին, անձրևը և այլ երևույթներ գոյություն ունեն իրենց կամքից անկախ: Հաճախ այս երևույթները սարսափ էին առաջացնում մարդկանց մոտ, քանի որ մնում էին անհասկանալի և անբացատրելի: Այս բոլորը նրանք սկսում են վերագրել գերբնական ուժերին՝ անտեսանելի, զորավոր ոգիներին: Մարդիկ կարծում էին, որ ոգիներին՝ բարի և չար գերբնական ուժերին, պետք է սիրաշահել ու զոհեր մատուցել, կատարել ծիսակատարություններ: Այդպես առաջացավ կրոնը: Կրոնի նախասկզբնական ձևերը բնորոշ են գրեթե բոլոր հանրություններին: Դրանք են ***տոտեմիզմը, անիմիզմը, ֆետիշիզմը, մոգությունը:***

Տոտեմիզմը հավատն է կենդանու, բույսի, բնության երևույթի հանդեպ, ըստ որի՝ տոհմային խմբի ծագումը կապվում է դրանց հետ: Տոհմը կրում էր իր տոտեմի՝ արջի, ցուլի և այլնի անունը և հավատում էր, որ իրենք ծագում են ընդհանուր նախնուց ու նրա հետ կապված են արյունակցական սերտ կապերով: Տոտեմին համարում էին «հայր», «ավագ եղբայր» և այլն, որն օժանդակում էր տվյալ տոհմի անդամներին: Յուրաքանչյուր տոհմ ուներ իր սրբազան կենտրոնը: Այստեղ պահպանվում էին տոհմական մասունքները և կատարվում էին զանազան ծիսակատարություններ: Տոտեմիզմը արտահայտում էր տոհմի անդամների և բնական միջավայրի հետ սերտ կապը:

Անիմիզմը (ոգեպաշտություն) որևէ մարմնի մեջ ամփոփված (հոգիներ) կամ ինքնուրույն գործող (ոգիներ) գերբնական էակների նկատմամբ հավատն է: Ոգեպաշտական հավատալիքների սաղմերը, որով բնության երևույթներին շնչավոր բովանդակություն էր տրվում, երևան են եկել դեռևս ամենավաղ շրջանում: Հին հանրություններն աղոտ պատկերացում ունեին կենդանի և մահացած մարդկանց հոգիների, չար ու բարի ոգիների մասին: Մարդիկ կարծում էին, որ դրանք շոշափելի առարկաներ են:

Ֆետիշիզմը (առարկայապաշտություն) հավատն է անշունչ առարկաների՝ ծառերի, ժայռերի, քարանձավների, պաշտամունքային հատուկ պատրաստված իրերի գերբնական հատկությունների նկատմամբ: Ֆետիշ կարող է համարվել, օրինակ՝ նիզակը կամ դաշույնը, որը մարդկանց համար ուներ կենսական, հրաշագործ հատկություն և նշանակություն:

Մոգությունը հավատն է այլ մարդկանց, կենդանիների, բույսերի, բնության երևույթների վրա առանձնահատուկ ձևով ներգործելու՝ մարդու ունակության նկատմամբ: Հնագույն մարդը ենթադրում էր, որ որոշակի հնարքների, գործողությունների, բառերի, երգի, պարի և այլ միջոցներով

հնարավոր է անձրև բերել, քամի բարձրացնել, ապահովել բարձր բերք, ունենալ առատ որս և այլն: Մարդը մոգությամբ «բուժում էր» վերքերը և կանխում հիվանդությունները:

Տարբեր հուշարձաններից գտնված մերկ կանանց և կենդանիների արձանիկները, կավակերտ օջախները վկայում են, որ հնագույն բնակիչների կյանքում մեծ տեղ են ունեցել ***ծեսերն*** ու ***պաշտամունքը:*** Երկրագործ և անասնապահական համայնքներում, բնականաբար, տիրապետող էին ագրարային ծեսերը:

Պաշտամունքի գլխավոր առարկան աշխարհն արարող ***մայր երկիրն է,*** որի խորհրդանիշը դարձավ սերունդ տվող կինը՝ ***«Մեծ մայրը»:*** Համայնքների սոցիալական կառուցվածքում և կենցաղում տեղ գտած փոփոխությունները ևս իրենց կնիքն էին թողնում պաշտամունքային պատկերացումների վրա:

Մեր հեռավոր նախնիները երկրային կյանքը, դրա բազմազան դրսևորումները, մահը և անդրշիրիմյան կյանքը բացատրում էին ոգու ներկայությամբ կամ բացակայությամբ: Հետզհետե ***սկզբնավորվում է նախնիների պաշտամունքը,*** հավատը տոհմի նախորդ սերունդների անդամների ոգիների հրաշագործ զորության նկատմամբ: Տոհմի, հետագայում նաև գերդաստանի, ազգի ***հիմնադիր նահապետները արբացվում են:*** Յուրաքանչյուր համայնք, ընտանիք ուներ իր հովանավոր նախնին, որից սերվել էին իրենք: Մահացած տոհմակիցներին թաղում էին բակում՝ տան շեմին կամ հատակի տակ, որպեսզի մահացած ազգականի ոգին չլքեր իրենց:

Պեղումներից հայտնաբերված ցլագլուխ և խոյագլուխ զարդաքանդակներով ծիսական օջախները, կենդանիների և մարդկանց արձանիկները յուրաքանչյուր բնակելի համալիրի անբաժան ուղեկիցներն էին: Սրանք վկայում են, որ, իրոք, Հայաստանի տարածքում ապրած մարդկանց կյանքում կրոնական պատկերացումներն ու ծիսական արարողություններն էական դեր են խաղացել:



Ժայռապատկեր. Ուղտասար, Ք.ա. V–II հազ.

Արվեստը: Նախնադարյան Հայաստանի մշակույթի մասին հարուստ նյութեր են հայտնաբերվել: Դրանք հստակ պատկերացում են տալիս մեր հայրենիքի բնիկների կյանքի մասին:

Հայաստանի տարածքում (Գեղամա, Վարդենիսի, Վասպուրականի, Կորդվաց, Հայկական Տավրոսի լեռնաշղթաներ, Սյունիք և այլն) հայտնաբերված քարակոթողները, հատկապես Քարահունջը և ժայռապատկերները մեր հնագույն նախնիների ապրելակերպի և աշխարհընկալման կարևորագույն աղբյուրներ են:

Որսորդական, ծիսական տեսարանները, երկնային մարմինների երկրաչափական խորհրդանիշներն ու մարդակերպ աստվածների, երևակայական կենդանիների պատկերները վկայում են այդ ժայռապատկերների կրոնական բնույթի մասին:

Հայաստանում տարածված հավատալիքները բրոնզի դարում մեծ առաջընթաց են ապրում: Այս ժամանակի պաշտամունքային համակարգում կենտրոնական տեղ էր զբաղեցնում ***արևի պաշտամունքը:*** Հնավայրերում արևը պատկերող ու խորհրդանշող բազմաթիվ բրոնզյա իրեր են հայտնաբերվել: Լայն տարածում են գտել մարդակերպ և կենդանակերպ արձանիկները:

Բրոնզիդարյան կիրառական արվեստում իր պատշաճ տեղն ունի նաև երկնային լուսատուների պաշտամունքը: Իսկ ջրի պաշտամունքի խորհրդանիշներ են օձի կամ այծի, օձի և թռչունի, վիշապաձկների, ցուլերի պատկերները: Հնագիտական նյութերը պատկերացում են տալիս թաղ-

ման սովորույթների և հուղարկավորման ծիսակատարությունների, անդրշիրիմյան կյանքի մասին հավատալիքների վերաբերյալ:

Գիտության տարրերի առաջացումը: Հայաստանում գիտական իմացությունը սկիզբ է առել ու զարգացել մարդկանց առօրյա կյանքի և աշխատանքային գործունեության պահանջներին համապատասխան:

Մարդկանց անհրաժեշտ էր հաշվել հողատարածքի մակերեսը, ստացած նյութական բարիքները և այլն: Աստղերի ու մոլորակների դիրքն ու շարժումն իմանալն անհրաժեշտ էր օրացույց կազմելիս, վարուցանք անելիս: Մետաղները ձուլելիս, տարբեր համաձուլվածքներ ստանալիս հարկ էր իմանալ դրանց որոշակի հատկությունները:

Մարդիկ գիտակցում էին, որ հիվանդությունները հնարավոր չէ բուժել միայն գուշակների և հեքիմների օգնությամբ: Անհրաժեշտ էր մարդու ներքին օրգանների իմացություն և հետազոտում:

Գրերի շնորհիվ սերնդեսերունդ կուտակված փորձն ամփոփվում և պահպանվում էր հազարամյակներ: Գիր ստեղծելիս պետք է իմանալ այս կամ այն լեզվի հնչյունական կառուցվածքը:

Այսպես ***ապրիճանաբար առաջացան գիտության պարզագույն բնագավառներին վերաբերող նախնական գիտելիքներ:*** Հին ժամանակներում դրանք ունեին գործնական նշանակություն: Դրանցով զբաղվում էին թագավորները, քրմերը և այլն:

Բնագիտական գիտելիքները մարդկանց անհրաժեշտ էին ամենօրյա կյանքում: Մարդիկ իրենց իմացությունը փոխանցում էին սերունդներին: Վերջիններս ուսանում էին ժամանակի բոլոր հայտնի գիտելիքները:

Արձան-կուռք. Կարմիր բերդ

Քարի դարի ավարտին և բրոնզի դարում մարդն առաջին քայլերն արեց ժամանակը չափելու ուղղությամբ: Սկզբում նա հաշվեց օրերի այն քանակը, որի ընթացքում լուսնի մահիկը, անընդհատ մեծանալով, վերածվում էր լիալուսնի և վերադառնում իր սկզբնական վիճակին: Այսպես ծագեց լուսնային ամսվա գաղափարը: Հնարավոր եղավ ժամանակը չափել ոչ միայն օրերով, այլև լուսնային ամիսներով:

Մարդկանց համար շատ դժվար էր պարզել տարվա տևողությունը, սակայն մարդն անընդհատ զարգանում էր ու առաջադիմում: Հետևելով եղանակային փոփոխություններին՝ նրանք հայտնագործեցին, որ գարնանից մինչև հաջորդ գարուն, բերքահավաքից մինչև հաջորդ բերքահավաք մոտավորապես նույն քանակությամբ օրեր են անցնում: Հետևելով երկնակամարում որոշ աստղերի շարժմանը՝ պարզեցին, որ տարին բաղկացած է 365 օրից, որով փաստորեն սկիզբ առավ շարժական տոմարը:

Առկա նյութը ցույց է տալիս, որ Հայկական լեռնաշխարհի բնակչությունը հավանաբար Ք.ա. III հազարամյակից հիանալի պատկերացում ուներ արեգակնային տարվա մասին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Նկարագրեք Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչների հավատալիքների սկզբնական ձևերը:
2. Ինչպես ձևավորվեցին արվեստն ու գիտության տարրերը. ինչ դրսևորումներ դրանք ունեցան: Արվեստի և գիտության ինչ նշանավոր հուշարձաններ ու գտածոներ են հայտնաբերվել:
3. Աղյուսակի տեսքով ներկայացրեք նախնադարյան մշակույթը, դրա նվաճումները Հայաստանի տարածքում:

ԲԱԺԻՆ 2 ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Թեմա 1. ՀԱՅՈՑ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. ՀԱՅՈՑ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Հնդեվրոպական նախահայրենիքը: Ժողովուրդների ու լեզուների առաջացման հարցը միշտ էլ հետաքրքրել է մարդկությանը: Այդ խնդրի նկատմամբ հետաքրքրությունը խիստ մեծացավ XVIII–XIX դարերում: Նոր ժամանակների գիտության մեջ ծնունդ առավ ***համեմատական լեզվաբանությունը,*** որի շնորհիվ պարզ դարձավ, որ նախապատմական ժամանակներում ներկայիս ժողովուրդների նախնիները կազմել են մեծ ընտանիքներ: Դրանք գիտության մեջ կոչվեցին ***«մայր ժողովուրդներ»,*** իսկ վերջիններիս զբաղեցրած տարածքները՝ ***«նախահայրենիքներ»:***

Հայերն ունեն հնդեվրոպական ծագում, այսինքն՝ մի շարք այլ ժողովուրդների նախնիների հետ նախապատմական ժամանակներում կազմել են մեկ ազգային ընդհանրություն (ազգակցություն): Այն այսօրվա գիտության մեջ կոչվում է «հնդեվրոպական մայր ժողովուրդ» և զբաղեցրել է միևնույն տարածաշրջանը՝ «հնդեվրոպական նախահայրենիքը»: Լեզվաընտանիքի անվանակոչումը պայմանավորված է դրան պատկանող ժողովուրդների՝ Հնդկաստանից մինչև Եվրոպայի արևմուտք տարածվածությամբ:

Հնդեվրոպական նախահայրենիքը Հայկական լեռնաշխարհում էր, Փոքր Ասիայի արևելյան, Միջագետքի հյուսիսային և Իրանական սարահարթի հյուսիսարևմտյան շրջաններում:

Աշխարհի ամենաբազմանդամ լեզվաընտանիքը հնդեվրոպականն է: Հնդեվրոպական մայր լեզվից են առաջացել ռոմանական, գերմանական, սլավոնական, հնդկական, իրանական և այլ լեզվաձյուղերը, որոնք իրենց հերթին տրոհվել են ավելի փոքր լեզվաձյուղերի ու լեզուների:



Հետաքրքրական է, որ այսօր կենդանի հնդեվրոպական լեզուներից միայն ալբաներենը, հունարենն ու հայերենն են, որ ի սկզբանե եղել և առ այսօր մնում են որպես առանձին ու ինքնուրույն լեզվաձյուղեր: ***Հայերենի անջատվելը հնդեվրոպական ընդհանրությունից,*** ըստ լեզվագիտական ուսումնասիրությունների, տեղի է ունեցել ***Ք.ա. IV հազարամյակի վերջին:***

Վերջին տարիներին կատարված ուսումնասիրությունները գենետիկայի բնագավառում ցույց են տալիս, որ հայերենի անջատվելը հնդեվրոպական ընդհանրությունից և հայերենի՝ ինքնուրույն լեզու դառնալը կարող էին տեղի ունեցած լինել շատ ավելի վաղ:

Հայերը միակ ժողովուրդն են, որի ծագումն ու կազմավորումը տեղի է ունեցել Հայկական լեռնաշխարհում՝ հնդեվրոպական նախահայրենիքի տարածքում: Հետևաբար հայերը Հայկական լեռնաշխարհի բնիկ տերերն ու ժառանգորդներն են:

Հայոց ծագումնաբանության վերաբերյալ ավանդազրույցները: Հայերի ծագման մասին պատմական և առասպելական տեղեկություններ են պահպանվել ոչ միայն հայ մատենագրության էջերում, այլև հունական, հին եբրայական (հրեական), վրացական, արաբական և պարսկական գրավոր հուշարձաններում:

Հայկական ավանդազրույցը: Հայոց ծագումնաբանության մասին բնիկ հայկական ավանդազրույցը ստեղծվել է վաղնջական ժամանակներում և մեզ հասել պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմության» շնորհիվ: Ավանդազրույցի առանձին դրվագներ հիշատակվում են միջնադարի հայ մատենագիրների երկերում, որոնք XVIII դարում ի մի բերվեցին հայ նոր պատմագրության հայր Միքայել Չամչյանի «Հայոց պատմության» էջերում:

Ավանդազրույցում որոշակիորեն առանձնանում է ժամանակագրական երկու շերտ: Առաջին՝ հնագույն շերտը ստեղծվել և գոյություն է ունեցել նախաքրիստոնեական ժամանակներում: Ավանդազրույցի համաձայն՝ հայերը սերվել են դյուցազուն Հայկ նահապետից, որն առաջին և արարչագործ աստվածների հսկա որդիներից էր:

Թե առաջին աստվածներից ում որդին է Հայկ դյուցազնը, մեր ավանդությունը չի պահպանել: Սակայն այդ բացը լրացվում է Ք.ա. III հազարամյակով թվագրվող հնագույն միջագետքյան (շումերա–աքքադական) սեպագիր արձանագրությունների շնորհիվ: Դրանցից տեղեկանում ենք, որ Հայկական լեռնաշխարհի այսօր հայտնի հնագույն պետության՝ ***Արարատյան հովանավոր աստվածը Հայկն*** էր՝ իմաստության և տիեզերական ջրերի ***Հայ(ա)*** աստծո որդին: Հայ(ա) աստծո պաշտամունքը կապվում էր Հայկական լեռնաշխարհի՝ Եփրատ և Տիգրիս գետերի ակունքների հետ: Պատահական չէ, որ պատկերաքանդակներում նա հանդես էր գալիս որպես այդ գետերը սկզբնավորող:

Հայոց նախաքրիստոնեական ավանդազրույցի համաձայն՝ մեր ժողովուրդը համարվել է արարչագործ Հայ(ա) աստծո և նրա որդի Հայկ դյուցազնի ժառանգը՝ կրելով արարչագործ աստծո անունը:

301 թվականին քրիստոնեությունը Հայաստանում հռչակվեց պետական կրոն, իսկ քրիստոնեական միաստվածության դավանաբանությունը՝ պաշտոնական գաղափարախոսություն: Աստվածաշնչի առաջին՝ Ծննդոց գրքի համաձայն՝ Համաշխարհային ջրհեղեղից հետո վերացավ ողջ մարդկությունը, փրկվեց միայն ***Նոյ նահապետը***՝ իր ընտանիքով, որի տապանը հանգրվանեց Հայկական լեռնաշխարհում՝ ***«Արարատ լեռների վրա»:*** Ըստ նույն աղբյուրի՝ բոլոր ազգերն առաջացել են Նոյ նահապետի երեք որդիներից՝ Հաբեթից, Քամից և Սեմից: Այս պայմաններում հայոց ազգածագման նախաքրիստոնեական ավանդազրույցը համապատասխանեցվեց Աստվածաշնչի պատկերացումներին:

Ձևավորվեց հայոց ծագումնաբանության նոր տեսությունը, որի համաձայն՝

Միջագետքյան կնքադրոշմ
Հայա աստծո թիկունքից բխող գետերը խորհրդանշում էին Եփրատն ու Տիգրիսը

Հայկ նահապետի հայրը *Թորգոմ* նահապետն է՝ *Նոյի Հաբեթ որդու ժառանգներից* մեկը: Աստվածաշնչում Թորգոմ նահապետը համարվում է հայկական հնագույն պետական կազմավորումներից մեկի՝ *Թորգոմա դրան* (Թոգարմա կամ Թեգարամա երկրի) անվանադիր-նախնին: Թորգոմա տունը եղել է Եփրատի վերին ավազանում և հիշատակվում է դեռևս *Ք.ա. XX-XVIII դդ.:* Այդտեղից էլ ծագում են միջնադարյան գրավոր աղբյուրներում հայերին տրվող «Հաբեթածին», «Թորգոմածին», «Թորգոմյան ազգ» անվանումները:

Հայոց ծագումնաբանության նոր՝ քրիստոնեացված ավանդազրույցում ևս հայերը ներկայանում են որպես բնիկ ժողովուրդ Հայկական լեռնաշխարհում, որն իրենց հայրենիքն է և մնացած մարդկության նախահայրենիքը:

Հայոց ազգածագման ավանդազրույցի կարևոր մասն է կազմում «Հայկ և Բել» վիպասքը, որում արտացոլվել է Հին Միջագետքի և Հայկական լեռնաշխարհի դարեր տևած հակամարտությունը: Ավանդությունը պատմում է, որ Հայկը պատերազմել է միջագետքյան բռնակալ Բելի դեմ և հաղթել նրան: Ի նշանավորումն հաղթանակի՝ այդ օրվանից հայերը սկսել են հաշվել *Բուն Հայոց թվարը:*

Հայկական ավանդության համաձայն՝ Հայկ նահապետի անունով մեր ժողովուրդը կոչվեց *հայ,* և երկիրը՝ *Հայք, Հայաստան,* իսկ նրա ժառանգներից *Արամ* նահապետի անունից առաջացան Հայաստանի «*Արմենիա*» և հայերի «*արմեն*» անվանումները:

Ըստ նույն ավանդության՝ Հայկի ու հայկազուն նահապետների անուններով կոչվեցին մեր լեռնաշխարհի բազմաթիվ տեղանուններ: Հենց իր՝ Հայկի անվամբ կոչվեց Հայկաշենը, Արամանյակի անունով՝ Արագած լեռը և Արագածոտն գավառը, Արամայիսի անվամբ՝ Արմավիր մայրաքաղաքը, Երասխից՝ Երասխ (Արաքս) գետը և այլն:

Հունական ավանդազրույցը: Հայերի ծագման հունական զրույցը կապվում է Հին Հունաստանում սիրված ու տարածված արգոնավորդների մասին ավանդության հետ: Վերջինիս համաձայն՝ հերոս Յասոնը և նրա ընկերները Արգո նավով կատարում են հեռավոր նավարկություն դեպի Սև ծովի արևելյան ափերը՝ Կոլխիդա, որի նպատակը երջանկության ու հարստության խորհրդանիշը համարվող ոսկե գեղմը ձեռք բերելն էր:

Յասոնի և նրա ընկերների հետ նավարկությանը մասնակցում էր Արմենոսը, որ Հունաստանի Թեսալիա մարզի Արմենիոն քաղաքից էր: Զրույցի համաձայն՝ նավարկությունից հետո նա չի վերադարձել Հունաստան, այլ հաստատվել է Հայաստանում, որն էլ նրա անվամբ կոչվել է «Արմենիա»:

Վրացական ավանդությունը: Վրացական ավանդությունը գրի է առնվել IX-XI դարերի վրաց հեղինակների կողմից: Ըստ վրացական ավանդության՝ Թարգամոսի (Թորգոմի) ութ որդիներից առաջացան ութ ժողովուրդներ. ավագ որդի Հայոսից՝ հայերը, Քարթլոսից՝ վրացիները, մյուս որդիներից՝ կովկասյան մի շարք ժողովուրդներ:

Հայերի ծագման մասին գրառվել են նաև հին եբրայական (իրեական), արաբական և պարսկական ավանդազրույցներ, որոնք իբրև սկզբնաղբյուր էական հավելումներ չեն բերում հայոց ծագումնաբանության խնդրում:

Հայերի ծագման հարցը արդի պատմագիտության մեջ: Սկսած V դարից մինչև XIX դարի կեսերը հայերի ծագման հարցում անառարկելիորեն ընդունվում էր հայկական ավանդազրույցը՝ ձևակերպված Մովսես Խորենացու «Հայոց պատմության» էջերում:

XIX դարի երկրորդ կեսին գիտության մեջ առաջ քաշվեցին մի շարք նոր տեսություններ, այդ թվում՝ անգամ կասկածի տակ դրվեց հայ ժողովրդի տեղաբնիկության հարցը: Սակայն կարճ ժամանակում ակնհայտ դարձավ նման տեսությունների լիովին հիմնազուրկ լինելը:

1980-ական թվականների սկզբներից հաստատվեց, որ հնդեվրոպական նախահայրենիքը Ք.ա. V-IV հազարամյակներում եղել է Առաջավոր Ասիայի հյուսիսում, ավելի որոշակի՝ Հայկական լեռնաշխարհում, Փոքր Ասիայի արևելյան շրջաններում,

Հյուսիսային Միջագետքում և Իրանական սարահարթի հյուսիս-արևմուտքում: Ինքնըստինքյան վերանում է հայերի եկվորության հարցը, քանի որ հնդեվրոպական նախահայրենիքը եղել է հենց այն տարածքում, որում կազմավորվել և իր պատմությունն է կերտում հայ ժողովուրդը:

Այսպիսով՝ Ք.ա. IV հազարամյակի վերջին հայերն առանձնանում են հնդեվրոպական ընդհանրությունից: Այդ ժամանակաշրջանից սկսվում է հայ ժողովրդի ազգային՝ ցեղային և վաղ պետական կազմավորումների ժամանակաշրջանը, իսկ ամենաուշը Ք.ա. I հազարամյակի առաջին կեսին բարձրանում է համահայկական միասնական պետությունը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն է աշխարհի ամենաբազմանդամ լեզվաընտանիքը, ո՞րն է նրա նախահայրենիքը: Ինչո՞վ են առանձնանում հայերը հնդեվրոպական մյուս ժողովուրդներից:
2. Ինչո՞վ է բացատրվում այն հանգամանքը, որ հայերի ծագման վերաբերյալ ավանդագրույցներ են պահպանել նաև ուրիշ ժողովուրդներ: Հայերի ծագման վերաբերյալ ինչ ավանդազրույցներ գիտեք:
3. Հայ ժողովրդի ծագման վերաբերյալ պատմագիտության մեջ ինչ տեսություններ կան: Հիմնավորեք հայերի ծագման տեղաբնիկության տեսությունը:

§ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՆԱԳՈՒՅՆ ԳՐԱՎՈՐ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հնագույն պատմական տեղեկությունները: Մինչ օրս հայտնի առաջին պատմական տեղեկությունները Հայկական լեռնաշխարհի մասին պահպանվել են շումերական սեպագիր արձանագրություններում և վերաբերում են Ք.ա. XXVIII–XXVII դարերին: Այդ արձանագրություններում հիշատակվում է ***Արատտա*** վաղ պետական կազմավորումը: ***Արատտա*** անունն իրավամբ համադրվում է Արարատի հետ (համարվելով վերջինիս նախաձևը), ինչն առավել ակնառու է Համաշխարհային ջրհեղեղի մասին շումերական և աստվածաշնչյան պատմությունների համեմատությունից: Դրանցում համապատասխանաբար Արատտան և Արարատն են հանդես գալիս իբրև փրկության վայր:

Հնագույն միջագետքյան սեպագրության մեջ հատուկ անունները գրվում էին երկու եղանակով՝ հնչյունային (վանկային) և մեկ ամբողջական գաղափարագիր-նշանով: Հնչյունային գրության պարագայում Արատտա երկրանունը գրվում է երեք վանկով (Ա-ռատ-տա), իսկ գաղափարագիր տարբերակում՝ ***Սուբուր*** *(Սուբարի, Սուբարտու)* երկրանվան գաղափարագրով: Դա նշանակում է, որ այդ երկու երկրանունները միևնույն երկրին տրված անվանումներ են:

Ք.ա. XXVI դարից սկսած՝ միջագետքյան բնագրերը հիշատակում են Հայ(ա) աստծուն, նույնանուն երկիրն ու ժողովրդին: Հատկանշական է, որ շումերաաքքադական երկլեզու արձանագրություններում շումերական բաժնի Սուբուրին աքքադերեն բաժնում համապատասխանում է Հայ(ա)ն: Այսպիսով՝ Ք.ա. III հազարամյակի առաջին կեսում արդեն Հայաստանը հայտնի էր երեք համարժեք անվանումներով՝ Արատտա–Հայ(ա)–Սուբուր:

Ք.ա. XXIV–XXIII դարերից սկսած՝ Հայկական լեռնաշխարհում հիշատակվում են ***«Արման(ի)»***, ***«Արմի»***, ***«Արատ»*** և այլ երկրանունները, որոնք «Արմենիայի» նախաձևերն են: Այս անվանումներից Սուբուրը դադարում է գործածվելուց Ք.ա. I հա-

գարամյակի առաջին կեսին, իսկ մյուսները շարունակում են կենսունակ մնալ որպես Արարատ, Հայք–Հայաստան և Արմենիա:

Հայաստանը Հին աշխարհի հոգևոր ընկալումներում: Աստվածաշնչի առաջին՝ Ծննդոց գրքում պատմվում է, որ Աստված մարդկությանն արարեց *Եդեմ-դրախտում*, որից դուրս էին գալիս չորս գետեր՝ ***Եփրատը, Տիգրիսը, Գեհոնը և Փիսոնը:*** Գիտնականները դեռևս շարունակում են վիճել, թե որոնք են նշված վերջին երկու գետերը, որոնցից մեկն, անշուշտ, Արաքսն է: Սակայն աներկբա է, որ Եփրատ և Տիգրիս գետերի ակունքի շրջանը Հայկական լեռնաշխարհն է: Այսինքն՝ ***Աստվածաշնչի համաձայն՝ Հայաստանն է Եդեմ-դրախտաշխարհը,*** որտեղ արարվել են մարդկության առաջնեկները, և որտեղ պահվում էին անմահության ու իմաստության խորհրդանշանները՝ երկու սրբազան ծառերը (Կենաց և Բարու ու չարի իմացության):

Ծննդոց գրքում պատմվում է նաև, որ ժամանակներ անց մեղսագործությունների պատճառով Աստված որոշեց ոչնչացնել մարդկությանը Համաշխարհային ջրհեղեղով: Նոյ նահապետն իր ընտանիքով փրկվեց՝ ապաստանելով «Արարատի լեռների վրա», այսինքն՝ Հայկական լեռնաշխարհում: Փաստորեն, ***Աստվածաշնչի համաձայն՝ Հայաստանը սրբազան մի տարածք է,*** որտեղ արարվել է մարդկությունը, պահվել են անմահության ու իմաստության խորհրդանշանները, և որն էլ Համաշխարհային ջրհեղեղից հետո դարձել է մարդկության վերածննդի երկիրը:

Շումերական դյուցազնավեպում Արատտա երկիրը մշտապես մեծարվում է ***աստվածային սուրբ օրենքների երկիր և անմահների երկիր*** պատվանուններով:

Հատկանշական է, որ միջագետքյան դյուցազնավեպում անմահություն փնտրող հերոս Գիլգամեշը բռնում է *«ճանապարհը դեպի Արատտա»*, գնում Եփրատի հոսանքն ի վեր և ճանապարհին հաղթահարում Մաշու (Մասու) լեռները, որոնք Հայկական լեռնաշխարհի հարավը եզերող Մասիս կամ Մասիոն լեռներն են:

Նույն պատկերացումը գտնում ենք Ալեքսանդր Մակեդոնացուն նվիրված վիպերգում, որն առաջին անգամ գրի է առնվել դեռևս Ք.ա. 240 թվականին: Ըստ այդմ՝ Ալեքսանդրը ձգտում էր անմահության և կրկնում է Հին Արևելքի ամենանշանավոր հերոս Գիլգամեշի ճանապարհը: Իրականում երբևէ Հայաստան չմտած Ալեքսանդր Մեծը բռնում է ճանապարհը *«դեպի Հայոց աշխարհ, որտեղ ակունքներն են Տիգրիսի ու Եփրատի»*, իսկ ճանապարհին հաղթահարում է Մասիս լեռնաշղթան:

Աստվածաշնչյան Եդեմ–դրախտի երկրորդ՝ Բարու և չարի իմացության ծառը իմաստության խորհրդանիշն է: Որ Հայաստանը Հին Արևելքի հոգևոր ընկալումներում ներկայանում էր նաև իբրև իմաստության երկիր, նախ և առաջ ակնառու է իմաստության Հայ(ա) աստծո մասին Առաջավոր Ասիայում տարածված դիցաբանական պատկերացումներից: Դրանցից բացի, հնագույն շումերական մի բնագրի համաձայն՝ *«Իմաստությունն ու արվեստը ցած են բերվել Արատտա երկրից»:*

Մի շարք ժողովուրդների դիցաբանական պատկերացումներում Հայոց լեռնաշխարհը ներկայանում է որպես աստվածների բնակատեղի, որպես սրբազնագույն մի տարածք: Նման պատկերացումները տարածված են եղել նաև լեռնաշխարհի բնիկ տերերի՝ մեր նախնիների հավատալիքներում, որոնցից առանձին բեկորներ են պահպանվել հայոց քրիստոնեական մատենագրության էջերում: «Աշխարհի գագաթ» կոչվելը հիշողությունն է հնագույն շրջանում մեր հայրենիքի՝ աստվածների բնակատեղի համարվելու, իսկ այնտեղից դեպի աշխարհի չորս կողմերը հոսող չորս գետերը ակնհայտորեն հիշեցնում են աստվածաշնչյան Եդեմ–դրախտից սկիզբ առնող չորս գետերը:

Եդեմը հիշատակվում է «արևելյան կողմում», ինչն արժանի է հատուկ ուշադրության: Արդեն գիտեք, որ Ծննդոց գրքի մեկ այլ մասում պատմվում է, որ Նոյի տապա-

նը փրկվեց Արարատ լեռների վրա, (իմա՝ Հայաստանում), որից հետո դեռևս մեկ լեզվով խոսող մարդիկ «արևելքից» գնացին Սենաարի երկիր (Շումեր) և որոշեցին կառուցել երկնահաս «Բաբելոնյան աշտարակը»: Երկու դեպքում էլ Հայաստանը ներկայացվում է իբրև «արևելքի» երկիր, մինչդեռ այն Հին Կտակարանը գրի առած հրեաների երկրից դեպի հյուսիս էր:

Հայկական լեռնաշխարհի՝ արևի հանգրվանը լինելու մասին պատկերացումը պահպանվել է նաև խեթական աղբյուրներում, որոնց համաձայն՝ արեգակը ծագում էր «Արևելյան ծովից»՝ Վանա լճից: Դա լիովին համահունչ է հայկական ավանդագրույցներին, որոնց համաձայն՝ արևի ոսկյա ննջարանը Վանա լճի հատակին էր, որտեղից ամեն առավոտ ելնում և ուր ամեն գիշեր վերադառնում էր ցերեկվա լուսատուն:

Վերոնշյալ բոլոր փաստերը պետք է խորհելու տեղիք տան ամեն հայ մարդու: Հայաստանը արարչագործության, ջրհեղեղից հետո մարդկության վերածննդի, անմահության ու իմաստության, արևի երկիր են համարում ոչ միայն մեր նախնիները, այլև մեզ հետ անգամ հեռավոր ազգակցություն չունեցող ժողովուրդները:

Ուրեմն վաղնջական ժամանակներում կար վերազգային, վերկրոնական սրբազան մի գաղափարախոսություն, որում առանցքային դերակատարում ուներ մեր լեռնաշխարհը: Ինչո՞ւ հենց Հայկական լեռնաշխարհը: Ո՞րն է մեր երկրի խորհուրդը, ո՞րն է մեր հայրենիքի սրբազնության գաղտնիքը...

Հարցեր և առաջադրանքներ

1. Առաջին պատմական վկայությունները Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումների մասին ո՞ր արձանագրություններում են պահպանվել և ո՞ր դարերով են թվագրվում: Միջագետքյան արձանագրություններում Հայաստանն ու հայերը ի՞նչ անվանումներով են հիշատակվում:
2. Աստվածաշնչի ո՞ր գրքում վկայություններ կան Հայաստանի մասին, ի՞նչ է պարզվում դրանցից:
3. Ինչպե՞ս է ներկայանում Հայաստանը տարբեր ժողովուրդների դիցաբանական պատկերացումներում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Ապրվածաշունչը Եդեմ-դրախտի մասին

ԳԻՐՔ ԾՆՆԴՈՅ, Գլուխ Բ, 7. Տեր Աստված մարդուն ստեղծեց Երկրի հողից, նրա դեմքին կենդանության շունչ փչեց, և մարդն եղավ կենդանի էակ: 8. Աստված դրախտ տնկեց Եդեմում՝ արևելյան կողմում, և այնտեղ դրեց իր ստեղծած մարդուն: 9. Տեր Աստված Երկրից բուսցրեց նաև ամեն տեսակի գեղեցկատեսիլ ու համեղ մրգեր տվող ծառեր, իսկ Կենաց ծառը՝ Բարու և չարի գիտության ծառը, տնկեց դրախտի մեջտեղում: 10. Գետ էր բխում Եդեմից, որպեսզի ոռոգեր դրախտը, և այնտեղից բաժանվում էր չորս ճյուղերի: 11. Մեկի անունը Փիսոն է... 13. Երկրորդ գետի անունը Գեհոն է... 14. Երրորդ գետը Տիգրիսն է... Չորրորդ գետը Եփրատն է:

Թեմա 2. ՎԱՂ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ (Ք.Ա. III ՀԱԶԱՐԱՄՅԱԿ–Ք.Ա. I ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՍԿԻԶԲ)

§ 1. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ

Հայկական լեռնաշխարհը Ք.ա. IV հազարամյակի կեսից մինչև III հազարամյակի կեսերը: Հայկական լեռնաշխարհում նախնադարից անցումը վաղ քաղաքակրթության և վաղ պետական կազմավորումներին տեղի է ունեցել վաղ բրոնզի դարում: Ի՞նչ է մեզ հայտնի այդ դարաշրջանում լեռնաշխարհի զարգացման մակարդակի մասին:

Ք.ա. IV հազարամյակի կեսերից սկսում է շուրջ մեկ հազարամյակ տևած վաղբրոնզիդարյան ժամանակաշրջանը, որի ընթացքում ողջ Հայկական լեռնաշխարհը միավորված էր մեկ մշակութային գոտու մեջ: Լայն տարածում ունեն պաշտամունքային նշանակության իրերը՝ եռոտանի պատվանդաններ, եզան ու խոյի տեսքով բազմատեսակ հենակներ, որոնք Հայկական լեռնաշխարհի մշակութային գոտուց դուրս հայտնի չեն:

Պաշտամունքային ու կենցաղային իրերի, աշխատանքային գործիքների ու ճարտարապետական կառույցների միակերպությունը վկայում է լեռնաշխարհի բնակիչների ազգակցության, այսինքն՝ ազգային–հոգևոր միասնության մասին:

Հայկական լեռնաշխարհում վաղ բրոնզի դարաշրջանում արձանագրված են վաղ քաղաքակրթություններին բնորոշ գրեթե բոլոր հատկանիշները: Առկա է իր ժամանակի համար ***բավականին զարգացած քաղաքաշինություն:*** Քաղաքներին բնորոշ է կանոնավոր հատակագծով կառուցապատումը, մեջտեղում էին տաճարն ու վարչական կենտրոնը, առկա էր ամրաշինական համակարգ՝ միջնաբերդ և բնակավայրը եզերող պարիսպ: Քաղաք–կենտրոնի շուրջ կային փոքր արբանյակ–բնակավայրեր: Այս ամենը բազմիցս վկայված ենք տեսնում Շենգավիթում, Մեծամորում, Էլարում, Մոխրաբլուրում, Թագավորանիստում, Աղթամարում, Ջրահովտում, Ուրմիո լճի ավազանի, Գուգարքի, Ծոփքի, Բարձր Հայքի և լեռնաշխարհի այլ հնավայրերում:

Հասարակությունն ունի բարդ կառուցվածք և համայնքային–տնտեսական շերտավորում, ինչն ակնհայտ է հարուստների ու շարքային մարդկանց դամբարանների պեղումներից, նաև հարուստ և աղքատ բնակարաններից: Դա նշանակում է, որ նախնադարյան հասարակությունը, որին բնորոշ է համայնքի բոլոր անդամների հավասարությունը, անկում էր ապրում՝ իր տեղը զիջելով դասային, ընկերային շերտավորում ունեցող հասարակությանը:

Հնավայրերից հայտնաբերվել են կիսաթանկարժեք քարերից պատրաստված գուրզեր, որոնք հավանաբար եղել են իշխանության խորհրդանշաններ:

Ժամանակի գիտության բացառիկ նվաճում է ***Մեծամորի աստղադիտարանը,*** որտեղից աստղային երկինքը դիտարկել են ***Ք.ա. 2800–2600 թթ. ընթացքում:***

Գիտության և տեխնոլոգիական՝ ժամանակի համար համեմատաբար բարդ հնարքների կիրառումը ակնհայտ է բազմաթիվ մետաղաձուլարաններում, որոնց առկայությունն արդեն իսկ խոսում է տարբեր արհեստների ձևավորման և աշխատանքի բաժանման մասին:

Միջազգային առևտրի և տարածաշրջանային կապերի մասին են վկայում ինչպես Հայաստանի հնավայրերից հայտնաբերված օտար ծագում ունեցող իրերը, այնպես էլ հայաստանյան նյութերի լայն տարածումը լեռնաշխարհից բավականին մեծ հեռավորությունների վրա:

Հայաստանյան վաղբրոնզիդարյան խեցեղենի վրա մեծ առատությամբ հանդիպում են խորհրդանշաններ և գաղափարագրեր, որոնք դարձել են հայկական մեհենագրության հիմքը:

Հայաստանյան մշակույթի աննախադեպ տարածումը: Հնագիտական պեղումները ցույց են տալիս, որ ***Ք.ա. մոտ XXVIII դարում*** Հայկական լեռնաշխարհից տեղի է ունենում ***վաղբրոնզիդարյան մշակույթի աննախադեպ մեծ կարածում:*** Այդ մշակույթը հյուսիսում հասնում է Հյուսիսային Կովկաս, հարավում՝ Սիրիա և Պաղեստին, հարավ-արևելքում՝ Իրանական սարահարթի կենտրոնական շրջաններ: Մշակութային այս ներթափանցումն ու տիրապետությունը շարունակվում են երկու-երեք հարյուրամյակ՝ մինչև Ք.ա. XXVI դարը, որից հետո Հայաստանի մշակութային գոտին կրկին սահմանափակվում է Հայկական լեռնաշխարհով:

Նման աննախադեպ մեծ ընդգրկումը ենթադրում է նոր որակի փոխադրամիջոցների ցանցի առկայություն: Եվ դա ակնհայտ է ինչպես հնագիտության տվյալներից, այնպես էլ դրանց հետ համահունչ գրավոր հիշատակարաններից: Գրավոր աղբյուրներում սանձված ձիեր առաջին անգամ հիշատակվում են Արատտայում (Ք.ա. XXVIII–XXVII դդ.)՝ ծառայելով որպես փոխադրամիջոց: Ի դեպ՝ ձիավոր հեծյալ ռազմիկների առկայությունը հնագույն շրջանում բնորոշ է հնդեվրոպական աշխարհին, իսկ Հայկական լեռնաշխարհը կազմել է հենց հնդեվրոպական նախահայրենիքի միջուկը:

Փաստորեն, պատմության մեջ ստեղծված ***առաջին «մշակութային աշխարհակալությունն»,*** իր ազդեցությամբ հանդերձ, տևեց մի քանի հարյուրամյակ՝ Ք.ա. XXVIII–XXVI դարերը: Այն մեկ մշակութային գոտու մեջ միավորեց հսկայական տարածք՝ դառնալով հայոց պատմության առաջին աշխարհակալությունը...

Առաջին պետական կազմավորումը. Արատտա: Հայաստանի Ք.ա. III հազարամյակի պատմության լուսաբանման համար անգնահատելի տեղեկություններ են հաղորդում հնագույն միջագետքյան (շումերական և աքքադական) գրավոր հուշարձանները: Շումերական բնագրերում հիշատակվում է Արատտա երկիրը: ***Արատտան*** Հայկական լեռնաշխարհի՝ մինչ օրս հայտնի ***առաջին վաղ պետական կազմավորումն է,*** որի մասին տեղեկությունները վերաբերում են ***Ք.ա. XXVIII–XXVII դարերին:***

Արդեն նշվել է, որ Հայկական լեռնաշխարհի հետ էր կապվում իմաստության և տիեզերական ջրերի աստված Հայ(ա)ի պաշտամունքը, որի որդի Հայկն Արատտայի հովանավոր աստվածն էր:

Արատտան եղել է աստվածապետական (կրոնապետական կամ թեոկրատական) կարգերով երկիր: Դա պետական կառավարման այն ձևն է, որում և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր ողջ իշխանությանը տիրում էր հոգևոր դասը, որն էլ Աստծո անունից կառավարում էր երկիրը: Արատտայի արքան միաժամանակ երկրի գերագույն քուրմն էր: Երկրի ճակատագրին վերաբերող կարևոր հարցերի լուծման համար քրմապետ-արքան գումարում էր ավագների ժողով: Հիշատակվում է երկրի գլխավոր տնտեսական պաշտոնյան, որը կոչվում էր «կառավարիչ»: Արատտայում հիշատակվում են նաև տնտեսական ոլորտի պաշտոնյաներ՝ հարկահաններ, վերակացուներ և այլն:

Շումերական բնագրերը տեղեկություններ են պահպանել Արատտայի բանակի և պարսպապատ մայրաքաղաքի մասին: Արատտայի մասին կարևորագույն տեղեկություններից մեկը երկրում սեփական գրի գործածության փաստն է, ինչն ապացուցվում է նաև Հայկական լեռնաշխարհից հայտնաբերված Ք.ա. III հազարամյակի մեհենագիր հուշարձաններով, որոնք դեռևս վերծանված չեն:

Ք.ա. XXVIII–XXVII դարերում Արատտայից Շումեր էին գնում ճարտարապետներ՝ այնտեղ մեծ շինություններ կառուցելու նպատակով: Ք.ա. XXVI–XXV դարերով թվագրվող բնագրերում Միջագետքում բնակություն հաստատած սուբարեցիները հիշատակվում են որպես դպիրներ, դպրապետեր, հացթուխներ, հացթուխապետեր, դարբիններ, այգեպաններ և այլն:

Արատտայի հիշատակության ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհը,

ինչպես արդեն գիտեք, միավորված էր մեկ մշակութային գոտում:

«Արմենիա» անվան հնագույն հիշատակությունները. Արմի, Արման(ում), Արամ: *Էբլա և Արմի:* Ք.ա. XXVI–XXIII դարերում ներկայիս Սիրիայի տարածքում կազմավորվում է Էբլա պետությունը, որն առևտրական լայն ցանցով կապված է եղել շրջակա երկրների հետ: Էբլայի բնագրերը Հայկական լեռնաշխարհի և հարակից տարածքներում հիշատակում են երկու տասնյակից ավելի բնակավայրեր: Դրանցից առանձնապես կարևորվում է ***Արմին,*** որը համանուն թագավորության մայրաքաղաքն էր: Հատկանշական է, որ Ք.ա. XXIV–XXIII դարերի բնագրերում հիշատակվում են Արմի երկրում բնակված «Հայայի որդիները» (հայորդիները), որոնք գործուն փոխհարաբերություններ են ունեցել Էբլայի հետ:

Աքքադ և Արմանի: Ք.ա. III հազարամյակի սկզբին Արաբական թերակղզուց Միջագետք ներթափանցած սեմական ցեղերը Ք.ա. XXIV դարի երկրորդ կեսին ստեղծում են պատմությանը հայտնի առաջին բռնակալությունը: Պետության հիմնադիր Սարգոն Աքքադացու զորքերը հյուսիսում հասան մինչև Հայկական լեռնաշխարհի հարավային փեշերը և անհաջողություն կրեցին այնտեղ: Մեզ է հասել Սարգոն Աքքադացու տերության աշխարհագրությունը ներկայացնող մի արձանագրություն, որում առաջին անգամ ներկայացված է «Արմենիա» անվան նախաձևը՝ Արման(ում) երկրանունը:

Աքքադի չորրորդ տիրակալ Նարամսինին (Նարամ–Սուեն, Ք.ա. XXIII դ.) հաջողվեց վերականգնել աքքադական տերության հզորությունը: Եփրատի և Տիգրիսի հոսանքներն ի վեր նա ձեռնարկել է բազմաթիվ ռազմական արշավանքներ: Նարամսինը Տիգրիսի հովտով արշավանքներ է ձեռնարկում դեպի հյուսիս ու Վանա և Ուրմիո լճերի միջնատարածքում հիշատակում Արամ երկիրը: Այդ տարածքը Վանի թագավորության ժամանակաշրջանում ևս շարունակվում է հիշատակվել գրեթե նույն տեսքով (Արամալի, Արմարիլի): Հիշենք, որ ըստ Մովսես Խորենացու տեղեկության՝ «արմեն» և «Արմենիա» անունների հիմքում ընկած է «Արամ» անունը:

Եփրատի հոսանքով դեպի վեր կատարված Նարամսինի մի քանի արշավանքներն ուղղված էին Սուբուր (Սուբարտու) երկրի դեմ, որը «Վերին ծովի ափերին» էր, այսինքն՝ Վանա լճի ավազանում:

Նարամսինի ամենածավալուն արձանագրություններից մեկում Արման(ում)ը ներկայանում է իբրև մի երկիր, որը *«երբևէ՝ մարդկության արարումից ի վեր, ոչ մի թագավոր չէր նվաճել»*: Նարամսինի դեմ ձևավորվում է Հայկական լեռնաշխարհի և հարակից 17 պետական կազմավորումների դաշինքը՝ Արման(ում) երկրի գլխավորությամբ:

Տասնյոթ երկրների դաշինքի ղեկավարումը հետագայում անցավ Կուտիական երկրին (համապատասխանում է Մեծ Հայքի Կորդվաց աշխարհին), որն էլ վերջ դրեց Նարամսինի բռնակալական իշխանությանը:

Կուտիական (Կորդվաց) աշխարհակալությունը: Նարամսինն իրեն հռչակեց «աստված»՝ կործանելով աստվածների տաճարը և պարտադրելով պաշտել իր անձը: Շումերական քրմությունը օգնություն խնդրեց տասնյոթ երկրների դաշինքից: Միջագետքի կենտրոն արշավեցին Հայկական լեռնաշխարհի լեռնականները, որոնց դեմ պատերազմում ինքնակոչ «աստվածը» սպանվեց...

«Աշխարհի չորս կողմերի արքա» տիտղոսը հաղթողի իրավունքով անցավ կուտիական տիրակալներին: Կուտիական աշխարհակալությունը ունեցել է տարածքային հսկայական ընդգրկում՝ Ամանոսի լեռներից ձգվելով մինչև Էլամ, Հայկական լեռնաշխարհի հյուսիսից մինչև Պարսից ծոց:

Նրանք շուրջ մեկ դար (Ք.ա. XXII դ.) գերիշխում են Առաջավոր Ասիայի զգալի մասի վրա: Այդ ժամանակահատվածում իշխեցին 21 արքաներ, որոնք կառավարում էին որոշակի ժամկետով: Այսինքն՝ գործում էր գերագույն իշխանության ընտրովի կարգը:



Կուտիական աշխարհակալության ավարտից հետո էլ Հայաստանը պահպանում է հզորությունն ու կարևոր դիրքը Հին Արևելքում: Այդ մասին տեղեկանում ենք Ք.ա. XXI դարի միջագետքյան նամակներից, որոնցում Սուբուր երկիրը ներկայանում է իբրև հզոր թագավորություն:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ է Հայկական լեռնաշխարհում տեղի ունեցել անցում նախնադարից վաղ քաղաքակրթության և վաղ պետական կազմավորումներին:
2. Ե՞րբ է տեղի ունեցել Հայկական լեռնաշխարհից մշակույթի մեծ տարածումը: Ինչո՞վ են նշանավորվում Ք. ա. XXVIII–XXVI դարերը:
3. Ներկայացրե՛ք Արատտա երկիրը: Հայաստանից քաղաքակրթական արժեքների տարածման վերաբերյալ ի՞նչ տեղեկություններ են պահպանվել շումերական բնագրերում:
4. Ո՞ր աղբյուրներից ենք տեղեկանում «Արմենիա» անվան հնագույն հիշատակությունների մասին:
5. Ո՞ր տարածքներն էր ընդգրկում կուտիական աշխարհակալությունը: Ի՞նչ դիրք ուներ Հայաստանը Հին Արևելքում կուտիական աշխարհակալության ավարտից հետո:

§ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ Ք.Ա. II ՀԱԶԱՐԱՄՅԱԿՈՒՄ ԵՎ Ք.Ա. I ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՍԿԶԲԻՆ

Հայկական լեռնաշխարհը Ք.ա. XX–XVII դարերում: Ք.ա. XX դարում Հայաստանը շարունակում էր լուրջ դերակատարում ունենալ Հին Արևելքում: Առաջավոր Ասիայի հյուսիսում գործում էր մետաղի առևտրի մայրուղին, որի հետ կապի մեջ են եղել Հայկական լեռնաշխարհի ավելի քան երեք տասնյակ բնակավայրեր: Գտնված սեպագիր արձանագրություններում հիշատակվում են հայկական շուրջ մեկ տասնյակ իշխանություններ՝ ***Ծուխանա*** (Ծոփք), ***Թեգարամա*** (Թոգարմա, Թորգոմա տուն), ***Խախ (ում)*** և այլն:

Ք.ա. XVIII դարում հզորության գագաթնակետին էր Հին Բաբելոնի թագավորությունը, որի տիրակալ Համմուրապիի մասին մեզ հասած սկզբնաղբյուրներում բազմիցս հիշատակվում են Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումները, մասնավորապես ***Սուբարուն*** (Սուբուր–Արմանի), ***Կուպի(ում)ը*** և այլն:

Մետաղի լայն կիրառությունը խիստ կարևոր էր ինչպես տնտեսության, այնպես էլ ռազմական գործի մեջ: Ռազմարվեստում կարևոր նշանակություն ունեցավ ձիերի, հատկապես ձիերին լծված մարտակառքերի կիրառությունը:

Հնդեվրոպական ծագում ունեցող խեթերը Փոքր Ասիայում Ք.ա. XVIII դարում ստեղծում են բավականին հզոր Խեթական թագավորությունը, որը գոյություն ունեցավ մինչև Ք.ա. XII դարը՝ իր ազդեցությանը ենթարկելով նաև Հայկական լեռնաշխարհի արևմտյան որոշ երկրամասեր:

Միտաննի թագավորությունը: Ք.ա. XVI դարում Հայաստանի հարավում և Միջագետքի հյուսիսում ստեղծվեց հնդեվրոպական Միտաննի թագավորությունը՝ ***Վաշշուգանի*** մայրաքաղաքով (Մասիոն լեռներում): Այս թագավորությունն էական դերակատարում է ունենում Առաջավոր Ասիայում՝ սկսած Ք.ա. XVI դարի վերջերից: Եգիպտական, բաբելական, խեթական տիրակալների նման Միտաննիի արքաները կրում էին «Մեծ թագավոր» տիտղոսը:

Հատկանշական է, որ այս թագավորության տիրակալները հայոց ազգային պատմագրական ավանդույթում համարվում են բնիկ հայ արքաներ, և նրանց անունները գտնում ենք Մովսես Խորենացու մոտ պահպանված Հայկազուն նահապետների և արքաների ցանկում:

Միտաննին անկում ապրեց Ք.ա. XIII դարում հզորացող Ասորեստանի հարվածներից:

Հայասա թագավորությունը: Խեթական սեպագիր արձանագրություններում Ք.ա. XV–XIII դարերի իրադարձությունների կապակցությամբ հիշատակվում է Հայասա երկիրը: Երկրանվան հիմքում հայ ժողովրդի ինքնանվանումն է: Խեթերենում –(ա)սա մասնիկով կազմվում են տեղանունները, այսինքն՝ ***Հայասա*** նշանակում է ***Հայք, Հայաստան:***

Հայասան հիշատակվում է Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանում: Նրա կարևոր կենտրոններից էր ***Կումախան***՝ հետագա Մեծ Հայքի Բարձր Հայք աշխարհի Անի–Կամախը, որտեղ հայոց թագավորների մեծ դամբարանն էր:

Հայասան առաջին անգամ հիշատակում է խեթական արքա Սուպիլուլիումասը (Ք.ա. XIV դ.) իր հոր՝ Թուդխալիաս III–ի արշավանքների կապակցությամբ, որոնց ժամանակ նրա դեմ է դուրս գալիս Հայասայի Կարանի թագավորը: Որոշ ժամանակ անց Սուպիլուլիումասի և Հայասայի արքա Խուկանայի միջև կնքվում է բարեկամության և փոխօգնության պայմանագիր: Այն ամրապնդելու նպատակով Սուպիլուլիումասն իր քրոջը կնության է տալիս Խուկանային:

Հայասան վերջին անգամ հիշատակվում է Ք.ա. XIII դարի վերջին: Գիտության մեջ Հայասայի պատմության ավարտի մասին կա երկու տեսակետ: Մեկի համաձայն՝ Հայասան պետք է անկում ապրած

լինի Ք.ա. XIII դարավերջին: Մյուս տեսակետի կողմնակիցները կարծում են, որ այն շարունակել է իր գոյությունը, պարզապես այլևս չի հիշատակվում «Հայասա» խեթերեն անվամբ, քանի որ Ք.ա. XII դ. անկում էր ապրել խեթական տերությունը:

Հայասան ուներ իր արքունիքը, բանակը և քաղաքային կենտրոնները: Այն ուներ նաև իր դիցարանը: Դատելով խեթական սկզբնաղբյուրներից՝ Հայասան ուներ արքունի դիվան՝ իր դպիրներով, որոնք վարել են պետական գրագրությունը:

Հայասան ռազմադաշտ էր դուրս բերում 700 մարտակառքից և 10-հազարանոց հետևազորից բաղկացած բանակ, որն այդ ժամանակաշրջանի համար նշանակալից ուժ էր:

Նաիրյան երկրները: «Նաիրի» երկրանունն առաջին անգամ հիշատակված է Ք.ա. XIII դ. առաջին կեսին Ասորեստանի Սալմանասար I թագավորի կողմից: Այդ անվան տակ միավորված էին Վանա լճի շրջանը և նրանից դեպի հարավ ու արևմուտք ընկած ընդարձակ տարածությունները, ուր ապրում էին դաշնային հիմունքներով միավորված բազմաթիվ իշխանություններ: Ասուրական աղբյուրներում դրանք բոլորը կոչվում են ***«երկրներ»***:

Ք.ա. XIII դ. Նաիրյան երկրների հզորության մասին է վկայում այն փաստը, որ Սալմանասար I-ը ստիպված էր սահմանամերձ մի քանի քաղաքներում նշանակել հատուկ պահակազորեր՝ Ասորեստանի տիրապետության շրջանների վրա նաիրյան հարձակումները կանխելու նպատակով:

Նաիրյան երկրները և դրանց 40 առաջնորդները, որոնք ասորեստանյան արձանագրություններում անվանված են «թագավորներ», հիշատակվում են Սալմանասար I-ից հետո: Թիգլաթպալասար I-ը Նաիրին անվանում է *«ընդարձակ, հպատակություն չճանաչող և անծանոթ երկիր»*:

Ասորեստանյան արքաների արձանագրություններում հիշատակվում են Նաիրիի «մեծամեծ քաղաքները», «նրանց հարստությունը», «բազմաթիվ ձիերի, ջորիների, երինջների երամակները և նրանց երկրագործական անթիվ ունեցվածքը», որոնք խոսում են այդ շրջանում երկրի հզորության և հարստության մասին:

Ասորեստանյան արձանագրություններից տեղեկանում ենք, որ երկու դար անց չորս խոշոր արշավանք է կատարվել Նաիրի երկրի դեմ, ընդ որում՝ այնտեղ ոչ թե խոսվում է մի քանի «երկրների» դաշինքի կամ համադաշնության, այլ մեկ միասնական երկիր-պետության մասին: Հիշատակվում են *«Նաիրի երկրում 250 քաղաք՝ իրենց զորավոր պարիսպներով»*...

Նաիրին որպես մեկ միասնական պետություն է հիշատակվում նաև Սալմանասար III-ի (Ք.ա. IX դար) արձանագրություններում: «Նաիրի» անվամբ են իրենց երկիրը կոչում Վանի թագավորության տիրակալներն ասուրերենով գրված իրենց արձանագրություններում:

Հայկազունների Այրարատյան թագավորությունը: Հայկական լեռնաշխարհում Ք.ա. IX դ. 80-70-ական թթ. հիշատակվող պետական կազմավորումներից կարելի է առանձնացնել երկուսը. հարավում՝ ***Նաիրին***, հյուսիսում՝ ***Ուրարտուն***: «Ուրարտու» անվանումը «Ա(յ)րարատ» անվան ասորեստանյան տարբերակն է: Դա Հայաստանի հնագույն անվանումներից է: Ասուրա-բաբելական և Աքեմենյան արքաների արձանագրություններում այն հիշատակվում է մինչև Ք.ա. IV դ. առաջին կեսը:

Ասորեստանյան աղբյուրներում Ուրարտուի՝ անվանապես հիշատակվող առաջին արքան ***Արամուն է*** (*Արամու Ուրարտացի*), որը Ք.ա. 859-843 թթ. ընթացքում քանիցս դիմակայել է ասորեստանյան արշավանքներին: Ք.ա. III-I հազարամյակներում իշխել են Արամ անունով մի քանի հայ արքաներ, որոնք ազգային ավանդության մեջ միավորվել են և Պատմահոր մատյանում տեղ գտել Հայկյան Արամի միասնական կերպարով: Հիշենք, որ Վանա և Ուրմիո լճերի միջև Արամ անունով երկիր էր հիշատակվում դեռևս Ք.ա. XXIII դարում:

Մովսես Խորենացու տեղեկությունների համաձայն՝ Արամը ոչ միայն հերոսաբար հետ է շպրտել ասորեստանյան նվաճողներին, այլև հաղթական արշավանքներ է կատարել դեպի Մարաստան (Մեդիա) և Փոքր Ասիա:

Արամու Ուրարտացու գործունեության շնորհիվ Ք. ա. IX դարի առաջին կեսին ***Հայկազունների Այրարատյան թագավորությունը*** հայտնի էր դարձել Հայկական լեռնաշխարհի սահմաններից դուրս: Քանի որ «Ուրարտու»-ն դարձել էր Հայաստանի ընդհանրական անվանում, ասորեստանյան աղբյուրները շարունակում են այդ անունով կոչել նաև Ք.ա. 830-ական թվականներից ողջ լեռնաշխարհն աստիճանաբար իր իշխանության ներքո միավորած Նաիրի թագավորությունը, որի նոր հիմնված մայրաքաղաքը Տուշպա-Վանն էր:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ գիտեք Ք. ա. XX–XVIII դդ. մետաղի առևտրի մայրուղու մասին:
2. Որտե՞ղ և ե՞րբ է ստեղծվել Միտաննի թագավորությունը: Ո՞ր աղբյուրներից ենք իմանում Հայասայի մասին: Ինչպիսի՞ ընթացք ունեցավ խեթերի հետ հայասացիների հակամարտությունը:
3. Ո՞ր երկրի արքաներն են պարբերաբար արշավել Նաիրյան երկրների դեմ: Ի՞նչ փաստեր են վկայում Նաիրյան երկրների ուժի մասին:
4. Ո՞ր ժամանակաշրջանում է ձևավորվել Հայկազունների Այրարատյան թագավորությունը: Բացատրեք «Ուրարտու» անվանումը: Ք. ա. IX դ. կեսերին Հայաստանում ի՞նչ թագավորություններ կային: Ի՞նչ տեղեկություններ կան Արամու թագավորի մասին:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Հատված Նարամսինի բնագրերից

Քանի որ երբևէ՝ մարդկության արարումից ի վեր, ոչ մի թագավոր չէր նվաճել Արմանումն ու Էբլան,

Ներգալն* (իր) զենքով ճանապարհ բացեց Նարամսինի՝ հզորի համար և տվեց նրան Արման(ում)ն ու Էբլան:

Եվ նա տվեց նրան Ամանոսը՝ Մայրիների լեռը, ու Վերին ծովը...

* Ներգալը միջագետքյան դիցաբանության անդրաշխարհի աստվածն էր:

ԲԱԺԻՆ 3 ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թեմա 1. ՎԱՆԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ՀԶՈՐԱՑՈՒՄԸ: ԱՐԳԻՇՏԻ I

Տուշպա (Տոսպ, Վան) մայրաքաղաքի հիմնումը: Հայկական լեռնաշխարհի տարածքում Ք.ա. 830-ական թվականներին նկատելի են մի քանի հիմնական կենտրոններ, որոնց շուրջ համախմբված են համադաշնություններ կազմած մանր պետական կազմավորումները: Դրանցից ամենամեծը Արարատյան դաշտում, Սևանա լճի ավազանում, Սյունիքում և հարակից շրջաններում տարածվող ***Էթիունի*** երկրի համադաշնությունն էր: Դա փաստորեն ***Հայկազունների Այրարատյան*** (Արարատյան) թագավորությունն էր՝ իր համադաշնությամբ:

Լեռնաշխարհի հյուսիսարևմտյան շրջաններում ուրվագծվում է ***Դիաուխիի*** (Տայք) շուրջ կազմավորված մյուս համադաշնությունը: Երրորդ խոշոր համադաշնությունը կազմվել էր հարավում՝ ***Վանի*** շուրջը, որի հիմքի վրա էլ բարձրացավ Վանի համահայկական հզոր թագավորությունը:

Ք.ա. IX դարի 80-70-ական թթ. Հայկական լեռնաշխարհի հարավում *Նաիրյան երկրների* փոխարեն հիշատակվում է մեկ միասնական ***Նաիրի*** պետական կազմավորումը: Ք. ա. մոտ 830-ական թթ. Տուշպա (Տոսպ, Վան) մայրաքաղաքն է հիմնադրում ***Սարդուրի I-ը*** (Ք.ա. մոտ 835-825 թթ.): Ասուրերեն գրված Տուշպայի հիմնադրման արձանագրություններում նա իրեն կոչում է *«Նաիրի երկրի արքա»* և ներկայանում *«մեծ արքա, հզոր արքա, փիեզերքի արքա, արքաների արքա...»* տիտղոսաշարով:

Ասորեստանյան աղբյուրներում թագավորությունը կոչվում է Ուրարտու, իսկ տեղական արձանագրություններում՝ ***Նաիրի*** և ***Բիայնիլի:*** Վերջինս կապվում է Վանի անվան հետ, այդ պատճառով էլ գիտության մեջ թագավորությունը հայտնի է նաև որպես Վանի թագավորություն: Ատովածաշնչում այն հիշատակվում է «Արարատյան թագավորություն» անվամբ:

Սարդուրի I-ը ասորեստանյան աղբյուրներում հիշատակվում է մեկ անգամ՝ Ք.ա. 833 թ., Սալմանասար III-ի զորքերին դիմակայելու առնչությամբ: Այդ ժամանակ Վանի թագավորությունը տարածվում էր ոչ միայն Վանա լճի ավազանում, այլև Հայկական Տավրոսից հարավ՝ Տիգրիսի վերին հովտում:

Իշպուինիի գահակալությունը: Ք.ա. մոտ 825-810 թթ. Տուշպա-Վանի տիրակալ է դառնում Սարդուրի I-ի որդի ***Իշպուինի*** արքան: Վանի թագավորության հզորացման և տարածաշրջանային տերություն դառնալու գործում կարևոր դեր են խաղում Իշպուինիի օրոք սկսված և Մենուայի գահակալության ընթացքում շարունակված բարեփոխումները:

Իշպուինիի գահակալության առաջին շրջանում անցկացված բարեփոխումները կապված էին միայն նրա անվան հետ, իսկ երկրորդ շրջանում հեղինակակից է հանդես գալիս նրա որդի Մենուան, ինչը երևում է նրանց համատեղ կանգնեցրած արձանագրություններից: Եթե գրային բարեփոխումը՝ տեղական սեպագրի ստեղծումը, տեղի է ունեցել Իշպուինիի կառավարման սկզբնական շրջանում, ապա կրոնական բարեփոխումը՝ ողջ թագավորության համար ***միասնական դիցարանի*** (պանթեոնի) ստեղծումով, կատարվել է նրա գահակալության երկրորդ շրջանում: Դրանով է պայմանավորված, որ դիցարանի արձանագրումը «Խալդյան դարպասի»

Տուշպա–Վանի հիմնադրման արձանագրությունը

վրա, որին հետագայում մեր ժողովուրդը կոչեց *«Միերի դուռ»*, կատարվել է երկուսի անունով: Դիցարանում միավորված էին նախկին Նաիրյան համադաշնության երկրների աստվածությունները:

Իշպուինիի օրոք սկսվեցին և Մենուայի օրոք շարունակվեցին ռազմական ոլորտի բարեփոխումները: Նախկին դաշնային աշխարհազորը փոխարինվեց ***արիեպա-վարժ կանոնավոր բանակով***, որը բաժանված էր ըստ զորատեսակների:

Դրանց շնորհիվ Իշպուինին արձանագրեց առաջին խոշոր հաջողությունները Ք.ա. 820–ական թթ. վերջին՝ Ուրմիո լճի ավազանի հարավում ընդլայնելով թագավորությունը և ներառելով ***Արդինի–Մուսասիր երկիրը***: Իշպուինին այնուհետև արշավանքներ ձեռնարկեց դեպի Արածանիի ակունքների և Արաքսի վերին հոսանքի շրջանները, ռազմերթեր կատարեց դեպի Սյունիք, Արաքսի հովտով դեպի արևելք, ինչպես նաև Ուրմիո լճի ավազանով դեպի հարավ՝ մինչև Պարսուա երկիրը:

Թագավորության հզորացումը Մենուայի գահակալության շրջանում: Մենուայի միանձնյա կառավարման շրջանում (Ք.ա. մոտ 810–786 թթ.) Վանի թագավորությունը աննախադեպ վերելք է ապրում: Երկիրը տնտեսապես հզորացնելու համար նա կատարում է բազմաթիվ գործեր, որոնցից հատկապես նշանավոր է 72 կմ երկարությամբ «Մենուայի ջրանցքի» կառուցումը, որն օգտագործվում է մինչ օրս:

Մենուայի առաջին քայլերից մեկն է լինում Հայկական Պար լեռնաշղթայի արևելյան հատվածում ամրապնդվելը: Այս տարածքի նվաճումից հետո էլ հիմնվում է ռազմավարական խոշոր հենակետ՝ ***Մենուա-խինիլին:***

Պետության հյուսիսարևմտյան սահմաններն ամրապնդելու նպատակով Մենուան արշավում է ընդդեմ Դիաուխի–Դայաենի (Տայք) երկրի:

Հարավարևմտյան ուղղությամբ նրա բանակը հաղթարշավով հասնում է մինչև Կումենու և Ասորեստան: Մեկ այլ արշավանք է իրականացնում Ալզի (Աղձնիք) երկրի ուղղությամբ և իր հսկողության տակ է վերցնում Հայկական Տավրոսի կենտրոնական հատվածի լեռնանցքները:

Արևմտյան ուղղությամբ Մենուայի բանակն առաջին անգամ դուրս է գալիս Արևմտյան Եփրատի բնագիծ՝ սպառնալով անդրեփրատյան պետություններին: Դրանցից ***Մելիդեայի*** (Մելիդ, Մալաթիա) արքան խուսափում է առճակատումից՝ պարտավորվելով Մենուային վճարել հարկեր:

Ք.ա. IX դարի վերջին մերձուրմյան ավազանում ձեռք են բերվում ռազմավարական առումով կարևոր նշանակություն ունեցող տարածքներ: ***Մանայի*** թագավորությունը լիովին ընդունում է Մենուայի գերիշխանությունը:

Վանի բանակը շարունակում է հաղթարշավը Ուրմիայից հարավ–արևելք ընկած տարածքներում՝ հասնելով մինչև Դիալա գետի ավազան:

Ասորեստանի փորձերը՝ ինչ–որ կերպ կասեցնելու Վանի թագավորության առաջխաղացումը Ք.ա. 791 թ., ավարտվում են անհաջողությամբ:

Մենուան հատուկ ուշադրություն դարձրեց ռազմական շինարարությանը: Հիմնվում են մի քանի ամրոցներ:

Այսպիսով՝ Մենուայի հաղթարշավների շնորհիվ Հայկական լեռնաշխարհի հիմնական մասը միավորվում է մեկ կենտրոնացված պետության մեջ, իսկ հյուսիսային շրջանների իշխանությունները, թեպետ չեն մտնում Վանի տերության մեջ, բայց, ընդունելով նրա գերիշխանությունը, հարկատու

են դառնում: Վանի տիրակալն իր գերիշխանությունն է հաստատում Ուրմիո լճի ավազանից շատ հարավ և Եփրատից արևմուտք, վերահսկողություն է սահմանում Զագրոսյան լեռներով դեպի արևելք և դեպի Փոքր Ասիա տանող ռազմավարական ուղիների վրա: Մենուան առաջին մարտավարական հաղթանակներն է տանում տարածաշրջանի խոշորագույն պետության՝ Ասորեստանի նկատմամբ և ***Վանի թագավորությունը վերածում գերտերության:***

Արգիշտի I-ի բրոնզե սաղավարտը

Արգիշտի I: Արգիշտի I-ի գահակալության տարիներին (Ք.ա. 786–764 թթ.) Վանի թագավորությունը հասնում է հզորության գագաթնակետին: Նրա գահակալության հենց երկրորդ տարին (Ք.ա. 785 թ.) խիստ հագեցած էր արտաքին ձեռնարկումներով: Նախ նա կատարում է ռազմավարական անհրաժեշտությամբ պայմանավորված կարևոր արշավանք դեպի Դիաուխի, ապա Էթիունյան միության և հարևան մի քանի երկրների դեմ: Այնուհետև Արգիշ-


ՎԱՆԻ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ
Մ Ե Վ Մ Ռ Ա
Ա Ս Ի Ա Ն Ա Ն Ա Ն

տին հասնում է Կարսի սարահարթ, որից հետո արշավում Զաբախա (Ջավախք):

Ք.ա. 784 թվին Արգիշտի I–ի հյուսիսային արշավանքները շարունակվում են: Նա իր տերությանն է միացնում *Աբիլիանի* երկիրը (հետագայի Աբեղեանք գավառը), գրավում Էթիունյան միության մաս կազմող *Վեղուրի-Էթիունի* («Ջրային Էթիունի») երկրամասը Սևանա լճի ավազանում, նաև այլ փոքր իշխանություններ:

Մեկ այլ արշավանքով ամրապնդվում են Վանի թագավորության դիրքերը Ուրմիո լճից հարավ–արևմուտք՝ Մեծ Զաբի միջին հոսանքի շրջանում:

Իր թագավորության չորրորդ տարում (Ք.ա. 783 թ.) Արգիշտին խոշոր արշավանք է ձեռնարկում դեպի արևմուտք՝ Փոքր Ասիայի տարածք: Նա կրկին գրավում է Մելիտեան ու այլ երկրներ՝ վերադառնալով տասնյակ հազարավոր ռազմագերիներով և մեծ ռազմավարով:

Ք.ա. 782 թ. Վանի զորքերը նախ գրավում են Էթիունյան միության մաս կազմող *Կեխունի* (Գեղունի) «ծովային գավառը» Սևանա լճի ավազանի հյուսիսում, ապա շարունակում հաղթարշավը դեպի *Ալիշտու*՝ Աղստևի հովիտ: Հիմնադրվում է Էրեբունի ամրոցը: Այնուհետև արշավանքը շարունակվում է դեպի հյուսիս–արևելք՝ մինչև հետագա Գուգարաց աշխարհի Տաշիր գավառի տարածքը:

Արգիշտին Ք.ա. 781 թ. ոչ միայն պարտության մատնեց ասորեստանյան զորքերին, այլև շարունակեց հարձակումը դեպի հարավ՝ Զագրոսյան լեռներով հասնելով մինչև *Պարսուա* (հետագայի Պարսք) և *Բաբելոնի* երկիր, որը ձգվում էր մինչև Պարսից ծոց: Դրանով Արգիշտին շրջափակման մեջ է վերցնում Ասորեստանը երեք կողմից՝ հյուսիսից, արևելքից և հարավից:

Այսպիսով՝ ***Ք.ա. 786-781 թթ.*** Արգիշտի I–ի առաջնորդությամբ ***ստեղծվում է Վանի աշխարհակալությունը:***

Դրանից հետո ևս շարունակվեցին Արգիշտի I–ի հաղթարշավները: Մասնավորապես Ուրմիո լճից հարավ տեղի ունեցան ռազմական բախումներ, իսկ Ք.ա. 781–778 թթ. ընդդեմ Ասորեստանի տեղի ունեցավ հաղթական պատերազմ:

Ք.ա. 779 թ. Արգիշտին մի հեռավոր արշավանքից հետո հասնում է Հյուսիսային ծովակի ավազանը:

Բազմաթիվ արշավանքներով ուղեկցվող արտաքին քաղաքականությունն Արգիշտին շարունակեց վարել նաև հետագա տարիներին: Այսպիսով՝ հայոց մեծ տիրակալ Արգիշտի I–ի օրոք Բիայնիլի–Ուրարտու–Արարատ թագավորությունը հասավ աննախադեպ հաջողությունների՝ վերածվելով Առաջավոր Ասիայի հզորագույն ուժի:

Արգիշտի I–ի տերության և ազդեցության ոլորտների աշխարհագրությունը: Արգիշտի I–ի բուն թագավորությունը ձգվում էր Ուրմիայի ավազանի հարավից մինչև Ջավախք, Սևանա լճի ավազանից և Կուր գետից մինչև անդրեփրատյան աջափնյա շրջաններ (ներառյալ Մելիտեա և Թաբալ երկրները), Մասիուս և Կորդվաց լեռներից մինչև Ճորոխի ավազան:

Նրա գերիշխանության սահմաններն ավելի լայնածավալ էին. դրանք ընդգրկում էին Փոքր Ասիայի արևելյան պետությունները և մերձուրմյան ավազանի մի քանի երկրներ, իսկ հարավում՝ մինչև Պարսից ծոց՝ Բաբելոնիան ներառյալ:

Արգիշտի I–ի հեռավոր արշավանքներից ամենանշանավորը թերևս Բաբելոնիայի նվաճումն էր: Վանի թագավորության՝ Առաջավոր Ասիայի հզորագույն տերություն դառնալը փաստագրված է նաև նրա գլխավոր մրցակից Ասորեստանի զորքերի գերագույն հրամանատարի խոստովանության մեջ, համաձայն որի՝ հայոց մեծ տիրակալի *«անունն անգամ ահարկու է որպես ծանր հողմ, նրա ուժերը մեծաքանակ են»*...

Արգիշտի I–ի ստեղծած տերության ազդեցության ոլորտների պատկերը համալրվում է հնագիտական պեղումներից հայտնաբերված փաստերի ուսումնասիրության շնորհիվ: Նրա անվամբ սեպագիր արձանագրությամբ սաղավարտ է գտնվել Հյուսիսային Կովկասից, որը ներկայումս պահվում է Բեռլինի Առաջավորասիական թան-

գարանում: Համանման սաղավարտներ են հայտնաբերվել նաև Աբխազիայից, Օսիայից և Թռեղքից: Հնագիտական փաստերը վկայում են Արգիշտի I–ի՝ մինչև Հյուսիսային Կովկաս տարածված ռազմաքաղաքական ազդեցության ոլորտի մասին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ խոշոր համաղաշնություններ էին ձևավորվել Հայկական լեռնաշխարհի տարածքում: Ինչո՞ւ են Ուրարտուն անվանում նաև Վանի թագավորություն:
2. Ինչ բարեփոխումներ է իրականացրել Իշպուինի արքան: Ռազմական ոլորտում ինչ բարեփոխումներ իրականացրին Իշպուինի և Մենուա արքաները:
3. Ինչ հաջողություններ արձանագրվեցին Մենուայի կառավարման տարիներին: Շինարարական ինչ աշխատանքներ կատարեց Մենուան:
4. Ո՞ր արքայի օրոք է Վանի թագավորությունը հասել հզորության գագաթնակետին: Արգիշտին ինչ շինարարական աշխատանքներ ձեռնարկեց:

§ 2. ՎԱՆԻ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՐԴՈՒՐԻ II–Ի ԵՎ ՆՐԱ ՀԱՋՈՐԴՆԵՐԻ ՕՐՈՔ: ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Սարդուրի II. Չորս ծովերի տերությունը: Վանի թագավորության հզորությունը շարունակվում է ***Սարդուրի II–ի*** օրոք *(Ք.ա. 764–735 թթ.)*: Նա առաջին խոշոր արշավանքն ուղղում է Մելիտեա պետության դեմ, որի արքան ստիպված էր ներկայանալ Սարդուրիին և պարտավորվել վճարել հարկեր:

Այնուհետև նա արշավում է Սևանա լճի ավազան, ապա հարավ՝ Արմե և Ուրմե երկրներ: Նա արշավում է Մանա երկրի վրայով հարավ՝ կրկնելով հոր՝ Արգիշտի I–ի արշավանքը Ասորեստանի արևելքով դեպի Բաբելոն: Հայաստանյան բանակը մտնում է Բաբելոնիա՝ նվաճելով ու ավերելով երեք ամրոց և մոտ երկու տասնյակ քաղաքներ, տանելով գրեթե քառասուն հազար ռազմագերի և հարուստ ավար: Բաբելոնիայի վերանվաճումով հայոց աշխարհակալության հարավային սահմանը կրկին հասնում է Պարսից ծոց:

Ք.ա. 740–ական թթ. Սարդուրի II–ը երկու արշավանք է ձեռնարկում դեպի հյուսիս՝ ***Կուլիա***՝ կոլիների երկիրը՝ հունական աղբյուրների Կոլխիդան, որը ձգվում էր մինչև Սև ծովի ափերը:

Հաջորդ տարի Սարդուրին հասնում է նոր հաջողության. դուրս է գալիս Միջերկրական ծովի արևելյան ավազան:

Դեպի հարավ՝ մինչև Բաբելոն արշավանքները երեք կողմից շրջափակում էին Ասորեստանը, իսկ Սիրիայի տարածքով և Եփրատի ավազանով Բաբելոն հասնելով՝ կիրականանար Ասորեստանի լիակատար շրջափակումը:

Սարդուրի II–ի կառավարման շրջանում նկատվում է շատ կարևոր անցում տերության կառավարման ոլորտում. նա սկսում է վերացնել կախյալ (կամ «դաշնակից» համարվող) թագավորությունները՝ վերածելով պետության վարչական միավորների, դրանով իսկ համադաշնային կառավարման համակարգից անցում կատարելով կենտրոնացված պետության:

Ամփոփելով Սարդուրի II–ի կառավարման ժամանակաշրջանի ընդհանուր պատկերը՝ տեսնում ենք, որ նրա գահակալության շրջանում է Վանի տերությունն ունեցել տարածքային ամենամեծ աճը:

Նրա տերությունը հյուսիսում հասնում է Սև ծով, հյուսիս–արևելքում՝ Կուր գետ, արևելքում՝ Կասպից ծով, արևմուտքում՝ Փոքր Ասիայի կենտրոնական շրջան, հարավում՝ Բաբելոնով՝ Պարսից ծոց և հարավ–արևմուտքում՝ Միջերկրական ծով:

Ասորեստանի դիրքերի ամրապնդումը: Լիակատար շրջափակումից և ոչնչացումից խուսափելու նպատակով Ասորեստանը լուրջ քայլեր ձեռնարկեց: Ք.ա. 743 թ. Թիգլաթպալասար III–ը կարողացավ կասեցնել Վանի տերության՝ Եփրատի հովտով դեպի Բաբելոն շարժվող զորքերը: Ութ տարի անց՝ Ք.ա. 735 թ., Թիգլաթպալասար III–ն ի վիճակի եղավ արշավանք ձեռնարկելու դեպի Տուշպա (Վան): Մայրաքաղաքը գրավել նրան, իհարկե, չհաջողվեց, սակայն դրանով Ասորեստանը վերականգնեց իր դիրքերը՝ կրկին դառնալով Վանի տերության գլխավոր մրցակիցն Առաջավոր Ասիայում:

Սարդուրի II–ի որդի ***Ռուսա I–ը (Ք.ա. 735 – մոտ 710-ական թթ.)*** գահ բարձրացավ դժվարին մի շրջանում: Նա կատարեց պետական համակարգի և բանակի բարեփոխումներ:

Ռուսա I–ն արշավանքներ ձեռնարկեց դեպի Սևանա լճի ավազան՝ այնտեղ վերակառուցելով երկու խոշոր ամրոցներ և անվանակոչելով Խալդի և Թեյշեբա գերագույն աստվածների անուններով: Դրանից հետո Ռուսան ուշադրությունը կենտրոնացրեց մերձուրմյան ավազանին, հատկապես Արդինի–Մուսասիրին: Նա գահընկեց արեց իշխանությանը տիրացած ասուրամետ դրածոյին և գահին վերահաստատեց իր վստահելի կառավարչին: Արդինի–Մուսասիրը Խալդիի պաշտամունքի գլխավոր կենտրոնն էր, նրա «սրբազան քաղաքը»:

Վերականգնվեցին Վանի տերության դիրքերը նաև Աղձնիքի տարածքում:

Մերձուրմյան ավազանում իր դիրքերը վերականգնելուն ուղղված քայլերը հանգեցրին Ասորեստանի նոր արքա Սարգոն II–ի հետ բախմանը Ք.ա. 719 թ.: Վերջինս անհաջողություն կրեց: Ջարգացնելով հաջողությունը՝ Ռուսա I–ն արշավեց դեպի արևելք՝ նվաճելով մինչև Կասպից ծով ընկած նոր տարածքներ:

Ք.ա. 716 թ. Մանայի համար Ասորեստանի և Ուրարտուի պայքարը վերածվեց վճռական պատերազմի: Սակայն նույն տարվա աշնանը հյուսիսից անակնկալ հայտնվեցին կիմերների քոչվոր ցեղերը՝ ապպատակելով Վանի թագավորության տարածքները: Երկիրը հայտնվեց երկու ճակատով հարձակվող թշնամիների օղակում. Ռուսա I–ն անհաջողություններ կրեց:

Օգտվելով դրանից՝ Ք.ա. 714 թ. գարնանը Սարգոն II–ն արշավեց Վանի թագավորության դեմ: Նա չունեցավ առանձնապես մեծ հաջողություններ, սակայն վերադարձին մտավ Արդինի–Մուսասիր և թալանեց Խալդիի գլխավոր տաճարը: Իբրև հերոսություն ներկայացվող այս քայլը իրականում պարզ սրբապղծություն էր, քանի որ Արդինի–Մուսասիրը բաց սրբավայր էր, և ասորեստանցիները ևս գալիս էին այնտեղ պաշտամունքի:

Դատելով փաստերից՝ Ռուսա I–ին շուտով հաջողվել է հետ նվաճել Արդինի–Մուսասիրը:

Ք.ա. 743–713 թթ. մղած երեսնամյա պայքարի արդյունքում Ասորեստանին հաջողվեց վերականգնել իր դիրքերը՝ կրկին դառնալով Առաջավոր Ասիայի տերություններից մեկը:

Վանի թագավորությունը VIII դարի վերջին և VII դարի առաջին կեսին: Ռուսա I–ին հաջորդում է նրա որդի Արգիշտի II–ը: Վանի թագավորության համար այդ ժամանակ հյուսիսում հայտնվել էր լուրջ թշնամի՝ կիմերների ցեղը, իր հերթին Ասորեստանն էլ Փոքր Ասիայում ձեռք էր բերել նոր հակառակորդ: Վտանգավոր հակառակորդների հայտնվելու արդյունքում մերձեցում է նկատվում Ասորեստանի և Վանի թագավորության հարաբերություններում: Բարիդրացիական էին հարաբերություններն Ասորեստանի նոր գահակալ Սինաքերիբի (Սենեքերիմի) հետ: Այս պայմաններում Արգիշտի II–ը զենքն ուղղում է արևելք՝ Արաքսի հարավով հասնելով մինչև Կասպից ծով: Նվաճված տարածքներում արքան հիմնադրում է երկու խոշոր ամրոց՝ Խալդի աստծո և իր անուններով:

Բիայնիլի–Ուրարտու–Արարատի վերջին ականավոր տիրակալը դարձավ ***Ռուսա II–ը*** (Ք.ա. մոտ 685–645 թթ.)՝ Արգիշտի II–ի որդին:

Նա շարունակեց կառավարման համակարգի բարեփոխումը՝ համադաշնությունների համակարգից անցումը գերկենտրոնացված պետական կառավարման մոդելին: Զարկ տրվեց քաղաքաշինությանը, հիմնվեցին կամ վերակառուցվեցին բազմաթիվ ամրոցներ: Անցկացվեցին նոր ջրանցքներ, զարգացան արհեստներն ու առևտուրը:

Ք.ա. 660-ական թթ. սկզբին կրկին սրվում են հարաբերությունները Ուրարտուի և Ասորեստանի միջև: Այդ ժամանակաշրջանի ասորեստանյան մի քանի աղբյուրներ վկայում են Վանի տերությունից սպասվող սպառնալիքի մասին: Վանի տիրակալը հիշատակվում է կիմերների հետ Ասորեստանի դեմ թշնամական գործողություններ ծրագրելիս:

Հայկական լեռնաշխարհի հյուսիսային և հյուսիսարևմտյան շրջաններում հաստատված կիմերները դեռևս Ք.ա. 715-714 թթ. թշնամական արշավանքներ էին ձեռնարկել Վանի տերության դեմ՝ դրանով նաև նպաստելով վերջինիս թշնամի Ասորեստանի քաղաքականությանը: Հատկանշական է, որ Ռուսա II-ը կիմերների դեմ ռազմական պայքար չի սկսում, այլ դիմում է դիվանագիտական հնարքի: Նրան հաջողվում է բարեկամական և դաշնակցային հարաբերություններ հաստատել կիմերների հետ և նպաստել նրանց՝ Փոքր Ասիայի արևելք տեղափոխվելուն:

Ք.ա. 650-ական թթ. առաջին կեսին տեղի են ունենում ռազմական բախումներ Ասորեստանի և Վանի թագավորության միջև: Ուրարտուի դեմ ռազմական գործողություններ սկսեցին հյուսիսից հայտնված նոր հակառակորդները՝ սկյութները: Ասորեստանի և Վանի թագավորության պատերազմն ավարտվել է նրանց միջև խաղաղության և բարեկամության պայմանագրով:

Թագավորության անկումը: Ռուսա II-ին հաջորդել են ևս մի քանի թագավորներ, որոնց ժամանակ պետությունը թուլացել էր: Վերջին հստակ թվագրվող արքան ***Սարդուրի III-ն*** է, որն ասորեստանյան արձանագրություններում հիշատակվում է Ք.ա. 643 թ.:

Համեմատաբար լուսաբանված է Էրիմենայի որդի Ռուսա III-ի իշխանության շրջանը, որից մեզ հասած արձանագրությունները հայտնաբերվել են Վանա լճի արևելյան շրջանների և Արարատյան դաշտի հնավայրերից:

Վանի արքայատոհմի իշխանությունն աստիճանաբար թուլանում էր: Պետության անկմանը նպաստեցին նաև հյուսիսից ապատակող սկյութական ցեղերը: Թե երբ է անկում ապրել Վանի թագավորությունը, ստույգ հայտնի չէ: Հիմքեր կան կարծելու, որ Վանի արքայատոհմից իշխանության անցումը հաջորդ արքայատոհմին կատարվել է Ք.ա. VII դ. վերջին՝ առանց լուրջ պատերազմական գործողությունների, պալատական հեղաշրջման ճանապարհով:

Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան մասում Ք.ա. VII դարում ձևավորվել էր նոր հայկական մեծ իշխանություն՝ Հայկազունների գլխավորությամբ: Պարույր Հայկազունուն էլ վիճակված էր Ք.ա. 612 թ. հռչակել նոր թագավորություն:

Վանի տերությունը կարևոր դեր է խաղացել հայոց և համաշխարհային քաղաքակրթության պատմության մեջ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Սարդուրի II-ը ինչ նոր քաղաքներ հիմնադրեց: Մինչև ո՞ւր էին ձգվում հայոց տերության սահմանները նրա օրոք:
2. Ի՞նչ հետևանքներ ունեցավ ասուրա-ուրարտական բախումը Ռուսա I-ի օրոք:
3. Ո՞վ էր Ուրարտուի վերջին ականավոր տիրակալը: Ներկայացրեք Ռուսա II-ի ձեռնարկած արշավանքների ուղղությունները: Ռուսա II-ը ինչպես է կարգավորում փոխհարաբերությունները կիմերների հետ:
4. Վերհանեք Վանի թագավորության անկման պատճառները:

§ 3. ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ, ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԲԱՆԱԿԸ

Գյուղատնտեսությունը և արհեստները: Պետության հզորությունը և ռազմաքաղաքական հաջողությունները մեծապես պայմանավորված էին տնտեսության զարգացման բարձր մակարդակով: Վանի թագավորությունը մեծ հաջողությունների հասավ գյուղատնտեսության և արհեստների զարգացման գործում: Կարևոր նվաճումներից էր ոռոգման ջրանցքաշինական ցանցի ստեղծումը, որը նպաստեց գյուղատնտեսության ծաղկմանը: Բացի Մենուայի (Շամիրամի) 72 կմ երկարություն ունեցող ջրանցքից, Տուշպա–Վան քաղաքից ոչ հեռու կառուցվել են 25 կմ երկարություն ունեցող ***Ռուսայի ջրանցքը*** և ***«Ռուսայի ծով»*** կոչված ջրամբարը: Երևանում գտնվող ***Թեյշեբաինի*** (Կարմիր բլուր) ամրոցի մոտ մինչ օրս պահպանվել է մի ջրանցք, որը Հրազդանից թունելի միջով ջուր է մատակարարել Արարատյան դաշտին:

Լեռնային ու նախալեռնային շրջաններում զարգացած էր անասնապահությունը: Զարգանում էին արհեստներն ու առևտուրը: Ծաղկում էր ապրում ամբողջ տնտեսությունը:

Տնտեսության վերելքը զգալիորեն խթանվեց երկրի հարուստ մետաղահանքերի բուռն շահագործմամբ և մետաղյա գործիքների լայն օգտագործմամբ: Մետաղագործության հիման վրա զարգացան դարբնությունը, զինագործությունը, ոսկերչությունն ու արծաթագործությունը:

Վանի թագավորությունում մեծապես օգտագործվում էր ստրկական ուժը, սակայն հիմնական արտադրող ուժը երկրագործ ու անասնապահ ազատ բնակչությունն էր:

Քաղաքաշինությունը: Վանի տիրակալներն առաջնահերթ տեղ էին հատկացնում ամրոցաշինությանն ու երկրի պաշտպանական համակարգի կատարելագործմանը: Մեծ թվով բերդ–քաղաքներ են կառուցվել ողջ տերության տարածքում, ինչի մեկնարկը կարելի է համարել Սարդուրի I–ի կողմից մայրաքաղաք Տուշպայի կառուցումը:

Մենուայի օրոք ավարտվում են Տուշպայի պաշտպանական կառույցները, Մասիսի ստորոտում՝ Արաքսի աջ կողմում, կառուցվում է Մենուախինիլի քաղաքը, տասնյակ ամրոցներ՝ պետության կենտրոնական շրջաններում, Ուրմիո լճի ափերին՝ ռազմական հենակետերի մի հզոր շղթա:

Արգիշտի I–ը զարկ տվեց քաղաքաշինությանը՝ ստեղծելով այնպիսի խոշոր վարչատնտեսական կենտրոններ, ինչպիսիք էին Էրեբունին, Արգիշտիխինիլին՝ Արարատյան դաշտում, մեկ այլ Արգիշտիխինիլի՝ Մուշի շրջանում:

Սարդուրի II–ը շարունակեց երկրի լայնածավալ քաղաքաշինությունը՝ հիմնադրելով Տուշպայից ոչ հեռու գտնվող ***Սարդուրիխինիլին*** (Հայկաբերդ, Աստվածաշեն):

Ռուսա I–ը Սևանա լճի ավազանում վերակառուցեց երկու խոշոր բերդ–ամրոց՝ դրանք անվանակոչելով Խալդի և Թեյշեբա աստվածների անուններով:

Ռուսա II–ն իշխանության առաջին իսկ տարում հիմնադրում է Թեյշեբաինի քաղաքը: Հիմնվում, վերակառուցվում և ընդարձակվում են բազմաթիվ ամրոցներ ու քաղաքներ:

Բերդ–քաղաքների բարձրադիր մասերում կառուցվում էր 2–3 շարք պարիսպներով պատված հզոր միջնաբերդ–ամրոցը: Միջնաբերդում կամ ամրոցում բնակվում էր կառավարիչը՝ իր սպասավորներով և զինվորներով: Միջնաբերդի շուրջը փռված քաղաքը մեծ մասամբ նույնպես պարսպապատում էին: Քաղաքները կառուցապատվում էին հատուկ նախագծով, որի արդյունքում նրանք ունեին ուղիղ և զուգահեռ փողոցներ: Այդ մասում կային նաև արհեստանոցներ ու մառաններ: Արհեստավորների մեծ մասը բնակվում էր պարսպապատ քաղաքի տարածքում: Քաղաքային բնակելի





Մուսասիրի տաճարի պատկերը և վերակազմությունը

տները բազմատեսակ էին՝ խրճիթներից սկսած, մինչև ընդարձակ բնակարաններից բաղկացած շենքերը:

Միջնաբերդում պարտադիր լինում էր գերագույն աստծո, նաև տեղական աստվածության տաճար(ներ)ը: Վանի թագավորության տաճարները մի քանի տեսակ էին: Մեկը Արդինի-Մուսասիրի հայտնի տաճարն էր, որի միայն պատկերն է մեզ հասել: Տաճարների այս ոճը հետագայում տարածում գտավ ամբողջ աշխարհում: Այդ ոճի հիանալի նմուշներից է Գառնիի հեթանոսական տաճարը Հայաստանում: Ուրարտական տաճարի մյուս տեսակը կոչվում է «Աստծո դարպաս»:

Պետական կարգը: Հայկական պետականության զարգացումը: Վանի տերությունը փաստորեն ծնունդ առավ Նաիրյան համադաշնությունից: Համադաշնությունների համակարգը բնորոշ էր Հայկական լեռնաշխարհին՝ սկսած Ք.ա. III հազարամյակից. հիշենք 17 երկրների դաշինքը Ք.ա. XXIII–XXII դդ. և Նաիրյան երկրների համադաշնությունները Ք.ա. II հազարամյակում:

Վանի թագավորությունը, ստեղծվելով որպես Հայաստանի հարավային իշխանությունների համադաշնություն, կարևորագույն դեր խաղաց հայկական պետականության պատմության մեջ: Հենց այս թագավորության ժամանակաշրջանում էր, որ տեղի ունեցավ դարակազմիկ փոփոխությունը հայոց պետականության պատմության մեջ՝ բազմաթիվ իշխանությունների ***համադաշնությունից անցումը կենտրոնացված պետության:*** Այս երևույթը տեղի ունեցավ ***Ք.ա. VIII–VII դարերում:***

Պետության կառավարման ոլորտում շատ կարևոր այդ անցումը նկատվում է Սարդուրի II-ի կառավարման շրջանում, երբ նա սկսում է վերացնել կախյալ (նաև «դաշնակից» համարվող) թագավորություններն ու իշխանությունները՝ վերածելով դրանք պետության վարչական միավորների:

Ռուսա I-ը շարունակեց քայլերը գերկենտրոնացված պետություն ստեղծելու ճանապարհին: Ռուսա II-ի օրոք այս գործընթացը լիովին ավարտվեց: Ստեղծվեց կուռ համակարգով կենտրոնացված միապետություն:

Վանի թագավորությունը ***հինարևելյան տիպի բացարձակ միապետություն էր:*** Պետության գլուխ կանգնած թագավորի իշխանությունն անսահմանափակ էր և ժառանգական՝ հորից ավագ որդուն: Նրա ձեռքում էին կենտրոնացված երկրի գերագույն իշխանությունը, դատավարությունը, զինված ուժերի հրամանատարությունը և այլն: Թագավորը համարվում էր գերագույն աստված Խալդիի ներկայացուցիչը Երկրի վրա և իր բոլոր գործերը կատարում էր նրա անունից:

Թագավորին կից գործում էր ***Ավագների խորհուրդը,*** որի մեջ մտնողները համարվում էին արքայի «խորհրդականներ»:

Վարչական առումով պետությունը բաժանվում էր խոշոր մարզերի, որոնք կառա-

Վահան և սաղավարտ՝
Սարդուրի II–ի արձանագրություններով

վարվում էին արքունի կառավարիչների կողմից: Նվաճված երկրներում իշխանությունը կարող էր թողնվել նախկին թագավորին կամ ցեղապետին, որը պարտավորվում էր հարկ վճարել և իր զորքով մասնակցել Վանի տիրակալի արշավանքներին:

Արձանագրություններում հիշատակվում են մի շարք գործակալությունների անվանումներ՝ «աշխարհակալ», «գավառակալ», «սահմանապահ կուսակալ» և այլն: Մեծ թիվ էին կազմում պետական համակարգի պաշտոնեությունն ու սպասարկու անձնակազմը. օրինակ՝ Տուշպայի մոտ գտնվող Ռուսախինիլի քաղաքի արքունի պալատը սպասարկող անձնակազմը բաղկացած էր 5507 հոգուց (նրանցից 119–ը գրագիրներ էին և ենթարկվում էին «հաշվի մարդուն»):

Բանակը: Կառավարման համակարգին զուգահեռ բարեփոխումներ իրականացվեցին նաև բանակում: Դեռևս Իշպուինիի և Մենուայի օրոք սկսվել էր դաշնային զորաջոկատների և աշխարհազորի փոխարինումն արհեստավարժ զինվորականությամբ: Նրանց ստեղծած արհեստավարժ բանակի կազմում Ռուսա I–ի օրոք առանձնացվեց «արքայական գունդը» (հեծյալ զորամիավորումներից բաղկացած ընտրյալ ուժեր), ձևավորվեցին «մարզային զորքերը»:

Զինված ուժերի կորիզը կազմում էր արքունի մշտական զորաբանակը, որը խաղաղ պայմաններում տեղակայվում էր արքունական բերդերում, ամրոցներում և սահմանային զորանոցներում: Պատերազմների ժամանակ արքունի զորաբանակին միանում էին իշխանությունների զորամասերը, դաշնակից երկրների զինված ուժերը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև աշխարհազորային գնդերը:

Բանակը կազմված էր հետևակից, հեծելազորից և մարտակառքերից: Այն բաժանված էր 3–հազարանոց գնդերի, որոնք իրենց հերթին կազմված էին 50–ական զինվորից բաղկացած վաշտերից:

Տերության ամենամեծ ընդարձակման տարիներին՝ Սարդուրի II–ի օրոք, երբ սահմանները ձգվում էին չորս ծովերի միջև, «Սարդուրյան տարեգրության» համաձայն՝ զինված ուժերի ընդհանուր թիվը շուրջ 350 հազար էր: Բնականաբար, այս թվի մեջ ներառված են նաև նվաճված ու հարկատու երկրների զինված ուժերը:

Մարտիկները զինված էին բրոնզե և երկաթե սրերով, դաշույններով, նիզակներով, տեգերով, կացիններով, գուրզերով, պարսատիկներով, լայնալիճ աղեղներով և 36 նետ տարողությամբ կապարճներով: Հատկանշական է, որ Սարգոն II–ի Ք.ա. 714 թ. արշավանքի ժամանակ միայն Արդինի–Մուսասիրի տաճարին կից զինանոցից ասորեստանցիները թալանել են 305 հազար թուր, 25 հազար վահան, 1500 նիզակ և այլն:

Զորքի գերագույն հրամանատարն արքան էր: Պատերազմի ժամանակ նրան օգնում էին առաջին և երկրորդ սպարապետերը: Հիշատակվում են գնդապետեր, հարյուրապետեր, հիսնապետեր և տասնապետեր:

Հեծելակային, հետևակային և մարտակառքային ուժերով համալրված զորաբանակը ստորաբաժանվում էր ըստ զինվածության և մարտական հմտությունների՝ սակրավորների, սուսերավորների, նիզակավորների, աղեղնավորների, հետախույզների և այլն:

Արքաների կողմից կազմակերպվում

էին զինախաղեր և մրցություններ, որոնցից երկուսի մասին մեզ են հասել գրավոր վկայություններ Մենուայի և Արգիշտի II-ի թողած արձանագրություններում:

Սարգոն II-ի վկայությամբ՝ Ուրարտուի զորաբանակում օգտագործում էին երաժշտական փողային գործիքներ և թմբուկներ՝ իրենց մարտիկներին ոգևորելու և հակառակորդին ահաբեկելու նպատակով: Նույն աղբյուրի համաձայն՝ Ուրարտուի բերդապահները խարույկի ազդանշաններով հեռավոր տարածություններից միմյանց հաղորդում էին թշնամու զորքերի տեղաշարժերի մասին:

Պատերազմը Վանի թագավորության համար ստրուկների ձեռքբերման հիմնական աղբյուրն էր: Միայն Արգիշտի I և Սարդուրի II արքաների օրոք նվաճված երկրներից բերվել են կես միլիոնից ավելի ռազմագերի-ստրուկներ: Ստրուկներն աշխատում էին քաղաքների ու ամրոցների, տաճարների, ջրանցքների ու ճանապարհների կառուցման ու նորոգման վրա:

Հարցեր և առաջադրանքներ

1. Տնտեսության որ ճյուղերը զարգացում ապրեցին Ուրարտուում: Ի՞նչն էր նպաստում տնտեսության վերելքին:
2. Պաշտպանական նպատակով ինչ քաղաքներ են կառուցվել Վանի թագավորությունում:
3. Երբ հայոց մեջ տեղի ունեցավ անցումը համադաշնությունից կենտրոնացված պետության: Ներկայացրեք Վանի թագավորության պետական համակարգը: Վարչական ինչ բաժանման էր ենթարկված Վանի թագավորությունը:
4. Ո՞ր արքան առանձնացրեց «արքայական գունդը»: Ներկայացրեք ուրարտական բանակի կազմը: Ինչպիսի՞ն էր բանակի ապառազինությունը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ

Սարդուրի I-ի ասուրերեն արձանագրությունը Տուշպա մայրաքաղաքի հիմնադրման մասին

«Սարդուրիի արձանագրությունը՝ որդու Լութիպրիի, մեծ արքայի, հզոր արքայի, տիեզերքի արքայի, Նաիրիի արքայի, որին հավասարը չկա, զարմանահրաշ հովվի, (որ) չի վախենում կռվից, արքայի, որ ենթարկում է անհնազանդներին: Սարդուրին՝ որդին Լութիպրիի, արքան (է) արքաների, որը բոլոր արքաներից հարկ վերցրեց: Սարդուրին՝ որդին Լութիպրիի, ասում է այսպես.— Ես քարերն այս Ալնիունու (քաղաքի) միջից բերեցի, ես պարիսպն այս կառուցեցի»:

Մենուայի արձանագրությունը ջրանցքի կառուցման մասին

«Խալդյան զորությամբ Մենուա Իշպուինորդին այս ջրանցքը անցկացրեց: «Մենուայի ջրանցք» (է) անունը: Խալդյան մեծությամբ Մենուան արքա (է) հզոր, արքա մեծ, արքա Բիայնիլի (երկրի), տերը Տուշպա քաղաքի»:

Թեմա 2. ՀԱՅԿԱԶՈՒՆ-ԵՐՎԱՆԴԱԿԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ Ք.Ա. VII ԴԱՐԱՎԵՐՋԻՑ ՄԻՆՉԵՎ Ք.Ա. 330-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ

Սկայորդի և Պարույր Հայկազուններ: Մովսես Խորենացու հաղորդման համաձայն՝ ***Ք. ա. VII դարի առաջին կեսին*** լեռնաշխարհի հարավ-արևմուտքում վերականգնվել էր Հայկազունների տոհմի իշխանությունը՝ ***Սկայորդու*** գլխավորությամբ: Այն համապատասխանում է սեպագիր աղբյուրների ***Արմն-Շուբրիա*** պետական կազմավորմանը:

Ք.ա. 681 թ. Ասորեստանի Սենեքերիմ (Սինաքերիբ) արքայի որդիներ Սարասարը (Սանասարը) և Ադրամելեքը սպանում են իրենց հորը և փախչում Հայաստան: Նրանց ապաստան է տալիս Սկայորդին՝ բնակեցնելով Ասորեստանի սահմանակցությամբ:

Ըստ Պատմահոր հաղորդման՝ Սկայորդու որդի Պարույրը միավորեց Վանա լճից մինչև Եփրատ ընկած ողջ տարածքը և դաշինք կնքեց Մարաստանի (Մեդիա) ու Բաբելոնի հետ ընդդեմ Ասորեստանի: Ք.ա. 612 թ. դաշնակից զորքերը գրավեցին Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն: Դրանից հետո ***Պարույր Նահապետը*** թագադրվեց Մարաստանի արքայի կողմից և ճանաչվեց ***Հայաստանի թագավոր***: Երբ Ասորեստանը վերջնականապես ոչնչացնելու նպատակով դաշնակից զորքերը Ք.ա. 609 թ. Վանի շրջանով արշավում էին դեպի Ասորեստանի վերջին հենակետ Կարքեմիշ քաղաքը, այդ ժամանակ Վանն արդեն դաշնակիցների, այսինքն՝ Պարույրի իշխանության տակ էր:

Հայկազուն-Երվանդականներ թագավորությունը Ք.ա. VI դարում: Ք.ա. 580-570-ական թթ. Պարույրի հաջորդներից նշանավոր դարձավ Երվանդ I Սակավակյացը, որի անունով էլ Հայկազունների մի ճյուղը համարվող արքայատոհմը ստացել է *Երվանդական, Երվանդյան* կամ *Երվանդունի* անվանումը: Երվանդ Սակավակյացի օրոք հայոց թագավորությունն ուներ 40-հազարանոց հետևակ և 8 հազար հեծյալ զորք, որն այն ժամանակներում մեծ ուժ էր: Թագավորության սահմանները հյուսիս-արևելքում հասնում էին Կուր գետ, հյուսիս-արևմուտքում՝ Սև ծով, արևելքում՝ Մարաստան, իսկ հարավում՝ Հյուսիսային Միջագետք: Դրանք, փաստորեն, համապատասխանում էին Վանի թագավորության սահմաններին:

Երվանդ Սակավակյացը, Մարաստանի արքա Կիաքսարի դեմ պատերազմում անհաջողություն կրելով, պահպանել էր իր թագավորությունը, սակայն ստիպված ճանաչել էր մարական գերիշխանությունը: Կարճ ժամանակ անց՝ արդեն Աժդահակի օրոք, նա ապստամբում է Մարաստանի դեմ: Ապստամբությունը ճախողվում է, և մարական արքունիքի ծուղակն է ընկնում հայոց արքայական ընտանիքը: Այն հարցին, թե որն էր նրա ապստամբության դրդապատճառը, հայոց արքան հպարտորեն պատասխանում է. «*Ես ազատության էի ձգտում, քանզի լավ էի համարում, որ ինքս ազատ լինեմ և որդիներիս ազատություն թողնեմ*»:

Մարաստանի գերիշխանությունը վերացվեց Ք.ա. VI դարի կեսին, երբ Երվանդ I-ի որդի Տիգրան Երվանդյանը պարսից արքա Կյուրոս Մեծի հետ միացյալ ուժերով ապստամբեց Մարաստանի դեմ:

Տիգրանը սկզբում դաշնակցային հարաբերություններ ուներ Մարաստանի արքա Աժդահակի հետ և իր քույր Տիգրանուհուն կնության էր տվել նրան: Հետագայում, երբ պարզ է դառնում, որ Աժդահակը փորձում է այդ ամուսնությունն օգտագործել քաղաքական նկատառումներով, Տիգրանը պատերազմի է ելնում Մարաստանի դեմ՝ դաշնակից ունենալով պարսից արքա

Կյուրոսին, որն ապստամբել էր Աժդահակի դեմ և ձգտում էր խորտակել մարական թագավորությունը:

Ըստ հույն պատմիչ Քսենոփոնի՝ Տիգրան Երվանդյանը մտերիմ հարաբերություններ ուներ պարսից արքա Կյուրոս II Մեծի հետ: Նրանք որսընկերներ էին եղել դեռ պատանի հասակում:

Մարաստանի դեմ ապստամբությունը սկսվեց *Ք.ա. 553 թվականին*, այն գլխավորում էր Կյուրոս Մեծը: Տիգրանը նրա գլխավոր դաշնակիցն էր, որի իշխանությունը, բուն Հայաստանից բացի, տարածվում էր նաև Կապադովկիայի, Վրաստանի և Աղվանքի վրա: Ըստ հայկական ավանդության՝ հենց Տիգրանն էլ վճռական պայքարում սպանեց Մարաստանի արքա Աժդահակին:

Կյուրոս Մեծի ստեղծած Աքեմենյան աշխարհակալության սահմանները Միջերկրական ծովից և Եգիպտոսից ձգվում էին մինչև Հնդկաստան: Հայաստանի տիրակալ ***Տիգրան Երվանդյանը*** *Ք.ա. 538 թ.* դաշնակից զորքերի գլուխ անցած՝ ***գրավեց Բաբելոնը***, որից հետո, հայոց արքա լինելուց բացի, դարձավ նաև Կյուրոսի տերության արևմտյան կեսի փոխարքան: Մովսես Խորենացին այսպես է ընդհանրացնում Տիգրան I Երվանդյանի գահակալությունը. *«Սա մեր թագավորներից ամենահզորը և ամենախոհեմն էր և նրանց բոլորից քաջ: Նա Կյուրոսին աջակից եղավ Մարաց իշխանությունը կապալելու... և մեր բնակության սահմաններն ընդարձակելով՝ հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը»:*

Հայաստանն արտոնյալ դիրք ուներ տերության մեջ: Կյուրոս II Մեծը զոհվում է Ք.ա. 529 թ., որին հաջորդում է որդին՝ Կամբիզը: Նրա օրոք ևս պահպանվում են Հայաստանի և Աքեմենյան Պարսկաստանի դաշնակցային հարաբերությունները: Տիգրան Երվանդյանը մահանում է Ք.ա. 524 թ.: Այնուհետև գահն անցնում է նրա երեք որդիներից Վահագնին:

Բեհիսթունյան արձանագրությունը Հայաստանի և հայերի մասին: Կամբիզի անսպասելի մահվանից հետո սկսվում են գահակալական կռիվներ, որոնք ի վերջո ավարտվում են Դարեհ I-ի (Ք.ա. 522–486 թթ.) հաղթանակով: Երբ Դարեհը հաստատվում է գահին, տերության ժողովուրդներն ապստամբում են Աքեմենյանների տիրապետության դեմ: Դարեհի իշխանության իրավականությունը չի ճանաչում Հայաստանը:

Դարեհը ստիպված իր իշխանության առաջին տարիներն անցկացնում է՝ ապստամբություններ ճնշելով և հակառակորդներին ոչնչացնելով: Այդ իրադարձությունների մասին է պատմում նրա թողած Բեհիսթունյան եռալեզու արձանագրությունը:

Արձանագրության պարսկերեն բաժնում Հայաստանը կոչվում է ***Արմինա***, էլամերենում՝ ***Հարմինույա***, բաբելերենում՝ ***Ուրարտու***: Հայաստանը շարունակում է «Ուրարտու» կոչվել նաև ավելի ուշ՝ Ք.ա. IV դ., ինչը մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ «Ուրարտուն» հայկական պետության անվանումներից մեկն էր:

Ք. ա. 522–521 թթ. Դարեհը բազմաթիվ արշավանքներ է ձեռնարկում՝ վերանվաճելու իր իշխանությունը չընդունող երկրները: Բեհիսթունյան արձանագրության սկզբում Հայաստանը չի հիշատակվում ապստամբած երկրների շարքում, ինչը ցույց է տալիս, որ վերջինս լիովին անկախ էր:

Ամենամեծ փորձությունները Դարեհ I-ին սպասում էին Հայաստանում: Եթե մյուս երկրները նա կարողանում էր նվաճել մեկ արշավանքով, ապա դեպի Հայաստան պահանջվում է հինգ արշավանք:

Հայաստանի դեմ արշավանքը Դարեհը նախ հանձնարարել էր իր մերձավորներից ծագումով հայ մի զորավարի՝ Դադարշիշին: Վերջինիս երեք անհաջող արշավանքներից հետո Դարեհը Հայաստան է ուղարկում պարսիկ զորավար Վահումիսային: Նա հայերի հետ առաջին ընդհարումն ունենում է Հյուսիսային Միջագետքում: Անհաջողության մատնված պարսիկները ստիպված էին իրենց հաջորդ՝ հինգերորդ արշավանքն իրականացնել Հայաստանի դեմ: Եվ

միայն այդ արշավանքից հետո են հայերն ընդունում Դարեհի գերիշխանությունը:

Նույն արձանագրության համաձայն՝ Դարեհի դեմ Բաբելոնում բարձրացած ապստամբությունը ղեկավարում էր *«Հայազգի Արախան՝ Խալդիտայի որդին»*:

Ք.ա. 521 թ. Հայաստանը ճանաչում է Աքեմենյանների գերիշխանությունը, սակայն պարսիկները ևս, իրենց հերթին, ստիպված գնում են զիջումների: *Հայաստանում շարունակում են իշխել Երվանդականները, որոնք հատում էին սեփական դրամ և վայելում լիակատար ներքին ինքնավարություն:*

Հայաստանը Աքեմենյան տերության կազմում: Ապստամբությունների ճնշումից հետո՝ Ք. ա. 520 թ., Աքեմենյան տերությունը բաժանվում է 20 մեծ վարչական միավորների՝ ***սատրապությունների:*** Հայաստանը կազմում է XIII սատրապությունը: Հայաստանի կառավարիչ-սատրապները Հայկազուն-Երվանդական տոհմի ներկայացուցիչներն էին և շարունակում էին կարևոր դիրք գրավել Աքեմենյան տերության մեջ՝ երբեմն ազգակցական, խնամիական սերտ կապեր ունենալով պարսից արքայից արքայի հետ:

Հայաստանը՝ որպես սատրապություն, Աքեմենյան տերության կազմում մնաց մինչև Ք. ա. 331 թվականը: Այդ ժամանակաշրջանի մասին մեր տվյալները խիստ սակավաթիվ են:

Ուշագրավ տեղեկություններ է հաղորդում հույն զորավար և պատմիչ ***Քսենոփոնը***, որը ***Ք.ա. 401 թ.*** անցել է Հայաստանի տարածքով: Աքեմենյան տիրակալ Արտաքսերքսես II-ի դեմ ապստամբում է նրա եղբայր Կյուրոս Կրտսերը, սակայն գահին տիրանալու համար բավարար ուժ չունենալով՝ 10-հազարանոց բանակ է վարձում հույներից: Օգնական վարձկանները հասան մինչև Միջագետք, սակայն ավագ եղբոր դեմ ապստամբած Կյուրոս Կրտսերը սպանվեց, ապստամբությունը ճնշվեց, և թշնամական շրջափակման մեջ հայտնված հունական բանակին անհրաժեշտ էր ժամ առաջ դուրս պրծնել շրջափակումից ու հասնել հայրենի երկիր: Դրա համար ընտրվեց ամենահարմար երթուղին՝ Միջագետքից Հայաստանի տարածքով դեպի Սև ծովի ափը, իսկ այնտեղից նավերով՝ Հունաստան: Այդ բանակի

հրամանատարն էր Քսենոփոնը, ով, Կորդվաց աշխարհից մինչև Սև ծովի ափն անցնելով, նկարագրեց իր ճանապարհին տեսածն «Անաբասիս» (հունարեն՝ «Տասը հազարի նահանջը») աշխատության մեջ:

Քսենոփոնը տեղեկացնում է, որ այդ ժամանակ Հայաստանի սատրապն էր ***Օրոնտեսը (Երվանդ II-ը)***, որն ամուսնացած էր Աքեմենյան տիրակալ Արտաքսերքսես II-ի դստեր հետ և բարձր դիրք էր գրավում տերության մեջ: Երվանդ II-ը հատել է սեփական պատկերով ոսկեղրամ, որը հասել է մեզ: Երվանդ II-ի մասին վերջին տեղեկությունները վերաբերում են Ք.ա. 360-ական թվականներին: Դրանց համաձայն՝ նա գլխավորել է Աքեմենյանների դեմ բարձրացած մի քանի սատրապների ապստամբությունը, բայց անհաջողություն կրելով՝ ապաստանել է Հունաստանում և այնտեղ անցկացրել կյանքի վերջին տարիները:

Հայաստանի արևմտյան մասն ուներ իր կառավարիչը՝ Տիրիբազ անունով, որը ենթարկվում էր Երվանդ II-ին: Ամեն գյուղ ուներ իր գյուղապետը:

Քսենոփոնը նկարագրում է Հայաստանը՝ որպես շատ հարուստ, բարեկեցիկ և հյուրընկալ ժողովուրդ ունեցող երկիր: Նա նշում է, որ չկար մի տուն, որտեղ իրենց չհյուրասիրեին բազմապիսի խմիչքներով ու մսեղեն կերակուրներով. հույն պատմիչն առաջին անգամ այստեղ է տեսել գարեջուրը, որը նկարագրում է որպես *«գարուց պատրաստված գինի, որի երեսին լողում էին գարու հատիկներ»*...

Երվանդ II-ից հետո մեր տեղեկությունները կրկին խիստ սակավաթիվ են դառնում: Հայտնի է, որ Աքեմենյան վերջին տիրակալ Դարեհ III Կոդոմանոսը նախքան Աքեմենյան տիրակալ դառնալը եղել է Հայաստանի սատրապը և հայոց գահի վրա կրել «Արտաշատ» անվանումը: Ք.ա. 336 թ. նա դառնում է ողջ Աքեմենյան տերության տիրակալը, իսկ Հայաստանի սատրապ է դառնում Հայկազուն-Երվանդունիների տոհմի ներկայացուցիչ ***Երվանդ*** (Օրոնտես) ***III-ը***, որին էլ վիճակված էր վերականգնել Հայաստանի անկախությունը:



Աքեմենյան Քսերքսես արքայի արձանագրությունը Վանի ժայռին, Ք.ա. V դ.

Հարցեր և առաջադրանքներ

1. Երբ է վերականգնվել Հայկազունների տոհմի իշխանությունը, ո՞ւմ գլխավորությամբ, ի՞նչ տարածք էր այն զբաղեցնում:
2. Ներկայացրեք Երվանդ Սակավակյաց և Տիգրան I Երվանդյան արքաների գահակալության շրջանները:
3. Ի՞նչ գիտեք Բեհիսթունյան արձանագրության մասին: Ի՞նչ անուններով է հիշատակվում Հայաստանը:
4. Ի՞նչ գիտեք Աքեմենյան տերության XIII սատրապության մասին: Ո՞վ էր Քսենոփոնը, ի՞նչ տեղեկություններ է հաղորդում Հայաստանի մասին:

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները և Հայաստանի անկախության վերականգնումը: Մակեդոնիայում Փիլիպոս II արքայի սպանությունից հետո գահ է բարձրանում որդին՝ քսանամյա Ալեքսանդրը (Ալեքսանդր Մեծ կամ Ալեքսանդր Մակեդոնացի, Ք.ա. 336–323 թթ.): Նրան վիճակված էր դառնալ համաշխարհային պատմության նշանավոր և առեղծվածային դեմքերից մեկը:

Ք.ա. 334 թ. մակեդոնա-հունական զորքերն Ալեքսանդրի գլխավորությամբ անցնում են Հելլեսպոնտոսը և շուտով մի քանի ճակատամարտերում պարտության մատնում պարսից Աքեմենյան վերջին տիրակալ Դարեհ III-ին:

Ամենավճռական ճակատամարտը տեղի է ունենում Ասորեստանի հյուսիսում՝ *Գավգամելայի* մոտ, *Ք.ա. 331 թ. հոկտեմբերի 1-ին:* Հայերն առաջնորդում էին աքեմենյան զորքի աջ թևը՝ Օրոնտես-Երվանդ III-ի և Փոքր Հայքի կառավարիչ Միթրաուստեսի գլխավորությամբ:

Մարտը սկսվում է առավոտյան և շարունակվում ամբողջ օրը: Ուշ երեկոյան, չդիմանալով մակեդոնական զորքի ճնշմանը, աքեմենյան զորքերը սկսում են անկազմակերպ նահանջը, որը վերածվում է կենտրոնի և ձախ թևի խուճապահար փախուստի: Դարեհը կրկին փախուստի է դիմում:

Մակեդոնացին սկսում է հետապնդել Դարեհին, ինչը, սակայն, ձախողվում է աքեմենյան բանակի աջ թևի հերոսական գործողությունների հետևանքով, իսկ ինչպես նշվել է, աջ թևի վճռորոշ ուժը հայկական զորքն էր: Հունա-մակեդոնական զորքի ձախ թևի հրամանատարն օգնություն է խնդրում Ալեքսանդրից, որը հարկադրված է լինում դադարեցնել Դարեհի հետապնդումը և թիկունքից հարձակվում է հակառակորդ բանակի աջ թևի վրա: Աջ թևի զորամասերին առաջնորդող հայոց այրուձին «արագ երթով նահանջի» հրաման է ստանում և դուրս գալով ճակատամարտից՝ վերադառնում է Հայաստան:

Հայկական զորքերի վճռական մասնակցությունը Գավգամելայի ճակատամարտին ևս նպաստեց, որ Դարեհ III-ը խուսափի գերի ընկնելուց:

Արժանապատվորեն հայրենիք վերադարձած հայկական զորքերը Գավգամելայի ճակատամարտից հետո՝ *Ք.ա. 331 թ., վերականգնում են Հայաստանի անկախությունը*՝ Օրոնտես-Երվանդ III-ը՝ *Մեծ Հայքում,* իսկ Միթրաուստեսը՝ *Փոքր Հայքում:* Հայերի օրինակին են հետևում նաև այլ երկրներ:

Մակեդոնական և հայկական զորքերի հաջորդ բախումը տեղի է ունենում 2–3 տարի անց, երբ Ալեքսանդրի զորաբանակներից մեկը, Մենոն զորավարի գլխավորությամբ, ուղարկվեց Բարձր Հայքի ոսկու հանքերի շրջանը, որը թանկարժեք մետաղների արդյունահանմամբ հռչակված էր դեռևս Ք.ա. III հազարամյակից: Ինչպես վկայում է հույն մատենագիր Ստրաբոնը, հայերը ոչնչացնում են նրա բանակը, իսկ զորավարին *«խեղդամահ անում»:* Դրանից հետո Ալեքսանդրը նոր զորք չուղարկեց Հայաստան:

Կարճ ժամանակ անց Դարեհ III-ը սպանվեց իր մերձավորների կողմից: Աքեմենյան տերությունն անկում ապրեց, իսկ Մակեդոնացին շարունակեց արշավանքը դեպի Միջին Ասիա և Հնդկաստան՝ ստեղծելով աննախադեպ հսկայածավալ մի աշխարհակալություն, որի մայրաքաղաքն էր *Բաբելոնը:* Ալեքսանդրը մահանում է Ք.ա. 323 թվականին՝ 33 տարեկան հասակում: Նրա արշավանքներով Առաջավոր Ասիայում սկզբնավորվում է *հելլենիզմի՝ հունականության դարաշրջանը:* Հայաստանն այդ դարաշրջան մտավ լիակատար անկախությամբ:

Ալեքսանդրի մահվանից ընդամենը ութսուներեք տարի անց հունարենով գրի առնվեց Ալեքսանդրի վիպերգը: Այն պարունակում է ուշագրավ տեղեկություններ, որտեղ Հայաստանը նշվում է որպես անմահության երկիր:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑՈՒ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Հայկական թագավորությունները և Սելևկյան տերությունը: Հունական աղբյուրները, մանրամասն թվարկելով Ալեքսանդր Մեծի հպատակեցրած երկրները, Հայաստանը չեն հիշատակում դրանց շարքում: Հայաստանն աննվաճ մնաց նաև Մակեդոնացու մահվանից հետո: Ք.ա. 301 թ. Մակեդոնացու տերությունը բաժանվեց մի քանի մասերի, որոնցից ամենախոշորը Հայաստանին սահմանակցող ***Սելևկյան կայսրությունն էր:***

Մինչև Ք.ա. III դ. վերջը Հայաստանը կարողանում է ոչ միայն պահպանել իր անկախությունը, այլև հակադրվել տարածաշրջանի գերտերությանը՝ Սելևկյաններին: Հայաստանին տիրելու այդ տերության բազմաթիվ փորձերն ապարդյուն են անցնում, քանի որ Մեծ և Փոքր Հայքերը գործում էին միասնաբար:

Ք. ա. մոտ 260–240 թթ. իշխած հայոց արքա ***Շամ (Սամոս)*** Երվանդականը կառուցեց Կոմմագենեի ***Սամոսատ*** (Շամշատ) մայրաքաղաքը և հատեց դրամներ, որոնք մեզ հասած առաջին հայկական արքայական դրամներն են:

Ք. ա. մոտ 240 թ. Շամին հաջորդեց նրա որդի ***Արշամը,*** որը կառուցեց ***Արշամաշատ*** քաղաքը Ծոփքում և Արսամեա անունով երկու քաղաք Կոմմագենեում: Արշամի մասին տեղեկանում ենք, որ նա այնքան հզոր էր, որ կարողացել էր ապաստան տալ սելևկյան տիրակալի դեմ ապստամբած նրա եղբորը:

Ք. ա. III դարի վերջին նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Սելևկյանների վաղեմի ծրագրի իրագործման համար: Սելևկյան արքա Անտիոքոս III–ի զորքերը հայազգի զորավարներ ***Արտաշեսի*** և ***Զարեհի*** գլխավորությամբ ***Ք.ա. 201 թ.*** արշավեցին Հայաստանի դեմ: ***Երվանդ IV Վերջինը (Ք.ա. մոտ 220–201 թթ.)*** զոհվեց մայրաքաղաք Երվանդաշատի պաշտպանության ժամանակ: Այնուհետև գրավվեց Մեծ Հայքի հոգևոր կենտրոն ***Բագարանը,*** որտեղ սպանվեց երկրի գերագույն քուրմ Երվազը՝ Երվանդ արքայի եղբայրը: Դրանով Ք.ա. 201 թ. Մեծ Հայքում վերջ դրվեց Հայկազունների Երվանդական ճյուղի իշխանությանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞վ էր Ալեքսանդր Մակեդոնացին. ինչ ընթացք ունեցավ նրա Արևելյան արշավանքը: Ի՞նչ մասնակցություն ունեցան հայերը Գավգամելայի ճակատամարտին: Ի՞նչ է հելլենիզմը:
2. Հիմնավորե՛ք, որ Մակեդոնացին Հայաստանը չի կարողացել նվաճել: Ի՞նչը նպաստեց Սելևկյանների՝ Հայաստանը գրավելու ծրագրի իրականացմանը:

§ 3. ՀԱՅԿԱԶՈՒՆ-ԵՐՎԱՆԴԱԿԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Գյուղատնտեսությունը, արհեստագործությունը, առևտուրը: Թագավորությունը մեծ հաջողությունների հասավ գյուղատնտեսության և արհեստների զարգացման ասպարեզում: Երկրագործության համար նպաստավոր պայմաններ կային ***Այրարատյան, Շիրակի, Տարոնի, Բագրևանդի, Բասենի դաշտերում, Վանի ավազանում*** և մեծաքանակ գետահովիտներում: Շարունակում էր գործել դեռ Վանի թագավորության ժամանակ ստեղծված ջրանցքների մեծ ցանցը: Զարգանում էին հացահատիկների մշակությունը, այգեգործությունն ու խաղողագործությունը:

Լեռնային ու նախալեռնային շրջանները հիանալի հնարավորություն էին տալիս անասնապահության և անասնաբուծության զարգացման համար: Անասնապահության և երկրագործության զարգացումը նաև խթանում էր արհեստների ու առևտրի զարգացմանը:

Հույն պատմիչ և զորավար Քսենոփոնը նկարագրում է Հայաստանը՝ որպես գյուղատնտեսական ապրանքներով բացառիկ հարուստ երկիր, որի բնակիչներն *«ունեին անհրաժեշտ բոլոր տեսակի պարենի և բարիքների առատություն, մորթելու անասուններ, հաց, անուշահոտ հին գինիներ, չամիչ, ամեն տեսակի ընդեղեն»*: Հույն պատմիչին հիացրել է հայերի բացառիկ հյուրասիրությունը:

Սկսած Ք.ա. IV–III հազարամյակներից՝ Հայաստանի տնտեսության մեջ առանցքային էր ***մետաղաձուլության*** դերը: Շարունակվում էր երկրի հարուստ մետաղահանքերի շահագործումն ու մետաղյա գործիքների լայն կիրառումը: Զարգացման բարձր մակարդակի վրա էին դարբնությունը, գինագործությունը, ոսկերչությունն ու արծաթագործությունը, որոնց վկայությունները պեղումներից հայտնաբերված բարձրարվեստ նմուշներն են:

Ք.ա. VI–III դարերի Հայաստանի տնտեսության մեջ կարևոր դեր էր խաղում ներքին և արտաքին առևտուրը: Հայտնի է, որ Աքեմենյան շրջանի սատրապներն ունեին սեփական դրամ հատելու իրավունք: Մեզ են հասել Երվանդ (Օրոնտես) II–ի և Տիրիբազի հատած սատրապական դրամները (Ք.ա. V–IV դդ.):

Հայաստանով էին անցնում ժամանակի միջազգային նշանակության մի քանի առևտրական ճանապարհներ: Աքեմենյան արքաները ստեղծել էին Հին աշխարհի մեծագույն մայրուղիներից մեկը՝ 2400 կմ երկարությամբ ***«Արքայական ճանապարհը»***, որը ձգվում էր պարսից տերության մայրաքաղաքից մինչև Էգեյան ծով: «Արքայական ճանապարհի» 15 կայարաններից բաղկացած մի մեծ հատված (մոտ 330 կմ) անցնում էր Հայաստանի հարավ–արևմուտքով, ինչը միջազգային առևտրին անմիջականորեն մասնակցելու բացառիկ հնարավորություն էր:

Միջազգային առևտրին Հայաստանի մասնակցության ջրային ճանապարհի մասին է վկայում հույն նշանավոր պատմիչ Հերոդոտոսը (Ք.ա. V դար): Ըստ նրա հաղորդման՝ առևտուրը Հայաստանի և Միջագետքի միջև կատարվում էր Եփրատ գետով. «Այժմ ես կպատմեմ այն մասին, ինչն ինձ այս քաղաքից (Բաբելոնից) հետո թվում է ամենազարմանալին: Նավերը, որոնցով նավում են գետն ի վար՝ դեպի Բաբելոն, կլոր են և ամբողջովին կաշեպատ: Արմենիայում, որը Ասորեստանից վերև է, նրանք կտրում են ուռենիներ, որոնցով պատրաստում են նավի կողերը և դրանք պատում կավե ծածկով, նավի հատակի նման... Այդ նավերը պատրաստում են և՛ շատ մեծ, և՛ առավել փոքր: Դրանցից ամենամեծերն ունեն հինգ հազար տաղանդ տարողություն»:

Հայկազուն–Երվանդակաների ժամանակաշրջանի հնավայրերի պեղումներից հայտնաբերվել են օտար ծագումով առարկաներ, որոնք ներմուծված են այլ երկրներից՝ մետաքս, բամբակ, համեմունքներ, թանկարժեք քարեր, ապակյա անոթներ և այլն: Փոխարենն արտահանվել են մետաղներ, արհեստագործական արտադրանք, գինիներ, ներկեր, կաշի, բուրդ, նժույգներ, ջորիներ և այլն:

Քաղաքները: Հայկազուն–Երվանդակաների պետության մայրաքաղաք հռչակվեց ***Արմավիրը:*** Վանի թագավորության շրջանից շարունակում էին կարևորություն ունենալ ***Վանը, Էրեբունին*** և այլ քաղաքներ: Վանի թագավորության քաղաքները ծանր հարված ստացան կիմերական և սկյութական արշավանքների ժամանակ:

Այս ժամանակաշրջանում կառուցվեցին նոր քաղաքներ, որոնցից հատկապես նշանավոր էին Արաքսի և Ախուրյանի խառնարանի մոտ Երվանդ IV–ի (Ք. ա. մոտ 220–201 թթ.) կառուցած ***Երվանդաշատ մայրաքաղաքը,*** Ախուրյանի ափին գտնվող ***Բագարան արքավայր-քաղաքը,*** որը երկրի հոգևոր կենտրոնն էր՝ քրմապետի նստավայրը:

Քաղաքների գլխավոր հատվածը վեր խոյացող միջնաբերդն էր, որի շուրջը տարածվում էր բուն քաղաքը, որը, որպես կանոն, պարսպապատ էր: Կենտրոնական դիրք էր գրավում քաղաքի հովանավոր աստծու տաճարը: Քաղաքների հիմնական

Էլամերեն սեպագիր սալիկ Արմավիրից.
Ք.ա. V–IV դդ.

բնակչությունը կազմում էին առևտրականներն ու արհեստավորները, ինչի շնորհիվ քաղաքները դրամական շրջանառության կենտրոններ էին և առանցքային նշանակություն ունեին արքունիքի տնտեսության համար: Քաղաքային համայնքները պետությունից լայն ինքնավարություն էին ստանում և ազատված էին որոշ հարկերից:

Պետական կարգը: Հայկազուն–Երվանդականներ թագավորությունն իր կառավարման համակարգը ժառանգություն ստացավ Վանի թագավորությունից: Ք.ա. VII–VI դդ. երկրի արքան կրում էր *«Հայոց թագավոր»* տիտղոսը: Արքան երկրի գերագույն տերն էր, զորքերի գլխավոր հրամանատարը, նրա իրավասություններն էին պատերազմ հայտարարելը, այլ երկրների հետ պայմանագրեր կնքելը, նոր քաղաքներ ու ամրոցներ հիմնադրելը և դրանք անվանակոչելը:

Արքայից հետո երկրի կարևորագույն դեմքը, փաստորեն, քրմապետն էր, ով, հոգևոր գերագույն առաջնորդը լինելուց բացի, նաև երկրի Մեծ դատավորն էր և արքայի գլխավոր խորհրդականը: Կարևորագույն այդ պաշտոնը արքայական ընտանիքի ձեռքում էր:

Արքան երկիրը ղեկավարում էր արքունիքի և արքունի գործակալների միջոցով: Հիշատակվում են զորավար–սպարապետներ, արքունի հացարարներ, մատռվակներ, դպրատուն և դպիրներ: Երվանդականների կառավարման համակարգը հիմնական գծերով նման է եղել Վանի թագավորության և իրեն հաջորդած Արտաշեսյանների ու Արշակունիների կառավարման համակարգերին:

Ք. ա. 521–331 թթ. Հայաստանում շարունակում էին իշխել Հայկազուն–Երվանդականները, որոնք ենթարկվում էին Աքեմենյաններին՝ սատրապի կարգավիճակով: Հայաստանի արևմտյան մասն ուներ իր կառավարիչը (հյուպարքոս), որը ենթարկվում էր սատրապին: Ամեն գյուղ ուներ իր գյուղապետը:

Թագավորության տարածքը, վարչական բաժանումը և բանակը: Հայկազուն–Երվանդականների թագավորությունը, փաստորեն, Վանի թագավորությունից ժառանգեց ոչ միայն կառավարման համակարգը, այլև տարածքը: Թագավորության սահմանները հյուսիս–արևելքում հասնում էին Կուր գետ, հյուսիս–արևմուտքում՝ Սև ծով, արևելքում հասնում էին Մարաստան, իսկ հարավում՝ Հյուսիսային Միջագետք:

Դարեհ I–ի կողմից նվաճվելուց հետո՝ Ք.ա. 520 թ., Հայաստանը կազմեց Աքեմենյան տերության քսան սատրապություններից մեկը՝ XIII–ը: Ք.ա. V դարավերջին հույն պատմիչ Քսենոփոնը սատրապական Հայաստանի կազմում հիշատակում է առանձին ուրվագծվող, սակայն կենտրոնական իշխանությանը ենթակա Արևմտյան Հայաստանը:

Առաջին անգամ Ք.ա. IV դարում Գավգամելայի ճակատամարտի առնչությամբ Հայաստանի տարածքում հիշատակվում են Մեծ և Փոքր Հայքերը՝ որպես առանձին վարչական միավորներ, որոնք անկախ թագավորություններ հռչակվեցին այդ ճակատամարտից հետո (Ք.ա. 331 թ.):

Հայկազուն–Երվանդականների օրոք ռազմադաշտ դուրս բերվող հայոց բանակի թիվը 48 հազար էր (8 հազար հեծելազոր և 40 հազար հետևակ): Ամբողջ հայկական զինուժի թիվը, բնականաբար, պետք է ավելին լիներ, քանի որ ռազմադաշտ դուրս բերվող զորքից բացի, մեծ քաղաքներում և ամրոցներում մշտապես մնում էին կայազորներ:

Հեծելազորը, որը բանակի գլխավոր հարվածային ուժն էր, համալրվում էր

ազատների դասի ներկայացուցիչներով: Նրանք զինված էին նիզակներով, սրերով, վահաններով, նետ ու աղեղներով: Հետևակը կազմում էր բանակի մեծ մասը և բաղկացած էր նետաձիգներից, նիզակակիրներից, սակրավորներից ու տեգակիրներից: Պատերազմի ժամանակ, անհրաժեշտության դեպքում, բանակը կարող էր համալրվել աշխարհազորային զորամասերով, որոնք հավաքագրվում էին ազատ համայնական գյուղացիներից, և որոնց առաջնորդում էին գավառական իշխանները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Հայկազուն-Երվանդականների օրոք գյուղատնտեսության որ ճյուղերն էին զարգացած: Նշեք փաստեր, որոնք վկայում են, որ Հայաստանում զարգացած էր ներքին և արտաքին առևտուրը:
2. Ի՞նչ նշանավոր քաղաքներ կային Երվանդականների օրոք: Ներկայացրեք քաղաքի կառուցվածքն ու նշանակությունը:
3. Կառավարման ինչ համակարգ ուներ Հայկազուն-Երվանդականների պետությունը: Ո՞ւմ օգնությամբ էր արքան իրականացնում կառավարումը:
4. Որոնք էին հայոց թագավորության սահմանները: Ներկայացրեք հայկական բանակը, ինչ զորատեսակներից էր այն բաղկացած, ինչպե՞ս էր հավաքագրվում և համալրվում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ

Քսենոփոնը Հայաստանի մասին (հատվածներ «Անաբասիս» գրքից)

Զորավարները որոշեցին, որ պետք է իջնել լեռների միջով դեպի կարդուխների երկիրը*, քանզի ասել էին, թե նրանց երկրով անցնելուց հետո կհասնեն Արմենիա, որին իշխում էր Օրոնտեսը,** և որը մեծ էր ու հարուստ...

Տներն այստեղ գետնափոր էին. մուտքը՝ ինչպես ջրհորի բերան, իսկ ներքևի մասն՝ ընդարձակ: Մինչդեռ անասունների համար մուտքը փորված էր (հողի մեջ), մարդիկ ցած էին իջնում աստիճաններով... Այնտեղ կային նաև ցորեն ու գարի և ընդեղեն և կավանոթների մեջ գարուց պատրաստված գինի, որի երեսին լողում էին գարու հատիկներ.... այն շատ թունդ էր, եթե ջուր չխառնեին, իսկ սովոր մարդու համար շատ ախորժելի ըմպելիք էր...

Խեյրիսոփոսն ու Քսենոփոնը փոխադարձաբար իրար ողջունելուց հետո սկսեցին միասին հարցափորձել գեղջավագին պարսկերեն խոսող թարգմանի միջոցով, թե այդ ինչ երկիր էր: Նա ասաց, թե Արմենիան է:

* Այսինքն՝ Կորդվաց աշխարհը:

** Խոսքը Երվանդ II-ի մասին է:

Սարբաբոնը Փոքր Հայքի թագավորության մասին

Փոքր Հայքը բավական բարեբեր երկիր է: Այն ևս, ինչպես Սոփենեն (Ծոփքը), միշտ կառավարել են իշխանները, որոնք մերթ եղել են մյուս հայոց* բարեկամ, մերթ էլ՝ իրենց գործերը վարել ինքնուրույն: Նրանց հպատակվել էին խալդայներն ու տիբարենները, այնպես որ, իրենց իշխանությունը տարածել էին մինչև Տրապեզունտ և Փառնակիա:

* Նկատի ունի Մեծ Հայքը:

Թեմա 3. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՏԱՇԵՍՅԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. ՆՈՐ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆՈՒՄԸ: ԱՐՏԱՇԵՍ I

Արտաշես I-ի գահակալումը: Ք.ա. III դ. վերջերին Սելևկյաններին կարճ ժամանակով հաջողվեց իրենց գերիշխանությունը հաստատել հայկական չորս թագավորությունների վրա: Մեծ Հայքում Ք. ա. 201 թ. սելևկյան կառավարիչ էր նշանակվել հայ մեծատոհմիկ Արտաշեսը, իսկ Ծոփքում՝ Զարեհը:

Սելևկյաններն ընդարձակ ծրագրեր էին մշակել Փոքր Ասիան ամբողջությամբ գրավելու ուղղությամբ: Տարածաշրջանի նկատմամբ իր հավակնություններն ուներ նաև Հռոմեական Հանրապետությունը: Այսպիսով՝ կողմերի միջև զինված ընդհարումն անխուսափելի էր: Նրանց միջև վճռական ճակատամարտը տեղի ունեցավ ***Ք.ա. 190 թ. Մագնեսիա*** քաղաքի մոտ: Հռոմեացիները համոզիչ հաղթանակ տարան Սելևկյան Անտիոքոս III թագավորի մեծաքանակ զորքերի նկատմամբ: Երկու տարի անց՝ ***Ք.ա. 188 թ.***, կողմերի միջև կնքվեց ***Ապամեայի հաշտության պայմանագիրը,*** որով փոխվեց ուժերի հարաբերակցությունը Արևելքում և շրջադարձային եղավ համաշխարհային պատմության մեջ: ***Ք.ա. 189 թ. անկախ հռչակվեցին Մեծ Հայքը, Փոքր Հայքը, Ծոփքը և Կոմմագենեն:*** Հայկական անկախության կերտողներ դարձան Մեծ Հայքում մեծատոհմիկ զորավար Արտաշեսը, Ծոփքում՝ Զարեհը:

Արտաշեսը Հին աշխարհի ականավոր ռազմական ու քաղաքական գործիչներից է: Նա ունեցել է միջազգային մեծ ճանաչում և հեղինակություն: Արտաշեսի մասին տեղեկություններ են պահպանվել հայկական, հունահռոմեական, վրացական սկզբնաղբյուրներում, արամեատառ վիմագիր արձանագրություններում:

Արտաշեսը ծնվել է մոտ Ք. ա. 230 թ. մեծատոհմիկ Զարեհի ընտանիքում: Մագնեսիայի ճակատամարտից հետո հռչակելով Հայաստանի անկախությունը՝ դարձել է նրա թագավորն ու հիմք դրել նոր՝ Արտաշեսյան արքայատանը: Թագավոր հռչակվելուց հետո իրեն կոչել է Երվանդական արքայատան շառավիղ:

Հայկական հողերի վերամիավորումը: Արտաշեսի՝ գահ բարձրանալու պահին Մեծ Հայքի թագավորության տարածքը պարփակված էր միայն կենտրոնական նահանգների սահմաններում: Հայկական մի շարք երկրամասեր գրավել էին հարևան երկրները՝ Մարաստանը, Վիրքը, Պոնտոսը, Սելևկյան տերությունը և այլ երկրներ: Արտաշեսն իր առջև խնդիր է դնում իրականացնելու հայրենիքի վերամիավորման կարևորագույն ծրագիրը:

Հույն աշխարհագետ Ստրաբոնը մանրամասն տեղեկություններ է հաղորդում Արտաշեսի այդ միավորիչ գործունեության մասին. իր թագավորության սկզբում արշավում է դեպի արևելք և հասնում Կասպից ծովի ափերը, որի շնորհիվ Մեծ Հայքին են միացվում ***Փայտակարանը*** և ***Կասպեից*** երկիրը: Այնուհետև արշավում է դեպի հյուսիս, որտեղ հարևան Վիրքը գավթել էր հայկական ***Գուգարք*** նահանգը: Արտաշեսի հանձնարարությամբ Սմբատ Բագրատունի զորավարը ջախջախում է վրացական բանակը և վերադարձնում գավթած տարածքները: Վրացական աղբյուրը հավաստում է, որ վրացիները պարտավորվում են «դրամ հատել Արտաշես արքայի պատկերով» և անհրաժեշտության դեպքում նրան զորք տրամադրել: Արևմուտքում Արտաշեսը Մեծ Հայքին է վերադարձրել ***Կարնո երկիրը, Եկեղիք*** ու ***Դերջան գավառները,*** իսկ հարավում՝ Սելևկյան Անտիոքոս IV-ի դեմ մղված երկարատև ու համառ կռիվներից հետո՝ ***Տմորիք երկրամասը:***

Մեծ Հայքին նաև Ծոփքի և Կոմմագենեի հայկական թագավորությունները

միավորելու Արտաշեսի ջանքերն այդ ժամանակ հաջողություն չունեցան:

Արտաշեսի միավորիչ գործունեության շնորհիվ հայկական տարածքների մեծ մասը, ինչպես նախորդ համահայկական թագավորությունների ժամանակ, վերամիավորվեց մեկ ընդհանուր պետության մեջ: Պատահական չէ, որ դեպքերի ժամանակակից հույն պատմագիր Պոլիբիոսը Արտաշեսին անվանում է «Արմենիայի մեծագույն մասի տիրակալ», իսկ Ստրաբոնը հավաստում է, թե «Հայաստանն... աճել է Արտաշեսի ջանքերով..., և ուստի այստեղ բոլորը միալեզու են», այսինքն՝ հայալեզու:

Հայկական երկրամասերի վերամիավորումը ունեցավ ազգային-քաղաքական կարևոր նշանակություն:

Մեծ Հայքի միջազգային հեղինակության աճը: Արտաշեսի օրոք Մեծ Հայքը դարձավ Առաջավոր Ասիայի ազդեցիկ պետություններից մեկը: Այսպես, երբ ***Ք.ա. 183-179 թթ.*** պատերազմ բռնկվեց Փոքր Ասիայում մի կողմից՝ Պոնտոսի ու Փոքր Հայքի, իսկ մյուս կողմից՝ Կապադովկիայի, Բիթանիայի ու նրանց դաշնակիցների միջև, Արտաշես I-ը, պահպանելով չեզոքություն, ակտիվորեն ներազդեց կողմերի վրա, և կնքվեց հաշտության պայմանագիր: Դիվանագիտական նուրբ ու ճշգրիտ քայլերով Արտաշեսը կարողացավ պայմանագրում հատուկ կետ մտցնել, որով Պոնտոսի հաշվին ընդարձակվեց Փոքր Հայքի տարածքը: Դա, անշուշտ, հետագայում Փոքր Հայքն իր թագավորությանը միացնելու հեռահար քայլ էր:

Արտաշեսը Ք.ա. 165 թ. վճռական հակահարված տվեց Սելևկյան Անտիոքոս IV-ին, որը փորձում էր Հայաստանը ենթարկել Սելևկյանների գերիշխանությանը: Արտաշեսը շարունակեց քայլերը Մերձավոր Արևելքում այդ պետության դիրքերը թուլացնելու ուղղությամբ: Այդ նպատակով նա օժանդակեց Մարաստանի սելևկյան սատրապ Տիմարքոսի ապստամբությանը (Ք.ա. 162-160 թթ.), որը զգալիորեն թուլացրեց Սելևկյան տերության հիմքերը:

Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրումը: Արտաշեսի ջանքերով Հայաստանը դարձավ ընդարձակ և ուժեղ պետություն, որը, բնականաբար, կարիք էր զգում նաև ներքին լայն բարեփոխումների: Արտաշեսն անհապաղ ձեռնամուխ է լինում տնտեսության, մշակույթի, ռազմական, վարչաքաղաքական և այլ բնագավառներում բարեփոխումների իրականացմանը:

Արտաշեսի վերափոխիչ գործունեության մեջ կարևոր տեղ է գրավում Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրումը: Արևելքում տարածված սովորույթ էր, երբ նոր արքայատոհմը, գահ բարձրանալով, նոր մայրաքաղաք էր կառուցում: ***Արտաշատը*** կառուցվել է մոտ ***Ք.ա. 185 թ.*** Արարատյան դաշտում՝ Երասխ և Մեծամոր գետերի ջրկիցում: Մովսես Խորենացին այդ մասին վկայում է. *«Արտաշեսը գնում է այն տեղը, որտեղ Երասխը և Մեծամորը խառնվում են, և այնտեղ, բլուրը հավանելով, քաղաք է շինում և իր անունով կոչում է Արտաշատ»:* Իսկ Ք. հ. I դարում ապրած հույն պատմիչ Պլուտարքոսը հավաստիացնում է, թե Արտաշատի տեղանքն ընտրել է Կարթագենի հռչակավոր զորավար Հաննիբալը, որն այդ ժամանակ քաղաքական ապաստան էր գտել Հայաստանում: Արտաշեսի առաջարկությամբ Հաննիբալը գլխավորել է քաղաքի շինարարական աշխատանքները, որոնք ընթացել են նախապես կազմված հատակագծով. «Կառուցվեց մեծ և շատ գեղեցիկ մի քաղաք, որին թագավորը տվեց իր անունը և այն հռչակեց Հայաստանի քաղաքամայր»:

Եվ իրոք, հնագիտական պեղումները, որ ընթանում են ներկայիս Խոր Վիրապի շրջակայքում, ցույց տվեցին, որ քաղաքը կառուցվել է հատակագծով: Արտաշատը շրջափակված է եղել բարձր, հզոր պարիսպներով, խրամով և պատվարով: Քաղաքի անառիկ դիրքը նկատի ունենալով՝ հունահռոմեական պատմիչներն այն անվանել են ***«Հայկական Կարթագեն»:*** Մայրաքաղաքը բնակեցնելու համար այստեղ են տեղափոխել Երվանդաշատի, Արմավիրի բնակչության և ռազմական արշավանք-



Արտաշատ մայրաքաղաքի հնավայրը

ների ժամանակ գերեվարվածների մի մասին: Արտաշատը կառուցվել է առևտրական նշանավոր տարանցիկ մայրուղիների խաչմերուկում, և պատահական չէ, որ այն շուտով դարձել է Առաջավոր Ասիայի քաղաքական, տնտեսական ու մշակութային կարևորագույն կենտրոններից մեկը:

Արտաշեսը կառուցել է նաև այլ քաղաքներ՝ Զարեհավան, Զարիշատ և այլն: Վերջիններս անվանվել են ի պատիվ Արտաշեսի հոր՝ Զարեհի:

Հողային բարեփոխումը: Արտաշեսի օրոք խիստ սրվել էին հողի մասնավոր սեփականատերերի և գյուղական համայնականների միջև հակասությունները: Ագարակատերերն անարգել զավթում էին համայնական հողերն ու գյուղացիներին զրկում իրենց գոյությունը պահպանելու միակ միջոցից: Բնականաբար, հողազուրկ գյուղացին այլևս չէր կարող հարկ վճարել պետությանը, դեռ ավելին՝ շահագրգռված չէր զինվորագրվել բանակին: Համայնական հողերի հետագա և անգուսպ յուրացումը տեղիք էր տալիս զինված ընդհարումների: Պետությունը չէր կարող անտարբեր դիտողի դերում լինել: Մոտ *Ք.ա. 180 թ.* Արտաշեսը հրապարակում է հրամանագիր՝ ***հողային բարեփոխման*** վերաբերյալ: Դրա համաձայն՝ մասնավոր հողային տնտեսությունների (ագարակներ) սահմանները հստակորեն սահմանազատվում են համայնքին պատկանող հողերից: Այս հրամանագիրը մի կողմից՝ օրինականացնում էր ագարակատերերի մինչ այդ կատարած զավթումները, իսկ մյուս կողմից՝ պահպանում էր համայնքային սեփականությունը: Հողային բարեփոխման վերաբերյալ Պատմահայրը վկայում է, թե «Արտաշեսը հրամայել է որոշել գյուղերի և ագարակների սահմանները..., կոփել է տվել քառակուսի քարեր և տնկել հողի մեջ»: Սահմանաքարերից շուրջ քսանը, որ ունեն Արտաշեսի անունով արամեերեն արձանագրություններ, հայտնաբերվել են Հայաստանի տարբեր շրջաններում: Դրանցից մի քանիսն այժմ ցուցադրվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում:

Ռազմավարական և այլ բարեփոխումներ: Արտաշեսի բարեփոխումներից առավել կարևորներից է ***ռազմականը:***

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՐՏԱՇԵՍ Ի-Ի ՕՐՈՔ

(Թ.Ա. 189–160 թթ.)

ՍԵՎ ԾՈՎ
ԿԱՍՊԻԱ ԾՈՎ
ՀՅՈՒՍԻՍ ԱՐԵՎԱԼՔԻ ԾՈՎ
ՊՈՆՏՈՍԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՓՈՔՐ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՎՐԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ԱԼԱՆԵՑՈՒ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՍԵԼԵՎԿՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՍԱՄՈՍԱՏԱ
ԿՈՄՄԱԳԵՆԻ
ՍՅՈՒՆԻՔ
ՏԱՐՈՆ
ՄԱՍԻՍ
ՄԵԾԱՄՈՐ
ԱՐԱՔՍ
ՎԱՆ
ՍԵՎԱՆ ԼԻՃ
ՍԱՄՍԱՏ
ԱՆԻ
ԳԱՆԶԱԿ
ՊԱՐՍԻՔ
ՍՈՒՍԱ
ԲԱԲԵՐԴ
ԵՐԶՆԿԱ
ԱՐՏԱՇԱՏ
ԵՐԱՆՇԱՀԻ
ԹԵԼԵՆԻՔ
ԱՐՏԱՇԱՏ (ՀԱՅՐԱՎԱՆՔ)
ՄԱՐԻՆ
ԿՈՂԲ
ՏՐԱՊԵԶՈՒՆՔ
ՍԱՄՈՍԱՏԱ
ՄԱՍԻՍ
ԱՐԴԱՇԱՏ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՎԱՂԱՐՇԱԿԵՐՏ
ԱՐԱՄԱՎԻՐ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՎԱՂԱՐՇԱԿԵՐՏ
ԱՐԱՄԱՎԻՐ
ԱՐԱՔՍԱՎԱՆ
ՎԱՆԱՆԴ
ՎԱՆԱՆԴ
ՎԱՆԱՆԴ
ԱՐՏԱՇԱՏ
ԱՐՏԱՇԱՏ
ԱՐՏԱՇԱՏ

Նրա օրոք ստեղծվեց հայկական կանոնավոր ու լավ զինված բանակ: Հայրենիքի սահմանների պաշտպանությունը պատշաճ կազմակերպելու համար նա ստեղծեց ***չորս զորավարություններ:*** «Արտաշեսը,— գրում է Մովսես Խորենացին,— զորքի իշխանությունն էլ չորս մասի է բաժանում. արևելյան կողմի զորքը թողնում է (իր որդի) Արտավազդին, արևմտյանը տալիս է (իր որդի) Տիրանին, հարավայինը վստահում է (իր զորավար) Սմբատին, իսկ հյուսիսայինը՝ (իր որդի) Զարեհին»:

Երկրի կառավարումը դյուրացնելու նպատակով Արտաշեսն այն բաժանեց ***120 գավառների,*** որ հունահռոմեական հեղինակներն անվանում են ***սատրապեգիաներ,*** իսկ դրանց կառավարիչներին՝ սատրապներ:

Կարգավորվել են նաև արքունի գործակալությունները, որոնցից կարևորագույնները՝ ***ապարապետությունը*** և ***հազարապետությունը,*** հանձնվել են արքայի մերձավորներին:

Հարևան հելլենիստական պետությունների օրինակով Արտաշեսը սահմանել է նաև թագավորի և նրա նախնիների պաշտամունքը: Արտաշատում կառուցել է ***Հայոց աշխարհի հովանավոր Անահիտ աստվածուհու տաճարը,*** որտեղ կանգնեցվել են թագավորի նախնիների արձանները: Տաճարներ են կառուցվել նաև Հայաստանի այլ քաղաքներում: Նման ձեռնարկները պետք է ժողովրդի աչքում բարձրացնեին թագավորական իշխանության հեղինակությունը:

Արտաշեսը կարգադրել է ճշգրտել հայկական օրացույցը, հստակեցնել տոմարը, կազմակերպել նավագնացություն լճերի և

Արտաշատ մայրաքաղաքի դրամ

նավարկելի գետերի վրա: Նա իրականացրել է նաև այլ բարեփոխումներ:

Կատարած բազմաթիվ նշանավոր գործերի համար դեռ իր կենդանության ժամանակ Արտաշեսն աստվածացվել է. նա մեծարվել է ***«Բարի», «Բարեպաշտ», «Աշխարհակալ»*** տիտղոսներով: Նրա մասին ժողովուրդը ստեղծել է երգեր, վեպեր, որոնց մի մասը գրի է առել Մովսես Խորենացին և ի պահպանություն թողել սերունդներին («Արտաշես և Սաթենիկ», «Արտաշես և Արտավազդ» և այլն): Այդ երգերում գովերգվել են նրա իմաստությունը, քաջությունը, բարությունը, շինարարական գործունեությունը, շեշտվել է նրա անհուն սերը հայրենիքի նկատմամբ: Արտաշեսի հանդեպ ժողովրդի սերն արտահայտվել է նաև նրանով, որ հետագայում հայերն իրենց սիրելի թագավորներին տվել են «Արտաշես» պատվատիտղոսը (Զենոն, Տրդատ I և այլք):

Արտաշեսը մահացել է շուրջ Ք.ա. 160 թվականին՝ 70 տարեկան հասակում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ հետևանքներ ունեցան Մագնեսիայի ճակատամարտը և Ապամեայի հաշտության պայմանագիրը Հայաստանի համար:
2. Ո՞վ էր Արտաշես I-ը: Ներկայացրեք Արտաշես I-ի միավորիչ գործունեությունը:
3. Ի՞նչ դիրքորոշում ուներ Արտաշես I-ը և ինչ քաղաքականություն էր վարում տարածաշրջանում՝ Ք. ա. 183–179 թթ. ընթացած պատերազմի հետ կապված:
4. Համառոտ ներկայացրեք Արտաշես I-ի իրականացրած բարեփոխումները և վերհանեք դրանց նշանակությունը:
5. Հիմնավորեք, որ Արտաշեսը ռազմական ու քաղաքական նշանավոր գործիչ էր:

§ 2. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏԻԳՐԱՆ II ՄԵԾ

Տիգրան II-ի գահակալությունը: Արտաշես I-ը իր հաջորդներին թողել էր տնտեսապես բարգավաճ, հարուստ և ռազմապես հզոր երկիր: Նրան հաջորդել է որդին՝ Արտավազդ I-ը (Ք.ա. 160-115 թթ.), որը թագավորում էր խաղաղությամբ: Ք.ա. II դ. վերջին Հայաստանը ենթարկվում է հետզհետե հզորացող հարևան Պարթևստանի Միհրդատ II թագավորի հարձակումներին: Թեև հայկական բանակը կարողանում է հետ շպրտել պարթևներին և պահպանել Հայաստանի անկախությունը, սակայն անժառանգ Արտավազդը ստիպված է լինում իր եղբորորդուն՝ Տիգրանին (ապագա Տիգրան II Մեծը), պատանդ տալ պարթևներին: Արքայազն Տիգրանը ծնվել էր մոտ Ք.ա. 140 թվականին: Նա Հայաստան վերադառնալու հնարավորություն ստանում է հոր՝ Տիգրան I-ի (Ք.ա. 115-95 թթ.) մահից հետո, երբ արդեն 45 տարեկան էր: Ազատության գինը Մեծ Հայքի հարավ-արևելքում գտնվող «Յոթանասուն հովիտներ» կոչված տարածքի զիջումն էր Միհրդատ II-ին: Հունահռոմեական սկզբնաղբյուրները վկայում են, որ Տիգրանը թագադրվել է Աղձնիքի նշանավոր սրբավայրերից մեկում, ուր հետագայում կառուցվել է Տիգրանակերտ քաղաքը:

Տիգրան II-ը (Ք.ա. 95-55 թթ.) շարունակել է իր պապի՝ Արտաշես I-ի միավորիչ գործունեությունը: ***Ք.ա. 94 թ.*** նրա բանակը մտնում է ***Ծոփք:*** Ռազմական ընդհարման ժամանակ սպանվում է տեղի թագավորը՝ Արտանեսը: Ծոփքի վերամիավորումով Մեծ Հայքը դուրս է գալիս Արևմտյան Եփրատի ափերը, որից այն կողմ տարածվում էր Կապադովկիայի թագավորությունը:

Հայ-պոնտական դաշինքը և Կապադովկիայի նվաճումը: Հայկական պետության ներուժն ու ռազմական հզորությունը թույլ էին տալիս լուծելու նաև ռազմավարական բարդ խնդիրներ, որոնք բխում էին Հայաստանի ազգային-պետական շահերից: Ծոփքից հետո օրակարգի հարց է դառնում Մեծ Հայքի հարավ-արևմտյան սահմանային նահանգ-Կորդուքի և Եփրատից արևմուտք ու Սև ծով ձգվող Փոքր Հայքի միավորումը: ***Կորդուքի*** միացումը տեղի է ունենում նույն՝ ***Ք.ա. 94 թվականին:*** Ի տարբերություն Ծոփքի՝ տեղի թագավորը մնում է գահին՝ պարտավորվելով կատարել վասալական տարբեր պարտականություններ:

Ավելի բարդ էր Փոքր Հայքի հարցը: Հայկական այս թագավորությունը դեռևս Ք. ա. 112 թ. ռազմակալվել էր հարևան Պոնտոսի կողմից: Վերջինս Փոքր Ասիայի հզոր պետություններից էր, ուներ լավ վարժեցված ու մարտունակ բանակ: Բնականաբար, Փոքր Հայքի միավորման հարցը կարելի էր լուծել միայն ընդդեմ Պոնտոսի ռազմական բախման միջոցով: Դա շատ լավ էր հասկանում նաև Պոնտոսի թագավոր ***Միհրդատ VI Եվպատորը:*** Վերջինս Փոքր Ասիայի բոլոր երկրները գրավելու և մի մեծ հելլենիստական պետություն ստեղծելու ծրագիր ուներ: Այդ ծրագրի գլխավոր խոչընդոտը Հռոմն էր: Եվ պատահական չէ, որ Միհրդատ Եվպատորը որոշեց դաշնակցել Տիգրան II-ի հետ:

Տիգրանը Հռոմի հետ որևէ վիճելի խնդիր չուներ: Սակայն Միհրդատ Պոնտացու հետ դաշինքը կնպաստեր Մեծ Հայքի աշխարհակալական ծրագրերի իրագործմանը: Ուստի Միհրդատը և Տիգրան II-ը արագ համաձայնության եկան միմյանց հետ: Բնականաբար, Փոքր Հայքի հարցը մղվեց հետին պլան:

Ք.ա. 94 թ. Արտաշատ ժամանեցին պոնտական բանագնացները: Կնքվեց ***հայ-պոնտական պայմանագիր,*** որի համաձայն՝

1. Հայաստանը գործողությունների ազատություն էր ստանում հյուսիսում, հարավում և արևելքում, իսկ Պոնտոսը՝ արևմուտքում:
2. Կողմերը միացյալ ուժերով հարձակվելու էին Կապադովկիայի վրա, որի

ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ


ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ
Մեծ Հայքի սահմանները
Տիգրան Մեծի տերությունը
Տիգրան Մեծի դաշնակից լինելու, որոնք դրվեցին Մեծ տոհմական պատերազմի հանձնման
Դեպ պատերազմներ
ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ
Կենտրոն
Հանրագիտարանային
Հերոս բանակներ
Տիգրան Մեծի տիտանի բանակներ
ՄԵԾ ՀԱՅՔ
ՍԵՎ ԾՈՎ
ԿԱՍՊԻԱՅԻ ԾՈՎ
ԱՐԱԼՅԱՆ ԾՈՎ
ՍԱՐԱԿԵՆՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՄԱՍԻՍԻ

Տիգրան II Մեծի դրամը

տարածքը պետք է ստանար Պոնտոսը, իսկ շարժական գույքն ու բնակչությունը՝ Հայաստանը:

3. Դաշինքն ամրապնդելու նպատակով Միհրդատն իր դուստր Կլեոպատրային կնության էր տալիս Տիգրան II–ին:

Հավատարիմ հայ–պոնտական դաշինքին՝ ***Ք.ա. 93 թ.*** հայկական զորքերը ներխուժում են ***Կապադովկիա*** և գրավում այն: Տեղի գահընկեց թագավորն ապավինում է Հռոմի օգնությանը: Ք.ա. 92 թ. հռոմեական բանակը նշանավոր զորավար Սուլլայի հրամանատարությամբ մտնում է Կապադովկիա, և հայկական զորքը թողնում է այդ երկրի տարածքը: Սակայն Տիգրանն այստեղ ձեռք է բերում հսկայական ավար և մեծ թվով գերիներ:

Նույն ժամանակներին է վերաբերում նաև հյուսիսային և հյուսիսարևելյան հարևան երկրների՝ Վիրքի և Աղվանքի հպատակեցումը: Տիգրանը հեռատեսորեն երկու երկրների թագավորներին էլ թողնում է գահին՝ ստիպելով նրանց ընդունել իր գերիշխանությունը:

Հայ–պարթևական պատերազմը: Տիգրան II–ի աննախընթաց հաջողություններն ու ռազմական ծրագրերը, հայ–պոնտական դաշինքը ստիպում են Հռոմին մերձեցման եզրեր փնտրել Պարթևստանի հետ: Ք.ա. 92 թ. սկսվում են հռոմեա–պարթևական բանակցություններ, որոնք ավարտվում են Հայաստանի դեմ ուղղված պայմանագրի կնքմամբ: Հռոմի և Պարթևստանի միջև սահմանային գետ է ճանաչվում Եփրատը:

Ք.ա. 88 թ. մահացավ Պարթևստանի Միհրդատ II թագավորը, և գահ բարձրացավ Գոդերզ II–ը: Հաջորդ տարի հայկական բանակը ներխուժեց Պարթևստանի

Արցախի Տիգրանակերտի պեղված հատվածներից

դաշնակից Մարաստան, որը գրավվեց առանց դժվարության: Տեղի Միհրդատ թագավորը հավատարմության երդում տվեց հայոց թագավորին և փոխարենը հետ ստացավ ոչ միայն թագը, այլև ամուսնացավ Տիգրան II-ի դստեր հետ:

Շարժվելով հարավ-արևելք՝ հայկական բանակը գլխովին ջախջախեց պարթևների զորքը, գրավեց թագավորանիստ Էկբատանը: Գոդերձ II-ը ստիպված էր հաշտություն խնդրել, որը կնքվեց նույն՝ Ք.ա. 87 թվականին: Այս պայմանագրի համաձայն՝

1. Պարթևստանը վերադարձնում էր Հայաստանից խլված 70 հովիտները:
2. Հօգուտ Հայաստանի՝ պարթևները հրաժարվում էին Մարաստանից և Հյուսիսային Միջագետքից:
3. Պարթևների արքան կորցնում էր «արքայից արքա» տիտղոսը, որն այսուհետև կրելու էին Տիգրանն ու նրա հաջորդները:

Այս պայմանագրով պարթևները փաստորեն ճանաչում էին Հայաստանի գերիշխանությունը: Այնուհետև Տիգրանը Հայկական թագավորությանն է միացնում պայմանագրով իրեն անցած Ադիաբենեն, Միգդոնիան և Օսրոյենեն:

Ասորիքի գրավումը: Նշված իրադարձությունների ժամանակ երբեմնի հզոր Սելևկյան թագավորությունն ապրում էր խոր ճգնաժամ: Չկարողանալով հաղթահարել այդ ճգնաժամը՝ երկրի ավագանին ելքը տեսնում էր արտաքին որևէ հզոր տիրակալի իշխանությունն ընդունելու մեջ: Հնարավոր թեկնածուներն էին Եգիպտոսի Պտղոմեոս IX, Պոնտոսի Միհրդատ VI Եվպատոր և Հայոց Տիգրան II թագավորները:

Այն բանից հետո, երբ Տիգրանը գրավեց Հյուսիսային Միջագետքը, Հայկական տերությունն ընդհուպ սահմանակցեց Սելևկյան պետությանը: Դժվար չէր կռահել Տիգրանի հաջորդ քայլը: Սելևկյան ավագանին ևս դա շատ լավ էր հասկանում և, բնականաբար, որոշում ընդունեց Տիգրանին հրավիրել՝ բազմելու սելևկյան գահին: Տիգրանի առավելությունն այլ թեկնածուներից, ըստ պատմիչի խոսքերի, «ռազմական հզոր ուժ ունենալու մեջ» էր:

Ք. ա. 84 թ. հայկական բանակներն առանց դիմադրության մտան ***Ասորիք***: Երկրի մայրաքաղաք ***Անտիոքը*** լայնորեն բացեց իր դարպասները հայոց արքայի առջև: Տիգրանը բազմեց Սելևկյանների գահին ու այստեղ խաղաղությամբ իշխեց *17 տարի*: Հայկական բանակը միաժամանակ գրավեց նաև ***Կոմմագենեն, Դաշտային Կիլիկիան*** և ***Փյունիկիան***: Մեծ Հայքի գերիշխանությունն ընդունեցին նաև հարևան ***Հրեաստանը,*** Կարմիր ծովի ափին ապրող ***արաբական ցեղերը,*** արաբական ***Նաբաթեա*** թագավորությունը և մի քանի այլ երկրներ ու ժողովուրդներ:

Հայկական բանակը *Ք.ա. 71 թ.* բավականին դժվարությամբ կարողացավ գրավել Միջերկրական ծովի ափին գտնվող, Եգիպտոսին սահմանակից ***Պտղոմայիս*** քաղաքը: Այստեղ գերի վերցվեց Սելևկյան Սելենե թագուհին, որը հետագայում մահապատժի ենթարկվեց:

Այսպիսով՝ Հայաստանը դուրս եկավ և ամրապնդվեց Միջերկրական ծովի արևելյան ափերին, որը զարգացման լայն հեռանկարներ էր բացում: Մյուս կողմից Հայկական տերության սահմանները հասան Եգիպտոս, որը նույնպես հայտնվեց Տիգրան II-ի հետաքրքրությունների կիզակետում: Դրա ապացույցն է այն, որ Պտղոմեոս XII-ը Եգիպտոսում գահ բարձրացավ Տիգրան II-ի օժանդակությամբ:

Տերության տարածքը, բնույթը, բնակչությունը: Տիգրան Մեծի նվաճումների հետևանքով Առաջավոր Ասիայի քաղաքական քարտեզը փոխվեց: Նախորդ գերտերությունները՝ Սելևկյան Ասորիքն ու Պարթևստանը, իրենց դիրքերն ու տարածաշրջանում խաղացած դերը զիջեցին Հայկական տերությանը: Վերջինս տարածվում էր Եգիպտոսից և Կարմիր ծովի ափերից մինչև Կովկասյան Մեծ լեռները, Միջերկրական ծովից մինչև Կասպից ծով:

Հայկական տերությունը բազմազգ երկիր էր: Ինչպես հույն պատմիչն է հավաս-

տում Տիգրան II–ի տերության մեջ խոսում էին 15–ից ավելի լեզուներով: Այն կազմված էր ***երեք կարգի*** հատվածներից: ***Առաջինը*** բուն հայկական հողերն էին (Մեծ Հայք, Կոմմագենե)՝ շուրջ 360 հազ. քառ. կմ տարածքով: ***Երկրորդը*** հպատակ թագավորություններն էին՝ Վիրք, Աղվանք, Մարաստան, Ադիաբենե, Օսրոյենե, Պալմիրա, Փյունիկիա, Ասորիք, Կիլիկիա՝ շուրջ 400 հազ. քառ. կմ տարածքով: ***Երրորդը*** Հայաստանի քաղաքական ազդեցության ոլորտում գտնվող երկրներն էին՝ Պարթևստան, Նաբաթեա, Հրեաստան, Ամուդարյայի ստորին ավազանի սկյութական ցեղերը, Պարսից ծոցի և Կարմիր ծովի ափերին բնակվող արաբները՝ շուրջ 2 մլն քառ. կմ տարածքով:

Այսպիսով՝ Տիգրան II–ը դարձավ Առաջավոր Ասիայի մեծագույն մասի տիրակալը: ***Հայոց տերության տարածքը, ենթակա երկրներով հանդերձ, կազմում էր շուրջ 3 մլն քառ. կմ, որը գերազանցում էր Մեծ Հայքի տարածքը տասն անգամ:***

Հայկական տերությունը հելլենիստական պետություն էր՝ նման Ալեքսանդր Մակեդոնացու և Սելևկյանների տերություններին: Այն զարգացման ամենատարբեր աստիճանների վրա գտնվող երկրների մի ամբողջություն էր: Տերության միջուկը, բնականաբար, կազմում էր Մեծ Հայքը, որտեղ ապրում էր հայ ժողովրդի հիմնական զանգվածը, գտնվում էին տերության քաղաքական ու տնտեսական նշանավոր կենտրոնները:

Տերության տնտեսապես ամենազարգացած շրջանը Ասորիքն էր՝ իր Անտիոք մայրաքաղաքով: Միջազգային տարանցիկ առևտրի կենտրոններ էին Փյունիկիայի քաղաքները: Հարուստ և հռչակավոր էին Դամասկոսը, Հալեպը, ինչպես նաև Կիլիկիայի Տարսոն, Ադանա և այլ քաղաքներ: Տիգրան II–ն Ասորիքի թագավորական իշխանությունը կենտրոնացրեց իր ձեռքում: Այդ երկիրը կառավարվում էր հատուկ փոխարքայի կողմից, որի նստավայրը Անտիոքն էր: Այստեղ փոխարքա–կառավարիչ նշանակվեց Տիգրանի մերձավորագույն զինակիցներից ***Բագարատը:*** Տիգրանի կրտսեր եղբայր ***Գուրասը*** նշանակվեց Հյուսիսային Միջագետքի փոխարքա, որի նստավայրը Մծբին քաղաքն էր: Այս երկրամասը երկրագործության և արհեստագործության նշանավոր կենտրոններից էր և լիովին բավարարում էր տերության հացահատիկի պահանջարկը:

Հպատակ կամ ենթակա երկրները պարտավոր էին հարկ վճարել և զորք տրամադրել:

Հսկայական տերության ծայրամասերը կենտրոնի հետ կապելու համար Տիգրան II–ը զարկ է տվել ճանապարհաշինությանը, որի շնորհիվ ստեղծվել է կենտրոնական ամուր հաղորդակցական կապ: Նա կառուցել է ***«Արքունի պողոտան»***, որ միմյանց հետ կապում էր տերության երեք մայրաքաղաքները՝ ***Արտաշատը, Տիգրանակերտը և Անտիոքը:***

Տիգրանակերտի կառուցումը: Տիգրան Մեծի գործունեությունը նշանավորվել է նաև աշխույժ քաղաքաշինությամբ: Քաղաքները նպաստելու էին արհեստների ու առևտրի զարգացմանը, արմատավորելու էին հելլենիստական մշակույթը, որն էլ իր հերթին գաղափարական զենք էր դառնալու հայկական հասարակության առաջընթացի համար:

Տիգրանի նվաճումներից և Հայկական տերության կազմավորումից հետո Արտաշատն այլևս չէր կարող կատարել մայրաքաղաքի դեր, քանզի մնացել էր տերության ծայր հյուսիսում, իսկ Անտիոքն էլ բուն հայկական տարածքներից դուրս էր և ուներ գերազանցապես օտար բնակչություն: Ահա թե ինչու նոր մայրաքաղաքի կառուցումը դարձել էր օրակարգի հարց: ***Տիգրանակերտը կառուցվել է Ք. ա. 80–70–ական*** թվականներին ***Աղձնիք նահանգում՝*** Արևմտյան Տիգրիսի ձախակողմյան վտակներից մեկի ափին: ***«Նոր մայրաքաղաքը բնակեցնելու համար,***— ինչպես գրում է հույն պատմիչը,— ***Տիգրանն այստեղ հրավիրում է հայերից լավագույններին և ապառնում է բոնագրավել այն ամենը, ինչ իրենց հետ Տիգրանակերտ չէին գալիս»:*** Ահա թե ինչու հա-

յոց մեծամեծերը, ցանկանալով հաճոյանալ արքային, միմյանց հետ մրցում էին քաղաքի շենության ու ընդարձակման համար:

Մայրաքաղաքի բնակչությունը համալրելու համար Տիգրան Մեծը նվաճված երկրների քաղաքային բնակչության մի մասը բռնագաղթեցրել է Հայաստան: Միայն Կապադովկիայից Հայաստան է տեղափոխվել 300 հազար մարդ, 100 հազար էլ՝ Կիլիկիայի 12 քաղաքներից: Հայաստան տեղափոխված այդ ամբողջ բնակչությունը բնակեցվել է Տիգրանակերտում, ինչպես նաև Արտաշատ, Երվանդաշատ, Վան, Արմավիր և այլ քաղաքներում: Կարճ ժամանակամիջոցում կառուցվում է մեծ ու գեղեցիկ մի քաղաք, որն ուներ շուրջ 120 հազար բնակչություն: Պլուտարքոսը վկայում է, որ Տիգրանակերտը մեծ և շքեղ քաղաք էր, որն ուներ արքունի պալատ, դիվանատուն և թատրոն, «այն լի էր գանձերով և աստվածներին նվիրաբերված թանկարժեք ընծաներով»: Մայրաքաղաքից քիչ հեռավորության վրա կառուցվել է ամրոց, որն ունեցել է Տիգրանակերտի մատույցները պաշտպանելու նշանակություն:

Կարճ ժամանակամիջոցում Տիգրանակերտը դարձել է Մերձավոր Արևելքի արհեստագործության, առևտրի ու մշակույթի մարդաշատ կենտրոններից մեկը:

Տիգրանն իր անունով քաղաքներ է հիմնադրում նաև այլ վայրերում, այդ թվում՝ Արցախում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ովքե՞ր են հաջորդել Արտաշես I-ին: Երբ է թագավորել Տիգրան II-ը: Ի՞նչ նշանակություն ունեցավ Ծոփքի գրավումը:
2. Որո՞նք էին Տիգրան II-ի և Միհրդատ Պոնտացու մերձեցման պատճառները: Ներկայացրեք հայ-պոնտական պայմանագրի բովանդակությունը:
3. Ի՞նչ ավարտ ունեցավ Պարթևստանի դեմ Տիգրան II-ի պատերազմը:
4. Հիմնավորեք Տիգրանի առավելությունները սելևկյան զահի մյուս թեկնածուների նկատմամբ: Երբ Տիգրանը տիրացավ սելևկյան զահին:
5. Ներկայացրեք Հայկական տերության տարածքը, բնույթը, կառուցվածքը: Երբ և ինչո՞ւ Տիգրանը ձեռնամուխ եղավ նոր մայրաքաղաքի կառուցմանը: Նկարագրեք մայրաքաղաք Տիգրանակերտը:

Մայրաքաղաք Տիգրանակերտի աշտարակներից

§ 3. ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅՈՒՄ

Հռոմեա-պոնտական հակամարտությունը: Ք.ա. I դարի սկզբներին Հռոմեական Հանրապետությունը հզորացել էր և ձգտում էր համաշխարհային տիրապետության: Հռոմի անմիջական ծրագրերի մեջ էր մտնում Փոքր Ասիայի գավթումը: Այստեղ գերիշխանության էր ձգտում նաև Միհրդատ VI Եվպատորը: Կողմերի միջև բախումը դարձել էր անխուսափելի:

Հռոմեա-պոնտական պատերազմների ընթացքում (Ք. ա. 89-71 թթ.) Տիգրան II-ը զբաղված էր սեփական ռազմավարական ծրագրերի իրականացմամբ: Սակայն Հռոմը երբեք չէր կարող հաշտվել այն իրողության հետ, որ Հայկական տերությունը դուրս էր եկել Միջերկրական ծով և ընդհուպ մոտեցել Եգիպտոսի սահմաններին: Բացի այդ, հզոր Հայաստանի գոյությունն իսկ Հռոմի առջև փակում էր դեպի Արևելք տանող բոլոր ճանապարհները: Ուստի հասկանալի է, որ Հռոմը վաղ թե ուշ բախվելու էր Արևելքին տիրող Հայկական տերության հետ:

Ահա թե ինչու Հռոմը սկսում է լրջորեն նախապատրաստվել Հայաստանի դեմ պատերազմի: Հայ-հռոմեական ռազմական բախմանը նպաստեց նաև պարտություն կրած Միհրդատ Պոնտացու փախուստը Հայաստան: Տիգրանը քաղաքական ապաստան շնորհեց բոլորի կողմից լքված Միհրդատ Պոնտացուն՝ դրանով ի ցույց դնելով իր բարձր բարոյականությունն ու արժանապատվությունը և, միաժամանակ, իր արքայական հպարտությունն ու արիությունը:

Հռոմեական զորավար ***Լուկիոս Լուկուլլոսը***, հետապնդելով Միհրդատին, մոտեցավ Հայաստանի սահմաններին և կանգ առավ: Նա չհամարձակվեց անցնել Եփրատը, որ բացահայտ պատերազմ կնշանակեր, այլ Տիգրանի մոտ դեսպան ուղարկեց՝ պահանջելով «Հռոմեական ժողովրդի ոխերիմ թշնամի Միհրդատին»: Տիգրանը կտրականապես մերժեց հռոմեացիների պահանջը՝ ասելով. ***«Ես Միհրդատին չեմ հանձնի, իսկ եթե հռոմեացիները պատերազմ սկսեն, ապա... հակահարված կրան նրանց»:*** Հասկանալի է, որ եթե Տիգրանը հանձներ Միհրդատին, միևնույնն է, չէր խուսափի պատերազմից, քանի որ այդ հարցը սոսկ առիթ էր և ոչ թե պատճառ:

Հայ-հռոմեական պատերազմի առաջին փուլը: ***Ք.ա. 69 թ. գարնանը*** հռոմեական բանակն անցավ սահմանային Եփրատ գետը և մտավ Հայաստան: Սկսվեց ***հայ-հռոմեական պատերազմը:*** Պատերազմն ընթացավ երկու փուլով՝ 1) Ք.ա. 69-67 թթ. և 2) Ք.ա. 66 թ.:

Լուկուլլոսը մշակել էր կայծակնային պատերազմի ծրագիր, որի համաձայն՝ հանկարծակի հարձակմամբ շեշտակի հարվածներ հասցնելով՝ պետք է պարտության մատներ հայկական բանակին: Նա առանց որևէ դժվարության ռազմակալեց Ծոփքը և սրընթաց շարժվեց Աղձնիք՝ գրավելու ***Տիգրանակերտը:*** Սակայն Տիգրանակերտի կայազորը, զորավար Մանկայոսի հրամանատարությամբ հմտորեն պաշտպանելով քաղաքը, հետ շպրտեց հռոմեական գրոհները: Լուկուլլոսը ստիպված էր քաղաքը պաշարել: Անցնում էին ամիսները, իսկ մայրաքաղաքը շարունակում էր դիմադրել: Կայծակնային պատերազմի՝ Լուկուլլոսի ծրագիրը տապալվեց:

Հռոմեական բանակի ներխուժման պահին Տիգրանն Արտաշատում էր: Հայկական զորքերի գլխավոր ուժերը, որոնք ճամբարել էին Պաղեստինում, մինչ կհասնեին Հայաստան, Տիգրանը Լուկուլլոսի դեմ ուղարկեց ***Մեհրուժան*** զորավարի՝ 3 հազար հեծյալներից բաղկացած զորաջոկատը: Հռոմեական գերակշիռ ուժերի հետ ընդհարման ժամանակ երկարատև ռազմերթից հոգնած հեծելազորը պարտվեց, իսկ Մեհրուժանը զոհվեց:

Միայն սեպտեմբերի կեսերին Տիգրանի գլխավորած հայկական բանակը մոտեցավ պաշարված Տիգրանակերտին: Այստեղ էին

արքայի ընտանիքը, մերձավորները, գանձերը: Հայկական հրամանատարությունը ծրագրեց և իրականացրեց մի հանդուգն հարձակում, որի ընթացքում մի զորամաս գիշերային հանկարծակի գրոհով ներխուժեց քաղաք և այստեղից դուրս բերեց արքայի ընտանիքն ու գանձերի մի մասը:

Կողմերը նախապատրաստվում են վճռական ճակատամարտի: Հայկական զինված ուժերի թվաքանակը մոտ 70–80 հազար էր: Բուն հռոմեական բանակն ունեցել է 22 հազար զինվոր և դրանից ավելի դաշնակցային զորամասեր, միասին՝ շուրջ 50 հազար զինվոր:

Ճակատամարտը սկսվեց ***Ք.ա. 69 թ. հոկտեմբերի 6-ի*** վաղ առավոտյան և նույն օրն էլ ավարտվեց: Հայկական զինված ուժերը երկարատև ռազմերթից հետո հանգստի կարիք ունեին: Լուկուլլոսը նրանց զրկեց այդ հնարավորությունից: Ենթարկվելով երկուստեք հարձակման (թիկունքից և ճակատից) և տալով զգալի կորուստներ՝ հայկական բանակը ստիպված էր նահանջել: Քիչ չէին նաև հռոմեացիների կորուստները:

Ճակատամարտի ելքը վճռեց նաև Տիգրանակերտի ճակատագիրը: Քաղաքը պաշտպանող օտար վարձկանները, կաշառվելով Լուկուլլոսի կողմից, հոկտեմբերի վերջերին դարպասները բացեցին հռոմեացիների առջև: Փաստորեն քաղաքը գրավվեց ստոր դավաճանության արդյունքում: Նորակառույց քաղաքը բարբարոսաբար ավերվեց ու թալանվեց:

Արածանիի ճակատամարտը: Տիգրանը չվիատվեց, չկորցրեց հավատը հաղթանակի նկատմամբ: Նա ձեռնամուխ եղավ բանակը կարգի բերելու, նոր զորամասեր հավաքագրելու և վարժեցնելու գործին: Դեռ ավելին՝ հայկական 10-հազարանոց մի զորամասով նա Միհրդատին ուղարկեց Պոնտոս՝ այստեղ տեղակայված հռոմեական կայազորերի դեմ մարտնչելու և ռազմական գործողությունների ճակատն ընդարձակելու հեռագնա մտադրությամբ, որը նրան լիովին հաջողվեց: Հայաստանի տնտեսական կարողություններն ու մարդկային պաշարները հնարավոր դարձրին ընդամենը մի քանի ամսվա ընթացքում միանգամայն նոր բանակի ստեղծումը, որն իր մարտարվեստով շուտով գերազանցեց հռոմեացիներին:

Իսկ Լուկուլլոսը Տիգրանակերտը գրավելուց հետո չհամարձակվեց շարունակել ռազմական գործողությունները և ծանր կորուստներ կրած հռոմեական լեգեոնները տեղափոխեց հարավ՝ Կորդուքի տաք շրջաններում ձմեռելու և ուժերը վերականգնելու նպատակով: Հարաբերական այս դադարից օգտվեց հայկական կողմը:

Ք. ա. 68 թ. գարնանը Լուկուլլոսի բանակը դուրս եկավ Կորդուքից և անցնելով Հայկական Տավրոսը՝ Արածանի գետի ափերով շարժվեց դեպի Արտաշատ: Խուսափելով գլխավոր ճակատամարտից՝ Տիգրան II-ը, որքան հնարավոր է, Լուկուլլոսին ներքաշում էր երկրի խորքերը՝ կտրելով թիկունքից և մատակարարումներից: Միաժամանակ հանկարծակի, այդ թվում՝ գիշերային հանդուգն հարձակումներով հայերը ջլատում էին հակառակորդի ուժերը՝ նրանց պատճառելով նշանակալի կորուստներ: Տիգրանի այս մարտավարությունը լիովին արդարացրեց իրեն: Հռոմեական բանակը կորցրել էր մարտունակությունն ու կարգապահությունը:

Սեպտեմբերի 22-ին հռոմեական բանակը մոտեցավ ***Արածանիի գետանցին:*** Առջևում Հայկական Պար լեռնաշղթան էր, իսկ նրանից քիչ այն կողմ Արտաշատն էր: Այս վճռական պահին էլ հայկական բանակն անցավ շեշտակի հարձակման: Արածանիի ճակատամարտում հռոմեական բանակը լիակատար պարտություն կրեց: Հույն պատմիչ ***Դիոն Կասիոսը*** վկայում է, որ «*հայերը, ներգահարելով հռոմեացիներին, շատերին իսկույն սպանեցին, իսկ շատ շատերին էլ վիրավորեցին:*

Այնժամ Լուկուլլոսը, քանզի շատերը վիրավորվել էին, և մի մասն էլ մահանում էր, իսկ հաշմվածները հեծեծում էին, և միաժամանակ պարենամթերքը պակասում էր, նահանջեց»: Արածանիից հետո Լուկուլլոսը ստիպված էր թողնել Հայաստանի սահմանները, Կորդուքն ու Հյուսիսային Միջա-

գետքը: Իսկ Միհրդատ Եվպատորը սկսել էր Պոնտոսի ազատագրումը:

Լուկուլլոսի պարտության հետևանքով վերականգնվեց Հայկական տերության հեղինակությունը: Արդեն Ք.ա. 67 թ. կեսերին հայկական բանակները ազատագրեցին Ծոփքը, ներխուժեցին Կապադովկիա: ***Պոնտոսի Զեղա*** քաղաքի մոտ հայ-պոնտական ուժերը փայլուն հաղթանակ տարան հռոմեացիների նկատմամբ: Հայկական գերիշխանությունը վերականգնվեց Ասորիքում և Միջերկրական ծովի ափերին:

Այսպիսով՝ Հռոմի առաջին գրոհը դեպի Հայաստան լիովին ձախողվեց, իսկ Լուկուլլոսը պաշտոնանկ արվեց: Արևելքում հռոմեական զորքերի նոր գլխավոր հրամանատար նշանակվեց Գնեոս Պոմպեոսը:

Հայ-հռոմեական պատերազմի երկրորդ փուլը: Պոմպեոսը Արևելք ժամանեց Ք.ա. 66 թ. գարնանը: Նա պարթևներին առաջարկեց ընդդեմ Հայաստանի կնքել ռազմական համագործակցության պայմանագիր՝ խոստանալով Տիգրանի պարտության դեպքում նրանց վերադարձնել Մարաստանը, Հյուսիսային Միջագետքն ու Կորդուքը: Պարթևները համաձայնեցին: Այնուհետև Պոմպեոսը ռազմական գործողություններ սկսեց Միհրդատ Պոնտացու դեմ, պարտության մատնեց նրան և ռազմակալեց Պոնտոսը: Միհրդատ Եվպատորը նահանջեց իր տերության հյուսիսային երկրամասերը, որտեղ էլ Ք.ա. 63 թ. ինքնասպանությամբ վերջ տվեց կյանքին:

Զրկված լինելով իր գլխավոր դաշնակցից՝ հայոց թագավորը հայտնվեց Պարթևստանի և Հռոմի ռազմական սպառնալիքի առջև: Նման պայմաններում պետք էր գործել չափազանց զգույշ և ճշգրիտ: Հավատարիմ Ք.ա. 66 թ. հռոմեա-պարթևական համաձայնագրի ոգուն՝ պարթևների թագավոր Հրահատ III-ը մտավ Հայաստան և պաշարեց Արտաշատը: Ստեղծված իրադրությունում Տիգրան II-ը ստիպված եղավ հայկական զորքը դուրս բերել Կապադովկիայից և վերադառնալ Հայաստան: Տիգրանն արագ ռազմերթով հակահարված տվեց պարթևներին, որոնք ստիպված էին նահանջել իրենց երկիրը: Հենց այս պահին էլ Հայաստան ներխուժեց Պոմպեոսի հռոմեական բանակը:

Հայոց ավագանու մեջ տարաձայնություններ էին խմորվում Հայաստանի հետագա քայլերի շուրջ: Վտանգված էր հայկական պետականության գոյությունը: Թագաժառանգ Տիգրան Կրտսերը նախ գնաց պարթևների թագավոր Հրահատ III-ի մոտ, որն ի դեմս նրա գտավ դաշնակից և իր դստերը կնության տվեց նրան: Սակայն, անհաջողության մատնվելով, Տիգրան Կրտսերը ներկայացավ Պոմպեոսին և առաջարկեց իր ծառայությունները՝ հայ-հռոմեական հաշտության բանակցություններ սկսելու համար:

Նման ռազմաքաղաքական բարդ իրավիճակում անհրաժեշտ էր ոչ կենսական խնդիրներում գնալ զիջումների՝ գլխավորը՝ պետական անկախությունը պահպանելու համար:

Արտաշատի պայմանագիրը: ***Ք.ա. 66 թ. սեպտեմբերին*** Պոմպեոսի զորքը մոտեցավ Արտաշատին և բանակեց քաղաքից ոչ հեռու: Անմիջապես սկսվեցին հայ-հռոմեական բանակցությունները: Նախապես կայացած պայմանավորվածության համաձայն՝ Տիգրան II-ը ժամանեց Պոմպեոսի ճամբար, որտեղ արժանացավ պատշաճ ու հարգալից ընդունելության, ինչպես գրում է Պլուտարքոսը. ***«Հռոմեացիները նրան ողջունեցին արքայական»:*** Ըստ հաշտության պայմանագրի՝

1. Հօգուտ Հռոմեական Հանրապետության՝ Մեծ Հայքը հրաժարվում էր Ասորիքից, Փյունիկիայից, Պաղեստինից և Կիլիկիայից, այսինքն՝ Միջերկրական ծովի առափնյա երկրներից.
2. Հայկական պետությունը պահպանում էր իր նվաճումները Հյուսիսային Միջագետքում.
3. Հայաստանից անջատվելու էին Ծոփքն ու Կորդուքը, այստեղ թագավոր էր հաստատվում Տիգրան Կրտսերը՝ պայմանով, որ Տիգրան II-ի մահից հետո դրանք միավորվելու էին Մեծ

Հայքի հետ որպես մեկ պետություն՝ Տիգրան Կրտսերի գահակալությամբ.
4. Մեծ Հայքը Հռոմին պետք է վճարեր 6 հազար տաղանդ ոսկեմատուցանք.
5. Հայաստանը հայտարարվում էր «Հռոմեական ժողովրդի բարեկամ և դաշնակից»:

Հատկանշական է, որ ոսկեմատուցանքի գումարը վճարվելու էր Ծովքի արքայական գանձարաններից, որոնք իրավականորեն արդեն պատկանում էին Տիգրան Կրտսերին: Հասկանալով իր վիճակի անհեթեթությունը՝ Տիգրան Կրտսերն ընդվզեց Պոմպեոսի դեմ և վիրավորեց նրա արժանապատվությունը: Ի պատասխան այդ հանդուգն ելույթի՝ Պոմպեոսի կարգադրությամբ Տիգրան Կրտսերը ձերբակալվեց և ընտանիքի հետ գերեվարվեց Հռոմ:

Հռոմի դաշնակից պարթևները չստացան Պոմպեոսի խոստացած Հյուսիսային Միջագետքն ու Կորդուքը: Ավելին՝ ***Պոմպեոսը ճանաչեց Տիգրան Մեծի «արքայից արքա» տիտղոսը,*** որ, օգտվելով Հայաստանի ժամանակավոր դժվարություններից, պարթևներն իրենց էին վերադարձրել: Արևելքում ուժերի հավասարակշռությունը պահանջում էր պաշտպանել Տիգրան II–ին:

Կնքված պայմանագիրը դիվանագիտական հաջողություն էր Հայաստանի համար: Ամենակարևորը՝ Հայաստանը պահպանում էր իր տարածքային ամբողջականությունը, պետական անկախությունը՝ հայ ժողովրդի հարատևման այդ կարևորագույն երաշխիքը:

Տիգրան Մեծը՝ սերունդների հիշողության մեջ: Տիգրան II–ի կյանքի վերջին տասը տարիները Հայաստանի համար խաղաղության ու տնտեսական բարգավաճման տարիներ էին:

Տիգրան Մեծը հայերի մեջ հերոսացվել է և ժողովրդական զրույցներում վերածվել դյուցազնական կերպարի: Նրա կյանքի ու գործի հիանալի նկարագրությունը փոխանցվել է սերնդից սերունդ, գովերգվել են նրա մարդկային ու արքայական առաքինությունները: Տիգրան Մեծից ավելի քան 500 տարի անց Մովսես Խորենացին նրան դնում է հայերի ամենանշանավոր նախնիների կողքին: Անգամ հռոմեացի պատմիչներն էին ստիպված խոստովանել, որ հանձին Տիգրանի՝ Հռոմը գործ է ունեցել ***«վսեմ բաջությամբ օժտված հակառակորդի հետ»:*** Իսկ մեկ այլ պատմիչ էլ նրան անվանել է ***«մեծագույն թագավոր, որ տիրակալում էր մեծ փառքով»:***

Հետաքրքրական է, որ եվրոպական օպերային երաժշտության պատմությունն արձանագրել է Տիգրան Մեծին նվիրված ավելի քան 20 օպերա՝ իտալերեն, իսպաներեն, գերմաներեն, ռուսերեն:

Հայ անվանի պատմաբան Նիկողայոս Ադոնցը դիպուկ է բնութագրել Տիգրան II–ին. *«Տիգրան Մեծն իր արժանավոր տեղն է զբաղեցնում Արևելքում երբևէ իշխած տիրակալների շարքում: Նա արժանացել է «Մեծ» տիտղոսին՝ պատվավոր մի կոչման, որը պատմությունը հազվադեպ է շնորհում իր ընտրյալ դերակատարներին»:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին հայ–հռոմեական պատերազմի պատճառները և առիթը:
2. Ի՞նչ մարտավարություն ընտրեցին կողմերը Տիգրանակերտի ճակատամարտից հետո: Ներկայացրեք Արածանիի ճակատամարտը: Ինչպե՞ս ավարտվեց հայ–հռոմեական պատերազմի առաջին փուլը:
3. Ո՞վ փոխարինեց Լուկուլլոսին, և ի՞նչ քայլեր նա ձեռնարկեց: Ի՞նչ ավարտ ունեցավ Միհրդատ Եվպատորի պայքարը: Ներքաղաքական ի՞նչ իրավիճակ էր Հայաստանում: Ինչո՞ւ Տիգրան Մեծը զիջումների գնաց:
4. Երբ և ի՞նչ պայմաններով կնքվեց Արտաշատի պայմանագիրը: Ինչո՞ւ Հռոմը պաշտպանեց Տիգրան Մեծին:

§ 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՅՔԱՐՆ ԸՆԴԴԵՄ ՀՌՈՄԻ ԾԱՎԱԼԱՊԱՇՏ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ: ԱՐՏԱՎԱԶԴ II

Արտավազդ II-ի գահակալությունը: Արտաշատի պայմանագրի կնքումից հետո Տիգրան II Մեծը գահակալեց ևս տասը տարի: Տիգրան Մեծը թագաժառանգ Արտավազդին թողեց մի ընդարձակածավալ երկիր՝ զարգացած տնտեսությամբ ու հզոր բանակով: Տիգրան Մեծի կյանքի վերջին շրջանում Արտավազդը եղել է նրա գահակիցը, որն օգնել է պատկառելի տարիք ունեցող հորը կառավարելու երկիրը: Թագաժառանգը փայլուն կրթություն ստացած, բազմակողմանի զարգացած, հունարենին գիտակ մտավորական անձնավորություն էր, ճկուն դիվանագետ, իրատես քաղաքագետ ու ռազմական գործիչ:

Արտավազդ II-ը (Ք.ա. 55-34 թթ.) գահ բարձրացավ միջազգային չափազանց բարդ իրադրության պայմաններում: Նրան մեծ հմտություն էր անհրաժեշտ տարածաշրջանի երկու տերությունների՝ Հռոմեական Հանրապետության և Պարթևական թագավորության միջև մրցակցության պայմաններում կողմնորոշվելու համար: Մեծ Հայքի դիրքորոշումից էր կախված, թե որ տերությունը տիրապետող դիրք կստանար տարածաշրջանում: Ստեղծված ռազմաքաղաքական իրադրության պայմաններում Արտավազդ II-ն ավելի հաճախ հակվում էր դեպի Պարթևստանը՝ ձգտելով պահպանել Հայաստանի՝ տարածաշրջանի հզոր պետության կարգավիճակը:

Հռոմեա-պարթևական պատերազմը և Հայաստանը: Հռոմում սկսված ներքաղաքական պայքարն ավարտվեց Ք.ա. 60 թ.: Հանրապետության երեք ականավոր գործիչներ՝ Գնեոս Պոմպեոսը, Հուլիոս Կեսարն ու Մարկոս Կրասոսը, ստեղծեցին մի դաշինք, որը հայտնի է ***Առաջին եռապետություն*** անունով: Եռապետներից Կրասոսը ստացավ Արևելքը և Պարթևստանի դեմ արշավելու հրամանատարությունը:

Ք.ա. 54 թ. գարնանը հռոմեական 50-հազարանոց բանակը ***Կրասոսի*** հրամանատարությամբ ժամանեց ***Ասորիք:*** Նա ծրագրել էր ջախջախել պարթևներին և հասնել Հնդկաստան: Այդ պատերազմում Կրասոսը որոշակի հույսեր էր կապում Հայաստանի հետ:

Արտավազդ II-ի հատած դրամը

Արտավազդի և Կրասոսի հանդիպումը տեղի ունեցավ Ք.ա. 54 թ. գարնանն Ասորիքում: Արտավազդը Կրասոսին խոստացավ տրամադրել 16-հազարանոց այրուձի և 24-հազարանոց հետևակ (ընդամենը՝ 40 հազար զինվոր): Սա պատկառելի ռազմական օգնություն էր: Միաժամանակ հայոց արքան առաջարկում էր պարթևների դեմ ռազմերթը կազմակերպել ոչ թե Ասորիքի անապատներով, այլ Հայաստանի հարավային տարածքով: Նման դեպքում լեռնային տարածքը կզրկեր պարթևական հեծելազորին իր առավելությունից: Սակայն Կրասոսը կտրականապես մերժեց Արտավազդի այս խելամիտ առաջարկությունը և ընտրեց ռազմերթի թեև կարճ, սակայն վտանգավոր ուղին:

Արտավազդի և Կրասոսի ռազմական ուժերի միավորումը պարթևներին հաջողության հեռանկարի որևէ հնարավորություն չէր տալիս: Անհրաժեշտ էր ամեն կերպ թույլ չտալ նման միավորում: Ուստի պարթևների թագավոր Օրոդես II-ի գլխավորած ուժերը հարձակվեցին Հայաստանի սահմանամերձ տարածքների վրա:

Արտավազդն այլևս չէր կարող օգնական ուժեր ուղարկել Կրասոսին, ինչի մասին անհապաղ տեղեկացրեց հռոմեացիներին: Կրասոսը դա ընկալեց որպես դավաճանություն և հոխորտանքով հայտարարեց, թե պարթևներին ջախջախելուց հետո ինքն անպայման պատժելու է Արտավազդին: Նման վերաբերմունքի պայմաններում, բնականաբար, Արտավազդ II–ը պետք է փոխեր իր քաղաքական ուղղվածությունը և դաշինք առաջարկեր Օրոդես II–ին, որն այն ընդունեց սիրահոժար: ***Հայ–պարթևական պայմանագիրը կնքվեց Ք.ա. 54 թ. վերջերին Արտաշատում:*** Դաշինքն ամրապնդվեց հայոց թագավորի քրոջ և պարթևների թագաժառանգ Բակուրի ամուսնությամբ:

Կրասոսը, չփոխելով մարտավարությունը, Ք.ա. 53 թ. գարնանն անցավ Եփրատը և սկսեց իր արշավանքը դեպի Պարթևստան: Չոր, տափաստանային կլիման, անսովոր շոգերն ու հիվանդությունները բարոյալքել էին հռոմեական զինվորներին: Սակայն Կրասոսը համառորեն շարունակում էր առաջխաղացումը:

Ք.ա. 53 թ. մայիսի 6–ին Խառան քաղաքից ոչ հեռու տեղի ունեցած ճակատամարտում պարթև զորավար Սուրենը հանկարծակի ու շեշտակի հարվածով գլխովին ջախջախեց հռոմեական բանակին: Սպանվածների թիվն անցնում էր 20 հազարից, իսկ գերիներինը՝ 10 հազարից: Սպանվեցին Կրասոսն ու իր որդին: Սուրենը Կրասոսի գլուխն ուղարկեց Հայաստան, որտեղ այդ ժամանակ հյուրընկալվել էր Օրոդես II–ը՝ պարթև մեծամեծերի հետ: Խնջույքից հետո դերասանները հանդիսականների ուշադրությանն էին ներկայացնում հույն հեղինակ Էվրիպիդեսի «Բաքոսուհիներ» ողբերգությունը: Դերասան Յասոն Տրալլացին բեմ է դուրս գալիս Կրասոսի կտրված գլխով: Տեսարանը ցնծության աղաղակներով ընդունվում է հանդիսականների կողմից:

Անտոնիոսի արշավանքները: Կրասոսի պարտության հետևանքով Հռոմի դիրքերն Արևելքում հիմնովին սասանվեցին: Օգտագործելով պատեհ առիթը՝ պարթևական զինված ուժերը ***թագաժառանգ Բակուրի*** հրամանատարությամբ անցան լայնածավալ հարձակման և հռոմեացիներին դուրս մղեցին Ասորիքից, Փյունիկիայից, Պաղեստինից, Հրեաստանից և Կիլիկիայից: Պարթևներին օժանդակում էին հայկական զորամասերը՝ ***Վասակ զորավարի*** գլխավորությամբ:

Պարթևների հաջողությունները ստիպեցին Հռոմի քաղաքական շրջաններին հարթել ներքին ճգնաժամը: Ք.ա. 43 թ. կազմակերպվեց ***Երկրորդ եռապետությունը:*** Եռապետերից Անտոնիոսը ստացավ Արևելքը: Դեպքերը սկսեցին զարգանալ ոչ ի նպաստ հայերի: Խզվեց հայ–պարթևական դաշինքը: Սպասվող հռոմեա–պարթևական ռազմական բախման ժամանակ Հայաստանի համար այլևս հնարավոր չէր լինի պահպանել չեզոքություն:

Ի վերջո եկավ պատերազմի պահը: Դեպի Պարթևստան մեծ արշավանքի նախապատրաստություններ տեսնելուց հետո՝ ***Ք.ա. 36 թ., Անտոնիոսն անձամբ ժամանեց Արևելք:*** Նա իր տրամադրության տակ ուներ 100–հազարանոց բանակ և 300 սայլերի վրա բարձեց պաշարողական տեխնիկա: Ամբողջ այս ուժը կենտրոնացվել էր Կարին գավառում, որտեղից էլ սկսվեց արշավանքը: Արտավազդը հռոմեացիներին տրամադրել էր ընդամենը 13–հազարանոց մի զորամաս:

Հայաստանի տարածքով Անտոնիոսը մտավ ***Ատրպատական*** և շարժվեց այդ երկրի մայրաքաղաք ***Փրաասպա:*** Այդ պահին Անտոնիոսը կատարում է ճակատագրական սխալ: Մասնատելով բանակը՝ նա իր հիմնական ուժերը նետում է Փրաասպայի դեմ: Գումակը բավականին հեռավորությունից դանդաղ հետևում էր առաջապահ զորամասերին: Ուստի պահապան զորամասը ոչինչ չկարողացավ անել, երբ պարթևները հանկարծակի գրոհով շրջապատեցին գումակը: Պաշարողական մեքենաները ջարդուփշուր արվեցին ու այրվեցին: Հռոմեացիները միայն Փրաասպայի պարիսպների տակ ունեցան 20 հազար սպանված: Անտոնիոսը

բռնեց հետդարձի ճանապարհը: Ավելի վաղ, հրաժարվելով ռազմական հետագա գործողություններին մասնակցելուց, իր զորամասով Հայաստան էր վերադարձել Արտավազդ II–ը: Հետագայում Անտոնիոսը հայոց արքային է համարել իր բոլոր դժբախտությունների պատճառը:

Ք.ա. 36 թ. աշնանը հսկայական կորուստներով հռոմեական բանակը նահանջեց դեպի Հայաստան: Անընդհատ հարձակումներով պարթևներն ուժասպառ արեցին հակառակորդին: Նահանջի 27–րդ օրը հռոմեացիները վերջապես հասան Արաքսին: Նրանց ընդհանուր կորուստը կազմում էր 44 հազար զինվոր:

Արտավազդ II–ը պատշաճ ու հոգատար վերաբերմունք ցույց տվեց պարտվածներին՝ փրկելով շատերի կյանքը: Թեև Անտոնիոսը ցանկանում էր վրեժխնդիր լինել Արտավազդից, սակայն պահն անպատեհ էր, և նա շտապեց բանակը դուրս բերել Հայաստանից ու մեկնել Եգիպտոս՝ իր կնոջ՝ այնտեղի թագուհի Կլեոպատրայի մոտ: Արդեն Ալեքսանդրիայից Հռոմի Ծերակույտին ուղարկված պաշտոնական զեկուցագրում Անտոնիոսն իր ապաշնորհությունն ու մեղքը թաքցնելու նպատակով ռազմական վիթխարի ծախսերն ու մարդկային ահռելի կորուստները բացատրում էր իբրև թե հայոց թագավորի դավաճանությամբ:

Իր վարկաբեկված հեղինակությունը վերականգնելու նպատակով նա ծրագրում է գրավել և կողոպտել Հայաստանը: Դիմելով խորամանկության՝ նախ փորձում է Արտավազդին ծուղակը գցել: Անտոնիոսը հայոց արքային հրավիրում է Ալեքսանդրիա՝ իբր պարթևների դեմ հաջորդ տարի ձեռնարկելիք արշավանքի ծրագիրը քննարկելու: Արտավազդը մերժում է այդ հրավերը: Այնժամ Անտոնիոսը հատուկ խնամախոսներ է ուղարկում Արտաշատ՝ Արտավազդին հրավիրելով Ալեքսանդրիա՝ հայոց արքայադստեր և իր ու Կլեոպատրայի որդի Ալեքսանդրի ամուսնության հարցը քննարկելու:

Մերժում ստանալով՝ Անտոնիոսը 60–հազարանոց բանակով *Ք.ա. 34 թ. ամ-*

Կլեոպատրա. Եգիպտոսի թագուհի

ռանն արշավում է Հայաստան և ուղղվում դեպի Արտաշատ: Ցանկանալով երկիրը զերծ պահել ավերածություններից ու զոհերից՝ Արտավազդ II–ը որոշում է բանակցել հռոմեական եռապետի հետ: Անշուշտ, դա ազնիվ, ինքնազոհ, սակայն միամիտ քայլ էր: Բանակցությունների ընթացքում Արտավազդն իր ընտանիքի հետ ձերբակալվում է, ապա շղթայակապ ուղարկվում Ալեքսանդրիա: Անտոնիոսի այս տմարդի քայլը դատապարտել են անգամ իրենք՝ հռոմեացիները: Հայաստանում թողնելով հռոմեական կայազոր՝ Անտոնիոսը թալանում է արքունի գանձերը, հսկայական ավարով ու գերիներով վերադառնում Եգիպտոս: Հայոց թագաժառանգ Արտաշեսը հանդուգն հարձակմամբ փորձում է ազատել գերի արքային ու իր հարազատներին, սակայն, ապարդյուն: Պարտություն կրելով՝ Արտաշեսն ապաստան գտավ պարթևների մոտ:

Ալեքսանդրիայում Անտոնիոսը կազմակերպում է հաղթահանդես, որի ընթացքում հայոց արքան ու իր ընտանիքի անդամները, ոսկե շղթաներով շղթայված, անցնում

են քաղաքի փողոցներով: Հռոմեացի զորավարը նրանց հորդորում է ներում հայցել, խոնարհվել Կլեոպատրային և նրան մեծարանքի խոսքեր շռայլել: Սակայն հայոց արքան ու թագուհին, նրանց զավակներն անցնում են հպարտ ու արժանապատիվ, և ինչպես գրում է ժամանակակից հույն պատմիչը. ***«Ցույց են տալիս իրենց ոգու արիությունը»***: Հայերի նման կեցվածքը մեծ տպավորություն է թողել, իսկ զայրացած Կլեոպատրան, չներելով նրանց, կարգադրել է զնդան նետել:

Եռապետեր Անտոնիոսի ու Օկտավիանոսի միջև վճռական ճակատամարտը տեղի է ունենում ***Ք.ա. 31 թ. սեպտեմբերի 2-ին Ակցիումի*** հրվանդանից ոչ հեռու: Այստեղ Անտոնիոսը լիակատար պարտություն է կրում և փախչում Ալեքսանդրիա: Քիչ անց՝ հոկտեմբերին, Կլեոպատրայի կարգադրությամբ Արտավազդ II-ը մահապատժի է ենթարկվում: Իրենք էլ՝ Անտոնիոսն ու Կլեոպատրան, շուտով ինքնասպանությամբ վերջ են տալիս իրենց կյանքին:

Արտավազդ II-ի կյանքն ու նահատակությունը, անմնացորդ հայրենանվեր գործունեությունը նրա համար ապահովել են բացառիկ պատվավոր տեղ հայոց բազմադարյան պատմության մեջ: Պատահական չէ, որ դեռևս իր կենդանության օրոք նա հռչակվել է ***«Ասպվածային»*** պատվանունով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Երբ և ինչպես էր փոխվել ուժերի հարաբերակցությունը Առաջավոր Ասիայում: Ի՞նչ քաղաքականություն էր վարում Հայաստանը. ճի՞շտ էր արդյոք այն:
2. Ներկայացրեք Կրասոսի պարթևական արշավանքը: Ի՞նչ դիրքորոշում ուներ Արտավազդ II-ը: Ի՞նչ ավարտ ունեցավ արշավանքը:
3. Երբ է կազմավորվել Երկրորդ եռապետությունը, ովքե՞ր էին անդամները: Ներկայացրեք Անտոնիոսի պարթևական և հայկական արշավանքների ընթացքը և արդյունքները:
4. Բնութագրեք Արտավազդ II-ին:

§ 5. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Արտաշես II: Հայ ժողովուրդը երիտասարդ ու եռանդուն թագաժառանգի՝ Արտաշեսի գլխավորությամբ ոտքի կանգնեց հռոմեական զավթիչների դեմ: Երկրում սկսվեցին զանգվածային հակահռոմեական զինված ելույթներ, որոնք ճնշվեցին անասելի դաժանությամբ: Արտաշեսը ստիպված էր իր զորքերով հեռանալ Պարթևստան:

Հռոմի ծավալվելը դեպի Արևելք և Հայաստանի ռազմակալումը կտրուկ փոխեցին քաղաքական իրադրությունն Առաջավոր Ասիայում: Պարթևները հիանալի էին գիտակցում, որ Հայաստանից հետո իրենք են լինելու Հռոմի հաջորդ թիրախը. հանգամանք, որ ստիպել է Հրահատ IV-ին փոխել իր վերաբերմունքը Հայաստանի հանդեպ: Արդյունքում նա ոչ միայն քաղաքական ապաստան է շնորհել հայոց թագաժառանգին և իր դստերը կնության տվել նրան, այլև ռազմական զգալի օգնություն տրամադրել:

Այդ պայքարն ավելի արդյունավետ դարձավ Ակցիումի ճակատամարտից հետո: Հայ-պարթևական միացյալ բանակը Արտաշեսի գլխավորությամբ մտավ Հայաստան և մի քանի ճակատամարտերում պարտության մատնելով հռոմեական լեգեոններին՝ նրանց դուրս շպրտեց երկրից: Այս հաղթանակների շնորհիվ ***Արտաշեսն Արտաշատում*** մեծ հանդիսավորությամբ ***օծվեց հայոց թագավոր (Ք.ա. 30-20 թթ.)***:

Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, նոր թագավորը վառ ան-

Տիգրան IV–ի դրամը
Դարձերեսին՝ Տիգրանի քույր Էրատոն

հատականություն էր: Ստանալով հոր՝ Արտավազդ II–ի մահապատժի լուրը՝ Արտաշեսը կարգադրում է սրի քաշել Հայաստանում գտնվող բոլոր հռոմեացիներին, որը ցնցող տպավորություն է թողել Հռոմում:

Երիտասարդ ու եռանդուն թագավորը պատերազմում է Հռոմի դաշնակից Ատրպատականի թագավորության հետ և պարտության մատնում հակառակորդին: Այդ երկիրը միացվում է Հայոց թագավորությանը, իսկ թագավորն էլ գերի է վերցվում: Պատահական չէ, որ Արտաշես II–ի դրամների վրա դրոշմված է մեծադղորդ *«Արքայից արքա»* մակագրությունը:

Արտաշես II–ի շեշտված հակահռոմեական դիրքորոշումը և հատկապես դաշինքը Պարթևստանի հետ մեծապես հակասում էին Հռոմի արևելյան քաղաքականության շահերին, խոչընդոտում նրա զավթողական ծրագրերին: Նման պայմաններում Հռոմը չէր կարող հանդուրժել ինքնուրույն և անցանկալի հայոց թագավորին, մանավանդ որ կարելի էր նրա փոխարեն գահ բարձրացնել Հռոմում գտնվող կրտսեր եղբորը՝ Տիգրանին: Ահա այս խնդրի լուծումն է իր առջև դրել ***Օկտավիանոսը***, որը Ք.ա. 27 թվականից պաշտոնապես իրեն հայտարարել է Օգոստոս («Սրբազան») և հիմք դրել կայսերական վարչակարգին:

Օկտավիանոս Օգոստոսը ջանք չի խնայում հռոմեական գերիշխանությունն ու ազդեցությունը Առաջավոր Ասիայում հաստատելու ուղղությամբ: Դա, բնականաբար, հնարավոր էր միայն Արտաշես II–ին ասպարեզից հեռացնելու ճանապարհով: Արդեն ***Ք.ա. 20 թ.*** հռոմեական բանակը կանգնած էր Հայաստանի սահմանագլխին: Հենց այդ ժամանակ էլ ***Արտաշատում դավադրաբար սպանվում է Արտաշես II–ը:***

Ստանալով Արտաշես II–ի սպանության լուրը՝ հռոմեական զորքն անարգել մտնում է Հայաստան և շարժվում դեպի Արտաշատ: Հռոմեացիներն իրենց հետ բերում էին Հայաստանի նոր թագավորին՝ Արտաշեսի կրտսեր եղբայր Տիգրանին:

Վերջին Արտաշեսյանները: Արտաշատից ոչ հեռու բանակած հռոմեական ճամբարում հայոց թագավորական իշխանության պատվանշանները դրվեցին ***Տիգրան III–ի (Ք.ա. 20–8 թթ.)*** գլխին: Այս իրադարձությունը Հռոմում դիտվել է իբրև իրենց իշխանության հաստատում Հայաստանում: Եվ պատահական չէ, որ հենց այդ շրջանում Հռոմում թողարկվել են դրամներ՝ «Հայաստանը նվաճված» մակագրությամբ: Հայաստանը թուլացնելու նպատակով նրանից անջատվեց Ատրպատականը, և այստեղ թագավոր կարգվեց Հռոմի կամակատար Արիոբարզանեսը:

Գահակալման վերջին շրջանում Տիգրան III–ը ձերբազատվեց Հռոմի միջամտություններից և մերձենալով Պարթևստանին՝ սկսեց վարել ինքնուրույն քաղաքականություն: Ապացույցը պահլավերեն մակագրությամբ նրա դրամների թողարկումն էր:

Տիգրան III–ի մահից հետո, առանց Հռոմի հետ համաձայնեցնելու, գահ բարձրացավ նրա որդին՝ ***Տիգրան IV–ը (Ք.ա. 8–5 թթ.)***, որը թագավորեց որպես անկախ ու ինքնիշխան թագավոր: Հռոմում սա ընկալվեց որպես իրենց տիրապետության դեմ ապստամբություն: Դեպքերի ժամանակակից հռոմեական պատմիչն այդ կապակցությամբ շեշտել է, թե՝ «Արևելքում իրենց ամենից շատ հոգսեր պատճառել են հայերը»:

Ք.ա. 5 թ. Օգոստոսը մեծ բանակով Հայաստան է ուղարկում իր որդեգիր Գայոս Կեսարին, որը, գահընկեց անելով Տիգրան IV–ին, թագավոր է հայտարարում նրա հորեղբորը՝ ***Արտավազդ III–ին (Ք.ա. 5–2 թթ.)***: 25 տարի Հռոմում ապրած, դաստիարակված և հայ իրականությունից խորթացած այս թագավորը երկիրը կառավարում էր հռոմեական օրենքներով և զբաղվում անզուսպ թալանով: Չհանդուրժելով այս վիճակը՝ հայերը Տիգրան IV–ի գլխավորությամբ Ք.ա. 2 թ. ապստամբում են Հռոմի թեկնածուի դեմ և երկրից դուրս վտարում նրան ու օժանդակող զորամասերը: Կրկին գահ է բարձրանում Տիգրան IV–ը, այս անգամ քրոջ՝ ***Էրատոյի*** հետ միասին ***(Ք.ա. 2 – Ք.ա. 1 թթ.)***: Տիգրան IV–ի դրամների վրա նա պատկերված է Արտաշեսյանների ավանդական թագով, իսկ դրամի հակառակ կողմում Էրատոն է՝ վարսերը գլխի շուրջը հավաքած՝ «Էրատոն՝ Տիգրան արքայի քույրը» հունարեն մակագրությամբ:

Սակայն Տիգրան IV–ին վիճակված չէր երկար կառավարել: Ք.հ. 1 թ. նախակովկասյան տափաստաններից Մեծ Հայքի տարածք ներխուժած սարմատական քոչվոր ցեղերի դեմ ճակատամարտում նա զոհվում է: Ինչպես պատկերավոր արձանագրել է Տակիտոսը՝ «Հայերը մնացին առանց թագավորի, անտերունչ»:

Վերջին Արտաշեսյան Տիգրան IV–ի սպանությամբ Հայաստանի առջև ծառացավ նոր արքայատոհմ հաստատելու խնդիրը: Թեև այն առաջին հերթին ներքին խնդիր էր, սակայն անմիջապես ձեռք բերեց միջազգային քաղաքական հնչեղություն՝ դառնալով Հռոմի և Պարթևստանի հակամարտության և մրցակցության գլխավոր առարկան:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներքաղաքական ինչ իրավիճակ էր Հայաստանում Արտավազդ II–ի և նրա ընտանիքի գերեվարությունից հետո:
2. Ի՞նչ քաղաքականություն էր վարում Արտաշես II–ը: Ինչո՞ւ էր Հռոմը ջանում ասպարեզից հեռացնել Արտաշես II–ին:
3. Ի՞նչ քաղաքականություն էր վարում Տիգրան III–ը:
4. Ներկայացրեք Հայաստանի ներքաղաքական և արտաքին քաղաքական դրությունը վերջին Արտաշեսյանների օրոք:

Թեմա 4. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ I–III ԴԱՐԵՐՈՒՄ

§ 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀՌՈՄԻ ՈՒ ՊԱՐԹԵՎՍՏԱՆԻ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Մեծ Հայքի թագավորությունը դրածո թագավորների օրոք: Տիգրան IV–ի մահից հետո Արտաշեսյանների արքայատոհմն այլևս շարունակություն չունեցավ: Հռոմը Հայաստանում գահ էր բարձրացնում Արտաշեսյան արքայատոհմի հետ հեռավոր արյունակցական կապ ունեցող անձանց, որոնց տրվում էին «Արտաշես» կամ «Տիգրան» դինաստիական անուններ, և որոնք հավատարմության երդում էին տալիս իրենց հովանավոր կայսրին:

Օգոստոսի հեռագնա ծրագրի համաձայն՝ Հայաստանի թագավոր է նշանակվում Ատրպատական–Մարաստանի արքա Արիոբարզանեսը, որը հավանաբար մայրական կողմից ուներ Արտաշեսյան ծա-

գում: Այդ թայլով Հռոմը, ընդդեմ իր մշտական ախոյան Պարթևստանի, Արևելքում *ձեռք էր բերում Հայաստան–Ատրպատական* միացյալ և ուժեղ թագավորություն: Սակայն Արիոբարզանեսի՝ Հայաստանի թագավոր նշանակվելը տեղիք տվեց բուռն ապստամբական ելույթների, որոնք *2 թ.* վերածվեցին ***հակահռոմեական հուժկու ապստամբության:*** Այն ճնշելու համար Հայաստան ժամանեց հռոմեական զորքը: Հերոսական ու համառ դիմադրությամբ հատկապես աչքի ընկավ ***Արտագերս*** ամրոցը: Իսկ այն բանից հետո, երբ վերջապես հսկայական զոհերի գնով ամրոցը գրավվեց, և կողմերի միջև սկսվեցին բանակցություններ, բերդապահ Ադդոնը անսպասելիորեն դաշունահարեց հռոմեացի զորավարին, իսկ ինքն էլ ինքնասպան եղավ:

Ճնշելով ապստամբությունը՝ հռոմեացիները Հայաստանում թագավոր հռչակեցին նախ՝ Արիոբարզանեսին (2–4 թթ.), ապա՝ նրա որդուն՝ Արտավազդ IV–ին (4–6 թթ.): Սակայն սրանք զոհ գնացին հայերի կազմակերպած դավադրություններին: Այս անգամ դարձյալ Օգոստոսի հանձնարարությամբ Հայաստան ժամանեց հայկական գահի նոր թեկնածուն՝ Հրեաստանի թագավորի թոռը՝ Տիգրան V–ը, որն իգական գծով Արտաշեսյան շառավիղ էր: Հայոց այս «նոր թագավորը» գահակալեց ընդամենը մի քանի ամիս և գահընկեց եղավ հայերի ապստամբության հետևանքով:

Ընդդիմանալով Հռոմի կողմից Հայաստանում թագավոր նշանակվելու կարգին՝ հայերը գահ բարձրացրին Տիգրան IV–ի քրոջը՝ ***Էրատոյին (6–12 թթ.),*** իսկ այնուհետև՝ Պարթևստանի երբեմնի թագավոր ***Վոնոն Արշակունուն (12–16 թթ.):*** Ինչպես Էրատոն, այնպես էլ Վոնոնը չճանաչվեցին Հռոմի կողմից:

18 թ. հայերի համաձայնությամբ և Հռոմի օժանդակությամբ պոնտական արքայազն ***Զենոնը*** Արտաշատում թագադրվեց Մեծ Հայքի թագավոր *(18–34 թթ.):* Նոր թագավորը լայն ժողովրդականություն էր վայելում հայ ավագանու շրջանում: Նա մեծացել և դաստիարակվել էր հայերի մեջ, ուստի ոչ միայն յուրացրել էր տեղի լեզուն և *սովորույթները, այլև վարում էր Հայաստանի* պետական շահերից բխող քաղաքականություն: Եվ պատահական չէ, որ հայերը նրան տվել են դինաստիական Արտաշես անունը: Հռոմեական պատմիչ Տակիտոսի պատկերավոր արտահայտությամբ՝ «Զենոնի գլխին թագ դրվելուն պես արքային պաշտած հայերի բազմությունը ողջունեց նրան՝ իբրև Արտաշեսի»: Զենոն–Արտաշեսը միակն է առաջին դարի սկզբներին Հայաստանում գահակալած թագավորներից, որը գահընկեց չեղավ հայերի կողմից և մահացավ իր բնական մահով:

Զենոն–Արտաշեսից հետո Հռոմը հայոց գահը հանձնեց վրաց արքայազն Միհրդատ Իբերացուն (35–37 թթ.): Նրա գահակալումը Հայաստանում նշանավորվեց սպարապետ ***Գիսակ Դիմաքսյանի*** գլխավորած հակահռոմեական հուժկու ապստամբությամբ, որի շնորհիվ Միհրդատը դուրս վռնդվեց, իսկ երկիրն էլ մինչև 43 թ. լիովին վերականգնեց իր անկախությունը: Հայ ժողովրդի շարունակական ու հերոսական պայքարը Հռոմի դեմ, նրա ազատատենչ ոգին արտահայտվել են հռոմեական նշանավոր բանաստեղծ Վերգիլիոսի հետևյալ դիպուկ այլաբանության մեջ՝ «կամուրջներ չհանդուրժող Արաքս», այսինքն՝ օտար տիրապետությունը չհանդուրժող Հայաստան:

Բայց Հռոմը շարունակեց նույն քաղաքականությունը: ***Այդ ընթացքում գահակալած Սանատրուկ I–ից*** հետո Հռոմի համաձայնությամբ Հայաստանում կրկին թագավոր նշանակվեց Միհրդատը: *51 թ.* հայոց գահը բռնազավթեց վերջինիս եղբորորդին՝ ***Հոռոդամիզդը***՝ նախապես սպանելով հորեղբորը և նրա ամբողջ ընտանիքին:

Նման դաժան իրականությունն է ստիպել հայերին փնտրել այլընտրանքային դաշնակցություն: Այդ ժամանակ է, որ Պարթևստանը սկսում է ձեռք բերել իր նախկին հզորությունը: Հայաստանը կանգնած էր երկընտրանքի առջև՝ Հռոմ, թե՞ Պարթևստան:

Հայաստանը և հռոմեա-պարթևական հակամարտությունը: Հայաստանում հռոմեա-պարթևական մրցակցության հետևանքով քաղաքականապես անկայուն վիճակ էր ստեղծվել, ինչը սպառնում էր երկրի անվտանգությանը: Հայոց գահին ամրանալու՝ Հռադամիզդի ճիգերն անհաջողության էին դատապարտված, քանզի նա իր հանցավոր գործողություններով ատելի էր հայ ժողովրդին: Իսկ հռոմեացիներն էլ, ձևացնելով, թե հավանություն չեն տալիս ոճրագործությանը, պահանջում էին, որ վրաց արքա Փարսմանը հեռանա Հայաստանից՝ իր հետ տանելով Հռադամիզդին: Կապադովկիայի հռոմեական կուսակալը ներխուժում է Հայաստան, ավերածություններ պատճառում երկրին, սակայն հայերից հուժկու հարված ստանալով՝ գնում է Հռադամիզդի մոտ: Նրանից կաշառվելով՝ հռոմեական կուսակալը Հռադամիզդին անօրինաբար թագադրում է Արտաշատում: Շուտով հռոմեական կուսակալն իր հրամանատարությունից կարգադրություն է ստանում հեռանալու Հայաստանից՝ պարթևների հետ պատերազմից խուսափելու համար:

Պարթևստանում գահ է բարձրանում ***Վաղարշ I Արշակունին (51-80 թթ.)***, որն իր թագավորությունում գահակալական կռիվներին վերջ տալու և Հռոմի նվաճումներին դիմակայելիս դաշնակից երկրների զինակցություն ստեղծելու նպատակով որոշում է իր եղբայրներին բազմեցնել Հայաստանի և Ատրպատականի գահերին: Նա առանց դժվարության դա իրագործում է Ատրպատականում, որտեղ թագավորեցնում է Բակուրին: Հայաստանում Վաղարշի ծրագրի իրագործման համար նպաստավոր իրավիճակ էր ստեղծվել. հայերը ցանկանում էին ազատվել իրենց համար ատելի դարձած Հռադամիզդից և ընդհանրապես հռոմեական որևէ միջամտությունից: Հայոց ավագանին անայլայլ ընտրում է Պարթևստանի առաջարկությունը. չէ՞ որ պարթևները չէին սպառնում հայկական պետականության գոյությանը, կենցաղով, բարքերով, սովորույթներով մոտ էին հայերին և համատեղ ուժերով կարող էին հակահարված տալ Հռոմի ծավալապաշտությանն Արևելքում: Ստեղծվում է հայ-պարթևական զինակցություն ընդդեմ Հռոմի և նրա վրացի դրածոյի:

52 թ. Վաղարշը և Տրդատը պարթևական զորքով մտնում են Հայաստան, դուրս վոնդում Հռադամիզդին ու նրա մերձավորներին: Արտաշատ մայրաքաղաքը և Տիգրանակերտը բացում են իրենց դռները նրանց առջև: Սակայն ցրտաշունչ ձմռան և պարթևական զորքում սկսված հիվանդությունների հետևանքով պարթևական զորքը հեռանում է երկրից: Հռադամիզդը կատաղած վերադառնում է Արտաշատ և որոշում հաշվեհարդար տեսնել հայ բնակչության հետ: Սակայն զինված ժողովուրդը շրջապատում է պալատը, և Հռադամիզդն իր կնոջ հետ փախուստի է դիմում՝ ապավինելով իրենց ձիերի արագությանը:

Հայ-պարթևական միացյալ ուժերի գլուխն անցած՝ ***Տրդատը գալիս է Արտաշատ*** և ***նստում հայոց գահին:*** Սակայն մինչ վերջնականապես հայոց արքա հաստատվելը նրան մեծ փորձություններ էին սպասում:

Տասնամյա պատերազմը, Հռանդեայի պայմանագիրը: Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները Հռոմում դիտվեցին որպես կայսրության՝ Արևելքում վարած քաղաքականության խոշոր պարտություն:

Հռոմի Ներոն կայսեր (54-68 թթ.) հրամանով Արևելք է գալիս հռոմեական զորավար Կորբուլոնը: Սկսվում է տասնամյա ***հռոմեա-պարթևական պատերազմը (54-64 թթ.):*** Կայսրության փոքրասիական նահանգներից զորահավաք կատարելով՝ Կորբուլոնը համալրում է հռոմեական արևելյան լեգեոնները: Այդ բոլոր ուժերը տեղակայվում են Մեծ Հայքի արևմտյան սահմանի՝ Եփրատի երկայնքով, և գետի վրա կամուրջներ են գցվում գետանցման նպատակով: Ի թիվս այլոց՝ հյուսիսից Կորբուլոնին դաշնակցում էր վրաց Փարսման թագավորը, որը հռոմեացիներին իր հավատարմությունը ցույց տալու համար սպանել էր իր որդուն՝ Հռադամիզդին:

Հռոմեական լրտեսական ցանցին հաջողվել էր Պարթևստանում ներքին խռովություններ հրահրել, ինչը ստիպում է Վաղարշին իր հիմնական ուժերը հեռացնել Հայաստանից: Կորբուլոնը մեծաքանակ լեգեոններով 58 թ. ներխուժում է Մեծ Հայքի թագավորություն:

Տրդատը, իր հետ եղած ուժերը բավարար չհամարելով, աշխատում է խուսափել Կորբուլոնի հետ ուղղակի բախումից և առանձին վայրերում դիմադրական գործողություններ է վարում, մինչ Վաղարշը օգնության կգար: Իր հերթին Կորբուլոնը, ձգտելով թուլացնել երկրի պաշտպանական ուժերը, սկսում է ավերել իր ճանապարհին հանդիպող ամրոցները, շարժվում է Արտաշատի ուղղությամբ: Տրդատը փորձում է դիմադրություն կազմակերպել, սակայն իր զորաջոկատի փոքրաթիվ լինելու հետևանքով հեռանում է Ատրպատական՝ իր եղբոր՝ Բակուրի մոտ:

Կորբուլոնը մտնում է Արտաշատ և քանդում քաղաքը: Հռոմեացիների վայրագությունը սաստկացնում է հայ ժողովրդի զայրույթը, և զավթիչներին ցույց տրվող դիմադրությունը ստանում է համընդհանուր բնույթ:

59 թ. դեպի Տիգրանակերտ շարժվող Կորբուլոնի զորքը ճանապարհին հանդիպում է հայ հայրենասերների դիմադրությանը: Երբ հռոմեացիները ճամբար էին խփել Տարոն գավառում, մի խիզախ հայ ազնվական փորձում է սպանել Կորբուլոնին, սակայն վերջինիս վրանի մոտ հռոմեական պահակազորը նրան բռնում է, և նա հերոսաբար նահատակվում է:

Հռոմեացիներն ուժգին դիմադրության են հանդիպում Լեգարդա ամրոցի մոտ, որտեղ փակվել էին հայկական ուժերը: Նրանք ամրոցից խիզախորեն գրոհում էին թշնամու դիրքերի վրա: Սակայն ուժերն անհավասար էին. Կորբուլոնը կարողանում է գրավել ամրոցը: Այդ նույն ժամանակ Տրդատը, անցնելով մարերի տարածքով, մտնում է Հայաստան: Նրա դեմ Կորբուլոնը մի զորամաս է ուղարկում, ապա անձամբ շարժվում իր հիմնական ուժերով: Պատերազմի այս փուլում երկրին մեծ ավեր-

Տրդատ I Արշակունի

ածություններ են պատճառվում, Տրդատը ստիպված կրկին նահանջում է:

Հայաստանի համար այդ ծանր պահին Ներոնը հայոց գահին է բարձրացնում Կապադովկիայի թագավորական ընտանիքից ***Տիգրան VI-ին*** (60 թ.), ինչը նույնպես մեծ դժգոհություն է առաջացնում երկրում: Ավելին՝ Տիգրան VI-ը հարձակվում է Ադիաբենեի վրա:

Վաղարշը Տրդատին թագադրում է և, զորք հատկացնելով, ուղարկում է Հայաստան՝ դուրս վտարելու հռոմեական դրածոյին: Ինքը նույնպես շարժվում է ընդդեմ հռոմեական լեգեոնների:

Կորբուլոնը շտապում է Տիգրան VI-ին օգնության ուղարկելու երկու լեգեոն՝ միևնույն ժամանակ պատվիրելով չշտապել և հանդարտություն պահպանել: Նա Ներոնին խնդրում է իր փոխարեն Հայաստան ուղարկել այլ զորավարի, քանի որ Վաղարշի հարձակումը սպառնում էր հռոմեական Սիրիա (Ասորիք) նահանգին: Իսկ Տիգրան VI-ը, խուսափելով պարթևների և նրանց միացած ադիաբենցիների հարձակումից, փակվում է Տիգրանակերտում՝ ապավինելով քաղաքում գտնվող հռոմեական կայազորի պաշտպանությանը:

Մծբինում հռոմեա-պարթևական բանակցությունների արդյունքում զինադադար է կնքվում: Կորբուլոնը փորձության

չենթարկվելու համար Տիգրանակերտից դուրս է բերում հռոմեական զորամասը, որի հետ հեռանում է նաև գահընկեց արված Տիգրան VI-ը: Կորբուլոնը ձմեռում է Կապադովկիայի սահմանում և այնտեղից անցնում իր հրամանատարությանը հանձնված Սիրիա նահանգը: Բանակցությունների արդյունքում Վաղարշի՝ Հռոմ ուղարկած դեսպանների առաջարկը՝ պայմանագիր կնքել և Տրդատին ճանաչել թագավոր, Ներոն կայսրը մերժում է: Վաղարշը վերսկսում է ռազմական գործողությունները:

61 թ. Արևելք է ուղարկվում ***Պետրոս*** զորավարը, որը, գալով Կապադովկիա, պետք է հետևեր Հայաստանի գործերին: Նա հաջորդ տարում մտնում է Հայաստան և շարժվում դեպի Տիգրանակերտ: Անցնելով Արածանի գետը՝ հռոմեական զորքը բանակ է դնում ***Հռանդեա (Եռանդ)*** կոչվող վայրում: Հայ-պարթևական զորքը, ջախջախելով Հայկական Տավրոսի լեռնանցքներում տեղակայված հռոմեական կայազորները, շրջապատում է Պետրոսի ճամբարը: Տեղի ունեցած ճակատամարտում հռոմեացիները մեծ կորուստներ են կրում: Պետրոսը հաշտություն է խնդրում: Հաղթողները զինաթափում և ծաղրուծանակի են ենթարկում հռոմեական զորքին, որին ստիպում են ծնկաչոք անցնել նիզակներով պատրաստված «լծի» տակով, ինչը մեծագույն խայտառակություն էր հռոմեական անպարտելի համարվող բանակի համար:

Պարտված Պետրոսը կեղծ լուր է ուղարկում Հռոմ, թե Արևելքում իրավիճակը չի փոխվել: Այնինչ Ներոնը տեղեկացել էր, որ հռոմեական լեգեոնները, պարտություն կրելով, հեռացել էին Հայաստանից:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ քաղաքականություն էր վարում Հռոմը Հայաստանում Արտաշեսյան արքայատոհմի վերացումից հետո: Ներկայացրեք Հայաստանի ներքաղաքական իրադրությունը դրածո թագավորների օրոք:
2. Ինչո՞ւ հայոց ավագանին ընտրեց պարթևամետ քաղաքականություն: Արդյո՞ք ճիշտ ընտրություն էր դա:
3. Ինչպե՞ս արձագանքեց Հռոմը Հայաստանում տեղի ունեցած գահակալական փոփոխությանը:
4. Ներկայացրե՛ք տասնամյա պատերազմի ընթացքը: Արդարացվա՞ծ էր արդյոք Արտաշատի ավերումը հռոմեացիների կողմից:

§ 2. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԳԱՀԱԿԱԼՈՒՄԸ

Տրդատ I Արշակունին՝ Մեծ Հայքի թագավոր: Ներոն կայսրը, ձգտելով փրկել Հռոմի հեղինակությունը, 63 թ. Վաղարշ I-ին հայտնում է, որ եթե Տրդատն անձամբ մեկնի Հռոմ և թագը ստանա իրենից, ապա ինքը կճանաչի նրան Հայաստանի թագավոր: ***64 թ.*** Հայաստան է գալիս Կորբուլոնը և բանակցություններ վարում Վաղարշի ու Տրդատի հետ: Նրանք ընդունում են Ներոնի առաջարկը՝ պահանջելով, որ խաղաղության ***պայմանագիրը*** կնքվի ***Հռանդեայում՝*** հռոմեացիների պարտության վայրում: Ի նշանավորումն հաշտության՝ Հռանդեայում Տրդատը թագը հանում և դնում է հռոմեական զորքի բերած՝ Ներոնի արձանի մոտ՝ այն կայսեր ձեռքից Հռոմում ստանալու պայմանով:

65 թ. Տրդատը մեծ շքախմբով՝ իր ընտանիքով և 3000 հայ ու պարթև հեծյալներով, ուղևորվում է Հռոմ: Ուղևորության հսկայական ծախսերը հոգում էր կայսերական գանձարանը: Ճանապարհին ընկած

բնակավայրերի բնակիչները նրանց ընդունում էին մեծ խանդավառությամբ: Հռոմում Ներոնը Տրդատի պատվին կազմակերպում է տոնահանդեսներ և հանդիսավորությամբ թագադրում, ապա մեծ գումար և արհեստավորներ է տալիս՝ Կորբուլոնի կողմից ավերված Արտաշատը վերականգնելու համար: Տրդատ I-ը հաջորդ տարի վերադառնում է Հայաստան: ***Տրդատ I-ի*** գահակալության ընթացքում ***(66-88 թթ.)*** միջազգային ասպարեզում Հայաստանի վիճակը կայունանում է: Վերականգնվում է Արտաշատ մայրաքաղաքը: Տրդատը կառուցապատում է հինավուրց Գառնու ամրոցը՝ իր շինություններով և Արեգ-Միհրի տաճարով:

Տրդատ I-ի թագավորության վեցերորդ տարում (72 թ.) Մեծ Հայքի թագավորության խաղաղ կյանքն ընդհատվեց հյուսիսից՝ Կովկասից, ալանների ներխուժման հետևանքով: Տրդատ I-ը ալանների դեմ ռազմերթի ելավ, սակայն կռվի ժամանակ ալաններից մեկը պարան գցեց նրա վրա՝ փորձելով գերեվարել: Տրդատին հաջողվեց իր սրով կտրել պարանը և խուսափել վտանգից: Ալանները դուրս վտարվեցին երկրից:

Սանատրուկ II: Տրդատ I-ին հաջորդում է ***Սանատրուկ II-ը (88-110 թթ.):*** Նրա մասին հույն պատմիչ Արիանոսը գրել է. *«Հայոց թագավոր Սանատրուկն ուներ միջակ հասակ, բայց հակված էր դեպի ամեն մի մեծ բան և մանավանդ դեպի պատերազմական գործերը: Նա հավատարիմ պահապան էր արդարադատության և իր կենցաղավարության մեջ զուսպ էր, նաև չափավոր ու ողջամիտ էր, ինչպես լավագույնները՝ հույների և հռոմայեցիների մեջ»:*

Սանատրուկն իր աթոռանիստն էր դարձրել նոր հիմնադրված ***Մծուրք*** քաղաքը՝ Արածանիի ափին՝ Մշո դաշտում: Այստեղով անցնում էր Տիգրանակերտից Արտաշատ գնացող առևտրական և ռազմական կարևոր նշանակության ճանապարհը: Սանատրուկը մահանում է 110 թ.: Նրա գերեզմանը Բարձր Հայքի Դարանաղի գավառի Անի բերդում էր: Երկու հարյուր հիսուն տարի անց, երբ պարսից արքա Շապուհ II-ի զորքերը ներխուժել էին Անի բերդը և թալանելու նպատակով ավերել էին Արշակունիների գերեզմանները, չէին կարողացել քանդել Սանատրուկի հսկայաշեն և ամրապինդ շիրիմը:

Հռոմեա-պարթևական պայմանավորվածությամբ որոշվեց, որ պարթև Արշակունիները պետք է ստանային Հռոմի համաձայնությունը՝ իրենց տոհմից նոր թեկնածուին հայոց գահին նստեցնելու համար: Երկու տերությունների միջև հարաբերությունները խիստ սրվում էին, երբ որևէ կողմը, խախտելով Հռանդեայի դաշնագրի պայմանը, հայոց գահին էր դնում իր թեկնածուին: Նման իրավիճակ ստեղծվեց Սանատրուկից հետո՝ մինչև 117 թ.:

Վաղարշապատ մայրաքաղաքի հիմնադրումը: Հայոց նոր թագավոր հռչակված ***Վաղարշ I-ի (117-140 թթ.)*** օրոք Արարատյան դաշտում՝ Շրեշ բլրի վրա տարածվող նախկին Վարդգեսավան գյուղաքաղաքը զարգանում և վերածվում է մի մեծ քաղաքի: Թագավորը քաղաքը շրջապատում է ամուր պարիսպներով և իր անունով կոչում ***Վաղարշապատ*** (կոչվում էր նաև ***«Նոր քաղաք»***): Այն դառնում է Արշակունյաց թագավորության երկրորդ մայրաքաղաքը:

Վաղարշ I-ից հետո Հայաստանի թագավոր է նշանակվում Հռոմի Ծերակույտի անդամ ***Սոհեմոսը***՝ Արշակունյաց շառավղից: Նրա կյանքի որոշ դրվագներ նմանվում են Մովսես Խորենացու նկարագրած Տիգրան Վերջինի ժամանակաշրջանին, ուստի պատմագրության մեջ ընդունված է համարել, որ Սոհեմոսը հայտնի էր նաև Տիգրան անունով: Հռոմի քաղաքականությունը պարթևները համարում են Հռանդեայի պայմանագրի խախտում և կռիվներ են մղում կայսրության դեմ: Այդ իրավիճակում Սոհեմոսը դուրս է վտարվում Հայաստանից: ***161 թ.*** հայոց գահը հանձնվում է ***Բակուր Արշակունուն,*** որին, սակայն, հռոմեացիները գահընկեց են անում և տանում Հռոմ (163 թ.): Հռոմեացիները հայոց գահին կրկին բարձրացնում են Սոհեմոս-Տիգրանին (164-185 թթ.):

Մեծ Հայքում Արշակունիների ժառանգական իշխանության հաստատումը: Հռոմում կայսերական գահի համար մղված պայքարի խառնաշփոթում Մեծ Հայքում գահակալում է ***Վաղարշ II-ը (185-198 թթ.):*** Հայաստանն այդ ժամանակաշրջանում անկախացել էր և չեզոքություն էր պահպանում Հռոմում տեղի ունեցող գահակալական կռիվների նկատմամբ: Երբ կայսերական գահի թեկնածուներից Նիգերը (Ասորիքում) նրանից օգնություն է խնդրում ընդդեմ Սեվերոսի, հայոց թագավորը պատասխանում է, որ ինքը ոչ մեկին չի օգնելու: Սակայն, եթե որևէ մեկն իր վրա հարձակվի, ինքը պատրաստ է երկիրը պաշտպանելու: Կիլիկիայում՝ Իսոսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Նիգերը սպանվում է: Սեվերոսը, գալով Միջագետք, շտապում է հաշվեհարդար տեսնել նրա կողմնակիցների հետ: Չեզոքություն պահպանած հայոց թագավոր Վաղարշ II-ը բանակցությունների միջոցով հաշտություն է կնքում հռոմեական նոր կայսր Սեպտիմիոս Սեվերոսի հետ:

Վաղարշ II-ի հեռատես և հմուտ քաղաքականության շնորհիվ կայսեր հետ կնքված պայմանագրով հռոմեական լեգեոնները հեռացվում են Հայաստանից: Վաղարշ II-ը շարունակում է Վաղարշապատի կառուցապատումը: Հռոմեական կայսրը պարտավորվել էր գումար վճարել հայոց այրուձիին, որը հյուսիսում իրականացնում էր Կովկասյան լեռնանցքների և մերձակա տարածքների պաշտպանությունը լեռնական ցեղերի հարձակումներից: Հենց նրանց դեմ մղված պայքարում էլ զոհվում է Վաղարշը:

Վաղարշ II-ի օրոք Հայաստանն այնքան է հզորանում, որ հայ Արշակունիների թագավորական իշխանությունը դառնում է ժառանգական:

Վաղարշ II-ին հաջորդած որդին՝ ***Խոսրով I-ը (198-215 թթ.),*** հայոց զորքով արշավում է Կովկասի լեռնական ցեղերի դեմ՝ ձգտելով առնել իր հոր մահվան վրեժը:

Պարթևական թագավորության թուլացումից օգտվեցին թե՛ Հռոմը և թե՛ պատմության ասպարեզ մտնող Սասանյանները: Սեպտիմիոս Սեվերոսի որդին՝ Կարակալլան, կայսր դառնալով, երազում էր նվաճել Առաջավոր Ասիայի երկրները: Նա 215 թ. խաբեությամբ իր մոտ՝ Ասորիք է հրավիրում Խոսրով I-ին և ձերբակալում է նրան: Այս նենգ արարքը զայրույթ է առաջացնում Հայաստանում, ուր թագավոր է հռչակվում Խոսրովի որդին՝ ***Տրդատ II-ը (216-252 թթ.),*** որի գլխավորությամբ հայերը ջախջախում և Հայաստանից դուրս են վտարում Կարակալլայի ուղարկած զորքը:

Այդ ժամանակ բանտարկության մեջ մահանում է Խոսրով I-ը, և նրա որդուն՝ Տրդատ II-ին, որն արդեն գահակալում էր Մեծ Հայքում, հռոմեական կայսր Մակրինոսը թագ է ուղարկում: Ի նշանավորումն հայ-հռոմեական դաշինքի վերականգնման՝ կայսրը Տրդատին վերադարձնում է Հայաստանից տարված նրա մորը՝ թագուհուն, ավարը և այն կալվածքները (Կապադովկիայում), որոնք ստացել էր դեռևս Խոսրով I-ը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ Տրդատն ու Վաղարշ I-ը պնդեցին, որ հաշտության պայմանագիրը կնքվի Հռանդեայում: Որտե՞ղ և ե՞րբ թագադրվեց Տրդատը: Ներկայացրե՛ք նրա գահակալման շրջանը:
2. Ինչպե՞ս էր բնութագրում հույն պատմիչ Արիանոսը Սանատրուկ II-ին: Ո՞ր քաղաքը նա ընտրեց որպես գահանիստ, ինչո՞ւ:
3. Ինչո՞վ է նշանավորվել Վաղարշ I-ի գործունեությունը: Որո՞նք էին նրանից հետո Մեծ Հայքում իրավիճակի փոփոխման պատճառները:
4. Ե՞րբ է գահակալել Վաղարշ II-ը: Ո՞ր թագավորից է սկսվել Արշակունիների ժառանգական իշխանությունը: Ներկայացրե՛ք Խոսրով I-ի գահակալությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ Ք. Հ. I-II ԴԱՐԵՐՈՒՄ

Հայ-պարսկական և հայ-հռոմեական հարաբերությունները: Պարսկաստանում գահակալական կռիվներ են սկսվում թագավորող պարթև Արշակունիների և Պարսք նահանգի Սասանյան տոհմի ներկայացուցիչ Արտաշիրի միջև: Սասանյանների ռազմամոլ հարստության գահակալները, ձգտելով վերականգնել Աքեմենյան Պարսկաստանի նախկին հզորությունը, տարածաշրջանում մի քանի դար վարեցին ծավալապաշտ քաղաքականություն:

Մեծ Հայքի հայ Արշակունիները հավատարիմ էին մնացել իրենց դաշնակից պարթև Արշակունիներին, ուստի Սասանյանները թշնամական դիրք էին բռնել հայերի նկատմամբ:

Ի պաշտպանություն պարթև Արշակունիների՝ ***Տրդատ II-ը*** արշավանքներ ձեռնարկեց Պարսկաստանում 226 թ. գահին տիրացած Սասանյան արքայատոհմի դեմ՝ հասնելով մինչև ***Տիզբոն:*** Մովսես Խորենացին պատմում է. *«Հայոց թագավորը վերադարձավ մեծ հաղթությամբ, շատ ավարով ու ցնծալից ուրախությամբ. նա վերադարձավ Հայաստան՝ Այրարատ գավառը՝ Վաղարշապատ քաղաքը. եկավ մեծ ուրախությամբ, բարի անունով ու շատ ավարով»:*

Տրդատ II-ի գլխավորած պայքարը Սասանյանների դեմ, չնայած որոշակի հաջողություններին, չփրկեց պարթև Արշակունիներին:

Արտաշիրի որդու՝ Շապուհ I-ի օրոք՝ Սասանյան Իրանի հզորացման և Հռոմեական կայսրության թուլացման ժամանակաշրջանում, Հայաստանը զերծ է մնում ռազմական գործողություններից:

III դ. կեսերին, երբ Հռոմը ներքին խռովությունների հետևանքով չէր կարող զբաղվել արևելյան գործերով, Շապուհ I-ը գրոհում է Տրդատ II-ի թագավորության վրա: Հայոց արքան, որ ավելի քան երկու տասնամյակ դիմակայել էր Սասանյանների ոտնձգություններին, ստիպված էր հեռանալ Հռոմեական կայսրության սահմանները (252 թ.): Տրդատ II-ին հաջորդած Արտավազդից հետո հայոց գահին անցնում է ***Խոսրով II-ին:***

260-ական թթ. կեսերից Սասանյանները փորձել են հայոց գահին հաջորդաբար բազմեցնել իրենց մի քանի թագաժառանգների, որոնք այնուհետև գահակալել են Պարսկաստանում:

Հայաստանում ստեղծված խառնաշփոթ իրավիճակը Մովսես Խորենացին (այդ օտար գահակալների ժամանակների միահյուսմամբ) բնութագրել է որպես «ժամանակ անիշխանության»՝ նշելով, որ «մեր երկիրը կառավարեց... պարսիկ գործակալների միջոցով... քսանվեց տարի» սասանյան արքա Շապուհ I-ի որդին՝ Որմիզդ-Արտաշիրը: Հայաստանի գահը 260-ական թթ. կեսերից զավթել էր Որմիզդ-Արտաշիրը (հետագայում՝ սասանյան արքա): Հայաստանում Սասանյաններն իրենց զավթումները դյուրացնելու նպատակով պարսից կրոնական սպասավորների՝ մոգերի միջոցով ձգտում էին հայերին բռնի ուժով պարտադրել Պարսկաստանում պետական կրոն հռչակված զրադաշտականությունը (մազդեզականություն):

Հայաստան ուղարկված Անակ Պարթևի երկու զավակներից կրտսերին՝ ***Գրիգորին,*** ըստ ավանդության՝ դայակները հասցրել էին Մաժակ-Կեսարիա, որտեղ էլ նա մկրտվել և քրիստոնեական դաստիարակություն էր ստացել: Իսկ Խոսրով II-ի որդուն՝ ***Տրդատին,*** դայակները փախցրել էին «կայսեր արքունիք»: Հռոմեական կայսրությունում գտնվելիս Տրդատը ***հաղթել էր օլիմպիական խաղերում*** և մեծ սխրագործություններ կատարել մարտի դաշտում: Դրանցից առավել նշանավորն էր ***276 թ.*** հռոմեական կայսեր փոխարեն գոթերի իշխանի հետ ունեցած նրա հաղթական մենամարտը:

Տրդատին մեծ պատիվների են արժանացնում, պարգևներ տալիս, թագ դնում գլխին և ծիրանի պատմուճաններով զարդարում: Հռոմեական օգնական զորքով կայսրը Տրդատին ուղարկում է Հայոց աշխարհ:

Տրդատ III Մեծի գահակալումը: Մծբինի հաշտությունը: Տրդատը հաստատվում է հայ Արշակունիների գահին 287 թ.: Այդ ժամանակ սրվել էին պարսկա-հռոմեական հարաբերությունները: Սասանյանները չէին ճանաչում Տրդատի գահակալությունը: 296 թ. պարսից արքա Ներսեհը պատերազմ է սկսում Հռոմի դեմ: Տեղի ունեցած ճակատամարտում հռոմեական բանակը պարտություն է կրում: Պատերազմական գործողությունները տեղափոխվում են Հայաստան: 297 թ. Ներսեհը, պարսից բանակով ասպատակելով երկիրը, հասնում է Բասեն գավառը և ճամբար դնում Ոսխա գյուղում: Լուսաբացին տեղի ունեցած ճակատամարտում հայ-հռոմեական միացյալ ուժերը ջախջախում են պարսից թագավորի զորքերը: Ներսեհը պարտվում է և փախուստի դիմում: Նա ստիպված էր հաշտություն խնդրել և տարածքային զիջումներ կատարել Հյուսիսային Միջագետքում:

298 թ. Մծբինում կնքված հռոմեա-պարսկական ***40-ամյա խաղաղության պայմանագրով*** Ներսեհը ճանաչում է Մեծ Հայքի թագավորության անկախությունը: ***Տրդատ III-ը,*** 298 թ. վերջնականապես հաստատվելով Մեծ Հայքի թագավորության գահին, վերականգնում է անկախ Հայոց աշխարհի ամբողջականությունը և սկսում է զբաղվել երկրի հզորացմամբ ու շենացմամբ:

Պետական կարգը Արշակունիների օրոք: Հայ ազնվականության համաձայնությամբ և աջակցությամբ հայոց գահին պարթև Արշակունիների մի ճյուղի հաստատումով և ժամանակի ընթացքում ժառանգական հայկական արքայատոհմ դառնալով՝ հայոց պետական համակարգը շարունակեց հայկական պետականության՝ հազարամյակների խորքից եկող ավանդույթները:

Տրդատ I Արշակունու ժամանակներից պետական կարգը շարունակում էր մնալ ***միապետական:*** Երկրի կառավարման բուրգը գլխավորում էր թագավորը, որի իշխանությունն անսահմանափակ էր: Հայոց արքային էին ենթարկվում դեռևս նախորդ դարաշրջաններում առաջացած արքունի գործակալությունները, որոնց միջոցով նա կառավարում էր երկրի տնտեսությունը և շինարարությունը, ռազմական պաշտպանությունը, դատական և այլ բնագավառներին վերաբերող գործերը: Մեծ Հայքի թագավորության վարչական բաժանումն ավանդաբար համապատասխանում էր աշխարհների՝ նահանգների՝ բնականից գավառաբաժանման վրա հիմնված պետական, մասնատիրական և համայնքային սեփականատիրությանը գերագույն տիրոջ՝ թագավորի տնօրինությամբ:

Տնտեսության զարգացումը: Բնակչությունը, քաղաքները և գյուղական բնակավայրերը: Արշակունիների գահակալության առաջին հարյուրամյակները նշանավորվեցին տնտեսության վերելքով: Հատկապես նշանակալից տեղաշարժեր եղան Տրդատ I, Սանատրուկ II և Վաղարշ թագավորների օրոք:

Տրդատ I-ը շինարարական մեծ աշխատանքներ էր կատարել՝ զարկ տալով հատկապես քաղաքային և տաճարային տնտեսությունների զարգացմանը: Դրա վկայությունն են հռոմեացիների կողմից ավերված Արտաշատի վերականգնումը, հնուց գոյություն ունեցող Գառնի ամրոցում շինարարական աշխատանքները (որոնք հետագայում շարունակել է Տրդատ III-ը) և հատկապես Արեգակի տաճարի կառուցումը, ինչի մասին վկայում է Գառնիում Տրդատի թողած հունարեն արձանագրությունը:

Սանատրուկ թագավորի օրոք մեծ ուշադրություն էր դարձվում առևտրական կապերի զարգացմանը: Հայաստանն արտաքին աշխարհի հետ կապող մայրուղու վրա կառուցված Մծուրք քաղաքն այդ մասին է վկայում: Նմանապես քաղաքաշինության մեծագույն վաստակ ունի հայոց արքա Վաղարշ I-ը, որը հիմնեց Վաղարշապատ մայրաքաղաքը: Վաղարշապատի աշխատանքները շարունակվեցին նաև հետագայում: Միևնույն ժամանակ հինավուրց Արտաշատը շարունակում էր մնալ որպես մայրաքաղաք: Հայաստանի մյուս քաղաք-

ներից շատերը՝ Վան, Երվանդաշատ, Զարեհավան, Զարիշատ, Կարին, Մուշ, Արձեշ և այլն, պահպանում էին իրենց տնտեսական, մշակութային և արհեստների կենտրոն լինելու նշանակությունը:

Հայաստանը պահպանում էր իր ***ազգաբնակչության միապարր ժողովրդագրական կազմը:*** Միջազգային ասպարեզում առևտրական և մշակութային շփումները փոխհարստացնում էին մշակութային կյանքը: Քաղաքներում՝ հայկական բնակչության կողքին, օտարների առանձին խմբեր էին (հույներ, ասորիներ, իրանցիներ և այլն) ապրում, որոնք հիմնականում զբաղվում էին առևտրով: Խաղաղ ժամանակաշրջաններում քաղաքային կյանքը բնորոշվում էր մշակութային և առևտրա-տնտեսական վերելքով:

Հայաստանում զարգացած էր գյուղատնտեսությունը (երկրագործություն, այգեգործություն, մեղվաբուծություն, անասնապահություն և այլն), ուստի բնակչության մեծ մասը ապրում էր գյուղերում, որտեղ հիմնականում պահպանվում էր համայնքային կյանքը:

Հարցեր և առաջադրանքներ

1. III դարի առաջին կեսի հռոմեա-պարսկական և հայ-պարսկական հակամարտություններն ինչ փոփոխություններ մտցրին Առաջավոր Ասիայում:
2. Ինչու՞ էր Տրդատ II-ը արշավել Պարսկաստան, ինչով ավարտվեց այն: Ինչպես է բնութագրում Մովսես Խորենացին III դարի երկրորդ կեսին Հայաստանում տիրող վիճակը: Երբ Տրդատ III-ը հաստատվեց հայոց գահին: Երբ կնքվեց Մծբինի հաշտության պայմանագիրը, վերհանեք դրա նշանակությունը Հայաստանի համար:
3. Ներկայացրեք Մեծ Հայքի պետական կարգը Արշակունիների օրոք:
4. Տնտեսական ինչ առաջընթաց ունեցավ Հայաստանը Արշակունիների օրոք: Նշեք այդ ժամանակաշրջանի մեծ քաղաքները: Ներկայացրեք բնակչության կազմը:

Գառնիի հեթանոսական տաճարը

ԲԱԺԻՆ 4 ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Թեմա 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ Ք.Ա. IX–Ք.Ա. III ԴԱՐԵՐՈՒՄ

§ 1. ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ (Ք.Ա. IX - Ք. Ա. VII ԴԱՐԵՐ)

Մշակույթի զարգացման պատմական պայմանները: Ք.ա. IX դ. համահայկական Վանի թագավորության ստեղծումով Հայաստանը և հայ ժողովուրդը թևակոխեցին պատմության զարգացման որակապես նոր շրջան: Վերջինս բնորոշվում է մի շարք նվաճումներով: Դրանց թվում առավել կարևոր են զարգացած պետական կառուցվածքը, կրոնական համակարգը, տնտեսական կյանքի բարձր մակարդակը, կազմակերպված ոռոգման համակարգը, գրային զարգացած համակարգը, ճարտարապետության, այդ թվում՝ քաղաքաշինության բարձր մակարդակը:

Ճարտարապետություն: Վանի թագավորության հուշարձանների հնագիտական նյութը հնարավորություն է ընձեռում համակցելու այս շրջանի ճարտարապետության և շինարարական տեխնիկայի առանձնահատկությունները: Քաղաքները հիմնականում փոված էին բարձր բլուրների շուրջը, որոնց գագաթներին վեր էին խոյանում պարսպապատ աշտարակներով միջնաբերդերը: Այստեղ կառուցվել են ջրմուղներ, ջրամբարներ, կամուրջներ, այգիներ ու բաղնիքներ, պալատներ և տաճարներ:

Բրոնզե ցլիկ Արամուսից, Ք.ա. VIII դ.

Որմնանկարներ, Էրեբունի, Ք.ա. VIII դ.

Վանի թագավորությունում կային թագավորանիստ, վարչատնտեսական, ռազմական, ինչպես նաև պաշտամունքային նշանակության քաղաքներ: Թագավորանիստ քաղաքների թվին էին պատկանում ***Արգաշկուն, Տուշպան, Ռուսահինիլին:*** Քաղաքներն իրենց միջնաբերդի շուրջն ունեին մի միասնական տնտեսական միավորում կազմող բազմաթիվ բնակատեղիներ: Ուրարտական վարչատնտեսական խոշոր կենտրոններն էին ***Արգիշտիխինիլին, Թեյշեբաինին, Օշականը, Արամուսը*** և այլն: Ռազմական հենակետային քաղաքները ևս կարևոր նշանակություն ունեին ժամանակի քաղաքաշինական համակարգում: Ստեղծվեցին յուրահատուկ կառույցներ՝ զորանոցներ, ախոռներ, լճակներ, բերդեր, ռազմական ճամբարներ: Բերդերն ունեին մինչև 18 մ բարձրության 2–3 շարք պարիսպներ՝ իրենց աշտարակներով և տեղ-տեղ էլ իրենց առջևում արված խրամատներով:

Հայտնի էին պետության դիցարանի գերագույն երրորդության՝ ***Խալդիի, Թեյշեբայի*** և ***Շիվինիի*** պաշտամունքային կենտրոնները: Գերագույն աստվածության՝ Խալդիի պաշտամունքային կենտրոնը Մուսասիր քաղաքն էր կամ Արդինին: Թեյշեբա աստվածության պաշտամունքի կենտրոնը Կումենու քաղաքն էր՝ Վանա լճից հարավ-արևելք: Շիվինիի պաշտամունքի կենտրոնը մայրաքաղաք Տուշպան էր:

Վանի թագավորության բնակարանային ճարտարապետության մասին առաջին տեղեկությունները պահպանվել են Մ. Խորենացու մոտ և վերաբերում են Տուշպային: Վերջինս, ըստ Պատմահոր հաղորդումների, բավականին մեծ, բարեկարգ, անառիկ մի բերդաքաղաք էր՝ բազմաթիվ երկհարկ և եռահարկ շենքերով: Բազմաթիվ շենքեր են կառուցվել Կարմիր բլուրի, Արագածի միջնաբերդերում: Սեպագիր արձանագրություններում պալատները հաճախ հիշատակվում են պաշտամունքային կառույցների հետ մեկտեղ:

Խոշոր տաճարներն ընդարձակ համալիրներ էին, որտեղ պաշտամունքային կառույցները միավորվում էին աշխարհիկ, տնտեսական, արտադրական ու պահեստային շենքերի հետ:

Վիմափոր կառույցները կազմել են շինարվեստի մի զգալի մասը: Այս կառույցներն ունեին նույնիսկ իրենց հովանավոր աստվածությունը՝ Աիրահինին: Դրանց թվին են պատկանում ժայռափոր սանդուղքները, խորշերը, պաշտամունքային և դամբարանային կարիքներին նվիրված արհեստական քարայրները, թունելները և այլն: Վիմափոր կառույցների առավել նշանակալից հուշարձանները Վան քաղաքի միջնաբերդի շրջակայքում էին:

Ջրանցքաշինությունը գտնվում էր կենտրոնական իշխանության հսկողության ներքո: Այս իմաստով հատկապես հայտնի են Մենուա և Ռուսա արքաների ջրանցքները, որոնք Հին աշխարհի բացառիկ կոթողներից են: Վանի թագավորության շինարվեստը հետագայում մեծ ազդեցություն ունեցավ փոքրասիական և հատկապես իրանական (աքեմենյան) կառուցողական ավանդույթների վրա:



Արգիշտիխինիլի միջնաբերդի մուտքը և պարիսպները. Ք.ա. 776 թ.
Վերակազմությունը՝ Կ. Ղաֆադարյանի

Մետաղագործություն: Վանի թագավորության մետաղամշակման մասին հիշատակվում է Սարգոն II-ի տեքստերում: Նրա զորքերը Մուսասիրում գրավել են 2 տոննա ոսկի, 5 տոննա արծաթ և ավելի քան 100 տոննա պղնձե, երկաթե իրեր: Կարմիր բլուրի մի կացարանից գտնվել է դռան բրոնզե փական, որի վրա պահպանվել է «Ռուսա՝ Արգիշտիի որդի, Թեյշեբաինի քաղաքի ամրոցը» սեպագիր արձանագրությունը:

Մետաղամշակումը լայն կիրառում ուներ նաև ***զենքի*** և ***զինամթերքի արտադրության*** ասպարեզում: Հարձակողական և պաշտպանական զենքը կազմված էր տարբեր ձևերի նիզակներից, դաշույններից, թրերից, կացիններից, գուրզերից: Գտնվել են նաև ոսկուց և արծաթից օրինակներ:

Վանի թագավորության բանակի զինորների զրահը և հանդերձանքը կազմված են եղել մի քանի տեսակներից: Դատելով ***Բալավաթյան*** դարպասների վրա եղած պատկերներից՝ ***Արամու*** թագավորի զինվորները հանդես են գալիս երկար, մինչև ծնկները հասնող գոտեկապ վերնաշապիկներով, գլխներին կատարավոր սաղավարտներով, փոքրիկ վահաններով, զինված են կարճ թրերով և նետ ու աղեղով: Այս նկարագրությունից պարզորեն նկատվում է, որ այստեղ պատկերված են թեթև հետևակի մարտիկները: Ծանր հետևակի սպառազինությունը կազմված էր նաև տարբեր տիպի զրահաշապիկներից, խո-

շոր մարտական վահաններից և բրոնզե գոտիներից: Վերջիններս նախշազարդ են, և բազմաթիվ նմուշներ պահվում են Մյունխենի, Նյու Յորքի թանգարաններում:

Խեցեգործություն և քարե գտածոներ: Ժամանակի խեցեգործ վարպետները պատրաստել են հազարավոր խեցանոթներ, որոնք ունեն բազմաբնույթ կարմրավուն, սև, դեղնավուն մակերես և կիրառական բազմաբնույթ նշանակություն:

Թաղումներից հայտնաբերված անոթների շարքում հանդիպում են սափորների, կարասների, կճուճների խմբեր, որոնք իրենց վրա ունեն անցքեր:

Քարի մշակումը Ուրարտուում բարձր զարգացման էր հասել: Քարը լայնորեն օգտագործվում էր կենցաղում: Գետաքարերից ու տուֆից պատրաստվում էին ծակիչներ, քերիչներ և այլ գործիքներ:

Քարի «փափուկ» տեսակից պատրաստում էին տարբեր ձևերի և չափերի տաշտեր, պանիր քամելու խոշոր ձագարներ, խողովակներ և այլն: Քարը լայնորեն օգտագործվում էր մետաղաձուլման ժամանակ. պատրաստվում էին տարբեր ձուլակաղապարներ և գործիքներ:

Առավել բարդ էր արվեստում քարի օգտագործումը. քարից պատրաստում էին տարբեր քանդակներ: Դրանց թվին են պատկանում տեղական քանդակագործների՝ տուֆից պատրաստած քարե արձանները:

Առավել հետաքրքիր են կնիքները, որոնց վրա պատկերված են հարուստ տեսարաններ՝ կենաց ծառեր, սայլեր և մարտակառքեր, թագավորներ և քրմեր, պալատական տեսարաններ, առյուծներ: Ոչ պակաս տարածում ունեն տարբեր ձևերի և չափերի քարե ուլունքները, որոնց գերակշռող մասը գերազանց հղկված է:

Որմնանկարչություն: Այս շրջանի որմնանկարչությանը բնորոշ է պաշտամունքային, կրոնական և աշխարհիկ բնույթը: Դրանք զարդարել են տաճարների, պալատների և այլ շինությունների պատերը:

Որմնանկարչությունը հիմնականում ներկայացված է ***Կարմիր բլուրի, Ոսկեբլուրի*** և ***Էրեբունու*** նյութերով: Ինչպես ցույց են տալիս Էրեբունու որմնանկարների պահպանված մնացորդները, պալատի կենտրոնական հատվածի բոլոր պատերի պատկերներն իրենց հորինվածքային կառուցվածքով ունեցել են միասնական եզրազարդ՝ կազմված մի քանի շերտերից: Դրանց եզրանախշերին վարդյակներ են՝ արմավենիներով, աստիճանավոր աշտարակներ, սրբազան ծառեր՝ նրանց մոտ կանգնած աստվածներով և պտուղների պատկերով:

Փայտամշակումը և ոսկորի փորագրման արվեստը Վանի թագավորությունում նույնպես բարձր զարգացում ապրեցին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ մշակույթ ձևավորվեց Վանի թագավորության շրջանում:
2. Ճարտարապետական ի՞նչ կառուցվածք ունեին Վանի համահայկական թագավորության քաղաքները: Ի՞նչ առանձնահատկություն ունեին վարչատնտեսական կենտրոնները: Թվեք մի քանի այդպիսի քաղաքներ: Շինարարության ո՞ր ճյուղերն էին զարգացած:
3. Այս շրջանում մետաղամշակման ո՞ր ճյուղերն էին զարգացած: Ինչպիսի՞ն էր Վանի թագավորության բանակի զինվորների սպառազինությունը:
4. Քարի ո՞ր տեսակներն են օգտագործել ուրարտացիները: Ի՞նչ բնույթ ուներ որմնանկարչությունը: Որտե՞ղ են հայտնաբերվել որմնանկարների նմուշներ:

§ 2. ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Համահայկական առաջին թագավորության պետական կրոնը: Վանի թագավորության կրոնն ուսումնասիրելու համար կան երկու հիմնական աղբյուրներ՝ սեպագիր արձանագրությունները և պատկերազարդ հուշարձանները:

Սեպագիր արձանագրությունների հաղորդած տեղեկությունները սահմանափակ են. դրանցում հայտնվում են աստվածների անունները, պատմվում է տաճարների կառուցման մասին, և թվարկվում են զոհաբերությունները:

Բուն կրոնական բնույթի այնպիսի տեքստեր, ինչպիսիք են առասպելները, աղոթքները, մոգական հմայությունները, համարյա թե հայտնի չեն: Պաշտամունքային առարկաներն ու պատկերները լրացնում են գրավոր աղբյուրների տեղեկությունները:

Վանի թագավորության ***դիցարանում կենտրոնական տեղ է գրավում Խալդի աստվածը:*** Նա գերիշխող դիրք ուներ դիցարանում և համարվում էր Երկրի ու թագավորի հովանավոր աստվածը:

Սեպագիր արձանագրություններում, որոնք պատմում են տաճարների շինարարության և նախատեսվող զոհաբերությունների մասին, Խալդիից հետո հիշատակվում են ***Թեյշեբա*** և ***Շիվինի*** աստվածները: Նրանք միասին առանձնանում են մյուս աստվածների շարքից և կազմում են աստվածների գերագույն երրորդությունը: Խալդին պատկերվում էր ռազմիկի կերպարանքով: Նա օգնում էր թագավորին արշավանքի մեկնելիս և օգնում նրան հաղթելու թշնամուն: Խալդի աստծու կինը դիցարանի գլխավոր աստվածուհի Արուբանին էր: ***Մհերի դռան*** արձանագրությունում թվարկվում են Վանի թագավորության աստվածների անունները և նրանց մատուցվող զոհաբերությունները (ցուլեր, կովեր, ոչխարներ, այծեր, գենքեր, գինի և այլն): Աստվածները պատկերվում էին մարդու կերպարանքով, սակայն կարելի է հանդիպել նաև կենդանիներին ու թռչուններին բնորոշ առանձին բաղադրիչների:

Վանի արքաների յուրաքանչյուր արշավանք սկսվում էր արարողությամբ, որի ժամանակ արքան աղոթքով դիմում էր Խալդիին, Թեյշեբային, Շիվինիին և մյուս աստվածություններին՝ բարձրաձայն հայտարարելով արշավանքի ուղղությունը և նպատակը, խնդրելով նրանցից հովանավորություն՝ գործն իր նպատակին հասցնելու համար: Արշավանքի ավարտից հետո հաղթանակած բանակը վերադառնում էր Տուշպա: Արքան Խալդի աստծո տաճարում (նրան ձոնված կոթողի կամ որմնախորշի առջև) բարձրաձայն զեկուցում էր կատարված արշավանքի արդյունքների մասին և հաղթանակը ձոնում Խալդիին: Արքայի խոսքը արձանագրվում էր քարի վրա:

Մհերի դուռը



Երկրագործական-եղանակային և թաղման ծեսերը: Այս ծեսերի կարգի ու անցկացման ժամանակի մասին տվյալներ կան Մհերի դռան արձանագրությունում: Այստեղ հիշատակված են տարվա ընթացքում կատարվելիք երեք տոնակատարությունները՝ կապված այգեգործական աշխատանքների համապատասխան փուլերի հետ: ***Առաջին տոնը*** անցկացվում էր խաղողուտի էտումից հետո: Խաղողի որթի էտումը Հայաստանում սկսվում է մարտ ամսի

վերջին տասնօրյակին և ավարտվում՝ ապրիլ ամսվա առաջին կեսին:

Այս ժամանակ Հայաստանում նշվում էր ***Բարեկենդանի տոնը*** (տոնվում էր մարտ ամսին, տևում էր 1–2 շաբաթ)՝ կապված Նոր տարվա գալստյան հետ:

«Արևի (Շիվինիի) ամսին» էր կարգադրվում զոհեր մատուցել պետության բոլոր աստվածություններին ու «սրբություններին»: Վանի թագավորության «Արևի ամիսը» համապատասխանել է մարտին: Այս առումով ուշագրավ է, որ Բուն հայոց տոմարում ևս մարտ ամիսը ձոնված էր արևին և կոչվում էր Արեգ («Արևի ամիսն»):

Ժամանակի պատկերացումների համաձայն՝ մարդու մահվանից հետո նրա հոգին շարունակում է գոյատևել՝ տեղափոխվելով այս աշխարհից մյուսը: Այդ մասին է վկայում «Հոգիներ տեղափոխող աստծո» պաշտամունքի գոյությունը պետության դիցարանում:

Ուրարտուում կար ժայռափոր դամբարաններում մահացածին թաղելու սովորույթը: Նման գերեզմաններում, որոնք կազմված էին լինում մի քանի սրահներից, դրվել են արքաների ու ազնվականների աճյունները՝ իրենց հագուստով, զենքով, զարդերով ու կատարված զոհաբերություններով: Ժայռափոր դամբարաններ են Վանա ժայռին փորված կառույցները:

Կնիքների վրա կան կենաց ծառի պաշտամունքի հետ կապված արարողությունները պատկերող փորագրություններ: Հետաքրքիր է, որ այդ արարողություններին մասնակցել է նաև արքան՝ ***առյուծի*** ուղեկցությամբ: Վերջինս, ինչպես ենթադրվում է, պահվել է տաճարներում ***որպես սուրբ կենդանի:***

Վանի թագավորության գիրը: Վանի թագավորության գիրը նպաստեց գիտելիքների տարածմանը: Հատկապես շինարվեստում կիրառվող բարդ ու ճշգրիտ հաշվարկներն ու չափումները խթանեցին ամրոցների, բերդերի, ջրանցքների, քաղաքների կառուցմանը: Մաթեմատիկական, երկրաչափական, աստղագիտական հաշվարկները լայն

Արուրանի աստվածուհի. բրոնզ, Ք.ա. VIII–VII դդ.

տարածում ունեցան Վանի թագավորության տնտեսության մեջ:

Վանի թագավորության սեպագրի լեզվի («ուրարտերենի» կամ «բիայներենի») ուսումնասիրության համար հիմնական նյութ են ծառայում տեղական արձանագրությունները: Լրացուցիչ տեղեկություններ կարելի է քաղել ասորեստանյան աղբյուրներից, որտեղ զգալի թվով հատուկ անուններ են վկայված: Որոշակի օգնություն են ցույց տալիս խուռիերենի տվյալները:

Վանի թագավորության շրջանից պահպանվել են ավելի քան ***1000 սեպագիր արձանագրություններ,*** որոնք գրված են քարի, մետաղյա իրերի և կավե սալիկների վրա: Գրում էին ձախից աջ, առանց բառանջատման: Սեպագիր արձանագրությունները միատիպ են և մեծ մասամբ հաղորդում են թագավորների ձեռնարկած արշավանքների, շինարարական աշխատանքների, ձոնման ծեսերի մասին:

Թագավորությունում տարածում ստացած սեպագիր դպրությունը Ք.ա. IX դ. ընդօրինակվել է Ասորեստանից: Ընդ որում՝ փոխ են առնվել ոչ միայն բոլոր նշանները, այլև վերցվածն էլ պարզեցվել է: Մեզ հասած հնագույն արձանագրությունները թվագրվում են ***Ք.ա. IX դ. 30-ական*** թվականներով և պատկանում են Սարդուրի I-ի կառավարման ժամանակահատվածին:

Դրանք կազմված են ասուրերենով: Սակայն արդեն հաջորդ թագավորը՝ Իշպուինին, և նրա ժառանգներն իրենց վիմագիր հաղորդումները կատարում էին տեղական լեզվով:

Առանձին սեպագիր նշաններով արտահայտվել են ձայնավորները, երկձայն և եռաձայն վանկերը: Գաղափարագրերն արտահայտել են ամբողջական բառեր ու հասկացություններ: Դրանց մի տարատեսակն են սահմանիչները (դետերմինատիվներ), որոնց շնորհիվ տարբերակվում են հատուկ անունները: Օրինակ՝ ճշգրտորեն նշվում է՝ «ժողովուրդ», թե «երկիր» է ենթադրվում որոշակի անվան ներքո:

Օտար միջավայրից փոխառված լինելու հետևանքով Վանի թագավորության սեպագիր դպրությունը ճշտորեն չի հաղորդել տեղական լեզվի հնչյունական համակարգը: Ուստի դժվար է որոշել, թե իր ժամանակին ինչպես են արտասանել սեպագիր արձանագրություններում վկայված բառերը, ինչը և զգալիորեն դժվարացնում է լեզվի ուսումնասիրությունը:

Հայտնի են բառապաշարային բնույթի բազմաթիվ ընդհանրություններ և նույնություններ արդի հայերենի հետ (Տուշպա – Տոսպ, Աբիլիանի – Աբեղեանք, Զաբախա – Զավախք, Ծուլուկի – Ծղուկ, Ծուփա – Ծոփք և այլն):

Վանի թագավորության գրագիրները թողել են նաև *մեհենագրային (հիերոգլիֆային)* արձանագրություններ: Մեհենագրային համակարգն ունի բնիկ տեղական ծագում և սերում է Հայաստանի նախնադարյան ժայռապատկերներից: Այն բաղկացած է շուրջ *երեք հարյուր նշաններից*, որոնք գրվել են աջից ձախ, հորիզոնական գրության դեպքում՝ վերից վար՝ առանց բառանջատման: Մեզ են հասել ավելի քան *1500 մեհենագրային արձանագրություններ և մենանշաններ*: Վերծանության առաջին արդյունքների հիման վրա ենթադրվում է, որ մեհենագրային համակարգի լեզուն եղել է հնագույն հայերենը:

Վանի թագավորության հզոր և կատարյալ մշակույթն իր բազմաբնույթ ազդեցությունն է տարածել Հայաստանից դուրս՝ հասնելով Իրան, Կովկաս, Հունաստան և այլ երկրներ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ հիմնական աղբյուրներից են ձևավորվել Վանի թագավորության՝ կրոնի մասին պատկերացումները: Ո՞ր աստվածներն են կազմում Վանի թագավորության դիցարանի գլխավոր եռյակը:
2. Վանի թագավորության ո՞ր ծեսերի մասին կան տեղեկություններ:
3. Ո՞ր գիտություններն էին զարգացած Վանի թագավորությունում:
4. Բացի սեպագրից, ուրիշ ինչ գիր է կիրառվել Վանի թագավորությունում: Քանի՞ սեպագիր և քանի՞ մեհենագիր արձանագրություն է պահպանվել Վանի թագավորության դարաշրջանից: Ի՞նչ լեզուներով էին դրանք գրված:

§ 3. ՀԱՅԿԱԶՈՒՆ-ԵՐՎԱՆԴՈՒՆԻՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Քաղաքաշինություն, ճարտարապետություն: Ք.ա. VI–III դարերը Հայաստանի տնտեսական և քաղաքական զարգացման նոր շրջափուլ են կազմում:

Հայկազուն–Երվանդունիների արքայատոհմի իշխանության ժամանակաշրջանի բնակավայրերի ճարտարապետության մասին կարելի է դատողություններ անել *Էրեբունիի միջնաբերդում* ծավալված շինարարական գործունեության հիման վրա: Ք.ա. VIII դարի տաճարը հետագայում վերակառուցվել է և վերածվել սյունազարդ դահլիճի: Արմատական վերակառուցման ենթարկվելուց հետո սրբազան կրակի մշտական պահպանման վայրի է վերածվել միջնաբերդի պալատի միջին մասը:

Արմավիր քաղաքը: Արարատյան դաշտի արևմտյան մասում՝ Արաքսի ձախ ափին, ձգվում է հրաբխային ծագում ունեցող բլուրների մի շարք, որոնցից ամենաբարձրը՝ Արմավիր բլուրը, ունի 76 մ բարձրություն և գագաթի 2 հա հարթ տարածություն: Բլուրը բնակեցված է եղել հնագույն ժամանակներից, որն ապացուցվում է թե՛ գրավոր աղբյուրներով, թե՛ հնագիտական պեղումներով:

Արմավիրը պարսպապատելով, կառուցապատելով պալատական, պաշտամունքային, աշխարհիկ և տնտեսական բազմապիսի շինություններով՝ այն վեր է ածվել վարչական, տնտեսական և պաշտամունքային նշանակալի կենտրոնի: Ք.ա. VI դարի սկզբներին՝ Վանի թագավորության անկումից հետո, երկրի արևելյան հատվածում կյանքը չի դադարել: Արմավիրը՝ որպես պաշտամունքային կենտրոն և բնակավայր, պահպանել է իր նշանակությունը և Ք.ա. IV դարի վերջում դարձել վերականգնված համահայկական երկրորդ թագավորության մայրաքաղաքը:

Գյուղական բնակավայրեր: Դարաշրջանի գյուղական բնակարանների պատկերավոր նկարագրությունը թողել է հույն զորավար և պատմիչ ***Քսենոփոն Աթենացին,*** որը ***Ք.ա. 401 թ. անցել է Հայաստանով:*** Հարավային Հայաստանի տները, ի տարբերություն կենտրոնական շրջանների բնակարանների, աշտարակավոր էին, որը պայմանավորված էր պաշտպանական նպատակներով: Այլ էր Հայաստանի կենտրոնի և հյուսիսի գյուղական բնակավայրերի համայնապատկերը: Այս շրջանների բնակավայրերը կիսագետնափոր էին և ունեին երկու մուտք: Մեկով իջնում էին մարդիկ, իսկ երկրորդը նախատեսված էր անասունների համար: Այդ տիպի տները հայկական ժողովրդական բնակարանի՝ գլխատան նախատիպն են ներկայացնում:

Նյութական մշակույթ, առևտուր: Պատմաշրջանի նյութական մշակույթը բնութագրում են պեղումներից հայտնաբերված նյութերը: Խեցեգործությունը ներկայացված է սափորներով, անոթներով և ըմպանակներով, որոնք իրենց զուգահեռներն ունեն Հայաստանին հարակից ընդարձակ տարածաշրջանում (Փոքր Ասիա, Այսրկովկաս, Իրան) ու կապող օղակ են Վանի թագավորության և հելլենիստական դարաշրջանի կավագործական արտադրանքի միջև: Մետաղագործությունը ներկայացված է զինագործական արտադրանքով և հասարակական զարդերով: Հայաստանում գտնվել են նաև արծաթյա ամանեղենի բազմաթիվ նմուշներ, մասնավորապես այս ժամանակաշրջանում լայն տարածում ստացած պտյակներ: Դրանք եղջյուր հիշեցնող անոթներ են, որոնք ներքևի մասում կենդանակերպ են:

Արհեստագործական արտադրանքի նյութական ձևերը, որոնք հանդիպում են երկրով մեկ, թույլ են տալիս խոսելու զարգացած առևտրական կապերի մասին: Շրջանառության մեջ էին զենքը, զրահը, խեցեղենի որոշ տեսակներ, զարդեր:

Որոշ տվյալներ կան նաև Ք.ա. VI–III դդ. դրամական շրջանառության վերաբերյալ: Այդ երևույթի իրեղեն ապացույցներն են աքեմենյան սիկղը՝ գտնված նախկին Երևանի նահանգում, Սիսիանի՝ Ք.ա.VI–III դդ. ատտիկյան չորեքդրամյանը և Էրեբունիում հայտնաբերված՝ Ք.ա. V դարով թվագրվող միլեթյան դրամները:

Հայաստանի արևմտյան մասերն այդ դարերում ընդգրկված էին տարածաշրջանային առևտրի ոլորտը և ավանդական առևտրական ուղիներով կապված էին Միջագետքի ու փոքրասիական շուկաների հետ: Առևտրական կապերի լրացուցիչ վկայությունն է Հերոդոտոսի հաղորդումը Հայաստանից գինի արտահանելու մասին:

Հայոց հին հավատալիքները: Հնագույն ժամանակներից են սկզբնավորվում բնության անշունչ առարկաների և երևույթների ոգեղենացումը, դրանց և մարդու, ինչպես նաև կենդանիների միջև պատկերացվող խորհրդավոր կապերի, փոխադարձ կերպարանափոխումների հավա-

Արծաթե գավաթ. Քարաշամբ.
Ք.ա. XXII–XXI դդ.

տալիքը: Այդ շրջանին են վերաբերում հայոց մեջ գոյատևող լեռների, ժայռերի, ջրի, հրի, երկնքի ու երկնային լուսատուների, մթնոլորտային երևույթների անձնավորման, կենդանիներին ու թռչուններին մարդկային հատկանիշների վերագրման, դրանց պաշտամունքի փաստերը հավաստող առասպելական զրույցներն ու հավատալիքները: Հայոց լեռներն անձնավորվել են եղբայրների, Մասիսն ու Արագածը՝ քույրերի, Անդոկը, Մարութասարը, Մռավ լեռը՝ մարդակերպ հսկաների, Տավրոսն ու Զագրոսը՝ ցուլի և վիշապի կերպարներում:

Մարդիկ իրենց տոհմի կամ ցեղի ծագումը կապում են կենդանիների, բույսերի, երբեմն էլ բնության առարկաների՝ տոտեմական հավատալիքների ու տոտեմական նախնիների պաշտամունքի հետ: Դրանց վերապրուկներն են հայոց մեջ Երվանդի և Երվազի ցլային, Սանասարի և Բաղդասարի ջրային, Արծրունիների արծվային սերման մասին առասպելական զրույցները:

Բնության տարրերից հայոց մեջ հատուկ պաշտամունքի առարկաներ են եղել ***կրակը, ջուրը, ժայռերը,*** բույսերից՝ որոշ ծառեր ու ծաղկատեսակներ, որոնց պաշտամունքի հիշատակը պահպանվել է անգամ ուշ ավանդության մեջ: ***Օջախը*** հենց տան կրակարանն է ***(ընտանիքի խորհրդանիշ)***՝ թոնիրը, ուր մշտավառ, անթեղված էր պահվում կրակը: ***Թոնիրն ընտանիքի մեծագույն սրբավայրն էր:*** Նրա կողքին էին կատարվում ծիսաընտանեկան արարողությունները (կնունք, ամուսնություն): Առավել ուշ շրջանում կրակի պաշտամունքը մտնում է պաշտոնական կրոնական համակարգի մեջ, դառնում հայ հեթանոսական կրոնի կարևոր բաղադրիչ: Կրակի պաշտամունքատեղին՝ բագինը, կոչվում էր ***հուր-բակ,*** դրա վերապրուկներից են Մեհեկան (արդի փետրվար) ամսի կեսերին Տրնդեզի ծիսական խարույկը վառելու և դրան առնչվող սրբազան արարողությունները:

Ջրի պաշտամունքի հետքերը պահպանվել են հրաշագործ ձկների մասին պատմվող առասպելական զրույցներում: Ջրակունքների կամ արհեստական ոռոգման առուների մոտ կանգնեցվել են ձկնակերպ ***«Վիշապ»*** քարակոթողներ: Ջրի հետ է կապվում նաև բույսերի, հատկապես ծառերի, բուժիչ խոտերի ու ծաղիկների, ինչպես նաև հացաբույսերի պաշտամունքը: Պաշտվող ծառերից են սոսին, որի սաղարթների սոսափյունից հնում Արմավիրի քրմերը գուշակություններ էին կատարում: Ծառերն ունեցել են իրենց հատուկ նվիրական օրը՝ ***Ծաղկազարդը*** (ժող. լեզվում՝ Ծաղկազարդար), իսկ ջուրն ու ծաղիկները՝ իրենց տոնը՝ ***Համբարձումը*** (ժող. լեզվում՝ Ծաղկամոր տոն), որոնք երկուսն էլ հետագայում հարմարեցվեցին քրիստոնեական տոնացույցին:

Առասպելները: Առասպելներն ու վիպական գրույցները արժեքավոր աղբյուր են հայերի վաղնջական հավատալիքները և հնագույն աստվածների դիցարանը հետազոտելու համար: Առասպելներն արտացոլում են ժողովրդի աշխարհայացքը, պատկերացումները բնության, հասարակության մասին և հնագույն գրականության ուշագրավ տեսակներից են:

Հայկական ամենանշանավոր առասպելներից է ***Հայկի*** և ***Բելի մասին զրույցը:***

Որոշ տարբերություններով այն ավանդված է Մ. Խորենացու «Հայոց պատմությունում» և Անանուն պատմիչի երկում, որը, որպես ներածություն, կցված է Սեբեոսի «Պատմությանը»: Նրա արձագանքներն առկա են նաև Անանիա Ծիրակացու աշխատություններում: Այստեղ Հայկը հանդես է գալիս որպես ազատասեր ու ըմբոստ հսկա, որը մերժում է հնազանդվել բռնակալ Բելին և հեռանալով Բաբելոնից՝ հաստատվում է Հայքում: Ճակատամարտում սպանելով իր դեմ արշաված Բելին՝ Հայկը հաստատում է իր երկրի անկախությունը: Հայկի անունից երկիրը կոչվում է Հայք:

Վերոհիշյալ պատմական երկերում ամբողջական ձևով պատմվում է նաև ***Արա Գեղեցիկի և Շամիրամի առասպելը:*** Այն այնպիսի լայն տարածում է ունեցել, որ նրա որոշ հատվածներ արտացոլվել են նաև անտիկ հեղինակների երկերում, մասնավորապես նշանավոր Պլատոնի «Հանրապետություն» աշխատությունում: Մ. Խորենացին ավանդել է նաև ***Արամի, Տորք Անգեղի*** առասպելները:

Հայոց պատմության հնագույն դրվագները ներկայացված են հին հայկական ժողովրդական վեպում: Այն պատմում է պատմական անցուդարձի մասին, սակայն ժամանակագրական մեծ շեղումներով և հաճախ միահյուսված առասպելների հետ: Հնագույններից է Տիգրան Երվանդյանի և Աժդահակի վեպը, որը առասպելախառն հիշողություն է հայերի ու մարերի փոխհարաբերությունների մասին:

Դիցարանը: Հայկական դիցարանը զարգացման, համակարգման, աստվածությունների պաշտամունքի կանոնարկման նոր աստիճան է թևակոխում համահայկական պետականությունների ամրապնդման ժամանակաշրջանում: Հին ընդհանուր հնդեվրոպական և ցեղային աստվածությունները շարունակում են գոյատևել ազգային ավանդության մեջ նոր մակարդակով՝ իրրև յուրային վիպականացած պատմական հերոսներ, ցեղային նախնիներ (Թորգոմ, Տորք, Հայկ, Արամ, Արա, Տիգրան Երվանդյան), իսկ նրանց դիվական հակառակորդները՝ իբրև օտար բռնակալներ (Բել, Ներրովթ, Շամիրամ, Աժդահակ):

Հայոց հնագույն ապրվածը Հայկն էր, որի պաշտամունքի արմատները հասնում են մինչև տոհմատիրական հասարակության ժամանակները: Հայկը նախապես հանդես է եկել որպես հսկա որսորդ: Նրա անունով էլ կոչվեց Օրիոնի համաստեղությունը: Հայկը խորհրդանշել է հայ ժողովրդի պայքարը օտար բռնակալության դեմ՝ հանուն իր ազատության և անկախության:

Հայերի ***Տորք*** աստծո պաշտամունքը տարածված է եղել նաև փոքրասիական մի շարք ժողովուրդների շրջանում: Խեթական թագավորությունում նա հայտնի էր Տարքու անունով և կարևոր տեղ էր գրաղեցնում դիցարանում: Մ. Խորենացու ավանդած առասպելում Տորքը կոչվում է Անգեղ, այսինքն՝ «Տգեղ», բայց «Անգեղյա» հնագույն ժամանակներում նշանակել է «Անգեղի սերնդից», Անգեղտուն գավառից: Անգեղը ևս հայկական հնագույն աստվածների թվին է պատկանում, իսկ նրա անունը տոտեմական ծագում ունի և կապված է անգղ թռչունի հետ:

Պաշտամունքային արձանիկ

Արան տեղական ծագում ունեցող հնագույն աստված է: Նախապես նրա պաշտամունքն կապված է եղել երկրագործության, ցանքի և գարնան աճող բուսականության հետ: Մեռնող ու հարություն առնող աստվածների պաշտամունքը լայնորեն տարածված էր Հին Արևելքում, և Արայի կերպարն իր զուգահեռներն ունի հնագույն շատ ժողովուրդների դիցարանում:

Մի շարք աստվածությունների պաշտամունքը, որի մասին մենք տեղեկություններ ունենք, սկսվել է հնագույն շրջանում, բայց տարածում է ստացել Հայաստանում պատմության հետագա շրջաններում: Դրանցից են Անահիտը, Արամազդը, Միհրը, Տիրը և ուրիշ աստվածներ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ փոփոխություններ են տեղի ունեցել Ք. ա. VI–III դարերում Հայաստանում: Որտեղ են հայտնաբերվել այդ դարաշրջանի բնակավայրեր: Որտեղ է գտնվել Արմավիր քաղաքը:
2. Ք.ա. VI–III դարերի նյութական մշակույթի ինչ նմուշներ են հայտնաբերվել: Ք.ա. VI–III դարերի առևտրական կապերի մասին ինչ վկայություններ կան:
3. Ինչ տոներ են եղել՝ նվիրված ծառերին, ջրին և ծաղիկներին: Քրիստոնեական որ տոներին են դրանք հարմարեցված:
4. Ինչ են իրենցից ներկայացնում առասպելները և հին հայկական ժողովրդական վեպը:
5. Ներկայացրեք հայոց հին դիցարանը: Հայոց դիցարանի աստվածներն ինչ համարժեքներ ունեն այլ ժողովուրդների դիցարաններում:

Թեմա 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԵԼԼԵՆԻԶՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

§ 1. ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Հայկական մշակույթի զարգացման առանձնահատկությունները: Հայաստանը, պայմանավորված իր աշխարհագրական դիրքով, խաչմերուկ և կապող օղակ է եղել Արևելքի ու Արևմուտքի միջև: Արդյունքում հայ մշակույթը մշտապես փոխազդել է այլոց մշակույթների հետ՝ պահպանելով իր ինքնատիպությունը և եզակիությունը:

Հայկական մշակութային աշխարհին միշտ բնորոշ է եղել արտաքին աշխարհի և նորամուծությունների նկատմամբ բաց լինելը: Ընդ որում՝ ներմուծված երևույթը հայկական միջավայրին հարմարեցվելուց և յուրացվելուց հետո իր արժանի տեղն է գրավել ազգային մշակույթի ավանդական արժեքների կողքին:

Փոխազդման երևույթին ականատես ենք լինում Վանի թագավորության շրջանում և ավելի մեծ չափով՝ Ք.ա. III դարից, երբ Հայաստանում սկսվում է ***հելլենիստական ժամանակաշրջանը***, որը տևում է վեց դար՝ մինչև քրիստոնեության պետական կրոն հռչակելը:

Այս ժամանակաշրջանում և դրանից հետո հայկական մշակույթի պատմության մեջ տեղի ունեցավ շրջադարձ դեպի արևմուտք՝ ի տարբերություն նախորդ դարաշրջանների, երբ հայկական մշակութային աշխարհն ավելի զարգանում էր՝ կապված արևելյան միջավայրի հետ: Ընդ որում, եթե հելլենիզմի դարաշրջանում հայոց ազգային մշակույթն առնչվում էր հունահռոմեական աշխարհի հետ, ապա IV–V դարերից սկսած՝ հայկա-

կան քրիստոնեական մշակույթն ավելի հաղորդակից դարձավ միջերկրածովյան քրիստոնեական աշխարհի մշակույթին: Հետագայում արևմտյան (եվրոպական) քաղաքակրթության հետ շփումներն ավելի խորացան, և ոչ պատահականորեն հայերին երբեմն կոչում էին *«Ասիայի եվրոպացիներ»*...

Արտաքին աշխարհի հետ հարաբերվելու դրական հատկանիշը երբեք չլքեց մեր ժողովրդին, անգամ հայոց թագավորության անկումից դարեր անց, երբ շատ հայեր օտար երկրներում հաստատված գաղթավայրերում զբաղվում էին վաճառականությամբ:

Այսպիսով՝ հայ մշակույթը, որն անցել է հազարամյակների ճանապարհ, բացառիկ դերակատարում է ունեցել մեր ժողովրդի կյանքում՝ ծառայելով և՛ իբրև ազգապահպանման միջոց, և՛ իբրև շրջակա աշխարհի հետ հաղորդակցության լեզու:

Հելլենիստական դարաշրջանը և Հայաստանը: Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներով, ինչպես գիտեք, սկսվեց հելլենիզմի (հունականության) դարաշրջանը: Հելլենական մշակույթը թափանցեց Հին Արևելքի երկրներ, իսկ Արևմուտքում ծանոթացան արևելյան մշակութային նվաճումներին: Տեղական մշակույթները սերտաճեցին և միաձուլվեցին հունական դասական մշակույթի հետ: ***Երկու մշակութային շերտերի համաձուլվածք լինելով էլ պայմանավորված է փարթեր երկրների հելլենիստական մշակույթների փարթերությունը:***

Հայկական հելլենիզմի պատմությունն ընդունված է բաժանել ***երկու փուլի:*** Առաջինն ընդունված է կոչել «բուն հելլենիստական» ժամանակաշրջան, որում հատկապես նշանակալի դեր խաղացին Արտաշեսյան արքաների ձեռնարկումները: Երկրորդ փուլն ընդգրկում է մեր թվարկության I–III դարերը և ընդունված է համարել «ուշ հելլենիզմի» դարաշրջան:

Հելլենիզմի ժամանակաշրջանում Հայաստանում ակնառու է մշակույթի երկու հիմնական շերտ: Առաջինն ավանդական, տեղական մշակութային շերտն էր, որը տարածված էր սովորական ժողովրդի, հատկապես գյուղական բնակչության շրջանում: Երկրորդը հելլենիստական շերտն էր, որի կրողները գլխավորապես վերին խավերի և քաղաքային ազատ բնակչության ներկայացուցիչներն էին:

Թե՛ հելլենիստական մշակույթը և թե՛ հունարենը Հայաստանում տարածում գտան գերազանցապես արքունիքում և ավագանու շրջանում: Հասարակ ժողովրդի մեջ այն գրեթե տարածում չունեցավ: Հելլենիզմի դարաշրջանը հարստացրեց մեր ազգային մշակույթը:

Հայոց դիցաշխարհը և կրոնական պատկերացումները: Ինչպես Վանի թագավորության օրոք, այս ժամանակաշրջանում ևս դիցարանը ղեկավարում է աստվածների գերագույն եռյակը, սակայն այլ կազմով՝ հայր ***Արամազդը,*** մայր դիցուհի ***Անահիտը*** և քաջն ***Վահագնը:*** Աստվածային գերագույն եռյակի պաշտամունքը բնիկ ինդեվրոպական երևույթ է և հայոց մեջ ունի վաղնջական ակունքներ:

Դիցարանի գլուխ կանգնած էր հայր աստված Արամազդը՝ արարիչը երկրի և երկնքի, մարդկանց բարօրություն, լիություն և արիություն շնորհողը: Արամազդի պաշտամունքին նվիրված էին բազմաթիվ տաճարներ ամբողջ Հայաստանում: Նրա պաշտամունքի գլխավոր կենտրոնը Բարձր Հայք նահանգի Դարանաղյաց գավառի Անի ամրոցում էր: Մատենագրական տեղեկություններից հայտնի է, որ այստեղ էին հուղարկավորվում հայոց արքաները:

Մայր դիցուհի Անահիտը հայոց դիցարանում մայրության, պտղաբերության ու արգասավորության դիցուհին էր, ***«մեր ազգի փառքն ու կենսատուն»:*** Նրան մեծարում էին *«Ոսկեմայր»* տիտղոսով: Պաշտամունքի գլխավոր կենտրոնը Բարձր Հայք նահանգի Եկեղյաց գավառի Երիզա (Երզնկա) ավանն էր: Եկեղյաց գավառը Անահիտ դիցամոր պաշտամունքի շնորհիվ կոչվում էր նաև «Անահտական»: Կային բազմաթիվ այլ կենտրոններ ևս, հատկապես նշանավոր էր Արտաշատում գտնվող Անահտական տաճարը:

Արամազդ գերագույն աստծո արձանի գլուխը Նեմրութի սրբավայրում

Վահագն աստծո արձանի գլուխը Նեմրութի սրբավայրում

Հին հայոց մեջ առավել սիրված աստվածներից էր Վահագնը՝ ռազմի, քաջության և ամպրոպի աստվածը: Ըստ մի մատենագրական տեղեկության՝ Վահագնը հնում պաշտվել է որպես արեգակի աստված: Վահագնի գլխավոր մեհյանը Տուրուբերան (Տարնո աշխարհ) նահանգում էր՝ Աշտիշատում: Մովսես Խորենացու գրառման շնորհիվ մեզ է հասել Վահագնի ծննդյան օրհներգը, որ ոչ միայն հայ, այլև համաշխարհային գրականության գլուխգործոցներից է.

Երկնէր երկին, երկնէր երկիր,
Երկնէր և ծովն ծիրանի,
Երկն ի ծովուն ունէր և զկարմրիկն
եղեգնիկ.
Ընդ եղեգան փող ծուխ եղանէր,
Ընդ եղեգան փող բոց եղանէր.
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ
պապանձեկիկ.
Նա հուր հեր ունէր,
Ապա թէ բոց ունէր մորուս,
Եւ աչկունքն էին արեգակունք:

Գլխավոր աստվածություններից էր ***Աստղիկը***՝ երկնային լույսի, սիրո և գեղեցկության դիցուհին, որին էլ նվիրված է Վարդավառի տոնը: Համարվել է Վահագնի կինը կամ սիրուհին, և Աշտիշատում գտնվող նրա մեհյանը կոչվում էր «Սենյակ Վահագնի»: Ըստ ավանդության՝ Աստղիկ դիցուհին սիրում էր լողալ Մեղրագետում, իսկ հայոց քաջերը բարձրանում էին լեռները՝ հիանալու նրա գեղեցկությամբ: Նրանց աչքերից ծածկվելու համար Աստղիկը լեռները պատում էր մշուշով, և այդ պատճառով էլ տարածքը կոչվեց Մուշ և Մշո դաշտ:

Սիրված դիցուհի էր ***Նանեն***՝ ընտանեկան հովանավորը: Ըստ որոշ ուսումնասիրողների՝ վաղ ժամանակներում եղել է նաև ռազմի դիցուհի: Նրա պաշտամունքի գլխավոր կենտրոնը Բարձր Հայքի Դարանաղյաց գավառի Թիլ ավանում էր:

Հայոց մեջ մշտապես սիրելի աստվածներից էր ***Արեգ-Միհրը***՝ արևի, լույսի, կրակի և արդարության աստվածը: Ըստ հայոց հավատքի՝ Արեգակի սրտում ապրում էին 365 սրբեր, որոնցից յուրաքանչյուրը տարվա մեկ օրը արդարությունն էր պահպանում երկրի վրա: Այդ սրբերը վկայակոչվում էին չարը խափանելու նպատակով: Ավանդության համաձայն՝ Արեգակը մշտամանուկ է, որն ամեն երեկո սուզվում և ամեն առավոտ դուրս է գալիս Վանա լճից, որի կապույտ ջրերի խորքում էր նրա ոսկյա ննջարանը: Արևի պաշտամունքի գլխավոր կենտրոնը եղել է Բարձր Հայքի Երնջակ գավառի Բագառիժ ավանում: Արևի պաշտամունքի վայրեր կային գրեթե բոլոր գավառներում:

Տիրը դպրության աստվածն էր: Նա համարվել է Արամազդի քարտուղարը, գրի ու գրականության, արվեստի և գիտության

Անահիտ աստվածուհու գլուխը. Ք.ա. II–I դդ., Լոնդոն, Բրիտանական թանգարան

հովանավոր աստվածը: Պաշտամունքի գլխավոր կենտրոնը Արտաշատի մոտ՝ Երազամույն կոչված վայրում էր:

Հայերն աշխարհի հազվագյուտ ժողովուրդներից են, որ երկրպագել են հյուրընկալության հատուկ աստծո՝ ***Վանապրուրին:*** Հյուրընկալության հազարամյակների ավանդույթն այսօր էլ խիստ կենսունակ է հայոց մեջ:

Հելլենիզմի դարաշրջանում հայկական աստվածությունները համադրվել են հունականների հետ (Արամազդ–Զևս, Անահիտ–Արտեմիս, Վահագն–Հերակլես, Աստղիկ–Ափրոդիտե, Արեգ–Միհր–Հելիոս, Տիր–Ապոլոն և այլն): Սակայն օտար աստվածությունների ո՛չ անունները, ո՛չ էլ պաշտամունքը չարմատավորվեցին հայ ժողովրդի մեջ և շուտով մոռացվեցին:

Հայաստանում տարածում չի ունեցել նաև պարսից կրոնը՝ զրադաշտականությունը: Վերջինս դուալիստական (երկմիասնական) կրոն էր, այսինքն՝ այս կրոնի հետևորդները հավատում էին, որ գոյություն ունեն համազոր երկու գերագույն աստվածներ՝ չար և բարի: Հայերը երբեք չեն ունեցել չար աստված: Հայոց դիցամտածողության մեջ չար ուժերը ոգիների մակարդակից վեր չեն դասվել:

Դեռևս վաղնջական ժամանակներում ձևավորված կրոնական վաղագույն ըմբռնումները՝ բնապաշտությունը, ոգեպաշտությունը, հմայական մոգությունը, շարունակում էին գոյատևել նաև հելլենիստական դարաշրջանում:

Հայոց նախաքրիստոնեական կրոնի ուսումնասիրության առումով մեծ արժեք ունի հայկական տոմարը: Հայոց աստվածների և նշանավոր սրբավայրերի անուններով են կոչվել հայոց օրանուններից շատերը:

Ի մի բերելով հայոց հին հավատքի մասին մեր գիտելիքները՝ կարելի է առանձնացնել դրա բնորոշ գծերը:

ա) Հայոց դիցարաններին միշտ բնորոշ է եղել միակենտրոնությունը՝ Արարիչ գերագույն աստծո գլխավորությամբ:

բ) Հայոց դիցարանը բաղկացած էր ազգակից աստվածներից (ինչպես հունական Օլիմպոսը), այսինքն՝ դիցարանը ներկայանում էր իբրև աստվածային ընտանիք, ինչով ընդգծվում էր ընտանիքի դերը երկրի ու ժողովրդի կյանքում:

գ) Հայոց դիցարանները ղեկավարվում էին գերագույն եռյակի կողմից: Դա հայ իրականության մեջ հեշտացրեց քրիստոնեության ընկալումը, քանի որ հին աստվածների գերագույն եռյակի երեք անձերը (Հայր աստված, Մայր դիցուհի, Որդի աստված, որն արեգակնային բնույթ ուներ) քրիստոնեության մեջ փոխարինվեցին Սուրբ երրորդությամբ՝ Հայր Աստված, Սուրբ Հոգի և Որդի Աստված՝ Հիսուս Քրիստոս:

դ) Մեր հին հավատքում չկան չար կամ չարագործ աստվածներ. չար ուժերը ոգիների մակարդակից չեն բարձրացվել:

ե) Մեծարվել են լույսը, ընտանիքը, գիտությունները, արվեստներն ու ամենայն բարին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն է հայկական մշակույթի գլխավոր առանձնահատկությունը: Ինչո՞ւ են հայերին երբեմն անվանում «Ասիայի եվրոպացիներ»:
2. Երբ է սկզբնավորվել հելլենիզմը: Ինչո՞վ է պայմանավորված տարբեր երկրների հելլենիստական մշակույթների տարբերությունը: Ի՞նչ փուլերի է բաժանվում հայկական հելլենիզմը:
3. Ո՞վ էր գլխավորում հայոց դիցարանը, որտե՞ղ էր նրա պաշտամունքի գլխավոր կենտրոնը: Ո՞րն է եղել Անահիտի պաշտամունքի գլխավոր կենտրոնը: Վահագնին նվիրված ի՞նչ ստեղծագործություն է պահպանվել: Ի՞նչ ավանդազրույց է պահպանվել Աստղիկ դիցուհու մասին: Նշե՛ք հայոց դիցարանի մյուս աստվածներին և նրանց պաշտամունքային կենտրոնները:
4. Հելլենիստական շրջանում կրոնական ի՞նչ ըմբռնումներ էին պահպանվել նախորդ շրջանից: Չար ուժերի նկատմամբ ի՞նչ վերաբերմունք են ունեցել հայերը:

§ 2. ԳԻՐԸ, ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՈՄԱՐԸ

Հայ հին դպրությունը. հայկական մեհենագրությունը և օտար գրահամակարգերի կիրառումը: Հելլենիստական դարաշրջանի Հայաստանի հնավայրերից հայտնաբերվել են մեծ թվով արձանագրություններ: Այդ շրջանում Հայաստանում առկա գրավոր մշակույթի մասին պահպանվել են նաև մատենագրական տեղեկություններ: Դրանք վկայում են, որ Հայաստանում շարունակել են կիրառել տեղական մեհենագրությունը հայոց լեզվով: Օգտագործել են նաև օտար ծագում ունեցող այբուբեններ, որոնք ներմուծվել էին մեր նախնիների կողմից և կիրառվում էին մեհենագրությանը զուգահեռ:

Հայկական ***մեհենագրությունը*** զարգացման բարձր մակարդակի է հասել Վանի թագավորության ժամանակաշրջանում, երբ գրային համակարգը բաղկացած էր շուրջ 300 մեհենանշաններից (հիերոգլիֆներից): Մեհենագրության լեզուն հնագույն հայերենն է:

Ք.ա. VI դարից մինչև քրիստոնեության ընդունումն ընկած ժամանակաշրջանը պետական գրագրության մեջ օգտագործվել են օտար այբուբեններ, իսկ հայալեզու մեհենագրերի կիրառությունը սահմանափակվել է հիմնականում մեհյաններում: Դրա պատճառն այն է, որ մեհենագրային համակարգը բաղկացած էր շուրջ 300 նշաններից և չվերածվեց այբուբենի, մինչդեռ օտար ծագում ունեցող այբուբենները բաղկացած էին 22 (արամեական, պահլավական, ասորական) կամ 24 (հունական) տառերից և ավելի գործնական էին ամենօրյա կիրառության համար:

Քրիստոնեության ընդունումից առաջ հայալեզու նշանագրերի կիրառության մասին է վկայում *հույն պատմիչ Փիլոստրատը (II–III դդ.), ըստ որի՝ հայոց Արշակ I արքայի օրոք (34–35 թթ.) կիրառվել է հայալեզու և հայագիր դպրություն:*

Մեկ այլ հույն մատենագիր 234–235 թթ. գրված «Ժամանակագրություն» աշխատության էջերում հայերին հիշատակում է ***սեփական դպրություն ունեցող*** ժողովուրդների շարքում:

Ապարանի հունարեն արձանագրությունը

Նույնպիսի վկայություններ են պահպանվել ***Ագաթանգեղոսի*** «Հայոց պատմության» էջերում, որոնցից տեղեկանում ենք հայալեզու նշանագրության գոյության մասին: Նա հաղորդում է նաև բացառիկ կարևոր տեղեկություն այն մասին, որ նախաքրիստոնեական Հայաստանում պաշտվել է դպրության հատուկ աստված՝ Տիրը: Հասկանալի է, որ սեփական գիր ու դպրություն չունեցող ժողովուրդը չէր կարող պաշտել դպրության աստծո:

Մովսես Խորենացին հաղորդում է, որ II–III դարերում ***Դարանաղյաց Անի ամրոցում*** գոյություն է ունեցել ***մեհենական պատմագրության արխիվ,*** որից ասորի մատենագիր Բարդածանը թարգմանություններ է կատարել ասորերեն ու հունարեն (նշանակում է՝ դրանք գրված էին հայերեն):

Գևորգ Ասորին, որն ասորական մատենագրության ականառու դեմքերից է, գրում է, որ Գրիգոր Լուսավորիչը «տղայության հասակում» Հայաստանում սովորել է հայոց գիրն ու լեզուն:

Քրիստոնեության՝ պետական կրոն հռչակումով նախորդ կրոնի հետ ***արգելվեց հայկական մեհենագրության գործածությունը:***

Ք.ա. III դարից սկսած՝ Հայաստանում ***կիրառվում է հունարենը***՝ իր այբուբենով:

Հունարեն արձանագրություններից կարևոր են հատկապես Արմավիրից հայտնաբերված յոթ հատվածները, որոնցում առկա են ողբերգությունների հատվածներ:

Տրդատ I–ից մեզ են հասել Գառնիի և Ապարանի հունարեն արձանագրությունները, որոնցից առաջինի մասին արդեն խոսվել է: Երկրորդն արձանագրված թագավորական պարգևագիր է, որով Մեծ Հայքի արքան Գնթունյաց տոհմին է շնորհում Նիգ գավառը (ներկայիս Ապարանի շրջանի տարածքը):

Ամենայն հավանականությամբ Տրդատ III-ի կառավարման մինչքրիստոնեական շրջանում (287–301 թթ.) է գրվել Տիգրանակերտի հունարեն մեծ արձանագրությունը, որից հատվածներ են պահպանվել պարսպի մեջ պահպանված ութ մեծ քարերի վրա:

Հունարենով մակագրություններ կան նաև հայոց արքայական դրամների մեծ մասի վրա, որոնք թվագրվում են Ք.ա. III–I դարերով:

Հունարենը հելլենիստական շրջանից հետո՝ IV դարում, լայն կիրառություն է ստանում Հայաստանում հատկապես քրիստոնեության քարոզչության նպատակով:

Հայաստանից հայտնաբերված ***արամեական այբուբենով (22 տառ, աջից ձախ գրությամբ)*** արձանագրությունները թվագրվում են Ք.ա. II–ից մինչև Ք.հ. II դարերով: Սևանա լճի ավազանից, Սիսիանի, Սպիտակի և Դիլիջանի շրջաններից հայտնաբերվել են մեկ տասնյակից ավելի արամեատառ քարագիր կոթողները, որոնք ընդունված է համարել սահմանաքարեր: Արամեատառ գրություններ են պահպանվել նաև արծաթե ու լազուրիտե թասերի, կնքաղրոշմների և դրամների վրա:

Քրիստոնեության պետականացումից հետո արքունի գրագրության, հոգևոր քարոզչության և ուսման ասպարեզներում Տրդատ III–ի հրամանով հունարենին զուգահեռ ***կիրառվել է ասորերենը:*** 387 թ. Հայաստանի բաժանումից հետո Արևելյան Հայաստանում արքունի գրագրության մեջ գործածվում է ***պահլավերենը*** (միջին պարսկերենը): Թե՛ ասորական և թե՛ պահլավական գրերի հիմքում ընկած է արամեական այբուբենը:



Հատված Խորխորոյան տարեգրությունից

Հայկական լեռնաշխարհի տարբեր հնավայրերից գտնված օտար գրավոր հուշարձանների մեջ մեծ թիվ են կազմում լատիներեն արձանագրությունները, որոնք թողել են հռոմեացիները:

Հազարամյակների ընթացքում Հայկական լեռնաշխարհում ստեղծված գրավոր մշակույթը չէր կարող անհետևանք կորչել, և մաշտոցյան դպրության կատարելությունը պայմանավորված էր նաև նախամաշտոցյան շրջանում արմատավորված գրային մտածողությամբ: Հայտնի է, որ բազմաթիվ հայ և օտարազգի հայագետներ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը բնորոշել են որպես «թարգմանությունների թագուհի», ինչն անհնարին էր առանց երկարատև գրավոր մշակույթի առկայության: Հայտնի է նաև, որ բանավոր լեզվի, ասենք՝ բարբառի բառապաշարը սովորաբար չի անցնում 7–8 հազարից, իսկ գրավոր լեզվի բառա-

պաշարը երբեմն մի քանի տասնյակ անգամ ավելի է լինում: Գրաբարում ավանդված բառապաշարն անցնում է 60 հազարից: Այսինքն՝ գրաբարի բառապաշարը ևս վկայում է հօգուտ հայերենի՝ նախամաշտոցյան շրջանում երկարատև գրավոր մշակման ենթարկված լինելու մասին:

Հայ պատմիչները վկայում են նաև 22 տառից բաղկացած *«Դանիելյան գրերի»* մասին:

Պատմագրությունը և գրականությունը: Հայաստանի վաղ պետական կազմավորումներն ունեցել են արքունի գրագրություն, հետևաբար նաև արքայական գրագրության արխիվներ: Մեզ հասած՝ պատմագիտական արժեք ներկայացնող առաջին արձանագրությունները Հայաստանում Վանի թագավորության դարաշրջանից են:

Մեզ են հասել մի շարք տեղեկություններ հետուրարտական ժամանակաշրջանում գոյություն ունեցած մեհենական պատմագրության արխիվների մասին: Դրանցից կարևորագույնը գերագույն աստված Արամազդի պաշտամունքի գլխավոր կենտրոն Դարանաղյաց Անիի մեհենական արխիվն է, որից հունարեն և ասորերեն թարգմանություններ է կատարել II–III դդ. ասորի մատենագիր ***Բարդանդանը:*** Մովսես Խորենացու հաղորդմամբ՝ մեհենական պատմություններն ի մի են բերվել ***Մար Աբաս Կատինայի, Օղյումպ բրմի*** և այլոց երկերում: Իսկ Արտաշեսի որդի ***Վրույրին*** Պատմահայրը հիշատակում է իբրև *«այր իմաստուն և բանասէրեղծ»*:

Տիգրան Մեծի կյանքի ու գործունեության մասին հայոց արքունիքում աշխատություն է գրել ***Մեթրոդորոս Սկեփսացին:*** Տիգրան Մեծի կյանքին է նվիրված եղել ***Ամֆիկրատրես Աթենացու*** «Մեծ մարդկանց մասին» վերնագրով աշխատության մի ամբողջ գլուխ. դժբախտաբար, այն մեզ չի հասել:

Արտավազդ II-ը հիշատակվում է որպես ողբերգությունների, ճառերի և պատմական երկերի հեղինակ, որոնք տարածում են գտել նաև Հայաստանի սահմաններից դուրս:

Ժայռապատկեր. աստղային քարտեզ Սևաթից

Մովսես Խորենացին հաղորդում է *չորս մասից բաղկացած Հայկազունների պատմության* մասին:

Տումարը և օրացույցը: Վաղագույն տիեզերագիտական գիտելիքները Հայկական լեռնաշխարհում հայտնի են դեռևս քարի դարի վերջին փուլում փորագրված ժայռապատկերներից: ***Ժայռապատկեր-օրացույցներից*** շատերը դեռևս լիովին չեն ուսումնասիրվել և կարող են նոր ու զարմանալի բացահայտումներ բերել ոչ միայն հայ, այլև համաշխարհային գիտությանը: Հնագիտական հուշարձանների վրա հանդիպում են աստղագիտական պատկերացումների դրսևորումներ, որոնց վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայկական լեռնաշխարհում դեռևս վաղնջական ժամանակներում կիրառվել են լուսնային, լուսնաարեգակնային և արեգակնային օրացույցներ:

Վանի թագավորությունում նույնպես կիրառվել է արեգակնային օրացույց:

Հայկական արեգակնային օրացույցը, որի հիմնումը ավանդաբար կապվել է Հայկ նահապետի անվան հետ, բաղկացած է եղել 365 օրից՝ տասներկու 30–օրյա և մեկ տոնական 5–օրյա (Ավելյաց) ամիսներից: Առանձին անուններ կրել են և՛ ամիսները, և՛ օրերը, և՛ օրվա ժամերը: Օրը բաժանված է

եղել 24 ժամերի, որոնցից 12-ը՝ ցերեկային, 12-ը՝ գիշերային:

Մովսես Խորենացին տեղեկացնում է, որ Արտաշես I-ը, ի թիվս բազում այլ բարեփոխումների, բարեկարգել և ճշգրտել է օրացույցը:

Հետագայում հայերը գործածել են արեգակնային օրացույցի հիմքով տոմարական համակարգեր, որոնցից առավել նշանավոր են ***Հայոց Մեծ թվականը*** (սկզբնավորվել է Ք.հ. 552 թ.) և ***Հայոց Փոքր թվականը*** (սկզբնավորվել է ***1084 թ.***):

Հարցեր և առաջադրանքներ

1. Քանի՞ մեհենանշաններից էր բաղկացած Վանի թագավորության մեհենագրությունը: Ինչո՞ւ մեհենագրության կիրառությունը ահմանափակվեց միայն մեհյաններով:
2. Հիմնավորե՛ք, որ քրիստոնեության ընդունումից առաջ կիրառվել են հայալեզու նշանագրեր: Հայոց արքաների թողած արձանագրությունները ի՞նչ լեզուներով են գրված: Քրիստոնեության ընդունումից հետո ո՞ր լեզուներն էին կիրառվում Հայաստանում:
3. Ըստ Մովսես Խորենացու՝ ովքե՞ր են ի մի բերել մեհենական պատմությունները:
4. Ի՞նչ օրացույցներ են կիրառվել Հայաստանում վաղնջական ժամանակներում: Ներկայացրե՛ք հայկական արեգակնային օրացույցը:

§ 3. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹԱՏՐՈՆԸ

Ժողովրդական բանահյուսությունը: Դեռևս վաղնջական ժամանակներում ստեղծված դիցավեպերը և ասքերը շարունակում էին պատմվել, երգվել ու բեմականացվել հելլենիստական շրջանի Հայաստանում: Այս ժամանակաշրջանում հայկական վիպասքերի հիմքում ընկած են հիմնականում պատմական իրական եղելությունները: Դրանցում մեծարվում և փառաբանվում են սիրված արքաներն ու հերոսները, որոնց ընդհանուր բնութագրող գծերը բարեպաշտությունն ու հայրենապաշտությունն են: Վիպասքերը չափազանց սիրված են եղել հասարակության բոլոր խավերի շրջանում:

Հելլենիստական ժամանակաշրջանում հայկական բանահյուսությունը հարստացավ «Երվանդ և Արտաշես», «Արտաշես և Սաթենիկ», «Արտաշես և Արտավազդ» և այլ ասքերով: Դրանց մեծագույն մասը գրառվել և մեզ է հասել Պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմության» էջերում: Պատմահայրը շատ հաճախ վերապատմում է դրանց բովանդակությունը՝ կատարելով բառացի մեջբերումներ ու տալով մեկնաբանություններ:

Արտաշեսի վեպը: Առավել սիրված է եղել Արտաշեսի վեպը, որի առանձին դրվագներ ներկայացվել են վիպասքերի տեսքով: Արտաշես արքայի մանկության և զահակալության մասին է պատմում «Երվանդ և Արտաշես» վիպասքը: Վեպում Արտաշեսը ներկայանում է որպես երկիրը միավորող և շենացնող արքա: «Արտաշես և Սաթենիկ» վիպասքի համաձայն՝ հյուսիսից ալանների (ներկայիս օսերի նախնիների) հրոսակախմբերը արշավում են Հայաստան, սակայն պարտություն են կրում: Գերի է ընկնում ալանների թագաժառանգը: Ալանաց արքայադուստրը՝ գեղանի Սաթենիկը, Կուր գետի հանդիպակաց ափից Արտաշեսի խնդրում է ազատ արձակել իր եղբորը:

Արտաշեսը սիրահարվում է ալանաց հրաշագեղ արքայադստերն ու ամուսնության առաջարկ անում: Սաթենիկի հորից մերժում ստանալով՝ նա խնդիրը լուծում է հայկական սովորույթի համաձայն՝ քաջին վայել պատվախնդրությամբ. Արտաշեսն



Պատկերներ բրոնզյա գոտիների վրա

անցնում է գետը, պարանով գերում Սաթենիկին և փախցնում:

Հայոց արքան ամուսնանում է ալանաց արքայադստեր հետ. տեղի է ունենում արքայական շքեղ հարսանիք.

Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի.
Տեղայր մարգարիտ ի հարսնութեանն Սաթինկանն:

Արքայի վրա ոսկի (իմա՝ ոսկեդրամներ), իսկ հարսի վրա մարգարիտ շաղ տալու սովորությունը խորհրդանշել է բարեբերության մաղթանքը նորապսակներին:

Արտաշեսը քառասունմեկ տարի իշխելուց հետո՝ սկզբում՝ որպես ստրատեգոս, ապա՝ թագավոր, մահանում է:

Արտաշեսը թաղվում է ոսկյա դագաղով, նրա թաղումը վերածվում է համաժողովրդական սգո արարողության:

Արտավազդի վեպը: Արտաշեսի վեպի շարունակությունն է նրա որդու՝ Արտավազդի վեպը: Դրանում պատմվում է, որ Արտաշեսի հուղարկավորության ժամանակ շատերն ինքնասպան էին լինում սիրելի թագավորի հետ: Այս բոլորը տեսնելով՝ թագաժառանգ Արտավազդը, նախանձելով հոր փառքին, դժգոհում է: Արտաշեսի ոգին անիծում է նախանձ և փառասեր որդուն. որսի ժամանակ քաջքերը բռնում են Արտավազդին և շղթայելով արգելափակում Մասիսի վիհում գտնվող քարանձավում: Առասպելի տարբերակներից մեկում նշվում է, որ Արտավազդը վերածվել էր չար ոգու, ուստի քաջքերը պահում էին նրան, որ դուրս չգա և չկործանի աշխարհը:

Վիպասքերից բացի, շարունակում էին ժողովրդի մեջ երգվել աշխատանքային, սիրային երգեր և այլ բանավոր ստեղծագործություններ:

Թատրոնը: Հելլենիզմի դարաշրջանում Հայաստանի մշակութային կյանքը նշանավորվում է երկու տեսակի թատրոնների առկայությամբ: Առաջինը, որ սկզբնավորվել է վաղնջական ժամանակներում, հայալեզու ***ժողովրդական թատրոնն էր:*** Մովսես Խորենացին տեղեկացնում է, որ ժողովրդական թատրոնը բեմականացումների (ցուցքերի) և պարերի միջոցով, որոնք ուղեկցվում էին փանդիռների (փանդիռը հնագույն հայկական լարային գործիք է) նվագակցությամբ, ներկայացնում էր հայկական հնագույն ասքերը («Գողթան երգերը»):

Թատերական ներկայացման տեսարաններ կան Վանի թագավորության կիրառական արվեստի նմուշների (մասնավորապես՝ գոտիների) վրա: Դրանք ևս տեղական թատերական ավանդույթների վկայություններ են:

Ի տարբերություն տեղական հայալեզու ժողովրդական թատրոնի՝ հելլենիստական դարաշրջանում Հայաստանում սկսում են գործել ***հունալեզու թատրոններ,*** որոնք գործել են հիմնականում վերնախավի համար: Հայտնի է, որ նման թատրոններ էին գործում ***Տիգրանակերտում*** և ***Արտաշատում:*** Թատրոնները կառուցված էին հունական բացօթյա ամֆիթատրոնների օրինակով և ի վիճակի էին տեղավորելու մի քանի հազար հանդիսա-

Բակուր արքայի արծաթե թասը՝ հունարեն արձանագրությամբ

տես: Դրանցում բեմականացվում էին ինչպես հույն, այնպես էլ հայ հեղինակների գործերը: Մասնավորապես հայտնի է, որ Ք.ա. 53 թ. Արտաշատում բեմադրվել է Էվրիպիդեսի «Բաքոսուհիներ» ողբերգությունը:

Պլուտարքոս պատմիչի (I–II դդ.) վկայությամբ՝ հենց Արտավազդ II արքայի գրած ողբերգությունները նրա մահվանից մեկուկես դար անց էլ հայտնի էին հռոմեացի ընթերցասերներին:

Ուշ հելլենիստական շրջանի թատերական կյանքի բացառիկ վկայություն է Բակուր արքայի (160-ական թթ.) հունարեն արձանագրությամբ արծաթե թասը, որը հարուստ և ճոխ ձևավորված է թատերական տեսարաններով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ էին նկարագրում հելլենիստական շրջանի հայկական վիպասքերը: Ինչ նոր ասքեր ստեղծվեցին այդ շրջանում:
2. Ներկայացրեք Արտաշեսի մասին վիպասքերը: Վիպասքերում նկարագրված որ սովորույթներն են պահպանվել մինչև մեր օրերը: Ինչ է նկարագրված Արտավազդի մասին վեպում:
3. Հելլենիստական շրջանում Հայաստանում ինչ տեսակի թատրոններ էին գործում: Ինչ էր ներկայացնում ժողովրդական թատրոնը: Ինչ թատրոններ էին գործում վերնախավի համար, որտեղ կային այդպիսի թատրոններ: Ո՞վ է վկայել, որ Արտավազդ II-ը գրել է տարբեր ժանրերի երկեր:

§ 4. ԱՐՎԵՍՏԸ: ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Շինարարության զարգացումը և ճարտարապետությունը: Հայկական ճարտարապետությունը հելլենիզմի դարաշրջանից առաջ արդեն անցել էր հազարամյակների ճանապարհ: Հելլենիստական ժամանակաշրջանում կառուցվեցին մեծ թվով նոր քաղաքներ, ամրոցներ, պալատներ, տաճարներ, դամբարաններ, հասարակական և այլ շինություններ, վերակառուցվեցին հին քաղաքները:

Նորակառույց քաղաքներից նշանավոր էր Երվանդ IV-ի հիմնադրած մայրաքաղաք ***Երվանդաշատը:*** Երվանդաշատից հետո Երվանդ IV-ն Ախուրյան գետի ափին կառուցեց ***Բագարան սրբավայր-քաղաքը***՝ Արմավիրից այնտեղ փոխադրելով աստվածների արձանները, դարձնելով այն թագավորության հոգևոր կենտրոնը: Դրանից հետո Երվանդ IV-ը կառուցեց նաև ***«գեղեցիկ և շքեղ հորինվածքով» Երվանդակերտ դասակերտը,*** որի մասին Պատմահայրը խոսում է մեծ հիացմունքով:

Արտաշատ մայրաքաղաքը հիմնադրվել է Արաքս և Մեծամոր գետերի միախառնման վայրում, ինչը երեք կողմից անմատչելի էր դարձնում քաղաքը: Չորրորդ կողմից Արտաշատը պաշտպանված էր պարիսպով ու խրամով:

Արտաշատի վերջին տարիների պեղումների բացառիկ հայտնաբերումներից էին Արեգ-Միհրի տաճարը և խճանկարազարդ հասարակական բաղնիքը, ինչն ընդհան-

ռապես հազվագյուտ հանդիպող երևույթ է ողջ աշխարհում: Արտաշատի պեղումներից հայտնաբերվել են նաև մարմարե և կավե արձաններ, զինատեսակներ, աշխատանքային գործիքներ, թանկարժեք մետաղներից և քարերից պատրաստված զարդեր և այլն:

Ժամանակի՝ աշխարհի մեծագույն քաղաքներից էր ***Տիգրանակերտը***: Տերության ստեղծումից հետո Տիգրան Մեծը նոր մայրաքաղաք Տիգրանակերտը կառուցեց այն վայրում, որտեղ թագադրվել էր Ք.ա. 95 թ.՝ պատանդությունից վերադառնալիս: Ահա թե ինչպես է ներկայացնում հայոց մեծ մայրաքաղաքը Ապպիանոս պատմիչը. *«Նա քաղաքը շրջապատեց 50 կանգուն բարձրության պարիսպով, որի հաստության մեջ կային ձիերի բազմաթիվ ախոռներ: Քաղաքի արվարձանում նա կառուցեց պալատ՝ ընդարձակ զբոսայգիներով, որսատեղերով և լճերով: Մերձակայքում նա բարձրացրեց նաև հզոր մի բերդ»*: Տիգրանակերտի մեծության և շքեղության մասին վկայում են նաև Պլուտարքոսը, Ստրաբոնը և այլ մատենագիրներ:

Ուշ հելլենիզմի շրջանի քաղաքաշինությունը համեմատաբար քիչ է ուսումնասիրված: Մասնակի պեղումներ են կատարվել ***Վաղարշապատում***: Մայր տաճար Ս. Էջմիածնի և Հռիփսիմե վանքի տարածքներում հայտնաբերվել են հելլենիստական շրջանին բնորոշ կառույցների հետքեր:

Նեմրութի սրբավայրն ու Գառնիի հուշարձանախումբը: Պահպանված ճարտարապետական կոթողային հուշարձաններից հատկապես աչքի է ընկնում ***Կոմմագենեի Նեմրութ լեռան սրբավայրը***: Նեմրութ լեռը Հայկական կամ Արևելյան Տավրոսի լեռնաշղթայում է (չշփոթել Վանա լճի արևմուտքում բարձրացող Նեմրութ լեռան հետ): Սրբավայրը կառուցված է թագավորության բարձրագույն կետում՝ 2100 մետր բարձրության վրա, ընդ որում՝ այլ վայրից բերված քարերով: Բլուրի երկու կողմերում՝ արևելքում և արևմուտքում, կառուցված են նույնակերպ արձանախմբեր, որոնք պատկերում են աստվածներին, արքային և նրա նախնիներին, թագավորության զինանշանները՝ առյուծ և արծիվ, նաև արքայի հորոսկոպը՝ առյուծի քանդակով:

Գառնիի բաղնիքի խճանկար. III դ. վերջ, հատված

Հուշարձանախմբի կենտրոնական հորինվածքը մարդակերպ արձաններ են՝ նստած դիրքով: Կենտրոնում Արամազդն է՝ 9 մ բարձրությամբ, նրա աջ և ձախ կողմերում բարձրանում են մայր դիցուհու, Վահագն–Հերակլեսի, Միհր–Ապոլոնի և սրբավայրը կառուցող Անտիոքոս I Երվանդունու արձանները (բոլորն էլ՝ 8 մ բարձրությամբ): Ի դեպ՝ Անտիոքոս I–ը թագավոր է հռչակվել Ք.ա. 70 թվականին՝ թագադրվելով Տիգրան Մեծի կողմից «Տիգրանյան» կամ «Հայկական» թագով:

Ուշ հելլենիստական ժամանակաշրջանի ճարտարապետության սքանչելի նմուշներ են ***Գառնիի ամրոցը*** և ***Արևգ–Միհրի*** պաշտամունքին նվիրված ***տաճարը***: Գառնին առաջին անգամ հիշատակվում է դեռևս Արգիշտի I–ի կողմից (նրա թողած սեպագիր արձանագրությունն այժմ պահպանվում է տաճարից մի քանի մետր դեպի աջ): Մեծ Հայքում Արշակունյաց թագավորության հիմնադիր Տրդատ I–ը 76 թ. կառուցում է հզոր մի ամրոց՝ թողնելով այդ մասին հունարեն արձանագրություն:

Ամրոցը կառուցվել է եռանկյունաձև



Նեմրութի սրբավայրի արևմտյան հարթակը

հրվանդանի վրա, որի երկու կողմերը պաշտպանված են բնական ուղղաձիգ ժայռերով:

Ամրոցի ներսում պահպանվել են մի քանի ճարտարապետական կառույցներ, որոնցից հելլենիստական դարաշրջանին են պատկանում տաճարը և արքունի բաղնիքը:

Տաճարը չորս կողմից շրջապատված է 24 սյուներով, որոնք խորհրդանշում էին օրվա 24 ժամերը: Այն կառուցվել է երկթեք տանիքով, եռանկյունաձև ճակատամասով, ուղղանկյուն հատակագծով սյունազարդ տաճարների ոճով, որի նախօրինակը համաշխարհային պատմության մեջ, ինչպես արդեն նշվել է, Արդինի-Մուսասիրում Խալդիի գլխավոր տաճարն էր:

Գառնիի արքունի բաղնիքի հանդերձարանի հատակը պատված է առասպելադիցաբանական բովանդակությամբ խճանկարով և հունարեն գրություններով, որոնք խորհրդանշում են կյանքի սկզբնավորումը օվկիանոսից ու ծովից (ըստ հին հունական պատկերացումների) և հարատևությունը սիրո շնորհիվ:

Քանդակագործությունը և կիրառական արվեստը: Նեմրութ լեռան սրբավայրում եզակի կատարողականությամբ են քանդակված ինչպես աստվածների 8–9-մետրանոց արձանները, այնպես էլ աստվածների, արքայական նախնիների ու սրբավայրը կառուցող Անտիոքոս Երվանդունու քանդակները՝ ուղղահայաց կանգնեցված քարասալերին, թագավորության զինանշանները՝ առյուծ և արծիվ, արքայի հորոսկոպը՝ առյուծի քանդակով:

Իրենց բարձր արվեստով առանձնանում են Արտաշատից գտնված կնոջ մարմարյա արձանը, մոր և մանկան արձանիկն Արմավիրից: Դեռևս XIX դարում Արևմտյան Հայաստանի Սատաղ քաղաքի մերձակայքից գտնվել և Բրիտանական թանգարան (Լոնդոն) էր տեղափոխվել Անահիտ դիցուհու բրոնզաձույլ արձանի գլուխը, որտեղ էլ մինչև օրս այն պահվում է:

Արվեստի եզակի նմուշներ են Արտաշեսյան դարաշրջանի ***մեդալիոնները***, որոնց մեջ առանձնանում են Սիսիանից գտնված արծվի ու հաղթանակի դիցուհու պատկերներով մեդալիոնները:

Արքայական շատ ***դրամներ*** արվեստի իսկական գործեր են: Հատկապես առանձնանում են Տիգրան Մեծի և Արտավազդ II-ի դրամները, որոնց վրա նշվել են արքաների անունները և տիտղոսները՝

հունարեն գրությամբ, իսկ հակառակ երեսին պատկերվել են աստվածներ, կենդանիներ և այլն: Առանձին դրամ է թողարկել նաև Արտաշատ մայրաքաղաքը. դրամի մի երեսին պատկերված էր աստվածամայր Անահիտը՝ մայրաքաղաքի հովանավորը, մյուսին՝ դափնեպսակ պարզած Հաղթանակի թևավոր դիցուհին, և շրջագծով՝ *«Արտաշատ մայրաքաղաք»* հունարեն մակագրությունը:

Ազգային արժեքային համակարգը: Ազգային արժեքային համակարգի ձևավորումը տևում է դարեր, ընդ որում՝ պատմության ընթացքում այն կարող է կրել որոշակի փոփոխություններ:

Հայաստանում քրիստոնեության ընդունման նախօրյակին ակնհայտ է կայացած մի արժեհամակարգ:

Հայկական ազգային արժեհամակարգում առանցքային է եղել և մնում է ***սրբազան հայրենիքի պաշտամունքը:*** Այստեղ հայոց հայրենիքը հոգևոր մեծ խորհուրդ ունեցող մի երկիր է, որը մեծարվել է ոչ միայն իր բնակիչների, այլև հարևան ժողովուրդների կողմից: Մեզ հասած հինարևելյան աղբյուրների տեղեկությունների համաձայն՝ նախքան մարդու արարումը Հայկական լեռնաշխարհը եղել է աստվածների բնակության վայր, ուր հիմնվել է դրախտը, և որում արարվել են առաջին մարդիկ: Նույն այդ տարածքը Համաշխարհային ջրհեղեղից հետո դարձել է մարդկության վերածննդի երկիրը, ուր կնքվել է Աստծո և մարդկանց միջև հավիտենական ուխտը: Հայոց լեռնաշխարհը հայտնի է եղել «անմահության երկիր», «աստվածային սուրբ օրինաց երկիր», «աստվածների կաճառ», «Եդեմ» և այլ պատվանուններով ու մակդիրներով:

Ազգային կարևորագույն արժեք է համարվել ***հայկական պետականությունը,*** որի գոյությունը մեր նախնիները պայմանավորել են հայրենի աստվածների ու պետության կապով: Պետական իշխանությունը ճանաչվել է աստվածաստեղծ, պետության գլուխ կանգնած արքաները՝ աստվածազուն:

Ազգային գաղափարախոսական կարևոր հիմնադրույթ էր մեր նախնիների՝ ***ապրվածընտրյալ ժողովուրդ լինելու*** մասին պատկերացումը: Ընդ որում՝ ի տարբերություն այլ ժողովուրդների, որոնք իրենց իրենց են համարում այդպիսին, մեր նախնիներին աստվածընտրյալ են համարում օտարները:

Ազգային արժեհամակարգի կարևորագույն բաղադրիչ էր ***հայոց հին հավատքը:***

Թերթելով հայ և օտար մատենագրության էջերը՝ գտնում ենք մեր նախնյաց գաղափարախոսական մեկ այլ կարևոր հիմնադրույթ՝ ***ազգի ազատության բացարձակ ընկալումը:*** Հայն իր երկրի ու ժողովրդի ազատությունը դարձրել է բացարձակ արժեք: Հայկ նահապետը մերժում է համընդհանուր գերիշխանության հասած Բելի առաջարկը՝ արտոնյալ պայմաններով ապրելու իր տերության սահմաններում, և բնակվում է իր հայրերի երկրում: Արամ նահապետը *«լավ էր համարում հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ինչպես օտարացեղ ազգերը ոտնակոխ են անում իր հայրենիքի սահմանները, և օտարները տիրում են իր արյունակից հարազատների վրա»*: Իսկ հույն պատմիչ Քսենոփոնի (Ք.ա. V–IV դդ.) հաղորդման համաձայն՝ հայոց արքան, որը հարկատու էր միայն Մարաստանին, ապստամբել էր վերջինիս դեմ՝ պատճառաբանելով, որ ինքը նախընտրում է իր և որդիների ազատությունը:

Ահա այսպիսի վեհ գաղափարներ են ընկած եղել հայոց ազգային արժեքային համակարգի հիմքում, որը ձևավորվել էր հին շրջանում:

Հին Հայաստանի քաղաքակրթական նվաճումները: Հելլենիստական դարաշրջանում հայ մշակույթին շարունակում են բնորոշ լինել ***երկու գլխավոր գծերը՝ սեփական արժեքների պահպանումը և արտաքին աշխարհից դրականի ու ուսանելիի ներմուծումը:*** Այս շրջանում ավելի շատ են ներմուծված տարրերը: Սակայն հայ մշակույթի առանձնահատկության համաձայն՝ ներմուծվածը հայկական միջավայրին

Մոր և մանկան նախաքրիստոնեական արձանիկ Արմավիրից

հարմարեցվելուց և յուրացվելուց հետո արժանի տեղ է գրավել ավանդական արժեքների կողքին:

Ասվածի լավագույն ապացույց կարելի է համարել ***Կոմմագենեի Նեմրութ լեռան սրբավայրը***, որտեղ միահյուսվել են հայկական և հունահռոմեական ճարտարապետության ավանդույթները: Արդյունքում ստեղծվել է համաշխարհային մշակույթի բացառիկ մի հուշարձան, որն այսօր էլ զարմացնում ու հիացնում է իր մտահղացումներով՝ իրավամբ համարվելով ***Հին աշխարհի ութերորդ հրաշալիքը***:

Համաշխարհային նշանակության արվեստի գործերի հավակնություն կարող են ունենալ այս ժամանակաշրջանի հայկական հնավայրերից գտնված բազմաթիվ արձանիկները:

Ուշագրավ է, որ Արմավիրից հայտնաբերված բնագրերում առկա է Ք.ա. II–I դարերի պատմական բովանդակությամբ պոեմի կամ ողբերգության հատված, այն դեպքում, երբ Հռոմում պատմական կերպարները գրական ստեղծագործություններում հայտնվում են միայն Քրիստոսի ծննդյան I դարում:

Հելլենիստական դարաշրջանի հայ մշակույթն ուշագրավ երևույթ է համաշխարհային մշակույթի տեսանկյունից նաև այն իմաստով, որ պահպանելով և հարստացնելով սեփական մշակույթը՝ հայ ժողովուրդը հենց դրանով կարևոր ավանդ է ներդրել մշակույթի համաշխարհային գանձարանում:

Հայկական հելլենիստական մշակույթը հիմք դարձավ վաղ միջնադարի հայ մշակույթի համար՝ շատ հարցերում պայմանավորելով վերջինիս վերելքն ու համաշխարհային նշանակությունը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Հելլենիստական շրջանում ինչ քաղաքներ կային Հայաստանում: Երբ և որտեղ է կառուցվել Արտաշատը: Ինչո՞ւ Տիգրան Մեծը նոր մայրաքաղաքը կառուցեց իր թագադրման վայրում:
2. Նկարագրեք Նեմրութի սրբավայրը: Հին աշխարհի ո՞ր կառույցների հետ այն կարելի է համեմատել: Ուշ հելլենիստական շրջանի ճարտարապետական ինչ կառույց է պահպանվել:
3. Քանդակագործության ինչ նմուշներ են գտնվել Կոմմագենեի Երվանդունյաց սրբավայրերում և այլ վայրերում:
4. Ի՞նչն է եղել հայկական ազգային արժեհամակարգի առանցքը. ինչո՞ւ: Նշեք ազգային գաղափարախոսության մյուս կարևոր հիմնադրույթները:
5. Ներկայացրեք Հին Հայաստանի քաղաքակրթական նվաճումները:

Մովսես Խորենացին Արտաշատի կառուցման մասին

Արտաշեսը գնում է այն տեղը, որտեղ Արաքսը և Մեծամորը խառնվում են, և այնտեղ բլուրը հավանելով՝ քաղաք է շինում և իր անունով կոչում է Արտաշատ: Արաքսն էլ օգնում է նրան անտառի փայտով: Ուստի առանց դժվարության և արագ շինելով՝ այնտեղ մեհյան է կանգնեցնում և Բագարանից այնտեղ է փոխադրում Արտեմիսի* արձանը և բոլոր հայրենական կուռքերը: Բայց Ապոլոնի** արձանը կանգնեցնում է քաղաքից դուրս՝ ճանապարհին մոտ: Երվանդը քաղաքից դուրս է բերում հրեա գերիներին, որ այնտեղ տարված էին Արմավիրից, և բերում նստեցնում է Արտաշատում: Նաև Երվանդի քաղաքի ամբողջ վայելչությունները, ինչ որ նա փոխադրել էր Արմավիրից, և ինչ որ հենց ինքն էր շինել, բերում է Արտաշատ և ավելի շատ բան էլ իր կողմից շինելով՝ սարքավորում է իբրև արքայանիստ քաղաք:

* Համադրվել է հայոց մայր դիցուհի Անահիտին:

** Ապոլոնը համապատասխանում է հայոց դպրության, գիտության և արվեստների հովանավոր Տիրին:

Փիլոսթրատոսը (II–III դդ.) հայկական գրերով մանյակի մասին

Պատմում են նույնպես, որ մի անգամ Պամֆիլիայում բռնվել է մի հովազ, որի ոսկյա մանյակի վրա գրված էր հայերեն գրերով հետևյալը. «Արշակ թագավոր՝ Նյուսիա աստծուն», այսինքն՝ Նյուսիա աստծուն նվեր Արշակ թագավորից: Այս Արշակն այն ժամանակ Հայոց թագավորն էր և յուր բռնած հովազը, այդ կենդանու մեծության պատճառով, նվիրել էր Դիոնիսոսին**: Դիոնիսոսը հնդկական Նյուսիայի պատճառով հնդկացիներից և արևելյան ժողովուրդներից կոչվում էր Նյուսոս:*

* Խոսքը Մեծ Հայքի արքա Արշակ I–ի (34–35 թթ.) մասին է:

** Դիոնիսոսը, ըստ հին հունական առասպելաբանության, համարվել է Զևսի որդին, խաղողագործության աստվածը:

Մովսես Խորենացին Անիի հայկական հեթանոսական արխիվի մասին

Մեզ այս բաները պատմում է Բարդածանը*, որ Եդեսիայից էր... Որովհետև նա մեր կողմերը եկավ՝ հուսալով, թե կկարողանա որևէ հետևող գտնել վայրենի հեթանոսներիս մեջ, բայց երբ ընդունելություն չգտավ, մտավ նա Անի ամրոցը, կարդաց մեհենական պատմությունը, որի մեջ՝ նաև թագավորների գործերը: Նա իր կողմից ավելացրեց իր ժամանակի անցքերը, բոլորը թարգմանեց ասորերենի և ապա նրանից՝ հունարենի:

* Բարդածանը (154–223 թթ.) ասորի հեղինակ է, համարվում է ասորական քրիստոնեական մատենագրության հիմնադիրներից մեկը:

Բ

ՄԱՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

Հայոց միջնադարյան պատմությունը, հայ պատմագիտության մեջ ընդունված պարբերացման համաձայն, երեք փուլի է բաժանվում՝ վաղ միջնադար (IV դ.–IX դ. կեսերը), զարգացած միջնադար (IX դ. կեսերից–XIV դ. վերջը), ուշ միջնադար (XV դ.–XVII դ. կեսեր):

Դարեր շարունակ հայ ժողովուրդը դիմակայել է արտաքին վտանգներին ոչ միայն ռազմական ուժով, այլև հոգևոր–մշակութային արժեքներով՝ աշխարհում առաջինը քրիստոնեությունը պետական կրոն հռչակելով (301 թ.) և Մաշտոցյան գրերի գյուտով (405 թ.):

Մեծ Հայքի Արշակունյաց հարստության անկումից հետո (428 թ.) հայ ժողովուրդն աննկուն պայքար մղեց օտար զավթիչների դեմ: Վարդան Մամիկոնյանի (451 թ.), Վահան Մամիկոնյանի (481–484 թթ.), Արտավան Արշակունու (539 թ.) և Վարդան (Կրտսեր) Մամիկոնյանի (571–572 թթ.) ապստամբությունները, ինչպես նաև VII դ. կեսերին արաբների դեմ մղած կռիվներն ու VIII–IX դդ. հակաարաբական ապստամբությունները հայ ազգային–ազատագրական պայքարի հերոսական դրսևորումներն էին: Արդյունքում 885 թ. վերականգնվեց հայկական պետությունը՝ ի դեմս Բագրատունյաց թագավորության:

Հայաստանում 428 թ. հետո պետականության կրողն էր մնում հայոց նախարարական համակարգը: Հայ ժողովրդի ազգային–ազատագրական պայքարի շնորհիվ բարձրացան Մամիկոնյանների գլխավորած Տանուտիրական իշխանապետությունը, Հայոց Արևելից կողմերում՝ Արցախում ու Ուտիքում՝ Վաչագան Բարեպաշտի թագավորությունը (484 թ.–VI դ. առաջին կես), Հայոց անկախ իշխանապետությունը (650–ականների երկրորդ կես–680–ական թթ.), Բագրատունյաց (885–1045 թթ.), Վասպուրականի Արծրունիների (908–1021 թթ.), Կարս–Վանանդի (963–1065 թթ.), Տաշիր–Զորագետի Կյուրիկյանների (978–1113 թթ.), Սյունիքի (987–1170 թթ.), Փառիսոսի (X դ. կես–1044 թ.) թագավորությունները, Խաչենի իշխանությունը (X–XVI դդ.), Զաքարյանների իշխանապետությունը (XII դ. վերջ–XIII դ. առաջին տասնամյակներ), Կիլիկիայի իշխանապետությունը (1080–1197 թթ.) և թագավորությունը (1198–1375 թթ.), ինչպես նաև հայկական մյուս նշանավոր պետական կազմավորումները:

Ազգային անկախ պետականության պահպանման գաղափարով տոգորված քաղաքակրթական զարգացումներն արգասաբեր էին հայ միջնադարյան մշակույթի բոլոր բնագավառներում:

Հայոց պատմության V դարը, որը նշանավորվել էր հայ գրերի գյուտին հաջորդած գրական արժեքների ստեղծմամբ, անվանվում է Ոսկեդար: Այն բնութագրվում է թարգմանական և ինքնուրույն գրականության ստեղծմամբ: Ոսկեդարյան հայ մտավորականները պատմական, փիլիսոփայական, աշխարհագրական, բնագիտական մեծարժեք ժառանգություն են թողել՝ հարստացնելով հայ և համաշխարհային գիտական մտքի շտեմարանը, ինչպես նաև փրկելով կորստից օտար հեղինակների մի շարք երկեր:

Հին և միջին դարերում հայկաբար պաշտպանելով հայրենիքը, պահպանելով ազգային արժեքները և ստեղծելով նորերը՝ հայ ժողովուրդը շարունակեց քաղաքակրթական իր ընթացքն արքայական ու իշխանական տների ու Հայ առաքելական եկեղեցու առաջնորդությամբ և հովանավորությամբ:

Վաղ միջնադարից նոր որակներ են գրանցվում հայ մշակույթի, գրականության, գիտության ու կրթության ասպարեզներում: Հայկական ճարտարապետության մեջ ազգային հին տաճարաշինությանը փոխարինած եկեղեցաշինությունը հայրենի ավանդույթների վրա հիմնված նոր ուղղություն էր շինարարական արվեստում: Կերպարվեստի բնագավառում աննախադեպ կատարելության են հասնում խաչքարագործությունը և մանրանկարչությունը: Շարունակում են իրենց վերելքը արհեստագործության հիմնական ճյուղերը (խեցեգործություն, դարբնություն, գինագործություն, գորգագործություն, ոսկերչություն, քարագործություն, հյուսնություն, ապակեգործություն, կաշեգործություն, ներկարարություն և այլն):

Հայկական մշակույթի՝ քաղաքաշինության, ճարտարապետության, ամրոցաշինության, խաչքարի արվեստի, մանրանկարչության, գորգագործության, երգարվեստի և այլ ասպարեզների, ինչպես նաև գիտության և իրավունքի բնագավառների արգասիքները շարունակաբար հարստացրել են ազգային և համաշխարհային քաղաքակրթության գանձարանը:

ԲԱԺԻՆ 1 ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒՄԸ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻՆ

Թեմա 1. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ: ԱՎԱՏԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

§ 1. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ

Հայ առաքելական եկեղեցու հիմնադրումը: Առաջին դարում՝ հայոց Աբգար և Սանատրուկ I թագավորների օրոք, Քրիստոսի տասներկու աշակերտներից Սբ Թադեոս և Սբ Բարդուղիմեոս առաքյալների քարոզչությամբ Հայոց աշխարհում ավետվում է քրիստոնեական ուսմունքը: Նրանց կողմից դրվում են ***Հայ առաքելական եկեղեցու*** հիմքերը: Առաջնորդական աթոռները, մինչև Սբ Գրիգոր Լուսավորչի կողմից Հայոց եկեղեցական նվիրապետության (քահանայապետություն) հաստատման ժամանակները, ***Եղեսիայում, Արտազում*** և ***Սյունիքում*** էին: Քրիստոնեական համայնքները հայտնի էին Մեծ Հայքում՝ Ծաղկանց լեռներում, Արարատ լեռան շրջակայքում, Սյունյաց նահանգում՝ Թանահատի վանքի տարածքում և այլ վայրերում, ինչպես նաև Փոքր Հայքում:

Քաղաքական և կրոնական վիճակի բարդացումը: III դ. երկրորդ կեսից քաղաքական և կրոնական իրադարձությունները պայմանավորվել էին Սասանյան Պարսկաստանի նվաճողական քաղաքականության դեմ հայ ժողովրդի դիմակայությամբ: Հայոց գահին Սասանյանները նշանակում էին իրենց թագաժառանգներին: Այդ խառնաշփոթ շրջանում («ժամանակ անիշխանության») զրադաշտական (մազդեզական) մոգերը քանդում էին հայոց հեթանոսական պաշտամունքի շինությունները: Որմիզդ–Արտաշիրը հրամայել էր իր սպասավորներին վառել որմզդական հուրը հին հայոց պաշտամունքային կենտրոնում՝ Բագրևանդ գավառի Բագավանի տաճարի մեջ: Հնում հայոց նախնիների պատկերով Արմավիրում կանգնեցված և այնտեղից Բագարան, այնուհետև Արտաշատ տեղափոխված արձանները նա հրամայում է փշրել, ինչպես նաև՝ Արտաշես I–ի սահմանաքարերի գրությունները փոխել իր անունով: Այսինքն՝ պարսից մոգերը հին հայոց հեթանոսական* պաշտամունքի տաճարային կենտրոնները այլափոխել կամ ավերածության էին ենթարկել նախքան Հռոմեական կայսրությունից արքայազն Տրդատի և Գրիգորի վերադարձը Հայաստան:

Տրդատ III Մեծի գահակալության օրոք Սբ Գրիգորի գործունեությունը: Երբ Տրդատը վերադառնում է Հայաստան, նրա մոտ ծառայության է անցնում Գրիգորը: Տրդատը Եկեղյաց գավառում՝ Անահիտ աստվածուհու տաճարում, զոհեր մատուցելիս նկատել էր, որ արարողությանը չի մասնակցում Գրիգորը: Իմանալով, որ նա Անակի որդին է և քրիստոնյա է, Արտաշատ վերադառնալուց հետո արքան հրամայում է Գրիգորին փակել ստորգետնյա բանտում՝ ***խոր Վիրապում,*** որտեղ վերջինս մնում է 13 տարի:

Դիոկղետիանոս կայսեր հետապնդումների հետևանքով Հռոմից Հայաստան էին փախել ***Հռիփսիմեի*** և ***Գայանեի*** գլխավորած քրիստոնյա կույսերը (Հռիփսիմյան քույրեր): Տրդատը սիրահարվել էր Հռիփսիմեին, սակայն մերժվել էր նրա կողմից: Այդ հանգամանքը կույսերի նահատակության պատճառ էր դարձել: Այդ ամենը խորապես ցնցել էր Տրդատին, և երբ

---

* Ազգային, քանզի «հեթանոս» բառը հունարեն «էթնոս»՝ «ցեղ», «ազգ» բառից է, տարբեր նշանակություն է ունեցել. հին հայոց հավատքի և քրիստոնեական սկզբնական շրջանի առումով հեթանոս նշանակում էր ցեղ, ազգ, միջնադարում՝ ոչ քրիստոնյա, այլակրոն:

վեցերորդ օրը նա ցանկացել էր որսի գնալ, ծանր հիվանդացել էր: Նրա քրոջը՝ Խոսրովիդուխտին, տեսիլք էր երևացել, որով նրան հայտնվել էր, որ Տրդատին և նրա հետ հիվանդացած մարդկանց կարող էր բուժել միայն Գրիգորը: Տրդատի հրամանով նրան Խոր Վիրապից ազատում են: Գրիգորը բոլորին բուժում է ու սկսում քրիստոնեական քարոզչությունը:

Այդ ժամանակ Սբ Գրիգորի կոչով Հռիփսիմյան կույսերի վկայարաններն են շինվում: Թագավորը, թագուհին, թագավորի քույրն իրենց օգնականներով մասնակցում են շինարարությանը: Տրդատը յոթնօրյա ճանապարհ է գնում Ազատ Մասիսն ի վեր, որի գլխից հայկաբար վերցնում է ութ անտաշ մեծամեծ քարեր, դնում թիկունքին և բերում ու տեղադրում կույսերի վկայարանների հիմքում: Գրիգորը տեսիլքում հայտնված Միածնի տեղում ևս կանգնեցնում է փրկչական խաչի նշանը:

Հայոց արքայի և կաթողիկոսի գործունեությամբ ազգային տաճարների վայրերը մաքրվում էին «անիշխանության ժամանակ» պարսից մոգերի կատարած ավերածություններից, և այդ տեղերում քրիստոնեական վկայարանների ու եկեղեցիների հիմքերն էին դրվում:

Տրդատ III Մեծի հրամանով Հայոց աշխարհի բոլոր կողմերից Վաղարշապատ եկած հայոց զորքը՝ իր զորավարներով, մեծամեծերը, կուսակալները, գավառապետերը, նախարարները, ազատները, դատավորները Գրիգոր Լուսավորչին կարգում են *եպիսկոպոսապետ* (քահանայապետ): Թագավորի հրովարտակով և հայոց նախարարների ուղեկցությամբ նա մեկնում է Կապադովկիայի Մաժակ (Կեսարիա) քաղաքը, որտեղ Ղևոնդիոսի գլխավորած եպիսկոպոսների ժողովը նրան եպիսկոպոս է ձեռնադրում: Սուրբ Գրիգորը՝ որպես հայոց եպիսկոպոսապետ–կաթողիկոս, վերադառնում է Հայաստան: Տեղեկանալով, որ Գրիգորը Տարոնում է, Տրդատ Մեծը, Աշխեն թագուհին, Խոսրովիդուխտը և հայոց զորքը գնում են նրան ընդառաջ, հասնում են *Բագավան՝ Նպատ լեռան ստորոտը*, և մեծ պատիվներով դիմավորում Տարոնից այնտեղ եկած կաթողիկոսին: Լուսաբացին Սբ Գրիգորը բոլորին՝ արքունիքին, զորքին, ժողովրդին, առաջնորդում է Արածանի գետը և մկրտում: Այսպիսով՝ ***301 թ. Հայաստանում, աշխարհում առաջինը, հռչակվում է պետական կրոն:***

Հայ առաքելական եկեղեցու նվիրապետության հաստատումը: *303 թ.* Վաղարշապատում կառուցվում է ***Մայր տաճար Ս. Էջմիածինը:*** Հաստատվում է Հայաստանյայց առաքելական եկեղեցու նվիրապետությունը՝ Մայր Աթոռի առաջնորդությամբ: Գրիգոր Լուսավորիչը առաջին հերթին եկեղեցու պաշտոնյաներ (քահանաներ, սարկավագներ) է ձեռնադրում Հայաստանի նորակառույց եկեղեցիներում և թեմերում ծառայելու համար: Նրանց թվին էին պատկանում նաև նախկին հայ քրմերը և նրանց զավակները, հատկապես Աղբիանոսի տոհմից: IV դ.–V դ. առաջին կեսին կաթողիկոսական աթոռին հիմնականում նստում էին Սբ Գրիգոր Լուսավորչի տան ներկայացուցիչները, սակայն որոշ ժամանակ կաթողիկոսական աթոռին էին նաև Աղբիանոսի (Մանազկերտցի) տան ներկայացուցիչները:

Սբ Գրիգորը, քարոզչության ու ավետարանության գործը տարածելով Հայաստանում, արևմուտքում հասցնում է սատաղացիների քաղաքից մինչև Խաղտյաց երկիրը՝ Կղարջքի մոտ, իսկ արևելքում՝ ընդհուպ մինչև մազքութների երկիրը, հյուսիսում՝ Ալանաց դռները, արևելքում՝ Կասպից սահմանները, հարավում՝ Կորդուք գավառը, Նոր Շիրական երկիրը և Ատրպատական:

Թագավորի հովանավորությամբ Գրիգոր Լուսավորիչը Հայաստանի քաղաքներում ու գյուղերում եկեղեցիներ է հիմնադրում: Տարոնում նա Քարքե լեռան լանջին դնում է Իննակնյան Ս. Կարապետ, Աշտիշատում՝ Ս. Երրորդություն եկեղեցիների հիմքերը:

Ազգային և քրիստոնեական արժեքների ներդաշնակումը: Հնուց եկող շատ տոներ ու ծեսեր Հայաստանում քրիստոնեության ընդունումից հետո ավանդաբար

պահպանվեցին: Սբ Գրիգոր Լուսավորիչը դարձավ Հայ առաքելական եկեղեցու տոնի կարգավորության հիմնադիրը: Ժամանակի ընթացքում ժողովրդական և ազգային-եկեղեցական տոները՝ Ամանորը, Ս. Ծնունդը, Տրնդեզը (Տյառնընդառաջ), Ս. Սարգիսը, Բարեկենդանը, Ծաղկազարդը, Ս. Զատիկը և այլն, հայ ժողովրդի հոգևոր-մշակութային կյանքում ներդաշնակվեցին:

Ճարտարապետության մեջ նախաքրիստոնեական բազիլիկ և գլխատուն կամ հազարաշեն կոչվող շինությունների համադրմամբ՝ եկեղեցաշինությունը, իսկ քարակոթողների օգտագործմամբ՝ խաչքարերի ստեղծումը (խաչի պատկերը հնագույն ժամանակներից հայտնի է Հայկական լեռնաշխարհի ժայռապատկերներում) հայ մշակույթի՝ ազգային-քրիստոնեական հունով ընթանալու արտահայտություններից էին:

Քրիստոնեության ընդունման պատմական նշանակությունը: Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելը մեծ ազդեցություն ունեցավ հայ ժողովրդի ու պետության, հոգևոր կյանքի ու մշակույթի, գիտության ու աշխարհընկալման հետագա ընթացքի վրա: Դարեր շարունակ հայ ժողովրդի հոգևոր ու գաղափարական առաջնորդն ու պաշտպանն է եղել ***Հայաստանյաց առաքելական սուրբ եկեղեցին,*** որի հովանու տակ Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի, Մովսես Խորենացու, Եղիշեի, Դավիթ Անհաղթի, Անանիա Շիրակացու, Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Գրիգոր Տաթևացու և նրանց ժամանակակիցների ու հետնորդների ստեղծագործական ժառանգությունը հոգևոր մեծ լիցք է հաղորդել հայ մշակույթին: ***Հայ առաքելական եկեղեցին գիտության և կրթության օրրան է եղել, իսկ պարսկության դժնդակ ժամանակներում՝ ազգապահպան հզոր վեմ հայ ժողովրդի համար:***

Տրդատ Գ Մեծ

Հարցեր և առաջադրանքներ

1. Ընդհանուր գծերով ներկայացրեք հայկական քաղաքակրթությունը միջնադարում. ինչ նոր որակներ այն ունեցավ:
2. Ըստ ավանդության՝ Քրիստոսի ոգի առաքյալներն են քարոզել Հայաստանում: Որմիզդ-Արտաշիրն ինչ քաղաքականություն էր վարում Հայաստանում:
3. Ի՞նչ գիտեք Տրդատի դարձի և Հռիփսիմյան քույրերի մասին: Քրիստոնեությունը ե՞րբ հռչակվեց որպես Հայաստանի պետական կրոն:
4. Նորադարձ քրիստոնյաների հոգևոր պահանջմունքները բավարարելու համար ինչ քայլեր ձեռնարկեց Սբ Գրիգորը: Վերհիշեք և ներկայացրեք Հայոց եկեղեցու նվիրապետությունը:
5. Ազգային-քրիստոնեական ինչ տոներ գիտեք: Ներկայացրեք ազգային և քրիստոնեական արժեքների ներդաշնակումը:
6. Քրիստոնեության ընդունումն ինչ պատմական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի կյանքում: Ի՞նչ առաքելություն ստանձնեց Հայոց եկեղեցին:

§ 2. ԱՎԱՏԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ավատատիրական հարաբերությունների ձևավորումը: Հայաստանում հին դարերից միջնադարին անցման փուլում՝ հայ Արշակունյաց թագավորության ժամանակաշրջանում, նախարարական համակարգի զարգացումն ընթացավ ավատատիրական (ֆեոդալական) հարաբերությունների ուղիով: ***Ավատ*** բառի հիմքում ***«ի հավատ», «հավատարմությամբ*** (ծառայել)» իմաստն է:

Հայաստանում հասարակական հարաբերությունները հնուց զարգանում էին համապետական՝ թագավորական հողատիրության պայմաններում: ***Գյուղական համայնքները*** հիմնական արտադրող տնտեսություններն էին, որոնք պետության գլխավոր հարկատուն էին: Արտաշես I–ը հողային բարեփոխությամբ ցանկացել էր սահմանազատել մասնավոր համայնքային հողատիրությունը: Սակայն ծառայող ազնվականության մասնատիրական տնտեսությունների՝ ***ագարակների*** և ***դաստակերտների*** ընդլայնումն ի հաշիվ գյուղական համայնքների գնալով խորանում էր՝ սկիզբ դնելով պետական հողատիրության մասնատմանը սեփականատիրական կալվածքների, այսինքն՝ ավատական տնտեսությունների առաջացմանը:

Հին Արևելքի հելլենիստական այն երկրներում և երկրամասերում (Եգիպտոս, Ասորիք, Փոքր Ասիա), որոնք հիմնականում վերածվել էին հռոմեական նահանգների, անցումը ավատատիրական հարաբերություններին զգալիորեն դանդաղ էր ընթանում: Հայաստանում ավատատիրական հարաբերությունների հաստատումը տեղի էր ունենում հասարակության բնականոն զարգացման ճանապարհով: Դրանով էլ պայմանավորված էին նոր հասարակական հարաբերությունների առանձնահատկությունները Հայաստանում:

Հայաստանում ավատատիրությունը սերում էր ***նահապետական արմատներ ունեցող նախարարական համակարգից,*** որը հնուց եկող թագավորական իշխանության հետ ամբողջություն էր կազմում: Այդ բնականոն ընթացքը խախտեց օտար տերությունների նվաճողական քաղաքականությունը, ինչը հանգեցրեց հայ Արշակունիների հարստության անկմանը 428 թ.: Եղիշեն նշել է, որ թագավորությունն անցավ հայոց նախարարներին, ինչը վկայում է նախարարական համակարգի՝ պետականության կրողը լինելու մասին:

Հայկական պետականությունը նախարարական համակարգի միջոցով պահպանվեց միջնադարում: Այն իր դրսևորումներն ունեցավ Մեծ Հայքի Հայոց Արևելից կողմերում՝ Վաչագան Բարեպաշտի գլխավորությամբ, Բագրատունիների գլխավորած հայկական թագավորությունների համադաշնության, Զաքարյանների իշխանապետության և Սասունի, Արցախի, Սյունիքի իշխանությունների, Կիլիկիայում՝ Ռուբինյանների, Հեթումյանների, Լուսինյանների պետությունների ձևով և այլն:

Ավատատիրական հողատիրության ձևերը: Միջնադարում հողատիրության ձևերը բազմազան էին: Առավել մեծ տեսակարար կշիռ ունեին պետական՝ թագավորական, և ավատական խոշոր հողային տիրույթները:

Մեծ Հայքի ***գերագույն կալը հայոց թագավորն էր:*** Ավատատիրության խորացմամբ թագավորական կամ պետական հողերը մասնատվում էին, ծառայող ազնվականության հողատարածքներն աճում էին, հողի խոշոր սեփականատեր էին դառնում նախարարական ընտանիքները: Տրդատ III Մեծը հողեր շնորհեց նաև եկեղեցուն: Դրանով իսկ եկեղեցին նույնպես դառնում էր հողի սեփականատեր: Եկեղեցուն վճարվում էր բերքի մեկ տասներորդ մասը, որը կոչվում էր տասանորդ:

Հայաստանում հորից որդուն ժառանգաբար անցնող խոշոր մասնավոր հողերը կոչվում էին *հայրենական* կամ *հայրենիք*: Թագավորները հաճախակի հողային շնորհումներ էին կատարում: Պայմանական հո-

ղատիրության այս կարգի կալվածքները կոչվում էին *պարգևականք*: Թագավորը տարբեր ծառայությունների համար ցմահ կամ ժառանգաբար այդ կարգի շնորհումներ էր կատարում երկրի ավագանու ներկայացուցիչներին: Եթե ստացողը մահանում էր, ապա կարիք կար նվիրատվությունը վերականգնելու: Իսկ եթե ստացողը դադարեցնում էր ծառայությունը, ապա արքունիքը հետ էր վերցնում այդ կալվածքները:

Հողատիրության մի ուրույն ձև էր *գանձագին* կոչվածը: Գանձագին հողերը մասնավոր էին՝ ենթակա առուվաճառքի: Գնման շնորհիվ իշխաններն ու եկեղեցին ավելացնում էին իրենց կալվածքները:

Ժառանգական նախարարական խոշոր հողատիրության աճի հետևանքով թագավորական հողատիրությունը կրճատվում և աստիճանաբար ամփոփվում էր հայոց թագավորին պատկանող տարածքի՝ Միջնաշխարհում գտնվող ոստանի սահմաններում: Արքունի հողային տիրույթների կենտրոնը Ոստան Հայոց գավառն էր՝ Արտաշատ մայրաքաղաքով: Հնուց այն Հայոց աշխարհի քաղաքական, տնտեսական և մշակութային կենտրոնն էր: Այրարատում՝ արքունի տիրույթներում, ապրում էին թագավորը, թագուհին ու թագաժառանգը:

Ավատատիրական աստիճանակարգը: Հայաստանում ավատատիրական աստիճանակարգի գլուխ կանգնած էր թագավորը: Դրա հաջորդ աստիճանին աշխարհական նախարարներն էին՝ բդեշխներն ու գործակալները:

Իշխանական համակարգում գործում էր ենթակայության ավատատիրական հետևյալ սկզբունքը՝ ***«իմ վասալի վասալը իմ վասալը չէ»:***

Հայ հասարակությունը կազմված էր բարձր՝ ***ազատների,*** և ստորին՝ ***անազատների*** դասերից:

Ազատների դասը կազմում էին ազնվականությունը՝ նախարարները՝ աշխարհական և աշխարհատեր, գավառական և գավառատեր իշխանները, և հոգևորականությունը: Ազատների դասի աշխարհիկ ներկայացուցիչները զինվորական ծառայություն էին կատարում հեծելազորում: Ժամանակի ընթացքում Արշակունյաց շառավիղներից ձևավորվեց *ոստանիկներ* կոչվող առանձին ազնվական խավը:

Ոչ ազնվական կամ *անազատների* դասին էին պատկանում քաղաքացիները՝ համեմատաբար արտոնյալ վիճակում գտնվող առևտրականներն ու արհեստավորները, շինականները, ինչպես նաև քաղաքային ու գյուղական ռամիկները, որոնք կարող էին համալրել միայն հետևակը:

Պետական կառավարման համակարգը: Հայոց թագավորությունների ժամանակներում արքունիքը մայրաքաղաքում էր: Պետությունը, ինչպես հնում, կառավարում էր արքան՝ իր արքունիքով: Պատերազմ հայտարարելու, հաշտություն կնքելու, արտաքին գործերը վարելու (դեսպանություններ ուղարկելու և ընդունելու, այլ երկրների հետ բանակցելու) գերագույն իրավունքը պատկանում էր թագավորին:

Երկրի կառավարման և պաշտպանության գործում կարևոր նշանակություն ունեին պետական վարչությունները՝ գործակալությունները: Ամեն գործակալություն տնօրինում էր երկրի կառավարման որոշակի ոլորտ:

Հազարապետի գլխավորած գործակալությունը (հազարապետություն) երկրի տնտեսական–հարկային վարչությունն էր՝ միավորելով նաև հանրային աշխատանքների (քաղաքների ամրությունների, ճանապարհների և կամուրջների կառուցում, ջրանցքների անցկացում, անտառատնկումներ և այլն) կամ պետական պարհակների տնօրինությունը:

Սպարապետության գործակալությունը գլխավորում էր Մեծ Հայքի զինված ուժերի գլխավոր հրամանատարը՝ հայոց սպարապետը: Թագավորական կամ ոստանիկ այրուձին մշտապես նրա տրամադրության տակ էր, իսկ պատերազմի ժամանակ նրան էին ենթարկվում նախարարների զինված ուժերն ու աշխարհազորը:

Հայր մարդպետի գլխավորած մարդպետության գործակալությունը իրականաց-

նում էր արքունի կալվածքների ու գանձարանի հսկողությունը և Արշակունյաց սեպուհների դաստիարակությունը:

Մաղխազության վարչությունը գլխավորում էր մաղխազը՝ արքունիքի և թագավորական պահակազորի հրամանատարը:

Մեծ դպրավորը հնում հայոց քրմապետն էր, IV դարից՝ Հայ առաքելական եկեղեցու առաջնորդը՝ հայոց կաթողիկոսը: Նա հսկում էր ընդունված օրենքները հատկապես ընտանիքի և եկեղեցու իրավունքի բնագավառում:

Ասպետության գործակալությունը ղեկավարում էր թագադիր և թագակապ ասպետը, որը պատասխանատու էր պալատական արարողությունների և օտար երկրների դեսպանների ընդունելության համար:

Գործակալությունների ղեկավարման իրավունքը դարձել էր խոշոր նախարարական տների արտոնությունը. հազարապետությունը՝ Գնունիների, այնուհետև՝ Ամատունիների, սպարապետությունը՝ Մամիկոնյանների, ասպետությունը՝ Բագրատունիների, մարդպետությունը՝ Մարդպետունիների, մաղխազությունը՝ Խորխորունիների: Պետական կարևոր փաստաթղթեր էին *Գահնամակը* և *Զորանամակը*, որոնք սահմանում էին հայ նախարարների՝ ազատների և տանուտերերի կարգը՝ ըստ զբաղեցրած պաշտոնական դիրքի, հզորության ու զորաքանակի:

Գահնամակով սահմանվում էր յուրաքանչյուր նախարարի տեղը արքունիքում: Ավելի ազդեցիկ նախարարները՝ սահմանակալ նահանգների տերերը՝ բդեշխները, նստում էին անմիջապես թագավորի կողքին՝ հատուկ բարձերի վրա:

Երկրի համար առավել կարևոր հարցերը քննարկվում էին աշխարհաժողովում՝ համաժողովրդական ժողովում, որի պարտականությունները IV դ. երկրորդ կեսից աստիճանաբար անցնում են եկեղեցական ժողովին՝ հայոց կաթողիկոսի գլխավորությամբ:

Բանակը: Ռազմական արվեստի հազարամյակների փորձ ունեցող հայոց կանոնավոր բանակի թվակազմը 100–120 հազար էր՝ հեծելազոր և հետևակ: Հայոց թագավորը և նախարարները որոշակի թվով հեծելազոր էին պահում: Այդ հեծելազորային ուժերը միավորվելով կազմում էին հայոց այրուձին: Հայոց ամբողջ բանակը հավաքագրվում էր՝ ըստ անհրաժեշտության:

Թագավորի հեծելազորը տեղակայվում էր Հայոց աշխարհի ռազմավարական կարևոր կետերում՝ *Ուպան Հայոցում* և *բանակ արքունի* կոչված վայրերում:

Թագավորական *ուպանի* պաշտպանությունն իրականացնում էր արքունիքին կից հատուկ հեծյալ ջոկատներից կազմված ոստան այրուձին, որը գլխավորում էին սպարապետը, մաղխազը և մարդպետը: Միևնույն ժամանակ թագավորի անձի պաշտպանությունն ապահովում էր ընտրյալ նետաձիգներից բաղկացած և մշտապես արքունիքում գտնվող մաղխազական այրուձին:

Թագավորական այրուձին և արքունիքը պահվում էին հիմնականում գանձարանի միջոցներից կատարվող դրամական և բնաթերք նպաստի՝ *ռոճիկի* վճարումներով:

Զորանամակում բերված նախարարական տների հեծելազորի ընդհանուր թիվը հասնում էր 85 հազարի:

Ըստ իրենց զորքերի քանակի՝ ավագ նախարարները համարվում էին բյուրավորներ (Սյունի, Կաղմեա), այսինքն՝ 10000-ից ավելի զինվորներ ունեցողներ, և հազարավորներ (Գուգարաց, Աղձնյաց, Բզնունյաց, Բագրատունի, Խորխոռունի և այլք)՝ 1000-4000 հեծյալներ ունեցողներ: Ավելի քիչ հեծելազոր ունեցողները՝ հարյուրավորները, հիսնավորները (Տագրյան, Սոդացի, Գուկանն, Պատսպարունի և այլք) և տասնավորներն էին:

Նետ ու աղեղը, նիզակը, վահանը, պարսատիկը, տեգը, սակրը և այլն կազմում էին հայկական բանակի սպառազինությունը: Կարևոր նշանակություն ունեին քարանետ և պարսպակործան (բաբան և այլն) գործիքները: Բանակի կազմում կային նաև հետախուզական զորամասեր:

Բնակչությունը: Հայաստանը ազգային միատարրությունը պահպանել է նաև միջնադարում: Հայ բնակչությունն ապրում էր քաղաքներում (Արտաշատ, Դվին, Նախիջևան, Երվանդաշատ, Զարեհավան, Կարին, Խլաթ, Մանազկերտ, Տիգրանակերտ, Վան, Զարիշատ և այլն) և գյուղերում: Շինականները՝ ազատ և կախյալ գյուղացիները, ունեին որոշ սեփականություն՝ գյուղական համայնքի հողից մասնաբաժին, տուն, գյուղատնտեսական գործիքներ, անասուններ: Գյուղացու տանն ապրող ընտանիքը կամ գերդաստանը կոչվում էր երդ, որը հարկատու մեկ միավոր էր:

Միջնադարում ևս հիմնական արտադրող օղակը գյուղական համայնքն էր: Տարբեր քաղաքական իրավիճակներում հարկերի ծանրացմամբ կախյալ շինականին լրիվ ընչազրկությունից հաճախ փրկում էր գյուղական համայնքի աջակցությունը: Գյուղական կենցաղում իրենց դերն ունեին նաև արհեստավորները (դարբիններ, քարագործներ, ատաղձագործներ և այլն):

Քաղաքային կյանքը և միջազգային առևտուրը: Հայկական քաղաքային բնակչության մի մասը առևտրականներն ու արհեստավորներն էին: Մայրաքաղաքի և այլ խոշոր քաղաքների հետ մեկտեղ արվեստների ու գիտության կենտրոն էին դառնում վանքերը:

Հայաստանով միջազգային ճանապարհների անցնելու հանգամանքով էր պայմանավորված առևտրականների խավի բավականին տարաբնույթ լինելը քաղաքներում: Հայերի կողքին կային պարսիկ, ասորի և այլ ազգերի առևտրականներ, որոնք մասնակցում էին Մետաքսի ճանապարհով կատարվող միջազգային առևտրին: Քարավաններ էին գալիս Չինաստանից, Հնդկաստանից, Իրանից: Չինական մետաքսի հետ մեկտեղ Արևելքից եկող քարավանները բերում էին արևելյան համեմունքներ, մարգարիտ, անգին քարեր և պերճանքի առարկաներ:

Արտաշատ-Սատաղ մեծ և բարեկարգ ճանապարհի վրա էին ***Դվինը, Նախիջևանը, Երվանդաշատը, Զարեհավանը, Կարինը***: Արտաշատ-Տիգրանակերտ ճանապարհին էին ***Մանազկերտը*** և ***Զարիշատը***: Տիգրանակերտը Փոքր Ասիայից և Միջագետքից եկող ճանապարհների կենտրոնում էր:

Տնտեսական՝ արհեստագործական և առևտրական կենտրոնի իր կարևոր նշանակությունն էր պահպանում Վանը: Դվինը դարձել էր խոշոր քաղաք՝ 100 հազարի հասնող բնակչությամբ:

Հայաստանի վաղմիջնադարյան առևտրական ճանապարհների մասին մանրամասն տեղեկություններ է պարունակում IV դ. հռոմեական աշխարհագետ Կաստորիոսի կազմած աշխարհագրական քարտեզ-ուղեցույցը, որը կոչվում է ***Պևտինգերյան քարտեզ***: Հռոմեական կայսրությունում և Հայաստանում գտնվող կայանների միջև ընկած տարածությունը ցույց է տված հռոմեական մղոններով (մոտ 1,5 կմ): Ի թիվս այլ ուղիների՝ այս քարտեզում նշված է Տիգրանակերտն Արտաշատի հետ կապող արքունի պողոտան:

Անանիա Շիրակացու «Մղոնաչափքը» կարևոր սկզբնաղբյուր է Հայաստանի առևտրական մայրուղիների վերաբերյալ: Ըստ «Մղոնաչափքի» տվյալների՝ Դվինից սկիզբ էին առնում վեց մայրուղիներ, որոնք տանում էին դեպի առաջավորասիական երկրների առևտրական կարևոր կենտրոնները:

Արտաշատում տիրող կարգ ու կանոնին հետևում էին թագավորական տնտեսը՝ *շահապը*, և նրա պաշտոնյաները: Նրանք նստում էին քաղաքի միջնաբերդում՝ դղյակում:

Քաղաքային կյանքում կարևոր դեր էր խաղում շուկան: Քաղաքային պարսպից ներս գտնվող շուկայի տարածքում էին առևտրականների խանութները, արհեստավորների գործատները: Արհեստավոր խալի մի մասը սպասարկում էր արքունիքին, իսկ մյուս մասն իր արհեստագործական արտադրանքով մասնակցում էր քաղաքային և ընդհանրապես երկրի ապրանքաշրջանառության մեջ եղած իրերի պատրաստմանը: Մեծ համբավ էին վայելում հայ ճարտարապետները, շինարար և քարտաշ վարպետները:

Վաղարշապատում հայ վարպետները պալատական շինարարության հետ մեկտեղ մասնակցել են նաև քաղաքի պարիսպների կառուցմանը: Թագավորական պալատը միջնաբերդում էր, որտեղից սկսվում էր *ներքին փողոցը*: Հենց պալատի առջևում կառուցվեց Մայր տաճարը: Քաղաքի արևելյան դարպասից սկսվող ճանապարհը Վաղարշապատը կապում էր Արտաշատի հետ: Այն կոչվում էր ***Արտաշատի պողոտա:***



Հատված Պևտինգերյան քարտեզից

Մայրաքաղաքում հայ ազնվականությունն ապրում էր միջնաբերդում գտնվող թագավորական պալատին մոտ թաղամասում: Այստեղ էր նաև թատրոնը, ուր ներկայացվում էին ողբերգություններ, իսկ այլ քաղաքներում թատերականացված խաղերը կազմակերպվում էին հրապարակներում: Առևտրականները և արհեստավորներն ապրում էին քաղաքի որոշակի թաղամասերում:

Քաղաքներում և քաղաքամերձ ավաններում մեծ թիվ էին կազմում ռամիկները: Նրանք հիմնականում զբաղվում էին այգեգործությամբ և հացահատիկի մշակությամբ քաղաքամերձ հողատարածքներում: Մոտակա գյուղերից շինականները շուկա էին բերում գյուղատնտեսական ապրանքներ:

Հայաստանյայց առաքելական եկեղեցու նվիրապետության հաստատմամբ քաղաքների և գյուղերի կենտրոնական՝ բարձրադիր վայրերում եկեղեցիներ էին կառուցվում: Եկեղեցաշինությունը Հայաստանի քաղաքների և գյուղերի հատակա-

գծին նոր բովանդակություն էր հաղորդում: Եկեղեցիներին կից կառուցվում էին ծխական դպրոցներ:

Միջնադարում հայկական քաղաքային կյանքն առանձնապես մեծ վերելք ապրեց Բագրատունյաց և Կիլիկիայի հայկական թագավորությունների ժամանակներում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք ավատատիրական հարաբերությունների առաջացման առանձնահատկությունները Հայաստանում: Հողատիրության ինչ ձևեր կային:
2. Ինչ դասերից էր կազմված ավատատիրական աստիճանակարգը Հայաստանում: Ովքեր էին կազմում ազատների և անազատների դասերը:
3. Ներկայացրեք գործակալությունները և նրանց գործառույթները: Երբ էին հրավիրվում աշխարհաժողովները: Ինչ էին բովանդակում Գահնամակը և Զորանամակը:
4. Ինչպես էր կազմվում հայոց այրուձին: Ովքեր էին իրականացնում թագավորական ոստանի պաշտպանությունը: Որքան էր հայոց բանակի թիվը:
5. Ովքեր էին շինականները և ինչ սեփականություն ունեին:
6. Ներկայացրեք առևտրական կարևոր ճանապարհները: Թվարկեք վաղմիջնադարյան Հայաստանի նշանավոր քաղաքներ: Նկարագրեք այդ ժամանակի հայկական քաղաքը:

Թեմա 2. ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ IV ԴԱՐՈՒՄ ԵՎ V ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

§ 1. ՊԱՅՔԱՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Մեծ Հայքի թագավորության վերելքը Տրդատ III Մեծի օրոք: Տրդատ III–ի օրոք հզորանում են կենտրոնական իշխանությունը և բանակը: Բարձրացվում է պետական վարչությունների՝ գործակալությունների դերը երկրի կառավարման և պաշտպանության գործում: Տրդատ III–ը Օտա Ամատունուն նշանակում է հազարապետ, իսկ Արտավազդ Մանդակունուն՝ սպարապետ: Երկրի տնտեսությունը վերելք է ապրում: Քաղաքական և տնտեսական դրության կայունացմանը զուգընթաց նոր թափ է ստանում առևտուրը, որի գլխավոր կենտրոններն էին Մեծ Հայքում՝ Արտաշատը և Հյուսիսային Միջագետքում՝ Մծբինը:

Տրդատ III–ը քայլեր է ձեռնարկում Հայ եկեղեցուն տնտեսապես ապահովելու նպատակով՝ գյուղական եկեղեցիների քահանաներին բոլոր ազարակ տեղերում տալով չորսական, իսկ ավաններում՝ յոթական ծխի («հող երդոյ») հողաբաժին: Հայոց կաթողիկոս Գրիգոր Լուսավորիչը և Տրդատ թագավորը ձեռնամուխ են լինում կրթության գործին: Հայաստանի զանազան գավառներից հավաքված մանուկների մի մասին տալիս են ասորի դպրության, մյուսներին՝ հելլենական: Նրանց նպատակն էր հայերենի հմուտ թարգմանիչներ պատրաստելը՝ Ավետարանի խոսքը հայերեն բանավոր թարգմանությամբ ժողովրդին մատչելի դարձնելու, ինչպես նաև պետական գործավարության խնդիրը դյուրացնելու համար:

313 թ. Կոստանդիանոս I Մեծ կայսեր համաձայնությամբ ընդունվում է Միլանի հրովարտակը, ըստ որի՝ քրիստոնեությունը Հռոմեական կայսրությունում հռչակվում է որպես ազատ և մյուս կրոններին իրավահավասար կրոն: Մեծ Հայքի թագավորությունը և Հռոմեական կայսրությունը դառնում են դավանակից երկրներ, նրանց միջև հաստատվում են բարիդրացիական հարաբերություններ:

Սբ Գրիգորն աշխարհիկ կյանքից առանձնացել և ճգնավորի կյանքով ապրում էր Բարձր Հայքի Դարանաղի գավառի Սեպուհ լեռան Մանյա Այրք քարայրում: Տրդատ արքան Գրիգորի որդիների՝ Վրթանեսի և Արիստակեսի հետ գնում է այնտեղ: Արքայի խնդրանքով Գրիգորն ***Արիստակեսին եպիսկոպոս է ձեռնադրում:*** Վերջինս մասնակցում է ***325 թ. Նիկեայի*** առաջին տիեզերական ժողովին, որը սահմանում է ***«Հավատոյ հանգանակը»:*** Արիստակեսը, վերադառնալով Հայաստան, բերում է Նիկեական կանոնները: Սբ Գրիգորն այդ կանոններին ավելացնում է իր կանոնախումբը:

Մեծ Հայքի Փայտակարան աշխարհի նույնանուն քաղաքի վերակացուների խնդրանքով Տրդատ թագավորն այդ կողմերի եպիսկոպոս է ձեռնադրում Վրթանեսի որդուն՝ ***Գրիգորիսին:*** Նրա հոգևոր իշխանության տակ էին ***Հայոց Արևելից կողմերը՝ Արցախը, Ուտիքը*** և ***Փայտակարան աշխարհը,*** ինչպես նաև Հայ առաքելական եկեղեցուն ենթակա ***Վիրքի*** ու ***Աղվանքի եպիսկոպոսությունները:*** Գրիգորիսը քրիստոնեական քարոզչության ժամանակ դաժանորեն սպանվում է Կասպից ծովի արևմտյան ափին գտնվող մազքթաց երկրի թագավոր Սանեսանի հրամանով: Գրիգորիսի մարմինը նրա հավատակիցները բերում և հողին են հանձնում Արցախի ***Ամարաս*** գյուղում՝ իր պապի՝ Սբ Գրիգոր Լուսավորչի կառուցած եկեղեցում:

Խոսրով III Կոտակի քաղաքականությունը: Տրդատ Մեծի և նրա որդու՝ ***Խոսրով III Կոտակի (330-338 թթ.)*** օրոք ամրապնդվում է Հայոց աշխարհի պաշտպանական հզորությունը, տնտեսությունն ու քաղաքաշինությունը վերելք են ապրում:

Ծոփքի վերակացու Արքեղայոսը, որը հայտնի էր բազմաթիվ անօրեն գործողություններով, նենգորեն սպանում է իրեն հանդիմանող Արիստակես կաթողիկոսին և փախչում կայսրության սահմանները: Արիստակեսի աշակերտները նրա մարմինը հանձնում են հողին Բարձր Հայքի Եկեղյաց գավառի Թիլ ավանում: Հայոց



Սուրբ Գրիգոր Լուսավորիչը մկրտում է Տրդատին:

կաթողիկոս է դառնում նրա ավագ եղբայրը՝ ***Վրթանես Ա Պարթևը (333-341 թթ.):***

Երասխի վտակ Մեծամորի հունը փոխվելու և Արտաշատի մոտակայքում ճահիճներ առաջանալու պատճառով Խոսրովը բարեկարգում է մայրաքաղաքից ոչ հեռու գտնվող ***Դվին քաղաքը*** և այնտեղ կառուցում արքունի ապարանք: Նրա հրամանով Գառնի ամրոցից մինչև Դվին կաղնու ծառեր են տնկում: Անտառի մի մասը կոչվում էր ***«Տաճար մայրի»,*** իսկ մյուսը՝ ***«Խոսրովակերտ»*** («Խոսրովի անտառ»), որը մինչև Երասխ էր հասնում: Թագավորը հրամայում է անտառները լցնել կենդանիներով և գազաններով՝ որսի և ժամանցի համար: Դրանք ***աշխարհում առաջին արհեստական անտառներից էին:***

Այս խաղաղ ու բարգավաճ վիճակն ընդհատում է իրեն Արշակունի հորջորջող մազքթաց թագավոր Սանեսանը: 335 թ. նա ներխուժում է Հայաստան և, ավերա-

ծություններ պատճառելով, հասնում Այրարատյան աշխարհ ու գրավում Վաղարշապատը: Հայոց զորավար ***Վաչե Մամիկոնյանը*** Վաղարշապատից դուրս է վտարում մազքութների խառնիճաղանջ զորքերը, այնուհետև ջախջախում Օշականի Ցյու գլուխ լեռան մոտ տեղի ունեցած ճակատամարտում: Սպանված Սանեսանի գլուխը բերում են Խոսրով Կոտակին՝ դրանով լուծելով Գրիգորիսի վրեժը:

336 թ. Սասանյանների զորքերը ներխուժում են Հայաստան: Հայոց թագավորը Բզնունիքի Դատաբեն նախարարին հանձնարարել էր դիմակայել պարսից զորքին: Սակայն Դատաբենն անցնում է թշնամու կողմը: Այդ օրհասական պահին հայոց թագավորի դեմ է գործում նաև Աղձնիքի բդեշխ Բակուրը: Հայոց բանակը սպարապետ Վաչե Մամիկոնյանի գլխավորությամբ ջախջախում է թշնամուն: Դատաբենը և Բակուրը մահապատժի են ենթարկվում: ***Խոսրով Կոտակի սահմանած օրենքով*** աշխարհատեր նախարարները պետք է մնային թագավորի մոտ, և նրանցից ոչ մեկը չպետք է մարտի գնար արքունի զորքի հետ:

Մծբինի պայմանագրի ժամկետը չլրացած՝ 337 թ. Սասանյան արքա ***Շապուհ II Երկարակյացը (309-379 թթ.)*** պատերազմ է սկսում Հռոմեական կայսրության դեմ: Չկարողանալով գրավել Մծբինը՝ պարսիկները հարձակվում են Հայոց աշխարհի վրա: Վաչե Մամիկոնյանի զորքը դուրս է գալիս թշնամու դեմ: Տեղի ունեցած ճակատամարտում երկու կողմերն էլ մեծ կորուստներ են կրում: Զոհվում են սպարապետ Վաչե Մամիկոնյանը և նրա մի քանի զինակիցները: Սակայն թշնամին դուրս էր շպրտվել երկրից: ***Վրթանես կաթողիկոսն օրենք է սահմանում՝*** ամեն տարի Հայոց աշխարհում Վաչե Մամիկոնյանի և նրա հետ զոհված զինակիցների հիշատակը նշելու և հայրենիքի փրկության համար մղված պայքարում իրենց կյանքը զոհաբերողներին սուրբ նահատակների շարքին դասելու մասին: Հայ եկեղեցին Վրթանես կաթողիկոսի սահմանած այս կարգով հետագայում Վարդան զորավարին և նրա

Խոր Վիրապի վանքը, IV-XVII դդ.

հետ Ավարայրի ճակատամարտում իրենց կյանքը նվիրաբերած հայորդիներին նույնպես դասեց սրբերի շարքին:

Խոսրով թագավորը Վաչե Մամիկոնյանի որդուն՝ Արտավազդին, հանձնում է սպարապետության պաշտոնը: Բայց քանի որ Արտավազդը պատանի էր, մինչև նրա չափահաս դառնալը հայոց զորավարության գործը հանձն են առնում Շիրակի իշխան Արշավիր Կամսարականը և Անդովկ Սյունին:

Տիրանի գահակալությունը: Խոսրով Կոտակի որդուն՝ ***Տիրանին (339-350 թթ.)***, Կոստանդիոս II-ը ճանաչել էր հայոց թագավոր, սակայն կայսրությունում պատանդ էին պահվել Տիրանի մի որդին՝ Տրդատը, և թոռները՝ Գնելն ու Տիրիթը: Նրանց կյանքը վտանգված էր: Տիրանն ամեն կերպ աշխատում էր երկրի անկախությունը պահպանել՝ խուսափելով հռոմեա-պարսկական հակամարտության մեջ ներքաշվելուց: Վրթանես կաթողիկոսի վախճանից հետո նրա որդին՝ Հուսիկը, կաթողիկոս ձեռնադրվելու համար մեկնել էր Մաժակ-Կեսարիա: Վերադարձին Տափերի կամրջի մոտ նրան դիմավորում է Տիրան արքան: Թագավորն ու կաթողիկոսը հանդիսավորությամբ մտնում են Արտաշատ: Որոշ ժամանակ անց Հուսիկի և Տիրանի միջև հարաբերությունները սրվում են: Կաթողիկոսը հանդիմանում է թագավորին: Երբ Տիրանն իր ուղեկիցների հետ Ծոփքի Բնաբեղ բերդում ցանկանում էր մտնել եկեղեցի, Հուսիկը թույլ չի տալիս և հենց այդտեղ

էլ նահատակվում է: Եպիսկոպոսապետ է դառնում Փառեն Աշտիշատեցին, այնուհետև՝ Շահակը՝ Աղբիանոսի տոհմից:

Տիրանի հարաբերությունները բարդ էին նաև նախարարների հետ: Այդ ամենի հետևանքով մեծ կորուստներ կրեցին Ռշտունյաց և Արծրունյաց տոհմերը, իսկ հայոց զորքերի հրամանատարներ Արտավազդ և Վասակ Մամիկոնյանները հեռացան իրենց տոհմական աշխարհը՝ Տայք:

Հռոմեական կայսրության հետ շարունակվող հակամարտության ընթացքում պարսից արքան ձգտում էր ասպարեզից հեռացնել Հռոմին աջակցող Տիրանին: Այդ ժամանակ Հայաստան եկած՝ Ատրպատականի մարզպան Վարազը, օգտվելով ստեղծված իրավիճակից, դավադրաբար ձերբակալեց Տիրանին, ածուխով աչքերը դաղեց ու տարավ Շապուհի մոտ: Հայ նախարարները փորձեցին ճանապարհին ազատել հայոց թագավորին, բայց հաջողություն չունեցան: Այնուհետև հայ ավագանին Կոստանդիոս կայսեր մոտ պատգամավորություն ուղարկեց՝ պարսիկների դեմ ռազմական դաշինք կնքելու առաջարկով: Շապուհը, իմանալով այդ մասին, ազատ արձակեց Տիրանին: Սակայն վերջինս, լինելով կույր, հեռացավ պետական գործերից և բնակություն հաստատեց Արագածի լանջերին՝ Կուաշում (Կոշ): Գահ բարձրացավ Տիրանի մյուս որդին՝ ***Արշակ II-ը (350-368 թթ.):***

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ քայլեր ձեռնարկեց Տրդատ III-ը կենտրոնական իշխանության և բանակի հզորացման ուղղությամբ:
2. Ինչո՞ւ և որտե՞ղ էր առանձնացել Լուսավորիչը: Հայաստանից ո՞վ մասնակցեց Նիկեայի տիեզերական ժողովին: Ի՞նչ է «Հավատո հանգանակը»: Ո՞վ էր Գրիգորիսը և ինչ գործունեություն էր իրականացնում:
3. Ե՞րբ է թագավորել Խոսրով III Կոտակը. ինչպիսի՞ն էր Հայաստանը նրա օրոք: Ի՞նչ գործերով է նշանավորվել Խոսրով Կոտակը: Ի՞նչ կանոն սահմանեց Վրթանես հայրապետը: Խոսրով Կոտակն ո՞ւմ շնորհեց սպարապետության պատիվը:
4. Արտաքին ինչ քաղաքականություն էր վարում Տիրանը: Ինչպե՞ս ավարտվեց արքայի և կաթողիկոսի միջև հակամարտությունը: Ի՞նչ դրսևորում ունեցան թագավորի և նախարարների միջև հարաբերությունները:

§ 2. ԱՐՇԱԿ II ԵՎ ՊԱՊ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ներքաղաքական իրավիճակը: Հռոմեա-պարսկական հակամարտության սրման պայմաններում Հայաստանին ահաբեկելու նպատակով Հռոմում սպանում են Արշակի եղբորը՝ արքայազն Տրդատին: Հուսիկ կաթողիկոսի թոռան՝ ***Ներսես Ա Պարթև կաթողիկոսի (353-373 թթ.)*** միջնորդությամբ հայրենիք են վերադառնում մյուս պատանդները՝ Տիրիթն ու Գնելը: Վերջիններիս ազատ արձակելով՝ կայսրը նպատակ ուներ նաև, անհրաժեշտության դեպքում, նրանց օգտագործելու Արշակի դեմ՝ հայոց գահը հանձնելով նրանցից մեկին: Գնելն ամուսնանում է Անդովկ Սյունու աղջկա՝ Փառանձեմի հետ: Տիրիթը, որ նույնպես սիրում էր Փառանձեմին, Արշակին տրամադրում է Գնելի դեմ՝ արքային հավաստիացնելով, թե նա ցանկանում է դավադրորեն դառնալ հայոց թագավոր: Գնելին մահապատժի են ենթարկում: Արշակը, իմանալով, որ Տիրիթն իրեն խաբել է, նրան նույնպես մահապատժի է ենթարկում, այնուհետև ամուսնանում Փառանձեմի հետ:

Արքունիքի և նախարարական տների միջև աճող լարվածությունը սպառնում էր երկրի ներքին կայունությանը: ***354 թ. Տարոն***

գավառի Աշտիշատ գյուղում գտնվող Մայր եկեղեցում Ներսես Ա-ն հրավիրում է *Հայ եկեղեցու առաջին ժողովը*, որն ընդունում է հոգևոր և աշխարհիկ կյանքին առնչվող կանոններ: Որոշվում է կառուցել վանքեր, դպրոցներ, հիվանդանոցներ, իջևանատներ, աղքատանոցներ: Ժողովի սահմանած կանոնը հայոց թագավորին ու մեծամեծերին պատվիրում էր գթասիրտ լինել իրենց ծառաների և ստորադրյալների նկատմամբ, սիրել նրանց՝ որպես իրենց ընտանիքի անդամների, անօրեն կերպով և չափազանց մեծ հարկերով չնեղել հասարակ ժողովրդին: Ծառաներին էլ պատվիրում էր հնազանդ ու հավատարիմ մնալ իրենց տերերին: Աշտիշատի կանոններով արգելվում են հեթանոսական շատ սովորույթներ՝ բազմակնությունը, մահացածների վրա անվայելուչ լացը, հարբեցողությունը և այլն:

Արշակ II-ն ուժեղ անձնավորություն էր և հաստատակամորեն ինքնուրույն քաղաքականություն էր վարում: Թագավորական իշխանության ամրապնդման և նախարարական կենտրոնախույս տրամադրությունները զսպելու նպատակով նա սկսում է *Արշակափան* քաղաքի կառուցումը Կոգովիտ գավառում: Արշակը թույլատրում է քաղաքում ազատորեն բնակություն հաստատել բոլոր ցանկացողներին, նույնիսկ օրինազանցներին: Այդ հանգամանքն առաջացնում է նախարարների դժգոհությունը, քանզի նրանց կալվածքներից Արշակավան էին փախչում ավանդառուներն ու պարտապանները, նրանցից դժգոհ ծառաներն ու շինականները: Թագավորից դժգոհ նախարարները, օգտվելով առիթից, որ արքան մեկնել է Վրաստան, հարձակվում և ավերում են Արշակավանը: Արշակը պատժում է որոշ նախարարների:

Արշակ II-ի քաղաքականությունը և պարսկա-հռոմեական պատերազմը: 359 թ. պատերազմ է սկսվում Հռոմի և Պարսկաստանի միջև: Այս պատերազմի ընթացքում շատ կարևոր էր Հայաստանի դիրքորոշումը: Շապուհն օգնության խնդրանքով դիմում է Արշակին: Վերջինս

Շապուհ II-ի դրամներից

հայոց զորքով պարսիկներից շուտ հասնում է *Մծբին* քաղաքի մոտ և հաղթանակ տանում հռոմեացիների հանդեպ: Շապուհի դստեր հետ ամուսնանալու առաջարկը Արշակը կտրականապես մերժում է: Անդովկ Սյունուն հայտնի է դառնում, որ Շապուհը մտադիր է սպանել Արշակին: Այդ մասին իմանալով՝ Արշակը անմիջապես վերադառնում է հայրենիք: Հայ-պարսկական կարճատև ռազմական դաշինքը խախտվում է: Ռազմական գործողություններն անձամբ գլխավորելու նպատակով Արևելք եկած Կոստանդիոս II-ի հրավերով Արշակ II-ը մեկնում է Մաժակ քաղաքը, որտեղ նրանք ամրապնդում են հայ-հռոմեական դաշինքը Արշակի և Օլիմպիայի՝ կայսեր մահացած եղբոր նշանածի ամուսնությամբ: Փառանձեմը չէր կարող հաշտվել այդ իրավիճակի հետ: Նրա ծառաներից մեկը թունավորում է Օլիմպիային:

Պարսկա-հռոմեական պատերազմն ավարտվում է Տիզբոնի մոտ Հուլիանոս Ուրացող կայսեր պարտությամբ և մահով: Պարսից արքայի և հռոմեական նոր կայսեր՝ Հովիանոսի միջև *363 թ. կնքված պայմանագրով* կայսրը պարտավորվում էր չօգնել հայոց արքային: Ըստ Փավստոս Բուզանդի՝ կայսրը Շապուհին վստահեցրել էր. «...եթե կարողանաս հաղթել նրանց և պարտադրես ծառայելու, ես նրանց թիկունքը չեմ պաշտպանի»: Հռոմեացի պատմիչ Ամմիանոս Մարկելինոսը (IV դ.) այդ պայմանագիրն անվանել է *«ամոթալի»*:

Հայ-պարսկական պատերազմը: Մեծ Հայքի թագավորության հարավային սահմանագլխին՝ Գանձակ (Շահաստան)

քաղաքում տեղակայված հայոց սահմանապահ գնդի հրամանատարներն Արշակ թագավորին տեղեկացնում են Շապուհ II-ի զորքերի ներխուժման վտանգի մասին: Արշակի հրամանով Վասակ սպարապետի զորքը դուրս է գալիս թշնամու դեմ և 363 թ. պարտության մատնում նրան:

Հաջորդ տարի Սասանյանների զորքերը Հայաստան են ներխուժում երեք ուղղությամբ: Արշակը, Վասակը և նրա եղբայրը տեղի ունեցած մի քանի ճակատամարտերում ջախջախում են թշնամուն:

Այդ ժամանակ Մերուժան Արծրունին ներկայանում է Շապուհին, իր հպատակությունը հայտնում նրան և, ուրանալով քրիստոնեությունը, ընդունում մազդեզականություն: Շապուհը նրան խոստացել էր օգնել տիրանալու հայոց գահին՝ երկիրը պարսկական տիրապետությանը և կրոնին ենթարկելու պայմանով:

Պարսից զորքերի ներխուժումները Հայոց աշխարհին ավերածություններ էին պատճառում: ***Վասակ Մամիկոնյանը կարողանում է թշնամուն դուրս մղել երկրից:*** Հաջորդ անգամ Շապուհի մեծաքանակ զորքը հասնում է Անգեղ ամուր բերդը, որտեղ Արշակունի թագավորների գերեզմաններն ու գանձերն էին: Պարսիկները, չկարողանալով տիրել այս բերդին, գնում ու գրավում են ***Անի բերդը Դարանաղիում:*** Նրանք չեն կարողանում քանդել միայն Սանատրուկ թագավորի շիրիմը, արքայական մյուս գերեզմանները բացում են և թագավորների ոսկորները գերեվարում՝ ասելով. *«Նրա համար ենք մենք հայոց թագավորների ոսկորները մեր աշխարհը փանում, որ այս աշխարհի թագավորների փառքը, բախտն ու քաջությունը այստեղից թագավորների ոսկորների հետ մեր աշխարհը փոխադրվեն»:* Վասակ սպարապետի գլխավորած հայոց 60000-անոց զորքը ջախջախում է թշնամուն, ազատում թագավորների ոսկորները և վերաթաղում Արագած լեռան լանջին՝ ***Աղձք*** գյուղում:

Հայաստան ներխուժած պարսից զորքերը նոր պարտություններ են կրում: Երկարատև պատերազմները հյուծում էին թե՛ պարսիկների և թե՛ հայերի ուժերը: Վիճակն ավելի է ծանրանում, երբ Մերուժանի դավաճանական օրինակին հետևում է Վահան Մամիկոնյանը:

Արշակի և Վասակի դավադրական սպանությունը: Շապուհը, համոզվելով, որ ռազմական ճանապարհով անհնար է ընկճել հայերին, որոշում է խաբեությամբ ձերբակալել Արշակին: Նա դեսպանների միջոցով հայոց արքային Տիզբոն է հրավիրում՝ վիճելի հարցերը կարգավորելու պատրվակով: Շապուհը իր մատանիով կնքված աղ է ուղարկում, ինչը պարսիկների բարձրագույն երդումն էր համարվում: Ի վերջո Արշակ թագավորը Վասակ սպարապետի ուղեկցությամբ ***368 թ. մեկնում է Պարսկաստան:*** Շապուհն Արշակին փորձելու նպատակով, ինչպես պատմում է Փավստոս Բուզանդը, հրամայում է Հայաստանից բերել հող ու ջուր և արքունի դահլիճի հատակի կեսը ծածկում այդ հողով՝ վրան ցանելով ջուրը: Շապուհը, Արշակի ձեռքից բռնած, ճեմելով շրջում էր դահլիճում: Պարսից հողի վրա Արշակը, որ խոսում էր զոչումով, հայկական հողի վրա սաստիկ ըմբոստանում է Շապուհի դեմ և հպարտորեն ասում. «Հեռո՛ ինձանից, չարագործ ծառա, որ տերերիդ վրա տեր ես դարձել, և ես չեմ ների քեզ և քո որդոց իմ նախնիների վրեժը...»: Շապուհը հրամայում է Արշակին ձերբակալել և փակել Անհուշ բանտում:

Հաջորդ օրը Շապուհի հրամանով պալատ են բերում Վասակ Մամիկոնյանին: Նա ծաղրում է Վասակին՝ ասելով. *«Աղվե՛ս, այդ դո՞ւ էիր խանգարիչը, որ այսքան չարչարեցիր մեզ... Ես քեզ պիտի աղվեսի մահով սպանեմ»:* Իսկ Վասակ սպարապետը արժանապատվորեն պատասխանում է. *«Այժմ, երբ ինձ տեսնում ես կարճահասակ, մեծությանս չափը չես հասկանում, որովհետև մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ աղվես: Բայց մինչ ես Վասակն էի՝ հսկա էի, մի ոտս հենում էի մի լեռան վրա, իսկ մյուսն էլ՝ մյուս լեռան. երբ հենվում էի աջ ոտքիս վրա, աջ կողմի լեռն էր գետնի տակ անցնում, երբ ձախ ոտքիս վրա էի հենվում, ձախ կողմի լեռն էր գետնի տակ անցնում»:* Շապուհի

հարցին, թե որոնք էին այդ լեռները, Վասակ սպարապետը պատասխանում է. *«Այդ երկու լեռներից մեկը դու էիր, իսկ մյուսն էլ՝ հունաց թագավորը»*: Կատաղած Շապուհը հրամայում է Վասակին սպանել: Շուտով բանտում նահատակվում է նաև Արշակ II թագավորը՝ Արշակունյաց արքայատոհմի ամենապայծառ դեմքերից մեկը:

Պապ թագավորի գահակալությունը: Փառանձեմ թագուհին տասնմեկ հազար ընտիր զորականներով Արշակ II–ի՝ Տիզբոն մեկնելուց հետո ամրանում է Արտագերս ամրոցում և երկարատև ու հերոսական դիմադրություն ցույց տալիս պարսիկներին: Թագուհու միակ հույսն իր որդու՝ Պապի վերադարձն էր, որին նա ուղարկել էր Վաղես կայսեր մոտ՝ օգնություն խնդրելու: Զավթիչները, ներխուժելով ամրոց, ոչնչացնում են ողջ մնացածներին, իսկ Փառանձեմին անմարդկային խոշտանգումների ենթարկելով՝ սպանում:

Այդ ընթացքում Մերուժանը և Վահանը երկրի տարբեր վայրերում ավերածություններ էին կատարում, ատրուշաններ շինում և հայերին բռնի պարտադրում մազդեզական կրոնը: Ուրացյալ Վահանին սպանում է իր որդին՝ Սամվել Մամիկոնյանը:

Պապը հռոմեական զորավար Տերենտիոսի գլխավորած մի զորաջոկատով վերադառնում է Հայաստան և ***հաստատվում է հայոց գահին (370–374 թթ.)***: Նահատակված սպարապետ Վասակ Մամիկոնյանի որդին՝ ***Մուշեղը***, դառնում է հայոց սպարապետ և սկսում Հայոց աշխարհի ազատագրումը:

Ըստ Փավստոս Բուզանդի՝ Մուշեղը վերականգնում է *«...հին սահմանը, որ առաջ գոյություն ուներ Հայոց երկրի և Վրաց երկրի միջև, որպիսինն էր մեծ գետ Կուրը»*: Մուշեղ զորավարը շրջում էր երկրում և քանդում պարսիկների ու հայրենիքն ուրացողների կառուցած մազդեզական ատրուշանները: Պարսից արքունիքից պատիվ վայելող անձինք ձերբակալվում և խստագույնս պատժվում էին: Այդպես Մուշեղը լուծում էր Արշակ արքայի և Վասակ սպարապետի վրեժը: Պապ թագավորը տեր է կանգնում

Արածանի գետը Ձիրավի դաշտում

Կոգովիտ գավառի Դարույնք բերդում պահվող Արշակունյաց գանձերին: Երկրում վերաշինվում են ավերված բնակավայրերը, նորոգվում եկեղեցիները, կարգի բերվում պետության գործերը:

370 թ. Մուշեղը 40 հազար ընտիր զորականներով գնում է դեպի Հայաստանի հարավային սահմանը: Այնտեղ էր եկել Շապուհն իր զորքով, որի մի գնդի հրամանատարն էր հայրենադավ Մերուժանը: ***370 թ. Ապրիլ ամսին Մուշեղն*** իր զորքով նախահարձակ է լինում: Շապուհը փախչում է, իսկ պարսից ավագներից շատերը ձերբակալվում են և Մուշեղի հրամանով մահապատժի ենթարկվում: Հաղթանակած հայերի ձեռքն են ընկնում պարսից արքայի գանձարանը և կանանոցը: Մուշեղը ***հրամայում է կանանոցը վերադարձնել Շապուհին:*** Շապուհը, ապշած հայոց զորավարի արարքից, մի գավաթի վրա նկարել է տալիս Մուշեղի պատկերը՝ ձերմակ ձին հեծած: Իր զորքին հյուրասիրելու պահին նա ամեն անգամ ձեռքն է վերցնում գինու գավաթը և ասում. ***«Ձերմակաձին գինի սրբցէ»***: Երբ հայոց զորքը վերադառնում է պատերազմից, ոմանք Պապի առջև ամբաստանում են Մուշեղին: Թագավորը զայրանում է, որ Մուշեղն ինքնակամ ազատել է կանանոցը՝ անհարկի մեծահոգաբար վարվելով իր մոր հանդեպ դաժանորեն գործած Շապուհի նկատմամբ:

Պապ թագավորը, տեղեկանալով, որ *371 թ.*

պարսից մեծաքանակ զորքը կրկին ներխուժել է երկիր և հասել Միջնաշխարհ, հրամայում է հայոց զորքերը հավաքել Այրարատ նահանգի *Բագրևանդ գավառի Ձիրավի դաշտում*: Նրանց են միանում հռոմեական զորաջոկատները: Պապ թագավորը մարտավարության բոլոր կանոններով հայ–հռոմեական միացյալ ուժերը նախապատրաստում է վճռական ճակատամարտի: Հայոց զորքի թիվը ավելի քան *90 հազար էր*:

Տերենտիոս զորավարը խնդրում է Պապ թագավորին և Ներսես կաթողիկոսին ապահովության համար բարձրանալ Նպատ լեռը: Այնտեղ է գնում նաև Մուշեղը: Կաթողիկոսի բարեխոսությամբ փարատվում է Պապի զայրույթը Մուշեղի նկատմամբ: Սպարապետը սուրբ երդում է տալիս և ստանում կաթողիկոսի օրհնությունն ու թագավորի բարի մաղթանքը, որից հետո կրկին ստանձնում է զորքի հրամանատարությունը:

Լուսադեմին սկսվում է *Ձիրավի ճակատամարտը*: Ներսես կաթողիկոսը, բազուկները տարածած, հայոց հաղթանակի համար աղոթում է Նպատ լեռան վրա: Մուշեղի գլխավորած զորագնդերը հաջողությամբ գրոհում են պարսիկների վրա: Հաղթանակը կատարյալ էր:

Պարսից բանակի մնացորդները փախուստի են դիմում: Մերուժանին ձերբակալում է Սմբատ Բագրատունին: Նա, երկաթե շամփուրը տաքացնելով, բոլորում է պսակի ձևով և շիկացնելով ասում. *«Քեզ պսակում եմ, Մերուժան, որովհետև դու ձգտում էիր հայոց վրա թագավորելու, և իմ՝ ասպետիս պարտքն է քեզ պսակել իմ հայրերի իշխանության կարգով»:* Եվ շիկացած շամփուրը դնում է Մերուժանի գլխին: Այդպես իրականացվում է չարագործի մահապատիժը:

372 թ. Մուշեղը, լուր ստանալով Շապուհի առաջիկա ներխուժման մասին, զորքով շարժվում է դեպի *Գանձակ*: Հայոց զորքը քաջալերական *«Քաջ Արշակի հանար»* բացականչություններով մարտի է նետվում և ջախջախում է պարսկական ուժերը: Վերականգնվում է երկրի խաղաղությունը:

Պապի բարեփոխումները: Պապ թագավորը և Մուշեղ սպարապետը զբաղվում են պետության անվտանգության և ռազմատնտեսական հզորության ամրապնդմամբ: Բանակի թիվը հասցվում է մոտ հարյուր հազարի: Հոգևորականների եղբայրներին, զավակներին և ազգականներին պարտադրվում է պետական ծառայություն կատարել: Միևնույն ժամանակ սահմանափակվում է եկեղեցական հողատիրությունը: Այդ նպատակով Պապը նախ վերացնում է «պտղի և տասանորդների կարգը», այսինքն՝ բերքից եկեղեցուն վճարվող տուրքը: Այնուհետև նա, հօգուտ արքունիքի, եկեղեցուց կտրում է դեռևս Տրդատ III Մեծի տված հողի մեծ մասը: Պապի հրամանով փակվում են նաև կուսանոցները և այրիների ապաստանները, թույլ է տրվում կույսերին և այրի կանանց ամուսնանալ: Այդպես Պապը խրախուսում էր երկրի բնակչության և հայոց բանակի թվաքանակի աճը:

Պապի վարած անկախ քաղաքականության արդյունքում Հայաստանից վտարվել էին պարսից զորքերը: Հայոց կաթողիկոսական աթոռին Սբ Ներսես Մեծի մահվանից հետո Աղրիանոսի տոհմից բարձրացած Հուսիկ–Շահակը այլևս Կեսարիա չի մեկնում՝ ձեռնադրություն ստանալու մետրոպոլիտից, ինչով հաստատվում էր Հայոց կաթողիկոսական աթոռի սկզբնական ինքնագլխությունը:

Պապը պատգամավորներ է ուղարկում Վաղես կայսեր մոտ տարածքային պահանջով, ըստ Փավստոս Բուզանդի՝ փաստարկելով, թե՝ «հնում Կեսարիայի ուրիշ տասը քաղաք մերն են եղել, ետ տուր, Ուռհա (Եդեսիա) քաղաքն էլ մեր նախնիքն են շինել, ուստի եթե չես ուզում, որ խռովություն ծագի մեր մեջ, ետ տուր»: Սա վկայում է ժամանակին այդ տարածքների՝ հայկական պետության մեջ լինելը: *Վաղես կայսրը*, որն այդ ժամանակ Կիլիկիայի *Տարսոն* քաղաքում էր, պատասխանում է դավադրությամբ: Կայսրը իր մոտ է կանչում հայոց թագավորին, որը վերջին պահին է իմանում դավադրության մասին: Պապը մեծ դժվարությամբ իր 300–հոգանոց թիկնապահ գնդով կարողանում է խուսափել ծուղակից և վերադառնում է Մեծ Հայք:

Վաղես կայսեր հրամանով հռոմեական հրամանատարները 374 թ. դավադրորեն սպանում են Պապին խնջույքի ժամանակ: Այսպես նենգաբար ասպարեզից հանվեց հայոց երիտասարդ ու եռանդուն արքան, որն իր կարճատև գահակալման ընթացքում կատարեց բազմաթիվ հայրենանվեր գործեր: Նա հայոց պատմության մեջ մնաց որպես նշանավոր արքաներից մեկը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ քաղաքականություն էր վարում Արշակ II-ը: Երբ և ո՞ւմ կողմից է հրավիրվել Աշտիշատի ժողովը: Ինչ կարևոր որոշումներ ընդունեց այդ ժողովը: Ո՞րն էր Արշակ II-ի և նախարարների միջև հակամարտության պատճառը:
2. Ինչ ընթացք ունեցավ 359 թ. ծագած պարսկա-հունական պատերազմը: Ինչպե՞ս ընթացան հայ-հռոմեական հարաբերությունները: Ինչ գիտեք 363 թ. կնքված պայմանագրի մասին:
3. Ներկայացրեք հայ-պարսկական պատերազմի ընթացքը: Ինչպե՞ս Շապուհին հաջողվեց ձերբակալել Արշակ II-ին և Վասակ Մամիկոնյանին: Փորձեք մեկնաբանել Արշակի և Վասակի պահվածքը:
4. Ինչպե՞ս ավարտվեց Արտագերսի պաշտպանությունը: Ինչո՞վ ավարտվեց 370 թ. Ատրպատականում տեղի ունեցած ճակատամարտը: Բնութագրեք Մուշեղ սպարապետի արարքը:
5. Ներկայացրեք Ձիրավի հաղթական ճակատամարտը: Ինչ պատժի արժանացավ դավաճան Մերուժանը:
6. Հայոց պետության անվտանգության և ռազմատնտեսական հզորության ամրապնդման ուղղությամբ ինչ քայլեր ձեռնարկեց Պապ թագավորը: Ինչ արտաքին քաղաքականություն էր վարում նա: Ներկայացրեք Պապի կերպարը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Փավստոս Բուզանդը 371թ. Ձիրավի ճակատամարտի մասին

Պապ թագավորն ու Ներսես եպիսկոպոսապետը կանգնած մնացին Նպատ լեռան վրա, և Սուրբ Ներսես, իր մշտատարած ձեռքերը երկինք բարձրացնելով, խնդրում էր Տիրոջից, որ խնայե՛ իր ուխտին և իր Սուրբ եկեղեցիներին... Մինչ նա աղոթում էր Աստծուն, հայոց բոլոր զորքերի ճակատը կրակի նման գնում էր պարսից զորքերի դեմ, իսկ Մուշեղի գունդը, բոլոր մյուս գնդերից առաջ անցնելով, շտապ-շտապ գնում էր... Պարսից գնդերը պարտություն կրեցին, փախուստի դիմեցին և ցրվեցան, սփռվեցին դաշտերում, լեռների կատարներում, խորերում և ձորերում... (Հայոց պատմություն, Ե, 4):

§ 3. ՀԱՅՈՑ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՄՈՒՏԸ

Վարազդատի գահակալությունը և Մուշեղ սպարապետի ծրագիրը: Հռոմեական կայսր Վաղեսը կեղծ ափսոսանք է հայտնում Պապի սպանության կապակցությամբ: Այդ Մեծ Հայքում թագավորում է Պապի ազգական ***Վարազդատը (374-378 թթ.):*** Նա վերադարձել էր Հռոմից, ուր հեռացել էր՝ խուսափելով Շապուհի հետապնդումներից: Վարազդատը կայսրությունում գտնվելու ժամանակ հայտնի էր դարձել որպես օլիմպիական խաղերի հաղթող: Քանի որ նա երիտասարդ էր և անփորձ, ուստի Մուշեղ սպարապետն էր առաջնորդում հայոց բանակը, իսկում Մեծ Հայքի թագավորության սահմանները և բարի խրատներ տալիս թագավորին: Մուշեղի ծրագիրը



Սբ Մեսրոպ Մաշտոց



Հայոց կաթողիկոս Սբ Սահակ Պարթև

նախատեսում էր Սասանյանների հարձակումներից Հայաստանը պաշտպանելու նպատակով Հռոմեական կայսրության հետ սերտ ռազմական համագործակցություն: Իսկ կայսրությունը ձգտում էր Հայաստանը պահել իր քաղաքական ոլորտի մեջ:

Բատ Սահառունի նախարարը, որ Վարազդատի ուսուցիչն էր եղել, մտադրվում է Մուշեղից խլել սպարապետության պաշտոնը: Նա Վարազդատին տրամադրում է Մուշեղ սպարապետի դեմ՝ հավատացնելով, թե նա է թագավոր դառնալու նպատակով կազմակերպել Պապի սպանությունը: Եվ քանի որ նրանք Մուշեղից շատ էին վախենում, ապա որոշում են ընթրիքի ժամանակ նրան սպանել: Խնջույքի թեժ պահին չարագործ Բատը Մուշեղին դավադրաբար սպանում է: ***Մուշեղ Մամիկոնյանի*** վերջին խոսքերն էին. «Իմ այնքան ծառայությունների, արյուն ու քրտինք թափելու... հատուցումն ա՞յս եղավ: Բայց այս մահը երանի՞ թե ձիու վրա ինձ հասներ»:

Արշակ III-ի գահակալությունը և Մանվել սպարապետը: Այդ ժամանակաշրջանում գերությունից ազատվելով՝ Պարսկաստանից հայրենիք են վերադառնում Մանվել և Կոմս Մամիկոնյան եղբայրները: Մանվելը տեր է կանգնում Մամիկոնյան տոհմի տանուտերության և նահապետության առաջնորդությանը և ստանձնում սպարապետության գործը՝ պահանջելով Վարազդատից հեռանալ երկրից: Վերջինս էլ իր հերթին է պահանջում, որ Մանվելը հեռանա երկրից: Ի վերջո Վարազդատը հարկադրված հեռանում է կայսրության սահմանները: Իսկ Բատ Սահառունուն, ինչպես նաև Մուշեղի սպանության մյուս մեղսակիցներին բռնում և բերում են Մանվելի մոտ, որի հրամանով նրանց մահապատժի են ենթարկում:

Սպարապետ ***Մանվել Մամիկոնյանի*** խնամակալությամբ հայոց գահին հաստատվում են Արշակն ու Վաղարշակը՝ Պապի որդիները: ***Արշակ III-ին (378-387 թթ.)*** Մանվելն ամուսնացնում է իր Վարազդուխտ դստեր հետ: Երբ Մանվելը ծանր հիվանդանում է, նա իր մոտ է կանչում Արտաշիր որդուն և պատվիրում հավատարիմ լինել Արշակ թագավորին, Հայոց աշխարհը պաշտպանել թշնամիներից:

Հայաստանի պարսկա-հռոմեական բաժանումը և Խոսրով IV-ի միավորիչ ջանքերը: Հայ Արշակունիների տոհմից

Խոսրովին 385 թ. պարսից արքան ուղարկում է Հայաստան: Արշակ III–ը հեռանում է Հայաստանի արևմտյան մասը, որտեղ մահանում է երկուսուկես տարի անց: ***387 թ.*** Մեծ Հայքի թագավորությունը բաժանվում է Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև: Հայկական թագավորության արևմտյան մասն անցնում է Հռոմի, իսկ արևելյանը՝ Պարսկաստանի գերիշխանության տակ: Մեծ Հայքի արևմտյան մասի կառավարումը Թեոդոսիոս I կայսրը հանձնում է կուսակալներին՝ կոմեսներին: Արևմտյան Հայաստանի հյուսիս-արևմտյան մասը հռոմեական աղբյուրներում շարունակում էր կոչվել *Մեծ Հայք* կամ *Ներքին Հայք*, իսկ հարավարևմտյան մասում պահպանվում էր հայ նախարարների ինքնուրույնությունը: ***Խոսրով IV–ը*** իշխում է Արևելյան Հայաստանում:

Խոսրով IV–ը, Թեոդոսիոս I–ի համաձայնությամբ որոշ ժամանակ հարկ վճարելով, իշխում էր նաև Հայաստանի արևմտյան մասի վրա: Առանց Սասանյանների հետ համաձայնեցնելու նա հայոց կաթողիկոս է նշանակում ***Սահակ Պարթևին***՝ Ներսես Մեծի որդուն՝ փորձելով միավորել երկրի երկու մասերը: Խոսրով թագավորի ինքնուրույն հարաբերությունները հռոմեական կայսեր հետ և Սահակ Պարթևին կաթողիկոս նշանակելն առաջացնում են Շապուհ III–ի զայրույթը: Նրա հրամանով պարսից պաշտոնյաները նենգորեն ձերբակալում են Խոսրովին և նրան հավատարիմ Գազավոն Կամսարականին: Գազավոնի եղբայրը՝ Շավարշ Կամսարականը, և Պարգև Ամատունի իշխանը յոթ հարյուր զինակիցներով հարձակվում են պարսկական բազմաթիվ պահակախմբի վրա: Հայ քաջերից շատերը զոհվում են, իսկ Պարգևին պարսիկները գերեվարում և Խոսրովի ու Գազավոնի հետ տանում են Պարսկաստան:

Վռամշապուհի համապետական գործունեությունը: Խոսրով IV–ի եղբոր՝ ***Վռամշապուհ արքայի (388–414 թթ.)*** գահակալության տարիները խաղաղ էին և արգասավոր: Սակայն Պարսկաստանի ու Հռոմեական կայսրության միջև բաժանված Հայաստանին սպառնացող վտանգը պահպանվում էր: Ստեղծված քաղաքական իրավիճակում պետականության շահերից բխող մեծ ջանասիրությամբ գործում էր հայոց կաթողիկոս Սահակ Պարթևը: Վռամշապուհ արքայի հետ խորհրդակցելով՝ նա մեկնում է պարսից արքունիք և ստանում Վռամ IV–ի համաձայնությունը Համազասպ Մամիկոնյանին (Սահակ Պարթևի դստեր՝ Սահականույշի ամուսնուն) հայոց սպարապետ նշանակելու մասին: Պարսից արքան նաև համաձայնվում է, որ Խոսրովի ազատման համար պայքարած նախարարները նորից տեր դառնան պարսից արքունիքի կողմից բռնազավթված իրենց տիրույթներին: Այսպես Կամսարականները և Ամատունիները վերադարձնում են իրենց տոհմական տիրույթները:

Վռամը շտապում էր կարգավորելու հարաբերությունները Վռամշապուհի հետ, քանի որ Կոստանդնուպոլսում խռովություններ էին ծագել, և խառնաշփոթ էր ստեղծվել կայսրությունում, ինչը վտանգում էր վիճակը պարսկա–բյուզանդական սահմանային գոտում՝ Հյուսիսային Միջագետքում:

Վռամշապուհին հաջողվում է օգտվել ստեղծված իրավիճակից և դիվանագիտորեն միավորել Մեծ Հայքի երկու մասերը ախոյան տերություններին՝ Բյուզանդիային և Պարսկաստանին հարկ վճարելու գնով: Վռամշապուհի գահակալման շրջանում տեղի է ունենում նաև մշակութային դարակազմիկ իրադարձություն: Արքայի և Սահակ Պարթև կաթողիկոսի հովանավորությամբ Մեսրոպ Մաշտոցը ստեղծում է ***հայոց այբուբենը (405 թ.):***

Հայ Արշակունիների հարստության անկումը և դրա հետևանքները: Վռամշապուհի մահից հետո նրա որդին՝ Արտաշեսը, անչափահաս էր: Հայ նախարարների խնդրանքով պարսից արքա Հազկերտ I–ը թագավոր է հաստատում ***Խոսրով IV–ին,*** որը ութ ամիս անց մահանում է ***(415 թ.):*** Հազկերտը հայոց գահին բազմեցնում է իր որդուն՝ ***Շապուհին*** (415–419 թթ.), որի անարգաբարո կառա-

վարումը տևում է չորս տարի: Նրանից հետո Մեծ Հայքում գահակալում է ***Վռամշապուհի որդին՝ Արտաշեսը (422-428 թթ.)***: Ըստ նախարարների ազդեցիկ խմբավորման կարծիքի՝ Արտաշեսը իբրև թե հեղինակազրկվել էր և կորցրել երկրի կառավարման ղեկը: Այդ նախարարները խնդիր էին դրել գահընկեց անելու Արտաշեսին, ինչի համար նրանք դիմում են պարսից արքային: Երկրի պառակտված ուժերը հաշտեցնելու հույսը մնում էր Սահակ Պարթև կաթողիկոսը, որը, վճռականորեն դեմ լինելով Արտաշեսի գահընկեցությանը, ասում էր. ***«Քավ լիցի՝ իմ մոլորված ոչխարը մատնեմ գայլերին...»***:

Մի խումբ նախարարներ փառամոլ երեց Սուրմակի հետ բողոքով գնում են պարսից արքունիք՝ չարախոսելով, թե իբր Արտաշես թագավորը և Սահակ կաթողիկոսը հույների կողմն են անցել: Վռամ արքան իր պալատն է կանչում Արտաշեսին և Սահակ Պարթևին: Վռամի բոլոր ճիգերը՝ Սահակ կաթողիկոսին ստիպելու ամբաստանել հայոց թագավորին, ապարդյուն են անցնում: Զայրացած Վռամը Տիզբոնի հրապարակում քննություն է կատարում: Նա, ուշադրություն չդարձնելով Արտաշեսի խոսքերին, հոժարությամբ լսում է չարախոսներին: Արդյունքում Վռամը հրամայում է թագավորությունը վերցնել *Արտաշեսից (428 թ.)* և նրան արգելափակել Պարսկաստանում, իսկ Սահակ Պարթևին զրկել կաթողիկոսությունից ու նրա փոխարեն եպիսկոպոսության աթոռը տալ Սուրմակին: Տիզբոն մեկնած նախարարները Վռամից մեծ պարգևներ են ստանում և վերադառնում Հայաստան: Ըստ Եղիշեի՝ *«Հայոց նախարարներին անցավ թագավորությունը, որովհետև թեպետև հարկը պարսից արքունիքն էր գնում, սակայն հայոց այրուձին ամբողջապես նախարարներն էին առաջնորդում պատերազմի ժամանակ»*: Հայկական պետականությունը պահպանվում էր նախարարական համակարգի միջոցով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞վ հաջորդեց Պապին, ինչո՞վ էր նա նշանավոր: Ի՞նչ ճակատագիր ունեցավ Մուշեղ Մամիկոնյանը: Մեկնաբանեք նրա վերջին խոսքերը:
2. Ներկայացրեք Մանվել Մամիկոնյանի գործունեությունը: Երբ և ինչո՞ւ Արշակ III-ը հեռացավ Հայաստանի արևմտյան մասը: Ի՞նչ քայլեր ձեռնարկեց Խոսրով IV-ը երկրի միավորման համար:
3. Ո՞վ էր Վռամշապուհը: Համառոտ ներկայացրեք նրա վարած քաղաքականության հիմնական արդյունքները:
4. Քաղաքական և հոգևոր ինչ մթնոլորտ էր Մեծ Հայքում Արտաշես Արշակունու օրոք: Ի՞նչ դիրք էր բռնել կաթողիկոս Սահակ Պարթևը: Ներկայացրեք Արտաշես Արշակունու գահազրկման գործընթացը:
5. Ի՞նչ հետևանքներ ունեցավ հայ Արշակունիների արքայատոհմի անկումը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Մովսես Խորենացին Մեսրոպյան նշանագրերի՝ ասպրվածային շնորհով պրվելու մասին

Մեսրոպը ապավինում է աղոթքի: Եվ տեսնում է ո՛չ երազ քնի մեջ, ո՛չ տեսիլք արթնության մեջ, այլ սրտի գործարանում նրա հոգու աչքերին երևում է աջ ձեռքի թաթ՝ քարի վրա գրելիս, այնպես որ քարը գծերի հետքը պահում էր, ինչպես ձյունի վրա: Եվ ոչ միայն երևաց, այլև բոլոր (գրերի) հանգամանքները նրա մտքում հավաքվեցին, ինչպես մի ամանում: Եվ աղոթքից վեր կենալով՝ ստեղծեց մեր նշանագրերը (Հայոց պատմություն, Գ, 53):

Թեմա 3. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ԾՐՁԱՆԸ

§ 1. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԶՊԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ: ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Նախարարական համակարգը: Հայաստանի երկու հատվածներում թագավորության անկումից հետո հայոց պետականությունն ունեցավ ինքնատիպ դրսևորումներ: Այն առաջին հերթին պահպանվեց նախարարական համակարգի շնորհիվ: Հայ նախարարներն իրենց մեծ և փոքր տիրույթների տերեր մնացին ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստանում: Հայ առաքելական եկեղեցու հոգևոր առաջնորդությամբ այդ համակարգը, ամբողջություն կազմելով, հզոր ուժ էր ներկայացնում: Թե՛ սասանյան և թե՛ հռոմեական տիրակալները ձգտում էին խարխլել այդ համակարգը, վերացնել հայոց ներքին ինքնավարությունը: Յուրաքանչյուր նախարարություն պահպանում էր իր զինվորական ուժը և տնտեսությունը:

Հայ Արշակունիների անկումից հետո Սասանյանները ծրագրել էին Արևելյան Հայաստանը դարձնել իրենց տերության սովորական վարչաքաղաքական միավորներից մեկը՝ ***մարզպանություն:*** Այդ նպատակով նրանք իրականացրին ***նախարարների*** և ***Հայ եկեղեցու իրավունքների սահմանափակումներ:*** Սկզբում Վռամ արքան որպես մարզպան Արևելյան Հայաստան ուղարկեց պարսիկ Վեհմիհրշապուհին: Նպա Հայ եկեղեցու միավորիչ ուժը սասանելու նպատակով նա հրամայեց իր պալատում արգելափակել Սահակ Պարթևին: Սակայն նրա փոխարեն «կաթողիկոս» նշանակված ոմն Սուրմակին մեկ տարի անց նախարարները հեռացնում են աթոռից: Հաջորդը ասորի Բրքիշոն էր, որի աղտեղի վարքի պատճառով նախարարներից շատերը Մեսրոպ Մաշտոցի և համախոհ եկեղեցականների համաձայնությամբ դիմում են Վռամ արքային՝ պահանջելով վերադարձնել Սահակ Պարթևին:

Վախենալով հայերի ընդվզումից՝ պարսից արքունիքը հարկադրված համաձայնում է ազատ արձակել մեծ հեղինակություն վայելող հայոց կաթողիկոսին և վերադարձնել հայրենիք: Միաժամանակ, զգուշանալով Սահակ Պարթևի հնարավոր հայրենանվեր քայլեր ձեռնարկելուց, պարսից արքան նրան է հանձնում միայն մի քանի գյուղ, արգելում հոգևորական ձեռնադրել, թույլատրում զբաղվել միայն կրթական գործով: Հայաստան վերադառնալով՝ հայոց հայրապետն անմիջապես անցնում է միավորիչ, ազգանպաստ ձեռնարկումների:

Սահակ կաթողիկոսը պաշտպանում է հայ նախարարների ժառանգական իրավունքները: Նորից հաստատել է տալիս իր թոռան՝ Վարդան զորավարի իրավունքները Մամիկոնյան տոհմի մեջ, կարողանում է չեզոքացնել իրեն հակաթոռ նշանակված ասորի Շամուելի գործունեությունը: Վահան Ամատունուն է անցնում հազարապետի պաշտոնը: ***Վարդան Մամիկոնյանը դառնում է սպարապետ:*** Փաստորեն հայ նախարարական և եկեղեցական համակարգը փլուզելու պարսիկների քաղաքականությունը ձախողվում է: *Հայապետանը պահպանում է սեփական պետական համակարգի մի շարք կարևոր օղակներ:*

Մովսես Խորենացին, բարձր գնահատելով Սահակ Պարթևի գործունեությունը, գրել է, որ նա չդադարեց հոգևոր կաթով սնուցանել «եկեղեցու մանուկներին Մեսրոպի հետ միասին, որին հաստատեց Վաղարշապատ քաղաքի կաթողիկե եկեղեցում, իսկ ինքը մնաց Բագրևանդ գավառում...»:

Հայ ժողովրդի վիճակի ծանրացումը: Հայաստանի վիճակը կտրուկ վատթարանում է Պարսկաստանում Հազկերտ II-ի գահակալությամբ (439–457 թթ.): Նա առաջին հերթին փորձում է թուլացնել Հա-

յաստանի ռազմական ուժը: Հազկերտը հայոց գնդերն ուղարկում է Արևելք՝ քոչվոր հոների դեմ պատերազմելու:

Սահակ Պարթևը վախճանվում է ***439 թ. սեպտեմբերի 7-ին:*** Նրան հողին են հանձնում Տարոն գավառի Աշտիշատ գյուղում: ***440 թ. փետրվարի 17-ին*** Վաղարշապատում մահանում է նաև Մեսրոպ Մաշտոցը: Հազարապետ Վահան Ամատունին նրա աճյունը տանում է իր պապենական կալվածքը՝ Օշական գյուղը:

Սահակ Պարթևին ու Մեսրոպ Մաշտոցին Հայ առաքելական եկեղեցին դասել է սրբերի շարքին: Սուրբ Մեսրոպ Մաշտոցի դամբարանի վրա երեք տարի անց Վահան Ամատունին կառուցում է գմբեթավոր եկեղեցի:

Հայոց աշխարհի համար այսպիսի տագնապալի ժամանակներում կաթողիկոս ***Հովսեփ II Վայոցձորցու (439–452 թթ.)*** գլխավորությամբ ***444 թ. եկեղեցական ժողով*** գումարվեց Մեծ Հայքի Այրարատ նահանգի Ծաղկոտն գավառի ***Շահապիվան*** ավանում: Հայաստանի ներքին կյանքի վերաբերյալ ընդունվեց 20 կանոն, որոնց մեջ գլխավոր կետը պատիժների խստությունն էր ընդդեմ եկեղեցու և ընտանիքի կարգերը խախտողների: Պատիժներ սահմանվեցին հատկապես մծղնեականների (բորբորիտներ) աղանդի դեմ, որոնք եկեղեցական կանոնադրությունն ու պաշտամունքն ավելորդ էին համարում և ամեն տեսակ անկարգություն ու անօրինություն գործում:

Հայաստանի ինքնուրույնությանն ուղղված հաջորդ հարվածը ***447 թ.*** Հազկերտի հանձնարարականով Դենշապուհ պաշտոնյայի՝ Արևելյան Հայաստանում աշխարհագրի անցկացումն էր, որի նպատակներից էին հարկերի ծանրացումը և եկեղեցու ազատության սահմանափակումը: Դենշապուհը Հայոց աշխարհի հազարապետ Վահան Ամատունու փոխարեն նշանակեց մի պարսիկ պաշտոնյայի: Մի մոգպետ էլ ստացավ երկրի դատավորի պաշտոնը:

Հայ ժողովրդի բոլոր խավերի վիճակը ծանրանում է: Ինչպես Եղիշեն է ասում. *«Առնում էին ոչ թե ինչպես վայել է արքունի արժանապատվությանը, այլ ավազակաբար հափշտակելով, այն ասպիճան, որ իրենք էլ մեծապես զարմանում էին, թե մի տեղից որ այսքան գանձ է դուրս գալիս, էլ ինչպես է չեն մնում այդ աշխարհը»:*

Ապստամբության սկիզբը և ծավալումը: Պարսից արքունիքը այդքանով չբավարարվեց: Շուտով ստացվեց արքայի հրամանը քրիստոնեությունից հրաժարվելու և մազդեզական (զրադաշտական) կրոնն ընդունելու մասին: Դա լցրեց հայ ժողովրդի համբերության բաժակը: ***449 թ. Արարատում*** Հովսեփ կաթողիկոսի գլխավորությամբ եկեղեցական ժողով գումարվեց, և նախարարների ու ամբողջ ժողովրդի համաձայնությամբ մերժվեց Սասանյանների՝ զրադաշտականություն ընդունելու պահանջը:

Հազկերտը, ստանալով հայերի մերժողական նամակը, սաստիկ կատաղում է և իր մոտ կանչում հայ նախարարներին՝ մարզպան ***Վասակ Սյունուն,*** սպարապետ ***Վարդան Մամիկոնյանին, Վահան Ամատունուն,*** Գուգարքի բդեշխ ***Աշուշային*** և այլոց, ինչպես նաև Վիրքի ու Աղվանքի նախարարներին:

450 թ. ապրիլին նախարարները ժամանում են ***Տիզբոն:*** Հազկերտը սպառնում է նրանց զրադաշտականություն չընդունելու դեպքում զրկել ժառանգական իրավունքներից և ընտանիքներով աքսորել Պարսկաստանի խորքերը:

Հայրենիք վերադառնալու և ապստամբության գործը կազմակերպելու համար նախարարները որոշում են առերես ընդունել զրադաշտականությունը: Վարդան Մամիկոնյանը, տեղեկանալով այդ մասին, սկզբում կտրականապես մերժում է, սակայն երբ լսում է նախարարների վճիռը հայրենիք վերադառնալու և գործը շարունակելու մասին, տալիս է իր համաձայնությունը: Հազկերտը, իմանալով հայ նախարարների որոշման մասին, կարծելով, որ վերջապես հասել է իր նպատակին, մոգպետին ու մոգերին հրամայում է ուղեկցող ուժերի և հայոց գնդի հետ մեկնել Հայաստան: Սակայն նա Գուգարքի Աշուշա բդեշխին և Սյունյաց Վասակ իշխանի երկու զավակներին՝ Բաբիկին ու Ատրներսեհին, պատանդ է պահում իր արքունիքում:

Հայոց գունդը, հայ նախարարները և մոգերի բազմությունն ուղեկցող զորքը հասնում են Հայոց աշխարհ և բանակում *Մաղկոտն գավառի Անգղ* ավանում: Մոգերն իրենց ուղեկցող պարսից զորքի հետ փորձում են քանդել տեղի եկեղեցին: Դա առաջացնում է տարբեր տեղերից ժամանած հայ բնակչության զայրույթը: Նրանք *Ղևոնդ Երեցի* գլխավորությամբ հարձակվում են մոգերի վրա և փրկում եկեղեցին պղծումից ու ավերումից: Իրավիճակն արագորեն սրվում է:

Հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանը խորհրդակցություն է հրավիրում, որի ժամանակ բոլորը տեղեկանում են, որ Տիգրոն մեկնած ու վերադարձած նախարարների ուրացումը կեղծ է եղել: Ի լուր բոլորի՝ Վարդան Մամիկոնյանը հայտնում է ապստամբության մասին: Բոլորը միահամուռ երդում են տալիս, ասում *«Հավատս ուխտի»* խոսքեր: Ուխտը կնքվում է հայոց մարզպան Վասակ Սյունու և տանուտերերի ու ավագ սեպուհների մատանիներով: Աշխարհազորը, ռամիկ բազմությունը, միանալով հայոց զորաբանակին, հարձակվում են մոգերի կառուցած ատրուշանի՝ կրակապաշտարանի վրա, քանդում այն, իսկ մոգերին գերի վերցնելով՝ մահապատժի ենթարկում Անգղ ավանի հարևան Զարեհավանում:

Ապստամբությունն արագորեն ծավալվում է Հայոց աշխարհում: Ապստամբ ուժերը պարսից կայազորերից ազատագրում են Արտաշատը, Գառնին, Արտագերսը և այլ բնակավայրեր: Կազմվում է կառավարություն. Վասակ Սյունին՝ մարզպան, Վարդան Մամիկոնյանը՝ սպարապետ, Հովսեփ Վայոցձորցին՝ մեծ դատավոր, Խորեն Խորխոռունին՝ մաղխազ:

Որոշ ժամանակ անց բուն Աղվանքից եպիսկոպոսների հետ Այրարատ է գալիս հազարապետը և տեղեկացնում, որ պարսիկների բանակը երեք հարյուր մոգերի հետ ներխուժել է իրենց երկիրը: Հայ զորականները քաջալերելով ճանապարհում են աղվանից պատվիրակներին՝ խոստանալով օգնության ելք գտնել:

Հայերը որոշում են օգնության խնդրանքով դիմել քրիստոնյա Բյուզանդական կայսրությանը: Սակայն կայսրը ոչ միայն հրաժարվում է հայերին օգնություն ցուցաբերելուց, այլև ընդհակառակը՝ Հազկերտի մոտ դեսպաններ է ուղարկում և դաշինք կնքում նրա հետ:

Հայոց զորքը հավաքվում է և, երկրի պաշտպանությունը տարբեր ուղղություններով ապահովելու համար, բաժանվում է երեք գնդի: *Առաջին գունդը՝ Ներշապուհ Արծրունու* գլխավորությամբ, շարժվում է հարավ՝ պաշտպանելու Հայոց աշխարհն Ատրպատականի կողմից: *Երկրորդ գունդը՝* սպարապետ Վարդան Մամիկոնյանի հրամանատարությամբ, նախապատրաստվում է արշավելու դեպի հյուսիս-արևելք՝ Աղվանք և Ճորա պահակ ներխուժած պարսիկների առաջխաղացումը կասեցնելու նպատակով: Իսկ *երրորդ գունդը* հանձնվում է Վասակ Սյունուն և մնում Այրարատ աշխարհում:

Խաղխաղի ճակատամարտը: Կուր գետի անցումի մոտ Վարդան Մամիկոնյանի զորագունդը հանդիպում է պարսկական զորքին: *Ճակատամարտը* տեղի է ունենում հայոց արքայական հինավուրց ձմեռանոցի՝ Խաղխաղ քաղաքի մոտ *450 թ.*: Վարդանն իր գնդով խիզախորեն գրոհում է թշնամու զորքի աջ թևի վրա: Հաղթանակած հայկական գունդը, ցիրուցան անելով պարսիկներին, անցնում է Կուրի ձախ ափը և ազատագրում բուն Աղվանքի բերդերն ու քաղաքները:

Ապա հայոց զորքը շարունակում է իր հաղթական երթը դեպի Հյուսիսային Կովկասի նշանավոր ռազմավարական լեռնանցքներից մեկը՝ Ճորա պահակ, և այնտեղ ևս ջախջախիչ հարված հասցնում պարսիկներին: Վարդան Մամիկոնյանն այստեղից դեսպան է ուղարկում հոների մոտ և դաշինք կնքում նրանց հետ ընդդեմ Սասանյանների: Անսպասելիորեն գուժկան է հասնում Հայոց աշխարհից: Վասակ Սյունին փոխել էր իր վերաբերմունքը ապստամբության նկատմամբ: Չստանալով օգնություն Բյուզանդիայից՝ Վասակը ծրագրել էր հաշտվել պարսից արքունիքի հետ: Ժողովրդի աջակցությունը շահելու համար նա լուրեր է տարածում, թե իբր

Հազկերտը հրաժարվել է կրոնափոխություն պարտադրելուց: Նա ժողովրդին հորդորում էր հետ կանգնել ապստամբությունից, ինչը կարող էր թելադրված լինել նաև պատանդության մեջ նրա որդիների գտնվելու հանգամանքով: Սկսված ապստամբության պայմաններում, երբ ժողովուրդը հանուն հայրենիքի կենաց ու մահու պայքարի էր ելել, Վասակ մարզպանի հեռանալն ապստամբներից և հաստատվելը Սյունիքում մեծ հարված էր երկրի անվտանգությանը:

Վարդանը, գիտակցելով պահի լրջությունը, անմիջապես վերադառնում է Հայաստան: Որպես տաղանդավոր զորավար, պետական և քաղաքական մեծ գործիչ՝ երկրի կառավարումը և զորքերի հրամանատարությունը Վարդան Մամիկոնյանն ամբողջությամբ վերցնում է իր ձեռքը: Հազարապետի պաշտոնը կրկին անցնում է Վահան Ամատունուն, իսկ մեծ դատավորինը մնում է Հովսեփ կաթողիկոսին: Վարդան Մամիկոնյանը հայոց զորքին ուղարկում է երկրի զանազան գավառները՝ ձմեռելու:

Ավարայրի ճակատամարտը: Հազկերտը բազմաքանակ զորք է ուղարկում Հայոց աշխարհ: Դրա հարվածային ուժը փղերի գունդն էր: Պարսից մեծաքանակ բանակը գլխավորում էր ***Մուշկան Նյուսալավուրտը:***

Հայոց ***վաթսունվեց հազարանոց*** հեծյալ և հետևակ ***զորքը*** սպարապետ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ Արտաշատից շարժվում է Վասպուրական աշխարհի ***Արբաց*** գավառը և բանակում ***Ավարայրի*** դաշտում՝ ***Տղմուտ*** գետի ձախ ափին: Եռապատիկ ավելի զինվոր ունեցող պարսիկ բանակը ճամբար է դնում մյուս ափին:

Հայոց սպարապետը հայրենաշունչ կոչով դիմում է հայոց զորքին: Ղևոնդ Երեցը և մյուս հոգևոր հայրերը Սուրբ պատարագի սեղան են կանգնեցնում և մկրտում մինչ այդ չմկրտվածներին: Այս արարողությունը տևում է ամբողջ գիշեր: Առավոտյան զինվորները նաև հաղորդություն են առնում:

Վարդան զորավարը հայոց զորքին հրամանատարներ է կարգում: Առաջին զորագունդը հանձնվում է ***Ներշապուհ Արծրունուն:*** Երկրորդի հրամանատարը ***Խորենն Խորխորունուն*** էր, երրորդինը՝ ***Թաթուլ Վանանդեցուն:*** Վարդան Մամիկոնյանը վերցնում է չորրորդ գնդի հրամանատարությունը և իրեն նիզակակիցներ կարգում Արշարունիքի տեր ***Արշավիրին*** ու իր եղբորը՝ ***Համազասպին:***

Ավարայրի ճակատամարտը

451 թ. մայիսի 26-ի լուսաբացին սկսվում է ***Ավարայրի ճակատամարտը:*** Հայոց հեծելագունդը, Վարդան զորավարի գլխավորությամբ անցնելով Տղմուտ գետը, շեշտակի հարվածով մխրճվում է պարսից զորքի մեջ: Միայն որոշ ժամանակ անց թշնամին կարողանում է վերադասավորել իր ուժերն ու հարվածել հայոց զորքի ձախ թևին: Հայոց զորավարը թշնամու շարքերում այնպիսի իրարանցում է առաջացնում, որ Մուշկան Նյուսալավուրտը հրամայում է փղերին մտցնել ռազմի դաշտ: Կռիվը սաստկանում է: Վարդան Մամիկոնյանն ու իր զինակիցները հայտնվում են շրջապատման մեջ: Վարդան զորավարը և ութ մեծամեծ նախարարներ զոհվում են: Ճակատամարտը վերջանում է երեկոյան: Հայոց զորքից զոհվում է 1036 զինվոր, իսկ պարսիկներից՝ 3544:

Հայ առաքելական եկեղեցին Ավարայրի ճակատամարտում հերոսաբար զոհված-

ներին դասեց սուրբ նահատակների շարքին: Նրանց հիշատակի օրը մտցվեց եկեղեցական տոնացույցի մեջ՝ ***Սուրբ Վարդանանց*** տոն անունով:

Հայրենիքի և հավատքի պաշտպանության համար մղված Վարդանանց պատերազմը հայոց ազատատենչ ոգու վառ արտահայտությունն էր: Ավարայրի ճակատամարտը հաղթանակ էր ընդդեմ բռնակալության, դավանափոխության, մահվան: ***«Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն»***, այսպիսի խոսքերով է պատմիչ Եղիշեն բնութագրել Վարդանանց սխրանքը: Հետագա դարերում Ավարայրի հերոսապատումը, սրբագործված Վարդան Մամիկոնյանի անունով, ***ոգեշնչման և հայրենիքը կրանքի գնով պաշտպանելու գաղափարի աղբյուր դարձավ հայոց բազում սերունդների համար:***

Վարդանանց պատերազմի արդյունքները: Ավարայրի բոցը չէր մարել: Հայոց աշխարհի մեծ նախարարների տոհմերից շատերն ամրացել էին Միջնաշխարհի, Խաղտիքի, Մոորիքի, Արցախի, Ուտիքի ամրոցներում: Նոր ուժերով համալրված պարսից զորքերը զանազան ուղղություններով դարձյալ հարձակումներ էին գործում: Միջնաշխարհում Կապույտ լեռան ամրոցների պաշտպանները քաջությամբ հակահարված տվեցին և ջախջախեցին թշնամուն:

Պարսից արքան, իր անհաջողությունների գլխավոր մեղավորը համարելով Վասակ Սյունուն, նրան կանչում է Տիզբոն: Հովսեփ կաթողիկոսը, Ղևոնդ Երեցը և բազմաթիվ ուրիշ հոգևորականներ ու հայ նախարարներ գերվեցին: Միաժամանակ Հազկերտը հարկադրված երկրից հանում է պարսից զորքը:

Նկատի ունենալով, որ հայ նախարարներից շատերը շարունակում էին անառիկ պահել ամրոցները, պարսից արքունիքը հրահանգում է զգուշությամբ վերաբերվել բանտարկված հոգևորականներին և աշխարհը «սիրով նվաճել»:

Հայաստանում մնացած հոգևորականներին թույլատրվում է վերադառնալ իրենց ծառայությանը, շինականներին՝ տեր կանգնել իրենց ունեցվածքին և անցնել խաղաղ աշխատանքի: Բռնությամբ մազդեզականություն ընդունածներին իրավունք է տրվում վերստին վերադառնալու քրիստոնեությանը: 454 թ. հեռավոր աքսորում նահատակվում են Հովսեփ Վայոցձորցի կաթողիկոսը, Ղևոնդ Երեցը և մյուսները: Մարզպան Վասակը դատապարտվում է մահվան:

Երկար տառապանքներից հետո պարսից գերությունից ողջ մնացած նախարարները 464 թ. Պերոզի գահակալության (459–484 թթ.) ժամանակ, վերադառնում են հայրենիք: Հայոց աշխարհի կաթողիկոսական աթոռին է բարձրանում ***Գյուտ կաթողիկոսը (461–478 թթ.):***

Սուրբ Վարդանանց նահատակության գնով հայոց երկիրը պահպանում է իր ներքին ինքնուրույնությունը, իսկ ժողովուրդը՝ քրիստոնեական հավատքը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Համառոտ ներկայացրեք նախարարական համակարգի էությունը: Ինչ էին ծրագրել Սասանյանները հայ Արշակունիների անկումից հետո:
2. Ինչպես էր Հազկերտը փորձում թույլացնել Հայաստանի ռազմական հզորությունը: Ինչ նպատակ էր հետապնդում Դենշապուհի անցկացրած աշխարհագիրը:
3. Հազկերտի հրովարտակը հայերից ինչ էր պահանջում: Երբ հրավիրվեց և ինչ որոշում ընդունեց Արտաշատի ժողովը:
4. Ինչ որոշում ընդունեցին Տիզբոն կանչված նախարարները: Ներկայացրեք Անգղի և Ջարեհավանի դեպքերը:
5. Ինչպիսի՞ իրադրություն էր Աղվանքում: Երբ է տեղի ունեցել և ինչպես է ավարտվել Խաղիաղի ճակատամարտը: Ինչ հետևանք այն ունեցավ:
6. Նկարագրեք Ավարայրի ճակատամարտը: Պատմական ինչ կարևոր արդյունքներ ունեցավ ճակատամարտը:

§ 2. ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

481–484 ԹԹ.

Մարզպանական Հայաստանի քաղաքական իրավիճակը: Վարդանանց պատերազմից հետո պարսից արքունիքն առժամանակ շարունակեց հայերին սիրաշահելու քաղաքականությունը: Սակայն ժամանակ առ ժամանակ քաղաքական ու կրոնական հալածանքները կրկնվեցին: Արևելյան Հայաստանում հայրենասիրական ուժերը գլխավորում էր ***Վահան Մամիկոնյանը***՝ Վարդան զորավարի եղբոր՝ Հմայակի որդին: Հայոց հոգևոր կյանքը առաջնորդում էր Գյուտ կաթողիկոսը: Արտահայտելով հայ հայրենասերների տրամադրությունը՝ օգնության խնդրանքով նա մի քանի դիմումներ էր հղել բյուզանդական կայսրին: Այս անգամ ևս Բյուզանդիան անպատասխան էր թողել հայ հայրենասերների դիմումները:

Պարսից ***Պերոզ արքան*** առիթը բաց չի թողնում երկիրը թուլացնելու համար: Նախարարական կալվածքները մասնատելու նպատակով նա ***հողեր ժառանգելու իրավունք է շնորհում կրտսեր իշխաններին՝ սեպուհներին:*** Գյուտ կաթողիկոսի և Վահանի դեմ բանսարկություններ են սկսվում: Պերոզի հրամանով Գյուտ կաթողիկոսը 471 թ. մեկնում է Տիզբոն: Աննկուն կերպով պատասխանելով իրեն ուղղված մեղադրանքներին՝ Գյուտ կաթողիկոսը մերժում է դավանափոխ լինելու՝ Պերոզի առաջարկը: Որոշ ժամանակ անց նա վերադառնում է հայրենիք և իր կյանքի վերջին տարիներն ապրում Վանանդ գավառում:

Պերոզ արքան, զբաղված լինելով Միջին Ասիայում հոների դեմ պատերազմով, խուսափում է հայ հայրենասիրական ուժերին բացահայտորեն հալածելու քայլերից: Սակայն նա թաքուն խրախուսում էր ուրացող նախարարներին, որոնց գլխավորում էր Գաղիշո մաղխազը:

Արևելյան Վրաստանում պարսիկների դեմ ապստամբում է ***Վախթանգ Գորգասալ*** թագավորը (456–502 թթ.): Նա հարվածն ուղղում է պարսից արքայի դրածո բդեշխ Վազգենի դեմ: Վերջինս խիզախ իշխան Աշուշայի զավակն էր և Սուրբ Վարդանի աղջկա՝ Շուշանիկի ամուսինը: Սակայն նա պարսից կրոնն ընդունելուց հետո ուրացել էր քրիստոնեությունը: Շուշանիկը, որ մայրական սրբության մարմնավորումն էր և ճշմարիտ քրիստոնյա, չնայած երկարատև տանջանքներին, մերժում է կրոնափոխվելու՝ Վազգենի բոլոր պահանջները և նահատակվում: Եկեղեցին նրան ևս դասել է սրբերի շարքին:

Վախթանգի կողմից Վազգեն բդեշխի սպանությունն ազդանշան էր Հայաստանում ապստամբության բռնկման:

Ապստամբական պայքարը: ***481 թ.*** հայ նախարարները հավաքվում են ***Շիրակում*** և որոշում ապստամբություն սկսել: Վարդանանց ազատատենչ միաբանության ուխտերի ոգով նրանք վճռում են. *«Լավ ենք համարում մի անգամ մեռնել, քան թե ամեն օր եկեղեցու և քրիստոնեության արհամարհանքը և քակտումը տեսնել»*: Վահան Մամիկոնյանը ստանձնում է ապստամբության ղեկավարությունը՝ կանգ չառնելով անգամ պարսից արքունիքում պատանդ մնացած եղբոր՝ Վարդի կյանքը վտանգելու առջև:

Մարզպան Ատրվշնասպը բանակում է Շիրակ գավառի Անի ամրոցի մոտ: Հայ ապստամբները հետապնդում են պարսից մարզպանին մինչև Արտաշատի բերդը: Մարզպանն իր խմբով գիշերը փախչում է Ատրպատական:

481 թ. Արևելյան Հայաստանում կառավարություն է կազմվում. ***Սահակ Բագրատունի*** ասպետը նշանակվում է ***մարզպան, Վահան Մամիկոնյանը՝ սպարապետ, Հովհաննես Ա Մանդակունի*** կաթողիկոսը՝ ***մեծ դպրավոր:*** Ատրվշնասպի՝ նոր ուժերով ներխուժման լուրը ստանալով՝ հայ ապստամբները պատրաստվում են դիմադրության: Հայ զորականները հասնում են Վարազկերտ գյուղը և լսում, որ պարսից 7-հազարանոց զորքն անցել է Արաքս գետը: ***Հայոց չորս հարյուր զորականների զունդը*** բանակում է Արարատի քարքարոտ լանջին՝ Մասյացոտն գավառի ***Ակոռի գյուղի*** մոտ: Պարսից հիմնական ուժերը ջախջախվում են, սպանվում է նաև Ատրվշնասպը:

Պարսից արքունիքը չի հապաղում Հայաստանի դեմ նոր արշավանք կազմակերպել: Պարսիկների բազմաքանակ զորքը հասնում է Հեր և Զարևանդ գավառների սահմանը: Վահան Մամիկոնյանի գլխավորած հայոց զորքը շտապում է Արտազ գավառ: Ավարայրի դաշտի մոտակայքում՝ *Ներ-սեհապատ* գյուղի մոտ, տեղի է ունենում նոր *ճակատամարտ*: Մարտից առաջ ոգևորիչ ճառ է արտասանում կաթողիկոս Հովհաննես Ա Մանդակունին: Կռվում հատկապես աչքի է ընկնում հայոց կենտրոնական գունդը: Ճակատամարտը հայոց հաղթանակով է ավարտվում: Այդ ժամանակ էլ *Վարդը* փախուստով ազատվում է պարսից պատանդությունից և վերադառնում հայրենիք:

Հայոց զորքը հանգստանում էր Ծաղկոտն գավառում՝ Վաղարշակի Ջերմուկներում, որը հայոց բանակի հանգստավայրն էր: Շուտով Վախթանգ թագավորից օգնության խնդրանք է ստացվում: Վրաց թագավորը հայտնում էր, որ պարսկական մեծ գունդ է մտել Վիրք, իսկ ինքը նահանջել է Գուգարք աշխարհ: Վախթանգը նաև տեղեկացնում էր, որ հոների զորքին գալու հրաման էր տրված, ուստի բոլորը միասին կարող են ոչնչացնել թշնամուն: *482 թ.* Վահանը փոքրաթիվ գնդով շտապ գնում է Գուգարաց աշխարհ և այնտեղից անցնում *Ճարմանայի դաշտ*՝ Կուր գետի հովիտ: Վախթանգը հուսադրում է հայերին, թե եղած ուժերը բավարար են հաղթելու պարսիկներին: Սակայն Ճարմանայի ճակատամարտը անհաջող և ողբերգական եղք է ունենում. զոհվում են հայոց տանուտեր, սպասպետ Սահակ Բագրատունին, Վահանի եղբայր քաջ Վասակ Մամիկոնյանը և ուրիշներ: Հայոց բանակի մնացած ուժերով Վահան Մամիկոնյանը վերադառնում է հայրենիք:

484 թ. Հայաստան ներխուժած պարսից զորքերը, Հազարավուխտի գլխավորությամբ անցնելով Երասխ գետի կամուրջը, ներխուժում են Արտաշատի շրջակա տարածքը, այնուհետև՝ Դվինի մոտ ռազմական կարգով դասավորվում Խոսրովակերտ անտառից մինչև Ջրվեժի լեռները: Հայոց հեծելագունդը, քաջասրտորեն ճեղքելով պարսկական գնդի մի թևը, շատերին տապալում է: Մարտի ընթացքում զոհվում են երկու նախարարներ՝ Դիմաքսյան և Սահառունի տոհմերից: Հովհաննես կաթողիկոսը, որ զորքի հետ մարտադաշտում էր, ձիուց վայր է ընկնում և վնասվում, սակայն շարունակում է ոգեշնչել հայերին:

Վահանը հայ նախարարների հետ անցնում է *Խաղբյուրաց* աշխարհը: Հազարավուխտը հարձակվում է Բարձր Հայքի Ծաղագոմ գավառում գտնվող ապստամբների մի խմբի վրա, ռամիկներից շատերին կոտորում է, իսկ Ներսեհ ու Հրահատ Կամսարական եղբայրների կանանց պատանդ տանում:

Պարսից արքունիքի կողմից հայոց մարզպան նշանակված Շապուհը Կամսարականների կանանց բանտարկում է Բասեն գավառի Բողբերդ ամրոցում և լուր տալիս նրանց ամուսիններին, որ եթե նրանք հնազանդվեն պարսից թագավորին և սպանեն Վահան Մամիկոնյանին, ապա կարող են հետ ստանալ իրենց կանանց: Կամսարական եղբայրները ոչ միայն մերժում են այդ նենգ առաջարկը, այլև սպում Մուշեղ Մամիկոնյանի հետ իրենց ջոկատով փորձում են միանալ Վահան Մամիկոնյանի զորքին: Կարնո գավառի Արծաթի կոչվող գյուղի մոտ նրանք ջախջախում են պարսից գունդը:

Վահան Մամիկոնյանն իր զորքով գնում և բանակում է Արշարունյաց գավառում: Հայոց զորականների նետաձգությունից պարսից գնդից շատերը սպանվում են: Առավոտյան հայ զորականները տեսնում են Շապուհի առաջապահ զորքը, ինչը բնավ չի ընկճում Վահանին և նրա զինակիցներին. նրանք քաջաբար շարունակում են պայքարը:

Պարսկաստանից անսպասելի լուր է ստացվում, որ պարսից զորքերը Միջին Ասիայում պարտություն են կրել հեփթաղներից, և Պերոզ արքան սպանվել է: Պարսից զորքն արագորեն վերադառնում է Պարսկաստան:

Նվարսակի պայմանագիրը: Վահան Մամիկոնյանը հայոց զորքով գալիս է *Դվին*: Պարսկաստանում 484 թ. գահ բարձրացած *Վաղարշը* Հայաստան է ուղարկում պարսիկ պաշտոնյա *Նիխորին*, որը հայերին պետք է տեղեկացներ, որ Վահանի և իր զինակիցների ապստամբության պատճառը Վաղարշի եղբոր՝ Պերոզի անմարդկային վարքն էր: Արքան խորա-

մանկում էր, քանզի նա Նիխորին հանձնարարել էր սիրաշահելով նրանց ենթարկել պարսից պետությանը:

Նիխորը, գալով Հայաստան, մնում է *Հեր գավառի Նվարսակ գյուղում:* Դեսպանների միջոցով նա Վահանին հրավիրում է բանակցությունների:

Վահանը Նիխորի առջև պայմաններ է դնում՝ հրաժարվել կրոնափոխության առաջարկից, անարժան և ուրացյալ նախարարներին պաշտոններ չտալ, հարգել հայ նախարարների ժառանգական իրավունքները, մարդկանց գնահատել ըստ արժանվույն և այլն, այսինքն՝ ճանաչել Հայաստանի ներքին ինքնավարությունը: Նիխորը հավանություն է տալիս Վահանի պայմաններին:

Վահանը, ստանալով Նիխորի հրավերը, նախարարների և բազում գնդերի հետ մեկնում է նրա ճամբարը: Երբ մոտենում են Նվարսակ գյուղին, Վահանն իր զորքին հրամայում է պատրաստվել՝ ըստ պատերազմական կարգի: Պատերազմական փողերի ձայներից երկիրը թնդում է: Պարսից ճամբարում զարհուրած կարծում են, թե Վահանը եկել է պատերազմելու: Նրան Նիխորի պատգամավորներն ասում են, թե պարսից կարգով բանակ մտնելիս փող հնչեցնելու պատիվը վերապահված է միայն իրենց զորավարին: Վահանը պատասխանում է, որ ինքը շատ լավ գիտի Պարսից աշխարհի կարգը և՝ արևածագին իր զորքով մտնելով Նիխորի ճամբարը՝ պահանջում է իր առաջադրած պայմանները հաստատել պարսից արքայի գրով և կնիքով:

Նվարսակում 484 թ. պայմանագիր է կնքվում Վահան Մամիկոնյանի և Նիխորի միջև: Մի քանի օր անց Վահանը, հավաքելով հայոց այրուձին, ուխտակից նախարարների հետ մեկնում է Տիգրոն՝ կնքելու հայ-պարսկական հաշտություն: Արքունի մեծ դահլիճում Վահան Մամիկոնյանի հետ խոսելիս Վաղարշ թագավորը հայտնում է իր գոհունակությունը Նվարսակի հաշտության կապակցությամբ և, ամբողջ մեղքը Պերոզի վրա բարդելով, ասում. *«Դուք բնավ ոչինչ համարեցիք այս աշխարհը. քաջաբար մեռան նրանք, որ մեռան, և առավել քաջաբար ապրում եք դուք»:* Վահանը դիվանագիտորեն թագավորին արդար լինելու կոչ է անում: Վաղարշը համաձայնում է բավարարել Վահանի բոլոր պահանջները՝ դադարեցնել կրոնափոխության քաղաքականությունը, կրկին թույլատրել քրիստոնեական կրոնի դավանումը, չմիջամտել հայ նախարարների ներքին գործերին և պաշտոններ չտալ հավատուրացողներին, հարգել հայ հողատեր-նախարարների ժառանգական իրավունքը և այլն: Վահան Մամիկոնյանը պարսից արքայի կողմից ճանաչվում է Մամիկոնյանների տանուտերության ***զահերեց*** և ***հայոց սպարապետ:*** Նա, վերադառնալով Հայաստան, մեկնում է հայոց ոստան՝ ***Դվին:*** Վաղարշի հատուկ հրովարտակով հայոց սպարապետ ու Մամիկոնեից տեր Վահանը հաստատվում է ***մարզպանի*** պաշտոնում:

Վարդան Մամիկոնյանի և Վահան Մամիկոնյանի գլխավորած ազատագրական ապստամբությունները նշանավորեցին Հայաստանում հայոց ազգային-ազատագրական պայքարի պահպանումը և հայոց պետականության փաստական վերականգնումը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ քաղաքականություն էր վարում Պերոզը Հայաստանի նկատմամբ: Ո՞վ էր Վահան Մամիկոնյանը: Ինչ գիտեք Շուշանիկի մասին: Ինչո՞ւ Վազգեն բդեշխի սպանությունը Հայաստանում ապստամբության բռնկման ազդանշան եղավ:
2. Ինչ որոշեցին հայ նախարարները Շիրակում. ինչ իրադարձություններ հաջորդեցին դրան: Ներկայացրեք Հայաստանում ձևավորված կառավարության կազմը: Նկարագրեք Ակոռիի ճակատամարտը:
3. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ հայերը որոշեցին օգնել Վախթանգին: Ինչ հետևանքներ ունեցավ այդ օգնությունը: Ներկայացրեք պատերազմի հետագա ընթացքը:
4. Ինչ քաղաքականություն որդեգրեց պարսից արքա Վաղարշը: Երբ կնքվեց Նվարսակի պայմանագիրը և ինչ նշանակություն ունեցավ: Համեմատեք Վարդանանց և Վահանանց պատերազմները, ցույց տվեք դրանց նշանակությունը:

§ 3. ՀԱՅԱՍՏԱՆԸ VI ԴԱՐՈՒՄ

Վաչագան Բարեպաշտի թագավորությունը Հայոց Արևելից կողմերում: V դ. 80-ական թթ. հայոց ապստամբական շարժման արդյունքներից էր Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգներում *(Հայոց Արևելից կողմանք)* ու հարակից տարածքներում հայկական թագավորության հիմնումը, որտեղ Հայկազուն-Սիսակյան Առանից սերող տոհմից գահ բարձրացավ ***Վաչագան Բարեպաշտը*** (484 թ.-VI դ. առաջին կես): Վաչագան թագավորը, անցնելով սուրբ նահատակների վայրերով, Ամարաստ այցելում է նաև Գրիգորիս եպիսկոպոսի գերեզմանին: Նրա բարենորոգչական գործունեության շնորհիվ բարգավաճում են եկեղեցաշինությունը և դպրոցաշինությունը: Վաչագան Բարեպաշտ արքան ստեղծում է ***«Սահմանադրութիւն կանոնական»-ը***, որը եպիսկոպոսների, քահանաների և ազատների համաձայնությամբ ընդունվում է Աղուենի կանոնադիր ժողովում: ***Այն համաշխարհային և հայ իրավագիտության պատմության մեջ վաղ կանոնագրություններից է:*** Մովսես Կաղանկատվացու գնահատմամբ՝ Վաչագան Բարեպաշտը *«եղավ ապրիածագիտության լույսի դուռ և բազմազան բարիքների երջանիկ օրինակ»:*

Քաղաքական իրավիճակը և Դվինի 506 թ. ժողովը: Միջազգային ասպարեզում կարևորվում էին քրիստոնեական եկեղեցիների հարաբերությունները: Հայ առաքելական եկեղեցին մշտապես պահպանել է Քրիստոսի մի բնության մասին ճշմարիտ դավանաբանությունը՝ հենվելով տիեզերական ***առաջին երեք ժողովների*** վճիռների վրա: Հայ եկեղեցին չէր մասնակցել ***Քաղկեդոնի IV ժողովին (451 թ.)***, որն ընդունել էր Քրիստոսի՝ «մի անձ, երկու բնություն» բացատրությունը: Այդ բանաձևի հետևորդները հետագայում կոչվեցին քաղկեդոնականներ կամ երկաբնակներ:

Վահան Մամիկոնյանից հետո իշխանությունը VI դ. սկզբին անցնում է նրա եղբորը՝ ***Վարդ Պատրիկին:*** Հայոց կաթողիկոս Բաբգեն Ա-ն ***Դվինում 506 թ.*** ժողով է գումարում՝ Հայ առաքելական եկեղեցուն ենթակա վրաց, աղվանից հոգևորականների և նեստորականներից Պարսկաստանում նեղվող քրիստոնյաների ներկայացուցիչների մասնակցությամբ: Դվինի ժողովը դատապարտում է նեստորականների գործողությունները և Նիկեայի ժողովի դավանաբանության վրա հաստատված գրություն է կազմում ու հանձնում Պարսկաս-

Արցախի Տիգրանակերտի եկեղեցի. V-VI դդ.

տանից եկած քրիստոնյաներին: *Ժողովում ուղենշվում է Հայ եկեղեցու դավանաբանական ինքնուրույնությունը:*

Վարդ Պատրիկից հետո Արևելյան Հայաստանում կառավարեցին պարսիկ մարզպանները, այնուհետև՝ հայոց իշխան ***Մժեժ Գնունին:***

Սկսված բյուզանդա-պարսկական պատերազմը, որը ավերածություններ պատճառեց Հայաստանին, շարունակվում է նաև նոր գահակալած Հուստինիանոս I-ի (527–565 թթ.) և Խոսրով I Անուշիրվանի (531–578 թթ.) գահակալության սկզբնական շրջանում և ավարտվում «հավիտենական» կոչված հաշտության կնքումով (532 թ.):

Արևմտյան Հայաստանը VI դ. առաջին կեսին: Արևմտյան Հայաստանում ***(Մեծ Հայքի արևմտյան մաս և Փոքր Հայք)*** գործում էր Բյուզանդական կայսրության վարչակարգը: Հուստինիանոս I-ը, կայսրության կառավարումը կենտրոնացնելու և հայ նախարարների ներքին կառավարման համակարգը քանդելու նպատակով նաև Արևմտյան Հայաստանում իրականացնում է մի շարք միջոցառումներ, որոնք ծանրացնում են հայության վիճակը: Կայսրը ***530–531 թթ. ռազմավարչական*** բաժանում է կատարում, խախտում Արևմտյան Հայաստանի իշխանական տների համակարգը՝ կառավարումը հանձնելով բյուզանդական զինվորական պաշտոնյաներին: ***536 թ.*** հրապարակած օրենքով Արևմտյան Հայաստանի նախկին նահանգներից և հայկական հինգ ինքնուրույն իշխանություններից ստեղծում է ***Առաջին Հայք*** (կենտրոնը՝ ***Հուստինիանուպոլիս***), ***Երկրորդ Հայք (Սեբաստիա), Երրորդ Հայք (Մելիտինե)*** և ***Չորրորդ Հայք (Մարտիրոսուպոլիս)*** նահանգները: Հատուկ օրենքով ***տոհմական կալվածքներ ժառանգելու իրավունք էր տրվում նաև կանանց ու աղջիկներին,*** որով նախարարական հողային տիրույթները բաժան-բաժան էին լինում: Դրանով վտանգվում էր նաև Արևմտյան Հայաստանի հայ նախարարների տոհմական կապը Արևելյան Հայաստանի նախարարական տների հետ:

Բյուզանդական կայսրության լուծը ծանրանում է: Հայոց իշխան Համազասպին զրպարտելով և սպանելով՝ կայսեր մտերիմներից Ակակիոսը հայերի վրա ավելի ծանր հարկ է դնում ու բռնություններ գործադրում: ***539 թ.*** հայերը ***Հովհաննես Արշակունու*** և նրա որդու՝ ***Արտավանի*** գլխավորությամբ ապստամբում ու սպանում են Ակակիոսին: Հուստինիանոսն ուղարկում է Սիտտաս զորավարի զորքը: Ճակատամարտում նրան նիզակով սպանում է ապստամբության ղեկավար Արտավան Արշակունին: Կայսրը նոր ուժեր է ուղարկում: Զորավար Բուզեսը դավադրաբար սպանում է իր մոտ գնացած Հովհաննես Արշակունուն: Ապստամբները հարկադրաբար դիմում են Խոսրով Անուշիրվանին: Օգտվելով առիթից՝ պարսից արքան 540 թ. Բյուզանդիային պատերազմ է հայտարարում: Ռազմական գործողությունները ավերածություններ են պատճառում Հայաստանին:

Արտավանն իր եղբոր հետ անցնում է Բյուզանդիա՝ կայսեր մոտ ծառայության: Նրանք մասնակցում են Հյուսիսային Աֆրիկայում մղված կռիվներին: ***Արտավանն*** այնտեղ զորավար է նշանակվում, այնուհետև, գալով կայսրության մայրաքաղաք, ***548 թ.*** մասնակցում է հայազգի զորավար ***Արշակ Արշակունու՝*** Հուստինիանոսի դեմ կազմակերպած խռովությանը: Այն բացահայտվում է մասնակից բյուզանդացիների մատնությամբ: Հուստինիանոսը, ի թիվս մյուսների, Արտավանին պաշտոնանկ է անում և արգելափակում պալատում, քանզի նրանց՝ որպես հմուտ զորավարների կարիքն ինքը զգալու էր հետագա պատերազմների ժամանակ:

571 թ. ապստամբությունը և պարսկա-բյուզանդական 20-ամյա պատերազմը: Ազգային-եկեղեցական խնդիրներով մտահոգ հայոց կաթողիկոս Ներսես Բ Բագրևանդացու ջանքերով ***554 թ.*** գումարվեց ***Դվինի երկրորդ ժողովը: Այն վերջնականապես հաստատեց Հայ առաքելական եկեղեցու ազգային ինքնուրույնությունը,*** ինչն արտահայտվել է Հայոց աշխարհի միա-

բանության ուխտին նվիրված գրվածքում: Դվինի ժողովների (VI դ.) որոշումները պաշտպանում էին Հայ եկեղեցու դավանաբանությունը թե՛ պարսից արքունիքի հովանավորած նեստորականության և թե՛ քաղկեդոնական բանաձևին հետևող բյուզանդական եկեղեցու ոտնձգություններից:

564 թ. Հայաստանում պարսիկ մարզպան Սուրենի նշանակումով ավելի ծանրացան հարկերն ու տուրքերը, վարչական և կրոնական ճնշումները: Դվինում փորձ արվեց հիմնելու զրադաշտական պաշտամունքի մի ատրուշան: Չնայած ***Հովհաննես Բ Գաբեղենացի*** կաթողիկոսի և նախարարների բողոքներին՝ մարզպանը շարունակում է իր ապօրինի գործողությունները՝ հարստահարում հայ բնակչությանը, Ս. Գրիգոր եկեղեցին վերածում պահեստի: Սուրենը սպանում է Մամիկոնեից տեր Վասակի որդուն՝ Մանվելին: Այդ սպանությունը մեծ զայրույթ է առաջացնում և լցնում հայ ժողովրդի համբերության բաժակը:

Հայերը 571 թ. ապստամբում են՝ Վասակ Մամիկոնյանի մյուս որդու՝ ***Վարդանի*** (Վարդան Կրտսեր) գլխավորությամբ: Կռվի ժամանակ Սուրեն մարզպանը սպանվում է Դվինում: Ապստամբներից ոմանք գնում են Բյուզանդիա: Կայսրը օգնական զորք է ուղարկում, և Վարդանը ջախջախում է պարսիկներին: Հայաստան ներխուժած պարսից զորավար Միհրանի 20-հազարանոց զորքը պարտվում է Խաղամախայի ճակատամարտում:

572 թ. վերսկսված պարսկա-բյուզանդական պատերազմի ընթացքում Խոսրով Անուշիրվանը ներխուժում է Հայաստան և, անցնելով Արտազ և Բագրևանդ գավառներով, հասնում է Կարին, իսկ այնտեղից՝ Մելիտինե: Նրա դեմ է դուրս գալիս Վարդանը և պարտության մատնում: 20 տարի տևած պարսկա-բյուզանդական պատերազմը կրկին ավերածությունների պատճառ է դառնում Հայաստանում:

Պալատական դավադրության հետևանքով 590 թ. սպանվում է պարսից արքան: Պարսկաստանի արևելյան շրջանների զորքերի հրամանատար Վահրամ Չուբինն

Դվինի կենտրոնական թաղամասի վերակազմություն

ապստամբում է: Պարսից նոր արքան՝ Խոսրով II-ը, տարածքներ խոստանալով, օգնություն է խնդրում Մավրիկիոս կայսրից (582-602 թթ.), որը չի հապաղում օգտվել Սասանյանների թուլացումից: Մավրիկիոսի ուղարկած ռազմական օգնության զգալի մասը կազմում էին հայկական գնդերը: Իր հերթին Վահրամը խնդրել էր հայոց զորավար Մուշեղ Մամիկոնյանին իրեն օգնել զորքով՝ փոխարենը ***խոստանալով վերականգնել հայոց թագավորությունը:*** Մուշեղը, զգուշավորություն ցուցաբերելով, չի պատասխանում նրան: Վահրամի՝ սպառնալիքներով լի երկրորդ հրովարտակից երևում էր, թե որքանով իրավացի էր Մուշեղը՝ չվստահելով նրան: Մուշեղն իր պատասխան նամակում նշել էր, որ թագավորությունն Աստծուց է, իսկ նա ոչ թե Աստծուն էր ապավինել, այլ փղերի զորությանը:

Հայաստանի 591 թ. պարսկա-բյուզանդական բաժանումը: Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև գտնվող երկրները վարչաքաղաքական խոշոր փոփոխություններ են կրում ***591 թ.*** պարսկա-բյուզանդական բաժանումով: Դա հատկապես վերաբերում է Հայաստանին, որի հզոր ռազմական ուժերը, հարուստ տնտեսությունը և բնական պաշարները հանգիստ չէին տալիս նվաճողներին:

Հայաստանի 591 թ. ***երկրորդ բաժանումով*** երկրի մեծ մասն անցավ Բյուզանդիային: Խոսրովը զիջումներ էր կատարել հիմնականում ի հաշիվ Հայաստանի: Նոր միացրած և նախկին հայկական տարածքներից

Թևավոր խաչ Դվինից. V–VI դդ.

ու հարակից երկրամասերից բյուզանդացիները կազմավորում են մի շարք խոշոր նահանգներ՝ ***«Մեծ մասն Մեծ Հայոց»*** (տարածվում էր մինչև Սև ծովի ափերը), ***«Մասն Մեծ Հայոց»*** (Բարձր Հայք), ***«Զորրորդ Հայք կամ Վերին Միջագետք»***, ***«Մեծ Հայք»*** (Տուրուբերան), ***«Խորազոյն Հայք»*** (Տայք), ***«Ներքսագոյն Հայք»*** (Այրարատ նահանգի մեծ մասը) և այլ նահանգներ:

Նվաճողներին հանգիստ չէր տալիս հայոց զորքերի հզորությունը, ինչը երևում է բյուզանդական Մորիկ կայսեր՝ պարսից արքային ուղարկած նամակից. *«Անհնազանդ մի ազգ են... մեր միջև...: Բայց եկ... եթե իմն (այսինքն՝ Արևմտյան Հայաստանի հայ զորականներին) ժողովեմ և Թրակիա ուղարկեմ, և դու քոնը (այսինքն՝ Արևելյան Հայաստանի հայ զորականներին) ժողովիր և հրամայիր Արևելք գալնել: Քանզի, եթե մեռնեն, մեր թշնամիները կմեռնեն, և եթե սպանեն, մեր թշնամիները կսպանվեն, և մենք կապրենք խաղաղությամբ: Քանզի, եթե նրանք իրենց երկրում մնան, մեզ հանգիստ չի լինի»*: Այս հրեշավոր ծրագիրը Բյուզանդիայի նվաճողական քաղաքականությունից էր բխում:

Հայ զորավարները հաճախ ապստամբում էին: Նրանցից էր ***Սմբատ Բագրատունին***, որը ազատագրական շարժում էր սկսել հայրենիքում: Նա ցանկանում էր մնալ ու պայքարել Հայաստանի ազատագրման ու թագավորության վերականգնման համար, այլ ոչ թե կռվել նվաճող պետությունների հեռավոր սահմաններում: Կայսրը հրամայում է Սմբատին ու նրա զինակիցներին ձերբակալել և նետել կրկեսի գազանների առջև: Նախ նա բռունցքի հարվածով սպանում է արջին, հետո փախուստի է մատնում ցուլին, ապա խեղդում է առյուծին: Կայսրը հանդիսականների պահանջով ազատում է նրան:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչի՞ արդյունքում ստեղծվեց և ինչ տարածքներ էր ընդգրկում Վաչագան Բարեպաշտի թագավորությունը: Ներկայացրեք նրա գործունեությունը:
2. Քրիստոսի բնության բացատրության ինչ ուսմունք է դավանում Հայոց եկեղեցին: Երբ և ինչպե՞ս առաջացան քաղկեդոնական և հակաքաղկեդոնական ուղղությունները: Երբ և ո՞վ է հրավիրել Դվինի 506 թ. ժողովը, ինչ որոշում ընդունվեց:
3. Ի՞նչ նպատակով և ինչ միջոցառումներ իրականացրեց Հուստինիանոս I–ը. ինչ հետևանքներ դրանք ունեցան: Ներկայացրեք հակաբյուզանդական ապստամբությունն ու խռովությունը:
4. Ի՞նչ որոշում ընդունեց 554 թ. գումարված Դվինի ժողովը: Ի՞նչ քաղաքականություն էին վարում պարսիկները հայերի նկատմամբ: Ներկայացրեք 571–572 թթ. ապստամբության ընթացքը:
5. Որտեղո՞վ էր անցնում պարսկա–բյուզանդական 591 թ. սահմանագիծը: Ի՞նչ միջոցներով էին Պարսկաստանն ու Բյուզանդիան ջլատում հայոց ռազմական հզորությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ VII-IX ԴԱՐԵՐՈՒՄ

§ 4. ՀԱՅԱՍՏԱՆԸ VII ԴԱՐՈՒՄ

Պարսկա-բյուզանդական պատերազմի վերսկսումը: Հայաստանը VII դարի առաջին տասնամյակներում կրկին հայտնվեց պարսկա-բյուզանդական պատերազմական գործողությունների ոլորտում:

Պատերազմի առաջին տարիներին նախաձեռնությունը Պարսկաստանի (Իրան) կողմն էր: Խոսրով II-ի զորքերը ներխուժում են Արևմտյան Հայաստան, որտեղ հայ ժողովրդի պայքարը գլխավորում է ***Վահան իշխանը Տարոնում:***

Պատերազմի շրջանում՝ 607–608 թթ., Բյուզանդիայի գործուն աջակցությամբ ***Վրաց եկեղեցին ընդունում է քաղկեդոնականություն*** և ***անջատվում Հայ եկեղեցուց:***

Սասանյանների զորքերը գրավում են Բյուզանդական կայսրությանը ենթակա տարածքները Ասորիքում, Փոքր Ասիայում և Եգիպտոսում: ***614 թ.*** նրանք տիրում են նաև Երուսաղեմին, որտեղից, որպես ավար, ոսկու և արծաթի հետ տանում են նաև ***Խաչափայտը,*** որի վրա խաչել էին Քրիստոսին:

615 թ. Խոսրով II-ը գումարում է Տիզբոնի ժողովը, որին մասնակցում էին պարսից տիրապետության տակ հայտնված երկրներից հոգևոր և աշխարհիկ ներկայացուցիչներ: Հայերից ներկա էին ***Կոմիտաս Մամիկոնյան*** և ***Մաթեոս Ամատունի*** եպիսկոպոսներն ու ***Սմբատ Բագրատունին:*** Վիճաբանություններից հետո ընդունվում են տիեզերական առաջին երեք ժողովների վճիռները, և մերժվում են 451 թ. Քաղկեդոնի ժողովի որոշումները: Խոսրովը հրամայում է. *«Ամեն քրիստոնյա, որ իմ իշխանության տակ է, հայոց հավատին թող հարի»:* Տիզբոնի ժողովից հետո ***Կոմիտաս Մամիկոնյանը*** պաշտոնապես օծվում է ***հայոց կաթողիկոս*** (615–628 թթ.): Նրա ջանքերով կառուցվում է հոյակերտ ***Ս. Հռիփսիմեի տաճարը (618 թ.):***

Հայաստանի քաղաքական վիճակը VII դարի 20-30-ական թթ.: VII դ. 20-ական թթ. Հերակլ կայսրը (610–641 թթ.) մի քանի արշավանք է ձեռնարկում դեպի Պարսկաստան: Բյուզանդական զորքերի



Էջմիածնի Ս. Հռիփսիմե տաճարի ընդհանուր տեսքը. 618 թ.

երթուղիներն անցնում էին Հայաստանով, որի պատճառով մեր երկիրը կրկին դառնում է պատերազմի թատերաբեմ: Բյուզանդացիները լուրջ հաջողություններ են ունենում: ***631 թ. սեպտեմբերի 14-ին Հերակլը Խաչափայտը վերադարձնում է Երուսաղեմ:*** Հենց այդ օրն էլ քրիստոնյաներն սկսում են նշել ***Խաչվերացի (Սուրբ Խաչ) եկեղեցական տոնը:***

Արևելյան Հայաստանում սկսվել էր ***անկախացման գործընթաց՝ մարզպան Վարազտիրոց Բագրատունու*** (628–632 թթ.) գլխավորությամբ: Դրանից անհանգստացած ախոյան երկրները մոռանում են իրենց միջև առկա թշնամությունը և կրկին հայերի դեմ գործում միասնաբար: Բյուզանդական և պարսկական իշխանությունները Վարազտիրոցի դեմ դավադրություն են կազմակերպում: Վարազտիրոցը ցանկանում էր մնալ և ծառայել հայրենիքում, սակայն կայսրը նրան ուղարկում է Կոստանդնուպոլիս: Չհաշտվելով «պատվավոր աքսորյալի» վիճակի հետ՝ նա մասնակցում է Հերակլի դեմ կազմակերպած դավադրությանը: Դավադրության բացահայտումից հետո Հերակլը բոլորին դաժանորեն պատժում է, իսկ Վարազտիրոցին աքսորում մի կղզի:

Արևմտյան Հայաստանի կառավարիչ

Մժեժ Գնունին գործում էր ազատատենչ հայ զորականների դեմ: Նա ձերբակալում է իշխան *Դավիթ Սահառունուն:* Հայրենասիրական ուժերը համախմբվելով ջախջախում են Մժեժին: Դավիթը ստանձնում է երկրի զորավարությունը: Հերակլը նրան տալիս է *«պատրիկ-կյուրապաղատի»* աստիճան և ճանաչում *հայոց իշխան:* Հերակլի այդպիսի վերաբերմունքը թելադրված էր թե՛ Բյուզանդիային համակած ճգնաժամով և թե՛ արաբների հարձակումներով: Դավիթ Սահառունին մինչև VII դարի 30-ական թթ. վերջը *գլխավորում է երկրի վերամիավորման գործը:* Նրան փոխարինում է *Թեոդորոս Ռշտունին:*

Հայաստանը և արաբների զավթողական պատերազմները: Արաբական թերակղզում բնակվող և անասնապահությամբ զբաղվող ցեղերի քաղաքական միավորումը տեղի ունեցավ *622 թ.*՝ իրենց մարգարե *Մուհամմեդի օրոք:* Նա եղավ մահմեդական (իսլամ) կրոնի (կենտրոնը՝ Մեքքա քաղաքը) և Արաբական խալիֆայության հիմնադիրը: Մուհամմեդը անմիջապես սկսեց նվաճողական պատերազմներ, որ շարունակեցին նրա հաջորդները: *636 թ.* բյուզանդական զորքը խոշոր պարտություն կրեց Յարմուք գետի ափին, իսկ *637 թ.* արաբները Քադիսիայի ճակատամարտում ջախջախիչ հարված հասցրին նաև պարսիկներին և *կործանեցին պարսկական տերությունը:*

Հայոց իշխան և սպարապետ Թեոդորոս Ռշտունին, օգտվելով երկու աշխարհակալ երկրների՝ արաբներից կրած պարտությունից, *639 թ. վերամիավորեց Հայաստանի արևմտյան և արևելյան մասերը:* Երկիրը դարձավ ինքնուրույն իշխանապետություն: Հայոց իշխանի *նստավայրն Աղթամար կղզին էր,* որտեղից իրականացվում էր երկրի պաշտպանությունը:

640 թ. սկսվեցին *արաբական զորքերի* ներխուժումները *Հայաստան:* 641 թ. հոկտեմբերին արաբները հարձակվում են *Դվինի* վրա: Չնայած բնակիչների համառ դիմադրությանը՝ նրանք գրավում, ավերում ու թալանում են քաղաքը, բնակիչներից շատերին կոտորում, իսկ 35 հազար մարդ գերեվարում և տանում խալիֆայության խորքերը: Արաբական արշավանքները հետագա տարիներին կրկնվում են:

Կոստանդին (Կոստաս) II կայսրը (641–668 թթ.), չհաշտվելով Թեոդորոս Ռշտունու ինքնուրույն քաղաքականության հետ, նրան մեղադրում է Հայաստանում գտնվող բյուզանդական մի ջոկատի՝ արաբներից 643 թ. կրած պարտության մեջ և ձերբակալում: Այդ նույն ժամանակ գերությունից փախչում և հայրենիք է վերադառնում *Վարազտիրոցը:* Կայսրությունն արաբների դեմ հայերի աջակցությունը ստանալու համար նրան շնորհում է կյուրապաղատի կոչում և հանձնում հայոց իշխանի պաշտոնը: Սակայն Վարազտիրոցը շուտով մահանում է: Հայաստանը կայսրության ոլորտում պահելու ձգտումով Կոստասն ազատ է արձակում Թեոդորոսին և ճանաչում նրա իշխանությունը:

647 թ. խալիֆայության զորքերը դարձյալ ներխուժում են Հայաստան, Վիրք ու բուն Աղվանք: Վասպուրականի կողմերում ապատակած արաբական զորամասը չի կարողանում գրավել Հերևան և Որդպու բերդերը: Ապա արաբները փորձում են իրենց վրեժը լուծել Կոգովիտ գավառի Արծափ ամրոցի բնակիչներից: Թեոդորոս Ռշտունու գլխավորությամբ ամրոցին օգնության հասած հայոց զորքը գլխովին ջախջախում է արաբներին՝ իրենց երկու զորավարներով:

Հայ ժողովուրդը դիմակայեց խալիֆայությանը: Մինչդեռ Հայաստանի նկատմամբ նվաճողական քաղաքականություն վարած Սասանյան Պարսկաստանը մի քանի տարվա ընթացքում լրիվ ջախջախվեց ու կործանվեց, իսկ Բյուզանդական կայսրությունը, չսթափվելով խալիֆայությունից կրած պարտություններից, կրկին շարունակեց իր նվաճողական քաղաքականությունը Հայաստանի հանդեպ:

Հայ-արաբական պայմանագիրը: Խալիֆայությունը չէր հրաժարվել Հայաստանը նվաճելու ծրագրից: Նման պայման-

ներում հայ հոգևոր ու աշխարհիկ իշխանների մի խմբավորում՝ ***Ներսես Գ Տայեցի կաթողիկոսի ղեկավարությամբ***, շարունակում էր հույսեր կապել քրիստոնյա Բյուզանդիայի օգնության հետ: Սակայն մյուս թևը՝ Թեոդորոս Ռշտունու գլխավորությամբ, փորձում էր քաղաքական հարաբերություններ հաստատել Արաբական խալիֆայության հետ: Ռշտունին Հայաստանի անվտանգությունն ապահովելու նպատակով ***652 թ.*** մեծ ընծաներով ուղղվեց Ասորիքի (Սիրիա) և Վերին Միջագետքի՝ այդ ժամանակվա կառավարիչ ***Մուավիայի*** մոտ: Արաբները, ձեռնտու համարելով հայերի հետ դաշինքը, ***Դամասկոսում*** կնքում են ***հայ-արաբական դաշնագիր:***

Ըստ պայմանագրի՝ խալիֆայությունն առնվազն 3 տարի հարկ չէր գանձելու, իսկ դրանից հետո հայերն այնքան էին վճարելու, որչափ կամենային: Ի հաշիվ գանձվող հարկի՝ հայերը 15-հազարանոց այրուձին էին պահելու, որը պետք է պատրաստ լիներ գործելու այլ տեղերում: Հայաստանում արաբական զորք չէր լինելու: Բյուզանդացիների ներխուժման դեպքում խալիֆայությունն այնքան զորք էր ուղարկելու, որքան հայերը կամենային:

Պայմանագրի կնքումը սրում է հայ-բյուզանդական հարաբերությունները: 653 թ. Կոստանդին II-ը 100-հազարանոց բանակով ներխուժում է Հայաստան: Կարինում նրան են ներկայանում Ներսես կաթողիկոսն ու Մուշեղ Մամիկոնյանը և խնդրում հրաժարվել Հայաստանը կողոպտելու քայլից: Կոստանդին II-ն իր զորքի մեծ մասը հետ է ուղարկում, իսկ ինքը 20-հազարանոց զորքով գալիս է Դվին: Նա հայոց հեծելազորի իշխան է նշանակում Մուշեղ Մամիկոնյանին: Այդ իրավիճակում, «պայմանագրի» համաձայն արաբները չեն հապաղում ներխուժել Հայաստան: Նրանք հետապնդում են բյուզանդական զորքին, որը նախ փախչում է Տայք, իսկ այնտեղից՝ Տրապիզոն, որտեղ և պարտություն է կրում հետապնդող արաբական զորքից:

Թեոդորոս Ռշտունին գնում է Դամասկոս՝ Մուավիայի մոտ, և որպես հայոց իշխան՝ Հայաստանի հետ ***միաժամանակ իշխանություն սրանում նաև Վիրքի ու Աղվանքի*** վրա՝ մինչև Ճորա պահակն ընկած տարածքները:



Զվարթնոցի տաճարի մանրակերտը ըստ Թ. Թորամանյանի վերակազմության

Արաբների հաջորդ ասպատակությունը և բյուզանդական ներխուժումը մեծ ավերածություններ են պատճառում երկրին: Արաբները Հայաստանից հեռանում են մեծ ավարով և բազում գերիներով: Ռշտունին, կամովին միանալով գերիներին, 656 թ. մահանում է օտարության մեջ: Նրա մարմինը բերում և թաղում են հայրենի կալվածքում՝ Ռշտունիքում:

Հայաստանի անկախության վերականգնումը: VII դ. երկրորդ կեսը նշանավորվում է Հայաստանի վերականգնված անկախության պահպանմամբ և երկրի բարգավաճմամբ:

Թեոդորոս Ռշտունուն հաջորդում է ***Համազասպ Մամիկոնյանը:*** Կոստանդին II-ը, ձգտելով Հայաստանը ներգրավել կայսրության ազդեցության ոլորտը, նրան ճանաչում է հայոց իշխան: Սեբեոսի բնու-

թագրմամբ՝ նա առաքինի, ընթերցասեր և ուսումնասեր այր էր, որը քաջությամբ և ջերմեռանդությամբ նախանձախնդիր է լինում զինվորական գործին: Համազասպի իշխանության տարիները խաղաղ էին:

Ներսես Գ–ն 661 թ. ավարտում է Զվարթնոցի տաճարի կառուցումը:

Հայոց իշխան ***Գրիգոր Մամիկոնյանի (661–685 թթ.)*** կառավարումը նույնպես խաղաղ էր: Դա պայմանավորված էր նաև արդեն խալիֆ դարձած Մուավիայի կառավարմամբ, երբ կրկին ուժի մեջ էր մտել Թեոդորոս Ռշտունու հեռատես քաղաքականության շնորհիվ կնքված հայ–արաբական պայմանագիրը: Հայաստանի տարածքային ամբողջականության և անկախության վերականգնումը հսկայական նշանակություն ունեցավ Հայոց աշխարհի քաղաքական և տնտեսական բարգավաճման համար: Հայաստանի կախումը խալիֆայությունից ձևական բնույթ ուներ, իսկ վճարվող հարկը չնչին էր՝ 500 դահեկան:

Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանին հայ պատմիչներն անվանում են կարգ ու կանոնի բարեպաշտ առաջնորդ: Նա Արուճ ավանում ձեռնարկում է Ս. Գրիգոր եկեղեցու, իսկ կողքին՝ իշխանական պալատի կառուցումը:

680 թ. վերջից Հայաստանը սկսում է հարկ չվճարել խալիֆայությանը: Հինգ տարի անց հյուսիսից ներխուժած խազարների դեմ մղած պայքարում զոհվում է Գրիգոր Մամիկոնյանը, որին հաջորդում է ***Աշոտ Բագրատունին (686–689 թթ.):*** Նրա օրոք Հայաստանի վիճակը վատթարանում է խալիֆայության և կայսրության զորքերի



Թալինի տաճարը հարավից. VII դ.

ներխուժումների հետևանքով: Աշոտ Բագրատունին երկիր ներխուժած արաբական զորքին պարտության է մատնում, սակայն թշնամուն հետապնդելու ժամանակ ինքը ևս զոհվում է: 689 թ. Հայաստան է ներխուժում բյուզանդական զորքը: ***Ներսեհ Կամսարականին*** կայսրը ճանաչում է հայոց իշխան: Նրա օրոք կառուցվում է Թալինի նշանավոր եկեղեցին:

Մի կողմից՝ բյուզանդացիներն էին ձգտում ամրապնդելու կայսրության ազդեցությունը Հայաստանում, իսկ մյուս կողմից՝ արաբները սաստկացնում էին իրենց հարձակումները: Ներսեհ Կամսարականին հաջորդած ***Սմբատ Բագրատունու*** իշխանության տարիներին շարունակվում էր հայ ժողովրդի հերոսական դիմադրությունը խալիֆայության զորքերին: Բայց նրանց հարձակումներն օրեցօր սաստկանում էին և լուրջ սպառնալիք դառնում Հայաստանի անկախության համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ ընթացք ունեցավ պարսկա–բյուզանդական հակամարտությունը VII դարի սկզբներին: Ովքեր ավարտին հասցրին Հայաստանի միավորման գործընթացը:
2. Ներկայացրեք արաբական արշավանքները Հայաստան և դրանց հետևանքները:
3. Երբ և ինչ պայմաններով կնքվեց հայ–արաբական պայմանագիրը: Ինչ նշանակություն այն ունեցավ:
4. Ներկայացրեք Հայաստանի վիճակը VII դ. երկրորդ կեսին:

§ 5. ՀԱՅ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Արաբական խալիֆայությունը, գրավելով Հայաստանը, Վիրքը, բուն Աղվանքն ու Մերձկասպյան շրջանները, *701 թ. կազմեց* մեկ ընդհանուր վարչաքաղաքական *Արմինիա* կոչվող միավոր՝ *փոխարքայություն* (որի կենտրոնը նախ *Դվինն էր*, VIII դ. վերջից՝ *Պարսկավը*): Հայ ժողովուրդը VIII–IX դարերում բազմիցս ապստամբեց օտար լծի դեմ: *Հայ նախարարական համակարգը*, չնայած խալիֆայության դաժան բռնություններին, *պահպանել էր իր բաղադրատարրերը*, որոնց հողատիրական հիմքը կազմում էին Բագրատունյաց, Սյունյաց, Մամիկոնյան և Արծրունիների իշխանական տիրույթները: *Հայոց իշխանի* պաշտոնը հիմնականում զբաղեցնում էին Հայաստանում և ամբողջ Արմինիայում մեծ հեղինակության տեր *Բագրատունյաց* տան ներկայացուցիչները, որոնց էր անցել նաև *հայոց սպարապետի* պաշտոնը: *Հայ եկեղեցին* այդ ծանրագույն ժամանակաշրջանում *շարունակում էր իր ազգապահպան գործունեությունը:*

Հակաարաբական ապստամբությունները VIII դարի առաջին կեսին: Արմինիայի առաջին արաբ ոստիկանի (կառավարիչ) դաժան հարկահանությանը և կրոնական հալածանքներին հայերը պատասխանեցին ապստամբությամբ, որը գլխավորեց Աշոտ իշխանի որդին՝ *Սմբատ Բագրատունին:*

Ակոռի գյուղ հասած նախարարներին հետապնդում էր ավելի քան 5–հազարանոց արաբական զորքը: Հայկական 2000–անոց այրուձին շարունակում է ճանապարհը և Երասխի հովտում՝ *Վարդանակերտ* ավանում, *703 թ. հունվարին* բանակ է դնում: Լուսաբացին ապստամբները գրոհում են թշնամու զորքի վրա, որը, սարսափելի սառնամանիքին գիշերելով բաց երկնքի տակ, կորցրել էր մարտունակությունը: Ջախջախված արաբների փախուստի պահին սառույցը ջարդվում է, և նրանցից շատերը խեղդվում են Երասխի ջրերում: Միայն 300 հոգու մեծահոգաբար պատսպարում և բուժում է Կամսարական իշխանուհի Շուշանը և խնդրում Սմբատին նրանց կենդանի թողնել: Սակայն վեհանձնության այս աննախադեպ դրսևորումը հետագայում չգնահատվեց բիրտ թշնամու կողմից:

Ապստամբությունն ընդգրկել էր Երևանը, Վանանդը, Վասպուրականը: Ռշտունիք նահանգի Գուկանք գյուղի մոտ ապստամբները Վասպուրականի Սմբատ իշխանի գլխավորությամբ ջախջախում են թշնամուն: Միայն 280 արաբ զինվոր փախչում են և թաքնվելով եկեղեցում՝ ներում են խնդրում: Սմբատ իշխանը եկեղեցուց դուրս է հանում չարագործներին և մահապատժի ենթարկում: Վանանդ գավառում Կամսարական իշխանի հեծյալ գունդը ջախջախում է արաբների մի մեծ զորամաս:

Խալիֆայությունն ապստամբների դեմ մեծաքանակ զորք է ուղարկում: Սահակ Ձորափորցի կաթողիկոսը նամակով խնդրում է արաբ հրամանատարին ճանաչել հայոց հավատը և հրաժարվել արյունահեղությունից: Սակայն արաբական զորքը ներխուժում է երկիր և հետևում հայ նախարարների գործողություններին:

705 թ. Հայաստանում այրուձիի հաշվառում կատարելու և ոռճիկ վճարելու պատրվակով *Նախիջևանը բռնազավթած* արաբ կառավարիչը իր մոտ եկած բազմաթիվ հայ նախարարների զինաթափում, թալանում և փակում է Նախիջևանի ու Խրամի եկեղեցիներում ու ողջակիզում նրանց: Այս գազանային ոճրագործության ժամանակը արաբական մի սկզբնաղբյուրում կոչվել է «կրակի տարի»:

VIII դարի 20–ական թթ. սաստկանում են խալիֆայության ճնշումները: Այդ քաղաքականությունն իրականացվում էր Հայաստանի քաղաք–ամրոցներում տեղակայված արաբական կայազորների միջոցով:

725 թ. Արմինիա եկած Հերթ ոստիկանի *«աշխարհագրով»* հարկահանությունը խիստ

ծանրացավ: Վաճարվող հողահարկին գումարվեցին նորերը: Հարկային նոր քաղաքականությունն ուղեկցվեց դաժան բռնություններով: Ոչ մահմեդականներից գանձվող *ծխահարկը* (ըստ գերդաստանների՝ երդերի) փոխարինվում է *գլխահարկով*: Հաճախ հարկի փոխարեն տանում էին հարկատուի ընտանիքի անդամներին: *Հարկապու է դառնում* նաև *հոգևորականությունը*:

Հայ նախարարների տիրույթների մի մասը բռնազավթում էին արաբները՝ ստեղծելով *ամիրայություններ* կոչվող վարչաքաղաքական միավորներ: Ոչ մահմեդականները, հատկապես քրիստոնյաները դառնում էին կրոնական բռնության զոհ՝ հաճախ ենթարկվելով բռնի հավատափոխության: Արգելվում էին խաչերով ու սրբապատկերներով երթերը փողոցներում, եկեղեցական զանգեր հնչեցնելը, խաչեր կանգնեցնելը:

748 թ. հայերը կրկին *ապստամբում են՝ Գրիգոր* և *Դավիթ Մամիկոնյան* եղբայրների գլխավորությամբ: Խալիֆի հրամանով Դավիթին ձերբակալում և սպանում են: Գրիգորի հետ եղած նախարարներին է միանում *հայոց իշխան* և *սպարապետ Աշոտ Բագրատունին*: Նրանք գնում են Տայք՝ հույս ունենալով օգնություն ստանալու Բյուզանդիայից: Ապստամբության ղեկավարների մեջ պառակտում է սկսվում: Աշոտը հեռանում է Բագրևանդ գավառ, իսկ Գրիգորին նենգորեն տեղեկացնում են, թե Աշոտը հարել է արաբներին: Նրա հրամանով Դավիթի ծառաները Աշոտին կուրացնում են:

Ապստամբությունն արձագանք էր գտել *Սասուն-Խութ գավառում*, որտեղ ապստամբությունը ղեկավարում էր *Հովհանը*: Քաջ սասունցիները սպանում են այնտեղ նշանակված արաբ կառավարչին: Խալիֆայությունն ստիպված էր Հովհանին նշանակել «Լեռան» կառավարիչ, դրանով իսկ Սասուն գավառը, որ մինչ այդ մտցվել էր «Ջազիրա» (Հյուսիսային Միջագետք) նահանգի կազմի մեջ, միանում է Արմինիային՝ անցնելով հայոց իշխանի իրավասության ներքո: Փաստորեն 748-750 թթ. ապստամբության ճնշումից հետո էլ Հայաստանը շարունակում է պահպանել ներքին ինքնուրույնության մի շարք տարրեր:

774–775 թթ. ապստամբությունը: Խալիֆայության գերիշխանության դեմ առավել հզոր էր հայ ժողովրդի 774–775 թթ. ապստամբությունը, որը *սկսել էր Շիրակի Կումայրի գյուղից Արտավազդ Մամիկոնյանը*: Գնալով Դվին՝ նա ռազմական խորամանկությամբ արաբ ոստիկանից զենք էր ստացել՝ խալիֆայության թշնամիների դեմ կռվելու պատրվակով: Այնինչ Շիրակում գինելով իր ռազմիկներին՝ նա հարձակվում է արաբ գլխավոր հարկահանի վրա, խլում հավաքված ամբողջ հարկը, ապա իր ընտանիքով ու զինակիցներով հեռանում է Մեծ Հայքի հյուսիսարևմտյան սահմանային գոտի, այդտեղից էլ՝ Եգերաց աշխարհ:

Ապստամբներին այդուհետ ղեկավարում է *Մուշեղ Մամիկոնյանը*: Ջախջախելով Տարոն ներխուժած արաբական ջոկատը՝ նա ընտանիքով ամրանում է *Արտագերս* ամրոցում: Շուտով 260 զինակիցների հետ Մուշեղը Բագրևանդ գավառում ոչնչացնում է արաբ հարկահաններին: Դվինը գավթած արաբական կայազորից 4000 հեծյալ գալիս է Բագավան գյուղ: Այստեղ Մուշեղի ջոկատը ջախջախում է թշնամուն և փախուստի մատնում արաբական զորքի մնացորդներին: Դվինը գավթած արաբները սարսափահար փակվում են քաղաքում:

Հայ ապստամբական ուժերի թիվը շուտով հասնում է 5000 զինվորի: Մուշեղին էր միացել *սպարապետ Սմբատ Բագրատունին*: Շատերին թվում էր, թե խալիֆայության տիրապետության վերջն էր եկել: Ապստամբները պաշարում են *Կարինը*: Խալիֆը *775 թ.* գարնանը ապստամբների դեմ 30-հազարանոց զորք է ուղարկում, որը գալիս է *Խլաթ*: Համազասպ Արծրունին ու եղբայրները, Ամատունյաց տոհմի նախարարները և սպարապետ Սմբատի եղբայրը իրենց զորքերով գալիս են Բերկրի: Ապստամբները հասնում են *Արձեշ* քաղաք և *ապրիլի 15-ին* մարտի մեջ մտնում արաբների հետ: Սակայն Խլաթից եկած և դարանակալ արաբական մյուս զորքը հարձակ-

վում է հայերի վրա: Զոհվում են չորս իշխաններ և 1500 ռամիկներ:

Կարինը պաշարող ապստամբները, տեղեկանալով Արձեշի ճակատամարտի տխուր վախճանի մասին, Մուշեղի գլխավորությամբ շարժվում են դեպի Բագրևանդ գավառ, ուր եկել և բանակ էր դրել արաբական զորքը:

Վճռակրան ճակատամարտը տեղի է ունենում Արածանի գետի հովտում՝ Արձնի գյուղի մոտ, 775 թ. ապրիլի 25-ին: Ճակատամարտի սկիզբը բարենպաստ էր հայերի համար: Արաբները նույնիսկ ստիպված էին նահանջել: Ըստ Ղևոնդի՝ հայերը, միմյանց քաջալերելով, ասում էին. *«Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի ու մեր ազգի համար»:* Հայերը կռվում են հերոսաբար, սակայն ապստամբական ուժերը չեն բավարարում, և շատերը զոհվում են: Հայրենիքի ազատության համար իրենց կյանքը զոհաբերում են Բագրատունյաց, Մամիկոնյան, Գնունյաց և բազում այլ տոհմերից նախարարներ, ինչպես և ռամիկներ՝ մոտ երեք հազար հոգի:

Հայկական իշխանական տների հզորացումը: IX դ. խալիֆայության թուլացման պայմաններում կրկին հզորանում են ***Բագրատունի, Արծրունի, Սյունիքի, Արցախի*** հայկական իշխանությունները: Առավել ազդեցիկ դիրքի հասան հայոց իշխանի պաշտոնը զբաղեցնող Բագրատունիները: Սմբատ Բագրատունու որդին՝ ***Աշոտ Մսակերը,*** ընդարձակել էր իր տիրույթները Տարոնում, Այրարատում, Տայքում և այլուր: Նա խալիֆայության կողմից ***804 թ.*** պաշտոնապես ***ճանաչվեց հայոց իշխան:*** Նրա ***եղբայրը՝ Շապուհը,*** նշանակվեց ***սպարապետ:*** Աշոտ Բագրատունին իր ***նստավայրը Դարոյնքից տեղափոխեց*** Ախուրյանի ափին գտնվող ***Բագարան*** բերդաքաղաքը:

Աշոտ Մսակերին հայոց իշխանաց իշխանի պաշտոնում հաջորդեց որդին՝ Տարոնի տեր ***Բագարատ Բագրատունին (826-851թթ.):*** Նա ամբողջ Արմինիայում մեծ հեղինակություն ուներ: Բագարատի մյուս եղբայրը՝ Շիրակի տեր ***Սմբատ Բագրատունին,*** դարձավ ***հայոց սպարապետ:*** 851 թ. հայ նախարարները՝ հայոց իշխանաց իշխան Բագարատ Բագրատունու գլխավորությամբ, արաբ հարկահավաքին թույլ չտվեցին երկրի սահմանն անցնել և հենց այդտեղ էլ նրան հանձնեցին հարկերը: Այդ քայլով Բագրատունյաց իշխանը բացարձակ անհնազանդություն էր ցուցաբերում հետզհետե թուլացող խալիֆայության նկատմամբ:

850-855 թթ. ապստամբությունը: IX դարում հայ ժողովուրդը շարունակեց պայքարն անկախ պետականության վերականգնման համար: ***850 թ. Բագարատ Բագրատունին Աշոտ Արծրունու*** հետ արաբ նվաճողներին ***դուրս քշեց Տարոնից:*** Արաբների մի ուրիշ զորախումբ ջախջախվեց Վասպուրականում:

851 թ. Յուսուֆի գլխավորությամբ արաբական զորաբանակ է ներխուժում Հայաստան: Խլաթում նա խաբեությամբ ձերբակալում է Բագարատին և ուղարկում խալիֆայություն: ***Հովնան Խութեցու*** և Բագարատի որդիների՝ ***Աշոտի ու Դավիթի*** գլխավորությամբ սասունցիները Տարոնում հարձակվում ու ոչնչացնում են զավթիչներին: Յուսուֆը փախչում և թաքնվում է Ս. Փրկիչ եկեղեցու գմբեթում: Սասունցիները, գտնելով ոճրագործին, մահապատժի են ենթարկում: Ապստամբությունն ավելի է ծավալվում: Այդ պայքարն իր արտացոլումն է գտնում ***«Սասնա ծռեր»*** կամ ***«Սասունցի Դավիթ» դյուցազներգությունում:***

852 թ. խալիֆը հայ ապստամբների դեմ ուղարկում է իր դաժանությամբ աչքի ընկած ***Բուղա*** անունով մի թուրք վարձկան զորականի: Թշնամին ասպատակում է Բաղեշը, Խութը և Սասունը: Բնակչության մի մասին Բուղան կոտորում է, մյուսներին՝ գերեվարում, այդ թվում՝ Հովնան Խութեցուն և Բագարատի որդիներին: Վասպուրականցիներն ***Աշոտ Արծրունու*** գլխավորությամբ ամրանում են ***Նկան*** ամրոցում և հերոսաբար դիմադրում արաբներին: Աշոտի ձերբակալությունից հետո արաբների դեմ պայքարը շարունակում է նրա եղբայրը՝ ***Գուրգենը:*** Բուղայի 15000-անոց զորքի

դեմ Գուրգենը կռվում էր 900 ռազմիկներով: *852 թ. «Արյան լիճ»* կոչվող լեռնային բարձրադիր լճի ափին *տեղի ունեցած ճակատամարտն* ավարտվում է հայերի հաղթանակով: Պարտված թշնամին խուճապահար փախչում է Վասպուրականից:

853 թ. Բուղայի զորքը մտնում է Վիրք, սակայն, հյուսիսում պարտվելով Կովկասի լեռնականներից, կրկին ներխուժում է Հայաստան և մի շարք խայտառակ պարտություններ կրում Արցախում: Հայոց իշխան *Եսայի Աբու-Մուսեի* քաջարի զինվորները *Քթիշ ամրոցը* (Տող գյուղի մոտ) մոտ մեկ տարի անառիկ են պահում: Պատմիչի վկայությամբ՝ կրած պարտություններից հետո Բուղան այնքան էր հուսալքվել, որ երկար ժամանակ չէր համարձակվում դուրս գալ իր վրանից: Ինչպես հաճախ, այս անգամ էլ նենգ թշնամին դիմում է խաբեության. բանակցելու պատրվակով նա իր մոտ է կանչում ու ձերբակալում քաջարի զորականին:

Վասպուրականում ապստամբները *Գուրգեն Արծրունու* գլխավորությամբ ջախջախում և դուրս են մղում արաբներին: Բուղան այս պարտություններից հետո վերջնականապես խայտառակվում է, և խալիֆը *855 թ.* նրան Հայաստանից հետ է կանչում:

Հայոց *հզորագույն ապստամբությունը (850-855 թթ.)* սասանեց արաբական տիրապետությունը Հայաստանում: Երկրի քաղաքական զարգացումն ընթացավ հայոց անկախ պետականության և թագավորության վերականգնման հունով, որում որոշիչ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի պայքարն օտար նվաճողների դեմ: Սմբատ սպարապետի որդին՝ *Աշոտ Բագրատունին, 855 թ. ճանաչվեց հայոց իշխան ու սպարապետ:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ տարածքներ էր ընդգրկում Արմինիա փոխարքայությունը: Ներկայացրեք 703 թ. հակաարաբական ապստամբությունը: Ինչ քաղաքականություն էին վարում արաբները Հայաստանում 720-ական թվականներին: Ներկայացրեք 748-750 թթ. հակաարաբական ապստամբությունը:
2. Վերհանեք 774-775 թթ. հակաարաբական ապստամբության նշանակությունը:
3. Ինչով էր պայմանավորված հայ իշխանական տների հզորացումը IX դարում: Ո՞ր իշխանական տները հզորացան: Ովքե՞ր էին այդ ժամանակաշրջանի նշանավոր Բագրատունիները. ինչ պաշտոններ էին զբաղեցնում:
4. Ո՞րն էր 850-855 թթ. ապստամբության նպատակը: Ներկայացրեք այդ ապստամբության ընթացքը, կարևոր իրադարձությունները և նշանակությունը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Ղևոնդ պատմագիրը 775 թ. Արձնիի ճակատամարտի նահատակների մասին

Իսկ քաջահաղթ նահատակները, թեպետև սակավաթիվ էին... սակայն դառնաշունչ օրհասական պահին ահի չմատնվեցին, այլ բոլորը, միահամուռ հավաքվելով, իրար քաջալերում էին հետևյալ խոսքերով. «Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի և մեր ազգի համար, և թող մեր աչքերը չտեսնեն մեր սրբարանների և մեր Աստուծո փառավորման վայրերի ոտից կոխան լինելն ու պղծվելը, այլ թշնամիների սուրը թող նախ և առաջ մեր դեմ ուղղվի... Մեր անձերը զոհենք ճշմարիտ հավատի փոխարեն և ոչ թե երկրավոր կյանքի սիրուն, քանզի այս ժամանակավոր մահվան դիմաց կա հավիտենական կյանք (Պատմություն, ԼԴ):

ԲԱԺԻՆ 2 ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑԱԾ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Թեմա 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Հայկական պետականության վերականգնման նախադրյալները: Միջին դարերի հզոր տերություններից մեկը՝ Արաբական խալիֆայությունը, IX դարում սկսեց թուլանալ և անկման ուղի բռնել: Զարգացման տարբեր աստիճաններում գտնվող, տարբեր լեզու, դավանանք ունեցող ժողովուրդներին մի պետության մեջ բռնի միավորումը կայուն ու երկարատև լինել չէր կարող: Տերությանը ենթակա երկրներում, այդ թվում և Հայաստանում աստիճանաբար ավելի ու ավելի էր ուժեղանում արաբական լուծը թոթափելու համար մղվող պայքարը: ***Հայաստանի անկախությունը վերականգնելու համար ստեղծվել էին նպաստավոր պայմաններ:***

Արտաքին քաղաքական իրադրությունը բարենպաստ էր դրա համար: Առանձին երկրների արաբ ամիրաները տեղերում ամրապնդել էին իրենց իշխանությունը և ձգտում էին անջատվել խալիֆայությունից: Գերազանցապես վարձկաններից բաղկացած արաբական բանակը միշտ չէ, որ ենթարկվում էր խալիֆներին: Կայուն չէր դրությունը նաև խալիֆայության կենտրոնում: Լայն ծավալ ստացած ժողովրդական ազատագրական ընդվզումները, մասնավորապես Ատրպատականում Բաբեկի գլխավորած ապստամբությունը և գահակալական կռիվները խարխլում էին կենտրոնական իշխանության դիրքերը:

Մյուս կողմից՝ խալիֆայության ծանր դրությունից օգտվում էր նրա վաղեմի հակառակորդը՝ Բյուզանդիան: Վերջինս ամեն կերպ աջակցում էր խալիֆայության կենտրոնախույս ուժերին: Այդ պատճառով խիստ սրվել էին արաբա-բյուզանդական հարաբերությունները: Կազմալուծվող խալիֆայությունը հարկադրված էր դիմելու զիջումների քաղաքականության:

Խալիֆայության թուլացման և տրոհման ժամանակաշրջանում Հայաստանում տեղի էին ունենում որոշակի փոփոխություններ: Առաջադիմում ու խորանում էին ավատատիրական հարաբերությունները: Աստիճանաբար ընդարձակվում ու ամրապնդվում էր հայ իշխանների ժառանգական հողատիրությունը, ընդարձակվում էին նրանց կալվածքները: Զարգանում էր երկրի տնտեսական կյանքը՝ գյուղատնտեսությունը, արհեստագործությունը: Տնտեսապես և ռազմականորեն զորեղացող հայ նախարարներն անկախության էին ձգտում: Նրանք իր զորու էին գլխավորելու համաժողովրդական շարժումը հայկական պետականության վերականգնման համար: Մանավանդ որ հայ ժողովրդի բոլոր խավերը միասնական էին և երազում էին անկախության մասին: Հայ եկեղեցին ջանում էր ազատագրվել կրոնական հալածանքներից, աշխատավորական զանգվածները՝ օտարերկրյա տիրապետությունից: Հայ ժողովուրդը պետականությունը կորցնելուց հետո առհասարակ չէր հաշտվում այդ վիճակի հետ: Նրա մեջ կենսունակ էր սեփական պետականությունը վերականգնելու գաղափարը:

Այսպիսով՝ առկա էին թե՛ ներքին և թե՛ արտաքին անհրաժեշտ նախադրյալները հայկական պետականությունը վերականգնելու համար:

Հայկական թագավորության վերականգնումը: Արաբական խալիֆայության թուլացումից Հայաստանում հմտորեն օգտ-

վում էին հատկապես ժամանակի նշանավոր իշխանական տներից Բագրատունիները: Նրանք ձգտում էին իրենց ազդեցությունն ու իշխանությունը տարածել ամբողջ երկրում: Ստեղծված նպաստավոր պայմաններում գործում էր Աշոտ Բագրատունին՝ մի նշանավոր ռազմաքաղաքական գործիչ և շնորհալի դիվանագետ: ***Աշոտ Բագրատունին,*** ինչպես գիտենք, ***855 թ.*** հաստատվել էր հայոց իշխան և սպարապետ, իսկ ***862 թ.*** երկրի իշխանների առաջարկով նա ճանաչվեց նաև հայոց իշխանաց իշխան: Նրան հանձնվեց նաև ամբողջ երկրի հարկահանությունը: Շնորհիվ դրա՝ երեք անգամ կրճատվեցին հարկերը, փոխվեց բռնություններով և կամայականություններով ուղեկցվող հարկահանության կարգը:

Աշոտ Բագրատունու ձեռքն անցավ երկրի կառավարումը: Իր եղբորը՝ ***Արասին,*** որը քաջ ռազմիկ էր, նա նշանակեց սպարապետ: Շուտով բանակը աճեց, զինվորների թիվը հասավ 40 հազարի:

Այսպիսով՝ թեպետև երկիրը արաբական գերիշխանության ներքո էր, սակայն Բագրատունիների ձեռքում էին ինչպես ռազմավարչական, այնպես էլ տնտեսական իշխանությունը: Աշոտ Բագրատունին որոշակի քայլեր կատարեց հայ նախարարների միջև երկպառակությունները վերացնելու և իր ազդեցությունը նրանց վրա ամրապնդելու ուղղությամբ: Այդ նպատակով նա խնամիական կապեր հաստատեց Վասպուրականի և Սյունիքի գահերեց իշխանների հետ:

Բյուզանդիան հետևում էր խալիֆայության ներսում, այդ թվում և Հայաստանում կատարվող իրադարձություններին: Հայաստանին իր կողմը թեքելու, իր դաշնակիցը դարձնելու նպատակով կայսրությունը հարց բարձրացրեց հայկական եկեղեցին բյուզանդականի հետ միավորելու վերաբերյալ: Այդ առթիվ բյուզանդական պատրիարքը նամակով դիմեց Աշոտ Բագրատունուն: ***Շիրակավանում 869 թ. եկեղեցական ժողովը*** մերժեց դավանական միավորման առաջարկը: Աշոտը այդ մասին նամակով հայտնեց բյուզանդացիներին՝ միաժամանակ հասկացնելով, որ, այդուհանդերձ, կողմնակից է կայսրության հետ քաղաքական դաշինքին:

Հայաստանի անկախությունը վերականգնելու մեջ մեծապես շահագրգռված էր Հայ եկեղեցին, որը և լիակատար աջակցություն էր ցույց տալիս Բագրատունիներին: Հայոց կաթողիկոս ***Զաքարիա Յագեցու*** նախաձեռնությամբ նույն՝ ***869 թ.*** նշանավոր հայ իշխանների հատուկ ժողով հրավիրվեց: Այնտեղ միահամուռ որոշում ընդունվեց Աշոտ Բագրատունուն հռչակել հայոց թագավոր: Հայաստանի թագավորությունը ճանաչելու նպատակով ժողովը դիմում է խալիֆին: Խալիֆայությունը ձգձգում է Հայոց թագավորության ճանաչումը:

Բյուզանդիայում գահ էր բարձրացել ծագումով հայ՝ ***Մակեդոնական*** կամ ***Հայկական հարստության*** հիմնադիր ***Վասիլ I կայսրը*** (867–1057 թթ.): Վերջինս 876 թ. պատվիրակ է ուղարկում Աշոտ Բագրատունու մոտ: Կայսրը հայտնում էր, որ ինքը ծագում է հայ Արշակունիներից, և քանի որ Բագրատունիներն ավանդաբար հայոց թագավորներին թագադրելու՝ թագադիր ասպետի առանձնաշնորհում են ունեցել, նրանից թագ էր խնդրում: Ի նշան փոխադարձ բարեկամության՝ Աշոտը թագ է ուղարկում Վասիլ I-ին: Բյուզանդական կայսրին թագադրելու այս փաստը մի կողմից՝ վկայում էր Աշոտ Բագրատունու հեղինակության մասին, մյուս կողմից՝ արաբների դեմ ուղղված բացահայտ քայլ էր:

Համոզվելով, որ բռնի ուժով հաջողության չի կարող հասնել, նոր խալիֆը ***885 թ.*** արքայական թագ, թանկարժեք զգեստներ ուղարկեց և ***Աշոտ Բագրատունուն ճանաչեց Հայաստանի թագավոր:*** Բյուզանդիայի Վասիլ I կայսրն իր հերթին շտապեց ճանաչել Աշոտի գահակալությունը: Նա ևս արքայական թագ ուղարկեց և բարեկամական դաշինք կնքեց Աշոտի հետ: Հայաստանի և հարևան երկրների հյուրերի ներկայությամբ ***885 թ. օգոստոսի 26-ին Բագարան քաղաքում*** մեծ հանդիսավորությամբ Աշոտ Բագրատունին կաթողիկոս ***Գևորգ Գառնեցու կողմից օծվեց հայոց թագավոր:***

Այսպիսով՝ Հայաստանի փաստական

անկախությունը միջազգային ճանաչում գտավ: Դրանով հիմք դրվեց Բագրատունյաց հարստությանը (885–1045 թթ.), և ավելի քան 450 տարի անց վերականգնվեց համահայկական պետականությունը: Այն ձեռք բերվեց շնորհիվ հայ ժողովրդի մղած երկարամյա ազատագրական պայքարի: Նորանկախ պետականության համար հիմք ծառայեցին պահպանված հայ նախարարական համակարգը, կիսանկախ իշխանությունները, Հայ եկեղեցու նվիրապետությունը և այլն:

Երկրի անկախության ամրապնդումը: ***Աշոտ I-ը (885-890 թթ.)*** ջանք չէր խնայում թագավորական իշխանությունն ամբողջ երկրում տարածելու, միասնական հայկական պետություն ստեղծելու համար: Սակայն այդ պայքարում նա հանդիպում էր ուժեղ դիմադրության: Հատկապես նկատելի էր արտաքին թշնամական ուժերի՝ սահմանակից պետությունների նման ձգտումը:

Աշոտի մահից հետո գահ բարձրացավ ***Սմբատ I-ը (890-914 թթ.):*** Նորընտիր թագավորը պետական խոշոր գործիչ էր և իր հոր արժանի հաջորդը: Նա շարունակեց երկրի խաղաղ շինարարությունը և պետության ամրապնդումը: Խալիֆայությունը և Ատրպատականի Սաջյան ամիրայությունը թշնամաբար էին վերաբերվում հայկական պետության հզորացմանը: Բյուզանդիայի հետ 893 թ. կնքված պայմանագիրն առիթ դարձնելով՝ Սաջյան ամիրայի զորքերը ներխուժեցին Հայաստան: ***Արագածոտն գավառի Դողս գյուղի մոտ 894 թ.*** տեղի ունեցած ճակատամարտում արաբները ծանր պարտություն կրեցին: Սաջյան ամիրաները, համոզվելով, որ ռազմական ուժով դժվար է հաջողության հասնել, փոխեցին իրենց քաղաքականությունը: Նրանք Հայաստանը թուլացնելու նպատակով որդեգրեցին հայ իշխանների միջև երկպառակություններ առաջացնելու քաղաքականությունը: Շուտով առիթ ստեղծվեց միջամտելու հայ իշխանների միջև առաջացած տարաձայնություններին: Սյունյաց իշխանների և Արծրունիների միջև վեճ առաջացավ Նախճավան քաղաքին տիրելու պատճառով: Սմբատ թագավորն այդ վեճը լուծեց հօգուտ Սյունիքի: ***Գագիկ Արծրունին*** Սմբատին խնդրեց վերանայել վճիռը՝ իրեն վերադարձնելով Նախճավանը, քանի որ այդ քաղաքը ժամանակին եղել էր Վասպուրականի կազմում: Սմբատն անդրդվելի մնաց և չփոխեց իր որոշումը:

Գագիկ Արծրունին, խիստ դժգոհ մնալով Սմբատ թագավորից, բանակցություններ սկսեց Ատրպատականի ամիրա Յուսուֆի հետ: Յուսուֆի միջնորդությամբ ***խալիֆը*** 908 թ. ***Սմբատի փոխարեն Հայաստանի թագավոր ճանաչեց Գագիկ Արծրունուն*** և նրան վերապահեց հարկերը հավաքելու իրավունքը: Բագրատունիների թագավորությանը վերջ տալու նպատակով Յուսուֆ ամիրան Գագիկ Արծրունու հետ հարձակվեց Հայաստանի վրա: Յուսուֆի կողմն անցան նաև որոշ հայ իշխաններ: Սկսվեց Հայաստանի համար աննպաստ, ծանր պատերազմ: Սմբատին օգնելու համար բյուզանդական կայսրը մեծ զորքով շարժվեց դեպի Հայաստան, բայց ճանապարհին մահացավ, և նրա զորքը հետ դարձավ: Թշնամիներով շրջապատված հայոց թագավորը մնաց մեն-մենակ:

Սմբատ I-ն իր փոքր զորագնդով ամրացավ Կապույտ բերդում: Սակայն մի ամբողջ տարի դիմադրելուց հետո, տեսնելով, որ երկիրն ավերվում է, անձնատուր եղավ: Յուսուֆը, հայոց թագավորի հետ բանակցելու փոխարեն, ինչպես պայմանավորվել էին, նրան կալանավորեց և ուղարկեց Դվինի բանտը: Այդ ժամանակ Նախճավանի Երնջակ բերդը խիզախաբար դիմադրում էր արաբներին: Յուսուֆը Սմբատին տարավ այնտեղ և պահանջեց, որ բերդի պաշտպաններին զենքը վայր դնելու հրաման արձակի: Բնականաբար, հայոց արքան չկատարեց այդ պահանջը. Յուսուֆը նրան տանջանքների ենթարկեց ու գլխատեց (914 թ.): Այսպիսով՝ թշնամու զոհ դարձավ Բագրատունյաց երկրորդ գահակալը: Նա մաքառեց հանուն միասնական հայոց պետականության և զոհ դարձավ ավատական ներքին երկպառակություններին ու օտար նվաճողների խարդավանքներին:

Հայ ժողովուրդը, սակայն, ոտքի ելավ իր անկախության ու պետականության պահպանման համար: Այդ պայքարը գլխավորում էր Սմբատ I–ի ավագ որդին՝ ***Աշոտ II–ը (914–928 թթ.)***, որին ժողովուրդը ***Երկաթ*** անունը տվեց իր խիզախության ու տոկունության համար: Նա իր եղբայր Աբասի հետ իրենց զորաջոկատներով հանկարծակի ու արագաթաց հարձակումներով լուրջ հարվածներ հասցրեց թշնամու ուժերին և քայլ առ քայլ ազատագրեց երկիրը: Նա հարձակվեց նաև Տփխիսի (Թիֆլիս) ամիրայության վրա, ջախջախեց Յուսուֆի կայազորը: Հայոց երկրի ուժերն ավելի պառակտելու միտումով արաբները Հայաստանի թագավոր հռչակեցին Աշոտի հորեղբորորդուն՝ Աշոտ սպարապետին: Աշոտ Երկաթը վճռական միջոցներով սաստեց նրան և որոշ նախարարների: Շուտով հայ իշխանները հասկացան, որ երկրի փրկությունը միասնության մեջ է: Նրանք ատիճանաբար համախմբվեցին Աշոտ II–ի շուրջը: Գագիկ Արծրունին, զգալով իր վարմունքի կորստաբեր լինելը, երես թեքեց արաբներից: Նա սկսեց հարվածներ հասցնել արաբներին, ազատագրել ու ամրապնդել Վասպուրականի թագավորությունը: Սյունյաց Սմբատ և Սահակ իշխանները, գործակցելով Աշոտ Երկաթի հետ, միացան երկրի ազատագրման նվիրական գործին:

Աշոտ Երկաթն իր ջոկատով (921 թ.) ամրացել էր ***Սևանա կղզում***: Արաբական զորքերի հրամանատար Բեշիրը շրջապատեց կղզին: Աշոտ II–ը նավակներում տեղավորեց իր 70 ռազմիկներին և մի մառախլապատ օր, դեռևս ափ չհասած, հանկարծակի սկսեց նետահարել արաբներին: Հայոց փոքրիկ զորաջոկատի այդ անսպասելի ու համարձակ գործողությունը խուճապի մատնեց արաբներին: Գլխակորույս նահանջող թշնամու վրա Գառնիում հարձակվեց Գևորգ իշխանի փոքրաթիվ ջոկատը և նոր ջարդ տվեց: Սևանի վճռական ճակատամարտից հետո ազատագրվեց Հայաստանի կենտրոնական շրջանների մեծ մասը:

Բյուզանդիան փորձեր էր անում Հայաստանի և Վրաստանի ուժերը միավորելու ընդդեմ արաբների: Աշոտ II–ը ***921 թ.*** մեկնեց ***Կոստանդնուպոլիս***, որտեղ հակաարաբական ***դաշինք կնքեց:*** Արաբները, համոզվելով, որ Հայաստանը զենքի ուժով չեն կարող իրենց ենթարկել, զիջումների գնացին: Բաղդադի խալիֆը ***922 թ. Աշոտ II–ին*** ոչ միայն թագ ուղարկեց, այլև ***ճանաչեց Հայաստանի շահնշահ***, այսինքն՝ թագավորների թագավոր: Դրանով նա գերապատվություն էր ստանում մյուս թագավորների նկատմամբ: Արքայական այս բարձր տիտղոսը Բագրատունիները կրեցին մինչև վերջ:

Այսպիսով՝ հայկական պետության անկախության համար մղվող պայքարն ավարտվեց հաղթանակով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին Հայոց թագավորության վերականգնման նախադրյալները: Նախարարական ո՞ր տոհմը գլխավորեց անկախության համար մղվող պայքարը:
2. Ներկայացրեք Աշոտի գործունեությունը թագավորության վերականգնման համար: Ինչո՞ւ Վասիլ I կայսրը շտապեց ճանաչել Աշոտի գահակալությունը և թագ ուղարկեց նրան:
3. Ինչո՞ւ Գագիկ Արծրունին պայքարի դուրս եկավ Սմբատ I Բագրատունու դեմ: Նշեք այդ հակամարտության հետևանքները Հայաստանի համար:
4. Ո՞վ էր Աշոտ Երկաթը, ինչպե՞ս նա կարողացավ հաղթել արաբներին: Ե՞րբ նա ճանաչվեց շահնշահ: Բնութագրեք Աշոտ Երկաթին:

§ 2. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԵԼՔԸ

Պետության բարգավաճումը: Հայաստանի անկախության ամրապնդումը տեղի ունեցավ երկրում սկսված տնտեսական և մշակութային վերելքի պայմաններում: Խաղաղ ու նպաստավոր էին Աշոտ II–ի թագավորության վերջին տարիները: Քանի որ թագավորը զավակ չուներ, նրա մահվանից հետո գահ բարձրացավ եղբայրը՝ ***Կարսի կառավարիչ Աբասը (928–953 թթ.):*** Նա Բագրատունիների արքունիքը տեղափոխեց Կարս և այն դարձրեց Հայաստանի նոր մայրաքաղաքը: Կարսը կարճ ժամանակում աճեց, կառուցապատվեց և դարձավ երկրի նշանավոր քաղաքներից մեկը:

Երկրի բնակչությունը զբաղված էր տնտեսությունը վերականգնելով ու բարեկարգելով: Չորային կլիմա ունեցող Հայաստանի համար բացառիկ նշանակություն ուներ ոռոգումը: Երկրի հիմնական նահանգներում՝ Այրարատում, Շիրակում, Սյունիքում, Վասպուրականում, կառուցվում են ջրամբարներ, ջրանցքներ: Դարերով խոպան մնացած տարածությունները ոռոգման միջոցով յուրացվում, մշակվում էին:

Կենտրոնական իշխանության հզորացմանն ու երկրի բարեշինմանն էր ձգտում նաև Հայ եկեղեցին: Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ Աբասը կաթողիկոսական աթոռը տեղափոխեց Շիրակ: ***Անանիա Մոկացի կաթողիկոսը 948 թ.*** այն ***Աղթամար կղզուց փոխադրեց*** Անիից հյուսիս գտնվող ***Արգինայի վանքը:*** Եկեղեցին, որ իր հերթին տեր էր դարձել հողային մեծ տարածքների, կալվածքների, ձեռնամուխ է լինում լայնածավալ շինարարական գործունեության:

Երկրում սկսված տնտեսական, մշակութային վերելքը նշանավորում է զարգացման մի նոր սանդուղք. ավատատիրությունը փաղմիջնադարյան փուլից թևակոխում է զարգացած ավատատիրության դարաշրջան:

Աբասին հաջորդեց նրա որդի ***Աշոտ III–ը (953–977 թթ.):*** Նոր թագավորը պետության ամրապնդման ուղղությամբ սկսեց ավելի վճռական ու ծավալուն ձեռնարկումներ: Նա կազմակերպեց մեծ բանակ: Հայ եկեղեցու որոշ թեմեր անջատողական հակումներ ունեին: Դա հայկական հզոր իշխանությունների անջատական ձգտումների արտահայտությունն էր: Սյունյաց և Աղվանից (Արցախ և Ուտիք) թեմերը, հենվելով տեղի իշխանությունների աջակցության վրա, իրենց անկախ էին համարում: Անանիա Մոկացի կաթողիկոսին հաջողվեց նրանց հնազանդեցնել: Դա, ըստ էության, Բագրատունյաց թագավորության հաղթանակն էր, նրա զորության և հեղինակության արգասիքը:

Երկրում ծավալվում է շինարարական աշխատանքը: Խոսրովանույշ թագուհին Զորագետի հովտում հիմնեց Սանահինի, Հաղպատի նշանավոր վանքերը, որոնք շուտով ընդարձակ կալվածքների տեր դարձան: Դրանք առավել նշանավորվեցին՝ որպես հայ մշակույթի խոշոր կենտրոններ: Աշոտ III թագավորը հատուկ հոգատարություն էր ցուցաբերում աղքատների, հիվանդների, անդամալույծների, կույրերի նկատմամբ: Նրանց համար բացում էր հիվանդանոցներ և բարեգործական այլ հաստատություններ: Այդօրինակ գործունեության համար էլ նա ստացավ ***Ողորմած*** մականունը:

Երկրի բարգավաճումն ու շինարարությունն ավելի մեծ թափով շարունակվեց ***Սմբատ II–ի*** ժամանակ ***(977–990 թթ.):*** Դվինում շարունակում էր գոյատևել մի ամիրայություն (իշխանություն), որն ընդունում էր Բագրատունիների գերիշխանությունը: Սակայն Դվինի ամիրան անսպասելի հարձակվեց Շիրակի վրա և սկզբում հասավ հաջողության: Բայց Սմբատ II–ը կարողացավ ոչ միայն նրան հետ մղել, այլև գլխովին ջախջախել և ***Դվինի ամիրայությունը՝*** արաբների այդ վերջին հենակետը, 987 թ. միացնել իր թագավորությանը:

Անին՝ մայրաքաղաք: Բագրատունյաց թագավորությունը ներքին և արտաքին նպաստավոր պայմաններում բռնել էր վերելքի ուղի: Սակայն Բագրատունիները չունեին իրենց հիմնական նստավայրը: Զգացվում էր խոշոր կենտրոնի՝ նոր մայրաքաղաքի անհրաժեշտությունը: Առաջին Բագրա-

Սմբատաշեն պարիսպները. Անի

տունիները հաստատվել էին Բագարանում և Երազգավորսում (Շիրակավան): Աբասն իր նստավայրը դարձրել էր Կարս քաղաքը, որը, ընկած լինելով թագավորության ծայրամասային գավառում, համահայկական մայրաքաղաքի նշանակություն ձեռք չէր բերել: Դվինը շարունակում էր մնալ արաբների ձեռքին, դրանից բացի, այն չէր կարող մայրաքաղաք լինել, որովհետև դուրս էր Բագրատունիների հիմնական տիրույթներից՝ Շիրակից: Բարգավաճող Հայաստանին անհրաժեշտ էր մի միավորող կենտրոն: Բագրատունիները նպատակահարմար գտան Կամսարականներից իրենց անցած Շիրակի նշանավոր Անի ամրոցը դարձնել մայրաքաղաք:

Անին 961 թ. հռչակվեց մայրաքաղաք: Նոր մայրաքաղաքն անառիկ դիրք ուներ և բանուկ առևտրական ուղիների վրա էր: Նոր մայրաքաղաքի հիմնումը խորհրդանշելու էր Բագրատունյաց թագավորության՝ համահայկական պետություն դառնալու հանգամանքը: Այդ նպատակով Անին մայրաքաղաք դարձնելու տոնակատարությունը միացվեց Աշոտ III–ին թագադրելու հանդիսությունների հետ: Անի էին հրավիրվել «ամենայն իշխանքն տանն Հայոց», զորքը, Աղվանքի թագավորը՝ իր շքախմբով, բարձրաստիճան հոգևորականներ և այլ նշանավոր դեմքեր: Բոլորի ներկայությամբ Անանիա կաթողիկոսը մեծ շուքով օծեց Աշոտ թագավորին: Նա հռչակվեց շահնշահ՝ արքայից արքա: Այդ հանդիսությունները ժամանակակիցների վրա այն տպավորությունն էին գործում, կարծես վերականգնվել էր Արշակունիների համահայկական պետությունը: Աշոտի թագավորությունը օրինական ճանաչվեց Բյուզանդական կայսրության, աբխազների թագավորի, հարևան ամիրայությունների կողմից:

Աշոտ III–ը և նրա հաջորդները միջոցներ չէին խնայում նոր մայրաքաղաքը բարեկարգելու, շքեղ պալատներով, եկեղեցիներով, բնակելի և այլ շինություններով կառուցապատելու: Աշոտ թագավորը 963–964 թթ. կառուցեց քաղաքի աշտարակազարդ պարիսպների առաջին գիծը (Աշոտաշեն): Կամսարականների նախկին ամրոցն ընդարձակվելով դարձավ Անի քաղաքի միջնաբերդը: Հետագայում քաղաքն այնքան էր ընդարձակվել, որ Սմբատ II թագավորը 977–989 թթ. ընթացքում կառուցեց վիթխարի քաղաքն իր մեջ ընդգրկող երկրորդ պարիսպների գիծը (Սմբատաշեն):

Մայրաքաղաքի՝ ճարտարապետական հոյակապ շինություններով կառուցապատումը շարունակվեց նաև հետագա տասնամյակներում: Քաղաքն ուներ ընդարձակ շուկա, իջևանատներ: Այնտեղ կառուցվել էին տասնյակ եկեղեցիներ, տաճարներ, պալատներ, շքեղ հյուրանոցներ, աշխարհիկ բազմաթիվ շենքեր: Այն միջնադարյան Հայաստանի հռչակավոր ու ամենամեծ քաղաքն էր: Իզուր չէ, որ ժողովուրդն ասում է՝ Անին ուներ հազար ու մի եկեղեցի:

Բագրատունյաց թագավորության հզորացումը X դ. վերջին և XI դ. սկզբին: Սմբատ II–ի մահից հետո գահ բարձրացավ նրա եղբայր ***Գագիկ I–ը (990–1020 թթ.):*** Նա Բագրատունյաց թագավորների շարքում առավել տաղանդավոր պետական ու ռազմական գործիչը եղավ: Նրա օրոք Բագրատունյաց թագավորությունը հասավ իր հզորության ու ծաղկման գագաթնակետին: Գագիկն ընդարձակեց իր պետության սահմանները: Դրա հետ մեկտեղ հարևանների հետ շարունակեց

վարել խաղաղ, բարեկամական հարաբերություններ: Այդպիսի հարևաններից էին Տայքի կյուրապաղատությունը և վրաց թագավորությունը: Ատրպատականի Մամլան ամիրան երկու անգամ արշավանք կազմակերպեց: ***998 թ. Ապահունիքի Ծումբ*** գյուղի մոտ հայ-վրացական ուժերը պարտության մատնեցին նրան: Այդ կռիվներում աչքի ընկավ հայկական զորքերի հրամանատար ***Վահրամ Պահլավունին:***

Հայոց թագավորը կրում էր «Շահնշահ հայոց» տիտղոսը: Այդ նշանակում էր, որ Հայաստանի տարբեր ծայրամասերում առաջացած մանր թագավորությունները ենթակա էին Բագրատունիներին: Առանց շահնշահի հավանության նրանք չէին կարող գահակալել: Նրանք իրավասու չէին ինքնուրույն հարաբերությունների մեջ մտնելու հարևան պետությունների հետ: Հայոց կաթողիկոսների ընտրությունն անգամ կատարվում էր Բագրատունյաց թագավորների միջնորդությամբ: ***Տաշիր-Ձորագետի*** (Լոռի) ***թագավոր Դավիթը (989-1048 թթ.)*** 1001 թ. անհնազանդություն հայտնեց և հրաժարվեց հայոց թագավորի գերիշխանությունը ճանաչելուց: Գագիկի բանակը մտավ Տաշիր-Ձորագետ և հպատակեցրեց ամբողջ տարածքը: Դավիթ թագավորը երկրից փախավ՝ զրկվելով իր հողային տարածքներից: Դրա համար էլ նա ստացավ «Անհողին» մականունը: Սակայն իր արարքի համար Դավիթը զղջաց, և հարցը խաղաղությամբ ավարտվեց: Նա գնաց իր հորեղբայր Գագիկ I-ի մոտ, ներում խնդրեց և միայն դրանից հետո հետ ստացավ իր տիրույթները:

Գագիկ I արքան ավելի ամրապնդեց ու մեծացրեց բանակը: Հայկական զորքը նրա օրոք հզոր ուժ էր: Նա աստիճանաբար և հետևողականորեն ընդարձակում էր պետության սահմանները: Գագիկը վերացրեց Վայոց ձորի իշխանությունը և նրա տարածքը միացրեց իր թագավորությանը: Ապա միավորեց Արցախի մեծ մասը, այդ թվում և Խաչեն գավառը: Հարավում Վասպուրականից անջատվեցին և Բագրատունիների տերությանը միացվեցին Կոգովիտ և Ծաղկոտն գավառները: Այդ մասին Ասողիկ պատմիչը գրում է. «Եվ տիրապետեց նա բազմաթիվ բերդերի և գավառների Վայոց ձորի, Խաչենի և Փառիսոսի սահմաններում՝ ավելի քան իր եղբայրը, և չկար մեկը, որ սարսափ պատճառեր Հայաստանին»:

Անիի Փրկչի եկեղեցին

Գագիկ I-ի թագավորության շրջանում հայկական լեռնաշխարհի մեծ մասը փաստորեն միավորվել էր Բագրատունիների կենտրոնական թագավորության գերիշխանության ներքո:

Տայքի կյուրապաղատ Դավիթը 1000 թ. մահացավ: Վասիլ II կայսրը զորքով շարժվեց դեպի Արևելք և կտակի համաձայն՝ Տայքը միացրեց կայսրությանը: Վրաստանի, Աբխազիայի և մյուս բոլոր թագավորներն ու նշանավոր իշխանները ներկայացան նրան և իրենց նվիրվածությունը հայտնեցին: Թեպետև կայսրը Հայաստանի տարածքում էր, Գագիկ I-ը հարկ չհամարեց նրան այցելելու: Այդ քայլով հայոց թագավորը ցուցադրեց իր զորեղությունն ու արժանապատվությունը:

Գագիկ I-ի թագավորության տարիներին ավելի մեծ ծավալներով շարունակվում էին խաղաղ շինարարական աշխատանքները, երկիրն օրեցօր բարգավաճում էր: Ծաղկում էր Անի մայրաքաղաքը: Գագիկ I-ի կինը՝ ***Կատրամիդն*** թագուհին, 1001 թ. ավարտեց Անիի Կաթողիկե հոյակապ եկեղեցու շինարարությունը: Այն կա-

ռուցվեց հոչակավոր ճարտարապետ *Տրդատի* նախագծով: Այդ ժամանակ Զվարթնոցի նշանավոր տաճարը քանդվել էր: Գագիկը դրա նմանությամբ մի տաճար կառուցեց Անիում, որը հայտնի է Գագկաշեն անունով:

Գագիկ I–ի ժամանակ հզորացավ Պահլավունիների իշխանական գերդաստանը: Այդ տոհմի ներկայացուցիչները ժառանգաբար վարում էին սպարապետի պաշտոնը: Աչքի էր ընկնում մանավանդ սպարապետ Վահրամ Պահլավունին: Պահլավունիները ևս շինարարական լայնածավալ աշխատանքներ էին սկսել: Նրանք են կառուցել *Բջնիի* նշանավոր ամրոցը և եկեղեցին, *Ամբերդը, Մարմաշենը* և այլն: Շինարարական աշխատանքներ էին ծավալվել երկրի բոլոր մասերում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ քաղաքականություն էր վարում Աբաս թագավորը: Ներկայացրեք Աշոտ III–ի կառավարման շրջանում երկրի ունեցած հաջողությունները:
2. Պարզաբանեք Սմբատ II–ի ներքին և արտաքին քաղաքականության արդյունքները:
3. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ Բագրատունիները կառուցեցին նոր մայրաքաղաք: Երբ և ո՞ւմ օրոք Անին հոչակվեց մայրաքաղաք:
4. Փաստերով հիմնավորեք, որ իրոք Գագիկ I–ի օրոք Բագրատունյաց թագավորությունը հասել էր իր հզորության գագաթնակետին: Իշխանական ո՞ր տոհմը նշանակալի դիրքերի հասավ նրա օրոք:

§ 3. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ: ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ

Պետական կարգը: Հայկական պետության գլուխ կանգնած էր թագավորը: Երկրի ներքին և արտաքին բոլոր հիմնական հարցերը վճռում էր նա: Բագրատունյաց թագավորն *ինքնակալ միապետ* էր և անձամբ էր լուծում պետության գործերը: Նա կարող էր խորհրդակցել սպարապետի, կաթողիկոսի, իշխանաց իշխանի կամ այլ մեծամեծ պաշտոնյաների հետ: Բագրատունի թագավորներին էին ենթարկվում նաև մյուս մանր թագավորությունները կամ իշխանությունները: Թագավորը պետությունը կառավարում էր բարձրաստիճան հատուկ պաշտոնյաների կամ գործակալությունների միջոցով: Պաշտոնները վստահվում էին թագավորական տան անդամներին և արքունիքին մոտ կանգնած խոշոր ավատատերերին: Գործակալությունների մեջ կարևոր էին *իշխանաց իշխանի* և *հայոց սպարապետի* պաշտոնները:

Իշխանաց իշխանը թագավորին հաշվետու էր ենթակա իշխանների գործունեության համար: Նրան էին ենթարկվում արքայական կալվածքները տնօրինողները, պետական գանձարանը, երկրի մեծ ու փոքր պաշտոնյաները: Այդ բարձր պաշտոնը սովորաբար տրվում էր արքայի եղբայրներին կամ գահաժառանգներին: Հայոց սպարապետը պետության զինված ուժերի՝ բանակի հրամանատարն էր: Պատերազմի ժամանակ մանր թագավորությունների զորքերի հրամանատարները ենթարկվում էին հայոց սպարապետին: Անիի թագավորության մեջ X դ. վերջերից այդ պաշտոնը վարում էին Պահլավունիները: Բագրատունի թագավորների գահը ժառանգում էր ավագ որդին, հաճախ նաև եղբայրը:

Բագրատունի թագավորները հատուկ նշանակություն էին տալիս բանակի կազմակերպմանը: Մշտական բանակը պատերազմների ժամանակ համալրվում, հասնում էր *90–100 հազարի:* Բանակը կազմված էր *արքունական* և *մարզպանական գնդերից:* Արքունի գունդն անմիջականո-

րեն ենթարկվում էր թագավորին, իսկ մարզպանական գնդերն իշխաններին ենթակա զորամասերն էին: Բանակը կազմված էր հեծելազորից և կրկնակի մեծ քանակով հետևակից: Հայոց զորքի հիմքը այրուձին՝ հեծելազորն էր: Բագրատունի թագավորների հենարանն էր արքունական գունդը, որը կազմված էր թագավորական տիրույթներից հավաքագրված ռազմիկներից: Այն պահվում էր մեծ մասամբ մայրաքաղաքում և արքայական ամրոցներում: Հայկական բանակում Բագրատունիների օրոք լեզգիներից և այլ ցեղերից օգտագործվել են շատ սահմանափակ թվով վարձկան զինվորներ:

Միջնադարում եկեղեցին մեծ մասնակցություն ուներ երկրի կառավարման մեջ: Բագրատունի թագավորների համար եկեղեցու դերը, մանավանդ X դ. երկրորդ կեսից սկսած, ավելի մեծացավ: Թագավորների տիրապետությունը հեռավոր իշխանությունների վրա հաճախ ձևական բնույթ էր կրում: ***Եկեղեցին էր ապահովում երկրի միասնականությունը:*** Եպիսկոպոսական բոլոր թեմերը ենթակա էին հայոց կաթողիկոսին, որն իր հերթին ճանաչում էր թագավորի գերիշխանությունը: Հայոց կաթողիկոսները մնայուն նստավայր չունեին: Անին մայրաքաղաք դառնալուց հետո նրա մերձակայքում գտնվող Արգինան ի վերջո դարձավ մշտական նստավայր: Բագրատունիների ժամանակաշրջանում չկար Արշակունյաց շրջանին այնքան հատուկ հակասությունը թագավորական իշխանության և եկեղեցու միջև: Հայոց թագավորի դիրքորոշումը վճռական էր կաթողիկոսի ընտրության ժամանակ: Գլխավոր դատավորի իրավունքն առաջվա նման պատկանում էր հայոց կաթողիկոսին: Փոքր գործերի դատավարությունը կատարվում էր եկեղեցական ժողովների մշակած կանոններով և սովորութային իրավունքով:

Իշխանական տների նման՝ խոշոր հողատեր էր դարձել նաև Հայ եկեղեցին: Մեծաքանակ վանքերը տիրում էին բազմաթիվ գյուղերի: Տաթևի վանքին, օրինակ X դ. սկզբներին պատկանում էր 22 գյուղ:

Տնտեսական կյանքի զարգացումը: Երկարատև խաղաղությունը Բագրատունյաց Հայաստանի տնտեսական վերելքի համար լայն հնարավորություններ ստեղծեց: Դրան նպաստում էր նաև ավատատիրական հարաբերությունների զարգացումը:

Երկրագործության համար բարենպաստ պայմաններ ուներ Հայկական լեռնաշխարհը: Զարգացած ավատատիրության շրջանում որոշակի առաջադիմություն ապրեցին երկրագործությունն ու երկրագործական տեխնիկան: Դաշտավարության մեջ կարևոր նորություն էր երկաթե խոփ ունեցող ծանր գութանի տարածումը: Այն օգտագործվում էր հատկապես խոշոր տնտեսություններում: Դրանով հեշտությամբ վարում էին նաև խոպան հողերը: Մեծ չափերով կիրառվում էր հողի մշակման ***եռադաշտային համակարգը:*** Աճում էր մշակելի հողերի տարածությունը խոպան հողերի հաշվին: Մշակելի դարձած հողային տարածքներն անվանվում էին նորք:

Երկրագործության կարևոր պայմաններից էր հողի ոռոգումը: Այս դարաշրջանում ***ընդարձակվում էր ոռոգման ցանցը:*** Օգտագործվում էին հնուց եկած՝ դեռևս Վանի թագավորության շրջանի ջրանցքները, կառուցվում էին նոր ջրանցքներ ու ջրամբարներ: Հողամշակման և նրա տեխնիկայի բարելավմանը զուգընթաց առաջադիմում էր նաև գյուղատնտեսական մթերքների մշակումը: Գինու հնձանները, ձիթհաններն ու ջրաղացներն ավելի լայն տարածում են ստանում:

Հացաբույսերից տարածված էր ցորենի, գարու, հաճարի, բրնձի մշակումը: Ընդարձակվում են նաև տեխնիկական բույսերի՝ բամբակի, կտավատի, քունջութի, կանեփի մշակումը:

Գյուղատնտեսության ճյուղերից զարգանում են նաև ***այգեգործությունն*** ու ***բանջարաբուծությունը:*** Ծառապտուղներից տարածված էին ծիրանը, դեղձը, տանձը, խնձորը, սալորը, ընկույզը: Եթե խաղողագործությունն ավանդական զբաղմունք էր Հայաստանում, ապա նորություն էր տարածում գտած բանջարանոցային որոշ

բույսերի՝ լոբու, վարունգի, կաղամբի, գազարի, ձմերուկի մշակումը: Զարգանում էր նաև շերամապահությունը:

Բագրատունյաց շրջանում IX–XI դդ. հողօգտագործման եղանակների մեջ կատարված տեղաշարժերից նշանակալից էր ավատատիրական խոշոր տնտեսության՝ *գեղջկական* մեծածավալ *կալվածքների* առաջացումը:

Անասնապահությունը գյուղատնտեսության կարևոր ճյուղերից էր: Երկրի լեռնային մասերի ալպյան ընդարձակ արոտավայրերն անասնապահության զարգացման լայն հնարավորություններ էին ստեղծում: Կդպիսի արոտավայրերով հարուստ էին մասնավորապես Արագածի փեշերը, Սյունիքը, Սևանի ավազանը, Տաշիր–Ձորագետը, Վասպուրականը, Տարոնը և երկրի այլ մասեր: Պահվում էին մեծ քանակությամբ խոշոր և մանր եղջերավոր անասուններ՝ կով, եզ, գոմեշ, ձի, ավանակ, ոչխար, այծ: Ոչխարի հոտերից ստացվող բուրդն օգտագործվում էր գորգեր, հագուստ և տարատեսակ գործվածքներ պատրաստելու համար: Ձիերը, ավանակները և խոշոր եղջերավոր անասուններն օգտագործվում էին որպես հիմնական փոխադրամիջոց: Դրանք բեռներ էին տեղափոխում կամ օգտագործվում էին որպես քաշող ուժ սայլերի, կառքերի համար:

Բնակչության տնտեսական կյանքում որոշ տեղ էին զբաղեցնում նաև մեղվաբուծությունը, որսորդությունը և ձկնորսությունը:

Երկրի տնտեսության ու մշակույթի ընդհանուր վերելքի պայմաններում առաջադիմում և առավել մասնագիտանում էին **արհեստների** առանձին ճյուղերը: Արհեստների կատարելագործմանը նպաստում էր նաև այն հանգամանքը, որ հայերն այս բնագավառում լավագույն ավանդույթներ ունեին:

Բագրատունյաց ժամանակաշրջանի գնական խաղաղ շինարարական աշխատանքների պայմաններում արհեստագործությունն այնքան առաջադիմեց, որ անջատվեց երկրագործությունից:

Հիմնական արհեստներից էր *մետաղագործությունը:* Արհեստի այս ճյուղից հայտնի էին դարբնությունը, զինագործությունը, պղնձագործությունը և ոսկերչությունը: Մետաղագործ վարպետները պատրաստում էին գյուղատնտեսական գործիքներ, սառը զենքեր, պղնձե ամանեղեն, եկեղեցական սպասք, պերճանքի առարկաներ ու զարդեր: Հայտնի էին հատկապես ոսկերչական բարձրարվեստ իրերը:

Մեծ հռչակ էին վայելում հայ *շինարարները՝* ճարտարապետները, քարակոփ վարպետները: Հայ վարպետները կառուցում էին բերդեր, քարավանատներ, կամուրջներ, եկեղեցական շենքեր: Նրանք եկեղեցիներն ու այլ շինությունները զարդարում էին նրբաճաշակ քանդակներով:

Հյուսները պատրաստում էին գյուղատնտեսական գործիքներ, շենքերի փայտյա մասեր, կահույք, կենցաղային իրեր և այլն: Առաջադիմել էր փայտի փորագրությունը, որի գեղեցիկ նմուշները պահպանվել ու հասել են մեզ: Լայն տարածում գտած արհեստներից էր կաշեգործությունը: Արհեստի այս տեսակը հայ մարդու կյանքի ու կենցաղի անբաժանելի մասն էր: Կաշեգործական արհեստներից տարածված էին կոշկակարությունը, մորթեգործությունը, գդակագործությունը:

Հայաստանը հայտնի էր իր մանածագործական արտադրանքով: Հատուկ արհեստանոցներում պատրաստում էին Արևելքում մեծ հռչակ վայելող *բրդե* և *մետաքսե գործվածքներ:* Դրանք սպառվում էին հավասարապես և երկրի ներսում, և արտաքին շուկայում: *Արաբ հեղինակ Մասուդին գրում է. «Հայկական գործվածքներն այնքան գեղեցիկ են, որ նրանց նմանը չկա ծայրից ծայր ամբողջ աշխարհում»:* Միջազգային շուկաներում հայտնի էին հայկական գորգերը: Դրանք տարածում էին գտել Արևելքի երկրներում, Վոլգայի բուլղարների ու սլավոնների մոտ: Մանածագործության հետ սերտորեն կապված էր նաև ներկերի արտադրությունը: Դվինը՝ իր շրջակայքով, հայտնի էր որպես *որդան կարմիր* հռչակավոր ներկի արտադրության կենտրոն: Որդան կարմիր ներկը մեծ պահանջարկ ուներ և արտահանվում էր այլ երկրներ:

Բարձր զարգացման էր հասել կավա-

գործությունը: Կավե ամանները լայն տարածում ունեին բնակչության կենցաղում: Դվինը և Անին հայտնի էին իրենց բրուտանոցներով:

Այսպիսով՝ արհեստների զարգացման հետ ***խորանում է*** նրանց ներսում ***աշխատանքի բաժանումը:*** Մայր արհեստը ճյուղավորվում է, և առաջ են գալիս նոր մասնագիտություններ:

Հայաստանի տնտեսության ընդհանուր վերելքին խթանեց նաև ***առևտուրը:*** Գյուղի և քաղաքի միջև կատարվում էր լայն ապրանքափոխանակություն: Քաղաքներում զգացվում էր գյուղատնտեսական մթերքների պահանջ, արհեստավորին էլ հարկավոր էր հումք, որը հիմնականում բերվում էր գյուղերից: Գյուղացին իր մթերքը շուկա էր հանում, որպեսզի ձեռք բերած փողով գներ գործիքներ, հագուստ, կենցաղային իրեր: Արհեստավորն իր արտադրանքն էր վաճառքի հանում՝ անհրաժեշտ հումք և ապրուստի միջոցներ գնելու համար: Այսպիսով՝ ***քաղաքի և գյուղի միջև կեղի էր ունենում աշխույժ առևտուր:***

Մանրավաճառ առևտրականները՝ փերեզակները, զամբյուղը ձեռքներին, շրջում էին քաղաքներում ու գյուղերում և վաճառում զանազան կենցաղային իրեր: Երկրի ներքին առևտրի զարգացման շնորհիվ խոշոր քաղաքներում առաջանում էին մշտական շուկաներ: Նման քաղաքներում և առևտրական ճանապարհների խաչմերուկներում հաճախ կազմակերպվում էին կիրակնօրյա շուկաներ՝ ***կոնավաճառներ:***

Երկրի ներքին առևտրին զուգընթաց ***IX–XI դդ. աշխուժանում էր հարկապես արտաքին առևտուրը:*** Արաբական խալիֆայության և Բյուզանդիայի միջև կրկնվող պատերազմների պատճառով չեզոք Հայաստանը դարձել էր տարանցիկ առևտրի կարևոր կենտրոն: Հայաստանի վրայով էին անցնում արևելքը և արևմուտքը, հյուսիսն ու հարավը իրար կապող միջազգային առևտրի կարևոր մայրուղիներ: Այդ առևտուրն ընդգրկում էր Միջին Արևելքը, Արաբական խալիֆայության և Բյուզանդիայի տարածքները, հաճախ հասնում մինչև Հնդկաստան և Չինաստան:

Հայաստանն արտաքին առևտրին մասնակցում էր հիմնականում իր սեփական արտադրանքով: Հայաստանից արտահանվում էին հացահատիկ, ձիեր, ջորիներ, եզներ, կաթ, պղինձ, աղ, գինի, ներկեր և այլն: Արտահանվող ապրանքների մեջ զգալի տեղ էր գրավում արհեստագործական արտադրանքը: Դրանցից էին մետաղե գործիքները, ոսկյա և արծաթյա իրերը, պղնձյա ամանները, բրոնզյա և մետաքսյա գործվածքները և այլն: Առևտրական քարավանները Հայաստան էին բերում հնդկական համեմունքներ, թանկագին քարեր, չինական ու միջինասիական մետաքսե գործվածքներ, ռուսական մորթիներ ու մուշտակներ և այլ արտադրանք: Առևտրի ծավալման շնորհիվ մեծացավ դրամական շրջանառությունը:

Քաղաքները: Բագրատունիների ժամանակաշրջանը նշանավորվում է նաև միջնադարյան բազմաթիվ քաղաքների առաջացման ու նրանց բուռն աճով: Քաղաքների առաջացումը կապված էր աշխատանքի հասարակական բաժանման, արհեստների և առևտրի, մանավանդ միջազգային առևտրի զարգացման հետ: Հին քաղաքների տեղերում կամ բոլորովին նոր վայրերում առաջացան տասնյակ քաղաքներ: Դրանցից արագ զարգացան առանձին իշխանությունների կենտրոններն ու միջազգային առևտրական ուղիների վրայի քաղաքները:

Քաղաքի կենտրոնական մասում սովորաբար ***միջնաբերդն*** էր: Այստեղ էին արքունիքի կամ նշանավոր իշխանի դղյակները՝ իրենց օժանդակ շենքերով: Այստեղ էին նաև մյուս ազդեցիկ իշխանավորների և բարձր հոգևորականության պալատները: Միջնաբերդը շրջապատված էր լինում առանձին պարսպով: Միջնաբերդի շուրջը տարածվում էր բուն քաղաքը, որը կոչվում էր ***Շահաստան:*** Այստեղ կենտրոնացած էին հարուստ վաճառականների շենքերը, շուկաները, արհեստավորական գործատները, հյուրանոցները և այլն: Շահաստանը ևս շրջապատված էր արտաքին պարսպով: Դրանից դուրս էին ***քաղաքի արվարձանները,*** որտեղ բնակվում էին ընչազուրկ խավերը:

Քաղաքը կառավարում էր ***քաղաքապետը՝ շահապը***: Հարկահանությանը, շուկաներին, առևտրին, արհեստներին հետևում էր հատուկ պաշտոնյա, որը կոչվում էր մուհթասիբ: Որոշ խոշոր քաղաքներ կառավարվում էին ավագների խորհրդի կողմից:

Իշխանական դասը և հոգևորականները քաղաքներում ունեին խանութներ, արհեստանոցներ, ձիթհաններ, ջրաղացներ, հյուրանոցներ: Քաղաքների կյանքում գյուղատնտեսությունը կարևոր, հաճախ գերակշիռ դեր էր կատարում:

Հայաստանի նշանավոր քաղաքները դառնում են մանր թագավորությունների կամ իշխանությունների կենտրոններ: Խոշոր ավատատերերը մրցում էին իրար հետ՝ իրենց մայրաքաղաքում կառուցելով պալատներ, տաճարներ և այլ շինություններ:

Միջնադարյան Հայաստանի ամենանշանավոր քաղաքն ***Անին էր***: Քաղաքի միջնաբերդը բարձրանում էր Ախուրյան գետի ափի մի ժայռաբլրի վրա: Միջնաբերդից իջնող հարթության վրա փռված էր քաղաքը: Առևտուրը կատարվում էր հատուկ հրապարակում, ուր իրար էին հանդիպում տարբեր երկրներից ժամանած վաճառականները: Քաղաքի բնակչությունը կավե խողովակներով 12 կմ հեռավորությունից խմելու ջուր էր ստանում: Անի մայրաքաղաքը կառուցապատված էր քարակերտ շենքերով, ուներ սալահատակված մայթերով բարեկարգ փողոցներ: Բյուզանդացի մի ժամանակակից հեղինակ վկայում է. «Անին մեծ և բարեկարգ քաղաք է»:

Այն միջնադարյան հայ մշակույթի, արհեստների, հատկապես ճարտարապետության ամենանշանավոր կենտրոնն էր: Անին ուներ քաղաքային ինքնավարություն, որի գլուխ կանգնած էր քաղաքի ավագների խորհուրդը:

Դվինը, VIII–IX դդ. լինելով խալիֆայության «Արմինիա» երկրամասի վարչական կենտրոնը, բարգավաճում էր: Քաղաքի միջնաբերդը բլրի վրա էր և շրջապատված էր պարիսպներով: Ընդարձակ քաղաքը փռված էր բլրի ստորոտում և նույնպես պարսպապատ էր: Երկրի մայրաքաղաքի դերը Դվինը զիջել էր Անիին, բայց պահպանում էր խոշոր կենտրոնի նշանակությունը: Քաղաքն ուներ ընդարձակ շուկա և մեծ թվով արհեստանոցներ: Այն միջազգային բարավանային առևտրի և արհեստների խոշոր կենտրոն էր: Երկրաշարժի (893 թ.) հետևանքով Դվինում շատ շենքեր ավերվեցին: Սակայն քաղաքն աստիճանաբար վերաշինվեց և մնաց որպես առևտրաարդյունագործական խոշոր կենտրոն: Բագրատունյաց Հայաստանում նշանավոր քաղաքներ էին նաև ***Կարսը, Արծնը, Վանը*** և շուրջ երեք տասնյակ մեծ ու փոքր այլ քաղաքներ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Գծապատկերի միջոցով ներկայացրեք Բագրատունյաց Հայաստանի պետական կառավարման համակարգը: Համեմատեք այն վաղ միջնադարի կառավարման համակարգի հետ:
2. Տնտեսության ո՞ր ճյուղերը վերելք ապրեցին զարգացած միջնադարում: Ցույց տվեք գյուղատնտեսության բնագավառում ի հայտ եկած նորությունները: Արհեստների ինչ նոր տեսակներ զարգացան Հայաստանում: Ներկայացրեք Հայաստանի ներքին և արտաքին առևտուրը:
3. Որո՞նք էին քաղաքային կյանքի վերելքի պատճառները: Թվարկեք զարգացած միջնադարի հայկական քաղաքները: Նկարագրեք այդ ժամանակի քաղաքը: Համեմատեք այն ժամանակի եվրոպական քաղաքի հետ:

§ 4. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՏՈՒՄՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ

Կենտրոնացված պետություն ստեղծելու ջանքերը: Բագրատունյաց թագավորները ձգտում էին ամբողջ Հայաստանը միավորել մեկ միասնական, կենտրոնացված պետության մեջ: Նրանց այդ քայլերը հանդիպում էին երկրի ներքին ու արտաքին ուժերի համառ դիմադրությանը: Երկրի, հատկապես ծայրագավառների նշանավոր իշխանությունները տնտեսական և ռազմական բավարար հզորություն ունեին և ինքնաբավ կյանք էին վարում: Նրանք հաճախ ձգտում էին անկախության:

Կենտրոնախույս ուժերը խրախուսվում էին սահմանակից երկու հզոր պետությունների՝ Արաբական խալիֆայության և Բյուզանդական կայսրության կողմից: Խալիֆայությունը չէր հաշտվում Հայաստանը կորցնելու իրողության հետ, ամեն կերպ օժանդակում էր այդ ուժերին: Բյուզանդիան հայոց պետությունը թուլացնելու, երկրի արևմտյան տարածքները կայսրությանը միացնելու հետևողական քաղաքականություն էր վարում:

Բագրատունի թագավորները պայքարում էին կենտրոնախույս ուժերի դեմ: Նրանք այդ բնագավառում նկատելի հաջողություններ ունեցան, սակայն վերջնական հաղթանակի չհասան: Ո՞րն էր դրա պատճառը:

Զարգացած ավատատիրության ժամանակաշրջանում բոլոր երկրներում տիրապետող են եղել ավատատիրական մասնատվածությունը և կենտրոնախույս ձգտումները: Սակայն, առաջին հերթին, երկրի տնտեսական ընդհանուր զարգացումը խթանում և ի վերջո հանգեցնում է միավորման ու միասնական կենտրոնացված պետության ստեղծման: Հայաստանում տնտեսական զարգացման գործոնը և մյուս հանգամանքները լիուլի առկա էին: Այդուհանդերձ, ինչո՞ւ տեղի չունեցավ այդ միավորումը: Մի երևույթ, որը բախտորոշ նշանակություն կունենար հայ ժողովրդի հետագա պատմական ճակատագրում:

Դրա պատճառը անհրաժեշտ է որոնել արտաքին գործոնների մեջ: Պատմական

Գագիկ թագավոր. Աղթամարի Ս. Խաչ եկեղեցի, 915-921 թթ.

այդ բնական գործընթացի իրականացմանը խանգարեց Բյուզանդական կայսրությունը՝ տիրելով երկրի զգալի մասին և ապա վերջ տալով Բագրատունյաց թագավորությանը:

Ենթակա թագավորությունների առաջացումը: Ենթակա թագավորությունների մեջ *Վասպուրականն* ամենից ընդարձակն էր: Այն ընդգրկում էր Վանա և Կապուտան լճերի միջև ընկած տարածքը: Ինչպես տեսանք, խալիֆայությունը *908 թ. Գագիկ Արծրունուն* ճանաչեց այդ երկրամասի թագավոր: Արաբներն ընդունում էին Բագրատունիների գերիշխանությունը, որը հաճախ ձևական բնույթ էր կրում: Վասպուրականով էր անցնում միջազգային առևտրի հարավային ուղին, որի վրա առաջացել էին առևտրական խոշոր կենտրոններ՝ *Վանը, Բերկրին, Արճեշը, Մանազկերտը:* Գագիկ Արծրունու օրոք՝ X դ. առաջին կեսին, Վասպուրականը տնտեսական և մշակութային վերելք ապրեց: Պատմական աղբյուրների համաձայն՝ Վասպուրականն ուներ 8 քաղաք, 4000 գյուղ, 72 ամրոց ու բերդ, 115 վանք: Նրա բնակչու-

թյունը պատկառելի թիվ էր կազմում. հասնում էր 1 միլիոնի:

Անիի Բագրատունիների հետ սերտ հարաբերությունների մեջ էր ***Վանանդի*** կամ ***Կարսի թագավորությունը:*** Այս թագավորությունը գոյություն ունեցավ մեկ դար (963–1065 թթ.): Երբ Աշոտ III–ը մայրաքաղաքը տեղափոխեց Անի, Կարսի կառավարիչ նշանակեց իր եղբորը՝ Մուշեղ Բագրատունուն: Սակայն վերջինս 963 թ. իրեն թագավոր հռչակեց: Աշոտ III–ը ճանաչեց նրա թագավորությունը՝ իրեն ենթակա լինելու պայմանով: Դրանով առաջացավ Բագրատունյաց մի նոր թագավորություն: Մուշեղին հաջորդեց Աբասը, որը հատուկ ուշադրություն դարձրեց բանակի վրա: Նա իր հեծյալ զորքով ակտիվորեն մասնակցեց արաբների դեմ հայերի և վրացիների արշավանքներին:

Տաշիր-Զորագետի կամ ***Լոռու թագավորության*** գլուխ կանգնած էր Անիի Բագրատունիների մի ճյուղը: 972 թ. Տաշիրի կառավարիչ նշանակվեց Աշոտ III–որդի Գուրգենը, որին Սմբատ II–ը թագավորի տիտղոս շնորհեց: Այդպես ***978 թ. հիմնադրվեց Տաշիր-Զորագետի թագավորությունը:*** Գուրգեն թագավորը, ստանալով տեղական Կյուրիկե անվանումը, հիմք դրեց Կյուրիկյան հարստության: Այս թագավորությունը ևս ենթակա էր Անիի Բագրատունիների գերիշխանությանը: Այն զբաղեցնում էր Գուգարք նահանգի մեծագույն մասը: Կյուրիկյանների թագավորությունն առավել հզորության հասավ Դավիթ Անհողինի՝ շուրջ 60 տարի տևած կառավարման շրջանում: Նա ընդարձակեց իր թագավորության սահմանները ի հաշիվ Գանձակի և Թիֆլիսի ամիրայությունների: Տաշիր-Զորագետի կենտրոնը դարձավ ***Լոռի*** քաղաքը, որի ավերակներն այժմյան Ստեփանավան քաղաքի մոտ են: Այս թագավորությունը գոյատևեց ավելի քան մեկ դար՝ մինչև ***1113 թ.:***

Վանանդի թագավորի օրինակին հետևեց ***Սյունիքի*** նշանավոր ***իշխան Սմբատը:*** Նա ***987 թ.*** հիմնեց Սյունիքի թագավորությունը՝ ճանաչելով Անիի Բագրատունիների գերիշխանությունը: Այն երկար կյանք ունեցավ և իր գոյությունը պահպանեց շուրջ երկու դար: Թագավորության կենտրոնը սկզբում ***Սյունի*** ավանն էր (այժմ՝ Սիսիան), որը ռազմական և առևտրական առումով անհարմար վայրում էր: Այդ պատճառով մայրաքաղաքը տեղափոխվեց ***Կապան:*** Սյունիքի թագավորությունը մեծ վերելք ապրեց Վասակ թագավորի ժամանակ: Համեմատաբար փոքր տարածք ունեցող այս թագավորությունը բավականաչափ խիտ բնակչություն ուներ: Սյունիքում XII դ. կար 43 ամրոց ու բերդ, 40 վանք և 1000–ից ավելի գյուղ ու ավան:



Սմբատ և Գուրգեն արքայորդիներ. Հաղպատ, Ս. Նշան եկեղեցի, 971–991 թթ.

Բյուզանդիայի նվաճողական քաղաքականությունը: Բյուզանդիան X դարի երկրորդ կեսից Հայաստանի նկատմամբ որդեգրեց նվաճողական քաղաքականություն: ***Տարոնում*** հաստատվել էր Բագրատունիների ինքնուրույն մի իշխանություն: Տարոնի իշխան Աշոտ Բագրատունու մահից հետո՝ ***966 թ.,*** իշխանությունը միացվեց Բյուզանդական կայսրությանը: Տարոնից հետո բյուզանդացիները գրավեցին Մանազկերտը: Միայն ազատասեր լեռնային ***Սասունն էր,*** որ պահպանեց իր անկախությունը: Դրանից հետո Բյուզանդիայի քաղաքականության զոհը դարձավ Տայքը:

Տայքում առաջացել էր հայ-վրացական խառը բնակչությամբ զորեղ մի իշխանություն՝ Դավիթ Կյուրապաղատի գլխավորությամբ: Վասիլ II կայսրը հարկադրեց Դավիթ իշխանին, որ Տայքն իր մահից հետո կտակի կայսրությանը: Դավիթ Կյուրապաղատը մահացավ 1001 թ., և Վասիլ II-ը Տայքը միացրեց կայսրությանը: Վրաց Բագրատունիները փորձեցին ընդդիմանալ բյուզանդացիների նվաճողական քայլերին, բայց հաջողություն չունեցան:

Երկրի տարանջատման ձգտումը թափանցեց անգամ Անիի Բագրատունյաց թագավորության ներսը: Գագիկ I-ի մահից հետո գահին տիրանալու համար պայքար սկսվեց նրա երկու զավակների միջև: Վրաց թագավորի և զորավար Վահրամ Պահլավունու միջնորդությամբ հաշտություն կայացավ: Ավագ որդին՝ ***Հովհաննես-Սմբատը***, ժառանգեց հոր գահը՝ ստանալով Անի քաղաքը և Շիրակը: Կրտսեր եղբորը՝ եռանդուն ու ռազմիկ ***Աշոտ IV-ին***, բաժին ընկան Սևանի ավազանը, Գուգարքը և որոշ այլ գավառներ: Հովհաննես-Սմբատի մահվան պարագայում Աշոտը ժառանգելու էր ամբողջ թագավորությունը: Այսպիսով՝ Անիի թագավորությունը երկու մասի բաժանվեց և բռնեց թուլացման ուղի: Նրան ենթակա թագավորություններն ավելի ինքնուրույն դարձան:

Տայքի նահանգի պատկանելության շուրջ ***1022 թ. Տրապիզոնում*** բանակցություններ սկսվեցին Բյուզանդիայի և Վրաստանի միջև: Բանակցություններին Հայաստանից մասնակցում էր Պետրոս կաթողիկոսը: Վասիլ II կայսրը պահանջեց, որ Անիի թագավորությունը հանձնվի Բյուզանդիային: Հայոց թուլամորթ թագավոր Հովհաննես-Սմբատը կայսրի և կաթողիկոսի ճնշմամբ ստորագրեց մի ամոթալի կտակ, որի համաձայն՝ Անիի թագավորությունն իր մահից հետո պետք է անցներ Բյուզանդիային: Դրանով Բագրատունյաց թագավորությունն ավելի թուլացավ և կորցրեց իր գոյատևման հեռանկարը:

Շուտով Բյուզանդիայի զոհը դարձավ ***Վասպուրականը***, որն այդ շրջանում ենթարկվում էր սելջուկ-թուրքական ցեղերի հարձակումներին: Վասիլ II-ը ***1021 թ.*** հայ կադրեց թագավոր ***Սենեքերիմ Արծրունուն***: Վասպուրականը հանձնել կայսրությանը: Դրա փոխարեն նա Սենեքերիմին տվեց ***Փոքր Հայքի Սեբաստիա քաղաքն*** իր շրջակայքով: Սենեքերիմ Արծրունու հետ Սեբաստիա գաղթեցին տասնյակ հազար հայեր: Այսպիսով՝ Հայաստանի մեծ մասն անցավ Բյուզանդիային: Անմիջական վտանգ էր կախվել Անիի թագավորության գլխին:

Պայքար պետականության պահպանման համար: Անին Բյուզանդիային կտակելը գաղտնի էր պահվում: Այդ պատճառով եղբայրների միջև բախում չառաջացավ: Խաղաղ վիճակը շարունակվեց շուրջ քսան տարի՝ մինչև ***1041 թ.***, երբ նույն տարում անհայտ հանգամանքներում մահացավ Աշոտ IV-ը, ապա՝ Հովհաննես-Սմբատը: Նրանց մահից հետո բյուզանդական կողմնորոշում ունեցողներն ակտիվացան, որոնց հոսանքը գլխավորում էին Պետրոս կաթողիկոսը և թագավորի՝ արքունիքում կշիռ ունեցող խնամակալը՝ Վեստ Սարգիսը:

Իմանալով հայոց թագավորների մահվան մասին՝ բյուզանդական կայսրն Անին գրավելու համար մեծ բանակ ուղարկեց: Քաղաքի պաշտպանության համար ոտքի ելավ բնակչությունը և դիմեց սպարապետ ***Վահրամ Պահլավունուն***՝ ընդդեմ Բյուզանդիայի պայքարը գլխավորելու պահանջով: «Մենք ամենքս պատրաստ ենք մեռնելու,— ասում էին ժողովրդի ներկայացուցիչները,— բայց չենք մեռնի, մինչև չոչնչացնենք մեր թշնամիներին, որոնք տարապարտ կերպով եկել են մեր դեմ և կամենում են հափշտակել մեր երկիրը»: Քաղաքի դարպասներից դուրս հայերն ալեզարդ սպարապետ Վահրամ Պահլավունու գլխավորությամբ հարձակվեցին և մեծ ջարդ տալով՝ փախուստի մատնեցին բյուզանդական զորքին:

Այդ հաղթանակից հետո Վահրամ Պահլավունու առաջարկով Անիում թագավոր հռչակվեց թագաժառանգ Աշոտի տասնութամյա որդին՝ ***Գագիկ II-ը (1042-1045 թթ.)***: Դա պետությունն ամրապնդելու նպատա-

կով կատարված խելամիտ քայլ էր: Հայոց նոր թագավորը փայլուն կրթություն ստացած, հունարենին տիրապետող, հոր քաջությունը ժառանգած երիտասարդ էր: Նա իր կարճատև գահակալության ընթացքում դրսևորեց ռազմական և պետական գործչի մեծ ունակություններ: Նա պայքար սկսեց երկիրը ներսից քայքայողների դեմ. բանտարկեց Վեստ Սարգսին, հետ վերցրեց նրա կողմից հափշտակված արքունի գանձերը: Սակայն հավատալով այդուհետ արքային հավատարիմ լինելու նրա կեղծ խոստումներին՝ ազատ արձակեց: Կայսերական զորքերի երկրորդ և երրորդ հարձակումները նույնպես ավարտվեցին բյուզանդացիների պարտությամբ:

Այդ անհաջողություններից հետո Բյուզանդիան, համոզվելով, որ զենքի ուժով չի կարողանում արդյունքի հասնել, դիմում է նենգ միջոցի: Կայսրը հաշտություն կնքելու պատրվակով Գագիկ II–ին հրավիրում է Կոստանդնուպոլիս: Վահրամ Պահլավունին և նրա կուսակիցները, դրա մեջ խարդավանք տեսնելով, դեմ են կանգնում այցելությանը: Նրանց խորհրդով Գագիկը հրաժարվում է Բյուզանդիայի մայրաքաղաք մեկնելուց: Հետագայում, տեղի տալով կաթողիկոսի և Վեստ Սարգսի հորդորներին, *Գագիկը 1044 թ. մեկնում է Կոստանդնուպոլիս:* Կոստանդին Մոնոմախ կայսրը բանակցելու փոխարեն հայոց թագավորից պահանջում է Անին հանձնել կայսրությանը: Գագիկ II–ը մերժում է այդ անօրինական պահանջը՝ կայսրին դատապարտելով հետևյալ խոսքերով. ***«Հայոց գան գերն ու թագավորը ես եմ, և ես քեզ չեմ տալիս հայոց երկիրը, որովհետև դու ինձ խաբեությամբ ես բերել Կոստանդնուպոլիս»:***

Կայսրը հայոց թագավորին կալանավորում է և թույլ չի տալիս վերադառնալ Հայաստան: Նա զորք է ուղարկում՝ Անին գրավելու: Անիի բնակչությունը կրկին համախմբվում է սպարապետի շուրջը և հետ մղում զավթիչների գրոհները: Սակայն արքունիքում մեծացել էր բյուզանդասերների թիվը: Ջլատվել ու թուլացել էր բնակչության դիմադրական կորովը. *1045 թ.* քաղաքը հանձնվում է բյուզանդացիներին: Դրանով ավարտվում է Անի–Շիրակի Բագրատունիների հայկական պետության գոյությունը:

Բագրատունյաց թագավորության անկումը ծանր հետևանքներ ունեցավ Հայաստանի համար: Երկար դարեր հայ ժողովուրդը բուն երկրում կորցրեց իր միասնական ու լիակատար անկախ պետականությունը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Պարզաբանեք կենտրոնացված պետության թուլացման պատճառները:
2. Երբ, որտեղ և ո՞ւմ կողմից ստեղծվեցին ենթակա թագավորությունները: Դրանցից ո՞րն էր ամենահզորը:
3. Ի՞նչ քաղաքականություն էր վարում Բյուզանդիան Հայաստանի նկատմամբ: Ինչո՞ւ հաջողություն ունեցան բյուզանդացիների ծրագրերը:
4. Ներկայացրեք Անիի թագավորության թուլացման և անկման պատմությունը:

Թեմա 2. ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XI–XIV ԴԱՐԵՐՈՒՄ

§ 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ XI ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Հայաստանում կենտրոնական թագավորության անկման հետևանքները: Անիի թագավորության անկումից հետո հայոց պետականությունն առհասարակ վերացնելու և հայկական անկախ բոլոր պետական կազմավորումներն իրեն ենթարկելու Բյուզանդիայի քայլերը շարունակվեցին: Բյուզանդական արքունիքը, ձգտելով ավելի թուլացնել Հայաստանը, նվաճված երկրամասերի հայ ազնվակա-

նությանը երկրից հեռացնելու նոր ձեռնարկումներ կատարեց: Այդ նպատակով հայ իշխաններին շնորհվեցին բարձր տիտղոսներ, կայսրության արևմտյան շրջաններում տրվեցին ընդարձակ կալվածքներ: Հայկական զորքերը ցիրուցան արվեցին, մի մասն էլ տարվեց տերության խորքերը: Սկսվեց բնակչության զանգվածային արտագաղթ դեպի Փոքր Ասիա, Վրաստան և այլ շրջաններ: Բնակչությունը ենթարկվեց ծանր հարկման: Պայքարի սլաքն ուղղվեց նաև Հայ եկեղեցու դեմ: Նույնիսկ Անիի անկման հարցում իրենց օժանդակած կաթողիկոս Պետրոս Գետադարձին բյուզանդացիները կանչեցին Կ. Պոլիս և արգելեցին վերադառնալ հայրենիք: Հարկման ենթարկվեց նաև եկեղեցին: Քաղկեդոնական դավանանքի տարածման համար ստեղծվեց լուրջ վտանգ: Բյուզանդիայի ***այս անհեռատես քաղաքականությունը ճակատագրական եղավ ոչ միայն Հայաստանի, այլև կայսրության համար:*** Շուտով բյուզանդացիները բախվեցին հզոր թշնամու՝ սելջուկ-թուրքերի հետ:

Հայկական թագավորությունները և իշխանությունները: Նույնիսկ XI դարի կեսին Անիի Բագրատունյաց թագավորության անկման և Միջին Ասիայի ռազմատենչ քոչվոր ցեղերի՝ սելջուկ-թուրքերի ձեռնարկած ավերիչ արշավանքների հետևանքով ստեղծված բարդ աշխարհաքաղաքական պայմաններում հայ ժողովուրդը շարունակեց իր պայքարը համահայկական պետականությունը վերականգնելու ուղղությամբ: Եթե կենտրոնական թագավորության բնակչության մի մասն իր ոչ եռանդուն պայքարն արտահայտում էր օտար ափեր հեռանալու եղանակով, ապա մյուսները, մնալով հայրենիքում, հնարավոր միջոցներով փորձում էին ընդդիմանալ բյուզանդացիների հայակործան քայլերին ու սելջուկների ասպատակություններին:

Միասնական պետականության վերականգնման համար պայքարում հայ բնակչությունը փորձում էր համախմբվել գոյատևող մյուս հայկական թագավորությունների գահակալների շուրջ և ունենում էր նաև հաջողություններ: Պատահական չէ, որ Անիի անկումից հետո դեռ հայկական թագավորություններն ու իշխանությունները՝ որպես հայոց պետականության ինքնատիպ կրողներ, պահպանեցին իրենց գոյությունը երկար ժամանակ: Բագրատունիները գահազրկվել էին Անի-Շիրակում, սակայն շարունակում էին իշխել հարևան Կարսում և Տաշիր-Ձորագետում, իսկ Սյունյաց թագավորները իշխեցին ևս 120 տարի:

Կարսի թագավորությունում դեռ Աբաս թագավորի ժամանակ հաստատված խաղաղությունը պահպանվեց նրա որդու՝ ***Գագիկ Աբասյանի*** օրոք (1029-1065 թթ.): Գագիկը կարողացավ խնամիական կապեր հաստատել տարբեր հայ և օտարազգի թագավորական ու ազնվականական տոհմերի հետ ու զգալիորեն ամրապնդել իր դիրքերը: Նա ամուսնացավ Վիրա-աբխազաց թագավոր Բագրատ IV-ի քրոջ՝ Գուրանդուխտի հետ: Իզուր չէ, որ, ըստ պատմիչ Մատթեոս Ուռհայեցու, Անիի տիրակալներից հետո «շահնշահ» տիտղոսն անցավ Գագիկ Կարսեցուն:

Իր ազդեցիկ դիրքը պահպանում էր և Բյուզանդիայի ոտնձգություններին հաջողությամբ ընդդիմանում էր Հայաստանի հյուսիսային ընդարձակ տարածքները զբաղեցնող ***Տաշիր-Ձորագետի Կյուրիկյան թագավորությունը:*** Այստեղի երկարամյա թագավոր Դավիթ Անհողինը շարունակում էր յուրաքանչյուր պատեհ առիթ օգտագործել՝ իր ազդեցությունը տարածաշրջանում ավելացնելու նպատակով: Նա ամուսնացած էր Կախեթի իշխան Կվիրիկեի քրոջ հետ: Կվիրիկեի մահից հետո այդ իշխանությունն անցավ Դավիթի որդուն՝ Գագիկին, որն էլ դարձավ Կախեթի Կյուրիկյան հարստության նոր ճյուղի հիմնադիրը: Այս եղանակով սերտ կապեր հաստատվեցին Կախեթի հետ, որտեղ հետզհետե աճեց հայ բնակչության թիվը: Պատահական չէ, որ այդ իշխանությունը (նաև՝ թագավորություն) վերածվեց հայկական պետական կազմավորման:

Իր կյանքի վերջին տարիներին Դավիթ

Անհողինը, չնայած պատկառելի տարիքին, ծրագրել էր բյուզանդացիներից Անին ազատագրել և հասնել իր վաղեմի երազանքին: Սակայն վերահաս սելջուկյան արշավանքները ձախողեցին այդ ծրագիրը: Դավիթին փոխարինած որդու՝ Կյուրիկեի օրոք երկիրը կարողացավ զերծ մնալ ավերածություններից, շարունակել խաղաղ տնտեսական բարգավաճման քաղաքականությունը: ***Լոռի (Լոռե)*** բերդը դարձավ թագավորանիստ, աճեց պղծի հանքերի շահագործումը, հատկապես մեծ զարգացում ապրեց գյուղատնտեսությունը:

Լեռնային անմատչելի տեղանքը և ազատ ապրելու՝ սյունեցիների կամքը ապահովեցին հայկական մյուս՝ ***Սյունիքի թագավորության*** կենսունակությունը: Վասակ թագավորը չուներ արու զավակ: Նրա մահից (1040 թ.) հետո գահն անցավ իր փեսա Աշոտ իշխանի որդուն՝ Սմբատին, որին պատմիչներն անվանում են Սմբատ Աշոտյան: Սյունյաց թագավորությունը ևս կարողացավ դիմակայել ժամանակի բոլոր փորձություններին և հաջող պայքար մղելով նախ՝ Գանձակի ամիրայության, ապա՝ սելջուկների դեմ՝ իր դիրքերը պահպանել երկար ժամանակ՝ մինչև XII դարի երկրորդ կեսը:

Հայկական անկախ թագավորություններից բացի, իրենց ***կիսանկախ վիճակը պահպանում էին*** բազմաթիվ այլ իշխանություններ ու կազմավորումներ ***Տայքում, Սասունում, Սպկր-Բաբերդում, Արցախում*** և այլուր:

Հայաստանը սելջուկ-թուրքերի արշավանքների ժամանակաշրջանում: Սելջուկ-թուրքերի նախնիները քոչվոր անասնապահներ էին և զբաղեցնում էին Ալթայից Միջին Ասիա ընկած տարածքը: Նրանք առաջին անգամ Հայաստանում և Փոքր Ասիայում հայտնվել էին դեռևս VIII դարում՝ իբրև վարձկաններ արաբական բանակում: X դարի երկրորդ կեսին թուրքական ցեղերի մի մասը միավորվեց իրենց առաջնորդ Սելջուկի շուրջը, գրավեց Պարսկաստանը և մոտեցավ Հայաստանի սահմաններին:

Արդեն ***1047 թ.*** Բագրատունյաց թագավորության անկումից երկու տարի անց, սելջուկների 20-հազարանոց բանակն առաջին անգամ ներխուժեց Հայաստան: Վասպուրականի վրայով այն գրեթե անարգել, բյուզանդացիների թողտվությամբ հասավ մինչև Բասեն՝ ճանապարհին ավերելով բազմաթիվ բնակավայրեր:

1048 թ. հետևեց 100-հազարանոց սելջուկյան բանակի նոր արշավանքը: Ջորավարներ Գելմուշի և Իբրահիմի զորքերը մահ ու ավեր սփռեցին ամենուր: Մանանաղի Սմբատավան լեռան մոտ նրանք կազմակերպեցին բնակչության կոտորած: Թուրքերը գրավեցին Կարինի մոտ գտնվող Արծն վաճառաշահ ու հարուստ քաղաքը, ավերեցին այն, բնակչությանը կոտորեցին կամ գերեվարեցին: Սելջուկներին ուշացումով փորձեցին կանգնեցնել բյուզանդական զորքն ու նրանց օգնության հասած հայկական ու վրացական ջոկատները, սակայն Բասենի ճակատամարտում պարտություն կրեցին: Հարուստ ավարով սելջուկները վերադարձան Ատրպատական: Նոր սթափված բյուզանդացիները հայերին սիրաշահելու քայլեր կատարեցին:

1054 թ. սելջուկների երրորդ արշավանքն արդեն գլխավորում էր նրանց առաջնորդ ***Տուղրիլը:*** Այս անգամ թշնամին համառ դիմադրության հանդիպեց Կարս քաղաքի մոտ: Մարտում Կարսի պաշտպաններից Թաթուլ անունով մի երիտասարդ ծանր վիրավորել էր Տուղրիլի մերձավորներից մեկին: Բեկը գերի ընկած Թաթուլին ասում է, որ եթե իր մերձավորն ապրի, ինքը ազատ կարձակի նրան: Քաջ Թաթուլը համարձակորեն պատասխանում է, որ հարվածն իրենն է, և թուրք զինվորն անպայման կմեռնի: Սելջուկներն այս հետախուզական արշավանքից հետո էլ հարուստ ավարով հեռացան Հայաստանից:

Իրադրությունը փոխվեց, երբ սելջուկյան պետության գլուխ կանգնեց սուլթան Ալփ-Ասլանը: ***1064 թ.*** նա ներխուժեց Հայաստան՝ այն վերջնականապես գրավելու մտադրությամբ: Ասպատակելով Լոռին՝ սելջուկները պաշարեցին Անին: Քաղաքի բյուզանդական կայազորը քաշվեց միջնա-

բերդ և բնակչությանը թողեց անպաշտպան: Ծաղկուն քաղաքը վերածվեց ավերակների: Անիի անկումից հետո ավերածություններից խուսափելու նպատակով Տաշիր-Զորագետի, Կարսի ու Սյունիքի թագավորները ձևականորեն իրենց հպատակությունը հայտնեցին սելջուկներին: Այդ ժամանակ չունենալով անհրաժեշտ ուժեր՝ սելջուկները հրաժարվեցին հայկական մյուս թագավորությունների վրա հարձակվելու մտադրությունից:

1071 թ. բյուզանդացիները փորձեցին կասեցնել սելջուկների առաջխաղացումը և մեծ բանակով շարժվեցին արևելք: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ ***Մանազկերտի*** մոտ և ողբերգական վախճան ունեցավ կայսրության համար: Բյուզանդացիները ծանր պարտություն կրեցին: Բազմաթիվ գերիների հետ թուրքերի ձեռքն ընկավ նաև կայսր Դիոգենեսը: Շուտով կնքվեց հաշտություն, որով բյուզանդացիները ճանաչեցին սելջուկների տիրապետությունը Հայաստանի ու Փոքր Ասիայի վրա: 1074 թ. հաստատվեց սելջուկյան պետության իշխանությունը Փոքր Ասիայում: Հայաստանի տարածքում ստեղծվեցին Մանազկերտի, Խլաթի և այլ սելջուկյան իշխանություններ: Նորից, ինչպես արաբական տիրապետության շրջանում, երկիրը հայտնվեց ծանր վիճակում: Օտար, քոչվոր անասնապահական կենցաղը ծանր հարված հասցրեց Հայաստանի տնտեսությանը: Կրկին մեծ չափեր ընդունեց բնակչության արտագաղթը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ քայլեր ձեռնարկեց Բյուզանդիան Հայաստանում Անիի թագավորության անկումից հետո: Ներկայացրեք Հայ եկեղեցու նկատմամբ Բյուզանդիայի վարած քաղաքականությունը:
2. Ովքե՞ր էին սելջուկ-թուրքերը, երբ նրանք հայտնվեցին Հայաստանում: Թվարկեք նրանց արշավանքները, ցույց տվեք դրանց հետևանքները:
3. Որտե՞ղ և երբ տեղի ունեցավ վճռական ճակատամարտը բյուզանդացիների և սելջուկների միջև, ինչ արդյունք ունեցավ այն:

§ 2. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՕՏԱՐ ՆՎԱՃՈՂՆԵՐԻ ԴԵՄ (XII-XIV ԴԱՐԵՐ)

Պայքար սելջուկ-թուրքերի դեմ: XI դարի վերջին սելջուկյան պետությունն սկսեց աստիճանաբար թուլանալ: Զուգահեռաբար նկատվեց Հայաստանի հյուսիսային հարևանի՝ Վրաստանի հզորացման գործընթացը: 1065 թ. Կարսի թագավոր Գագիկ Աբասյանը, վախենալով թուրքերից, իր թագավորությունը հանձնեց Բյուզանդիային, և ինքը հեռացավ Փոքր Ասիա: ***Սյունիքի*** ու ***Տաշիր-Զորագետի*** թագավորությունները շարունակեցին պահպանել իրենց գոյությունը և, օգտվելով սելջուկների թուլացումից, վերականգնեցին իրենց տիրույթները: Հայաստանի հարավում՝ ***Սասունում,*** պահպանվում էր ***Թոնիկյանների*** իշխանությունը:

Սելջուկյան պետության մասնատման հետևանքով Հայաստանում առաջացան մահմեդական իշխանություններ: Դեռ ***1064 թ.*** գրավված ***Անին*** հանձնվել էր ***Շադդադյաններին:*** Շադդադյաններից բացի, ստեղծվեց նաև ***Շահ-Արմենների ամիրայությունը*** Հայաստանի հարավում՝ ***Խլաթ*** կենտրոնով: Պատմական Ուտիքում ձևավորվեց ***Գանձակի աթաբեկությունը:***

Այս մահմեդական իշխանությունների դեմ XI դարի վերջից համատեղ պայքարի դուրս եկան հայերն ու վրացիները: Հայ-վրացական հարաբերությունները ջերմացան հատկապես վրաց ***Դավիթ Շինարար*** (1089–1125 թթ.) թագավորի օրոք: Վերջինս Հայաստանից Վրաստան ար-

տագաղթող հայերի համար կառուցել տվեց *Գորի* քաղաքը: Դավիթի շուրջը համախմբվեցին բազմաթիվ հայ իշխաններ՝ իրենց զինական ուժերով: Հայ զորահրամանատարների ներկայությունը վրացական արքունիքում ավելի էր բարձրացնում Վրաստանի՝ որպես քրիստոնյա հարևանի հեղինակությունը սելջուկների լծից ազատագրվել ցանկացող հայ ժողովրդի աչքում: Այսպիսի պայմաններում հայերը հաճախ ապստամբում էին և օգնության նպատակով դիմում վրաց թագավորներին: 1113 թ. հայ-վրացական ուժերը թշնամուց մաքրեցին Լոռին: Սակայն վրաց արքունիքը տեղի Տաշիր-Ձորագետի թագավորությունը վերացրեց և մտցրեց վրացական պետության կազմի մեջ:

1124 թ. Անիի ապստամբած բնակչությունը պատվիրակություն ուղարկեց Դավիթ Շինարարի մոտ՝ նրան հայտնելով քաղաքը վրաց թագավորին հանձնելու իրենց մտադրության մասին: Դավիթը զորքով մտավ Անի և այնտեղից դուրս քշեց Շաղդաղյաններին: Վերջիններս նոր զորք հավաքեցին և կրկին պաշարեցին Անին: Միայն երկու տարի անց՝ 1126 թ., երբ քաղաքում սկսվեց սով, անեցիները քաղաքը հանձնեցին Շաղդաղյաններին:

Պայքարը Անիի և Հյուսիսային Հայաստանի մյուս շրջանների համար նոր թափ ստացավ վրաց Գեորգի III թագավորի օրոք (1156-1184 թթ.): 1161 թ. Անին նորից գրավվեց հայ-վրացական ուժերի կողմից: Թշնամին կրկին այն վերատիրեց: 1174 թ. Անին որոշ ժամանակով նորից անցավ հայերի և վրացիների ձեռքը:

Հայ-վրացական զինակցությունն իր գագաթնակետին հասավ *Թամար թագուհու* իշխանության տարիներին (1184-1207 թթ.): Նրա ժամանակ էլ հայ զորականներից *Սարգիս Զաքարյանը 1185 թ. ստացավ ամիրսպասալարի՝ սպարապետերի պաշտոնը:* Նրա մահից հետո այդ պաշտոնն անցավ Սարգսի ավագ որդուն՝ *Զաքարե Զաքարյանին:* Զաքարեի կրտսեր եղբայր *Իվանեն* (Հովհաննե, Հովհաննես) դարձավ աթաբեկ՝ թագաժառանգի խնամակալ: Վերջիններիս հրամանատարությամբ XII դարի վերջին հայ-վրացական զորքերը թշնամուց ազատագրեցին Հյուսիսային Հայաստանի բազմաթիվ շրջանները: *1196 թ.* ազատագրվեց Արագածի լանջին կառուցված *Ամբերդ* հայտնի բերդը, իսկ *1199 թ.*՝ քանիերորդ անգամ՝ նաև *Անին:* Թշնամուց մաքրվեցին Արցախը, Սյունիքը, Արարատյան դաշտը:

Ամբերդ ամրոցը

1203 թ. ազատագրվեց *Դվինը,* իսկ *1206 թ.*՝ *Կարսը,* ապա նաև՝ *Բասենն* ու *Բագրևանդը:* Շարունակելով հարձակումը՝ հայ-վրացական ուժերը հասան Մանազկերտ ու Արձեշ: *1209 թ.* պաշարվեց Վանա լճի ափին ընկած *Խլաթը*՝ Շահ-Արմենների նստավայրը: Սակայն մի պատահական դիպված (Իվանեն պատահաբար ընկավ որսափոսը և գերվեց թշնամու կողմից) խանգարեց Խլաթի գրավմանը: Զաքարեն ստիպված եղավ եղբորը ստանալու դիմաց դադարեցնել քաղաքի պաշարումը և նահանջել:

Զաքարյանների իշխանապետությունը Հայաստանում: Իշխանական նոր տները: Հյուսիսային ու կենտրոնական Հայաստանում սելջուկների լծի թոթափումից հետո ազատագրված հայկական հողերը վրաց արքունիքի կողմից հիմնականում տրվեցին Զաքարյաններին: Վերջիններս, վրաց պետության հովանավորությամբ ունենալով ներքին լայն

ինքնուրույնություն, ստեղծեցին իրենց ***իշխանապետությունը***, որն իր մեջ ընդգրկեց Շիրակը՝ Անի մայրաքաղաքով, Արարատյան դաշտը, Արաքս գետի միջին հոսանքը, Սևանի շրջակայքը:

Զաքարյաններն այնքան մեծ իշխանություն ունեին սելջուկյան տիրույթներում, որ իրենց հերթին պահում էին վասալ՝ կախյալ իշխանապետություններ: Հայաստանի հյուսիս-արևելքում՝ Տավուշում, Գարդմանում և Փառիսոսում, Զաքարյաններից կախյալ ստեղծվել էր ***Վահրամյանների իշխանությունը***, որի կենտրոնը ***Գագ ամրոցն էր:*** Նրա հիմնադիրը Սարգիս Զաքարյանի եղբայր Վահրամն էր: Զաքարյանների մի ճյուղն էլ նստում էր ***Զավախքի իշխանության*** կենտրոն ***Թմուկ*** (Թմկա) ***բերդում:***

Զաքարյաններին ենթակա իշխանություններ կազմավորվեցին՝ Վայոց ձորում՝ Պռոշյանների, Արագածոտնում՝ Վաչուտյանների կողմից: Վաչուտյանների նստավայրը Ամբերդն էր: Սյունիքում ազդեցիկ դիրք ձեռք բերեցին Օրբելյանները, Արցախում (Խաչենում)՝ Հասան-Ջալալյանները: Հայկական այս բոլոր իշխանապետությունները սերտորեն գործակցում էին վրաց պետության հետ, սակայն ներքին քաղաքական ու տնտեսական բնագավառներում միանգամայն ինքնուրույն էին: Զաքարյանների օրոք երկիրն ապրում էր քաղաքական ու տնտեսական վերելքի ժամանակաշրջան:

Մոնղոլական ասպատակությունները: Պայքար թաթար-մոնղոլական տիրապետության դեմ: 1206 թ. Սիբիրի և Չինաստանի միջև ընկած քոչվոր մոնղոլական ցեղերի ժողովը՝ մեծ խուրալը, ցեղապետերից Թեմուչինին ընտրեց խան՝ Չինգիզ խան անունով: Վերջինս շուտով սկսեց իր աշխարհակալ նվաճումները: 1219 թ. Չինգիզ խանը մտավ Միջին Ասիա և պարտության մատնեց Խորեզմի շահին, որի որդին՝ Ջալալեդդինը, նահանջելով պայքարը շարունակեց Իրանում և Այսրկովկասում՝ իր հերթին կողոպտելով ու ջարդելով տեղի բնակչությանը:

1220 թ. մոնղոլները ներխուժեցին ***Այսրկովկաս:*** Նրանց դեմ դուրս եկան վրաց թագավոր Գեորգի Լաշան և Իվանե Զաքարյանը՝ հայ-վրացական միացյալ ուժերով: Ճակատամարտը տեղի ունեցավ Կոտմանի դաշտում: Մոնղոլները կիրառեցին պայքարի խորամանկ ձև. կազմակերպեցին կեղծ նահանջ, իսկ երբ հայ-վրացական ուժերն անցան հակագրոհի, թաքստոցում գտնվող ուժերով հարվածեցին թիկունքից: Անակնկալի եկած Գեորգիի զորքերը պարտություն կրեցին և նահանջեցին: Այնուհետև, շրջանցելով Զաքարյանների տիրույթներն ու Վրաստանը, մոնղոլներն անցան Հյուսիսային Կովկաս և Ռուսիա:

Վերոհիշյալ հետախուզական արշավանքից հետո մոնղոլները նորից հայտնվեցին 1231 թ., երբ հետապնդելով Ջալալեդդինին՝ կարողացան նրան ջախջախիչ պարտության մատնել: Ապա մոնղոլներն անցան Վասպուրական, ավերեցին շատ բնակավայրեր: Հաջորդ տարի նրանք նորից վերադարձան Միջին Ասիա՝ հետդարձի ճանապարհին ավերելով Գանձակ քաղաքը:

1236 թ. մոնղոլական 30-հազարանոց բանակը, բազմաթիվ քոչվոր ցեղերի ուղեկցությամբ, ***Չարմաղանի*** գլխավորությամբ ներխուժեց Հայաստան: Այդ ժամանակ Վրաստանը կորցրել էր իր նախկին հզորությունը, իսկ Աղվանքն ու Զաքարյանների իշխանապետությունը խիստ մասնատված էին և բռնկված ներիշխանական երկպառակություններով: Պատահական չէ, որ թշնամին լուրջ ու կազմակերպված դիմադրության չհանդիպեց: Քաջ ծանոթ լինելով Այսրկովկասի իրավիճակին՝ մոնղոլները բաժանեցին զորքը ջոկատների, որոնք իրենց հրամանատարների՝ նոյոնների գլխավորությամբ սկսեցին հպատակեցնել երկրամասը: Հայ իշխաններից շատերը հեռացան Վրաստան, իսկ մյուսները հայտնեցին իրենց հպատակությունը: ***Լոռն*** և ***Շամքոր*** քաղաքները գրավելուց հետո մոնղոլները պաշարեցին ***Անին:*** Թշնամին պատվիրակներ ուղարկեց քաղաքի բնակիչների մոտ՝ պահանջելով անձնատուր լինել: Վրդովված անեցիները հարձակվեցին

մոնղոլ պատվիրակների վրա և սպանեցին նրանց: Գազազած թշնամին գործի դրեց պաշարողական մեքենաները և, քանդելով քաղաքի պարիսպները, ներխուժեց անպաշտպան թաղամասերը: Բնակչության մի մասը կարողացավ փախչել, իսկ մյուս մասը հիմնականում սրի քաշվեց կամ ստրկության վաճառվեց: Շուտով նույն բախտին արժանացան նաև ***Կարսը, Դվինը*** և այլ քաղաքներ: Մոնղոլական բանակին կրնկակոխ ուղեկցող քոչվոր ցեղերը շտապեցին զավթել երկրի լավագույն հողերը:

1242–1243 թթ. մոնղոլական զորքերը շարժվեցին դեպի երկրի արևմտյան շրջանները, որոնք այդ ժամանակ Իկոնիայի սուլթանության հսկողության տակ էին: Ճանապարհին պաշարվեց ***Կարինը***, որտեղ կենտրոնացել էր շրջակա խաղաղ բնակչության մի ստվար հատված: Մոնղոլներն այս արշավանքին հարկադրաբար մասնակից էին դարձրել նաև վրացական ու հայկական ջոկատներ: Վերջիններս, տեղակայված լինելով նրանց բանակի առաջին գծում, ստիպված կռվում էին իրենց հայրենակիցների դեմ և տալիս մեծ կորուստներ: Կարինը դիմադրեց շուրջ երկու ամիս և ընկավ թշնամու ձեռքը: Բնակչության զանգվածային կոտորածները կրկնվեցին նաև այստեղ: 1243 թ. մոնղոլները պարտության մատնեցին Իկոնիայի սուլթանությանը և գրավեցին Երզնկան, Տերիկը, Կեսարիան ու Սեբաստիան: Հասնելով Կիլիկիայի սահմաններին՝ մոնղոլները կանգ առան և 1254 թ. դաշնակցային պայմանագիր կնքեցին հայոց թագավոր Հեթում I–ի հետ: 1244 թ. մոնղոլներն իրենց ենթարկեցին նաև Հայաստանի հարավային շրջանները՝ Տարոնը, Վասպուրականը և Աղձնիքը:

Մոնղոլական տիրապետությունն աղետաբեր եղավ հայ ժողովրդի համար: Լինելով քոչվոր անասնապահներ՝ նրանք բերրի դաշտավայրերը և հատկապես քաղաքները սկսեցին վերածել արոտավայրերի: Կարճ ժամանակում հսկայական ծաղկուն քաղաքներ, այգիներ, բանջարանոցներ վերածվեցին արոտավայրերի: Նորից



Կարս. Վարդանի կամուրջը

վերսկսվեց բնակչության զանգվածային արտագաղթը:

Նվաճված երկրների բնակչությունը ենթարկվեց ծանր հարկման: 16–ից մինչև 50 տարեկան տղամարդիկ դրվեցին հարկերի տակ: Բնակչությունը պարտավոր էր նաև զանազան պարհակներ կատարել: Հպատակ ժողովուրդները պարտավոր էին նաև կազմել զինական ջոկատներ, որոնց ուղարկում էին ամենավտանգավոր ճակատները:

Նվաճումների սկզբնական շրջանում Հայ եկեղեցու նկատմամբ նվաճողները մեղմ քաղաքականություն էին վարում: Սակայն երբ XIII դարի վերջին մոնղոլներն ընդունեցին իսլամը, սկսվեցին նաև կրոնական հալածանքները: Երբեմնի վաճառաշահ Անի, Դվին, Արճեշ և այլ քաղաքներ վերածվեցին ավանների:

Մոնղոլական տիրապետությունը զայրույթի ալիք առաջացրեց հպատակ ժողովուրդների շրջանում: ***1249 թ.*** հայ և վրաց իշխանները վրաց թագավորի մասնակցությամբ սկսեցին նախապատրաստվել ապստամբության: Գավառներ ուղարկվեցին ջոկատներ: Լոռիում հատկապես եռանդուն գործում էին Զաքարյանները: Սակայն մոնղոլները կարողացան բացահայտել ապստամբությունը և ճնշել:

1259 թ. բռնկվեց նոր ապստամբություն, որի պատճառը հարկերի բարձրացումն էր

և հայ-վրացական ջոկատները Եգիպտոս՝ մամլուքների դեմ պատերազմի ուղարկելու մոնղոլների որոշումը: Հուզումներն ընդգրկել էին Արևելյան Վրաստանը, Շիրակը, Արցախը, Լոռին: Հուլավու խանը դաժանորեն ճնշեց ապստամբությունը: Հայ ղեկավարներից Խաչենի տիրակալ Հասան-Ջալալը և Զաքարե Զաքարյանը՝ ամիրսպասալար Զաքարեի թոռը, մահապատժի ենթարկվեցին:

Հայկական իշխանական տները XIII դարի երկրորդ կեսին—XIV դարում: Մոնղոլները Հայաստանը մտցրեցին էլ-ղանություն վարչամիավորի մեջ: Շարունակվեցին հայ իշխանական տների թուլացման քայլերը, նրանց միմյանց դեմ օգտագործելու փորձերը: Խիստ թուլացան Վաչուտյաններն ու Պռոշյանները: Համեմատաբար իրենց դիրքերը պահպանեցին Օրբելյանները՝ Սյունիքում, Դոփյանները՝ Վերին Խաչենում, Հասան-Ջալալյանները՝ Ներքին Խաչենում, Ազիզբեկյանները՝ Արայի լեռան շրջանում: Զաքարյանների շառավիղները *1266 թ.* Գուգարքի Զավախք գավառում, Ախալցխայի շրջակայքում, Տայքի զգալի մասում ստեղծեցին հայ-վրացական մի իշխանություն՝ ***Սամցխե-Զավախք*** անունով, որը պահպանեց իր անկախությունը մոնղոլական պետությունից և գոյատևեց մինչև XVI դ. վերջը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Մահմեդական ինչ իշխանություններ առաջացան Հայաստանում:
2. Ինչպես զարգացան հայ-վրացական հարաբերությունները Դավիթ Շինարարի օրոք: Երբ և ում օրոք երկու երկրների միջև զինակցությունը հասավ իր գագաթնակետին: Ներկայացրեք Զաքարյանների ազատագրական պայքարի արդյունքները: Հայաստանում Զաքարյաններից կախյալ ինչ իշխանություններ ստեղծվեցին:
3. Որտեղ էին բնակվում մոնղոլական ցեղերը, երբ ստեղծվեց նրանց տերությունը: Ներկայացրեք դեպի Հայաստան և Այսրկովկաս մոնղոլների արշավանքները և դրանց արդյունքները:
4. Ի՞նչ հետևանքներ ունեցավ մոնղոլական տիրապետությունը հայ ժողովրդի համար: Ձեր կարծիքով՝ ինչո՞վ էր պայմանավորված մոնղոլների սկզբնական մեղմ քաղաքականությունը Հայ եկեղեցու հանդեպ:
5. XIII դարի երկրորդ կեսին և XIV դարում հայկական ո՞ր իշխանությունները պահպանեցին իրենց դիրքերը:

Թեմա 3. ԿԻԼԻԿԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

§ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ

Հայկական պետականության առաջացման նախադրյալները: Այն տարածքը, որտեղ Բագրատունյաց թագավորության անկումից հետո առաջացավ հայկական նոր պետականություն, հայտնի է ***Կիլիկիա*** անվանումով: Այն Փոքր Ասիայի հարավ-արևելքում էր: Կիլիկիայի հարավում Միջերկրական ծովն էր: Հյուսիսում նրա սահմանները հասնում էին մինչև Տավրոսի լեռները, արևելքում՝ անցնում Ամանոսի (Սև) լեռներով:

Այս բնական սահմանների միջև ընկած տարածքը բաժանված է երեք մասի: Հյուսիս-արևելքը, որտեղ կան բազմաթիվ լեռնային զանգվածներ, կոչվում է ***Լեռնային Կիլիկիա:*** Հարավարևելյան շրջանները, որոնք հարուստ են գետահովիտներով ու դաշտավայրերով, հայտնի է ***Դաշտային Կիլիկիա*** անունով: Նրա հիմնական մասը ծովի մակերևույթից բարձր է մոտ 150–200 մ և աշխարհի արգավանդ դաշտավայրերից մեկն է: Քարքարոտ բլուր-

ներ ունեցող արևմտյան մասը կոչվում է *Բարուր Կիլիկիա*:

Կիլիկիայի հայկական պետության ժամանակաշրջանում հայկական աղբյուրներն այս երկիրը սովորաբար անվանել են «Հայոց աշխարհ», «Կիլիկյան Հայաստան», իսկ խաչակիր մատենագիրները՝ «Հայաստան», «Փոքր Հայք»:

Կիլիկիան՝ որպես աշխարհագրական միավոր, և Կիլիկյան Հայաստանը՝ որպես պետություն, տարածքային առումով միմյանց երբեք չեն համապատասխանել: Սկզբնական շրջանում նորաստեղծ հայկական պետությունն ընդգրկում էր Կիլիկիայի միայն մի մասը, իսկ հետագայում իր մեջ ներառեց նաև նրանից դուրս մի շարք շրջաններ:

Հայկական լեռնաշխարհին հարող Կիլիկիան դեռևս հին ժամանակներից ծանոթ էր հայերին: Ք.ա. I դ. Տիգրան Մեծը նվաճեց և հայկական տերությանը միացրեց Կիլիկիայի արևելյան շրջանները: Վաղ ժամանակներից սկսած՝ հայերը բնակություն էին հաստատում Կիլիկիայում, իսկ X դ. նրանք այստեղ արդեն զգալի թիվ էին կազմում:

Կիլիկիայում և հարակից շրջաններում հաստատված հայ բնակչության ազգային-եկեղեցական խնդիրները հոգալու համար *Խաչիկ Ա կաթողիկոսը (973–992 թթ.)* X դ. վերջին Անտիոք, Տարսոն և Սալնդա (Ալնիա) քաղաքներում և մի շարք գավառներում եպիսկոպոսական թեմեր է հիմնադրում:

Կիլիկիայում հաստատված հայերը հիմնականում զբաղվում էին երկրագործությամբ, արհեստներով, առևտրով և լեռնային արդյունագործությամբ: Կիլիկիայում հայկական պետականության առաջացման նախօրյակին այստեղ հաստատված հայ բնակչությունն արդեն ուներ կայուն կազմակերպված ընկերային միջավայր:

XI դ. կեսերից սկսվում է հայ բնակչության զանգվածային արտագաղթ Կապադովկիա, Կիլիկիա, Ասորիք, Հյուսիսային Միջագետք: Դա հիմնականում կապված էր թուրք-սելջուկների ավերիչ արշավանքների և Բյուզանդիայի վարած քաղաքականության հետ: Հայ բնակչության մի մասը, Հայաստանից արտագաղթելով, հաստատվեց Կիլիկիայում:

Իր հերթին, Բյուզանդիան Հայաստանից Կապադովկիա, Կիլիկիա, Ասորիք, Հյուսիսային Միջագետք էր տեղափոխում հիմնականում արքայական և իշխանական ընտանիքներին: Այսպես Հայաստանից արտագաղթեց նաև Արծրունիների և Բագրատունիների մի մասը:

Հարկադրական արտագաղթի հետևանքով արդեն XI դ. երկրորդ կեսին, Եփրատ գետից արևմուտք գտնվող հայաբնակ շրջաններից բացի, հայերը մեծամասնություն էին կազմում նաև Կիլիկիայի, Կապադովկիայի, Ասորիքի և Հյուսիսային Միջագետքի մի շարք գավառներում:

Կիլիկիայում, հայերից բացի, ապրում էին նաև հույներ, ասորիներ, արաբներ, հրեաներ: Սակայն XI դ. վերջերին Կիլիկիայի ողջ բնակչության գերակշիռ մասը հայերն էին: Նրանք բնակվում էին և՛ Լեռնային, և՛ Դաշտային Կիլիկիայում:

Հայկական իշխանությունների առաջացումը: Վերը նշված շրջաններում հաստատված հայ իշխանների մի մասը ծառայության է անցնում Բյուզանդական կայսրությունում, որոշակի տարածքների կառավարումը հանձնվում էր նրանց: Այս ճանապարհով Բյուզանդիան աշխատում էր ամրապնդել կայսրության արևելյան սահմանները, քանի որ այստեղ հաստատված հոծ հայ բնակչությունն անհրաժեշտության դեպքում կպաշտպաներ այս տարածքները թշնամիների, մասնավորապես սելջուկների հարձակումներից: Այդ իշխաններից էր *Ապլղարիպ Արծրունին*, որը Սենեքերիմ Արծրունու հետ տեղափոխվել էր Սեբաստիա: *1042 թ.* նա նշանակվեց *Կիլիկիայի կառավարիչ* (ստրատեգոս): Նրան էին հանձնվել Աղանա, Մսիս, Տարսոն քաղաքները և Լամբրոն ու Պապեռոն բերդերը: Հետագայում Ապլղարիպ Արծրունին Լամբրոնը և շրջակա գյուղերը նվիրում է Գանձակից Կիլիկիա տեղափոխված Օշին իշխանին, որն ամուսնացել էր նրա աղջկա հետ: Այսպես *Լամբրոն* ամրոցում հաստատվում է Հեթումյան իշխանական տունը:

Կիլիկիա. Ս. Անազարբա ամրոցը

Անիի Բագրատունյաց վերջին թագավոր ***Գագիկ II-ը հաստատվել էր*** Կիլիկիայի սահմանագլխին գտնվող ***Դիզու քաղաքում:*** 1065 թ. Կարսի թագավոր Գագիկ Կարսեցին իր թագավորության դիմաց կայսրից ստացավ Կիլիկյան Տավրոսում գտնվող ***Տամնդավ*** բերդաքաղաքը:

Հայ բնակչության, արքայական ու իշխանական տների և Հայոց եկեղեցու առկայությունը հիմք դարձավ հայկական պետականության վերականգնման համար:

Կիլիկիայում և սահմանամերձ շրջաններում հաստատված հայ իշխանները փորձեցին օգտվել Մանազկերտի ճակատամարտից հետո Բյուզանդիայի թուլացումից և վերականգնել հայոց պետությունը: Նրանցից մեկը՝ բյուզանդական բանակում ծառայող հայ իշխան ***Փիլարտոս Վարազնունին,*** Հյուսիսային Ասորիքում և Կիլիկիայի արևելյան շրջաններում հիմնադրեց ամենաուժեղ և ընդարձակ հայկական իշխանությունը, որը գոյատևեց ***1072–1090 թթ.:*** Նրա կենտրոնը ***Մարաշ*** քաղաքն էր: Հենվելով հիմնականում հայերից կազմված ռազմական ուժի վրա՝ Փիլարտոսը կարողացավ որոշ ժամանակ կանգնեցնել սելջուկների առաջխաղացումը դեպի հայկական իշխանության սահմանները: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Բյուզանդիան ճանաչեց Փիլարտոսի իշխանությունը: Սակայն շուտով սելջուկները գրավեցին համարյա ողջ Դաշտային Կիլիկիան, այդ թվում՝ Տարսոն, Մսիս և Ադանա քաղաքները, իսկ 1084 թ.՝ Անտիոքը: Փիլարտոսի իշխանության վերացումից հետո էլ այստեղ շարունակեցին իրենց գոյությունը պահպանել հայկական մի քանի փոքր իշխանություններ:

Հյուսիսային Ասորիքում և Արևելյան Կիլիկիայում ամենաուժեղ և ընդարձակ հայկական իշխանությունը հիմնադրեց ***Գող Վասիլը:*** Նրա կենտրոնը ***Բեսնին*** քաղաքն էր: Այն գոյատևեց ***1082–1117 թթ.:***

Հայկական այս իշխանությունները չնայած կարճատև կյանք ունեցան, սակայն որոշ ժամանակ խոչընդոտեցին սելջուկների ներթափանցումը Կիլիկիա, որը հնարավորություն տվեց Լեռնային Կիլիկիայում հաստատված հայերին համախմբվելու և ձեռնամուխ լինելու հայկական նոր իշխանության ստեղծմանը:

Հայկական պետության առաջացումը Կիլիկիայում: Հայաստանից դուրս ստեղծված պետական կազմավորումներից ամենակենսունակը ***Ռուբինյան իշխանությունն*** էր: Հայ իշխաններից ***Ռուբենը 1080 թ. Լեռնային Կիլիկիայում*** հիմնադրեց հայկական նոր իշխանություն: Հենվելով այստեղ հաստատված հայերի օժանդակության վրա՝ նա ապստամբություն բարձրացրեց բյուզանդացիների դեմ և ամրացավ Լեռնային Կիլիկիայի ***Կոռոմոզոլ*** բերդում: Կարճ ժամանակահատվածում հայերին հաջողվեց բյուզանդացիներից ազատագրել Լեռնային Կիլիկիայի մի մասը: Այսպես Ռուբեն իշխանը հիմնադրեց հայկական նոր իշխանություն, որը նրա անունով կոչվեց Ռուբինյան:

Ռուբենին հաջորդեց նրա որդի ***Կոստանդինը*** (1095–1100 թթ.): Այսպես նորաստեղծ հայկական իշխանության շրջանակներում լուծվեց քաղաքական կարևորագույն մի խնդիր՝ գահաժառանգության հարցը: Կոստանդինի օրոք հայկական իշխանությունն ավելի ընդարձակվեց և ամրապնդվեց: 1098 թ. նա բյուզանդացիներից խլեց Լեռնային Կիլիկիայի ամենանշանավոր՝ ***Վահկա բերդը*** և դարձրեց իշխանության կենտրոն:

Ռուբինյան իշխանության գոյությանը սպառնում էին ոչ միայն Բյուզանդիան, այլև սելջուկները, ուստի Կոստանդինը հարկադրված էր պայքարել երկու թշնամի-

ների դեմ: Սակայն սկսված խաչակրաց առաջին արշավանքը թշնամիների ուշադրությունը որոշ ժամանակ շեղեց Կիլիկիայից: Սա հնարավորություն տվեց հայերին ամրապնդելու և ընդարձակելու նորաստեղծ իշխանությունը:

Պաղեստինը և Ասորիքը մահմեդականներից ազատագրելու համար Արևմտյան Եվրոպայից խաչակիրները շարժվեցին դեպի Արևելք: Նրանց մի մասը անցնելու էր Կիլիկիայով: 1097 թ. խաչակիրների երկու բանակ մտավ երկիր և ձեռնամուխ եղավ Դաշտային Կիլիկիայի քաղաքների նվաճմանը: Այդ ժամանակ հայոց իշխան Կոստանդինը վերահսկում էր Տավրոսի լեռնանցքները, ուստի խաչակիրները ստիպված էին համագործակցելու նրա հետ:

Խաչակիրների հետ սկսեցին համագործակցել նաև Կիլիկիայում հաստատված մյուս հայ իշխանները, մասնավորապես Լամբրոնի տեր Օշինը և իշխան Բազունին: Սակայն խաչակիրների և հայերի փոխհարաբերությունները միշտ չէ, որ բարեկամական էին: Խաչակիրները հաճախ թալանում և ավերում էին հայկական բնակավայրերը: Նրանք բռնազավթեցին նաև հայ իշխաններին պատկանող տիրույթները Հյուսիսային Ասորիքում և Եփրատի ափերին: Դրանց թվում էին Կուրիս, Կարկառ և Պիր բերդաքաղաքները:

Մանազկերտի ճակատամարտից հետո սելջուկների մի մասը հաստատվել էր Փոքր Ասիայում և այստեղ ստեղծել իրենց պետությունը՝ Իկոնիայի սուլթանությունը: Սելջուկները և այստեղ հաստատված թուրքմենական տարբեր ցեղեր Կիլիկիայի համար դարձան վտանգավոր հարևաններ:

Դաշտային Կիլիկիան գրավելուց հետո խաչակիրները շարժվեցին դեպի Ասորիք և Պաղեստին: ***1098 թ.*** նրանք գրավեցին Եդեսիան և սպանեցին քաղաքի հայազգի կառավարիչ Թորոս Կուրոպալատին: Այստեղ նրանք հիմնեցին խաչակրաց առաջին պետությունը՝ ***Եդեսիայի կոմությունը:*** Նույն թվականին խաչակիրները ստեղծեցին խաչակրաց երկրորդ պետությունը՝ ***Անտիոքի իշխանությունը:*** 1099 թ. նրանք նվաճեցին Երուսաղեմը և հիմնադրեցին խաչակրաց երրորդ պետությունը՝ ***Երուսաղեմի թագավորությունը:*** Հետագայում նրանք ստեղծեցին չորրորդ պետությունը՝ ***Տրիպոլիի կոմությունը:***

Եթե Իկոնիայի սուլթանության և Կիլիկյան Հայաստանի փոխհարաբերություններին սովորաբար բնորոշ էին թշնամանքը և մշտական ռազմական առճակատումը, ապա խաչակիրների հետ հարաբերություններն ավելի բարդ ու խճճված էին: Իրենց առաջին արշավանքի ընթացքում խաչակիրները գրավեցին և կործանեցին հայկական մի շարք իշխանություններ, որից հետո հայ–խաչակրաց ռազմական բախումները կապված էին Դաշտային Կիլիկիայի հետ: Սակայն խաչակրաց պետությունների թուլացմանը զուգահեռ հայ–խաչակրաց հարաբերություններում առավել գերակշռող էին դառնում դաշնակցային պարտավորությունները, քանզի մահմեդական վտանգը հավասարապես սպառնում էր նրանց գոյությանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որտեղ է Կիլիկիան և աշխարհագրական ինչ շրջանների է բաժանվում: Կիլիկիայի քաղաքներում ու գավառներում երբ և ինչու ստեղծվեցին եպիսկոպոսական թեմեր:
2. Ո՞ր դարում մեծացավ հայերի հոսքը դեպի Կիլիկիա, ուրիշ ինչ ժողովուրդներ էին ապրում Կիլիկիայում:
3. Ներկայացրեք Կիլիկիայում հայկական պետության ստեղծման պատմական գործոնները: Ինչն առիթ դարձավ Փիլարտոս Վարաժնունու հայկական իշխանության ստեղծման համար: Ուրիշ ինչ հայկական իշխանություն ստեղծվեց:
4. Հայաստանից դուրս ստեղծված պետական կազմավորումներից որն էր ամենակենսունակը. ով և երբ է այն հիմնադրել: Ինչ հետևանքներ ունեցան խաչակրաց արշավանքները Կիլիկիայի համար:

§ 2. ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ: ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Պայքար Դաշտային Կիլիկիայի համար: Լեռնային Կիլիկիայում ձևավորված Ռուբինյան պետության հետագա գոյատևման համար կարևոր էր Դաշտային Կիլիկիայի նվաճումը: Անհրաժեշտ էր իջնել անմատչելի լեռներից ու գրավել գյուղատնտեսության համար կարևոր կենսական տարածքներ և առևտրական ճանապարհների վրայի քաղաքներ: Պետք էր նվաճել նաև Միջերկրական ծովի ափերի նավահանգիստները: Հակառակ դեպքում լեռներում ծվարած հայկական փոքրիկ պետությունը չէր կարող երկար գոյություն ունենալ: Այս խնդիրները լուծելու համար Կիլիկյան Հայաստանը պայքարի մեջ մտավ Բյուզանդիայի, խաչակիրների և սելջուկների դեմ:

Կոստանդինին հաջորդեց նրա որդի ***Թորոս I-ը (1100-1129 թթ.)***, որը Կիլիկյան Հայաստանի սահմաններն ընդարձակեց դեպի հարավ: 1104 թ. Թորոսը գրավեց Սիս և Անավարզա (Անաբարզա, Անարզաբա) քաղաքները: Նա ամրացրեց ***Անավարզան*** և ***դարձրեց մայրաքաղաք:*** Թորոսը հայոց Գագիկ II թագավորի սպանության վրեժը լուծեց հույն Մանդալեի որդիներից: 1111 թ. նա ձերբակալեց և մահապատժի ենթարկեց երեք եղբայրներին:

1107 թ. Կիլիկիա ներխուժեցին Իկոնիայի սելջուկները: Թորոսի և Գող Վասիլի միացյալ զորքերը Բերդուսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ծանր պարտության մատնեցին նրանց և դուրս քշեցին երկրից:

Թորոսին հաջորդեց նրա եղբայր ***Լևոն I-ը (1129-1137 թթ.):*** Նա ձեռնամուխ եղավ Դաշտային Կիլիկիայի նվաճմանը: Այստեղ հայերը բախվեցին խաչակիրների և բյուզանդացիների հետ: Խաչակիրներն առաջին արշավանքի ժամանակ Դաշտային Կիլիկիայի արևելյան շրջանները խլել էին սելջուկներից և հաստատվել այստեղ:

Լևոնը 1132 թ. բյուզանդացիներից գրավեց Մսիս, Ադանա և Տարսոն քաղաքները: Այսպիսով՝ համառ պայքարից հետո Կիլիկյան Հայաստանը կարողացավ իր սահմանները հարավում հասցնել մինչև Միջերկրական ծով:

Բյուզանդիան չէր կարող հաշտվել Կիլիկիայի և Ասորիքի կորստի հետ, ուստի Հովհաննես Կոմնենոս կայսրը պատրաստվեց վերանվաճելու դրանք:

1137 թ. գարնանը բյուզանդական մի մեծ բանակ կայսեր գլխավորությամբ հայտնվեց Դաշտային Կիլիկիայում: Օգտվելով թվական գերակշռությունից՝ նրանք գրավեցին Տարսոն, Ադանա և Մսիս քաղաքները: Բյուզանդացիները մեծ դժվարությամբ կարողացան գրավել Անավարզան: Լևոնը հայկական փոքրաթիվ ուժերի հետ ամրացավ Վահկա բերդում, որի պաշտպանությունը տևեց վեց ամիս: Ի վերջո Վահկան ևս հանձնվեց: Լևոնը կնոջ և երկու որդիների՝ Ռուբենի ու Թորոսի հետ շղթայակապ տարվեց Կոստանդնուպոլիս:

Կիլիկիայում ստեղծված հայկական պետությունը մի քանի տարով դադարեց գոյություն ունենալուց:

Գերված Լևոնը մահանում է բանտում, իսկ Ռուբենին կայսեր հրամանով մահապատժի են ենթարկում: Թորոսը կարողացել էր շահել կայսեր համակրանքը և ապրում էր արքունիքում: Օգտվելով իր կիսաազատ կարգավիճակից՝ նա փախուստի է դիմում, վերադառնում է Կիլիկիա և գլխավորում հայ ժողովրդի ազատագրական պայքարը: Նրան են միանում նաև իր երկու եղբայրները՝ ***Մլեհը*** և ***Սրեխանեն,*** որոնք բյուզանդական արշավանքի ժամանակ Հալեպում էին ու խույս էին տվել գերությունից:

Թորոս II-ը (1145-1169 թթ.) իր շուրջը համախմբված հայկական փոքրաթիվ զորախմբի հետ պայքար սկսեց բյուզանդացիների դեմ: Մի քանի տարվա ընթացքում նա գրավեց Վահկան, Անավարզան, Մսիսը, Տարսոնը: Սակայն Բյուզանդիան չէր հաշտվում Կիլիկիան կորցնելու մտքի հետ: 1152 թ. Կիլիկիա մտավ բյուզանդական մի մեծ բանակ, որին միացան նաև Արևմտյան Կիլիկիայի հայ իշխանների տրամադրած զորքերը

և պաշարեցին Մսիս քաղաքը: Մթության քողի տակ Թորոսը հակահարձակման անցավ և ջախջախեց բյուզանդական զորքերը:

Թորոս II–ը նշանակալից գործ կատարեց: Նա վերականգնեց հայկական պետությունը և ստեղծեց 30000–անոց բանակ: Նրա կարևոր ձեռնարկումներից էր այն, որ օգնեց հայոց կաթողիկոսությանը տեղափոխվելու Հռոմկլա բերդաքաղաք: Անիի Բագրատունյաց թագավորության անկումից հետո հայոց կաթողիկոսությունը մշտական նստավայր չուներ և տեղից տեղ էր փոխվում: Թորոսի ջանքերով 1151 թ. այն փոխադրվեց ***Հռոմկլա***, ուր մնաց մինչև 1292 թ.:

Թորոս II–ին հաջորդեց եղբայրը՝ ***Մլեհը (1169–1175 թթ.):*** Այդ ժամանակ Դաշտային Կիլիկիան նորից Բյուզանդիայի տիրապետության տակ էր: Միայն նրա արևելյան մի քանի շրջաններ պատկանում էին խաչակիրներին: Երկրի ընդարձակման և հետագա ամրապնդման համար անհրաժեշտ էր ծովեզրյա բոլոր շրջանները ազատագրել հույներից և խաչակիրներից: Այս դժվարին խնդիրն իրագործելու համար Մլեհը դաշնակցեց Հալեպի ամիրայի հետ: Նա խաչակիրներից հետ վերցրեց Դաշտային Կիլիկիայի արևելյան շրջաններում գտնվող բերդերը: 1173 թ. Մլեհը Բյուզանդիայից ազատագրեց ***Ադանա, Մսիս*** և ***Տարսոն*** քաղաքները և ծովափնյա շրջանները:

Մլեհի դաշինքը մահմեդականների հետ ճիշտ հաշվարկած քաղաքականության արդյունք էր: Բազմաթիվ քրիստոնյա տիրակալներ, ելնելով իրենց պետությունների շահերից, համագործակցել և համագործակցում էին մահմեդականների հետ:

Մլեհը բարեկարգեց ***Սիս քաղաքը*** և ***1173 թ. դարձրեց Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք:*** Մլեհի վարած քաղաքականությունը և իրագործած բարեփոխումները նպաստեցին հայոց պետության ամրապնդմանը և հզորացմանը: Սակայն նրա քաղաքականությունից, հատկապես իսլամական երկրների հետ գործակցելու քայլերից դժգոհ բարձրաստիճան հոգևորականները և իշխանները դավադրություն կազմակերպեցին և սպանեցին նրան:

Մլեհին հաջորդեց նրա եղբայր Ստեփանեի որդի ***Ռուբենը*** (1175–1187 թթ.): Օգտվելով Բյուզանդիայի և Իկոնիայի սուլթանության միջև առաջացած թշնամանքից՝ Ռուբենը գրավեց Կիլիկիայի արևմտյան շրջանները: Այսպես Կիլիկիայում վերացվեցին բյուզանդական տիրապետության վերջին հենակետերը:

Քաղաքական իրավիճակը Մերձավոր Արևելքում XII դ. վերջին: Թագավորության հռչակումը: XII դ. վերջին Մերձավոր Արևելքում տեղի ունեցան այնպիսի փոփոխություններ, որոնք զգալի ազդեցություն թողեցին Կիլիկյան Հայաստանի վրա:

Այդ ժամանակ հզորացել էր Եգիպտոսի Այուբյան սուլթանությունը: Սուլթան ***Սալահ ադ Դինը*** (1169–1193 թթ.) Եգիպտոսին միացրեց Ասորիքի և Պաղեստինի մի մասը և պայքար սկսեց խաչակիրների դեմ: 1187 թ. նա պարտության մատնեց խաչակիրներին և գրավեց Երուսաղեմը:

Իկոնիայի սելջուկյան սուլթանությունը նույնպես վերելք էր ապրում և իր հզորության գագաթնակետին էր: Նա զբաղված էր իր տարածքները հիմնականում Բյուզանդիայի հաշվին ընդարձակելով: Իկոնիայի սուլթանությունը և Եգիպտոսը թշնամաբար էին տրամադրված Կիլիկիայի նկատմամբ: Լարված էին նաև Անտիոքի իշխանության և Կիլիկիայի փոխհարաբերությունները:

Այսպիսի իրավիճակում Կիլիկյան Հայաստանում իշխանությունն անցնում է Ռուբենի եղբայր ***Լևոն II–ին*** (1187–1219 թթ.): Նրա կառավարման առաջին շրջանում ստեղծված միջազգային իրավիճակը բարենպաստ էր Կիլիկիայի համար: Միրիոկեֆալոնի ճակատամարտից (1176 թ.) հետո Բյուզանդիան մեկընդմիշտ հրաժարվել էր Կիլիկիայից: Իկոնիայի սուլթանությունը պատրաստվում էր դիմագրավելու խաչակրաց երրորդ արշավանքին:

Երուսաղեմը գրավելուց հետո Եգիպտոսի սուլթանությունը որոշ ժամանակ զբաղված էր խաչակրաց տիրույթների նվաճումով:

Երուսաղեմը մահմեդականներից հետ

Լևոնի բերդը. Կիլիկիա

գրավելու համար 1189 թ. սկսվեց խաչակրաց երրորդ արշավանքը: Լևոն II–ը կապեր հաստատեց խաչակիրների առաջնորդներից մեկի՝ Սրբազան հռոմեական կայսրության (Գերմանիա) կայսր ***Ֆրիդրիխ Շիկամորուսի*** հետ: Լևոնը խոստացավ օգնել խաչակիրներին, իսկ դրա դիմաց կայսրը համաձայնեց նրան ճանաչել Կիլիկիայի թագավոր: Սակայն կայսրը խեղդվեց Կիլիկիայի գետերից մեկում, և Լևոնի թագադրությունը հետաձգվեց:

Այդ ժամանակ Դաշտային Կիլիկիայի արևելյան շրջանների համար նորից խնդիրներ ծագեցին Անտիոքի և Կիլիկիայի միջև: Սահմանային վեճերը լուծելու պատրվակով Անտիոքի իշխան Բոհեմունդ III–ը Լևոնին հրավիրեց Անտիոք: Իրականում նրա նպատակը հայոց իշխանին ձերբակալելն էր: Իմանալով այս մասին՝ Լևոնն ինքը նշանակեց հանդիպման վայրը: Խնջույքի պատրվակով նա Անտիոքի իշխանին հրավիրեց իր մոտ և ձերբակալեց: ***1194 թ. Սիս քաղաքում*** Լևոնի և Բոհեմունդի միջև հաշտության պայմանագիր կնքվեց: Պայմանագրի համաձայն՝ Բոհեմունդը Կիլիկիային վերադարձրեց նրանից խլված տարածքները: Սրա դիմաց առանց փրկագնի նա ազատ արձակեց Անտիոքի իշխանին: Երկու երկրների միջև բարեկամություն հաստատելու համար կողմերը որոշեցին Բոհեմունդի ավագ որդի և ժառանգորդ Ռայմոնդին ամուսնացնել Լևոնի եղբայր Ռուբենի ավագ դուստր Ալիսի հետ: Ծնված արու զավակը պետք է ժառանգեր Անտիոքը և Կիլիկիան: Անտիոքի և Կիլիկիայի միավորմամբ Լևոնը փորձում էր ստեղծել հայ–խաչակրաց միացյալ պետություն:

XII դ. վերջին Կիլիկյան Հայաստանը Մերձավոր Արևելքի ամենաուժեղ քրիստոնյա երկիրն էր: Արտաքին թշնամիների դեմ տարած հաղթանակները և երկրի սահմանների ընդարձակումն ու ամրապնդումը բարձրացրին Լևոն II–ի հեղինակությունը:

Եգիպտոսի հզորացումից ու Երուսաղեմի անկումից հետո խաչակիրների վիճակը խիստ ծանրացել էր: Նրանց օգնելու գործում Արևմտյան Եվրոպան հույսեր էր կապում նաև Կիլիկյան Հայաստանի հետ: Հաշվի առնելով այս ամենը՝ Լևոնը շարունակեց քայլերն արքայական թագ ձեռք բերելու ուղղությամբ: Նա բանակցություններ սկսեց Հռոմի պապի և Սրբազան հռոմեական կայսրության կայսր Հենրիխ VI–ի հետ: Այս անգամ դրանք հաջողությամբ պսակվեցին: 1197 թ. Հենրիխ VI–ը պատվիրակության միջոցով թագ ուղարկեց Լևոնին: Նրան թագ էր ուղարկել նաև Բյուզանդիայի կայսր Ալեքսիոս III Անգելոսը:

Լևոնի թագադրության հարցով շահագրգռված էր նաև պապականությունը, որը փորձում էր Հայոց եկեղեցին ենթարկել հռոմեական կաթոլիկ եկեղեցուն:

Հայոց թագավորության վերականգնման խնդիրը Լևոնի համար այնքան կարևոր էր, որ նա համաձայնվեց առերես կատարելու Հռոմի պապի պահանջները: Իրականում հայկական եկեղեցին ոչ մի զիջում չարեց կաթոլիկ եկեղեցուն:

Լևոն II–ը մեծ հանդիսավորությամբ հայոց թագավոր օծվեց ***1198 թ. հունվարի 6-ին՝ Սուրբ Ծննդյան*** օրը, ***Տարսոն քաղաքի Մայր տաճարում:*** Լևոնին թագավոր օծեց հայոց կաթողիկոս ***Գրիգոր Զ Ապիրատը*** (1194–1203 թթ.): Ուսումնասիրողները Լևոն II իշխանին թագավոր դառնալուց հետո այդուհետ հիշատակում են որպես Լևոն I թագավոր:

Լևոնի գահակալության տարիներին Կի-

լիկյան Հայաստանը վերելք էր ապրում: Կարևոր ձեռնարկումներից մեկը Կիլիկիայի ***Լամբրոն*** անառիկ բերդի գրավումն էր: Նրա նախորդները մի քանի անգամ փորձել էին գրավել այն, սակայն անհաջողության էին մատնվել: 1202 թ. նա Լամբրոնի Հեթում իշխանին հրավիրեց Տարսոն և բանտարկեց: Դրանից հետո Լևոնն առանց կռվի գրավեց բերդը և միացրեց արքունիքին:

Աշխարհագրական դիրքի շնորհիվ Կիլիկիան առևտրական ճանապարհների խաչմերուկում էր, ուստի Լևոնը մեծ ուշադրություն էր դարձնում առևտրի զարգացմանը: Վերաշինվեցին ու բարեկարգվեցին ***Սիսա*** ու ***Կոռիկոս նավահանգիստները:*** Կառուցվեց ոչ միայն ռազմական, այլև առևտրական նավատորմ: Կարգավորվեց երկրի դրամական շրջանառությունը: Լևոնն արտոնություններ շնորհեց Ջենովայի, Վենետիկի և մի շարք այլ քաղաքների վաճառականներին:

Նա մեծ ուշադրություն էր դարձնում նաև մշակույթի զարգացմանը: Թագավորի հրամանով Կիլիկիայում հիմնադրվեցին տարբեր տիպի դպրոցներ: Նա արքունիք էր հրավիրում և հովանավորում գիտության և արվեստի ներկայացուցիչներին:

Լևոն I-ի թագավորության շրջանի կարևոր խնդիրներից մեկը Անտիոքի գահաժառանգության համար մղվող պայքարն էր: Երբ մահացավ Անտիոքի իշխան Ռայմոնդը, նրա և Ալիսի որդի Ռայմոնդ-Ռուբենը դարձավ Անտիոքի իշխանության ժառանգորդը: Սակայն վերջինիս դեմ դուրս



Կոռիկոսի բերդը. Կիլիկիա

եկավ նրա հորեղբայր Բոհեմունդը, որը գրավեց Անտիոքը և իր ձեռքը վերցրեց իշխանությունը: Այդ ժամանակ Լևոնը որոշեց միջամտել Անտիոքի ժառանգության համար մղվող պայքարին և պաշտպանել իր ազգականի շահերը: Կիլիկիայի և Անտիոքի միջև սկսվեց երկարատև պայքար: 1216 թ. Լևոնը գրավեց Անտիոք քաղաքը և իշխանությունը հանձնեց Ռայմոնդ-Ռուբենին, որին հոչակել էր նաև Կիլիկիայի թագաժառանգ: Շուտով նրա գործունեությունից հիասթափված Լևոնը փոխեց իր որոշումը և Կիլիկիայի թագաժառանգ նշանակեց իր մանկահասակ դուստր Զաբելին:

Լևոն թագավորը հայոց պատմության մեջ մնաց որպես ***Լևոն Մեծագործ*** (պատմիչի խոսքերով): Ն-ս մահացավ 1219 թ. և իր հաջորդներին թողեց հզոր մի պետություն:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք Լևոն I-ի գործունեության կարևոր դրվագները:
2. Ինչո՞ւ և ե՞րբ Հովհաննես Կոմնենոս կայսրը շարժվեց Արևելք: Ներկայացրեք Կիլիկիայում հայկական պետությունը վերականգնելու ընթացքը: Ինչ կարևոր ձեռքբերումներ ունեցավ Կիլիկիան Թորոս II-ի օրոք:
3. Ե՞րբ է գահակալել Մլեհը: Ինչ հաջողություններ ունեցավ Կիլիկիան Մլեհի օրոք:
4. Ինչ իրավիճակ էր Կիլիկյան Հայաստանում XII դարի վերջին: Ինչ համաձայնություն էր կայացել Լևոն II-ի և Ֆրիդրիխ Շիկամորուսի միջև: Ինչ ընթացք և ավարտ ունեցավ Լևոն II-ի և Անտիոքի իշխանության միջև ծագած սահմանային վեճը:
5. Արքայական թագ ձեռք բերելու ուղղությամբ Լևոն II-ը ինչ քայլեր ձեռնարկեց: Ո՞վ և ե՞րբ թագավոր օծեց Լևոնին: Ո՞րն է թագավորության հոչակման պատմական նշանակությունը:

§ 3. ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ XIII-XIV ԴԱՐԵՐՈՒՄ

Հեթումյան արքայատոհմի հաստատումը: Հայ-մոնղոլական դաշինքը: Լևոն I թագավորը արու զավակ չուներ և 1216 թ. արքունի խորհրդի համաձայնությամբ թագաժառանգի իրավունքները փոխանցել էր իր դուստր Զաբելին: Վերջինս անչափահաս էր, ուստի նշանակվել էին երեք խնամակալներ՝ հայոց կաթողիկոս Հովհաննես Սսեցին, Ատան պայլը և Կոստանդին Գունդստաբլը: Շուտով Ատան պայլի սպանությունից և կաթողիկոսի մահվանից հետո Կոստանդին Գունդստաբլը մնաց որպես Զաբելի միակ խնամակալ: Այդ ժամանակ հայոց գահին փորձեց տիրանալ Ռայմոնդ-Ռուբենը, որին Լևոնը զրկել էր թագաժառանգի իրավունքներից: Սակայն Կոստանդին Գունդստաբլը կարողացավ ձերբակալել Ռայմոնդ-Ռուբենին, որն էլ բանտում գտավ իր վախճանը:

Հայոց արքունական խորհուրդը որոշեց Զաբելին ամուսնացնել Անտիոքի իշխան Բոհեմունդ IV-ի որդու՝ Ֆիլիպի հետ: Այս ճանապարհով աշխատում էին վերջ դնել Անտիոքի և Կիլիկիայի միջև շարունակվող թշնամանքին: ***Ֆիլիպը*** Կիլիկիա ժամանեց *1222 թ.* և, ամուսնանալով Զաբելի հետ, հռչակվեց հայոց թագավոր: Գահը նրան հանձնվեց որոշակի պայմաններով: Նա երկիրը պետք է կառավարեր հայկական օրենքներով և հարգեր Հայոց եկեղեցու դավանանքը: Սակայն Ֆիլիպը սկսեց արհամարհել հայոց ծիսակարգը և հովանավորել խաչակիրներին: Նա արքունիքից հեռացնում էր հայ իշխաններին, կարևոր պաշտոնները հանձնում խաչակիրներին, կողոպտում էր արքունի գանձերը և դրանք ուղարկում Անտիոք: Զայրացած հայ իշխանները ձերբակալեցին նրան և բանտարկեցին: Բանտում էլ նա թունավորվեց և մահացավ:

Գահակալության խնդիրը լուծելու համար հայ ավագանին Տարսոն քաղաքում ժողով հրավիրեց: Այս անգամ որոշեցին Զաբելին ամուսնացնել Կոստանդին Գունդստաբլի որդի Հեթումի հետ: Այսպիսով՝ *1226 թ. Զաբելի* և *Հեթումի* ամուսնությամբ վերջապես լուծվեց գահակալության խնդիրը: Հեթումը հռչակվեց հայոց թագավոր (1226–1270 թթ.), և հիմք դրվեց Հեթումյանների արքայատոհմին:

XIII դ. կեսերին Մերձավոր Արևելքում տեղի ունեցան քաղաքական նոր փոփոխություններ, որոնք կապված էին մոնղոլական արշավանքների և Եգիպտոսում մամլուքների իշխանության հաստատման հետ:

Մոնղոլական արշավանքները նոր խնդիրներ դրեցին նաև հայկական պետության առջև: Գրավելով Այսրկովկասը և Հայաստանը՝ մոնղոլական հորդաները մտան Փոքր Ասիա: 1243 թ. Զմանկատուկի ճակատամարտում նրանք ծանր պարտության մատնեցին Իկոնիայի սուլթանությանը: Կոստանդին թագավորահայրը մեկնեց մոնղոլների հրամանատար Բաչուի մոտ և առաջարկեց դաշինք կնքել: Մոնղոլներն ընդունեցին այս առաջարկը՝ պայմանով, որ հայոց թագավորն անձամբ մեկնի մոնղոլների մայրաքաղաք Կարակորում:

Իր այցը Մոնղոլիա նախապատրաստելու նպատակով Հեթումն իր եղբայր Սմբատ Գունդստաբլին ուղարկեց Կարակորում: Մոնղոլները համաձայնեցին պահպանելու Կիլիկյան Հայաստանի անկախությունը և տարածքային ամբողջականությունը: Հայերի բարեկամությունը շահելու համար նրանք խոստացան վերադարձնել այն տարածքները, որոնք մահմեդականները խլել էին Կիլիկիայից: Մոնղոլները մասնավորապես պարտավորվեցին ռազմական օգնություն ցույց տալ Կիլիկիային Իկոնիայի սելջուկների հարձակումների ժամանակ:

Հայ-մոնղոլական դաշինքը երկու կողմերին էլ ձեռնտու էր: Մոնղոլները ծրագրել էին գրավել Ասորիքը և Պաղեստինը, ուստի վստահելի դաշնակցի կարիք ունեին: Այդպիսին կարող էր լինել քրիստոնյա Կիլիկյան Հայաստանը:

Հայ-մոնղոլական դաշինքը հաստատե-

լու համար ***Հեթում I-ը 1254 թ. զարնանը*** մեկնեց Կարակորում: Նույն տարվա աշնանը Հեթումը և Մանգու մեծ խանը հաստատեցին հայ-մոնղոլական դաշինքը: Երկու կողմերը պարտավորվում էին միմյանց օգնել պատերազմների ժամանակ: Հայոց նկեղեցիներն ու վանքերն ազատվում էին հարկերից: Այսպես հայոց թագավորը ձգտում էր ստեղծել քրիստոնեա-մոնղոլական դաշինք ընդդեմ մահմեդականների:

Կիլիկյան Հայաստանը մոնղոլների և մամլուքների միջև: 1259 թ. Եգիպտոսում իշխանության գլուխ են գալիս ***մամլուքները:*** Նրանք գնված ստրուկներ էին, որոնք ծառայում էին սուլթանի անձնական գվարդիայում:

1259 թ. մոնղոլները ձեռնամուխ եղան Անտիոքի նվաճմանը, որին մասնակցում էին նաև հայկական զորքերը: Սակայն հաջորդ տարի տեղի ունեցած ճակատամարտում մամլուքները ծանր պարտության մատնեցին դաշնակիցներին: Մամլուքներին անհանգստացնում էր մոնղոլա-հայ-խաչակրաց ռազմաքաղաքական դաշինքը: Անտիոքի իշխանության վրա մի խանի արշավանքներ կազմակերպելուց հետո մամլուքները որոշեցին հարձակվել Կիլիկիայի վրա: 1266 թ. նրանք շարժվեցին դեպի Կիլիկիա: Օգնության համար Հեթումը մեկնեց մոնղոլների մոտ, սակայն նրանք ժամանակին չհասան: Հայ-եգիպտական զորքերի միջև վճռական ճակատամարտը տեղի ունեցավ ***1266 թ. օգոստոսի 23-ին Սև լեռների*** մոտ՝ ***Մառի*** կոչված այրում: Փոքրաթիվ հայկական ուժերը հաջաբար դիմադրեցին, բայց անհավասար մարտում պարտություն կրեցին: Տեսվեց նաև Հեթում I-ի որդի Թորոսը, իսկ մյուս որդի Լևոնը գերի ընկավ: Մամլուքյան բանակներն ավերեցին ու կողոպտեցին երկիրը:

Մառիի ճակատամարտից հետո բարձրացավ նաև խաչակիրների վիճակը: 1268 թ. մամլուքները կարողացան գրավել Անտիոք քաղաքը: Մառիի պարտությունը և Անտիոքի անկումը վերջ դրեցին քրիստոնեա-մոնղոլական դաշինք ստեղծելու Հեթումի ծրագրին: Այս պայմաններում Հեթում I-ը 1270 թ. գահը հանձնեց եգիպտական գերությունից ազատված ***Լևոն II-ին*** (1270–1289 թթ.):

Մամլուքների հարձակումները վերսկսվեցին 1275 թ.: Նրանք ներխուժեցին Կիլիկիա, գրավեցին և ավերեցին Մսիս քաղաքը և շրջապատեցին մայրաքաղաք Սիսը: Սակայն չկարողանալով գրավել միջնաբերդը՝ մեծ ավարով և բազմաթիվ գերիներով վերադարձան: Լևոն II-ը ստիպված էր բանակցություններ սկսել Եգիպտոսի հետ: Վերջապես 1285 թ. տասը տարի ժամկետով զինադադար կնքվեց: Կիլիկիան պարտավորվում էր տարեկան 500 հազար թագավորական արծաթ վճարել Եգիպտոսին: Երկու կողմերը պարտավորվեցին փոխանակել ռազմագերիներին և թույլատրել երկու կողմերի առևտրականների ազատ երթևեկություն երկու պետությունների տարածքում:

1292 թ. մամլուքները պաշարեցին ու գրավեցին հայոց կաթողիկոսանիստ ***Հռոմկլա*** բերդաքաղաքը: Սպանվեցին բազմաթիվ հոգևորականներ, իսկ մյուսները Ստեփանոս Հռոմկլայեցի կաթողիկոսի (1290–1293) հետ գերի տարվեցին: Մամլուքները թալանեցին ու ավերեցին Հռոմկլայի եկեղեցիները: ***Հեթում II թագավորը*** (1289–1306 թթ.) հայոց կաթողիկոսությունը տեղափոխեց Սիս:

Կիլիկիայի համար ստեղծված անբարենպաստ դրությունը շարունակվեց նաև XIV դարի սկզբին: Իրավիճակն ավելի բարդացավ, քանի որ մոնղոլներն ընդունեցին մահմեդականություն, և փոխվեց նրանց վերաբերմունքը քրիստոնյաների նկատմամբ: Այսպիսով՝ մոնղոլա-մամլուքյան հակամարտությունն ի վերջո ավարտվեց մամլուքների հաղթանակով:

Ստեղծված ծանր իրավիճակից դուրս գալու համար Կիլիկյան Հայաստանը սկսեց բանակցություններ վարել Բյուզանդիայի, Արևմտյան Եվրոպայի երկրների և պապականության հետ: Օգնության դիմաց հայերը խոստանում էին որոշ զիջումներ

կատարել հունական և հռոմեականաթոլիկական եկեղեցիներին: Այս խնդիրը քննարկվեց *1307 թ. Սիս* քաղաքում հրավիրված ժողովում: Այստեղ որոշեցին ընդունել Քաղկեդոնի երկաբնակության դավանանքը և Հայոց եկեղեցու ծեսերի ու արարողությունների մի մասը վերափոխել և հարմարեցնել հունական ու կաթոլիկ եկեղեցիների դավանանքին: Եկեղեցիների միավորման ճանապարհով հայոց արքունիքն աշխատում էր ստեղծել քրիստոնեական երկրների դաշինք ընդդեմ մահմեդականների:

Կիլիկիայում տեղակայված մոնղոլական զորքերի հրամանատար Բիլարղուն 1307 թ. հյուրասիրության նպատակով Անավարզա հրավիրեց հայոց թագավոր Լևոն III-ին, նախկին թագավոր Հեթում II-ին և 40 հայ իշխանների ու սպանել տվեց նրանց: Հեթում II-ի մյուս եղբայր *Օշինը* կարողացավ մոնղոլներին դուրս քշել Կիլիկիայից և երկրի կառավարումը վերցնել իր ձեռքը (1308–1320 թթ.):

Այդ ժամանակ լարված իրավիճակ ստեղծվեց նաև Կիլիկյան Հայաստանի ներքաղաքական կյանքում: Երբ Օշին թագավորը և Կոստանդին Կեսարացի կաթողիկոսը փորձեցին իրագործել Սսի ժողովի որոշումները, հանդիպեցին հայ բնակչության համառ դիմադրությանը: Մայրաքաղաքում տեղի ունեցան բողոքի ցույցեր, որոնց մասնակիցները պահանջում էին հրաժարվել Սսի ժողովի որոշումները կենսագործելուց: Եկեղեցիների միավորման հակառակորդների մի մասին ձերբակալում և աքսորում են Կիպրոս կղզի, իսկ մյուսներին բանտարկում են: Բուն Հայաստանում նույնպես հրաժարվում են Սսի և Ադանայի ժողովների որոշումները կատարելուց: Իմանալով այս մասին՝ պապականությունը պահանջում է նոր ժողով հրավիրել և վերահաստատել նախորդ ժողովների որոշումներն ու դրանք իրագործել: Արևմուտքից օգնություն ստանալու ակնկալիքով Օշին թագավորն ու Կոստանդին կաթողիկոսը 1317 թ. Ադանայում նոր ժողով հրավիրեցին, որը վերահաստատեց նախորդ

Հռոմկլայի համայնապատկերը և Եփրատ գետի Մեզպան վտակը

ժողովների որոշումները: Այսպես հայ հասարակության մեջ առաջացավ մի խմբավորում, որը փորձում էր Հայոց եկեղեցին միավորել քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ: Այն ստացավ *ունիթորներ* (միարարներ) անվանումը: Ունիթորների և *հակաունիթորների* պայքարը խախտեց Կիլիկիայի հասարակության միասնությունը և թուլացրեց երկիրը:

Կիլիկյան Հայաստանի թուլացումը և անկումը: Օշին թագավորի մահից հետո գահն անցավ նրա որդի *Լևոն IV-ին* (1320–1342 թթ.): Քանի որ նա անչափահաս էր, երկիրը կառավարում էին խնամակալները:

1320 թ. մամլուքները կրկին հարձակվեցին Կիլիկիայի վրա: Նրանք պաշարեցին Սիս քաղաքը, սակայն հանդիպելով ուժեղ դիմադրության՝ չկարողացան գրավել:

1321 թ. Կիլիկիա ներխուժեցին Իկոնիայի սուլթանության տարածքում տեղակայված մոնղոլական զորքերը և թուրքմենները: Նրանց 30-հազարանոց բանակը հասավ Ադանա և Սիս: Թշնամին շուրջ մեկ ամիս շարունակ ավերում էր երկիրը: Հաջորդ տարի Կիլիկիա արշավեցին մամլուքները: Նրանց հաջողվեց գրավել *Սիսն* նավահանգիստը և ավերել ցամաքային ու ծովային ամրությունները: Եգիպտոսի հետ

հաշտության պայմանագիր կնքելու համար հայոց կաթողիկոս Կոստանդին Լամբրոնացին մեկնում է Կահիրե: 1323 թ. մայիսի 31-ին կնքվում է հայ-եգիպտական հաշտության պայմանագիրը: Կիլիկիան պարտավորվում էր Եգիպտոսին տարեկան վճարել 12 մլն արծաթ դիրհեմ՝ Այաս նավահանգստից, ինչպես և օտարերկրացիներին վաճառած աղից ստացված եկամուտների կեսը: Եգիպտոսը պարտավորվում էր զորքերը դուրս բերել Կիլիկիայից և վերաշինել ավերված քաղաքները, բացի Այաս նավահանգստի ծովային ամրություններից:

1335 թ. մամլուքները գրավեցին ու ավերեցին Տարսոն, Ադանա, Այաս և Մսիս քաղաքները: Լևոն IV-ը 1337 թ. ստիպված եղավ ծանր պայմաններով հաշտության պայմանագիր կնքել: Կիլիկիան հարկադրված էր որոշ տարածքներ ու բերդեր զիջել միայն մամլուքներին: Պետության համար այսպիսի ծանր իրավիճակում էլ հանկարծամահ եղավ Լևոն IV-ը:

Լևոնը ժառանգներ չուներ, ուստի արքունական խորհուրդը որոշեց գահը հանձնել նրա հորաքրոջ որդուն՝ ***Գվիդոն Լուսինյանին***, որն այդ ժամանակ Բյուզանդիայում էր: Լուսինյանները ֆրանսիական ծագում ունեին և կառավարում էին Կիպրոսում: Սա քաղաքական որոշում էր, որի միջոցով փորձ էր արվում Կիլիկիայի համար ապահովելու Կիպրոսի և Արևմուտքի ռազմաքաղաքական օժանդակությունը: Սակայն Գվիդոն Լուսինյանի կառավարումը կարճ տևեց: 1344 թ. նա իր եղբայր Բոհեմունդի և 300 ֆրանկ ասպետների հետ սպանվեց Ադանա քաղաքում: Արքունի խորհուրդը որոշեց թագավոր ընտրել Պաղտին Մարաջախտի որդի ***Կոստանդինին*** (1344-1362 թթ.): Այսպես հայոց գահն անցավ Հեթումյաններին ազգակից Նղրեցիներին:

1360 թ. մամլուքները վերջնականապես գրավեցին Տարսոն և Ադանա քաղաքները:

Դաշտային Կիլիկիան նվաճելուց հետո նրանք վճռեցին գրավել նաև Լեռնային Կիլիկիան: Մամլուքների 60-հազարանոց բանակը շարժվեց Լեռնային Կիլիկիա և պաշարեց ***Սիս մայրաքաղաքը***: Մարտերում իրենց կատարած քաջագործություններով աչքի ընկան Լիպարիտ սպարապետը, Հեթում և Զարմանդուխտ ամուսինները: Հերոսական ջանքերի շնորհիվ հայերը կարողացան անառիկ պահել մայրաքաղաքը:

Գիտակցելով, որ քրիստոնյա երկրները չեն օգնելու Կիլիկիային, ***Մեսրոպ Արբազեցի*** կաթողիկոսը (1359-1372 թթ.) ***1361 թ. Սիսում*** հրավիրում է ***եկեղեցական ժողով***, որը չեղյալ է հայտարարում Սսի և Ադանայի նախորդ ժողովների որոշումները:

1373 թ. հայոց գահը կրկին թափուր է մնում: Արքունի խորհուրդը որոշում է այն հանձնել Գվիդոն Լուսինյանի եղբորորդի ***Լևոն V-ին*** (1373-1375 թթ.), որն այդ ժամանակ Կիպրոսում էր: Նա մեծ դժվարությամբ հասնում է Սիս և օծվում հայոց թագավոր: Այդ ժամանակ հայկական թագավորությունը, բացի մայրաքաղաքից, ընդգրկում էր Անավարզա քաղաքը և մի քանի բերդեր Լեռնային Կիլիկիայում: Մամլուքները և կարամանները (թուրքմենական ցեղ) կրկին պաշարում են մայրաքաղաքը: Պաշարվածները, դրսից ոչ մի օգնություն չստանալով, հրկիզում են քաղաքը և քաշվում միջնաբերդ: Ռազմամթերքի և սննդամթերքի պակասը ստիպում է ***1375 թ. ապրիլի 16-ին*** հանձնել նաև միջնաբերդը: Գերյալների թվում էին նաև Լևոն Լուսինյանը և իր ընտանիքը, Պողոս Սսեցի կաթողիկոսը: Նրանց հատուկ հսկողությամբ տարան Կահիրե: Սուլթանը հայոց կաթողիկոսին թույլատրեց վերադառնալ Կիլիկիա, իսկ Լևոն V-ին արգելեց թողնել Կահիրեն: Հետագայում նա ևս գերությունից ազատվեց և տեղափոխվեց Արևմտյան Եվրոպա: Հայոց վերջին թագավորը մահացավ 1393 թ. Փարիզում:

Սսի անկումից հետո Կիլիկիայում իր գործունեությունը շարունակում էր հայոց կաթողիկոսությունը:

Հայոց պետականության անկումից հետո Կիլիկիայում դեռ երկար ժամանակ իրենց գոյությունը պահպանում էին մեծ թվով հայ իշխանական տներ:

Սակայն նեղվելով կարամանների և

մամլուքների միջև անընդհատ պատերազմներից ու ծանր հարկերից՝ Կիլիկիայի հայ բնակչության և իշխանների մի մասը ստիպված հեռացավ հայրենիքից: Նրանք հիմնականում հաստատվեցին Կիպրոսում, Իտալիայում, Ֆրանսիայում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Երբ է գահակալել Հեթում I-ը: Ինչպես Հեթումյաններն ամրապնդեցին թագավորական իշխանությունը Կիլիկիայում:
2. Քաղաքական ինչ փոփոխություններ կատարվեցին Մերձավոր Արևելքում XIII դարի կեսերին: Երբ և ինչ պայմաններով կնքվեց հայ-մոնղոլական դաշինքը:
3. Ներկայացրեք Կիլիկիայի և մամլուքների միջև 1266 թ. սկսված պատերազմի ընթացքը և հետևանքները: Ինչ հետևանքներ ունեցավ մամլուքների կողմից 1292 թ. Հռոմկլա բերդաքաղաքի գրավումը:
4. Ինչ իրավիճակ էր Կիլիկիայում XIV դարի սկզբին: Ինչո՞ւ առաջացավ ունիթորական (միարարական) խմբավորումը. ինչ հետևանք դա ունեցավ:
5. Ինչ ընթացք և արդյունքներ ունեցավ արտաքին թշնամու դեմ պայքարը XIV դ. առաջին կեսին:
6. Ինչ որոշում կայացրեց Սսի 1361 թ. եկեղեցական ժողովը: Հիմնավորեք այդ որոշման անհրաժեշտությունը: Ինչ ճակատագիր ունեցավ Կիլիկիայի վերջին թագավոր Լևոն V-ը:

§ 4. ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Հողատիրության տիպերը: Գյուղական համայնքը: Կիլիկիայի բարենպաստ բնակլիմայական պայմանները հնարավորություն էին տալիս զբաղվելու երկրագործությամբ և անասնապահությամբ: Երկրագործության բնագավառում առաջնակարգ տեղ ունեին հացահատիկային բույսերի մշակումը և այգեգործությունը: Դաշտային Կիլիկիայի որոշ շրջաններում մշակում էին նաև մերձարևադարձային մի քանի բուսատեսակներ:

Անասնապահությունը հատկապես զարգացած էր Լեռնային Կիլիկիայում: Այստեղ պահում էին ձիեր, ջորիներ, խոշոր ու մանր եղջերավոր անասուններ և ընտանի թռչուններ: Անասնապահության մեջ առավել զարգացած էր ձիաբուծությունը: Կիլիկիայից արտահանում էին ձիեր, ջորիներ, կաշի, բուրդ:

Ընկերային-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան Հայաստանում ավելի բարդ ձևեր ընդունեցին, քան դրանք գոյություն ունեին բուն Հայաստանում: Մինչև Ռուբինյան իշխանության հաստատումն այստեղ բնակվում էին մեծ թվով հույն և հայ իշխաններ: Հետագայում Կիլիկիայում հաստատվում են նաև խաչակիրներ, որոնք ռազմական ծառայության դիմաց հողեր էին ստանում: Ստեղծված պայմաններում Կիլիկյան Հայաստանում ձևավորվում էին ***հողատիրության մի քանի տիպեր՝ արքունական, իշխանական, վանքապատկան, համայնական:***

Թագավորին պատկանող հողերը, քաղաքները, բերդերը կոչվում էին թագավորական կամ արքունի: Կիլիկյան Հայաստանում, ինչպես և Երուսաղեմի ու Կիպրոսի խաչակրաց թագավորություններում արքունի տիրույթները պատկանում էին ոչ միայն թագավորին, այլև արքայական ընտանիքի բոլոր անդամներին:

Կիլիկիայում հաստատված իշխանների մի մասն ուներ որոշակի տարածքներ, որոնց տիրում էին ժառանգաբար՝ մասնավոր սեփականության իրավունքով: Այս տարածքները կոչվում էին ***հայրենիք***, իսկ սրանց տերերը՝ հայրենատեր-բերդատե-

ներ: Խոշոր հայրենատերերի թիվը Կիլիկիայում XII դ. վերջին հասնում էր 45-ի, իսկ հետագայում նվազում է:

Թագավորը և հայրենատեր-բերդատերերը որոշակի պայմանով, մասնավորապես զինվորական ծառայության դիմաց առանձին մարդկանց հողեր էին տրամադրում: Այս հողերը ժառանգաբար էին անցնում, բայց միևնույն ժամանակ պայմանական էին, քանզի ստացողի սեփականությունը չէին և պայմաններից որևէ մեկի խախտման դեպքում հետ էին վերցվում:

Կիլիկիայում կար շուրջ *150 վանք ու եկեղեցի*, որոնք ունեին հսկայական չափերի հասնող հողատարածքներ: Վանքապատկան հողատիրությունը հիմնականում առաջանում էր գնման և նվիրատվությունների հաշվին: Կիլիկիայի հայ թագավորներն ու իշխանները ևս բազմաթիվ հողային նվիրատվություններ էին կատարում հօգուտ եկեղեցու:

Կիլիկիայում գոյություն ուներ նաև համայնական հողատիրություն: Համայնքին պատկանող հողերի մի մասը որոշակի պայմաններով գյուղացիներին տրվում էր օգտագործման համար: Տնամերձ հողերը համարվում էին գյուղացիների սեփականությունը:

Միջնադարի հասարակության կազմակերպման առանձնահատկություններից մեկն այն էր, որ յուրաքանչյուր մարդ ներկայանում էր որպես որևէ խմբի անդամ: Մարդը հասարակական կյանքին մասնակցում էր այն խմբի միջոցով, որին ինքը պատկանում էր:

Գյուղական բնակչության կազմակերպման հիմնական ձևը համայնքն էր: Որպես համայնք սովորաբար հանդես էր գալիս մեկ գյուղը: Սակայն երբեմն մեկ համայնքի մեջ մտնում էին մի քանի գյուղեր: Գյուղացին հասարակության մեջ ներկայանում էր համայնքի միջոցով: Համայնքն ընկերային, հարկային, ռազմավարական ու թեմական միավոր էր և կարգավորում էր գյուղացու հարաբերությունները պետության, հողատիրոջ և եկեղեցու հետ: Նա կարգավորում էր նաև գյուղի բնակիչների փոխհարաբերությունները միմյանց հետ:

Գյուղական համայնքը որոշակի ինքնավարությամբ օժտված վարչական միավոր էր: Գյուղի ներքին կյանքի հետ կապված խնդիրները տնօրինում էր համայնքը: Դրանք էին հարկերի և ռազմական պարտավորությունների բաշխումն ըստ ընտանիքների և հողաբաժանությունը: Համայնքի կարևոր խնդիրները լուծելու համար հրավիրում էին համայնքի անդամների ժողով, որն ընտրում էր նաև գյուղի տանուտեր:

Յուրաքանչյուր համայնք ուներ իր եկեղեցին կամ մատուռը, որը նվիրված էր լինում գյուղը հովանավորող որևէ սրբի: Գյուղական եկեղեցին զբաղվում էր համայնքի հոգևոր խնդիրներով: Նա էր տնօրինում ծննդյան, հարսանիքի, թաղման և գյուղում կատարվող այլ արարողությունները: Սովորաբար եկեղեցուն կից կար դպրոց, ուր գյուղի երեխաները սովորում էին գրել, կարդալ, հաշվել, երգել:

Արհեստները, առևտուրը, քաղաքները: Արհեստագործության զարգացմանը խթանում էին բազմատեսակ հումքի և օգտակար հանածոների առկայությունը և ներքին ու արտաքին առևտրի աճը:

Կիլիկիան Արևելք-Արևմուտք ցամաքային և ծովային տարանցիկ առևտրական ճանապարհների խաչմերուկում էր: Միջերկրական ծովի նավահանգիստները տարանցիկ առևտրի համար շատ հարմար դիրք ունեին:

Քաղաքների զարգացման համար որոշակի էր նաև խաչակրաց արշավանքների դերը, քանի որ դրանք միջազգային առևտրական հարաբերությունների աշխուժացման խթան էին:

Կիլիկյան Հայաստանի քաղաքային կյանքի աշխուժացման և առևտրի զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ մոնղոլական կայսրության ստեղծումը, որը ձգվում էր Չինաստանից մինչև Միջերկրական և Սև ծովերը: Մոնղոլական տերության տարածքով անցնող առևտրական ճանապարհների մի մասն ավարտվում էր մոնղոլների դաշնակից Կիլիկիայում: Այստեղի նավահանգիստներից էլ



Այասի ծովային ամրոցը

սկսվում էր ծովային առևտրական ուղին դեպի Եվրոպա:

Կիլիկյան Հայաստանի նշանավոր քաղաքներից էին ***Սիսը, Տարսոնը, Այասը, Մամիսը, Կոռիկոսը, Ադանան, Անավարզան:*** Բոլոր քաղաքները ներառված էին արքունական տիրույթների մեջ և կոչվում էին ***թագավորական քաղաքներ:*** Սրանք կառավարում էին թագավորի նշանակած հատուկ պաշտոնյաները՝ ***կապիտանները:***

Կիլիկյան Հայաստանը միջազգային առևտրին մասնակցում էր գյուղատնտեսական և արհեստագործական ապրանքներով: Երկրից արտահանում էին երկաթ, շինափայտ, կաշի, բուրդ, ձիեր, հացահատիկ, աղ: Առևտրի զարգացմանը նպաստում էին հայոց թագավորների կողմից եվրոպացի վաճառականներին տրված առևտրական արտոնությունները: Այսպես՝ 1201 թ. արտոնություններ ստացան ջենովացիները, 1271 թ.՝ վենետիկցիները, իսկ 1335 թ.՝ ֆլորենցիացիները:

Քաղաքային բնակչության մի մասը զբաղվում էր արհեստագործությամբ: Արհեստավորները ստեղծում էին իրենց կազմակերպությունները՝ ***համքարությունները*** (եղբայրություն): Քաղաքի սահմաններում միևնույն մասնագիտության արհեստավորները միավորվում էին մեկ համքարության մեջ:

Արհեստի և առևտրի զարգացման համար խիստ կարևոր էր նաև դրամաշրջանառության կազմակերպումը: Դրամների թողարկումը սկսվել էր դեռևս Ռուբինյան իշխանության շրջանում և շարունակվել մինչև պետության կործանումը: Հիմնական դրամական միավորը արծաթե դրամն էր: Կային նաև պղնձե դրամներ: Արծաթե դրամը, որը կոչվում էր թագավորական, օգտագործել են նաև այլ երկրներում:

Արքունիքը և բանակը: Պետության կառավարման գլխավոր մարմինն արքունիքն էր: Նրա մեջ մտնում էին ***արքունի խորհուրդը, բարձրագույն դատական ատյանը*** և ***գործակալությունները:***

Արքունիքի գլուխ սկզբում կանգնած էր իշխանաց իշխանը, իսկ 1198 թվից՝ հայոց թագավորը: Նրանք էին պատերազմ հայտարարում, հաշտություն և դաշինք կնքում, քաղաքներ և ամրոցներ հիմնադրում, դրամներ հատում և լուծում գահաժառանգության խնդիրը:

Երկրի կառավարումը թագավորն իրականացնում էր գործակալությունների միջոցով: Նրանք տասից ավելի էին: Գործակալությունների մի մասը նման էր Հայաստանում ստեղծված կենտրոնական կառավարման մարմիններին, իսկ մյուսները նոր էին:

Թագավորության հռչակումից հետո վերականգնվեց նաև ***թագադիր*** գործակալությունը: Հանդիսությունների ժամանակ նա էր թագ դնում թագավորի գլխին, կապում արքայական նշանները, հետևում նաև արքունի կարգ ու կանոնի պահպանմանը:

Խնամակալության (պայլության) գործակալությունը գոյություն ուներ դեռևս իշխանության շրջանում: Գործակալը կոչվում էր պայլ: Նա թագավորի առաջին խորհրդականն էր, իսկ արքայի բացակայության դեպքում փոխարինում էր նրան: Թագավորի անչափահասության դեպքում պայլը իրականացնում էր ոչ միայն նրա, այլև ամբողջ երկրի խնամակալությունը:

Կենտրոնական կառավարման համակարգում մեծ էր արքունի պալատի կառավարչի՝ ***սենեսկալի*** դերը: Նա էր տնօրինում արքունի եկամուտները և ծախսերը:

Գործակալությունների մեջ բավական ազդեցիկ տեղ էր գրաղեցնում ***արքունի քարտուղարությունը,*** որի գլխավոր պաշ-

տոնյան կոչվում էր *կանցլեր*: Նա էր ղեկավարում բանակցություններն օտար երկրների ներկայացուցիչների հետ: Սովորաբար այս պաշտոնը տրվում էր Սսի արքեպիսկոպոսին կամ կրթված և լեզուներ իմացող այլ հոգևորականի: 1260–1289 թթ. այն զբաղեցնում էր ոչ թե Սսի արքեպիսկոպոսը, այլ *Վահրամ Բաբունի* վարդապետը, որը նաև փիլիսոփա էր:

Պետության զինված ուժերը կազմակերպելու և ղեկավարելու համար ստեղծվել էր երեք գործակալություն՝ *սպարապետություն, սպասապարություն* և *մարաջախտություն*: Սպարապետին Կիլիկիայում հաճախ անվանում էին նաև *գունդապետ*: Նա բանակի ընդհանուր հրամանատարն էր: Սպարապետությունը Կիլիկիայում չի եղել որևէ իշխանական տան ժառանգական պաշտոնը: Այդ պաշտոնին, որպես կանոն, նշանակում էին առավել բանիմաց և ունակ զորահրամանատարների: Բանակում մեծ էր արքունական հեծելազորի հրամանատարի՝ սպասալարի դերը: Բանակի սպառազինությամբ և պարենի մատակարարմամբ զբաղվում էր մարաջախտությունը, որի ղեկավարը կոչվում էր մարաջախտ: Նա սպարապետի անմիջական տեղակալն էր:

Կիլիկիայի հայկական պետությունն իր գոյատևման ամբողջ ընթացքում միշտ պատերազմների մեջ էր, ուստի կանոնավոր և ուժեղ բանակ ունենալն անհրաժեշտություն էր: Մշտական բանակի կազմակերպումը սկսվեց դեռևս Ռուբինյան առաջին իշխանների օրոք:

Հայոց թագավորների և իշխանների հետ Կապադովկիա, Կիլիկիա և Հյուսիսային Միջագետք էր տեղափոխվում նաև նրանց ռազմական ուժերի մի մասը: Հայ իշխանների մի մասը, Բյուզանդիայից ստանձնելով սահմանամերձ շրջանների և բերդերի պաշտպանությունը, ստեղծում էր մշտական և մարտունակ բանակ: Ռուբինյան իշխանության առաջացումից հետո հայոց իշխանների զորքերն անհրաժեշտության դեպքում ներառվում էին պետական բանակի կազմում: Կիլիկյան Հայաստանի բանակում հատուկ տեղ էին զբաղեցնում հոգևոր–ասպետական միաբանությունների զորքերը: Զինվորական ծառայության դիմաց սովորաբար Կիլիկիայի սահմանամերձ շրջաններում նրանց տալիս էին բերդեր և հողատիրույթներ: Այսպես՝ *Հիվանդախնամների միաբանությունը* ստացած տիրույթների դիմաց պարտավորվել էր ամեն տարի տրամադրել 400 հեծյալ ռազմիկ:

Պատերազմների ժամանակ գյուղացիներից և քաղաքացիներից հավաքագրվում էր նաև *աշխարհազոր*:

Կանոնավոր բանակի հիմնական կորիզը հեծելազորն էր: Կիլիկիայում ևս սահմանվել էր *ասպետի (ձիավորի)* աստիճանը: Այն ստանալու համար անհրաժեշտ էր քննություն հանձնել ձիավարժությունից, նետաձգությունից, նիզակի և սրի գործածությունից և զինվորականի համար անհրաժեշտ այլ գիտելիքներից ու հմտություններից:

Մշտական բանակ պահելու համար Կիլիկյան Հայաստանում ևս մտցվեց ռազմական հարկ: *Պատերազմի ժամանակ Կիլիկյան Հայաստանը կարող էր ռազմադաշտ դուրս բերել 80–100 հազար զինվոր:*

Հայոց բանակում մեծ տեղ ուներ նաև *ռազմական նավատորմը*: Առանց նրա օգնության անհնար էր պաշտպանել պետության ծովային սահմանները: Այն անհրաժեշտ էր նաև ծովային առևտրի անվտանգությունն ապահովելու համար: Ռազմական նավատորմի համար կառուցվել էին ծովային հատուկ ամրություններ: Դրանց մեջ հատկապես մեծ էր Այասի և Կոռիկոսի ծովային բերդերի նշանակությունը:

Դատական համակարգը: Մինչև հայկական պետականության առաջացումը Կիլիկիան Բյուզանդիայի կազմում էր և կառավարվում էր կայսրության իրավանորմերով: Հայկական պետականության հաստատումից հետո էլ այստեղ մեծ թվով հույներ էին ապրում, որոնց հասարակական–քաղաքական կյանքը որոշ ժամանակ դեռևս կարգավորվում էր հունա–բյուզանդական իրավունքով: Կիլիկիայում բնակություն էին հաստատել նաև մեծ թվով արևմտաեվրո-

պացիներ՝ խաչակիրներ, որոնք այստեղ էին բերել իրենց օրենսդրությունը:

Մինչև հայկական պետության ստեղծումը Կիլիկիան բաղկացած էր առանձին իշխանություններից, ուստի դատական կենտրոնական մարմիններ և համապետական օրենսդրություն չուներ: Յուրաքանչյուր իշխանություն ուներ սեփական դատարան, որը համարվում էր այդ շրջանի բարձրագույն դատական մարմինը: Բացի իշխանական դատարաններից, տեղական դատական մարմինների դեր կատարում էին նաև եկեղեցական դատարանները, որոնք առաջնորդվում էին կանոնական իրավունքով: Սակայն կանոնական իրավանորմերը բավարար չէին հասարակական ողջ կյանքը կարգավորելու համար, ուստի ***Տարսոնի արքեպիսկոպոս Ներսես Լամբրոնացին*** հունարենից թարգմանում է հունա–բյուզանդական իրավունքի մի շարք երկեր: Հայկական պետականության ամրապնդմանը զուգահեռ անհրաժեշտ էր այս բոլորը միավորել և ստեղծել միասնական, համապետական օրենսդրություն: Այս խնդիրը լուծեց Հեթում I թագավորի եղբայր ***Սմբատ սպարապետը:*** Նրա կազմած ***«Դատաստանագիրքը»*** միավորեց հայկական, հունական և խաչակրաց իրավանորմերը և հարմարեցրեց Կիլիկիայում ձևավորված պայմաններին:

Կիլիկյան Հայաստանի դատարաններում օգտագործել են նաև Անտիոքի իշխանությունում ստեղծված ***«Անտիոքի ասիզներ» օրենսգիրքը:***

Գոյություն ունեին հետևյալ դատարանները. ***արքունի, Սսի արքեպիսկոպոսական, ստորին կամ փոքր, եկեղեցական:***

Արքունի դատարանը՝ որպես դատական բարձրագույն մարմին, քննում էր պետական նշանակության կարևորագույն գործերը: Դրանց թվում էին՝ իշխանների միջև ծագած վեճեր, գահաժառանգության, հայրենիքի դավաճանության, թագավորի դեմ կազմակերպված դավադրության և այլ խնդիրներ: Արքունի դատարանի նախագահը թագավորն էր, իսկ նրա բացակայության դեպքում՝ իշխանաց իշխանը:

Իր նշանակությամբ կարևոր տեղ էր զբաղեցնում Սսի արքեպիսկոպոսական դատարանը: Այստեղ հիմնականում քննում էին բարձրաստիճան հոգևորականներին վերաբերող գործերը, քրիստոնյաների և այլադավանների միջև առաջացած վեճերի հարցերը: Սսի արքեպիսկոպոսական դատարանը նախագահում էր Սսի արքեպիսկոպոսը:

Ստորին կամ փոքր դատարանները քաղաքներում և գավառներում էին ու քննում էին տեղական նշանակություն ունեցող տարաբնույթ հանցագործություններ և իրավախախտումներ:

Եկեղեցական դատարանները Կիլիկիայում ևս պահպանվեցին: Այստեղ հիմնականում քննում էին ամուսնական հավատարմության, ամուսնալուծության, կենցաղային իրավախախտումների, եկեղեցական հարկերի մուծման կարգի խախտման և այլ գործեր:

Այսպիսով՝ Կիլիկյան Հայաստանում ստեղծվել էր ճյուղավորված և լավ կազմակերպված դատական համակարգ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Տնտեսության ինչ ճյուղեր էին զարգացած Կիլիկիայում: Հողատիրության ինչ տեսակներ էին ձևավորվել: Ո՞րն էր գյուղական բնակչության կազմակերպման հիմնական ձևը:
2. Ի՞նչն էր նպաստում արհեստագործության զարգացմանը: Թվարկեք Կիլիկիայի նշանավոր քաղաքները. ինչո՞ւ էին դրանք կոչվում թագավորական, և ովքե՞ր էին կառավարում:
3. Առևտուրը զարգացնելուն միտված ինչ քայլեր ձեռնարկեցին հայոց թագավորները:
4. Ներկայացրեք գործակալությունները և նրանց գործառույթները:
5. Ո՞վ էր ասպետը (ձիավորը), ինչպե՞ս էին դառնում ասպետ: Ի՞նչ միջոցների հաշվին էր պահվում մշտական բանակը, որքա՞ն էր նրա թիվը պատերազմի ժամանակ:
6. Ներկայացրեք Կիլիկյան հայոց թագավորության դատական համակարգը:

ԲԱԺԻՆ 3 ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Թեմա 1. ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ (XV դ.–XVII դ. առաջին կես)

§ 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ XV ԴԱՐՈՒՄ

Օտար տիրապետության հետևանքները: Հայոց անկախ պետականության կորուստը և Հայաստանում օտար տիրապետության հաստատումը ծանր հետևանքներ ունեցան հայ բնակչության բոլոր խավերի կյանքում:

Սեփականության իրավունքի, դատաստանի ու դատավարության բնագավառում հայոց ազգային համակարգի կազմալուծումը և հայկական միջավայրում օտար համակարգի պարտադրումը գործուն լծակ դարձան նվաճողների կողմից հայ իրականության մեջ ներթափանցելու, հայ հասարակությունը պառակտելու և օտար լծի դեմ հասարակական դիմադրությունը ջլատելու համար:

Օտար տիրապետության հաստատումը ***հանգեցրեց հայ ավատատերերի՝ հողի սեփականության իրավունքի կորստին*** ու դրանով պայմանավորված՝ նաև ***հայրենիքի գաղափարի թուլացմանը:*** Օտար դավանանքի վրա խարսխված կառավարման համակարգի ներդրումը, հողի սեփականության իրավունքի անցումն արևելյան բռնատիրության հարափոփոխ իշխանությանը, քոչվորական ցեղախմբերի ներհոսքը Հայաստան միանգամայն անհուսալի և անպաշտպան էին դարձնում անձի ու գույքի որևէ երաշխիք, նպաստում բնակչության ունեզրկմանը և սեփական բնակավայրերը լքելուն:

Պետականության կորուստն ու օտար տիրապետության հաստատումը խոշոր հարված էին կրթամշակութային համակարգին: Չնայած առանձին անհատների գործադրած ջանքերին, Հայաստանի և գաղթաշխարհի տարբեր վայրերում կրթական կենտրոնների ստեղծմանը՝ քաղաքական ու տնտեսական անկայուն իրավիճակը հնարավորություն չէր տալիս կրթական միասնական գործընթաց ապահովելու բուն Հայաստանում, որն իր հերթին ***խոչընդոտում էր հայ հասարակության քաղաքակրթական լիարժեք զարգացմանը:***

Չնայած ստեղծված ծանր պայմաններին՝ հայ բնակչության հիմնական զանգվածը, կառչած մնալով հայրենի ավանդների պահպանման ու զարգացման խնդիրներին, մասնակից է եղել ժամանակի գիտակրթական ոլորտում կատարված հայտնագործություններին ու առաջընթացին, շարունակել իր գոյապայքարը, պահպանել ազգային–քաղաքակրթական դիմագիծը և ուղիներ փնտրել սեփական հայրենիքում վերականգնելու անկախ պետականությունը և ունենալու արժանապատիվ ապագա:

Դայքար վայրկատուն ցեղերի դեմ: Հայոց պետականության անկումից հետո օտար ցեղերի ներհոսքը Հայաստան տեղի է ունեցել հայ բնակչության զինված ուժեղ դիմադրության պայմաններում: Այդ մասին, պատմական սկզբնաղբյուրներում եղած տեղեկություններից բացի, ցայտուն վկայություններ են նաև հաղթանակի հասնելու դեպքերում օտարների կողմից տեղի բնակչության նկատմամբ իրականացված դաժանություններն ու հաշվեհարդարները:

XIV դ. վերջին Հայաստանը ենթարկվեց ***Լենկ Թեմուրի,*** XV դ.՝ ***թուրքմենական ակ-կոյունլու*** և ***կարա-կոյունլու*** ցեղերի ասպատակություններին: XV–XVII դարերից պահպանված սկզբնաղբյուրներն արձանագրել են օտար ներխուժումների դեմ հայոց պայքարի շատ դրվագներ: Տեղացի-



Մայր տաճար Ս. Էջմիածինը. ժամանակակից տեսքը

ների համար դիմադրություն ցուցաբերելու վերաբերյալ հաղորդումներ են թողել նաև արշավանքների ժամանակ օտար բանակներին ուղեկցող և իրենց բանակների հաղթանակների մասին պատմող թուրք և օտարազգի այլ պատմիչներ (Էվլիա Չելեբի և այլք):

Սեփական ռազմական ուժերի աստիճանական նվազումը և ունեցած հնարավորությունները համախմբելու ու կենտրոնացնելու դժվարությունները հայ քաղաքական գործիչներին հարկադրել է օտար բռնակալներից Հայաստանն ազատագրելու նպատակով համագործակցել դրանց դեմ պատերազմող այլ պետությունների հետ:

1453 թ.՝ Բյուզանդիայի կործանումից հետո, ***Օսմանյան կայսրությունը վերածվեց Հայաստանի ազատագրության հիմնական ասպարեզի ու խոչընդոտի:*** Այդ է պատճառը, որ եվրոպական երկրների ու Հռոմի պապի կողմից արդեն իսկ XV դարի երկրորդ կեսին ծրագրվող հակաօսմանյան դաշինքների մեջ, ի թիվս արևելյան այլ իշխանությունների ու ժողովուրդների (Պարսկաստան, Վրաստան և այլք), ընդգրկված էր նաև Հայաստանի կառավարիչը:

Ամենայն հայոց կաթողիկոսության վերահաստատումը Ս. Էջմիածնում: Կիլիկիայում թագավորական իշխանության վերացումից հետո այնտեղ գտնվող կաթողիկոսական Աթոռը մնաց անպաշտպան: Կտրված լինելով բուն Հայաստանից՝ այն չէր կարող լիարժեքորեն իրականացնել իր համահայկական դերակատարումը: Կաթողիկոսական Աթոռն Էջմիածին փոխադրելու անհրաժեշտությունը դառնում էր Հայ եկեղեցու շատ գործիչների մտահոգության առարկան:

Հայ հոգևորականության ներկայացուցիչները մի քանի անգամ դիմեցին Գրիգոր կաթողիկոսին՝ առաջարկելով իր նստավայրը Սսից փոխադրել Էջմիածին, սակայն մերժում ստացան: Ուստի կաթողիկոսական Աթոռի փոխադրման կողմնակիցները վճռեցին հրավեր ուղարկել հայ բարձրաստիճան հոգևորականներին՝ հավաքվելու և որոշելու կաթողիկոսության հարցը:

1441 թ. Թռչնա Մեծոփեցու և Հովհաննես

Հերմոնացու նախաձեռնությամբ Էջմիածնում գումարվում է մեծ ժողով, որին մասնակցում են Հայոց եկեղեցու շատ ներկայացուցիչներ և հարցին տալիս են դրական լուծում: Այրարատյան նահանգի կառավարիչ Յաղուբ բեկը, որ կատարում էր Ջհանշահի կարգադրությունը, նպաստավոր պայմաններ է ստեղծում ժողովականների համար: Էջմիածնում ժողովականները կաթողիկոս են ընտրում ***Կիրակոս Վիրապեցուն:***

Այդ իրադարձությունը հայ բնակչությանը մեծ հուսադրություն, ոգևորություն և ցնծություն է պատճառում: Վաղուց ի վեր համազգային նման զանգվածային միջոցառման կարոտ ժողովուրդն այդ փաստն ընկալում է որպես թագավորության վերականգնմանը հավասարազոր իրադարձություն:

Այսպիսով՝ շուրջ հազարամյա ընդմիջումից հետո ***Էջմիածինը կրկին դառնում է Հայոց կաթողիկոսության նստավայրը:*** Էջմիածնի կաթողիկոսության վերականգնումն ավելի է բարձրացնում Այրարատյան աշխարհի ազգային-քաղաքական դերը և կարևոր նշանակություն ունենում բուն հայրենիքում հայ ժողովրդի հետագա համախմբման համար:

Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռները: Էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսարանն իր գործունեությունն իրականացնում էր Հայաստանում և հարակից երկրներում հիմնադրված եկեղեցական կառույցների միջոցով և նրանց օժանդակությամբ:

XII դ. սկզբից Հայոց եկեղեցու նվիրապետական հզոր կառույցներից մեկը ***Աղթամարի կաթողիկոսությունն*** էր: Այն կարգավորում էր հիմնականում Վասպուրականի հայ բնակչության հոգևոր կյանքը:

Հայոց եկեղեցու կարևոր թեմերից էր ***Երուսաղեմի հայոց պատրիարքությունը:*** Այն մեծ դեր էր խաղում Մերձավոր Արևելքում հայ ժողովրդի կրոնական ու աշխարհիկ կյանքը կարգավորելու գործում:

Աղվանից կոչվող ***եկեղեցին*** միավորում էր Այսրկովկասի արևելյան հատվածի ու հայկական Արցախ և Ուտիք նահանգների քրիստոնյա հայ բնակչությանը: XIV դարի վերջերից Աղվանից եկեղեցու կաթողիկոսանիստ կենտրոն դարձավ ***Գանձասարի վանքը,*** և Աղվանից կաթողիկոսությունը սկսեց անվանվել նաև Գանձասարի կաթողիկոսություն: Այն ենթարկվում էր Էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսությանը:

Օսմանյան թուրքերի կողմից Կոստանդնուպոլիսը գրավվելուց հետո այնտեղ 1461 թ. հիմնադրվում է ***հայոց պատրիարքություն,*** որը պետք է տնօրիներ Օսմանյան պետության հայ համայնքի հոգևոր կյանքը: Պատրիարքը հաստատվում էր սուլթանի հրովարտակով:

Էջմիածնում Մայր Աթոռի վերահաստատումից հետո ***Կիլիկիայի կաթողիկոսությունը*** շարունակեց իր գոյությունը: Նրա իրավասության ներքո էր միայն շրջակա տարածքների հայ բնակչության հոգևոր առաջնորդությունը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպիսին էր վիճակը Հայաստանում օտար տիրապետության շրջանում: Ներկայացրեք անկախ պետականության կորստի բացասական հետևանքները:
2. Ինչո՞ւ էին հայ գործիչները փորձում Հայաստանը նվաճած բռնակալների դեմ պայքարում համագործակցել այլ պետությունների հետ:
3. Ինչո՞ւ Կիլիկիայի կաթողիկոսությունն այլևս ի վիճակի չէր իրականացնելու իր համահայկական դերակատարումը: Երբ և ո՞ր ժողովում որոշվեց վերականգնել Էջմիածնի կաթողիկոսական Աթոռը: Հայ ժողովրդի համար ի՞նչ նշանակություն ուներ այդ իրադարձությունը: 1441 թ. ո՞վ ընտրվեց Ամենայն հայոց կաթողիկոս:
4. Ներկայացրեք Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռները ուշ միջնադարում:

§ 2. ՀԱՅԱՍՏԱՆԸ XVI ԴԱՐՈՒՄ ԵՎ XVII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Քաղաքական դրությունը Մերձավոր Արևելքում XVI դարի սկզբին: XVI դարի սկզբին թուրքմենական ցեղախմբերի տիրապետությանը Հայաստանում փոխարինելու եկան օսմանյան և սեֆյան հակամարտող պետությունների ծանր ու ավերիչ նոր ժամանակները: Կասպից ծովից հարավ-արևմուտք՝ Իրանի Արդեբիլ քաղաքում էր շեյխ Սեֆիի հիմնադրած կրոնական համայնքը: Հոգևոր-ռազմական այդ համայնքը ձեռնամուխ եղավ նվաճումների միջոցով հողային նոր տիրույթներ ձեռք բերելուն: Ակ-կոյունլուներին պարտության մատնելուց և նրանց մայրաքաղաք ***Թավրիզը*** գրավելուց հետո ***Սեֆյանները հիմնադրեցին*** իրենց պետությունը, այնուհետև գրավեցին նաև Շիրվանը, ամբողջ Իրանը, Հայաստանը և հասան մինչև Բաղդադ:

Փոքր Ասիայի արևմտյան մասում ***1299 թ. հիմնադրվեց Օսմանյան պետությունը:*** Օգտվելով Բյուզանդիայի թուլացումից՝ օսմաններն աստիճանաբար գրավեցին նորանոր տարածքներ: 1453 թ. նրանք գրավեցին Բյուզանդիայի մայրաքաղաքը և տիրացան կայսրության ողջ տարածքին: Օսմանները գրավեցին Տրապիզոնի կայսրությունը, Կիլիկիան, ամբողջ Բալկանյան թերակղզին, Փոքր Ասիան՝ ստեղծելով ընդարձակ կայսրություն: Դրանից հետո սկիզբ առան թուրք-պարսկական պատերազմները՝ Հայաստանում և Մերձավոր Արևելքում գերիշխանություն հաստատելու նպատակով:

Հայաստանը և թուրք-պարսկական պատերազմները: Օսմանյան սուլթան Սելիմ Ահեղը ***1512 թ.*** մեծ զորքով արշավեց դեպի արևելք՝ կասեցնելու Սեֆյանների հաղթարշավը: Չալդրանի ճակատամարտում պարտության մատնելով սեֆյան շահ Իսմայիլին՝ նա գրավեց Թավրիզը և այնտեղից մեծ թվով գերիներ՝ հիմնականում արհեստավորներ, փոխադրեց Կ. Պոլիս: Շուտով շահ Իսմայիլը կարողանում է հավաքագրել խոշոր բանակ և թուրքերին դուրս քշել Իրանից: Հետագա տարիներին պատերազմական գործողությունները շարունակվում են փոփոխակի հաջողություններով:

Պատերազմական իրադարձություններն ընթանում էին հիմնականում Հայաստանի տարածքում: Ավերվում էին հայկական քաղաքներն ու գյուղերը, քայքայվում էր տնտեսությունը, գերեվարվում՝ բնակչությունը: Այդ պատերազմների ժամանակ ավելի մեծ թվով թուրքական ու քրդական ցեղախմբեր հնարավորություն ստացան ներթափանցելու Հայաստան՝ բնակվելով բարեբեր երկրամասերում:

1550 թ. պարսիկները խոշոր բանակով արշավեցին Օսմանյան կայսրության դեմ: Այս անգամ ևս պատերազմի թատերաբեմը Հայաստանն էր: Պարսիկները որոշել էին ամայացնել այն բոլոր տարածքները, որտեղով թուրքական զորքերը կարող էին շարժվել Իրանի դեմ: Նրանց բանակն ավերակների վերածեց Հայաստանի թուրքերի ճանապարհին ընկած գրեթե բոլոր բնակավայրերն ու ցանքատարածությունները:

1555 թ. Ամասիայում Օսմանյան և Սեֆյան տերությունների միջև կնքվեց ***հաշտության պայմանագիր:*** Պայմանագրի համաձայն՝ պատերազմական գործողությունները դադարեցվում էին: Թուրք-պարսկական սահմանագիծն անցնում էր Հայաստանի տարածքով՝ այն բաժանելով երկու մասի: Արևմտյան մասն անցնում էր Օսմանյան կայսրությանը, իսկ Արևելյան Հայաստանում իրենց տիրապետությունն էին հաստատում Սեֆյանները: Կնքված հաշտությունը, սակայն, կարճատև էր:

Շուտով օսմանյան բանակները կրկին արշավեցին Իրանի տիրապետության ներքո գտնվող Այսրկովկաս և գրավեցին հսկայական տարածքներ: Իրանը չկարողացավ լուրջ դիմադրություն կազմակերպել օսմանցիների դեմ, և գահ բարձրացած շահ Աբաս I-ը (1587-1629 թթ.) շտապեց 1590 թ. հաշտություն կնքելու օսմանցիների հետ՝ նրանց զիջելով գրաված բոլոր տարածքները, այդ թվում՝ Այսրկովկասն ո

ՀԱՅԱՍՏԱՆԸ XVII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ



Ատրպատականը: Շահ Աբասը, սակայն, մտադիր չէր հրաժարվելու հետագա պայքարից, ուստի խաղաղության ժամանակահատվածն օգտագործեց նոր բանակ կազմավորելու, երկրի տնտեսությունը կարգավորելու և ապագա պատերազմական գործողությունների համար դաշնակիցներ որոնելու նպատակով: Շահ Աբասն առևտրական ու դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Ռուսաստանի ու արևմտաեվրոպական երկրների հետ, անգլիական սպաների ու վարպետների օգնությամբ վերակազմեց ու վերազինեց պարսկական բանակը: Ձուլվեցին թնդանոթներ: Եվրոպական երկրներն իրենց հերթին օգնում և հրահրում էին շահ Աբասին Օսմանյան պետության դեմ պատերազմի: XVII դարի սկզբին օսմանյան արքունիքում սկսվել էին երկպառակություններ, գահակալական պայքար, երկրում ծավալվում էին գյուղացիական ու զինվորական ապստամբություններ:

1603 թ. շահ Աբասը, փորձելով օգտագործել հարմար առիթը, ձեռնամուխ եղավ օսմաններին զիջած տարածքների վերագրավմանը: Խոշոր բանակով նա հարձակվեց Թավրիզի վրա և գրավեց այն: Անցնելով Արաքս գետը՝ շահը մտավ ***Ջուղա,*** այնուհետև գրավեց ***Նախիջևանը*** և պաշարեց ***Երևանի բերդը:*** Օսմանյան բանակի գլխավոր ուժերը, փակվելով Երևանի բերդում, երկար դիմադրում են պարսիկներին: Երևանի բերդի վրա հարձակումների ժամանակ շահ Աբասը ճակատամարտի առաջին շարքեր է քշում հայ բնակչությանը. հայերին պարտադրում են խրամատներ փորել, հողե պատնեշներ կանգնեցնել և այլն: Իրանի բանակի սնունդը ևս ապահովվում էր հայ բնակչությունից վերցված պարենով: Ինն ամիս դիմադրելուց հետո Երևանի բերդը հանձնվում է պարսիկների ողորմածությանը:

Հայ բնակչության բռնագաղթը: 1604 թ. թուրքական սուլթանը նոր բանակ ուղարկեց շահ Աբասի դեմ: Խուսափելով օսմանյան բանակի հետ ընդհարվելուց՝ շահ Աբասը վճռեց ամայացնել նրա ճանապարհին ընկած բնակավայրերը՝ բնակչությանը փոխադրելով Իրանի խորքերը: Դրանով օսմանյան բանակը կզրկվեր պարենից, օթևանի հնարավորությունից և այլևս չէր կարողանա շարունակել արշավանքը: Բռնագաղթի միջոցով որակյալ երկրագործներ ու արհեստավորներ փոխադրելով ու բնակեցնելով Իրանի ներքին գավառներում՝ շահ Աբասը հույս ուներ զարկ տալու իր երկրի տնտեսության զարգացմանը: Միաժամանակ հայ վաճառականությանը փոխադրելով Իրանի հարավային նահանգներ՝ նա որոշել էր հյուսիսային մասերում զարգացած մետաքսի առևտուրը փոխադրել դեպի Պարսից ծոցի շրջան, որից Օսմանյան պետությունը մեծ վնաս կկրեր:

Հայ բնակչության ***բռնագաղթությունը սկսվեց 1604 թ. օգոստոսին:*** Հրամայված էր հրդեհել բոլոր գյուղերը, շենները, խոտի և հացաբույսերի դեզերը: Գաղթեցվում էր ***մոտ 300 հազար բնակչություն:*** Տեղահանությունից զերծ մնացին Հայաստանի այն նահանգների բնակիչները, որոնք հեռու էին օսմանյան արշավանքի երթուղուց: Հայ բնակչությունը բազմիցս փորձեց չենթարկվել գաղթի հրամանին կամ խույս տալ գաղթից: Սակայն ամենուրեք նման քայլերն ավարտվում էին դաժան պատժամիջոցներով: Պարսկական զորքը հաշվեհարդար տեսավ Գառնի գյուղի նկատմամբ, որի բնակիչները փորձել էին ընդդիմանալ գաղթի հրամանին:

Լուր ստանալով, որ օսմանյան բանակը արդեն մտել է Արարատյան դաշտ՝ շահ Աբասը հրամայում է գաղթեցվող բնակչությանը արագորեն փոխադրել Արաքսի աջ ափը: Գետանցման ժամանակ մեծ թվով բնակչություն խեղդվում է ջրում: Հայերը բնակեցվում են Իրանի տարբեր նահանգներում: ***Սպահանի մոտ*** Ջուղայի բնակիչները շուտով հիմնում են ***Նոր Ջուղա*** բնակավայրը:

1605 թ. Արարատյան դաշտ ներխուժած օսմանյան բանակը, չհամարձակվելով հետապնդել պարսիկներին, նախընտրում է

ձևեռն անցկացնել Վասպուրականում: 1606 թ. վճռական ճակատամարտում պարտություն կրելով՝ օսմանյան կողմը համաձայնում է հաշտության պայմանագրի ստորագրմանը, որով վերահաստատվում է Ամասիայի պայմանագրով նախատեսված սահմանագիծը, և Արարատյան դաշտն ու Հայաստանի հյուսիսային նահանգները կրկին անցնում են Իրանի գերիշխանության ներքո:

Թուրք-պարսկական պատերազմներն ավարտվում են ***1638 թ.***, երբ օսմանյան բանակը գրավում է ***Բաղդադը***, որից հետո հաշտություն են առաջարկում պարսիկները: ***1639 թ.*** Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի միջև կնքված ***Կասրի-Շիրինի պայմանագրով***՝ Հայաստանը կրկին վերաբաժանվում է երկու ախոյան տերությունների միջև: Այդ սահմանագիծը քիչ փոփոխություններով պահպանվում է մինչև XIX դ. սկիզբը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Երբ և որտեղ առաջացան Օսմանյան և Սեֆյան պետությունները:
2. Ներկայացրեք XVI դարում տեղի ունեցած թուրք-պարսկական պատերազմների հետևանքները Հայաստանի համար: Երբ կնքվեց Ամասիայի պայմանագիրը և ինչ էր նախատեսում:
3. Ինչո՞ւ 1590 թ. պայմանագրով շահ Աբասն օսմանցիներին գիջեց գրաված տարածքները: Երբ շահ Աբասը սկսեց գիջած տարածքների վերագրավումը:
4. Ինչո՞ւ շահ Աբասը կազմակերպեց հայ ժողովրդի բռնագաղթը: Իրանի ո՞ր նահանգներում բնակեցվեց Հայաստանից տեղահանված բնակչությունը: Երբ ավարտվեցին թուրք-իրանական պատերազմները:

§ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԻ ԱՇԽՈՒԺԱՑՈՒՄԸ

Ազատագրական լեգենդը: Արևելյան ժողովուրդները սելջուկյան իշխանությունների հարձակումներին դիմակայելու գործում օժանդակություն ստանալու ակնկալիքով էին հետևում խաչակրաց արշավանքների ընթացքին ու հետագա ծավալմանը: Հայրենիքում պետականությունը կորցրած հայ ժողովրդին Արևմուտքի հետ համագործակցության մղելու նպատակով լայնորեն քարոզվում էր օտար տիրապետության ծից հայոց հնարավոր փրկության գաղափարը արևմտաեվրոպական քրիստոնյա թագավորների՝ ֆրանկների միջոցով: Մվելին՝ հայ ժողովրդին կաթոլիկության ընդունման անհրաժեշտությունը և անխուսափելիությունը ներշնչելու նպատակով ստեղծվեցին ***«ապխանդագրույցներ»***, թե հայոց պետականության վերականգնումն արևմտյան երկրների և մասնավորապես Հռոմի օժանդակությամբ արդեն իսկ վաղմիջնադարյան իրենց ***«Տեսիլներում»*** կանխատեսել-գուշակել էին Հայոց եկեղեցու խոշորագույն դեմքեր Սբ Գրիգոր Լուսավորիչը, Սբ Ներսես Մեծը, Սբ Սահակ Պարթևը և ուրիշներ: Այդ քարոզչությունը հաջողություններ արձանագրեց Կիլիկիայում և բուն Մեծ Հայքում ոչ միայն XIII-XIV դարերում, այլև, ներառելով լրացուցիչ նոր երանգավորումներ, շարունակեց լայնորեն տարածում ստանալ հայ բնակչության մեջ նաև XV-XVII դարերում: Արևմտաեվրոպական երկրներում ազգային կենտրոնացված պետությունների առաջացումն ու հզորացումը և միաժամանակ պարսկա-օսմանյան լծի ներքո հայ ժողովրդի շահագործման ուժեղացումը նպաստավոր հանգամանքներ էին արևմտաեվրոպական երկրների օժանդակու-



Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին

թյամբ հայոց ազատագրությունն ակնկալելու համար: Արևմտաեվրոպական քարոզչամեքենան լայնորեն նպաստում էր այդ գաղափարների տարածմանը՝ գաղութային քաղաքականությունն ընդլայնելու, Արևելքում իր ազդեցությունը մեծացնելու նպատակով:

Հայոց թագավորության վերականգնման փորձը Աղթամարում: XIII–XIV դարերում մոնղոլ–թաթարական պետության թուլացման ու այնուհետև XIV դ. վերջին՝ Լենկ Թեմուրի արշավանքների ժամանակաշրջանում, օգտվելով հայոց պետականության բացակայությունից, քոչվորական շատ ցեղեր էին ներթափանցում Հայաստան՝ ավերածությունների ու կողոպուտի ենթարկելով հայկական բնակավայրերն ու իշխանական կալվածքները: Թյուրքական ու քրդական այդ ցեղերի մի մասը մշտական բնակություն էր հաստատում Հայաստանում: Հայկական առանձին իշխանական տների կողմից նրանց դեմ կազմակերպված պայքարի ծավալումը համակարգված ու արդյունավետ չէր, քանի որ առանձին իշխանական տները ևս այդ պայքարի ընթացքում աստիճանաբար թուլանում էին կամ դաղարում գոյություն ունենալուց:

Հայաստան մուտք գործած ցեղախմբերն անզիջում պայքար էին ծավալել միմյանց դեմ՝ փորձելով ամրապնդել իրենց տիրապետությունը երկրում: Նրանք միաժամանակ ստիպված էին լինում համագործակցելու հայ իշխանական տների հետ, ճանաչելու նրանց հողային սեփականատիրական իրավունքները և իրենց ներկայացնելու որպես ***«Հայաստանի թագավոր»*** (Շահ–ի Արման): Այդպիսի քաղաքականություն էին վարում կարա–կոյունլուների առաջնորդներ ***Կարա–Յուսուֆը, Իսքանդար Կարա–կոյունլուն*** և այլք: Թեմուրյանների հաջորդների դեմ պայքարում կարա–կոյունլուների հիմնական հենարանը, այնուամենայնիվ, մնում էր հայ բնակչությունը: «Շահ–ի Արման» Իսքանդար Կարա–կոյունլուի մահից հետո գահն անցնում է նրա եղբորը՝ ***Ջահանշահին*** (1437–1467 թթ.): Ջահանշահը ևս շարունակում է զգալի չափով ապավինել հայ բնակչության օժանդակությանը, ուստի և նպաստում է հայոց կաթողիկոսարանի վերահաստատմանը Էջմիածնում: Քոչվորական ցեղախմբերի միջև ռազմական ընդհարումների ու արշավանքների ընթացքում, սակայն, մեծապես տուժում էր հիմնականում հայ բնակչությունը, ավերվում ու կողոպտվում էին հայկական բնակավայրերը:

Հայոց պետականության վերականգնման ձգտումը կենդանի էր հայ իշխանական տների շառավիղների մոտ: Ջահանշահի կառավարման ժամանակաշրջա-

նում Գեղամա երկրի, Վայոց ձորի, Արցախի, Սյունիքի, Գուգարքի և մի շարք այլ գավառների հայ իշխանական տների ներկայացուցիչները վերականգնեցին իրենց իշխանություններն ու վարչական կառավարումը և սկսեցին կոչվել ***մելիքներ: Երևանը***՝ որպես կուսակալության կենտրոն, սկսեց արագորեն վերելք ապրել: Պատահական չէ, որ Աղթամարի կաթողիկոսական գահին տիրած և իրենց Արծրունյաց թագավորական տոհմից սերած համարող ***Զաքարիա*** և ***Սրբեհաննես Աղթամարցի կաթողիկոսները*** հավակնում էին ոչ միայն Ամենայն հայոց կաթողիկոսի գահին, այլև փորձում էին վերականգնել հայոց թագավորությունը Վասպուրականում: ***1465 թ. Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցում*** հանդիսավորությամբ ***հայոց թագավոր է օծվում*** կաթողիկոսի եղբորորդին՝ ***Սմբատ Արծրունին:***

Ռազմաքաղաքական իրավիճակը Հայաստանում, որը վերածվել էր աշխարհավեր ուժերի բախման թատերաբեմի, թեև անհնար էր դարձնում նորահռչակ թագավորության ամրապնդման հետագա գործընթացը, սակայն նրա կարճատև գոյությունն իսկ փաստում էր հայ բնակչության կենսունակությունն ու կարևոր դերակատարումը սեփական հայրենիքում:

Հայաստանի ազատագրության պայքարի նոր փուլի սկզբնավորումը: Հայաստանը թեև երկար ժամանակ զրկվել էր ազգային պետականությունից, սակայն ազատության հասնելու նրա ձգտումը հայ ժողովրդի մեջ չէր մարել: Հայ ժողովրդի ծանր վիճակը XVI դարում հարկադրում էր ժամանակի հայ գործիչներին ելք որոնելու Հայաստանի ազատագրության համար: Սեփական ուժերի անբավարարության և հակառակորդների հզորության պայմաններում անհնար էր եղած ուժերով ձեռնարկել այդ ծրագրի իրագործումը: Այս է պատճառը, որ սկսվում է դաշնակիցների որոնումը: Հայ գործիչներին հույս էր ներշնչում այն փաստը, որ Հայաստանի զգալի մասը նվաճած օսմանցիները, գրաված լինելով նաև Բալկանյան երկրները, սպառնալիք էին դարձել եվրոպական խոշոր պետություններին:

1547 թ. Էջմիածնում Սրբեհաննես Սպմասարեցի կաթողիկոսը հրավիրում է գաղտնի խորհրդակցություն, որտեղ որոշվում է իր գլխավորությամբ պատվիրակություն ուղարկել Եվրոպա: Պատվիրակության խնդիրն էր եվրոպական երկրների հետ բանակցություններ վարել՝ օսմանցիների դեմ համատեղ պայքար կազմակերպելու նպատակով: 1549 թ. պատվիրակությունը մեկնում է Եվրոպա, այցելում Վենետիկ, Հռոմ, Գերմանիա, լինում է Լեհաստանում և, առանց որևէ հաջողության, 1551 թ. վերադառնում Էջմիածին:

Միքայել Սեբաստացի կաթողիկոսը Սեբաստիա քաղաքում գումարած եկեղեցական գաղտնի ժողովի անունից ***1562 թ. Արգար*** դպիր ***Թոխատեցու*** ղեկավարությամբ պատվիրակություն է ուղարկում Վենետիկ: Պատվիրակության հեղինակությունն ընդգծելու նպատակով Արգար դպիրը և նրա որդի Սուլթանշահը ներկայացվում են որպես արքայական ծագում ունեցող անձնավորություններ: Արգար Թոխատեցու գլխավորած պատվիրակության նպատակն էր եվրոպական պետություններին համոզել, որ օգնեն հայերին ազատագրվելու օսմանյան տիրապետությունից: Չնայած երկարամյա դիվանագիտական ջանքերին՝ պատվիրակությունը չի հասնում իր նպատակին:

Արցախի և Սյունիքի մելիքությունները, Զեյթունի իշխանությունը: Օտար նվաճողները մշտապես ձգտել են ոչնչացնել երկրի հայկական իշխանությունները: Հայ իշխանական տների որոշ ներկայացուցիչներ, չդիմանալով օտար նվաճողների ճնշումներին, արտագաղթել են Հայաստանից: Հայ կալվածատերերի զգալի մասը սեփական կալվածքներն ու տիրույթների մնացորդները փրկելու նպատակով կամովին հանձնել են եկեղեցուն, և իրենք, ընդունելով հոգևոր կոչումներ, շարունակել են տիրել իրենց կալվածքներին: Այդպիսի-

ներին անվանել են ***պարոնտեր***: Չնայած դաժան պայմաններին՝ հայկական իշխանությունների մի մասն այնուամենայնիվ կարողացել է գոյատևել, ինքնապաշտպանության համար նպաստավոր լեռնային երկրամասերում պահպանել իր տիրապետությունը: Երբ անհնար է եղել դիմադրությունը, հայ ավատատերերից ոմանք հպատակվել են նվաճողներին և շարունակել իրենց գոյությունը:

Արևելյան Հայաստանում այդպիսի մի շարք իշխանություններ կային ***Սյունիք*** և ***Արցախ*** նահանգներում: Հայտնի էին ***Խաչենի, Վարանդայի, Ջրաբերդի, Դիզակի, Սյունիքի*** և ***Գեղամա*** երկրի մի շարք իշխանություններ, որոնք անվանվել են ***մելիքություններ***, իսկ նրանց գլուխ կանգնած իշխանները՝ մելիքներ:

Մելիքությունները եղել են ժառանգական: Մահացած մելիքին փոխարինել է ավագ որդին, որին հաստատում էր շահը: Նրանք ունեցել են իրենց զորքը, իշխանությունը կենտրոնացած է եղել մելիքի ձեռքում: Զորահրամանատարներ նշանակվում էին մելիքական տոհմի կրտսեր ներկայացուցիչները, որոնք կոչվում էին բեկ, հարյուրապետ (յուզբաշի), հազարապետ: Դատավարության իրավունքը պատկանում էր մելիքին: Դատավարության համար հատուկ օրենսգիրք չկար, մելիքներն առաջնորդվում էին սովորութային իրավունքով: Նրանք վճռական դեր էին խաղում նաև հոգևոր գործերում: Մելիքները պարտավոր էին շահական գանձարան մուծել տարեկան հարկի այն քանակը, որ որոշված էր արքունիքի կողմից: Նրանք պարտավոր էին իրենց տիրապետության սահմաններում ճնշել խռովարարներին, պատերազմի ժամանակ իրենց զորքերով ներկայանալ շահին, պաշտպանել երկրի սահմաններն օտար հարձակումներից: Մելիքները նաև խոշոր կալվածատերեր էին: Նրանք ունեին հողային ընդարձակ տիրույթներ, որոնց եկամուտը ամբողջությամբ պատկանում էր իրենց:

Արևմտյան Հայաստանում հայ ավատատերերի մանր իշխանություններն իրենց գոյությունը պահպանել էին ***Շապուխում, Սասունում, Զեյթունում, Մոկսում*** և այլն:

Հայոց պատմության մեջ իր առանձնահատուկ տեղն ունի ***Զեյթունը***: Զեյթունի հայերը չենթարկվեցին Օսմանյան տերությանը, նրանք քաջաբար պաշտպանում էին իրենց անկախությունը: XVII դ. առաջին կեսին միայն զեյթունցիները պարտավորվեցին օսմանյան իշխանություններին վճարել տարեկան որոշակի հարկ՝ պահպանելով իրենց ներքին ինքնուրույնությունը: Հայկական ինքնավար այդ իշխանությունները հետագայում խոշոր դեր են խաղացել թուրքական և իրանական տիրապետության դեմ մղած ազատագրական պայքարում: ***Դրանք հայկական պետականության բեկորներն էին:***

Նշանակում է՝ միջնադարի ողջ ընթացքում հայոց պետականությունն իսպառ չէր վերացել և հանդես էր գալիս զանազան դրսևորումներով՝ մելիքությունների, կիսանկախ իշխանությունների, լեռնային համայնքների և այլ ձևերով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք հայ ազատագրական լեգենդը և դրա նշանակությունը:
2. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ արդյունավետ չէր Հայաստան ներթափանցած քոչվորական ցեղերի դեմ պայքարը: Ինչո՞ւ կարա-կոյունլուներին հաջողվեց ամրապնդել իրենց դիրքերը Հայաստանում:
3. Ե՞րբ և որտե՞ղ փորձ կատարվեց վերականգնելու հայոց պետականությունը:
4. 1547 թ. Էջմիածնի գաղտնի խորհրդակցությունն ի՞նչ որոշում կայացրեց: Ի՞նչ նպատակով Եվրոպա մեկնեց Աբգար դպիր Թոխատեցու պատվիրակությունը:
5. Ովքե՞ր էին կոչվում պարոնտեր: Կառավարման ի՞նչ ձև էր գործում հայկական մելիքություններում: Թվարկե՛ք Հայաստանում պահպանված հայկական կիսանկախ իշխանությունները: Նրանցից ո՞րն էր ամենակենսունակը:

Թեմա 2. ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ XV–XVII ԴԱՐԵՐՈՒՄ

§ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ: ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ

Ընդհանուր բնութագիր: Հայկական գաղութների առաջացումը հայ ժողովրդի պատմական զարգացման առանձնահատկություններից է: Հարուստ անցյալ ունեցող ժողովուրդներից շատերին է բաժին ընկել օտար երկրներում գաղութներ ունենալու ճակատագիրը:

Գաղութ, գաղթավայր կամ *գաղթօջախ* հասկացության տակ պատմագիտությունն ընդունում է օտար երկրներում բնակություն հաստատած այն զանգվածներին, որոնք նոր միջավայրում ստեղծում են իրենց ***համայնքը***: Նրանք ստանում են ***ինքնավարություն, պահպանում մայրենի լեզուն, ազգային առվոտություններն*** ու ***դավանանքը***: Այսինքն, երբ այդ զանգվածներն օտար շրջապատում չեն կորցնում ազգային նկարագիրը և իրենց հատկանիշներով ու համախումբ կյանքով առանձնանում են տեղի ժողովուրդներից: Գաղութի առաջացման կարևոր հատկանիշներից է ***ազգային դպրոցի*** ու ***եկեղեցու առկայությունը***: Սովորաբար գաղութ կամ գաղթավայր են անվանվում ինքնավարություն կամ այլ առանձնաշնորհում ստացած և պետության կողմից ճանաչված օտար ազգային միավորները: Այդ հատկանիշներից զուրկ, բայց ազգային նկարագիրը պահպանող համախումբ ապրող զանգվածները, որպես կանոն, կոչվում են «համայնք»:

Հայկական գաղթավայրերի ընդհանուր պատմությունը բաժանվում է ***երեք փուլերի***: ***Միջին դարեր***, երբ գաղութները, որպես կանոն, օգտվում են ինքնավարությունից և ապրում ինքնամփոփ կյանքով: ***Նոր շրջան***, երբ ազատ շուկայական հարաբերությունների զարգացման հետևանքով վերանում են գաղութների ինքնաբավ կյանքն ու առանձնաշնորհումները: Դրա փոխարեն նոր շրջանում հիմնվում են ազգային-բարեգործական հաստատություններ, մշակութային, կրթական այնպիսի օջախներ, որոնք արգասավորում են հայկական գաղութների ազգային կյանքը:

Երրորդ փուլը, երբ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Մեծ եղեռնի հետևանքով աշխարհով մեկ ցրված հայությունը ստեղծում է հայկական Սփյուռքը:

Հայկական գաղթավայրերում պահպանվել են հայ գիրն ու գրականությունը, հայկական բարքերն ու սովորությունները, ազգային մշակույթի ավանդները, այլ խոսքով՝ ***հայ ինքնությունը***: Հատկանշական է, որ հայ առաջին տպագիր գիրքը, հայկական առաջին պարբերականը ծնունդ են առել բուն երկրից դուրս՝ Եվրոպայի և Ասիայի հայկական գաղթօջախներում:

Գաղթավայրերը կապված են եղել մայր հայրենիքի հետ, ապրել են նրա պատմական ճակատագրով: Մյուս կողմից՝ գաղթավայրերում հայ զանգվածները շփվել են տվյալ երկրների ժողովուրդների հետ, հայ մշակույթը ներառել է այդ ժողովուրդների ազդեցությունը, փոխադարձաբար՝ ազդել նրանց վրա:

Հայկական գաղթօջախները մեծապես նպաստել են տարբեր ժողովուրդների փոխըմբռնմանն ու համագործակցությանը: Հետևաբար ***գաղթավայրերի պատմությունը հայ ժողովրդի ամբողջական պատմության անքակտելի մասն է***: Մյուս կողմից՝ այն մեր ժողովրդի պատմական կապերի դրսևորման ցայտուն արտահայտությունն է:

Հայկական գաղութները գոյատևման տարբեր կյանք են ունեցել: Նրանց մի մասը վերելք է ապրել միջնադարում, հետագայում թուլացել, մարել է: Որոշ գաղութների աշխույժ կյանքն ընթացել է նոր շրջանում: Կան նաև գաղութներ, որոնք ձևավորվել են միջնադարում, բայց իրենց գոյությունը պահպանում են մինչև այժմ:

Ղրիմ: Այս թերակղզում հայերը մշտական բնակություն են հաստատել դեռ XI դարից: Հետագայում՝ հատկապես XIII–XIV դդ., մոնղոլական արշավանքների և տիրապետության հետևանքով ստվար հայ բնակչություն է տեղափոխվում Ղրիմ: Հայերը բնակվում էին Կաֆայում (Թեոդոսիա), Սուրխաթում (Հին Ղրիմ), Ակմեչիթում (Սիմֆերոպոլ), Կեռզլովում (Եվպատորիա), Օրբազարում (Արմյանսկ) և այլ քաղաքներում ու մի շարք զուտ հայկական գյուղերում:

Հայերի թիվն այնքան է աճում, որ նրանք թաթարներից հետո բնակչության քանակով զբաղեցնում էին երկրորդ տեղը, իսկ առանձին դեպքերում՝ կազմում բացարձակ մեծամասնություն: Բավական է հիշատակել, որ ***XV դ. Կաֆա քաղաքի 70 հազար բնակչից 46 հազարը հայեր էին:*** Իզուր չէ, որ թերակղզու հարավարևելյան շրջանը հաճախ անվանվում էր ***Մոխային Հայաստան:***

Ղրիմի քաղաքները խոշոր դեր են խաղացել Արևելքի և Արևմուտքի առևտրում: Հայ վաճառականների ձեռքին էր թաթարական շրջաններում կատարվող առևտրի մենաշնորհը: Ղրիմահայերը մասնակցում էին մերձսևծովյան շրջանների, ինչպես նաև Կովկասի և Հայաստանի հետ կատարվող առևտրին: Առևտրի գլխավոր ուղիներից մեկն էլ ձգվում էր դեպի Կ. Պոլիս, որտեղից ձյուղավորվում էր դեպի արևելյան երկրներ և Արևմտյան Եվրոպա: Հայերի առևտրական գործունեության մեջ նշանակալից էր ռուսական շրջանների, մասնավորապես Մոսկվայի հետ տարվող առևտուրը:

Օսմանյան պետության կողմից 1475 թ. Ղրիմի գրավումից հետո հայ բնակչության նկատելի հատվածներ արտագաղթեցին, սակայն կարճ ժամանակ անց ներհոսք կատարվեց, և հայությունը վերականգնեց նախկին վիճակը:

Կոստանդնուպոլիս: Տարբեր պատճառներով Բյուզանդիա և նրա մայրաքաղաք Կոստանդնուպոլիս էին տեղափոխվել հազարավոր հայեր: 1453 թ.՝ Կ. Պոլիսը գրավելուց հետո, թուրքերը Փոքր Ասիայից այնտեղ են գաղթեցնում հույների, հրեաների և հայերի՝ նպատակ հետապնդելով նրանց միջոցով զարկ տալ մայրաքաղաքի տնտեսական կյանքին:

1461 թ. ձևավորվեց հայ հոգևոր համայնքը՝ ***պատրիարքությունը,*** որին ենթակա էին Փոքր Ասիայի, Տրապիզոնի և Ղրիմի թեմերը: Պատրիարքները փաստորեն արևմտահայության գործերը տնօրինողներն էին և որպես այդպիսին ճանաչվում էին պետության կողմից: Պատրիարքը, հոգևոր գործերից զատ, տնօրինում էր եկեղեցիների ու վանքերի կառուցումը, դպրոցների բացումը, տպարանների հիմնումը, գրքերի հրատարակումը և այլ գործեր: Պատրիարքը նշանակվում էր սուլթանի հատուկ հրովարտակով:

Կոստանդնուպոլսի հայ համայնքի կազմում ծանրակշիռ դեր էին կատարում առևտրական և արհեստավորական շերտերը: XVI դ. ձևավորվում է ***մեծահարուստ հայ չելեբիների դասը:*** Չելեբի էին անվանվում այն երևելի հարուստները, որոնք զբաղվում էին վաշխառությամբ, ինչպես նաև առևտրով:

Կ. Պոլսի աշխարհագրական հարմար դիրքը մեծապես նպաստում էր առևտրին, ուստի այլևայլ վայրերից դեպի իրեն էր ձգում հայ վաճառականներին: Նրանք քաղաքում ունեին խանութներ, իջևանատներ, պահեստներ: Գաղութի բնակչության ճնշող մեծամասնությունը կազմում էին արհեստավորները, մանր ու միջին առևտրականները, օրավարձու մշակները: Արհեստավորները ստվար խավ էին և ընդգրկված էին իրենց շահերը պաշտպանող կազմակերպությունների՝ ***էսնաֆությունների*** (համքարությունների) մեջ: Պոլսահայ գաղութն այնքան մեծացավ, որ դարձավ արևմտահայ մշակույթի գլխավոր կենտրոնը: Մշակույթի բուռն զարգացումը, սակայն, տեղի ունեցավ միայն նոր շրջանում:

Լեհաստան: Այստեղ հայկական համայնքներ են ձևավորվել XIII–XIV դարերում: Կիլիկիայի հայկական պետության անկումից և Օսմանյան կայսրության կող-

Զամոստին: Արմրանսկի փողոցի մեծահարուստ հայերի բնակելի շենքերը, XVII դ.

մից Ղրիմի գրավումից հետո գաղթի նոր ալիք ուղղվեց Լեհաստան: ***Կամենեց-Պոդոլսկում, Լուցկում, Զամոստիեում, Սրանիսլավում*** և այլ բնակավայրերում առաջացան հայկական գաղութներ:

Կամենեց-Պոդոլսկն ուներ ***հայոց դպրան,*** որը վարում էր տեղի հայերի գործերը: Հայերին տրվեց առևտրական արտոնություն: XVII դ. կեսերին քաղաքում կար 1200 հայ ընտանիք, որը այդտեղի բնակչության մեծ մասն էր: Հայերին թույլատրվեց հիմնել իրենց առանձին ***մագիստրատը***՝ գաղութի գործերի ինքնավար վարչական մարմինը: Հայ համայնքի միջոցներով քաղաքում կառուցվում են դպրոց և հիվանդանոց:

Ոչ միայն Լեհաստանի կամ Ռեչ Պոսպոլիտայի, այլև ամբողջ Արևելյան Եվրոպայի հայկական գաղթավայրերի մեջ մեծ է եղել հատկապես ***Լվովի*** գաղութի նշանակությունը: Լվովը XIV դ. դարձավ Հարավարևելյան Եվրոպայի հայության հոգևոր կենտրոնը:

Հայերն ակնառու մասնակցություն են ունեցել երկրի քաղաքական կյանքում: Նրանք թուրքական ագրեսիային դիմակայելը և Օսմանյան կայսրության թուլացումը զուգակցում էին Հայաստանի ազատագրման հետ: Հատկանշական էր, որ 1683 թ. Վիեննայի ճակատամարտում թուրքերի դեմ տարած հաղթանակում Լեհաստանի թագավոր Յան Սոբեսկու բանակում կռվում էին նաև մեծաքանակ հայեր:

Լեհահայ գաղութներում պահպանվել և առաջադիմել են մշակույթի որոշ ճյուղեր: ***1616 թ. Լվովում հիմնվում է հայկական դպրան:*** Պատմամշակութային նշանավոր երևույթ էր ***լեհահայերի դատաստանագիրքը,*** որը կազմվել է գերազանցապես Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» հիման վրա:

Լեհական թագավորությունը XVII դ. թուլանում է, ուժեղանում են դավանական ճնշումները ոչ կաթոլիկ քրիստոնյաների նկատմամբ: Լեհահայերին հարկադրաբար կաթոլիկ դարձնելը, Էջմիածնի Մայր Աթոռից կտրելը և Հռոմի կաթոլիկ եկեղեցուն միացնելը բացասական հետևանքներ են ունենում: Դավանափոխությունը, արտոնությունների վերացումը թուլացնում են հայկական գաղութները: Սկսվում է ազգային դիմագիծը կորցնելու և ձուլվելու գործընթացը, որը հանգեցնում է հայկական գաղութների մարմանը:

Իտալիա: Հայերն Իտալիայում համայնքներ են ձևավորել XIII–XV դարերում: Իտալական քաղաքների հետ ունեցած առևտրատնտեսական կապերի շնորհիվ մի շարք քաղաքներում հայկական փոքր համայնքներ են առաջանում: Դրանցից էր ***Հռոմը,*** որի բնակչությունն այնքան էր համալրվել հայերով, որ XIII դ. ուներ «Հայոց տուն» և երկու եկեղեցի: Հայերի հոսքը դեպի Իտալիա ուժեղանում է Կիլիկյան հայկական թագավորության անկումից հետո:

Իտալիայի ամենախոշոր ու նշանակալի համայնքը ***Վենետիկ*** քաղաքում էր: Վենետիկ ժամանող հայ վաճառականներն ունեին իրենց կենտրոնատեղին՝ «Հայոց տունը»: Այնտեղ է եղել «Հայոց փողոցը», իսկ մոտակա կամուրջը կոչվել է «Հայոց կամուրջ»: «Հայոց տունն» ընդարձակվում է, հայերը կառուցում են եկեղեցիներ: Վենետիկի հայկական գաղթօջախը XV–XVI դդ. դառնում է կազմակերպված հայկական կենտրոն: Վենետիկում հաստատված հարուստ վաճառականներից նշանավոր էին Շահրիմանյանները, Միրիմանյանները, Շահումյանները և ուրիշներ:

Իտալիայի հայկական համայնքները և, առաջին հերթին, Վենետիկը նշանավոր էին ոչ այնքան առևտրափոխանակային հարաբերությամբ, որքան մշակութային առումով: Հայ մշակույթի կարևոր նվաճումներից մեկը՝ տպագրությունը, սկզբնավորվել է Վենետիկում:

Հոլանդիա (Նիդերլանդներ): Հայերը Նիդերլանդիայի երկրներին ծանոթ են եղել XIV դարից: ***Բրյուգե*** նավահանգստային քաղաքում կար հայ բնակչություն: Շուտով Բրյուգեին փոխարինում է ***Ամստերդամը:*** Հոլանդական այդ քաղաքը համաշխարհային շուկայի և մշակույթի կենտրոն էր և ուներ «Եվրոպայի կայսրուհու» համբավ: Աստիճանաբար ուժեղանում է առևտրական ընտանիքների հոսքը, և ձևավորվում հայկական համայնքը, որը գոյություն ունեցավ շուրջ երկու դար: Այս համայնքն ուներ առևտրական և մշակութային բնույթ: Տեղի շաբաթաթերթերից մեկը, անդրադառնալով տեղի հայության կյանքին, գրում է. «Հայկական գաղութի պատմությունը մի ոսկե էջ է Ամստերդամ քաղաքի պատմության մեջ»:

Ամստերդամի որոշ հայ առևտրականներ ունեցել են իրենց սեփական նավերը, որոնք նավարկել են հոլանդական դրոշներով: ***1653 թ.*** Ամստերդամից դեպի Զմյուռնիա են ճանապարհվում ***հինգ առևտրական նավկա:*** Դրանցից երկուսը հայկական էին և կոչվել են «Հայկական վաճառական» ու «Պարսկական վաճառական»:

Հայկական առաջին տպարանն այս քաղաքում հիմնել է ***Մատթեոս Ծարեցին 1660 թ.:*** Նա հայոց կաթողիկոսի պատվիրակն էր և ուղարկվել էր տպագրության գործը կազմակերպելու համար: Նրա գործը շարունակում է ժամանակի նշանավոր մտավորականներից ***Ոսկան Երևանցին:***

Ամստերդամի գաղութը թուլանում է, երբ խաթարվում է միջազգային առևտուրը: Այն փաստորեն դադարում է գոյություն ունենալուց XVIII դ. վերջերին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ եք հասկանում՝ գաղութ (գաղթավայր) ասելով. որոնք են գաղութը բնորոշող հատկանիշները: Քանի՞ փուլի է բաժանվում հայկական գաղթավայրերի ընդհանուր պատմությունը:
2. Երբ և ինչո՞ւ ստվարացավ Ղրիմի հայկական գաղթօջախը: Թվարկեք Ղրիմի հայաբնակ քաղաքները:
3. Երբ է ստեղծվել Կ.Պոլսի հայոց պատրիարքությունը: Ովքե՞ր էին կազմում Կ.Պոլսի հայ բնակչությունը. ինչո՞վ էին նրանք զբաղվում:
4. Թվարկեք լեհահայ նշանավոր գաղթօջախներ. ինչ արտոնություններ ունեին այդ գաղութները: Որո՞նք էին լեհահայ գաղութների մարման պատճառները:
5. Երբ և ո՞ր քաղաքներում են առաջացել Իտալիայի հայ համայնքները: Հայ մշակույթի ո՞ր իրադարձությամբ է նշանավորվել Վենետիկը:
6. Ինչո՞ւ մեծացավ հայերի հոսքը դեպի Ամստերդամ. որքա՞ն գոյատևեց քաղաքի հայ համայնքը:

ԲԱԺԻՆ 4 ՄԻՋՆԱԴԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Թեմա 1. ԱԶԳԱՅԻՆ–ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

§ 1. ՀԱՅ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԸ

Մեսրոպ Մաշտոցի պատմական առաքելությունը: IV դարի վերջում մայրենի լեզվով գիր և գրականություն ունենալն ազգապահպան խնդիր էր դարձել, քանի որ հայերեն գրավոր լեզուն կենսական անհրաժեշտություն էր թե՛ պետության, թե՛ եկեղեցու և դրանով իսկ ներկա ու ապագա սերունդներին դաստիարակելու և կրթելու համար: Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո հայոց լեզվով եկեղեցական գրականության բացակայությունը, առավել ևս Աստվածաշնչի՝ ասորերենով և հունարենով ընթերցումներն անհնարին էին դարձնում ժողովրդի լայն խավերին ծանոթանալու քրիստոնեական վարդապետությանը և յուրացնելու այն:

Վիճակը քիչ էր փոխվում հայերեն բանավոր թարգմանությունից, քանզի օտար լեզուներին քչերն էին տիրապետում, որ կարողանային միանգամից թարգմանություն կատարել մայրենի լեզվով: Ավելին՝ ***հունարենը*** պարսից արքունիքը դիտում էր որպես թշնամի երկրի՝ Հռոմեական կայսրության լեզու և Հայաստանում զավթողական քաղաքականության իրականացման ժամանակ նույնիսկ ***արգելում էր*** դրա կիրառումը՝ փոխարենը պարտադրելով ***պարսկերենը:*** Իսկ որպես եկեղեցական լեզու մնում էր դարձյալ ժողովրդի համար անհասկանալի ասորերենը:

Դրան գումարվեցին IV դ. վերջին Մեծ Հայքի թագավորության բաժանումը Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության միջև, իսկ այնուհետև՝ Հայաստանի արևմտյան մասում թագավորական իշխանության վերացումը: Այդ ամենը նշանակում էր, որ արդեն ***վիրանգված էր հայ Արշակունիների թագավորության գոյությունը,*** դրանով իսկ՝ հայ ժողովրդի պետականորեն երաշխավորված քաղաքական և մշակութային կյանքը:

Արշակունիների մոտալուտ անկման պայմաններում Հայ առաքելական եկեղեցին էր դառնում միակ ազգային ամբողջական կառույցը, սակայն մայրենի լեզվով հոգևոր գրականության պակասը սպառնում էր հենց իր՝ Հայ առաքելական եկեղեցու անկախ գոյությանը:

Հենց այդ տագնապալի ժամանակաշրջանում ***Մեսրոպ Մաշտոցին*** էր վերապահված հայոց ինքնության հզոր դրսևորումներից մեկի՝ գրերի գյուտի առաքելությունը:

Մեսրոպ Մաշտոցը ծնվել է 361 թ. Տարոն գավառի Հացեկաց գյուղում՝ կարճազատ Վարդանի ընտանիքում: Կրթություն ստանալով Ներսես Մեծի օրոք՝ այնուհետև նա Տարոնից մեկնում է Մեծ Հայքի թագավորության մայրաքաղաք՝ Վաղարշապատ, և Խոսրով IV–ի արքունիքում զինվորական ծառայություն կատարում: Միևնույն ժամանակ նա կարգված էր արքունի մատենագիր դպիրների խմբի մեջ:

Փայլուն տիրապետելով մայրենի լեզվին՝ Մեսրոպ Մաշտոցն արքունիքի միջազգային գրագրություններում կիրառում էր նաև ***հունարենի, ասորերենի, պարսկերենի իր իմացությունը:*** Թողնելով ծառայությունը հայոց արքունիքում՝ Մաշտոցը քարոզչական գործունեության նպատակով գնում է ***Նախիջևան*** գավառից հարավ գտնվող ***Գողթան գավառը:*** Քրիստոնեական ուսմունքը վարդապետելիս Մեսրոպ Մաշտոցը հայերեն բանավոր թարգմանում է ***Սուրբ Գիրքը:***

Հայոց այբուբենին նվիրված հուշակոթող. Օշական

Մինչ նա Գողթան գավառում էր, Աստվածաշունչը Հայաստանի մյուս գավառների եկեղեցիներում կարդում էին ժողովրդի համար անհասկանալի օտար լեզվով: Ուստի, ըստ պատմիչ Ղազար Փարպեցու, նա խորհում էր, թե *«գոյություն ունեն հայոց լեզվի նշանագրեր, որոնցով հնարավոր է սեփական ձայնով և ոչ թե մուրացածո լեզվով եկեղեցիներում շահել փղամարդկանց ու կանանց և առհասարակ ամբողջ բազմության սրտերը»*: Այստեղ պատմիչը վկայել է նախամեսրոպյան շրջանում հայերեն գրերի գոյության մասին:

Պահպանվել են մատենագրական տեղեկություններ նախամաշտոցյան հայ գրերի մասին: II–III դարերում հայերը հիշատակված են հին դպրություն ունեցող ժողովուրդների շարքում: Պատմահայր Մովսես Խորենացին հիշատակել է նախաքրիստոնեական մեհենական գրականության մասին, որը, սակայն, առ այսօր չի հայտնաբերվել: Վարդան Արևելցին տեղեկացնում է, որ *«հնուց հայերեն գիր է եղել»*, *ինչը «վկայվեց Լևոն արքայի ժամանակ, քանզի դրամ գտաք Կիլիկիայում՝ դրոշմված հայերեն գրով... Հայկազուն թագավորների» անուններով*: Ըստ Գարեգին Սրվանձտյանցի՝ Բալու բերդաքաղաքի մոտ գտնվող Գրման քար կոչվող սուրբ վայրերի մերձակա մի քարայրի (որտեղ ճգնել է Մեսրոպ Մաշտոցը) պատերի սեպագիր արձանագրությունները միայն հայերը կարող են վերծանել:

Հայ գրերի գյուտը և նշանակությունը: Մեսրոպ Մաշտոցը Գողթն գավառում քարոզչության ժամանակ միտք հղացավ հայոց լեզվի նշանագրերը գտնելու և ամենայն ջանասիրությամբ իր անձը նվիրեց այդ մեծ գործին: Վերադառնալով Այրարատ՝ Մեսրոպ Մաշտոցն իր մտադրության մասին հայտնում է հայոց կաթողիկոս ***Սահակ Պարթևին*** և ստանում նրա հավանությունը: IV դարի վերջին գումարվում է ***եկեղեցական ժողով***, որտեղ, ըստ Կորյունի, որոշվում է «հայ ազգի համար նշանագրեր գտնել»: Վռամշապուհ արքայի հովանավորությամբ խնդրի լուծմանն անմիջապես ձեռնամուխ են լինում Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը:

Վռամշապուհ արքային հայտնել էին, որ Դանիել անունով ասորի մի եպիսկոպոսի մոտ կան ***հայերեն նշանագրեր***: Արքայի հանձնարարությամբ այդ նշանագրերը բերում են և երկու տարի դրանցով ուսուցանում աշակերտներին: Սակայն այդ նշանագրերն անբավարար եղան հարուստ հայոց լեզվի հնչյունային համակարգի օգտագործման համար:

Վռամշապուհի կարգադրությամբ Մեսրոպ Մաշտոցը, ձեռնարկելով նոր նշանագրեր ստեղծելու գործը, մի խումբ աշակերտներով մեկնում է Ամիդ, Եդեսիա և Սամոսատ քաղաքները:

Մեսրոպ Մաշտոցն աշակերտներին երկու խմբի էր բաժանել՝ մեկին կարգելով ասորական դպրության, իսկ մյուսին՝ հունական: Նա հանդիպում է Դանիել եպիսկոպոսին, սակայն նախկինից ավելի բան չգտնելով՝ անցնում է Եդեսիա՝ Պլատոն անունով մի հեթանոս ճարտասանի մոտ: Ապա իր պրպտումները շարունակում է այլ վայրերում: Վերջապես ***405 թ. Ուռհայում (Եդեսիա) Մաշտոցը ստեղծում է հայոց գիրը:***

Կորյուն վարդապետը և Մովսես Խորենացին գրում են հայոց գրերի՝ Աստծո շնորհով տրվելու մասին: Կորյունը գրել է. *«Եվ այսպես նա բազում նեղություններ կրեց՝ իր ազգին մի բարի օգնություն գտնելու համար: Ամեն բան շնորհող Աստծուց իսկապես պարգևվեց նրան այդ բախտը. նա իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ՝ հայերենի նշանագրեր»:*

Մեսրոպ Մաշտոցը, գալով ***Սամոսատ*** քաղաքը, գտնում է հունարեն գրչության արվեստի խորագիտակ Հռոփանոսին, որը գեղագրում է Մեսրոպ Մաշտոցի պատրաստած ***36 նշանագրերը,*** որոնցից յուրաքանչյուրին Հայոց աշխարհի մեծ ուսուցիչն անուն էր տվել. «Այբ, բեն, գիմ, դա... »: Եղիշեի գնահատմամբ՝ ***«Այբն է մայր իմաստութեան...»:***

Սուրբ Գրքի հայերեն թարգմանությունը անվանվեց ***Աստվածաշունչ,*** որից հայերեն թարգմանված ու գրված առաջին նախադասությունն էր. ***«Ճանաչել զիմաստութիւն եւ զիսրատ, իմանալ զբանս հանճարոյ»:***

Հայրենիք վերադարձող Մեսրոպ Մաշտոցին Երասխի ափին մեծ հանդիսավորությամբ դիմավորում են Վռամշապուհ արքան, Սահակ Պարթև կաթողիկոսը, նախարարագունդ ավագանին՝ ժողովրդի բազմության հետ: Ապա նրանք միասին գալիս են մայրաքաղաք: Մեսրոպ Մաշտոցն անմիջապես ձեռնամուխ է լինում հայերեն այբուբենով մանուկների ուսուցմանը: Մեսրոպ Մաշտոցը՝ հայ դպրության հիմնադիրը, գրել է հոգևոր ճառեր, երգեր, հատկապես շարականներ: Սահակ Պարթևը նույնպես գրել է եկեղեցական կանոններ, թղթեր (նամակներ) ու հոգևոր երգեր:

Լուսավորչական գործունեությունն ընդարձակելով Հայաստանում՝ Մեսրոպ Մաշտոցը գնում և ***դատեր է ստեղծում նաև վրաց*** և Կուրի ձախափնյա բուն ***Աղվանքի*** ցեղերից՝ գարգարացիների լեզուների համար:

Դպրոցը: Սբ Մեսրոպ Մաշտոցը և Սբ Սահակ Պարթևը կրթական աշխատանքը ծավալեցին նախ Հայաստանի կենտրոնական երկրամասերում՝ մայրենի լեզվով դպրոցներ հիմնելով: ***Առաջին վարդապետարանը***՝ բարձրագույն դպրոցը, ***հիմնադրվեց Վաղարշապատում:*** Այստեղ պատրաստվում էին վարդապետներ՝ ուսուցիչներ, որոնց շարքում էր նաև Մաշտոցի վարքագիր Կորյունը: Այն ժամանակ Սահակ Պարթևը մեծ հոգատարությամբ զբաղվում էր նաև իր թոռան՝ հայոց ապագա սպարապետ Վարդան Մամիկոնյանի կրթությամբ:

Այնուհետև Մեսրոպ Մաշտոցը հայոց դպրոցներ է հիմնում նաև ***Արցախում (Ամարասի դպրոցը), Սյունիքում, Գողթան գավառում:*** Սահակ Պարթևի նամակով Մաշտոցը Վարդանի հետ ներկայանում է բյուզանդական կայսր Թեոդոսիոս II-ին, ստանում է նրա համաձայնությունը Արևմտյան Հայաստանում ևս դպրոցներ բացելու մասին: Այդ առաքելությունը երկրի արևմտյան մասում նա իրականացնում է 419–422 թթ.: Դրանով իսկ ***հոգևոր առումով Հայաստանը վերաձիավորվում է:***

Հայոց գրերը հայ ժողովրդի համար դառնում են գոյատևման, ազգային ինքնության, արժեհամակարգի պահպանման հզոր միջոց բոլոր ժամանակներում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ IV դ. վերջում հրատապ խնդիր դարձավ մայրենի գիր ու գրականություն ունենալու հարցը: Ի՞նչ գիտեք Մեսրոպ Մաշտոցի մասին:
2. Վերհիշեք նախամաշտոցյան հայ գրերի մասին տեղեկությունները: Ինչո՞ւ Դանիել եպիսկոպոսի մոտից բերված նշանագրերը անբավարար եղան օգտագործման համար: Ո՞ր քաղաքներում եղան Մեսրոպ Մաշտոցն ու իր աշակերտները: Ո՞րն է հայերեն առաջին նախադասությունը: Որտեղի՞ց է այն թարգմանված:
3. Որտե՞ղ է բացվել առաջին վարդապետարանը: Դրանից հետո որտե՞ղ հիմնվեցին հայոց դպրոցներ:
4. Վերհանեք գրերի գյուտի պատմական նշանակությունը:

§ 2. ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՍԿԵԴԱՐԸ

Հայ մշակույթի պահպանման և հետագա զարգացման գործում անգնահատելի նշանակություն ունեցավ Սբ Մեսրոպ Մաշտոցի հանճարով ստեղծված հայերեն նշանագրերի գյուտը:

Հազարամյակների պատմություն ունեցող հայոց լեզուն IV–V դդ. սահմանագլխին այնքան կատարյալ էր, որ Մեսրոպ Մաշտոցի նշանագրերի գյուտին անմիջապես հաջորդեցին համաշխարհային գրական և գիտական երկերի թարգմանությունը և հայ մատենագրության ու գիտության բարձրագույն արժեքների ստեղծումը:

Թարգմանչական գրականություն: Աստվածաշնչի հայերեն թարգմանությունն անզուգական երևույթ էր թարգմանչական արվեստի մեջ: Դարեր անց ֆրանսիացի գիտնականներն այն համարեցին ***թարգմանությունների թագուհի:*** Աստվածաշնչին հետևեցին համաշխարհային գիտության և պատմագեղարվեստական գրականության նմուշների թարգմանությունները: Երկրում ծավալվեց ***թարգմանչաց շարժումը:*** Թարգմանիչների ջանքերի շնորհիվ հայ ընթերցողը մայրենի լեզվով հաղորդակից դարձավ Արիստոտելի փիլիսոփայական երկերին, Դիոնիսիոս Թրակացու «Քերականությանը», Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակագրությանը», Կեղծ–Կալիսթենեսի «Պատմութիւն վարուց Ալեքսանդրի» և այլ երկերի: Հայերեն թարգմանությունների շնորհիվ պահպանվեցին Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակագրությունը», Արիստիդեսի «Ջատագովությունը», Հերմես Եռամեծի «Սահմանքը» և այլ երկեր, որոնց բնագրերը կորել են:

V դ. թարգմանությունների և ինքնուրույն գրականության լեզուն այնքան կատարյալ էր, որ մեսրոպյան հայ գրական ժառանգությունն անվանվեց ***ոսկեդարյան:*** Ըստ Եղիշեի՝ Հայաստանում լուսավորչական շարժումն ընթանում էր ***«Լաւ է կոյր աչօք, քան կոյր միտօք» («Լավ է աչքով կույր լինել, քան միտքով»)*** նշանաբանով:

Պատմագրություն: V դարում մեծ վերելք ապրեց հայ պատմագրությունը: ***Կորյուն*** վարդապետը գրել է ***«Վարք Մաշտոցի»*** երկը, որում մեծ խանդավառությամբ ու սիրով շարադրել է իր ուսուցչի՝ Մեսրոպ Մաշտոցի կյանքն (վարքը) ու գործունեությունը՝ հայ գրերի գյուտը և լուսավորչական գործը:

Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»-ը նվիրված է Սբ Գրիգոր Լուսավորչի ու Տրդատ Մեծ թագավորի կյանքին ու գործունեությանը, Հայաստանում քրիստոնեության տարածմանն ու աշխարհում առաջինը պետականորեն ընդունմանը:

Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց»-ն ընդգրկում է Հայոց աշխարհի՝ IV դարի առաջին տասնամյակներից մինչև Մեծ Հայքի թագավորության պարսկա–հռոմեական առաջին բաժանումն ընդգրկող ժամանակաշրջանի պատմությունը: Այն կարևոր սկզբնաղբյուր է Հայաստանի քաղաքական ու հոգևոր կյանքի, թագավորական իշխանության, նախարարությունների ու եկեղեցու հարաբերությունների և օտար զավթիչների դեմ հայ ժողովրդի մղած հերոսական պայքարի մասին:

Հայ պատմագրության թագն ու պսակն է ***Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ը,*** որը ***հայ դասական պատմագիտության հիմնասյունն*** է: Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի աշակերտ Մովսես Խորենացու հեղինակությունն այնքան մեծ էր, որ նա անվանվել է ***Մեծն քերթող, Քերթողահայր:*** Մովսես Խորենացու երկը, որ գրվեց հայոց տանուտեր Սահակ Բագրատունու մեկենասությամբ, ընդգրկում է հայ ժողովրդի պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչև V դ. 40–ական թվականները: Ժամանակագրական այդպիսի ընդգրկմամբ Մովսես Խորենացին հայ պատմագրության մեջ առաջինը շարադրեց հայոց ամբողջական պատմությունը:

Պատմահոր երկը բաղկացած է երեք գրքից: Առաջին գրքում («Հայոց մեծերի ծննդաբանությունը») հեղինակը պատմական գրավոր սկզբնաղբյուրներից և հայոց

բանակցություններից քաղված տեղեկությունների հիման վրա պատմում է հայոց անվանադիր նախնի Հայկ Նահապետի ու նրան հաջորդած Հայկազուն սերունդների հայրենանվեր հերոսությունների ու աշխարհաշեն գործունեության մասին՝ մինչև Երվանդյան Տիգրանի և նրա զարմերի ժամանակները: Պատմահայրը զգալի տեղ է հատկացրել Աստվածաշնչին, ինչպես նաև հին առասպելներին և պատմական ավանդություններին:

Երկրորդ գիրքը կոչվում է «Բան միջակ պատմութեան մերոցն նախնեաց», որի շարադրանքում ամփոփված է Ք.ա. IV դ. վերջին քառորդից մինչև Ք.հ. IV դ. երրորդ տասնամյակի պատմությունը: Այս գրքի հիմնական դեմքերն են հայոց Երվանդ, Արտաշես, Տիգրան Մեծ, Արտավազդ, Վաղարշակ, Արգար, Տրդատ Մեծ թագավորները, Սբ Գրիգոր Լուսավորիչը և մյուս հոգևոր այրերը:

Երրորդ գիրքը վերնագրված է՝ «Ավարտաբանութիւն մերոց Հայրենեաց»: Այն ընդգրկում է մինչև 440 թ. ընկած պատմությունը և ավարտվում է Հայաստանում ստեղծված ծանր վիճակի նկարագրությամբ՝ «Ողբով»: Երրորդ գրքի պատմական դեմքերն են հայոց թագավորներ Խոսրով Կոտակը, Տիրանը, Արշակ II–ը, Պապը, Վռամշապուհը և մյուսները, զինվորական գործիչները (Վասակ, Մուշեղ, Մանվել, Վարդան Մամիկոնյանները), հայոց կաթողիկոսներ Ներսես և Սահակ Պարթևները, հանճարեղ Մեսրոպ Մաշտոցը և նրանց ժամանակակից ազգային գործիչները: Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկը գրված է հայրենասիրական հզոր ոգով, որի հիմնական գաղափարն է հայոց ամբողջական պետության վերականգնումը՝ ապավինելով սեփական ուժին: Մովսես Խորենացին գրել է նաև «Աշխարհացոյց» երկը, որը VII դարում շարունակել է Անանիա Շիրակացին:

V դարում հայ ժողովրդի՝ Սասանյանների տիրապետության դեմ կազմակերպված մեծ ապստամբությունները նկարագրված են ***Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին»*** ու ***Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց»*** երկերում: Եղիշեի երկը նվիրված է Վարդան Մամիկոնյանի գլխավորած ժողովրդական հզոր ապստամբությանը: Ղազար Փարպեցին շարունակում է դեպքերի ընթացքն այնտեղից, որտեղ հասցրել էր Փավստոս Բուզանդը՝ 385–387 թթ.: Այդ շարադրանքը ներկայացնում է IV դ. վերջից մինչև V դ. վերջն ընկած պատմությունը, Վարդանանց ապստամբությունից հետո պատմում է Վահան Մամիկոնյանի գլխավորած ապստամբության մասին:

V դ. վարքագրական գրականության նմուշներից է Վարդան Մամիկոնյանի դստեր՝ Շուշանիկի նահատակությանը նվիրված վարքագրությունը:

Փիլիսոփայություն: Հայ գիտական միտքը վաղ միջնադարում ներկայանում էր փիլիսոփայության համակարգում: IV դարում փիլիսոփայությամբ կամ իմաստասիրությամբ զբաղվել է նշանավոր ճարտասան ու մանկավարժ ***Պարույր Հայկազնը***, իսկ V դարում հանդես եկան ***Եզնիկ Կողբացին*** և ***Դավիթ Անհաղթը***: Եզնիկ Կողբացին իր ***«Եղծ աղանդոց»*** երկում քրիստոնեական հավատքը պաշտպանել է հակադիր ուսմունքներից:

Հայ մեծագույն փիլիսոփա Դավիթ Անհաղթն իր ***«Սահմանք իմաստասիրութեան»*** երկում մեծ տեղ է հատկացրել բնության ճանաչմանը: Նա ասում է. «Ո՞ւր հասանէ գիտութիւն, ուր ոչ հասանէ բնութիւն»: Այս խոսքերն անսահման բնության ճանաչողությամբ կատարելության հասնելու արտահայտություն են, քանզի, ըստ մեծ մտածողի, իմաստասիրությունը նպատակ ունի զարդարելու մարդկային հոգին:

Անհաղթը կատարել է գիտությունների դասակարգում՝ ըստ բնագիտության, թվաբանության և աստվածաբանության: Հետևելով անտիկ գիտության ավանդույթներին՝ Դավիթ Անհաղթն իր փիլիսոփայական երկերում լայնորեն համադրում է գիտելիքների տարբեր բնագավառներից եկող դրույթները: Նա բուն փիլիսոփայական խնդիրների հետ մեկտեղ անդրադար-

ձել է նաև տիեզերագիտական կարգի որոշ դրույթների, որոնք մեծ նշանակություն ունեն վաղմիջնադարյան բնափիլիսոփայական մտքի զարգացման մեջ:

Բնական գիտություններ: Հայ բնագիտության մեջ Երկրի գնդաձևության գաղափարն առավել ցայտուն դրսևորվել է V դարում ***Դավիթ Անհաղթի*** հայացքներում և ***Գյուտ կաթողիկոսի*** նամակում, իսկ VII դարում՝ ականավոր բնափիլիսոփա, մաթեմատիկոս, տիեզերագետ, աշխարհագետ ու մանկավարժ ***Անանիա Շիրակացու*** աշխատություններում:

Բնության զարգացման ուսումնասիրության առաջին աստիճանի վրա գիտնականները դնում էին տարրերի առաջացումը և դրանց փոխազդեցությունը: Հին մտածողները կարծում էին, որ նյութական աշխարհի հիմքում ընկած էին ***չորս տարրեր՝ կրակ, օդ, ջուր, հող:*** Արիստոտելն իր հերթին ներկայացրել է այդ խնդիրը: Անդրադառնալով իմաստասիրության սահմանմանն ըստ Արիստոտելի՝ Դավիթ Անհաղթը նույնպես համարում էր, որ «մարմինը բաղկացած է չորս տարրերից, որոնց պատճառը գիտի բնական իմաստասերը» (այսինքն՝ բնափիլիսոփան):

Դավիթ Անհաղթի ժամանակակից Գյուտ կաթողիկոսը նույնպես համարում էր, որ նյութական աշխարհի հիմքում ընկած են չորս տարրերը: Նա գրել է, որ չորս տարրերից բաղկացած աշխարհի մասին կարող է խոսել միայն նա, ով համարձակ ուսումնասիրություններ է կատարել տարբեր գիտությունների բնագավառում:

Անանիա Շիրակացին բնափիլիսոփայական տեսանկյունից նոր և կարևոր դրույթներ արծարծեց՝ հիմքում ունենալով անտիկ գիտության դրույթները, որոնք նա ստեղծագործաբար մշակում և խորացնում էր: Շիրակացին հստակ ձևակերպել է աշխարհի գոյության գաղափարը՝ պայմանավորված հակադրությունների միասնությամբ ու պայքարով. *«Ծնունդը մահվան սկիզբն է, և մահը վերստին սկիզբն է ծննդյան, քանզի այս անընդհատ հակասությունից աշխարհը գոյատևում է»:*

Տիեզերագիտություն: Տիեզերագիտության բնագավառում անտիկ գիտության հիմնական նվաճումներից էր Տիեզերքում գտնվող մարմինների գնդաձևության գաղափարը:

Դավիթ Անհաղթը, հիշատակելով գնդաձև մարմինների մասին, անտարակույս նկատի ուներ գիտելիքների այն բնագավառը, որին Արիստոտելը մանրամասն անդրադարձել էր «Երկնքի մասին» իր աշխատությունում:

Հետաքրքիր են Դավիթ Անհաղթի հաղորդած տեղեկություններն Արեգակի, Երկրի և Լուսնի համեմատական չափերի մասին: Նա գրում է. *«Միավասիկ Արեգակը, բազմապատիկ մեծ լինելով, քան Երկիրը, թզաչափ է երևում»:* Մի այլ տեղ նա գրում է, որ *«...Արեգակը չափազանց մեծ է, քան Երկիրը, և Երկիրը՝ քան Լուսինը, թեպետ և անհավանական է, սակայն ճշմարիտ է»:* Դավիթ Անհաղթի ժամանակակից Գյուտ կաթողիկոսի հայացքները ևս վկայում էին, որ V դ. հայ գիտությունը շարունակում էր անտիկ գիտության առաջադեմ ավանդույթները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Անտիկ շրջանի ինչ ստեղծագործություններ թարգմանվեցին հայերեն, դրանցից որոնք են պահպանվել միայն հայերեն թարգմանությամբ:
2. Պատմագրության բնագավառում ինչ ձեռքբերումներ եղան: Քանի՞ գրքից է կազմված Խորենացու «Հայոց պատմությունը», ինչ ժամանակագրական սահմաններ է ընդգրկում այն: Ո՞րն է Խորենացու մյուս ստեղծագործությունը:
3. Նշեք IV–V դդ. հայ փիլիսոփաների անունները և նրանց ստեղծագործությունները: Ի՞նչ հարցեր են արծարծել հայ փիլիսոփաներն իրենց ստեղծագործություններում:
4. Ներկայացրեք Դավիթ Անհաղթի հայացքները:

§ 3. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ VI–VIII ԴԱՐԵՐՈՒՄ

Պատմագրություն: VI–VII դդ. իրադարձությունների մասին կարևոր սկզբնաղբյուր է ***Սեբեոս*** եպիսկոպոսի ***«Պատմութիւն»***-ը: Պատմիչը մանրամասն տեղեկություններ է հաղորդում հայ–բյուզանդական և հայ–պարսկական հարաբերությունների, ինչպես նաև պարսկա–բյուզանդական հակամարտության և դրան հաջորդած Արաբական խալիֆայության նվաճումների սկզբնական ժամանակաշրջանի մասին: Սեբեոսը հատուկ ուշադրություն է հրավիրում հայ ժողովրդի ազատագրական պայքարի և հայոց ամբողջական ու անկախ պետության վերականգնման՝ հայ քաղաքական և հոգևոր գործիչների հսկայական ջանքերի վրա: Ընդհանուր առմամբ Սեբեոսի երկն արժեքավոր սկզբնաղբյուր է Հայաստանի և հարևան երկրների պատմության մասին:

VII–VIII դարերի հայ պատմիչ ***Մովսես Կաղանկատվացին*** իր ***«Պատմութիւն Աղուանից աշխարհի»*** երկում մանրամասն տեղեկություններ է հաղորդում Մեծ Հայքի Հայոց Արևելից կողմանց՝ Արցախ և Ուտիք աշխարհների, ինչպես նաև հայոց պետության և Հայ առաքելական եկեղեցուն ենթակա բուն Աղվանքի քաղաքական, եկեղեցական, մշակութային և ժողովրդագրական պատմության մասին:

Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն Տարօնոյ» երկը նվիրված է օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած պայքարին:

VIII դ. պատմիչ ***Ղևոնդ Վարդապետն*** իր ***«Պատմութիւն»*** երկում նկարագրել է հայ ժողովրդի ծանր վիճակը և հերոսական պայքարը Արաբական խալիֆայության տիրապետության դեմ:

Բնափիլիսոփայություն և տիեզերագիտություն: Հնագույն աշխարհընկալումային և անտիկ փիլիսոփայության տիեզերագիտական հայացքները կարևոր դեր են խաղացել վաղ միջնադարում բնափիլիսոփայական մտքի զարգացման գործում:

Երկրի՝ որպես տիեզերական մարմնի ուսումնասիրությունն անտիկ դարաշրջանում հանգեցրեց աստղագիտության զարգացմանը:

Անանիա Շիրակացին, իր տիեզերագիտական աշխատություններում ամփոփելով վաղմիջնադարյան Հայաստանի բնափիլիսոփայական մտքի նվաճումները, ***գիտնականորեն հիմնավորել է Երկրի և տիեզերական մարմինների գնդաձևության գաղափարը:***

Նա քննադատում է աստղագուշակությունը և ցույց տալիս աստղային երկնքի ուսումնասիրության կարևորությունը՝ ճանապարհորդությունների և եղանակը կանխագուշակելու համար: Այս առումով կարևոր են նրա հաղորդումները Կենդանակերպի, Ծիր Կաթինի և Խնցգետնի համաստեղության մասին:

Անանիա Շիրակացին տեղեկություններ է հաղորդում Լուսնի ազդեցության հետ կապված մակընթացությունների ու տեղատվությունների, ինչպես նաև «աստղային երկնքի հետ կապված» երկրաշարժերի մասին: Շիրակացու տիեզերագիտական աշխատություններում ամփոփված են վաղմիջնադարյան Հայաստանի բնափիլիսոփայական մտքի նվաճումները:

Աշխարհագրություն: Վաղմիջնադարյան Հայաստանի աշխարհագրության և քարտեզագրության անզուգական հուշարձանն է ***Մովսես Խորենացու*** (V դ.) և նրա գործը շարունակողի՝ ***Անանիա Շիրակացու*** (VII դ.) ***«Աշխարհացոյց»***-ը: Դա հին և վաղմիջնադարյան ժամանակներում հայտնի աշխարհի աշխարհագրական նկարագրությունը պարունակող աշխատություն է՝ հագեցած համապատասխան քարտեզագրական նյութերով: Այն հիմնված է Պտղոմեոսի «Աշխարհագրության ձեռնարկ»-ի մեթոդաբանության վրա: Միևնույն ժամանակ այն իր դարաշրջանի առումով կարևոր տեղեկություններ է պարունակում աշխարհի մասին: «Աշխարհացոյց»-ում մեծ տեղ է հատկացված Հայաստանի և հարևան երկրների աշխարհագրությանը: Դա նշա-

նակում է, որ գիտականորեն ստեղծվել էր թե՛ աշխարհագրական ձեռնարկ և թե՛ դրանում նկարագրված երկրների ու երկրամասերի քարտեզների ժողովածու՝ *«Այրարատ»*:

Արշակունյաց թագավորության անկումից հետո հայ քաղաքական մտքի կենտրոնում էր հայոց պետականության և տարածքային ամբողջականության վերականգնման խնդիրը, ուստի կարևոր է համարվել հայոց երկրի տարածքային ամբողջական պատկերի ներկայացումը: Պատահական չէ, որ «Աշխարհացոյցը» հանգամանորեն նկարագրում է Մեծ Հայքի 15 աշխարհները և Փոքր Հայքը: «Աշխարհացոյց»-ի պարունակած համապատասխան նյութը հնարավորություն է տալիս խոսելու նաև գլոբուսի վերականգնման մասին: Անանիա Շիրակացին մեծ ներդրում ունի նաև մաթեմատիկայի բնագավառում: Նրա կողմից կազմված ***թվաբանության դասագիրքն աշխարհում հնագույնների շարքին է պարկանում:***

Տոմար: Տոմարական հաշվումների նպատակով Դվինի 554 թ. եկեղեցական ժողովն անդրադարձ է կատարում հայկական օրացույցին: ***Բուն Հայոց թվականի (Ք.ա. 2492 թ.)*** կողքին սահմանվում է ***«Հայոց Մեծ թվականը»***, որի սկիզբը համարվում է ***552 թ. հուլիսի 11-ը:*** Այնուամենայնիվ, Հայաստանում եկեղեցական տոների և ծիսակատարությունների ժամանակը որոշելիս անհամապատասխանություններ էին նկատվում՝ կապված հայկական արեգակնային օրացույցի շարժական լինելու հետ: Ուստի քրիստոնյա ուրիշ երկրների նման՝ Հայաստանում ևս սկսեցին գործածել հատուկ աղյուսակներ՝ օրացուցային տարբերությունները կարգավորելու համար: Անանիա Շիրակացին «Անշարժ տոմար» կազմելու փորձ արեց:

Իրավունք և եկեղեցական կանոնական գրականություն: IV դարից աշխարհիկ իրավունքի կողքին Հայաստանում զարգացավ նաև եկեղեցական՝ կանոնական իրավունքը: Հայ Արշակունիների թագավորության վերջից երկրի օրենքների մշակման աշխատանքն իր վրա վերցրեց եկեղեցին: Հայ եկեղեցական իրավունքի մեջ կարևոր էին Սուրբ Գրիգոր Լուսավորչի, Սուրբ Սահակ Պարթևի և մյուս սուրբ հայրերի հաստատած կանոններն ու Հայ առաքելական եկեղեցու ժողովներում ընդունված կանոնախմբերը:

Հովհան Գ Օձնեցի

V դարի կեսերից հայ մտավորականներն իրենց ծանրակշիռ խոսքն են ասել՝ ի պաշտպանություն Տիեզերական առաջին երեք ժողովների քրիստոնեաբանության վրա հիմնված Հայ առաքելական եկեղեցու դավանաբանության (Մովսես Խորենացի, Ղազար Փարպեցի, կաթողիկոսներ Հովհաննես Ա Մանդակունի և Բաբգեն Ա):

Կազմվում է դավանաբանական բնույթի թղթակցությունների ժողովածու՝ ***«Գիրք թղթոց»՝ գրված V-IX դդ.:*** Կոմիտաս կաթողիկոսի ժամանակ (615–628 թթ.) կազմվել է եկեղեցու հայրերի գրվածքների հատվածներից հավաքված ***«Կնիք հաւատոյ»*** ժողովածուն:

Համաշխարհային պարմության մեջ «Կանոնագիրք Հայոց» երկը, որը կազմվել է կաթողիկոս ***Հովհան Գ Օձնեցու (717-728 թթ.)*** ջանքերով, ***կանոնական իրավունքի վերաբերյալ առաջին ժողովածուն է:*** Դրանում զետեղված են վաղմիջնադարյան կանոնական բազմաթիվ փաստաթղթեր: Հովհան Օձնեցու գրչին է պատկանում նաև պավլիկյանների վարդապետության դեմ ներկայացված ***«Ընդդէմ Պողիկեանց»*** գրվածքը:

Եկեղեցին զբաղվել է նաև քաղաքացիական, ընտանեկան, քրեական և դատավարական իրավունքի հարցերով:

Երերույքի եռանավ բազիլիկ եկեղեցին

Դիծեռնավանքի եռանավ բազիլիկ եկեղեցին. IV–V դդ.

Արվեստ: Հայ շինարարական արվեստի հնագույն ավանդույթները նշանակալից առաջընթաց ապրեցին միջնադարում: ***Հայ ազգային ճարտարապետությունն ստեղծեց եկեղեցաշինության համաշխարհային գլուխգործոցներ:***

Քաղաքաշինության և ամրոցաշինության մեջ ձեռք բերված մեծ փորձը լայնորեն օգտագործվեց վաղ միջնադարում: Հայ շինարարները շինությունների ամրությունն ապահովելու համար կիրառում էին հատուկ միջոցներ՝ օգտագործելով կապակցող կրաշաղախ նյութով շարվածքը: Քրիստոնեական պաշտամունքային վաղ շրջանի շինությունները բազիլիկ տաճարներն էին, ինչպես ***Դիծեռնավանքի, Բասաղի, Արցախի Տիգրանակերտի, Երերույքի և Տեկորի եռանավ բազիլիկ եկեղեցիները:*** Այնուհետև եկեղեցաշինության մեջ առաջ եկան կենտրոնագմբեթ կառույցները, որոնք ավելի դիմացկուն էին երկրաշարժերի ժամանակ: Երդիկավոր քարաշեն ծածկերը կառուցվում էին հնուց եկող հազարաշեն կոչվող ձևի օրինակով:

Վաղարշապատի Ս. Գայանե եկեղեցու ընդհանուր տեսքը. 631 թ.

Մրենի տաճարը. 613 թ.

Եկեղեցաշինության վաղ շրջանի կառույցներից էր Վաղարշապատի Մայր տաճար Ս. Էջմիածինը, որը հիմնադրվեց IV դարի սկզբին, ապա վերակառուցվեց V դարի 80-ական թթ.: Բազիլիկ շենքի հիմքի վրա է կառուցվել Մայր տաճարի խաչաձև գմբեթակիր շինությունը: Տարոն գավառում, Արցախում, Գառնիում, Դվինում, Արուճում, Աշտարակում, Թալինում և Բագավանում ևս եկեղեցիներ կառուցվեցին:

Նշանակալից էին ***Ոսկեվանի*** (590-ական թթ.), ***Մրենի*** (613 թ.), ***Հոռոմոսի*** (618 թ.), ***Գայանեի*** (631 թ.) և ***Զվարթնոցի*** (641-661 թթ.) եկեղեցիները:

Ճարտարապետության հետ միասին զարգանում էր նաև ***քանդակագործությունը:*** Այդ բնագավառի հիասքանչ նմուշներից են Աղձքի դամբարանի, Երերույքի, Զվարթնոցի, Աշտարակի և այլ ճարտարապետական հուշարձանների քանդակները:

Հայկական ճարտարապետության ու քանդակագործության մեջ նոր երևույթ էր ***խաչքարը,*** որի ակունքներում էր կոթողներ կանգնեցնելու վաղեմի ավանդույթը (հնագույն մենհիրներ, վիշապաքարեր, Արարատյան՝ Վանի թագավորության դարաշրջանի կոթողներ, սահմանաքարեր, թևավոր խաչեր և այլն): Ճարտարապետական մանր կոթողային ձև ներկայացնելով՝ ***խաչքարը հայ կերպարվեստի յուրահատուկ տեսակ է:*** Խաչքարը պատվանդանի վրա կանգնեցված սալաձև կոթող-խաչարձան է: Այն՝ որպես ճարտարապետական զարդ, կարող է նաև ագուցվել եկեղեցու որմի մեջ: Խաչքարերը կանգնեցվել են որպես կոթողներ՝ ի նշանավորումն ռազմական հաղթանակների, պատմական կարևոր իրադարձությունների, տաճարների, եկեղեցիների, աղբյուրների, կամուրջների կառուցման և ի հիշատակ նախնիների: Խաչքարի արվեստը դարերի ընթացքում նշանավոր վարպետների ստեղծագործ աշխատանքի շնորհիվ անզուգական կատարելության հասավ:

IV-VII դդ. կառուցված եկեղեցիները զարդարված էին ***խճանկարներով*** և ***որմնանկարներով*** (Քասաղ, Ս. Էջմիածին, Տեկոր, Զվարթնոց, Արուճ):

Հայ մատենագրության մեջ վաղմիջնադարյան շրջանից զարգացել է նաև գրքերը մանրանկարներով զարդարելու արվեստը, որը հետագա դարերում մեծ վերելք է ապրել: Պահպանված հայկական առաջին մանրանկարները (VI-VII դդ.) չորսն են, որոնք ունեն ավետարանական բովանդակություն: Հայտնության թեմային վերաբերող մանրանկարները կատարված են տպավորիչ գունագեղությամբ, իսկ կերպարների դեմքերն արտահայտչորեն ազգային ինքնատիպություն են կրում: Դրանք ներմուծված են «Էջմիածնի Ավետարանի» (989 թ.) ձեռագրի վերջում և պահպանվել են VI դ. փղոսկրյա կազմի տակ:

Վաղմիջնադարյան Հայաստանում զարգացել են նաև ***եկեղեցական երգն*** ու ***երաժշտությունը:*** Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը, Կոմիտաս կաթողիկոսը հորինել են ***շարականներ՝*** եկեղեցական արարողություններին և տոներին երգելու համար: Իսկ թատերական կյանքն արտահայտվել է թատերականացված խաղերի և հանդեսների ձևով:

Ուշագրավ էին հայ ոսկերիչների ստեղծած գործերը: Գեղարվեստական խեցեղենն ու ապակեղենը լայն կիրառություն են ունեցել հնադարյան ժամանակաշրջանից: Արմավիրում, Արտաշատում, Գառնիում և Դվինում հայտնաբերվել են գեղեցիկ զարդեր և բազմագույն անոթներ, ջրամաններ, պնակներ, թասեր, կարասներ և ապակուց պատրաստված տարբեր սրվակներ:

Հայկական արհեստագործության և արվեստի գյուխգործոցների համբավը տարածվել էր Հայաստանի սահմաններից դուրս: Վաղ միջնադարում ստեղծված հարուստ մշակութային արժեքները պարարտ հող նախապատրաստեցին հետագայում հայ մշակույթի հարատևման և բուռն զարգացման համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ տեղեկություններ է պարունակում Սեբեոսի «Պատմութիւնը»: Ո՞ր շրջանի իրադարձությունների պատմությանն է նվիրված Մովսես Կաղանկատվացու աշխատությունը: Ո՞վ է «Պատմութիւն Տարօնոյ» երկի հեղինակը: Ի՞նչ իրադարձությունների մասին է պատմում Ղևոնդ Վարդապետի աշխատությունը:
2. Ի՞նչ գիտեք Անանիա Շիրակացու տիեզերագիտական հայացքների մասին:
3. Աշխարհագրական բնույթի ինչ աշխատություն է ստեղծվել վաղմիջնադարյան Հայաստանում:
4. Դվինի 554 թ. եկեղեցական ժողովը ինչ որոշումներ է կայացրել տոմարի վերաբերյալ:
5. Քրիստոնեություն ընդունելուց հետո Հայաստանում ո՞ւմ էր պատկանում օրենքների մշակման իրավունքը: Ինչո՞վ է հայտնի «Կանոնագիրք Հայոց» երկը, ո՞վ է դա կազմել:
6. Վաղմիջնադարյան հայկական եկեղեցական ինչ շինություններ կարող եք նշել: Նկարագրե՛ք դրանք: Ի՞նչ է խաչքարը: Ո՞ր շրջանին են վերաբերում հայկական առաջին մանրանկարները:

Թեմա 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ X–XIV ԴԱՐԵՐՈՒՄ

§ 1. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԵՐԵԼՔԸ: ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Հայ մշակույթի վերելքի պատմության պայմանները: Արաբական տիրապետության ժամանակաշրջանում հայկական մշակույթն անկում ապրեց: Իրավիճակը փոխվեց հայոց անկախ պետականության վերականգնման, Բագրատունյաց թագավորության հաստատման շրջանից:

Հայկական մշակույթի նոր վերելքը կապված էր նաև տնտեսական կյանքում տեղի ունեցող կարևոր տեղաշարժերի հետ: Քաղաքային բնակչությունը, որը հիմնականում զբաղված էր արհեստագործությամբ և առևտրով, արդեն չէր բավարարում գոյություն ունեցող կրթական համարգով, որը հիմնականում տալիս էր աստվածաբանական գիտելիքներ: Քաղաքներում ապրող հարուստ առևտրականները և արհեստավորները սովորաբար իրենց ձեռքում կուտակված միջոցների մի մասը ծախսում էին եկեղեցիներ, առանձնատներ կառուցելու, դպրոցներին նյութական աջակցություն ցույց տալու և իրենց երեխաներին ավելի բարձր կրթության տալու համար: Այդպիսի գործունեությամբ նրանցից հետ չէին մնում հայկական իշխանական և արքայական տների ներկայացուցիչները:

Նախորդ ժամանակաշրջանում մշակութային կյանքի հիմնական կենտրոն վանքերի կողքին այժմ նման կենտրոն են դառնում քաղաքները՝ ***Անին, Վանը, Դվինը, Կարսը, Արծնը, Սիսը, Տարոնը, Աղանան:***

X–XIV դդ. հայկական մշակույթի զարգացման կարևոր առանձնահատկություններից մեկն այն էր, որ վերելքը ոչ միայն հայրենի հողի վրա էր, այլև Հայաստանից դուրս: Առաջավոր Ասիայի տարբեր շրջաններում և քաղաքական ու մշակութային

տարաբնույթ միջավայրերում հայտնված հայությունն իր ինքնության խնդիրը հիմնականում լուծում էր հայկական մշակույթի պահպանման և զարգացման միջոցով: Այդ պատճառով գաղթավայրերում ևս առաջանում էին հայկական մշակույթի կենտրոններ:

Սելջուկյան արշավանքներից մինչև Զաքարյանների իշխանության հաստատումը հայկական մշակույթը գերազանցապես վերելք էր ապրում Կիլիկյան Հայաստանում: Իր գոյության ողջ ընթացքում Կիլիկյան Հայաստանը սերտ հարաբերությունների մեջ էր Խաչակրաց Արևելքի, Բյուզանդիայի և մուսուլմանական երկրների հետ, որը մեծ ազդեցություն ունեցավ նաև հայկական մշակույթի զարգացման վրա, քանի որ այն իր մեջ ներառեց տարաբնույթ մշակույթների որոշ հատկանիշներ: Այս պայմաններում ***համահայկական մշակութային կենտրոնի գործառույթն*** իր վրա վերցրեց ***Հայոց կաթողիկոսությունը***, որը, տեղից տեղ տեղափոխվելով, հաստատվեց Հռոմկլայում (1151–1292 թթ.), ապա՝ Սսում (1292–1441 թթ.):

Դպրոցները և համալսարանները: Անիի Բագրատունյաց թագավորության, Կիլիկյան Հայաստանի և Զաքարյանների իշխանության ժամանակաշրջանում նպաստավոր պայմաններ էին ստեղծվել նոր կրթական համակարգի առաջացման և զարգացման համար: Հասարակության սոցիալ–տնտեսական և քաղաքական կյանքի աշխուժացումը նպաստում էր կրթական գործի բուռն վերելքին: Կրթության բնագավառում ի հայտ եկան նոր երևույթներ: Արհեստը, առևտուրը և ապրանքադրամական հարաբերությունները կրթությանը նոր պահանջներ էին ներկայացնում, քանզի հասարակությանն անհրաժեշտ էին ոչ միայն կրոնափիլիսոփայական, այլև կիրառական գիտելիքներ ունեցող մարդիկ:

X դ. նախորդ ժամանակաշրջանից ժառանգեց կրթության կազմակերպման և գիտելիքների հաղորդման այնպիսի կարևոր բաղադրիչ, ինչպիսին էր ***«յոթ ազատ արվեստների»*** համակարգը: Այն բաղկացած

Սբ Գրիգոր Տաթևացին իր աշակերտների հետ, Գրիգոր Տաթևացի, Սաղմոսների մեկնություն, 1449 թ.

էր երկու ենթահամակարգերից՝ ***Եռյակ*** և ***Քառյակ***: Առաջինը ներառում էր քերականությունը, տրամաբանությունը, ճարտասանությունը, իսկ երկրորդը՝ թվաբանությունը, երկրաչափությունը, երաժշտությունը, աստղագիտությունը:

Դպրոցները, որոնք հիմնականում եկեղեցու տնօրինության տակ էին, բաժանվում էին ***ծիսական, վանական*** և ***տաճարային*** տիպերի: Արդեն ***IX դ.*** վանական և տաճարային դպրոցների հիման վրա ձևավորվում էին ***նոր կիսպի դպրոցներ՝ վարդապետարաններ:***

Քաղաքներում եկեղեցու իրավասությունից դուրս հիմնադրվում էին ***աշխարհիկ դպրոցներ***, որոնց մի մասը վերածվում էր բարձրագույն տիպի դպրոցների:

Ուսումնագիտական գործի արդյունավետ կազմակերպման համար մեծ նշանակություն ուներ նաև անհրաժեշտ գրականության առկայությունը, ուստի դպրոցներին կից գոյություն ունեին ***մատենադարաններ:*** Գիրքը ձեռագիր էր՝ գրված մագաղաթյա թերթերի վրա, ուստի շատ թանկ արժեր և պահվում էր հատուկ խնամքով:

Գրիգոր Նարեկացի. Ծերուն, Նարեկ, 1390 թ.

X–XIV դդ. ուսումնագիտական գործը կազմակերպող նշանավոր գործիչներից էին ***Գրիգոր Մագիստրոսը, Հովհաննես Իմաստասերը, Անանիա Նարեկացին, Ներսես Մշեցին, Եսայի Նչեցին, Ներսես Լամբրոնացին, Վահրամ Բաբունին, Գրիգոր Տաթևացին:***

X–XIV դդ. կրթական համակարգը բաղկացած էր երկու՝ տարրական և բարձրագույն տիպի դպրոցներից: Բարձրագույն տիպի դպրոցում կամ վարդապետարանում ուսումը տևում էր 7–8 տարի: Դասընթացը հաջողությամբ յուրացրած շրջանավարտը ստանում էր ***վարդապետական գավազան,*** որը նրան իրավունք էր տալիս զբաղվելու ուսուցչությամբ, քարոզչությամբ և գիտական գործունեությամբ: Յուրաքանչյուր վարդապետարանում գիտության որևէ բնագավառ ուներ գերակա ուղղություն:

Միջնադարյան Հայաստանի նշանավոր ուսումնագիտական կենտրոններից էին ***Սանահինի*** և ***Հաղպատի վարդապետարանները:*** Իրենց գիտամանկավարժական գործունեությունն այստեղ են անցկացրել ժամանակի նշանավոր գործիչներ Դավիթ Այավկաորդին, Վարդան Արևելցին, Հովհաննես Երզնկացին:

Ժամանակի նշանավոր կրթական կենտրոններից էր նաև ***Նարեկի վարդապետարանը,*** որն իր զարգացման բարձրակետին հասավ ***Անանիա Նարեկացու*** ուսուցչապետության տարիներին: Այստեղ է կրթություն ստացել աշխարհահռչակ բանաստեղծ Գրիգոր Նարեկացին:

Եթե IX–XI դդ. համարվում են բարձրագույն դպրոցի կազմակերպման ժամանակաշրջաններ, ապա XII դարից սկսվում է նրանց վերելքի ժամանակաշրջանը: Դրանց մի մասը ձեռք է բերում համահայկական նշանակություն: Այս տեսակետից մեծ էր ***Անիի վարդապետարանի*** դերը, որի ուսուցչապետ ***Հովհաննես Իմաստասերը*** մշակեց վարդապետական կրթության նոր ծրագիր: Այն բաղկացած էր երկու բաժնից: Առաջինում ներկայացված էր դասավանդվող առարկաների ցանկը, իսկ երկրորդում՝ հանձնարարվող գրականությունը:

Հայկական մշակույթի զարգացման գործում նշանակալից դեր խաղաց նաև ***Նոր Գեղիկի*** (Գոշավանք) վարդապետարանը, որն իր ծաղկումն ապրեց ուսուցչապետ ***Մխիթար Գոշի*** օրոք: Այստեղ է կրթություն ստացել նշանավոր պատմիչ Կիրակոս Գանձակեցին:

Հայ մշակույթի զարգացման մեջ թերևս ոչ մի ուսումնագիտական կենտրոն այնքան կարևոր դեր չի խաղացել, որքան ***Գլաձորի համալսարանը:*** 1280-ական թթ. նշանավոր մատենագիր ***Ներսես Մշեցին*** հիմնադրում է Աղբերց վանքի դպրոցը, որը Եսայի Նչեցու բաբունապետության տարիներին հայտնի է դառնում ***Գլաձորի համալսարան*** անունով: Ուսումնագիտական գործընթացի կազմակերպման տեսակետից այն նման էր միջնադարյան Եվրոպայում ծնունդ առած համալսարաններին: Համալսարանի ղեկավարը կոչվում էր բաբունապետ, իսկ դասախոսները՝ բաբունիներ: Համալսարանն ուներ երեք բաժանմունք, որոնք կոչվում էին ուսումնարաններ: Դրանք էին՝ գրչության արվեստի, հասարակական ու բնական գիտությունների և երաժշտության:

Գրաբարի համալսարանը համահայկական ճանաչում ուներ: Բարձրագույն կրթություն ստանալու համար այստեղ սովորելու էին գալիս ինչպես Հայաստանի տարբեր շրջաններից, այնպես էլ հայկական գաղթավայրերից:

Հայ մշակույթի զարգացման մեջ մեծ դեր է խաղացել նաև ***Տաթևի համալսարանը:*** Այն բեղմնավոր գործունեություն է ծավալել հատկապես XIV դ. երկրորդ կեսին–XV դ. սկզբին, երբ համալսարանի ուսումնագիտական աշխատանքները ղեկավարում էին նշանավոր գիտնականներ ***Հովհան Որոտնեցին*** և ***Գրիգոր Տաթևացին:*** Վարդապետական աստիճան ստանալու համար համալսարանի սաները ներկայացնում էին ավարտական աշխատանք, որը հաջողությամբ պաշտպանելու դեպքում ուսուցչությամբ, քարոզչությամբ և գիտական աշխատանքով զբաղվելու իրավունք էին ստանում:

Կրթական համակարգի և մշակույթի զարգացման գործում որոշակի դեր խաղացին նաև հայ հասարակության մեջ գործող կաթոլիկ քարոզիչների և նրանց հայ գործընկերների հիմնած հոգևոր–մշակութային կենտրոնները: Դրանցից առավել նշանակալից էին Արտազ գավառի Ս. Թադեոս առաքյալի վանքին կից գտնվող ***Մործորի*** և ***Քոնայի դպրոցները:*** Դրանց ուսումնական ծրագրերը ներառում էին հայկական և արևմտաեվրոպական կրթական համակարգի հատկանիշներ: Ուսումնագիտական ինքնուրույն աշխատություններից բացի, այստեղ աշխատող գիտնականները մեծ ավանդ ներդրեցին արևմտաեվրոպական գիտական գրականությունը հայերեն թարգմանելու ուղղությամբ:

Կիլիկյան Հայաստանի վերելքին և Մերձավոր Արևելքում հայկական գաղթավայրերի ձևավորմանը զուգահեռ առաջանում էին հոգևոր–մշակութային և կրթական նոր կենտրոններ:

Կիլիկյան Հայաստանում կրթական գործի կազմակերպումը տնօրինում էր ոչ միայն Հայոց եկեղեցին, այլև պետությունը: Կիլիկիայում գործող բարձրագույն դպրոցների շարքում մեծ հռչակ էր վայելում ***Սսի համալսարանը,*** որը կրում էր նրա հիմնադրմանը աջակցած նշանավոր մատենագիր ***Ներսես Լամբրոնացու անունը:*** Սսի համալսարանում էին կրթություն ստանում Կիլիկյան Հայաստանի պետական գործիչները և գիտության նվիրյալները:

Հայ մշակույթի, մասնավորապես մանրանկարչության, գրչության արվեստի և երաժշտության զարգացման գործում մեծ դեր խաղաց ***Հռոմկլայի*** կաթողիկոսարանին կից ***դպրոցը:***

Կիլիկյան Հայաստանի վանական տիպի դպրոցների շարքում հատկապես մեծ դեր խաղաց ***Սկևռայի դպրոցը,*** որն իր գոյությունը պահպանեց շուրջ 200 տարի: Այն հիմնադրել էր Ներսես Լամբրոնացին: Այստեղ դասավանդվող առարկաների շարքում առանձնահատուկ տեղ էին զբաղեցնում մանրանկարչությունը, երաժշտությունը և գրչության արվեստը: Այստեղ է սովորել և աշխատել նշանավոր մանրանկարիչ Գրիգոր Մլիճեցին:

Կիլիկյան Հայաստանում գործող բարձրագույն դպրոցներից էին նաև Մեծքարի, Դրազարկի և Ակների դպրոցները, որոնց հովանավորում էր հայոց արքունիքը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Պարզաբանեք այն նախադրյալները, որոնք նպաստեցին հայ մշակույթի վերելքին: Ինչ գործառույթ ստանձնեց Հայոց կաթողիկոսությունը:
2. Ինչ գործոններ նպաստեցին կրթության բարելավմանն ու զարգացմանը: Ինչ տիպի դպրոցներ էին գործում: Ինչո՞ւ էին անհրաժեշտ մատենադարանները: X–XIV դդ. կրթական գործի ինչ նշանավոր կազմակերպիչներ գիտեք:
3. Ներկայացրեք X–XIV դդ. կրթական համակարգը: Ինչ նշանավոր համալսարաններ գիտեք: Որոնք էին նշանավոր ուսումնագիտական կենտրոնները Կիլիկիայում:

§ 2. ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

IX դ. վերջերից սկսած՝ հայ պատմագրության վերելքը պայմանավորված էր ոչ միայն երկրի ներսում, այլև միջազգային հարաբերություններում տեղի ունեցող բուռն իրադարձություններով, որոնք առնչվում էին հայ ժողովրդի հետ: X–XIV դդ. հայ պատմագրությունը չէր կարող բավարարվել պատմության շարադրման այն ժանրերով, որոնք ժառանգություն էին մնացել նախորդ շրջանից, ուստի առաջանում են նաև նոր ժանրեր, որոնց թվում էին ***տիեզերական պատմությունը*** և ***տարեգրությունը (ժամանակագրությունը)***:

Հայոց պատմության շարքը շարունակում է նշանավոր հասարակական–քաղաքական գործիչ, կաթողիկոս ***Հովհաննես Դրասխանակերտցին*** (897–929 թթ.): Նրա գրչին է պատկանում «Պատմութիւն Հայոց» աշխատությունը, որտեղ հեղինակը դեպքերի շարադրանքը սկսում է Հայկի ու Բելի ավանդությունից և հասցնում 924 թ.: Մասնավորապես Սմբատ I–ի և Աշոտ Երկաթի ժամանակաշրջանի պատմությունը նա շարադրում է մանրամասն՝ որպես դեպքերի մեծ մասի ականատես, իսկ որոշ դեպքերում՝ նաև մասնակից:

Հայոց պատմության շարքի հաջորդ պատմագիրը ***Արիստակես Լաստիվերտցին*** է (XI դ.), որի «Պատմութիւն» աշխատությունը ներառում է 1000–1071 թթ. ընկած ժամանակաշրջանի իրադարձությունները՝ հայ–բյուզանդական հարաբերությունները, սելջուկյան արշավանքներն ու աղանդավորական շարժումները և այլն:

Հայոց պատմության ժանրով է իր աշխատությունը գրել նաև XIII դ. պատմագիր ***Կիրակոս Գանձակեցին:*** Նրա «Հայոց պատմությունն» ընդգրկում է քրիստոնեության ընդունումից մինչև 1265 թ. ընկած ժամանակահատվածը: Հեղինակը մանրամասն ներկայացնում է հայ–վրացական հարաբերությունները, Զաքարյանների իշխանությունը, Կիլիկյան Հայաստանում տեղի ունեցած կարևոր դեպքերը, հայ–մոնղոլական առնչությունները:

Հայ պատմագրության մեջ համաշխարհային պատմության շարադրանքի ժանրը՝ որպես նոր ուղղություն, հիմնադրել է ***Սարգիսանոս Տարոնեցին*** (Ասողիկ), որն ապրել և ստեղծագործել է X դ. երկրորդ կեսին–XI դ. սկզբին: Նրա աշխատությունը կոչվում է ***«Տիեզերական պատմություն»*** և բաղկացած է երեք բաժիններից: Առաջին բաժինն ընդգրկում է հնագույն շրջանից մինչև Հայաստանում հեթանոսության ավարտը: Երկրորդ բաժինը ներառում է Հայաստանում քրիստոնեության ընդունումից մինչև Բագրատունյաց թագավորության հաստատումը: Ամենաարժեքավորը աշխատության երրորդ բաժինն է, որն ընդգրկում է 885–1004 թթ., քանի որ հեղինակը Հայաստանի պատմությունը հանգամանալից շարադրում է՝ շաղկապված Արաբական խալիֆայության և Բյուզանդիայի պատմության հետ:

Համաշխարհային պատմություն շարադրելու երկրորդ փորձը կատարեց XIII դ. նշանավոր մանկավարժ, եկեղեցական գործիչ ***Վարդան Արևելցին:*** Նրա աշխատությունը, որը նույնպես կոչվում է «Տիեզերական պատմություն», ընդգրկում է «անսկիզբ» ժամանակներից մինչև 1267 թ.: Որպես ականատես և իրադարձությունների մի մասի մասնակից՝ Վարդան Արևելցին մանրամասն շարադրել է մոնղոլական ժամանակաշրջանի պատմությունը:

X–XIV դդ. հայ պատմագրության մեջ շարունակվում էր Հայաստանի առանձին տարածաշրջաններին նվիրված պատմության շարադրանքը: Այս ժանրի երևան գալը պայմանավորված էր նրանով, որ պետականության բացակայության դեպքում Հայաստանի որոշ տարածքներ ներառվում էին վարչաքաղաքական այլ միավորումների կազմում, կամ ստեղծվում էին տեղական թագավորություններ և իշխանություններ: Այս ժանրի հիմնադիրը համարվում է Մովսես Կաղանկատվացին:

Այս ժանրով ստեղծագործող հաջորդ պատմիչը ***Թովմա Արծրունին էր*** (IX դ.

երկրորդ կես–X դ. սկիզբ): Նրա աշխատությունը կոչվում է «Արծրունիների տան պատմություն» և նվիրված է Վասպուրական նահանգի ու Արծրունիների տոհմի պատմությանը: Այստեղ հեղինակը ներկայացնում է Արծրունիների ծագումը, նրանց պատմությունը մարզպանության և խալիֆայության շրջանում: Ամենաարժեքավորը աշխատության երրորդ մասն է, որն ընդգրկում է 850 թ. մինչև X դ. սկիզբն ընկած ժամանակահատվածը: Թովմա Արծրունու պատմությունը շարունակել են այլ հեղինակներ և հասցրել մինչև XIV դ.:

XIII դ. երկրորդ կեսի նշանավոր եկեղեցական–քաղաքական գործիչ ***Ստեփանոս Օրբելյանի*** աշխատությունը վերնագրված է «Պատմութիւն նահանգին Սիսական» և նվիրված է Սյունիք նահանգի պատմությանը: Աշխատության սկզբում հեղինակը ներկայացնում է Սյունիքի տեղագրությունը, Սյունյաց նախարարական տոհմի առաջացումը, հայ Օրբելյանների իշխանության հաստատումը Սյունիքում և նրանց գործունեությունը:

Քրիստոնեությունը մշակեց պատմության շարադրման սեփական ժանրը՝ ***ժամանակագրությունը*** (տարեգրությունը):

Հայ պատմագրության մեջ այս ուղղության ***հիմնադիրը Մատթեոս Ուռհայեցին*** է (XI–XII դդ.): Նրա «ժամանակագրությունը» ներառում է 952–1136 թթ. դեպքերն ու իրադարձությունները: Հետագայում այն լրացվել և հասցվել է մինչև 1162 թ.: Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրությունը տարածական լայն ընդգրկում ունի, քանզի ներառում է Առաջավոր Ասիայի ողջ տարածաշրջանի X–XII դդ. պատմությունը:

Հայ պատմագրության մեջ հաջորդ նշանավոր ժամանակագիրը ***Սամուել Անեցին*** է (XII դ.): Նրա աշխատությունը սկսվում է արարչագործությունից և հասցվում մինչև 1180 թ.: Հետագայում այն լրացվել է տարբեր հեղինակների կողմից: Քրիստոնեությունը մշակել էր ժամանակագրության շարադրման սեփական եղանակը, երբ աշխատությունը պետք է սկսվեր արարչագործությունից և հասցվեր հեղինակի ապրած օրերը: Սամուել Անեցին հետևել է ժամանակագրության շարադրման այս եղանակին: Ժամանակագրության մեջ առավել արժանահավատ ու փաստական հարուստ տեղեկությունները վերաբերում են XII դ., քանզի դրանից առաջ շարադրածը ուրիշ աղբյուրներից համառոտագրված տվյալներ են:

XIII դ. նշանավոր ժամանակագիր էր Կիլիկյան Հայաստանի պետական գործիչ, օրենսգիր ***Մխիթար Գոշը:*** Նրա աշխատությունը, որը հայտնի է ***«Տարեգիրք»*** անվանումով, ներառում է 951–1272 թթ. իրադարձությունները: Ըստ տարիների՝ նա համառոտ շարադրում է Բագրատունյաց թագավորության շրջանի իրադարձությունները, իսկ առավել մանրամասն՝ Կիլիկյան Հայաստանի պատմության դեպքերը և երևույթները:

X–XIV դդ. հայ պատմիչների և ժամանակագիրների թողած աշխատությունները կարևոր սկզբնաղբյուրներ են ոչ միայն հայ ժողովրդի, այլև Առաջավոր Ասիայի երկրների պատմության ուսումնասիրության համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ գործոններ նպաստեցին հայ պատմագրության վերելքին: Որո՞նք էին պատմագրության կարևոր խնդիրները:
2. Նշեք հայ պատմագրության հիմնական ուղղությունները և հեղինակներին: Ներկայացրեք այդ ուղղությունները և դրանց ներկայացուցիչներին աղյուսակի տեսքով՝ նշելով աշխատության վերնագիրը, ընդգրկած ժամանակաշրջանը, ստեղծման ժամանակը և այլն:

§ 3. ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԲՆԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Իրավունքը: XII դ. սկսած՝ բուռն վերելք ապրեց նաև հայ իրավագիտությունը: Նախորդ ժամանակաշրջանում հայ հասարակության իրավական հարաբերությունները կարգավորվում էին սովորութային իրավունքով, «Կանոնագիրք հայոց» իրավունքի հավաքածուի մեջ ներառված կանոններով, որոնք հիմնականում մշակվել և ընդունվել էին եկեղեցու կողմից: Կիլիկյան Հայաստանում շրջանառության մեջ դրվեցին նաև բյուզանդական և խաչակրաց օրենքները՝ ***ասիզներ*** անվանումով: Սակայն սրանք չէին բավարարում հայ հասարակության ներսում ձևավորված նոր երևույթների կարգավորմանը, ուստի անհրաժեշտություն էր զգացվում ստեղծելու օրենքների նոր ժողովածու: Հայկական ***առաջին դատաստանագիրքը ստեղծել է Դավիթ Ալավկառդին*** մոտավորապես 1130 թ.: Այնտեղ ներառված են ինչպես եկեղեցական կանոններ, այնպես էլ աշխարհիկ օրենքներ: Դատաստանագիրքը բաղկացած է 97 հոդվածներից, որոնք կարգավորում էին հասարակության քաղաքացիական, ամուսնա-ընտանեկան և քրեական բնագավառները: Դավիթ Ալավկառդին հայ իրականության մեջ առաջին անգամ փորձ արեց իրավական մեկ համակարգի մեջ ներառելու եկեղեցական և աշխարհիկ իրավունքը և ստեղծելու միասնական օրենսդրություն:

Հայ իրավական մտքի հետագա զարգացման վրա որոշակի ազդեցություն ունեցավ նաև ***Ներսես Շնորհալի կաթողիկոսի*** (1166–1173 թթ.) հեղինակած ***«Թուղթ ընդհանրականը»***, ուր արձանագրված են ամուսնա-ընտանեկան իրավունքի որոշ նորմեր:

Միջնադարի հայ իրավական մտքի ***գլուխգործոցը Մխիթար Գոշի «Դատաստանագիրքն»*** է, որը կազմվել է ***1184 թ.:*** Այդ ժամանակ Հյուսիսարևելյան Հայաստանում և Կիլիկյան Հայաստանում տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքը վերելք էր ապրում, ուստի հասարակական-քաղաքական հարաբերությունները վերափոխվում ու բարդանում էին: Անհրաժեշտ էր ստեղծել նոր դատաստանագիրք, որը կկարգավորեր հասարակության կյանքի բոլոր բնագավառները: Այդ նպատակին Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» ծառայեց շուրջ 700 տարի:

Մխիթար Գոշից հետո՝ 1265 թ., ***Կիլիկյան Հայաստանում*** նոր դատաստանագիրք է կազմում ***Սմբատ Գունդստաբլը:*** Չնայած այդ դատաստանագրքում տեղ են գտնում օտարերկրյա ծագում ունեցող մի շարք իրավանորմեր, սակայն նրա հիմքում դրվում են գերազանցապես հայկական սովորութային իրավունքը, «Հայոց կանոնագիրքը» և

Մխիթար Գոշ

Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը»: Սմբատի «Դատաստանագիրքը» բաղկացած էր 117 պարագրաֆներից, որոնք բավարար էին Կիլիկյան Հայաստանի հասարակության իրավական հարաբերությունների ողջ բնագավառը կարգավորելու համար:

Չնայած դատաստանագրքերի երևան գալուն, որոնցում փորձեր էին անում մեկ համակարգում ներառելու աշխարհիկ և եկեղեցական օրենսդրությունը, իրավահարաբերությունների որոշ բնագավառներ դեռևս կանոնակարգվում էին եկեղեցական կանոններով, որոնք ընդունվում էին եկեղեցական ժողովների կողմից: Այս տեսակետից ***կարևոր նշանակություն ունեցավ 1243 թ. Սսի եկեղեցական ժողովը,*** որն ընդունեց հասարակության ամուսնա-ընտանեկան և բարոյական կյանքը կարգավորող շուրջ երկու տասնյակից ավելի կանոններ:

Բնափիլիսոփայություն: XI–XIV դդ. մեծ վերելք ապրեց նաև բնագիտությունը: Բագրատունյաց, ապա Զաքարյանների ժամանակաշրջանում Հայաստանում, այդ թվում՝ Կիլիկիայում զարգացում ապրող քաղաքային կյանքը և կրթական նոր համակարգը նոր խնդիրներ էին դնում բնագիտության առջև:

Մետաղագործության զարգացումը և ճյուղավորումը պահանջում էին քիչ թե շատ ճշգրիտ տվյալներ մետաղների ֆիզիկական և քիմիական հատկությունների ու համաձուլվածքների մասին: Մաթեմատիկական ճշգրիտ տվյալների կարիք ունեին ամրոցաշինությունը և քաղաքաշինությունը: Բնության, շրջակա միջավայրի և մարդու վերաբերյալ գիտելիքները ներառող, սակայն դեռևս լիովին չձևավորված գիտությունները (ֆիզիկա, քիմիա, բժշկություն) շարունակում էին զարգանալ փիլիսոփայության շրջանակներում: ***Գիտության այս ճյուղը ստացել է բնափիլիսոփայություն անվանումը:*** Բնափիլիսոփայության շրջանակներում քննարկում էին նաև աստվածաբանության հետ կապված խնդիրները, ուստի նույն գիտնականը զբաղվում էր բնագիտությամբ, աստվածաբանությամբ և փիլիսոփայությամբ: Բնափիլիսոփաները աշխատում էին ոչ միայն աստվածաբանության, այլ նաև փիլիսոփայության օգնությամբ հասկանալ և բացատրել, թե ինչ է Աստվածը, ինչու է արարել աշխարհը և մարդուն:

Հայ բնափիլիսոփայության ձևավորման ակունքների մոտ կանգնած է միջնադարի նշանավոր գիտնականներից մեկը՝ ***Գրիգոր Մագիստրոս Պահլավունին*** (մոտ 990–1058 թթ.): Բնագիտության նկատմամբ աճող հետաքրքրությունն իր ազդեցությունը թողեց նաև նրա գիտական գործունեության վրա: Նա հունարենից թարգմանեց Էվկլիդեսի «Տարերք երկրաչափության» աշխատությունը: Գրիգոր Մագիստրոսի կարծիքով՝ գիտելիքը կարելի է ձեռք բերել բանականության, զգայարանների, փորձի և հավատի միջոցով:

Բնափիլիսոփայության ներկայացուցիչները փորձում էին ուսումնասիրել բնության տարբեր երևույթներ, որպեսզի կարողանային գտնել ընդհանուր և մասնավոր օրինաչափությունները: Գրիգոր Մագիստրոսը և Հովհաննես Սարկավագը բնության մեջ գոյություն ունեցող չորս հիմնական տարրերի (ջուր, հող, կրակ, օդ) փոխներգործության մեջ էին որոնում շրջակա միջավայրում տեղի ունեցող երևույթների բացատրությունը:

Բնափիլիսոփայության հետագա զարգացման հիման վրա տեղի էին ունենում բնական գիտությունների ճյուղավորում և նրանցից յուրաքանչյուրի հիմնախնդիրների որոշակիացում: Այսպես՝ նյութական աշխարհի և մարդու վերաբերյալ որոշ գիտելիքներ տեղ էին գտնում բժշկագիտությանը վերաբերող աշխատություններում:

Բնափիլիսոփայության ներկայացուցիչ կարելի է համարել նաև ***XII դ.*** նշանավոր բժիշկ ***Մխիթար Հերացուն,*** որի «Ջերմանց մխիթարութեան» աշխատության մեջ քննարկված են բժշկությանը վերաբերող տարբեր խնդիրներ: Նրա կարծիքով՝ հիվանդությունները ոչ թե չար ուժերի ներգործության արդյունք են, այլ պայմանավորված են բնական, նյութական պատ-

ձառներով: Այսպես՝ հիվանդ մարդու բարձր ջերմությունը կապված է մարմնում առաջացած այրման և նեխման հետ:

XIII դ. նշանավոր գիտնական, Կիլիկյան Հայաստանի քաղաքական գործիչ ***Վահրամ Բաբունին*** թողել է փիլիսոփայությանը վերաբերող մի շարք աշխատություններ: Նա գտնում էր, որ իրական աշխարհը գոյություն ունի՝ անկախ մարդու գիտակցությունից: Մարդն այդ աշխարհի մասին առաջին հերթին իմանում է իր զգայարանների միջոցով, ապա բանականությամբ ստեղծում է ընդհանուր հասկացություններ:

Հայ բնափիլիսոփայության մյուս ականավոր ներկայացուցիչը ***Հովհաննես Երզնկացին է*** (1250–1326 թթ.): Նա համակարգեց հայ բնագիտության և փիլիսոփայության նվաճումները և մատնանշեց նրա զարգացման հեռանկարները:

XIV դ. հայ նշանավոր փիլիսոփա ***Հովհան Որոտնեցու*** աշխատությունները նվիրված են տրամաբանության և իմացաբանության խնդիրներին: Նա գտնում էր, որ բնության մեջ իրը գոյություն ունի՝ անկախ այն հանգամանքից, թե մարդը զգայարանների միջոցով այն ընկալում է, թե ոչ: Սակայն Հ. Որոտնեցու կարծիքով՝ մարդը չպետք է բավարարվի միայն զգայարանների միջոցով ձեռք բերած գիտելիքներով, այլ պետք է աշխատի դրանք ճշգրտել բանականության և փորձի միջոցով:

Միջնադարի ճանաչված փիլիսոփաներից էր ***Գրիգոր Տաթևացին*** (1340–1410 թթ.): Նա թողել է գիտական հարուստ ժառանգություն, որոնց մեջ նշանավոր են «Գիրք հարցմանց», «Ամոան հատոր», «Ձմոան հատոր» աշխատությունները:

X–XIV դդ. հայ բնափիլիսոփայության զարգացումը հիմք դարձավ հետագա դարերի գիտական մտքի զարգացման համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք հայ իրավագիտական մտքի պատմությունը: Ինչ նշանավոր գործիչներ գիտեք: Որոնք են նշված ժամանակաշրջանի իրավունքի նշանավոր հուշարձանները:
2. Բնագիտական ինչ գիտություններ էին շարունակում զարգանալ փիլիսոփայության շրջանակներում. ընդհանրական ինչ անունով է հայտնի գիտության այդ ճյուղը և ինչ խնդիրներ է ուսումնասիրում: Ներկայացրեք հայ բնագիտական և բնափիլիսոփայական նշանավոր ներկայացուցիչներին ու նրանց գործունեությունը:

§ 4. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ

Գրականությունը: Մինչև X դ. գեղարվեստական գրականությունն ինքնուրույն բնագավառ չէր և հանդես էր գալիս եկեղեցական ու պատմագիտական գրականության հետ միասնաբար: X դ. գրականությունը ոչ միայն անջատվեց դրանցից և դարձավ մշակույթի ինքնուրույն բնագավառ, այլև առաջացան գրականության տարբեր ժանրեր:

X–XIV դդ. զարգանում էր ժողովրդական բանահյուսությունը, մասնավորապես՝ առակները և հերոսական վիպերգը: Հայ ***առակագրության հիմնադիրը Մխիթար Գոշն է,*** որը հավաքել և գրի է առել շուրջ 190 առակ: Առակների միջոցով աշխատում են դաստիարակել, համախմբել և լուսավորել ժողովրդին: Այնտեղ սովորաբար քննադատվում են հասարակության մեջ տեղ գտած բացասական երևույթները՝ անարդարությունը, շահամոլությունը, խարդախությունը, քծնանքը: Գոշի առակներում տեղ են գտել նաև ազգային ինքնագիտակցության և օտարների դեմ պայքարելու գաղափարներ:

Հայ առակագրության մյուս ներկայացուցիչը ***Վարդան Այգեկցին*** է (XII–XIII դդ.):

Տաթևի վանքի ընդհանուր տեսքը. IX-XIX դդ.

Նրա առակների հիմնական թեման հասարակական կյանքն է՝ իր դրական ու բացասական կողմերով:

Պատմությունը ավանդվում էր ոչ միայն պատմիչների աշխատություններով, այլև ժողովրդական բանահյուսության, մասնավորապես նրա մի մասը կազմող հերոսական վիպերգերի միջոցներով: Հերոսական վիպերգության նմուշներ եղել են նաև նախորդ դարաշրջանում, սակայն դրանք իրենց զարգացման գագաթնակետին հասան *IX-X դդ.*, երբ ստեղծվեց ***«Սասնա ծռեր»-ը:*** Այն իր մեջ խտացրել և ամփոփել է հայ ժողովրդի հոգևոր կյանքի կարևորագույն կողմերն ու բարոյական արժեքները: Միջնադարյան հայ մշակույթի ոչ մի ստեղծագործության մեջ այնքան ցայտուն ու խորիմաստ չի դրսևորվել հայ ժողովրդի ազատագրական պայքարի գաղափարախոսությունը, որքան «Սասնա ծռեր» վիպերգում: Քանի որ ժողովուրդն ի վիճակի չէր հիմնովին վերափոխելու աշխարհը, ապա վիպերգի հերոս Փոքր Միհերին ուղարկում է քարանձավ՝ այն հույսով, որ կգա աշխարհը վերափոխելու ժամանակը, և Փոքր Միհերը դուրս կգա քարանձավից:

Հայ գեղարվեստական գրականության առաջին նշանավոր դեմքը բանաստեղծ ***Գրիգոր Նարեկացին*** է (961-1003 թթ.): Դարաշրջանին հուզող խնդիրները դարձան նրա գլխավոր ստեղծագործության՝ «Մատյան ողբերգության» պոեմի թեման: Բանաստեղծը գտնում էր, որ մարդը պետք է այնքան մաքրվի, որ մերձենա Աստծուն: Ուստի Նարեկացին ստեղծում է Մատյանը (Նարեկ)՝ որպես աղոթագիրք, որով յուրաքանչյուր հավատացյալ պետք է խոսեր Աստծո հետ:

Սանահինի վանքը հարավ-արևելքից. X-XIII դդ.

Հայ գրականության հետագա զարգացման վրա մեծ ազդեցություն ունեցան նաև Նարեկացու գրած շուրջ քսան տաղերը: Չնայած դրանց նյութը հիմնականում վերցված է Աստվածաշնչից, սակայն դրանցում տեղ են գտել բնության, երկրային կյանքին նվիրված գեղեցիկ հատվածներ:

Հայ գրականության հետագա վերելքը կապված է ժամանակի նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ, կաթողիկոս ***Ներսես Շնորհալու*** (1100–1173 թթ.) գրական ստեղծագործությունների հետ: Նրա գրական ժառանգությունը բաժանված է երկու մասի՝ արձակ և չափածո: Առաջինն ընդգրկում է Ներսես Շնորհալու հասարակական-քաղաքական գործունեության հետ կապված թղթերը, նամակները, մասնավորապես «Թուղթ ընդհանրականը», իսկ երկրորդը՝ բանաստեղծությունները, պոեմները, հանելուկները: Բանաստեղծի ամենանշանավոր ստեղծագործությունը ***«Ողբ Եդեսիոյ»*** պոեմն է: Չնայած պոեմի ստեղծման համար առիթ դարձավ Եդեսիա քաղաքի գրավումը մուսուլմանների կողմից, այնուամենայնիվ այնտեղ առաջ են քաշված ցրված հայությանը հայրենիքում համախմբելու, ներքին միասնություն ստեղծելու և օտար նվաճողների դեմ պայքարելու գաղափարներ:

Հայ միջնադարյան գրականության մեջ աշխարհիկ թեման առավել մեծ տեղ է զբաղեցնում ***Ֆրիկի*** (XIII–XIV դդ.) ստեղծագործություններում: Միջնադարի ոչ մի բանաստեղծ այդքան խորաթափանց ու հատակ չի նկարագրել մոնղոլ նվաճողների նկատմամբ հայ հասարակության մեջ առաջացած ոգեկոությունը, որքան Ֆրիկն իր բանաստեղծություններում: Նրա ստեղծագործություններում մեծ տեղ է զբաղեցնում նաև սոցիալական թեման: Նա քննադատում է հասարակության մեջ գոյություն ունեցող անարդարությունը, անհավասարությունը, աշխատավոր բնակչության շահագործումը և հարստահարումը:

Ճարտարապետությունը և քանդակագործությունը: X–XIV դդ. մեծ վերելք էր ապրում նաև ճարտարապետությունը: Այս բնագավառում հատկապես ***զարգանում են քաղաքաշինությունը, ամրոցաշինությունը*** և ***եկեղեցաշինությունը:***

X–XIV դդ. նոր քաղաքների հատակագծման և կառուցման ժամանակ մեծ կարևորություն էին տալիս տեղանքին, առևտրական ճանապարհների վրա գտնվելուն, ջրամատակարարման հնարավորություններին: Սովորաբար քաղաքը բաղկացած էր երեք մասից՝ միջնաբերդ, բուն քաղաք (շահաստան), արվարձան: Անկախ իրենց զբաղեցրած տեղանքից՝ միջնաբերդը և շահաստանը պարսպապատվում էին, իսկ արվարձանը պարսպից դուրս էր և ամրացված չէր: Միջնաբերդը սովորաբար կառուցվում էր դժվարամատչելի տեղանքում և պարսպապատվում էր: Այստեղ կառուցում էին թագավորական և իշխանական պալատներ, առանձին եկեղեցի, մթերքի շտեմարաններ և զենքի պահեստներ: Մայրաքաղաքի միջնաբերդում էր արքունի գանձարանը:

Բագրատունյաց Հայաստանում, Զաքարյանների իշխանությունում, Կիլիկյան Հայաստանում մեծ վերելք էր ապրում նաև ամրոցաշինությունը: Այսպես՝ Կիլիկյան Հայաստանում կար 112 բերդ: Սովորաբար ամրոցը բաղկացած էր երկու մասից՝ միջնաբերդից և բուն ամրոցից: Երկուսն էլ ունեին իրենց առանձին պարիսպները: Միջնաբերդում էր իշխանական դղյակը՝ իր օժանդակ կացարաններով, իսկ բուն ամրոցում զինվորների համար նախատեսված շինությունները, արհեստանոցները և օժանդակ շինություններն էին:

X–XIV դդ. մեծ վերելք էր ապրում նաև եկեղեցական ճարտարապետությունը: Այս ժամանակաշրջանում կառուցում էին ոչ միայն առանձին եկեղեցիներ և վանքեր, այլև ***վանական համալիրներ:*** Վերջինս բաղկացած էր ոչ միայն պաշտամունքային շինություններից, այլև աշխարհիկ նշանակություն ունեցող շենքերից: Վանական համալիրներին կից կառուցվում էին ուսումնագիտական կենտրոններ, մատենադարաններ, ձեռագրատներ, արհեստանոցներ և ուսումնական շինություններ: Վանական համա-

լիրներից հատկապես նշանավոր էին Տաթևը, Սանահինը, Հաղպատը, Սևանը, Սկեռան, Այրիվանքը (Գեղարդավանք), Գոշավանքը: Գեղարդավանքը զարմացնում է իր ճարտարապետական ինքնատիպությամբ: Այն իր մեջ ընդգրկում է աշխարհի եզակի եկեղեցական կառույցներ, որոնց մի մասը փորված է ահռելի ժայռի (այր) մեջ՝ երկու հարկով: Դրա համար էլ այն կոչվում է նաև Այրիվանք:

Ճարտարապետության զարգացման գործում նշանակալից դեր խաղացին ***Մանվել*** և ***Տրդատ*** ճարտարապետները: Մանվել ճարտարապետը նախագծել և կառուցել է Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին, իսկ Ուստան քաղաքում՝ Արծրունիների թագավորական պալատը: Բագրատունիների արքունի ճարտարապետ Տրդատը հիմնականում աշխատել և ստեղծագործել է Անի քաղաքում: Այստեղ նրա նախագծով կառուցվել են Մայր տաճարը, որի շինարարությունն ավարտվել է 1001 թ., և Ս. Գրիգոր Լուսավորիչ զվարթնոցատիպ եկեղեցին:

Անի-Շիրակին ենթակա թագավորությունների տիրակալներն աշխատում էին եկեղեցիներ կառուցելու ճանապարհով ամրապնդել իրենց իշխանությունը և հեղինակությունը: Կիլիկյան Հայաստանում ևս մեծ ուշադրություն էին դարձնում եկեղեցական շինությունների կառուցմանը:

X–XIV դդ. քանդակագործությունը դեռևս ինքնուրույն բնագավառ չէր և զարգանում էր ճարտարապետությանը զուգընթաց: Քանդակները դրվում էին ոչ թե քաղաքների հրապարակներում, փողոցներում, շենքերի առջև, այլ եկեղեցիների և շենքերի պատերի վրա: Սովորաբար տեղադրում էին մարդկանց, կենդանիների, բույսերի, զանազան առարկաների պատկերներ և բարդ հյուսվածքներ (Աղթամարի Ս. Խաչ, Անիի Տիգրան Հոնենցի, Այրիվանքի եկեղեցիներ) և ընտրում էին աստվածաշնչյան-կրոնական ու աշխարհիկ թեմաներ: Այսպես՝ Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու պատերին պատկերված է խաղողի մշակության ամբողջ ընթացքը՝ որթի տնկումից մինչև գինու ստացումը:

Հովհաննես ավետարանիչ
Զեյթունի Ավետարան, Թորոս Ռոսլին, 1256 թ.

IX–X դդ. քանդակագործության մեջ արվեստի ինքնուրույն ճյուղ դարձավ ***խաչքարերի*** արվեստը, որը յուրահատուկ է միայն հայկական մշակույթին: Խաչքարերն ունեցել են տարբեր նշանակություն և կիրառություններ: Ամենից տարածվածը գերեզմանների վրա դրվող մահարձաններն են: XI–XIV դդ. խաչքարեր էին կանգնեցվում նաև որևէ նշանակալից իրադարձության կապակցությամբ: Սովորաբար խաչքարերի վրա թողնվում էին արձանագրություններ, որոնք բովանդակում են խաչքարը ստեղծելու ժամանակը և առիթը, վարպետի և հուշարձանը կանգնեցնելու վերաբերյալ տեղեկություններ: Նշանավոր խաչքարագործ վարպետներից էին ***Պողոսը*** (Գոշավանք) և ***Մոմիկը*** (Նորավանք): X–XIV դարերից մեզ են հասել տասնյակ հազարավոր խաչքարեր:

Նկարչությունը: XI–XIV դդ. մեծ վերելք ապրեցին նաև ***մանրանկարչությունը*** և ***որմնանկարչությունը***: Մանրանկարչությունը՝ որպես արվեստի ճյուղ, ծառայում էր ձեռագրերի ձևավորմանը և զարդարմանը:

Մանրանկարներով զարդարված առաջին ամբողջական ձեռագիրը, որը հասել է մեզ, վերաբերում է 851 թ.: Հայ մանրանկարչությունը հատկապես մեծ վերելք ապրեց XI–XIV դդ.: Այս ժամանակաշրջանում ստեղծված ձեռագրերի մեծ քանակությունը վկայում է կրթական մակարդակի բարձրացման մասին: Շատ հաճախ առանձին անհատներ պատվիրում էին նկարազարդ ձեռագրեր: Ձեռագիր պատվիրելը դարձել էր աստվածահաճո գործ: Մանրանկարչության բուռն վերելքը նպաստեց մի շարք դպրոցների առաջացմանը, որոնք միմյանցից տարբերվում էին ձեռագրի ձևավորման կանոններով և ընտրված թեմատիկայով: Դրանցից էին Սկևռայի, Դրազարկի, Հռոմկլայի, Վասպուրականի և Սյունիքի դպրոցները: Ինչպես քանդակագործները, այնպես էլ մանրանկարիչներն իրենց գործերի համար իբրև նյութ ընտրում էին և՛ աստվածաշնչյան, և՛ աշխարհիկ իրականությունից վերցված կերպարներ: Այդ ժամանակաշրջանի նշանավոր մանրանկարիչներից էին ***Գրիգոր Մլիճեցին*** (Սկևռա), ***Թորոս Ռոսլինը*** (Հռոմկլա), ***Սարգիս Պիծակը*** (Սիս), ***Մոմիկը*** (Գլաձոր), ***Թորոս Տարոնացին*** (Գլաձոր) և ուրիշներ:

Մանրանկարչությանը զուգահեռ X–XIV դդ. Հայաստանում և Կիլիկիայում զարգանում էր որմնանկարչությունը: Բագրատունի, Արծրունի, Սյունի, Հեթումյան թագավորները և Զաքարյանները իրենց կառուցած պալատների, ընդունելությունների դահլիճների և տաճարների ներսի պատերը զարդարել էին տալիս որմնանկարներով ու զարդանախշերով:

Տաճարների ներսի որմնանկարների նյութը հիմնականում վերցվում էր Հին և Նոր Կտակարաններից: Որմնանկարներն արվում էին այնպիսի կանոններով, որ վերարտադրվեն արարչագործությունից մինչև Հիսուս Քրիստոսի երկրային կյանքն ընկած ժամանակահատվածի կարևոր դրվագները: Այսպիսի կանոններով են կատարվել Աղթամարի Ս. Խաչ, Տաթևի, Անիի Տիգրան Հոնենցի և Ախթալայի եկեղեցիների որմնանկարները: Որոշ որմնանկարներում Աստվածաշնչից վերցված կերպարների կողքին հանդիպում են նաև պատմական գործիչների դիմանկարներ: Այսպես՝ Աղթամարի Ս. Խաչի որմնանկարներում պատկերված է Գագիկ Արծրունին, իսկ Տիգրան Հոնենցի եկեղեցում՝ Տրդատ III–ը և Սբ Գրիգոր Լուսավորիչը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Մինչև X դարը ինչպես էր հանդես գալիս գեղարվեստական գրականությունը: Համառոտ ներկայացրեք գրականության ժանրերը և դրանց նշանավոր ներկայացուցիչներին ու ստեղծագործությունները:
2. Ի՞նչ գործոններ նպաստեցին ճարտարապետության վերելքին: Թվարկեք այդ ժամանակաշրջանի նշանավոր քաղաքներ, ամրոցներ, վանական համալիրներ: Ի՞նչ նշանավոր ճարտարապետներ գիտեք. ի՞նչ են նրանք կառուցել:
3. Ի՞նչ գիտեք խաչքարերի մասին: Թվարկեք խաչքարագործ նշանավոր վարպետներ:
4. Նկարչության ի՞նչ տարատեսակներ զարգացան: Այդ ուղղությունների ի՞նչ նշանավոր հուշարձան կարող եք նշել:

Թեմա 3. ՄՇԱԿՈՒՅԹԸ ԴԺՎԱՐԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ (XV դ.–XVII դ. առաջին կես)

§ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ: ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Մշակույթի պահպանման և զարգացման պայմանները: Հայոց անկախ պետականության բացակայությունն ու Հայաստանում օտար տիրապետության հաստատումը, հայ իշխանական տների թուլացումը և տնտեսական անկումը լուրջ խոչընդոտներ էին նաև հայ մշակույթի ու գիտության զարգացման համար: Այլևս չկային մշակութային խոշոր ձեռնարկումներ իրականացնելու հնարավորություն ընձեռող քաղաքական և տնտեսական պայմանները:

XV–XVII դարերի հայկական մշակույթի ոլորտում սկսում են գերակայել նվազ ծախսատար բնագավառները, ինչպիսիք էին մանրանկարչությունը, գորգագործությունը, փայտագործությունը, խաչքարային արվեստը, մատուռների կառուցումը, վնասված եկեղեցիների վերանորոգումը, որմնանկարչությունը և այլն: Շինարարության ոլորտում կարևոր ձեռքբերումներ են արձանագրվում կամուրջների և իջևանատների կառուցման գործում:

Հայկական մշակույթի զարգացման համար ***կարևոր առանձնահատկություն էր հայկական գաղթօջախներում հայ մշակութային արժեքների ստեղծումն ու փոխադրումը բուն Հայաստանի դարաձք:*** Այդ հանգամանքն առավել ցայտուն դրսևորվեց հայ տպագրության ու կրթության ոլորտներում: Տարբեր գաղթօջախներում տպագրված գրքերի գրեթե ողջ տպաքանակը փոխադրվում էր Հայաստան և բաշխվում հայկական բնակավայրերում, վանքերում ու եկեղեցիներում: Այլևայլ երկրների հայկական գաղթօջախներում կրթություն ստացած հայ գիտնականներն ու մշակույթի գործիչները վերադառնում էին հայրենիք և իրենց գիտելիքները փոխանցում Հայաստանի դպրոցներում, տարբեր լեզուներից հայերեն թարգմանում անհրաժեշտ բնագիտական, աշխարհագրական և այլ բնույթի աշխատություններ:

երկու էջ Հակոբ Մեղապարտի տպագրած «Ուրբաթագրքից», 1512 թ., Վենետիկ

Տպագրության սկզբնավորումը և զարգացումը: Տպագրության գյուտը Եվրոպայում և հայերեն գրքերի տպագրության սկզբնավորումը թեև գործածությունից իսպառ չբացառեցին ձեռագիր գրքերի անհրաժեշտությունը, սակայն նոր փուլ նախանշեցին և անգնահատելի դեր ունեցան XVI–XVII դարերի հայկական մշակույթի զարգացման գործում:

Հայկական ***տպագրության հիմնադիրը*** եղավ ***Հակոբ Մեղապարտը:*** Հայերեն առաջին տպագիր գիրքը՝ ***«Ուրբաթագիրքը»,*** լույս տեսավ ***Վենետիկում 1512 թ.:*** Այդպիսով՝ մերձավորարևելյան լեզուների մեջ եբրայերենից հետո հայերենը դարձավ հաջորդ լեզուն, որն ունեցավ իր տպագրական արվեստը: Տպագրված առաջին գրքերը ակնհայտորեն հասցեագրված էին ինչպես հայկական գաղթօջախների, Հայոց եկեղեցու, այնպես էլ միջազգային առևտրի մեջ ներգրավված հայ վաճառականության կարիքների բավարարմանը: Մեր միջնադարյան հեղինակներից առաջին անգամ տպագրության են արժանացել Ներսես Շնորհալու, Մկրտիչ Նաղաշի, Ֆրիկի, Հովհաննես Թլկուրանցու գործերը:

Հայ տպագրության մեջ հաջորդ քայլը

կատարում է 1562 թ. դիվանագիտական առաքելությամբ Հռոմ ուղարկված *Աբգար* դպիր *Թոխաթեցին*: Հռոմի թույլտվությամբ հայերեն նոր տպատառեր պատրաստելով՝ Աբգար դպիրը 1565 թ. անցնում է Վենետիկ: Վենետիկում նա մեծաղիր թերթի վրա տպագրում է *«Հռառնայինքուր կումարի. գեղեցիկ և պիտանի»* տոմարացույցը, որի վրա կար երկու նկար: Առաջինում պատկերված էին հայերեն տպատառերը ձեռքին Աբգար դպիրը և իր որդին՝ Հռոմի պապի և երեք կարդինալների առջև, իսկ մյուս նկարում Աբգարը կանգնած էր Վենետիկի դոժի և խորհրդականների առջև ընդունելության ժամանակ: 1566 թ. Աբգար դպիրը Վենետիկում տպագրում է *«Սաղմոսարան»*, որի մեջ ընդգրկված է 150 սաղմոս:

Աբգար դպիրը, որ այնուհետև Վենետիկից փոխադրվել էր Կ.Պոլիս, 1568–1569 թթ. կազմակերպում է մի շարք գրքերի հրատարակություններ և «Ս. Ժամագիրք–պատարագամատոյց», «Պարզատումար», «Տօնացոյց», «Տաղարան», «Մաշտոց»:

Այսպիսով՝ XVI դարի ընթացքում մշակույթի հայ գործիչները, օգտագործելով տպագրական գյուտի ընձեռած հնարավորությունները, *նոր ուղի բացեցին հայ ժողովրդի մեջ լուսավորության տարածման համար*՝ տպագիր գիրքը դարձնելով հասու և մատչելի ընթերցողների անհամեմատ մեծաքանակ շրջանակների համար:

XVII դարը հայ տպագրության զարգացման գործում ավելի մեծ նվաճումների ժամանակաշրջան էր: Տպագրությունը ոչ միայն ավելի մեծ չափեր ընդունեց Վենետիկում և Հռոմում, այլև տարածում ստացավ նաև հայկական մյուս գաղթօջախներում՝ Լվով, Նոր Ջուղա, Միլան, Լիվոռնո, Պադուա, Փարիզ, Ամստերդամ, Կոստանդնուպոլիս: Տպագրվեցին պատմական, հոգևոր, քերականագիտական, բնագիտական, աշխարհագրական և այլ բնույթի աշխատություններ: Հայերեն գրքեր տպագրվում էին ինչպես օտարներին պատկանող, այնպես էլ հայ գործիչների կողմից հիմնադրված տպարաններում: Տպագրվեց ավելի քան 160 անուն երկ, այդ թվում՝ իրականություն դարձավ Աստվածաշնչի հայերեն շքեղ հրատարակությունը:

Բաղիշեցի Հովհաննես Քարմատանենց երեցի ջանքերով 1616 թ. Լվովում տպագրվեցին սաղմոսարան և բժշկարան, իսկ 1618 թ.՝ հայատառ ղփչաղերեն աղոթագիրք:

1638 թ. Հուչապուր Կեսարացու ջանքերով հայկական տպարան է ստեղծվում նաև *Նոր Ջուղայում*: Այս տպարանը հիմնվել էր ոչ թե Եվրոպայից բերված տպագրական գործիքներով, այլ ամբողջը ստեղծվել էր տեղում՝ չունենալով անգամ տպագրական գործի վարպետ կամ ուսուցիչ, փաստորեն կրկին հայտնագործելով տպագրության արվեստը: Այդ է պատճառը, որ այս տպարանի հրատարակությունները տպագրական արվեստի առումով համեմատաբար պարզունակ են: Հայաստանին ու հայոց գաղթաշխարհին հայ գրքի հիմնական մատակարար կրկին մնացին եվրոպական քաղաքներում հիմնադրվող տպարանները: 1640–ական թվականներին շարունակվում էր հայերեն գրքերի տպագրությունը Հռոմում և Վենետիկում:

Դպրոցը: XV–XVII դարերում, չնայած քաղաքական ծանր իրավիճակին ու մեծամեծ կորուստներին, Հայաստանում փորձել են շարունակել նախորդ դարաշրջանների կրթական ավանդույթները: Օգտագործվել են նոր հնարավորություններ, այդ թվում՝ Հայաստանի բուն տարածքից դուրս ստվարացած հայկական գաղթավայրերում կրթական կենտրոններ կազմակերպելը: Բարձրագույն կարգի դպրոցները կամ համալսարանները եղել են նաև մատենագրական, գիտական ու մշակութային կյանքի կարևոր կենտրոններ:

XV դարասկզբին Հայաստանում կրթական կյանքի կարևոր կենտրոն էր *Տաթևի համալսարանը*, որտեղ դասավանդում էր *Գրիգոր Տաթևացին*: Նրա դասախոսությունները գրի են առնվել ու ձևավորվել որպես դասագրքեր, որոնք օգտագործվել են նաև հայկական այլ դպրոցներում: Առավել նշանավոր էին Գրիգոր Տաթևացու *«Գիրք հարցմանց»* և *«Համառօտ լուծումն Առաքի-*

Տերունական նկարներ և անվանաթերթ. Մշո Ճառընտիր, 1202 թ.

նութեանցն Արիստոտելի» աշխատությունները: Դասավանդման համար օգտագործվում էին մարդակազմության, թվաբանության, քերականության, աստղաբաշխության վերաբերյալ հայ և օտար հեղինակների աշխատությունները: Տաթևի համալսարանը եղել է վարդապետական աստիճան շնորհող առավել հեղինակավոր կենտրոնը:

1408 թ. Տաթևից շուրջ հարյուր ուսանողների հետ միասին ***Մեծոփա*** վանք է փոխադրվում Գրիգոր Տաթևացին և նոր շունչ հաղորդում այնտեղ Հովհաննես Մեծոփեցու առաջնորդությամբ գործող նշանավոր դպրոցին: Գրիգոր Տաթևացուց հետո Մեծոփա դպրոցի առաջնորդությունը ստանձնել են Գրիգոր Խլաթեցին (Ծերենց), Հովհաննես և Թովմա Մեծոփեցիները: Դպրոցը գոյատևել է մինչև XV դարի կեսերը:

XV դարի առաջին կեսին ***Սյունիքում*** գործել է ***Հերմոնի դպրոցը***՝ Հովհաննես Հերմոնացու առաջնորդությամբ: Բուն Հայաստանում գործող դպրոցներից հիշատակելի են նաև Երզնկայի Ավագ և Կապոսի վանքերի, Այրիվանքի, Եղիվարդի վանքերին առընթեր դպրոցները և այլ ուսումնական կենտրոններ:

Կապոսի վանքի ուսումնական հաստատությանը նվիրված 1494 թ. չափածո ներբողում այն որակվում է որպես Հայաստան աշխարհում համայն հայոց ազգի լուսատու:

XV դարում մոտ վաթսունամյա բեղմնավոր գործունեություն է ունեցել ***Ղրիմի Անբոնի անապարի հայոց դպրոցը,*** որի ուսուցչապետն էր Սարգիս փիլիսոփան: Դպրոցում ունկնդրել են Սարգիս վարդապետի դասախոսություններն Արիստոտելի ու Պորփյուրի փիլիսոփայության վերաբերյալ:

XV–XVII դարերում ղրիմահայոց կրթական կարևոր կենտրոնն էր Սուրբ Խաչ վանքը, որ Հակոբ Կաֆայեցու տաղերից մեկում անվանվում է ճեմարան, և որտեղ դասավանդում էին ոչ միայն տեղի, այլև հրավիրված հեղինակավոր վարդապետներ: Դպրոցներ կային նաև Ղրիմի Ղարասուբազար և այլ քաղաքներում:

XVII դարի առաջին տասնամյակներից հայկական դպրոցները բազմանում են ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ գաղթավայրերում: Դպրոցներ էին գործում հոգևոր շատ կենտրոններում: Առավել կարևոր էին ***Էջմիածնի, Բաղեշի, Տաթևի, Խիզանի, Լվովի, Կաֆայի, Նոր Ջուղայի, Երուսաղեմի*** և այլ ***դպրոցները:***

XVII դարի սկզբներին Սյունյաց աշխարհում հիմնվում է ***Հարանց անապարի դպրոցը,*** որը նպաստում է Արևելյան Հա-

յատանի կրթական ու մշակութային առաջընթացին: Դպրոցում դասավանդող Ներսես Մոկացին ժամանել էր Բաղեշի Ամիրդոլու վանքից և դասավանդում էր «արտաքին գիտություններ»:

Մովսես Տաթևացին ***1620 թ. հիմնադրում է Երևանի Անանիա առաքյալի անապատը*** և մի քանի տարի անց՝ ***Հովհաննավանքի դպրոցը:*** 1635–1637 թթ. Հովհաննավանքի դպրոցը փոխադրվում է Էջմիածին, սակայն Հովհաննավանքում ևս ուսուցումը չի դադարում, այնտեղ դեռևս ուսանում էին շատ ուսանողներ, որոնց թվում էր նաև Զաքարիա Քանաքեռցի պատմիչը:

Էջմիածնի վանական դպրոցն ուներ մոտ 50 աշակերտ: Այնտեղ դասավանդել են Մելքիսեդեկ Վժանեցին, Սիմեոն Ջուղայեցին, Ստեփաննոս Լեհացին և ուրիշներ:

XVII դարում գիտակրթական աշխույժ գործունեություն է ծավալում ***Բաղեշի Ամիրդոլու վանքի դպրոցը:*** Այն հիմնադրվել էր XVI դարի վերջին տասնամյակում: Վարդան Բաղիշեցու ուսուցչապետության ընթացքում աճում է ուսանողների թիվը, հավաքվում և արտագրվում են մեծարժեք շատ ձեռագրեր:

XVII դարի դպրոցական կյանքի ***կարևոր կենտրոն*** էր նաև ***Նոր Ջուղան:*** Այնտեղ Խաչատուր Կեսարացու ջանքերով հիմնվում է դպրոց, որն ավելի քան հիսուն տարի կարևոր դեր է խաղում ջուղահայոց կրթական կյանքում: Կոստանդ Ջուղայեցին դասավանդման նպատակով կազմել է մի յուրահատուկ ձեռնարկ, որի մեջ ամփոփված են ժամանակի բազում երկրների չափերի ու կշիռների մասին արժեքավոր տվյալներ: Իր գոյության տարիներին դպրոցը տվել է ավելի քան 250 շրջանավարտ: Այս դպրոցի շրջանավարտներից էին Ոսկան Երևանցին, Հովհաննես Մրքուզը, Հակոբ, Ստեփաննոս և Աղեքսանդր Ջուղայեցի, Աստվածատուր Համադանցի կաթողիկոսները և ուրիշ շատ անվանի գործիչներ: Ինչպես մյուս դպրոցները, սա ևս եղել է գրչության կարևոր կենտրոն, ունեցել իր մատենադարանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Մշակույթի ո՞ր բնագավառները սկսեցին զերակայել XV–XVII դարերում. ինչո՞ւ:
2. Ո՞վ է հայ տպագրության հիմնադիրը: Ո՞րն է հայերեն առաջին տպագիր գիրքը, ե՞րբ և որտե՞ղ է լույս տեսել: Վերհանե՛ք տպագրության գյուտի նշանակությունը հայ մշակույթի զարգացման գործում:
3. XV դ. սկզբին ո՞ր համալսարանն էր դարձել կրթական կարևոր կենտրոն: Նշե՛ք Գրիգոր Տաթևացու գրչին պատկանող աշխատությունները:
4. Մինչև ե՞րբ է գոյատևել Մեծոփա դպրոցը: Ի՞նչ նշանավոր մարդիկ են դասավանդել այնտեղ: Թվարկե՛ք Հայաստանում և հայկական գաղթավայրերում XV–XVI դդ. գործող ուսումնական կենտրոնները:
5. XVII դ. Հայաստանում ի՞նչ նշանավոր կրթարաններ էին գործում: Ո՞վ և ե՞րբ է հիմնադրել Բաղեշի Ամիրդոլու վանքի դպրոցը:

§ 2. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ

Պատմագրությունը: Ուշ միջնադարը ծանր ժամանակաշրջան էր նաև հայ պատմագիտության զարգացման համար: Օտար ավերիչ արշավանքներն իրենց ծանր ազդեցությունը թողեցին տնտեսական ու քաղաքական իրադրության վրա: Այդ ամենը հոռետեսական տրամադրություններով էր լցրել մարդկանց հոգիները, ինչն իր արտացոլումն էր գտնում տարբեր ձեռագրերի արտագրությունների առիթով գրված հիշատակարանների մեջ: Պատահական չէ, որ նշված դարերում ավելի շատ կազմվում են մանր ժամանակագրություններ, դեպքերի համառոտ արձանագրումներ, և նվազում է խոշորածավալ «Պատմությունների» քանակը:

Այդ առումով մեծարժեք ստեղծագործություն է XV դարի հոգևոր ու հասարակական–քաղաքական խոշոր գործիչ ***Թումա Մեծոփեցու «Պատմութիւն Թամուր Լանկին և յաջորդաց իւրոց»*** աշխատությունը: Այդտեղ շարադրվել են XIV դարի վերջին քառորդի և XV դարի առաջին կեսին Հայաստանում ու հարակից երկրներում տեղի ունեցած կարևորագույն իրադարձությունները, Լենկ Թեմուրի և նրա հաջորդների ու թուրքմենական ցեղախմբերի միջև պատերազմական գործողությունները, այդ իրադարձությունների պատճառով Հայաստանի կրած տնտեսական ու քաղաքական արհավիրքները:

XVII դարում գրված կարևոր աշխատություններից է ***Գրիգոր Դարանաղցու «Ժամանակագրությունը»***, որտեղ ականատես հեղինակը կարևոր տեղեկություններ է հաղորդում Օսմանյան կայսրության արևմտյան տարածաշրջանի քաղաքական իրադարձությունների ու հայ բնակչության վիճակի վերաբերյալ:

Մեծարժեք ստեղծագործություն է ***Սիմեոն Լեհացու***՝ XVII դարի առաջին տասնամյակներին ուղեգրական տպավորությունների տեսքով հեղինակած աշխատությունը, որտեղ ներկայացված են արժեքավոր տեղեկություններ Արևելյան Եվրոպայի երկրներում, Իտալիայում, Մերձավոր Արևելքում ու Եգիպտոսում հայկական գաղթավայրերի վերաբերյալ:

XVII դարի առաջին կեսին Հայաստանում տեղի ունեցած կարևորագույն իրադարձությունների հանգամանալի շարադրանք է ***Առաքել Դավրիժեցու*** մեծարժեք ***«Պատմությունը»***, որը տպագրության է արժանացել արդեն իսկ հեղինակի կենդանության օրոք (1669 թ.): Աշխատությունը կարևոր տեղեկություններ է պարունակում շահ Աբաս I–ի և նրա հաջորդների՝ Հայաստանում ու հարակից երկրներում վարած քաղաքականության, թուրք–պարսկական պատերազմների, հայ բնակչության բռնագաղթի և բազում այլ իրադարձությունների վերաբերյալ:

XVII դարի աչքի ընկնող գործիչներից է ***Զաքարիա Քանաքեռցին***, որն իր հեղինակած ***«Պատմության»*** մեջ նկարագրել է ոչ միայն իր տեսած ու լսած դեպքերն ու իրադարձությունները, այլև հայ ժողովրդի պատմության նախորդ շրջանների համառոտ շարադրանքը՝ սկսած Արշակունիների թագավորության հաստատումից: Նույն ժամանակաշրջանի հեղինակ է ***Հակոբ Կարնեցին***, որը պատմաաշխարհագրական բնույթի կարևոր երկ է թողել Արևմտյան Հայաստանի խոշորագույն վարչամիավորի՝ Կարնո նահանգի մասին:

Բնագիտությունը և բժշկությունը: XV դարի սկզբին գիտության խոշորագույն ներկայացուցիչներից էր ***Գրիգոր Տաթևացին:*** Նրա ***«Գիրք հարցմանց»***–ը բնագիտական ու հասարակագիտական շատ խնդիրների շուրջ բացատրությունների, մեկնությունների հանրագիտարան է, որը կազմելու համար օգտագործվել են հայ և օտար գիտնականների աշխատություններ: Տաթևացին ինքնուրույն ատորաբաժանումներով է տեսակավորում բուսական ու կենդանական աշխարհը, ցուցադրում բնության երևույթների մեջ ու մարդկային կյանքում տարրերի նշանակությունը:

XV դարասկզբի նշանավոր գիտնականներից էր ***Մատթեոս Ջուղայեցին:*** Գրիգոր Տաթևացու մահից հետո նա գլխավորել է Տաթևի համալսարանը: Գիտության բնագավառում ազգային ավանդույթների պահպանման, շարունակման ու զարգացման գործի ջատագով գիտնականը արժանապատվորեն նշում էր, թե օտար գիտական մտքին հետևելու հետ միաժամանակ անհրաժեշտ է չմոռանալ կամ չանտեսել սեփական ժողովրդի ունեցած նվաճումները:

Գիտական մեծ վաստակով հայտնի են XV դարի առաջին կեսին ստեղծագործած ***Հակոբ Ղրիմեցին*** («Մեկնութիւն տոմարի» և «Յաղագս բնութեան») և Ս. Անտոնի վանքի միաբան ***Եսայի Ղրիմեցին*** («Տումար արեգական և լուսնի»): Նրանց հեղինակած աշխատությունները կատարել են նաև ուսումնական ձեռնարկների դեր:

XV դարի հայ նշանավոր գիտնական-

ներից է կենսաբան ու բժիշկ, աստղագետ ***Ամիրդովլաթ Ամասիացին*** (մահ. 1496 թ.): Նա վաստակել էր բուժող բժշկի համբավ, դարձել օսմանյան սուլթանի անձնական բժիշկը: Նրա ***«Անգիտաց անպէտ»*** խորագիրը կրող աշխատությունը բնագիտական ու դեղագիտական գիտելիքների շտեմարան է, որտեղ կարևոր տվյալներ ու հետազոտական աշխատանքի արդյունքներ են ամփոփված բուսական, կենդանական ու հանքային նյութերի և նրանց բուժիչ հատկությունների վերաբերյալ:

Հայ գիտնականների տեսադաշտում են եղել նաև կենդանական ողջ աշխարհի ուսումնասիրման խնդիրները: 1611 թ. Կ.Պոլսում ***Աբրահամ Դրսեցին*** «Պատմութիւն անասնոց և գազանաց...» խորագրով իր արժեքավոր ուսումնասիրության մեջ նկարագրել է կենդանական աշխարհը:

XV դարավերջին սկիզբ առած աշխարհագրական մեծ հայտնագործություններն ու դրանց հետևանքով XVI–XVII դարերում համաշխարհային գիտական մտքի զարգացման նոր փուլն իր մեջ ներառեց նաև Հայաստանը:

Արդեն իսկ Քրիստափոր Կոլումբոսի ճանապարհորդությունների շրջանում (XV դ. վերջ) եվրոպական երկրներում և մասնավորապես Իսպանիայում իր ճանապարհորդությունների մասին էր պատմում ***Մարտիրոս եպիսկոպոս Երզնկացին***, որ վերադարձի ճանապարհին Իսպանիայում հայտնվել էր նոր երկրների հայտնաբերման համար հանդերձավորված նավերից մեկի մեջ և մոտ յոթանասուն օր նավարկել Ատլանտյան օվկիանոսում: Նրա ուղեգրությունը հետագայում բազմիցս ընդօրինակվել է և ուղեցույց ծառայել նոր ճանապարհորդությունների համար:

Առավել հետաքրքիր ճակատագիր էր վիճակվել տեր ***Եղիշե Սարբանկացուն***, որի գլխավորած արշավախումբը Մագելանից հետո այցելել էր ***Հարավային Ամերիկա*** (Հրո երկիր):

Հովհաննես Անկյուրացին 1621 թ. թարգմանել է գերմանացի քարտեզագիր և աշխարհագետ Պետրոս Ապիանի «Կոսմոգրաֆիա» աշխատությունը, որտեղ առաջարկվում էին աշխարհագրական երկայնության որոշման նոր եղանակներ:



Խաչքար, Պողոս վարպետ, Գոշավանք, 1291 թ.

Մաթեմատիկական գիտության զարգացման համար կարևոր ձեռնարկում էր XVII դարի սկզբներին ***Էվկլիդեսի «Երկրաչափության» հայերեն նոր թարգմանությունը***՝ թարգմանչի կողմից կատարված լրացումներով և մեկնաբանություններով:

Արվեստը: Հայաստանի տնտեսական

ու քաղաքական ծանր վիճակն իր կնիքն էր թողել նաև արվեստի զարգացման վրա: Չնայած աննպաստ հանգամանքներին՝ արվեստի մի շարք բնագավառներ այնուամենայնիվ շարունակել են որոշակի զարգացում ապրել:

Հաջողություններն ակնառու էին հատկապես ձեռագիր մատյանների նկարչական ձևավորման՝ մանրանկարչության բնագավառում: Ձևավորվել էին մանրանկարչության մի շարք դպրոցներ՝ իրենց ինքնատիպ առանձնահատկություններով:

Հայկական գաղթավայրերում հայտնի էին բարձրարվեստ ոսկերչությունն ու որմնանկարչությունը: ***Նոր Ջուղայից*** ռուսական ցար ***Պետրոս Միխայլովիչին*** նվիրված ***«Սիմեոն զահը»*** արվեստի նշանավոր գործ է: Նոր Ջուղայի հայ արվեստագետներից ***Բոգդան Սալթանովը,*** հաստատվելով Մոսկվայում, աշխատել է զինապալատում և մեծ դեր խաղացել ռուսական արվեստի զարգացման գործում: Նոր Ջուղայի հայ որմնանկարիչների կողմից XVII դարի առաջին կեսին կատարված ստեղծագործությունները մեր օրերում ևս հիացմունք են պատճառում:

Մեծ զարգացում է ապրել նաև ***գորգագործական արվեստը:*** Հայկական գորգերը արտահանվում էին շատ երկրներ և մեծ հռչակ ունեին: Հայտնի էին հատկապես հայկական «վիշապագորգերը»:

XV–XVII դարերում մեծ զարգացում է ապրում նաև ***խաչքարային արվեստը:*** Հայ խոջաները ***Հին Ջուղայի*** գերեզմանատանը

Սիրիկա (մարգարեուհի). Բոգդան Սալթանով, XVII դ.

կանգնեցրել էին ավելի քան 10 հազար գեղեցիկ և ճոխ քանդակներով խաչքարեր ու խոյանման տապանաքարեր: Նրանց մի մասն արվեստի կատարյալ գլուխգործոցներ էին: Ցավալի է, որ մեր օրերում հայ բնակչության հետքերը Հին Ջուղայում ջնջելու նպատակով ադրբեջանցի ջարդարարների կողմից լիովին ոչնչացվել է համաշխարհային արժեք ունեցող հայ մշակույթի այդ հսկա գանձարանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞ր իրադարձություններն են նկարագրված Թովմա Մեծոփեցու աշխատության մեջ: XVII դ. գրված ինչ աշխատություններ կարող եք նշել, ո՞ւմ հեղինակությամբ: Ինչո՞վ է տարբերվում Զաքարիա Քանաքեռցու «Պատմությունը» իր ժամանակակիցների աշխատություններից:
2. Ի՞նչ գիտեք XV–XVII դդ. հայ բնագիտության մասին:
3. Ինչո՞վ է հայտնի Ամիրդովլաթ Ամասիացին:
4. Արվեստի ո՞ր բնագավառներն էին զարգանում XV–XVII դարերում: Ի՞նչ ճակատագիր ունեցան Հին Ջուղայի ավելի քան 10 հազար խաչքարերը:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2 մլն – մոտ 100000 թթ. — Ստորին պալեոլիթ
Մոտ 100000–40000 տարի առաջ — Միջին պալեոլիթ
Մոտ 40000–14000 տարի առաջ — Վերին պալեոլիթ
Ք.ա. 12000–10000 թթ. — Մեզոլիթ (միջին քարի դար)
Ք.ա. 10000–5500 թթ. — Նեոլիթ (նոր քարի դար)
Ք.ա. 5500–4000 թթ. — Էնեոլիթ (պղնձի քարի դար)
Ք.ա. IV–III հազարամյակներ — Բրոնզի դար
Ք.ա. XXVIII–XXVII դդ. — Հայկական լեռնաշխարհի առաջին վաղ պետական կազմավորման՝ Արատտայի մասին հիշատակությունները
Ք.ա. XXIV–XXIII դդ. — Հայա, Սուբուր, Արմանի վաղ պետական կազմավորումների հիշատակությունը արձանագրություններում
Ք.ա. XV–XIII դդ. — Հայասա թագավորությունը
Ք.ա. 859 թ. — Ուրարտուի առաջին արքա Արամուի անվան հիշատակությունը ասորեստանյան արձանագրություններում
Ք.ա. մոտ 835–825 թթ. — Սարդուրի I-ի գահակալումը
Ք.ա. մոտ 830-ական թթ. — Տուշպա (Տոսպ, Վան) մայրաքաղաքի հիմնադրումը
Ք.ա. մոտ 810–786 թթ. — Մենուայի գահակալումը
Ք.ա. 786–764 թթ. — Արգիշտի Առաջինի գահակալումը
Ք.ա. 782 թ. — Էրեբունի ամրոցի հիմնադրումը
Ք.ա. 776 թ. — Արգիշտիխինիլի քաղաք-ամրոցի հիմնադրումը
Ք.ա. 764–735 թթ. — Սարդուրի II-ի գահակալումը
Ք.ա. 685–645 թթ. — Ռուսա II-ի գահակալումը
Ք.ա. 612 թ. — Պարույրի գլխավորությամբ Հայկազունների թագավորության վերականգնումը
Ք.ա. 521–331 թթ. — Հայկազուն-Երվանդականների, որպես սատրապներ իշխանությունը Հայաստանում
Ք.ա. 331 թ. հոկտեմբերի 1 — Գավգամելայի ճակատամարտը և Հայաստանի անկախության վերականգնումը
Ք.ա. մոտ 260–240 թթ. — Շամ (Սամոս) Երվանդականի գահակալումը, մայրաքաղաք Սամոսատի հիմնադրումը
Ք.ա. մոտ 240 թ. — Արշամի գահակալման սկիզբը
Ք.ա. մոտ 220–201 թթ. — Երվանդ IV-ի գահակալումը
Ք.ա. 201 թ. — Մեծ Հայքում Երվանդական ճյուղի իշխանության ավարտը
Ք.ա. 190 թ. — Մագնեսիայի ճակատամարտը
Ք.ա. 189 թ. — Մեծ Հայքի, Փոքր Հայքի, Ծոփքի և Կոմմագենեի անկախացումը
Ք.ա. 189-մոտ 160 թթ. — Արտաշես I-ի գահակալումը
Ք.ա. մոտ 185 թ. — Արտաշատ մայրաքաղաքի կառուցումը
Ք.ա. 160–115 թթ. — Արտավազդ I-ի գահակալումը
Ք.ա. 115–95 թթ. — Տիգրան I-ի գահակալումը
Ք.ա. 95–55 թթ. — Տիգրան II-ի գահակալումը
Ք.ա. 94 թ. — Ծոփքի և Կորդուքի միացումը Մեծ Հայքին
Ք.ա. 94 թ. — Հայ-պոնտական դաշինքի կնքումը
Ք.ա. 87 թ. — Հայ-պարթևական հաշտության պայմանագրի կնքումը
Ք.ա. 84 թ. — Տիգրան Մեծի բազմելը Սելևկյանների գահին
Ք.ա. 80–70-ական թթ. — Տիգրանակերտի կառուցումը
Ք.ա. 69 թ. գարուն — Հայ-հռոմեական պատերազմի սկիզբը
Ք.ա. 69 թ. հոկտեմբերի 6 — Տիգրանակերտի ճակատամարտը
Ք.ա. 68 թ. սեպտեմբերի 22 — Արածանիի ճակատամարտը
Ք.ա. 66 թ. սեպտեմբեր — Արտաշատի պայմանագրի կնքումը
Ք.ա. 55–34 թթ. — Արտավազդ II-ի գահակալումը
Ք.ա. 53 թ. մայիսի 6 — Խառանի ճակատամարտը
Ք.ա. 30–20 թթ. — Արտաշես II-ի գահակալումը

Ք.ա. 20–8 թթ. – Տիգրան III–ի գահակալումը
Ք.ա. 8–5 թթ. — Տիգրան IV–ի գահակալումը
Ք.ա. 2–1 թթ. — Տիգրան IV–ի և Էրատոյի գահակալումը
1 թ. — Արտաշեսյան արքայատոհմի թագավորության ավարտը
18–34 թթ. — Զենոն–Արտաշեսի գահակալումը
52 թ. — Վաղարշի և Տրդատի գլխավորությամբ պարթևական զորքի մուտքը Հայաստան
62 թ. գարուն — Հռանդեայի ճակատամարտում Պետոսի պարտությունը
65 թ. — Տրդատի մեկնումը Հռոմ
66–88 թթ. — Տրդատ I–ի գահակալումը
88–110 թթ. — Սանատրուկ II–ի գահակալումը
117–140 թթ. — Վաղարշ I–ի գահակալումը. Վաղարշապատ մայրաքաղաքի կառուցումը
185–198 թթ. — Վաղարշ II–ի գահակալումը
198–215 թթ. — Խոսրով I–ի գահակալումը
216–252 թթ. — Տրդատ II–ի գահակալումը
287–330 թթ. — Տրդատ III–ի գահակալումը
301 թ. — Քրիստոնեության հռչակումը որպես պետական կրոն
303 թ. — Վաղարշապատի Մայր տաճար Ս. Էջմիածնի կառուցումը
325 թ. — Նիկեայի առաջին տիեզերական ժողովը. «Հավատո հանգանակի» ընդունումը
330–338 թթ. — Խոսրով III Կոտակի գահակալումը
339–350 թթ. — Տիրանի գահակալումը
350–368 թթ. — Արշակ II–ի գահակալումը
354 թ. — Աշտիշատի ժողովի գումարումը
363 թ. — Պարսկաստանի և Հռոմի միջև պայմանագրի («ամոթալի») կնքումը
361–440 թթ. — Սբ Մեսրոպ Մաշտոց
370–374 թթ. — Պապի գահակալումը
371 թ. — Ձիրավի ճակատամարտը
374–378 թթ. — Վարազդատի գահակալումը
378–387 թթ. — Արշակ III–ի գահակալումը
385–388 թթ. — Խոսրով IV–ի գահակալումը
387 թ. — Հայաստանի առաջին բաժանումը (Հռոմեական կայսրության և Պարսկաստանի միջև)
388–415 թթ. — Վռամշապուհի գահակալումը
405 թ. — Հայոց գրերի գյուտը
422–428 թթ. — Վռամշապուհի որդի Արտաշես Արշակունու գահակալումը
428 թ. — Հայ Արշակունիների արքայատոհմի անկումը
444 թ. — Շահապիվանի ժողովի գումարումը
450–451 թթ. — Վարդանանց պատերազմը
450 թ. — Խաղխաղի ճակատամարտը
451 թ. մայիսի 26 — Ավարայրի ճակատամարտը
481–484 թթ. — Վահանանց ապստամբությունը
481 թ. — Ակոռիի ճակատամարտը
482 թ. — Ներսեհապատի ճակատամարտը
484 թ. — Նվարսակի պայմանագրի կնքումը
484–VI դ. առաջին կես — Վաչագան Բարեպաշտի գահակալումը
506 թ. — Դվինի առաջին եկեղեցական ժողովի գումարումը
554 թ. — Դվինի երկրորդ եկեղեցական ժողովի գումարումը
571–572 թթ. — Հակապարսկական ապստամբությունը Վարդան Մամիկոնյանի (Կրտսեր Վարդան) գլխավորությամբ
591 թ. — Հայաստանի երկրորդ բաժանումը (Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև)
618 թ. — Ս. Հռիփսիմե եկեղեցու կառուցումը
631 թ. — Ս. Գայանե եկեղեցու կառուցումը
639 թ. — Հայաստանի արևելյան և արևմտյան մասերի վերամիավորումը հայոց իշխան և սպարապետ Թեոդորոս Ռշտունու գլխավորությամբ
640 թ. — Արաբական ներխուժումների սկիզբը
652 թ. — Հայ–արաբական պայմանագրի կնքումը

641–661թ. — Զվարթնոց տաճարի կառուցումը
701 թ. — Դվին կենտրոնով Արմինիա վարչաքաղաքական միավորի ստեղծումը
703 թ. — Հակաարաբական առաջին ապստամբությունը Սմբատ Բագրատունու գլխավորությամբ. Վարդանակերտի ճակատամարտը
748–750 թթ. — Հակաարաբական ապստամբությունը Գրիգոր և Դավիթ Մամիկոնյանների գլխավորությամբ
774–775 թթ. — Հակաարաբական ապստամբությունը Արտավազդ Մամիկոնյանի գլխավորությամբ
775 թ. ապրիլի 25 — Արձնիի ճակատամարտը
804–824 թթ. – Աշոտ Մսակեր Բագրատունին ճանաչվեց հայոց իշխան
826–851 թթ. — Բագարատ Բագրատունին՝ հայոց իշխան
850–855 թթ. — Հակաարաբական հուժկու ապստամբությունը
855 թ. — Աշոտ Բագրատունին՝ հայոց իշխան և սպարապետ
862 թ. — Աշոտ Բագրատունու ճանաչվելը հայոց իշխանաց իշխան
869 թ. — Զաքարիա Զագեցու նախաձեռնությամբ հայ իշխանների ժողովի հրավիրումը
885 թ. օգոստոսի 26 — Աշոտ Բագրատունու օծվելը հայոց թագավոր
885–1045 թթ. — Հայաստանի Բագրատունյաց թագավորությունը
908–1021 թթ. — Վասպուրականի թագավորությունը
961 թ. — Անիի հռչակվելը մայրաքաղաք
961–1003 թթ. — Գրիգոր Նարեկացի
963–1065 թթ. — Կարսի թագավորությունը
978–1113 թթ. — Տաշիր—Զորագետի (Լոռիի) թագավորությունը
987–1170 թթ. — Այուդիքի թագավորությունը
990–1020 թթ. — Գագիկ I Բագրատունի
1071 թ. — Մանազկերտի ճակատամարտը
1072–1090 թթ. — Փիլարտոս Վարաժնունու իշխանությունը
1080–1198 թթ. — Ռուբինյան իշխանությունը Կիլիկիայում
1082–1117 թթ. — Գող Վասիլի իշխանությունը
1151–1292 թթ. — Հռոմկլան՝ Ամենայն հայոց կաթողիկոսության նստավայր
1184 թ. — «Դատաստանագրքի» կազմումը Մխիթար Գոշի կողմից
1187–1219 թթ. — Լևոն II Ռուբինյան. 1198 թ. հունվարի 6-ից Լևոն I Ռուբինյանը՝ հայոց թագավոր
1198–1375 թթ. — Կիլիկիայի հայոց թագավորությունը
1199 թ. — Անիի ազատագրումը Զաքարյանների կողմից
1226 թ. — Հեթումյանների հաստատումը Կիլիկիայի հայոց գահին
1236–1244 թթ. — Հայաստանի նվաճումը մոնղոլների կողմից
1254 թ. աշուն — Հայ—մոնղոլական պայմանագրի կնքումը Կարակորումում
1280-ական թթ. սկիզբ — Գլաձորի համալսարանի հիմնադրումը
1292–1441 թթ. — Սիսը՝ Ամենայն հայոց կաթողիկոսության նստավայր
1340–1410 թթ. — Սբ Գրիգոր Տաթևացի
XIV դ. երկրորդ կես — 1412 թ. — Տաթևի համալսարանի գործունեությունը
1375 թ. ապրիլի 16 — Սիս մայրաքաղաքի գրավումը
1441 թ. — Մայր Աթոռի վերահաստատումը Ս. Էջմիածնում
1461 թ. — Կ. Պոլսի հայոց պատրիարքության հիմնումը
1465 թ. — Սմբատ Արծրունու օծվելը հայոց թագավոր Աղթամարի Ս. Խաչ եկեղեցում
1512 թ. — Հայկական տպագրության հիմնադրումը. «Ուրբաթագրքի» տպագրումը Հակոբ Մեղապարտի կողմից Վենետիկում
1547 թ. — Էջմիածնի գաղտնի խորհրդակցությունը Ստեփաննոս Սալմաստեցի կաթողիկոսի գլխավորությամբ
1562 թ. — Գաղտնի ժողովի գումարումը Սեբաստիայում Միքայել Սեբաստացի կաթողիկոսի գլխավորությամբ
1604 թ. օգոստոս — 300 000 հայերի բռնագաղթեցումը դեպի Պարսկաստան
1616 թ. — Հայկական տպարանի հիմնումը Լվովում
1638 թ. — Հայկական տպարանի հիմնումը Նոր Ջուղայում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՆ ԱՎԱՊ ԴՊՐՈՑՈՒՄ 3
ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԱԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 6

ՄԱՍ Ա
ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ԲԱԺԻՆ 1. ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 10
ԹԵՄԱ 1. ՔԱՐԻ ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐ 10
§ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱԽԽԱՐՀԸ ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՔԱՐԻ ԴԱՐԵՐՈՒՄ 10
§ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱԽԽԱՐՀԸ Ք.Ա. X – II ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ 12
§ 3. ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ: ԱՐՎԵՍՏԸ: ԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐԸ 17

ԲԱԺԻՆ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ 20
ԹԵՄԱ 1. ՀԱՅՈՑ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 20
§ 1. ՀԱՅՈՑ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ 20
§ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՆԱԳՈՒՅՆ ԳՐԱՎՈՐ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 23
ԹԵՄԱ 2. ՎԱՂ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ
(Ք.Ա. III ՀԱԶԱՐԱՄՅԱԿ–Ք.Ա. I ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՍԿԻԶԲ) 26
§ 1. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱԽԽԱՐՀՈՒՄ 26
§ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ Ք.Ա. II ՀԱԶԱՐԱՄՅԱԿՈՒՄ
ԵՎ Ք.Ա. I ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՍԿԶԲԻՆ 30

ԲԱԺԻՆ 3. ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 33
ԹԵՄԱ 1. ՎԱՆԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 33
§ 1. ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ: ԱՐՏԻՇԵՍ I 33
§ 2. ՎԱՆԻ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՐԴՈՒՐԻ II-Ի ԵՎ ՆՐԱ ՀԱԶՈՐԴՆԵՐԻ ՕՐՈՔ:
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ 37
§ 3. ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ, ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԲԱՆԱԿԸ 40
ԹԵՄԱ 2. ՀԱՅԱԶՈՒՆ–ԵՐՎԱՆԴԱԿԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 44
§ 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ Ք.Ա. VII ԴԱՐԱՎԵՐՋԻՑ ՄԻՆՉԵՎ Ք.Ա. 330-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ 44
§ 2. ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ք.Ա. 331–201 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 48
§ 3. ՀԱՅԱԶՈՒՆ–ԵՐՎԱՆԴԱԿԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ Տ
ՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ 50
ԹԵՄԱ 3. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՏԱՇԵՍՅԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 54
§ 1. ՆՈՐ ՀԱՐԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆՈՒՄԸ: ԱՐՏԱՇԵՍ I 54
§ 2. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏԻԳՐԱՆ II ՄԵԾ 59
§ 3. ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԻՐԱՎԻՃԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅՈՒՄ 65
§ 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՅՔԱՐՆ ԸՆԴԴԵՄ ՀՌՈՄԻ ԾԱՎԱԼԱՊԱՇՏ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ:
ԱՐՏԱՎԱՋԳ II 69
§ 5. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ 72
ԹԵՄԱ 4. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ I–III ԴԱՐԵՐՈՒՄ 74
§ 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀՌՈՄԻ ՈՒ ՊԱՐԹԵՎԱՍՏԱՆԻ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 74
§ 2. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԳԱՀԱԿԱԼՈՒՄԸ 78
§ 3. ՄԵԾ ՀԱՅՔԸ III ԴԱՐՈՒՄ: ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ 82

ԲԱԺԻՆ 4. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 85
ԹԵՄԱ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ Ք.Ա. IX–Ք.Ա. III ԴԱՐԵՐՈՒՄ 85
§ 1. ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ (Ք.Ա. IX – Ք. Ա. VII ԴԱՐԵՐ) 85
§ 2. ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԸ 88
§ 3. ՀԱՅԱԶՈՒՆ–ԵՐՎԱՆԴՈՒՆԻՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ 90
ԹԵՄԱ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԵԼԼԵՆԻԶՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ 94
§ 1. ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ 94
§ 2. ԳԻՐԸ, ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՈՄԱՐԸ 98
§ 3. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹԱՏՐՈՆԸ 101
§ 4. ԱՐՎԵՍՏԸ: ԱՋԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ 103

ՄԱՍ Բ
ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 110

ԲԱԺԻՆ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՆԱԿՈՒՄԸ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻՆ 111

ԹԵՄԱ 1. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ: ԱՎԱՏԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ 111

§ 1. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ 111

§ 2. ԱՎԱՏԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 114

ԹԵՄԱ 2. ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ IV ԴԱՐՈՒՄ ԵՎ V ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ 119

§ 1. ՊԱՅՔԱՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ 119

§ 2. ԱՐՇԱԿ II ԵՎ ՊԱՊ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 122

§ 3. ՀԱՅՈՑ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՄՈՒՏԸ 127

ԹԵՄԱ 3. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ 131

§ 1. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԶՊԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ: ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ 131

§ 2. ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 481–484 ԹԹ. 136

§ 3. ՀԱՅԱՍՏԱՆԸ VI ԴԱՐՈՒՄ 139

§ 4. ՀԱՅԱՍՏԱՆԸ VII ԴԱՐՈՒՄ 144

§ 5. ՀԱՅ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԳԵՐԻՇԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 148

ԲԱԺԻՆ 2. ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՋԱՐԳԱՑԱԾ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ 152

ԹԵՄԱ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 152

§ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ 152

§ 2. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԵԼՔԸ 156

§ 3. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ: ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ 159

§ 4. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՌԱՏՈՒՄՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ 164

ԹԵՄԱ 2. ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XI–XIV ԴԱՐԵՐՈՒՄ 167

§ 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ XI ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ 167

§ 2. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՕՏԱՐ ՆՎԱՃՈՂՆԵՐԻ ԴԵՄ (XII–XIV ԴԱՐԵՐ) 170

ԹԵՄԱ 3. ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 174

§ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ 174

§ 2. ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ: ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ 178

§ 3. ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ XIII–XIV ԴԱՐԵՐՈՒՄ 182

§ 4. ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ 186

ԲԱԺԻՆ 3. ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ 191

ԹԵՄԱ 1. ԿՈՐՈՒՍՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ (XV դ.–XVII դ. առաջին կես) 191

§ 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ XV ԴԱՐՈՒՄ 191

§ 2. ՀԱՅԱՍՏԱՆԸ XVI ԴԱՐՈՒՄ ԵՎ XVII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ 194

§ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԻ ԱՇԽՈՒԺԱՑՈՒՄԸ 197

ԹԵՄԱ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ XV–XVII ԴԱՐԵՐՈՒՄ 201

§ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ: ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ 201

ԲԱԺԻՆ 4. ՄԻՋՆԱԴԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ 205

ԹԵՄԱ 1. ԱՋԳԱՅԻՆ–ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ 205

§ 1. ՀԱՅ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԸ 205

§ 2. ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՍԿԵԴԱՐԸ 208

§ 3. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՁԵՌԱԳԵՐՈՒՄՆԵՐԸ VI–VIII ԴԱՐԵՐՈՒՄ 211

ԹԵՄԱ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ X–XIV ԴԱՐԵՐՈՒՄ 215

§ 1. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԵՐԵԼՔԸ: ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ 215

§ 2. ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 219

§ 3. ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԲՆԱԳԻԼԻՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ 221

§ 4. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ 223

ԹԵՄԱ 3. ՄՇԱԿՈՒՅԹԸ ԴԱՎԱՌԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ (XV դ.–XVII դ. առաջին կես) 228

§ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ: ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ 228

§ 2. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ 231

Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ, Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ,
Պ. ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Է. ԴԱՆԻԵԼՅԱՆ, Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ,
Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Պ. ՉՈԲԱՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԲՆԱԳԻՏԱՍՍԱԹԵՍԱՏԻԿԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Լեզվական խմբագիր՝ Հովհաննես Զաքարյան
Գեղարվեստական խմբագիր՝ Սրա Բաղդասարյան
Տեխնիկական խմբագիր՝ Նվարդ Փարսադանյան
Վերստուգող սրբագրիչ՝ Լիանա Միքայելյան
Սրբագրիչ՝ Սերժ Մելքումյան
Համակարգչային ձևավորող՝ Արևիկ Հակոբյան
Քարտեզագիր՝ Գրիգոր Բեգլարյան

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափը՝ 70x100 1/16: Թուղթը՝ օֆսեթ
Ծավալը՝ 15 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 40 000 օրինակ

«ԶԱՆԳԱԿ-97» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28, ֆաքս՝ (+37410) 23 25 95
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայք՝ www.zangak.am, www.book.am

10

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

9 789994 116386